

ՍՈՒՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

1580225

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

929:32.001(479.25) Հիրրուքալյան
070(479.25)

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

Դ-10425

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
175

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
175

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 259

Նվիրում եմ վաղամեռիկ զայրմիկիս՝
արցախյան պատերազմի զոհ
Արթուր Գուրգենի Սարգսյանի
անմահ հիշատակին:
Սուրեն Սարգսյան

Տպագրվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ
Խմբագիր՝ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Ալբերտ Խառատյան
Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Նիկոլայ Հովհաննիսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ֆելիքս Մովսիսյան

***Գիրքը տպագրվում է Ռամկավար Ազատական
կուսակցության աջակցությամբ***

Սարգսյան Սուրեն
Ս 259 Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեությունը և «Արմենիա» պարբերականը / Ս. Սարգսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018. - 494 էջ:

Մենագրությունը նվիրված է արևմտահայ նշանավոր գործիչ Մ. Փորթուգալյանի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեության և հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա»-ի պատմության լուսաբանմանը:

Աշխատությունը շարադրված է արխիվային նորահայտ փաստաթղթերի, ժամանակի մամուլի, հուշագրությունների և հայ ու օտարալեզու պատմագիտական ուսումնասիրությունների հենքի վրա: Ներկայացված են հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ Մ. Փորթուգալյանի ու նրա «Արմենիա»-ի անփոխարինելի դերակատարությունը այդ պայքարի գաղափարախոսության մշակման ու այն ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, հայ հասարակական-քաղաքական, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի հարցերով հետաքրքրվողների ու ընթերցող լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-860-61-9 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ.....36

1.1. Մկրտիչ Փորթուգալյանի կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը 36

1.2. Մ. Փորթուգալյանի դերը արևմտահայության ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում 65

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԾՆՈՒՆԴԸ.....87

2.1. «Արմենիա» թերթի «Շրջաբերական»-ը 87

2.2. Պարբերականի ընդհանուր նկարագիրը 96

2.3. Մ. Փորթուգալյան – Արմենական կուսակցություն առնչությունները 134

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԱՐՄԵՆԻԱ»-ՈՒՄ.....146

3.1. «Արմենիա»-ն արևմտահայերի կացության մասին 146

3.2. Հայ կյանքի թերությունների քննադատությունը «Արմենիա»-ի հրապարակումներում 161

3.3. Արևմտահայության դրության արտացոլումը «Արմենիա»-ի «Նամականի»-ում 189

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԽՆԴԻՐԸ «ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԷՋԵՐՈՒՄ.....231

4.1. Մ. Փորթուգալյանի տեսակետները արևմտահայության ազատագրության հարցի վերաբերյալ 231

4.2. Ազգային կուսակցությունների հայրենիքի ազատագրության հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշումները և դրանց արտացոլումը «Արմենիա»-ի էջերում 297

4.3. Արևմտահայության վիճակի բարեփոխումների վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումների լուսաբանումը «Արմենիա»-ում 324

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԸ 1908-1923 ԹԹ. 338

5.1. «Արմենիա»-ն հետսահմանադրական Օսմանյան կայսրությունում տիրող վիճակի մասին 338

5.2. «Արմենիա»-ի տեսակետները հայության ազատագրության ուղիների վերաբերյալ (1908-1920-ական թթ.) 355

5.3. Հայկական հարցի տեսլականը «Արմենիա»-ի էջերում 371

5.4. Հայոց ցեղասպանության լուսաբանումը «Արմենիա»-ում.....401

5.5. Հայ կամավորական շարժման արձագանքները «Արմենիա»-ում 428

5.6. «Արմենիա»-ի դիրքորոշումները հայ ազգային կուսակցությունների նկատմամբ 442

5.7. 1908-1920 թթ. «Արմենիա»-ում 452

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 468

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....477

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX դարի պատմությունը բնութագրվում է եվրոպական մի շարք ժողովուրդների ազատագրական շարժումների վերելքով և նոր պետությունների կազմավորումով: Դարի քաղաքական բարոյականությունը Գ. Արծրունու պատկերավոր արտահայտությամբ սահմանվում էր. «Ես ապստամբում եմ, ուրեմն ես կամ»[1]: Այդ շրջանում հայ ժողովրդի քաղաքական կացությունը, ազգային պայքարի նպատակն ու ազատագրական ծրագրերը համանմանություն ունեին Արևելյան Եվրոպայի մի շարք ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետ: Այն նոր ազգայնականության դրսևորումն էր, որը մարմնավորում էր անձի ազատության ու քաղաքական իրավունքների բուռն ցանկությունը: Շարժում, որն սկզբում այդ իդեալների նկատմամբ մի քանի հայրենասեր անհատների ոգեշնչված և ոգեշնչող արձագանքն էր: Այն անհատների, որոնց պատգամների և գործունեության շնորհիվ հայ ժողովուրդն արթնացավ տարիների խոր քնից և ձգտում էր այդ իդեալներից հասարակական իրողություն ստեղծել:

Հայ ժողովրդի կյանքում սկսվում էր պայքարի որակական նոր շրջան, որը վճռական փուլ թևակոխեց 80-ական թվականներից: Հատկապես, երբ թուրքական կառավարությունը մերժեց «բարենորոգությունների նախագիծը»: Դրանով փաստորեն վերջակետ էր դրվում «հայության վառ հույսերի ու ռոմանտիկ երազների ժամանակաշրջանին»[2], և սկսվում էր նոր փուլ: Ռոմանտիկայի շրջանն այլևս անցած էր, և ազգային-ազատագրական պայքարն ստանում էր շեշտված սոցիալական, ապա նաև քաղաքական բնույթ: «Արփիարյանը դեռ 1878 թ. գիտակցում էր հայկական հարցի դիվանագիտական լուծման անհնարինությունը» և այն «utopi» համարում[3]: Այնպես

---

[1] «Մշակ», 1878, թիվ 165:

[2] Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Ե., 1987, էջ 27:

[3] Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 30: Տե՛ս նաև «Մշակ», 1878, թիվ 42:

որ, այդ նոր փուլը պահանջում էր հիմնովին վերափոխվել, նոր մոտեցումներ որդեգրել և ապագա պայքարին նախապատրաստել ամբողջ ժողովրդին: Օգտագործելով եվրոպական գաղափարախոսությունն ու փորձը՝ 80-ականների հայ առաջադեմ մտածողները պայքար ծավալեցին ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար՝ այդ գործում առավելագույնս կարևորելով գաղափարախոսական ազդակի դերը:առավել Ծավալվեց քարոզչություն, դպրոցաշինություն՝ նպաստելով ազգի լուսավորման և ինքնագիտակցության բարձրացման գործին: Աննախա-դեպ վերելք ապրեցին դեմոկրատական մշակույթը, գրականությունն ու մամուլը, որոնք ունեին «թե՛ սոցիալ-քաղաքական պարարտ հող ժամանակակից կյանքում և թե՛ թռիչքի համար հարմար պատվանդան, նույնպես հայ իրականության մեջ»[4]: Իրենց ջանքերի օբյեկտիվ բովանդակությամբ և արդյունքներով 80-ականներին պայքարի դուրս եկածները եղան իսկական հեղափոխականներ, որոնց կյանքի իմաստը ճնշված հայ ազգը էր քաղաքակրթության մակարդակին բարձրացնելն էր, պայքարի գաղափարախոսության մշակումը և ազատաբաղձ սերունդ դաստիարակելը: Պայքարի առաջամարտիկներից էր Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա» թերթով:

«Արմենիա» թերթի ու Մ. Փորթուգալյան գործչի բազմամյա գործունեության պատմության ու հայ քաղաքական մտքի անդաստանում ունեցած դերակատարության ուսումնասիրությունը մեր օրերում ունի արդիական-քաղաքական նշանակություն: Թերթը, եվրոպական միջավայրում հայ ազատագր ական պայքարի գաղափարախոսությունը տարածելով, Եվրոպայի հայության և եվրոպական հասարակության միջև առաջին գաղափարական կամրջողներից եղավ և նոր մակարդակի բարձրացրեց հայ քաղաքական միտքը:

---

[4] Այդ հարցը մանրամասն և իրատեսական դիրքերից լուսաբանված է Մինաս Հյուսյանի «Գրիգոր Զոհրապ» աշխատության մեջ, Ե., 1964, էջ 66-68:

Ինչպես և 100 տարի առաջ, այնպես էլ արդի հայ քաղաքական շարժումների ու հասարակական մտքի համար խիստ կարևոր և սկզբունքային նշանակություն ունի սեփական դիրքորոշումների ու քայլերի հայաստանակենտրոն մեկնակետի հստակեցումը: Իսկ դա պահանջում է ապագային միտված ազգային-քաղաքական ծրագրերը կառուցել հայրենաբնակ հայության շահերի առաջնության հաշվառման սկզբունքի վրա, որը համահունչ է նաև անվտանգության համազգային տեսլականին: Ոիստի՝ «Արմենիա»-ի ու նրա խմբագրի հայաստանակենտրոն մտածողության լավագույն ավանդույթների հաշվառումն իրատեսական քաղաքականության որդեգրման կարևոր պայման է նաև մեր օրերում: Մ. Փորթուգալյանի ու նրա թերթի գործունեության լուսաբանումը նպաստում է նաև XIX դարի վերջին քառորդի ու XX դարասկզբի հայ քաղաքական մտքի սայթաքումների լիարժեք ընկալմանը, քանի որ դեռևս Վանում ունեցած գործունեության ընթացքում նա իրեն դրսևորել էր որպես իրապաշտ և լայնախոհ մտավորականի, ում արևմտահայության ազատագրության ուղղությամբ քաղաքական մտածողության մեջ ուրվագծվել էր իրատեսական մարտավարության տեսլականը: Պատահական չէ, որ նրա սաների կողմից Վանում ստեղծված Արմենական կուսակցության որդեգրած մարտավարությունն ու ռազմավարությունը խոստումնալից էին և առավել արդյունավետ, քանի որ հայոց ազատագրության հնարավորությունը նախ և առաջ տեսնում էին սեփական ուժին ապավինելու, հայության համախմբան և հիմնավոր նախապատրաստվելու մեջ: Հենց այդ մտայնությունն էլ հետագայում հայ ազատամարտի հաջողության բանալի դարձավ:

Մ. Փորթուգալյանի ժամանակաշրջանի հայ մամուլը ողողված էր ռոմանտիկ բնույթի քաղաքական–հրապարակախոսական նյութերով: Դրանք հայության ազատա-գըրումը և հայոց պետականության վերականգնումը ավելի շատ փորձում էին լուծված տեսնել մեծ տերություններին ապավինելու միջոցով: Մոտեցում, որը առկա է նաև

մեր օրերում և խիստ քննադատելի, քանի որ հայության մեջ այսօր էլ լիարժեք հիմնավորված չէ այն համոզմունքը, որ հայ ժողովուրդն ու նրա պետականությունն առանց օտարին ապավինելու էլ կարող են գոյատևել և հզորանալ: Այսինքն, օգնում է հասկանալ, որ պետք է միմյանցից հստակ սահմանազատել ռազմաքաղաքական դաշինքները և կոփորեն ուրիշներին ապավինելու հայեցակետերը:

«Արմենիա» պարբերականի տարաբնույթ հոդվածները կարող են նպաստել հայոց մեջ քաղաքական նոր մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, այն մշակույթի, որ այալխոհության պայմաններում մատնանշում է հանդուրժողականության ոգին, որովհետև դա ծնվում է հայոց քաղաքական ապագան ավելի լավ տեսնելու, քան սեփական ամբիցիաների հենքի վրա: Գաղտնիք չէ նաև, որ ապագային միտված ճիշտ ծրագրեր ունենալու և հստակ գործելու անհրաժեշտությունը պարտադրում է մեր պատմության սպիտակ բծերի բացառումն ու ամբողջական և անսխալ իմացությունը, որը հնարավորություն կտա անցյալի սխալներից դասեր քաղել: «Արմենիա>> թերթի գաղափարախոսությունը կարող է կարևոր դեր խաղալ նաև մեր օրերում լայն տարածում գտած օտարամուտ քաղաքական շարժումների ու գաղափարական հոսանքների հանդեպ ճշգրիտ ու առարկայական դիրքորոշում որդեգրելու և նրանց բերած աշխարհաքաղաքացիական հովերից ազգային նվիրական նպատակները պաշտպանելու գործում, ինչն ամենևին էլ չի բացառում ազգային ու համամարդկային արժեքների համադրության անհրաժեշտությունը:

Գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի հիման վրա կարող ենք արձանագրել, որ սույն ուսումնասիրության գլխավոր նպատակն է «Արմենիա» թերթում առկա հրապարակումների, արխիվային նորահայտ փաստերի, տպագիր սկզբնաղբյուրների, հուշագրությունների, պարբերական մամուլի ու հիմնահարցը ներառող գիտական գրականության համակողմանի հետազոտման հենքով ներկայացնել հայ քաղաքական մամուլի ա-

ռաջին սերնդի վառ ներկայացուցիչ[5], 1885-1923 թթ. Մարսելում Մ. Փորթուգալյանի խմբագրությամբ[6] լույս տեսած «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը՝ զուգորդելով այն իր ժամանակի կարևոր իրադարձությունների լուսաբանմամբ ցույց տալ, թե թերթն ու նրա խմբագիրն ինչպես էին կամենում փրկել արևմտահայությանը վերահաս կործանումից: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել այն հարցին, թե ինչպիսի զարգացում ապրեց պարբերականը 1908 թ. հեղաշրջումից հետո և այդուհետ ինչպես սկսեց պատկերացնել արևմտահայության ապագան:

Ելնելով խնդրի ծավալուն լինելուց՝ կատարել ենք որոշ սահմանափակումներ: Նախ՝ վերլուծել ենք թերթի առավել կարևոր հրապարակումները: Առավելապես օգտագործել ենք թեմային առնչվող կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերը, հասարակական և կուսակցական գործիչների այն աշխատությունները, որոնք վերաբերում են «Արմենիա»-ին: Գրականության մեջ արծարծված մեզ համար անընդունելի կարծիքները մերժել ենք մեր տեսակետների պոզիտիվ շարադրանքով:

Ըստ ամենայնի արժևորել ենք հետազոտվող խնդրին նվիրված արխիվային վավերագրերն ու տպագիր սկզբնաղբյուրները, հուշագրություններն ու ուսումնասի-րությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ցայսօր անբավարար են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ: Ուսումնասիրության առարկայի խորությամբ հետազոտման նպատակով համակարգային վերլու-

---

[5] Մինչ «Արմէնիա»-ի հրատարակվելը հայ իրականության մեջ լույս են տեսել «ազգային, քաղաքական և գրական կամ բանասիրական» խորագիրը կրող 36 պարբերականներ: Դրանցից 27-ի խորագիրը թեև սկսվում էր «քաղաքական» բառով, սակայն իրականում միայն 1884-ից Թիֆլիսի Դաստակյանի խմբակի կողմից Մոսկվայում ընդամենը մեկ տարի լույս տեսած «Ազատութեան Աւետաբերը»-ն էր Արևմտյան Հայաստանն ազատելու կոչ անում, որին գումարվեց նաև սոցիալիստական գաղափարախոսությունը:

[6] Մ. Փորթուգալյանի վախճանվելուց հետո՝ 1921-1923 թթ., թերթը խմբագրել է Եղիշե Թորոսյանը:

ծության ենք ենթարկել մի խումբ շաղկապված և փոխպայմանավորող հիմնահարցեր: Դրանք են՝

- XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացությունը և որպես այդ իրավիճակի օրգանական շարունակություն՝ որակական նոր մակարդակի ազատագրական գաղափարախոսության հանդես գալը[7],
- 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայության համընդհանուր հիասթափությունը մեծ տերություններից ու ազատության հասնելուն որպես նախապայման՝ սեփական ուժերին ապավինելու մտայնության աստիճանական կարևորումը,
- Մ. Փորթուգալյանի հայրենանվեր գործունեությունն ու արևմտահայության ազատագրության խնդիրներին և Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի փոփոխության վերաբերյալ աշխարհայացքային մոտեցումները,
- Փորթուգալյան-Արմենական կուսակցություն առնչությունները,
- 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հետևանքով իրավիճակային նոր փոփոխությունները,

---

[7] Դեռևս XIX դարի առաջին կեսին այդպիսի գաղափարախոսություն արևմտահայ իրականությունում արդեն առկա էր: Եվրոպական ճնշված ժողովուրդների՝ XIX դարի առաջին կեսի ազգային-ազատագրական շարժումների ու պայքարի անմիջական ազդեցության ներքո 1850-1860-ական թթ. ձևավորված հայ հասարակական հոսանքների ներկայացուցիչները (Ստ. Ոսկանյան, Մ. Մամուրյան, Հ. Սվաճյան, Գ. Չիլինկիրյան, Մ. Պեշիկթաշլյան) իրենց աշխատություններում անդրադառնում էին արևմտահայության ազատագրության խնդիրներին, փորձում էին ուղիներ մատնանշել և անգամ երիտասարդությանը պայքարի էին կոչում: Ավելին, դեռևս XIX դարի սկզբին Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վրդ. Ինճիճյանը «Ազգասեր» (1815թ.) և «Դարապատում» (1824-1827թթ.) հրապարակախոսական աշխատություններում ոչ միայն արծարծում էր հայրենասիրության և ազգասիրության թեման, այլև ընդգծելով իտալացիների ազատասիրության ուղեգծի ճշմարտացիությունը՝ «արյան մեջ թաթախված Հայաստանի» զավակներին հորդորում էր հետևել իտալացիների օրինակին, կոչ անում ազգային միասնության, համախմբվածության և հայրենասիրության:

▪ Հայկական հարցին և մեծ տերություններին, հայ իրականությանը բնորոշ թերություններին, ազգային կուսակցություններին, հայոց Մեծ եղեռնին, կամավորական շարժմանը, Հայաստանի Առաջին հանրապետությանը «Արմենիա» թերթի մոտեցումները և մի շարք այլ կարևոր հարցեր: Առանձնահատուկ շեշտադրում է կատարվել «Արմենիա» թերթի առաջին տասնամյակի համարներին, երբ այն նոր «գաղափարների շտեմարան» էր, և բոլոր հրապարակումները տոգորված էին ազատախոհությամբ, պայքարի ոգով և ապագայի նկատմամբ լուսավոր հավատով:

Աշխատությունն ընդգրկում է հիմնահարցի տեսակետից ոլեն-շային իրադարձություններով որոշակիացված ժամանակահատված՝ 1885-1923 թթ., այսինքն՝ «Արմենիա» թերթի լույսընծայման բոլոր տարիները: Նշված ժամանակագրական հենքի վրա էլ քննարկվում են հայության կյանքում տեղի ունեցած իրադարձություններին հասարակա-կան մտքի դիրքորոշումների վերաբերյալ թերթի լուսաբանություններն ու տեսակետները: Ներկայացրել ենք 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ծանր կացությունը: Վախենալով այստեղ էլ տարածքային կորուստներ ունենալուց, ինչը «թուրք զարթնող ինքնութիւնը կը վիրատրէր»[8] ու հատկապես հայ ժողովրդին անբարեհույս համարելով՝ իշխանությունները որդեգրեցին վայրենի բռնաճնշումների քաղաքականություն: Դրան անմիջական հետևանք ու պատասխան, ինչպես նաև ազգային զարթոնքի, սեփական հայրենիքն ու ժողովրդին ազատ և քաղաքակիրթ ազգերի շարքում տեսնելու հասունացած ցանկությունն իրականացնելու նպատակով հայ ժողովուրդը ոտքի ելավ ազատագրական պայքարի, որի սկզբնական փուլը դրսևորվեց մտավոր զարթոնքի և կրթա-

---

[8] Թորոսեան Թ., Հայկական հարցը, Երկու մօտեցում, Թանէր Աբչամ, փրոֆ. Վահագն Տատրեան, Հալէպ, 1994, էջ 11:

լուսավորական շարժման տեսքով: Այդ գործում նշանակալի դերա-կատարություն ունեցավ Մ. Փորթուգալյանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում մեր կողմից ու-սումնասիրված աղբյուրների և գիտական գրականության համեմա-տական ուսումնասիրությունն է: Հետազոտության մեջ շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է ժամանակագրական և թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմահամե-մատա-կան մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել նորովի լուսա-բանելու բազմաթիվ հիմնախնդիրներ և որոշակի առաջարկություն-ներով նպաստելու դրանց արդյունավետ ընկալմանը: Ատենախո-սության մեթոդաբանական հիմքում ընկած է «Արմենիա» թերթի կարևորագույն հրապարակումների անկողմնակալ ու անաչառ հե-տազոտության սկզբունքը:

Ընդհանրացնելով աշխատության մեջ լուսաբանված պատմա-գիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների ներկայացումը՝ կարող ենք որոշակիորեն արձանագրել, որ հետազոտության հիմնա-կան անվիճելի գիտական նորույթը Մ. Փորթուգալյանի կյանքի, հա-սարակական-քաղաքական գործունեության և դրա զարդապսակ «Արմենիա» թերթի պատմության ամբողջական, համակողմանի ու-սումնասիրությունն է, որը կատարվում է առաջին անգամ: ուսումնա-սիրության մեջ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակության բացառիկ գործընթացները ներկայացված են համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունների անմիջական առնչությունների խորապատկերում և «Արմենիա» թերթի՝ որպես այդ իրողությունների հայելու ու տարեգրի, արձագանքների և ար-տահայտած տեսակետների հոլովույթով: Ուսումնասիրության նո-րույթն ամփոփ ունի հետևյալ տեսքը.

ա) առաջին անգամ ներկայացվում են Մկրտիչ Փորթուգալյանի կյանքն ու գործունեությունը և «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը,

բ) վերլուծվում են «Արմենիա» թերթում տեղ գտած կարևորագույն հրապարակումները և այդ հենքի վրա ցույց է տրվում, որ պարբերականն արևմտահայ կյանքի տարեգիրն էր, իրականության անեղծ հայելին,

գ) լուսաբանվում և շրջանառության մեջ են դրվում նոր տեղեկություններ ու փաստեր թերթի սկզբնավորման, գործելակերպի հիմնական ուղղությունների և օսմանյան բռնատիրության դեմ պայքարի մեթոդների ու ձևերի մասին,

դ) լուսաբանել թերթի կատարած ծավալուն աշխատանքները եվրոպական հասարակությանը հայոց խնդրին տեղեկացնելու ուղղությամբ և այն, որ թերթը հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարությունն համարում էր անարդյունավետ,

ե) ներկայացվում է Հայկական հարցի վերաբացման իրողությունը, և մանրամասն քննարկվումեն նրա լուծման տարբերակներն ըստ թերթի նյութերի,

զ) լուսաբանվում են Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու և այն օրակարգից հանելու օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագրերը,

է) Հայաստանի անկախության և խորհրդային շրջանի առաջին տարիները, թուրք-հայկական հարաբերությունները և որոշ ռազմաքաղաքական իրադարձություններ լուսաբանվել են թերթի հրապարակումների հենքի վրա:

Աշխատությունն ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական նշանակություն: Անժխտելի է, որ հասարակության և պատմության «Պարույրաձև» զարգացման տեսությունը[9] հայ ժողովրդի պատմութ-

---

[9] Ժամանակակից ամերիկացի հոգեբան Քլեր Գրեյվսի արժեքների էվոլյուցիայի մասին հասարակության և պատմության «Պարույրաձև» զարգացման տեսությունը վերաբերում է մարդու և հասարակության զարգացման դինամիկային: Այդ տեսության օրինաչափություններն ու սահմանումները կիրառելի են նաև հայոց պատմության զարգացման գործընթացներն ուսումնասիրելու ժամանակ, տե՛ս Дон Эдвард Бек, Кристо-

յան դեպքում քննություն է բռնում: Հետևապես այդ հենքի վրա վերլուծությունների արդյունքում կատարված եզրահանգումները Հայաստանի անկախ պետականության կայացման գործընթացի շարունակականության պայմաններում ձեռք են բերում գործնական նշանակություն: Աշխատությունն ունի նաև պատմաճանաչողական կարևոր նշանակություն, քանզի կարծում ենք, որ հետազոտության արդյունքները պահանջված են հայ ժողովրդի նոր շրջանի պատմության, մասնավորապես մամուլի, կուսակցությունների, ազատագրական պայքարի գաղափարախոսության, ազատության պայքարի նվիրյալներին վերաբերող հարցերն ուսումնասիրողների կողմից: Դրանք կարող են օգտագործվել նաև բուհական ու դպրոցական դասագրքեր շարադրելիս:

Թեմայի գիտական լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունեն «Արմենիա»-ում հրապարակված նյութերը, հատկապես Մ. Փորթուգալյանի ծրագրային խմբագրականները[10], քանի որ «Արմենիա»-ի ու Մ. Փորթուգալյանի վերաբերյալ արխիվային վավերագրերն այնքան էլ առատ չեն: Օգտագործել ենք նյութեր նաև որոշ էլեկտրոնային կայքերից[11] հիմնահարցին առնչվող փաստագրական վերլուծական հայերեն[12], ռուսերեն[13], անգլերեն[14] և թուրքերեն[15] ժողովածուներից:

фер К. Коуон, Спиральная динамика. Упраляя ценностями и изменениями в XXI веке, М., Открый мир, 2010.

[10] Թերթի որոշ խմբագրականներ պահվում են ՀՀ ազգային գրադարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանում /ԳԱԹ/ և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Որոշ մասն էլ՝ Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան համալսարանական գրադարանում, որոնք ֆոնդավորված չեն և որպես անմշակ նյութ՝ գրանցված են ՀՀ-58 համարի ներքո: Որոշ համարներ էլ գտնվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության գրապահոցներում, տե՛ս ֆ. 1.254. ֆ. 1.255 և ֆ. 1.155:

[11] Wikipedia.com, Hy wikisource.org, Editions. sigest. Net, www.azator, gr /yushatetr/.

[12] «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարսեյլ, 1890, Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու),

Թեմայի գիտական լուսաբանման համար աղբյուրագիտական հիմք են ծառայել արխիվային նյութերը, որոնք լույս են սփռում հիմնահարցի վրա: Կարևոր են հատկապես Հայաստանի ազգային արխիվի[16], Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի[17], պետական պատկերասրահի[18] մի շարք ֆոնդերի նյութերը:

XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների՝ իրադարձություններով հարուստ ժամանակահատվածին նվիրվել են մեծաքանակ պատմագիտական աշխատություններ, որոնք որոշ վերապահումներով մեզ համար եղել են ուղենշային[19]: Ժամանակաշրջանի

Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, Արմենական կազմակերպութիւն, ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պէյրութ, 1988, Ծրագիր և կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենօ-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնտոն, 1907, Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Բաբլոյան Ա., 1986, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Ե., 1970:

[13] Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919, сост. В. Микаелян, Е., 1991, Положение Армянъ въ Турции до вмещательства державъ въ 1895 г., Москва, Тип. "Рассвет", 1896, 443 стр., Черная Книга, Знаменитые иностранцы о турецких преступлениях конца XIX века и о геноциде армян в Османской империи в 1915 году, составитель А. Исоян, Е., Айгирк, 2012, 774 стр.

[14] British Documents on the Ottoman Armenians, Ankara, 1989, pp. 547-550 pages.

[15] Documents Diplomatiques Ottomans: Affaires Armeniennes (ed. by B. Şimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985.

[16] ՀԱԱ, ֆֆ. 121,190, 408, 420, 424, 427, 453, 1267 և այլն:

[17] ԳԱԹ-ի «Արփիար Արփիարյան», «Արշակ Չոպանյան», «Գարեգին Լևոնյան» «Սարգիս Հայկունի», «Սփյուռքահայ գրողների և մտավորականների հավաքածու» և այլ ֆոնդեր:

[18] Հայաստանի պետական պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28: Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեքենագիր): Մի քանի արժեքավոր վավերագրեր էլ ձեռք ենք բերել մեր սփյուռքահայ բարեկամների օգնությամբ:

[19] Լէօ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Երևան, 1994, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Ե., 1996, նույնի՝ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Մ. Փորթուգալեան (մի էջ յեղափոխական մտքի պատմութիւնից), Պէյրութ, 1937, Ներսիսյան Մ, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 2002, Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1980, Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների

տարբեր հիմնախնդիրներ քննարկելիս դրանց հեղինակներն անդրադարձել են նաև «Արմենիա»-ին ու Մ. Փորթուգալյանին: Այդ աշխատությունները պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի՝

ա) մինչխորհրդային, բ) խորհրդային, գ) հետխորհրդային շրջանում և դ) Սփյուռքում գրված ուսումնասիրություններ,

Մինչխորհրդային շրջանում «Արմենիա» թերթին նվիրված աշխատություն մեզ հայտնի չէ: Սակայն խնդրո առարկա ժամանակաշրջանին նվիրված այն ուսումնասիրություններում, որտեղ խոսվում է Փորթուգալյանի մասին[20], անդրադարձներ կան նաև «Արմենիա»-ին: Դրանց բնորոշ է այն, որ թերթի և խմբագրի մասին միայն գովեստի ու գնահատանքի խոսքեր են: Հավանաբար դա պայմանավորված է հոբելյանների առիթներով գրված լինելով: Սակայն կական դերակատարություն է ունեցել նաև Մ. Փորթուգալյանի և նրա «Արմենիա»-ի լուրջ ավանդը հայոց զարթոնքի ու ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում:

մասին, Ե., 1990, նույնի՝ Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Ե., 1999, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 2005, Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997, Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, Кочар М., Армяно-турецкиеобщественно-политические отношения и армянский вопрос в конце XIX-начале XX веков, Ереван, изд-во ЕрГУ, 1988, 308 стр. Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-ого и начале 20-ого вв., Е., 1972, Барсегов Ю., Геноцид Армян Ответственность Турции и Обязательства мирового сообщества, документы и комментарий, том 1, М., 2002 и том 2, М., 2005 և այլն:

[20] Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, Կ. Պոլիս, 1912, նույնի՝ Քառասուն տարուան աշխատա-տրը, Կ. Պոլիս, 1914, Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 1, հ. 2, Ժնև, 1912, Պազիլ Խան, Քառասուն տարի, Կ. Պոլիս, 1914, Վասիլեան Պ., Յոբելեարը եւ Արարատեան ընկերութիւնը և ուրիշներ, Կ. Պոլիս, 1918, Մապպահ-Գյուլեան Ս., Պատասխանատուները, Փրովիտենս, 1916, Կարապետեան Գ., Մոտաւոր անցեալի յիշատակներէն, Կ. Պոլիս, 1919, Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թթ., Ե., 1917, Մյասնիկեան Ա., Ազգային հարցի առթիվ, Մոսկվա, 1919, Աճառեան Հ., Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր Նախիջևան, 1915 և այլն:

Վանի վարժապետանոցի նախկին սան Պ. Թորոսյանը, անդրադառնալով Փորթուգալյանի 40-ամյա գործունեությանը, բարձր է գնահատել նրա ներդրումը հայությանը կրթելու, համախմբելու և պայքարի կոչելու գործում: Համարելով նրան աննկուն կամքով օժտված «լուսաւորութեան անդրանիկ կամաւոր զինուոր»՝ հեղինակը շեշտում է, որ Փորթուգալյանը «վիատուած հայութեան մէջ ինքնավստահութիւն» ներշնչողներից առաջինը եղավ[21] և «40 տարի անընդհատ տքնած է Հայը իւր դարեւոր թմրութենէն սթափեցնել»[22] և իր աննկուն կեցվածքով վարակել շատերին:

Մ. Փորթուգալյանի գործունեության 40-ամյա և «Արմենիա»-ի հրատարակման 25-ամյա հոբելյանների առթիվ ժամանակի նշանավոր մտավորականների հեղինակած հոդվածների փաստառատ ժողովածուն[23] հարուստ է գնահատանքի խոսքերով: Հեղինակները[24] մեծարում են նրան «նվիրյալ մանկավարժ», «լայնախոհ հրապարակագիր», «կրքոտ հայրենասեր» և այլ բնորոշումներով և իրավացիորեն ընդգծում, որ նա իր հավատի ուժով հայությանը թարմ լիցք ներարկեց:

Մինչխորհրդային շրջանում զգալի թիվ են կազմում կուսակցական գործիչների աշխատությունները[25]: Դրանցում Փորթուգալյանը համարվում է ազատագրական պայքարի գաղափարախոսություն մշակող, կրթալուսավորական գործի կազմակերպիչ և ժողովրդին ազատագրական պայքարի մղող գործիչ: Իսկ ՀՅԴ տեսաբան Միքա-

---

[21] Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, Կ. Պոլիս, 1912, էջ 9:

[22] Նույն տեղում:

[23] Թորոսեան Պ., Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914:

[24] Աշխատանքը չծանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում բոլոր 23 հեղինակների անուն-ազգանունները թվարկելուց:

[25] Արամեանց Հմ., Վերածնունդի երկունքը, Կ. Պոլիս, 1918, Դարաջեան Գ. (Արկռմեդ), Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, Ճանկուլեան Հ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն, մաս Ա, Կ.Պոլիս, 1913, Սապահ-Գիւլեան Ս., Ինքնաւար Հայաստան, Կ. Պոլիս, 1915, նույնի՝ Պատասխանատուները, Կ. Պոլիս, 1916, Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912, հ 1, 2 և այլն:

յել Վարանդյանը, ներկայացնելով նշված ժամանակաշրջանում հայերի վերազարթնումի գործընթացը, համարում է, որ այդ շարժման ողբից մինչև պայքարի հրավիրող գործիչները դարձան «այն ժամանակվա հայութեան խիղճը»[26]: Իսկ այդ սերնդին համարում է ազատագրական շարժման «ուժ-գաղափարի», «խթան-գաղափարի» ստեղծիչ[27]: Այս որակումները, անկասկած, վերաբերում են նաև Մ. Փորթուգալյանին:

«Արմենիա»-ի մասին մինչխորհրդային շրջանում զգալի թվով հրապարակումներ կան ժամանակի մամուլում: Կ.Պոլսում լույս տեսնող «Աւետաբեր»[28] շաբաթաթերթը «Ո՞վ է Փորթուգալեան» խմբագրականում մեծարում է Մ. Փորթուգալյանին «անձնուէր հանրային գործիչ», «բարի յեղափոխական», «առաջինն ում քարոզը կը հասկնար ժողովուրդ» արտահայտություններով, ում խոսքը «բարձր իտէալներ դիւրամարս կընէր»[29]: Այնուհետև ընդգծվում է, որ փառասիրությունը նրա մեջ բացակայում էր: Ուներ պարզ ու հստակ գրելաոճ, հմտությամբ էր մերժում ընդդիմադիրների հիմնազուրկ պնդումները: «Ազատ բէմ» պարբերականն էլ է Մ. Փորթուգալյանի ու նրա սերնդակիցների մասին հիացմունքով խոսում և նշում, որ որտեղ խմորվում էին հեղափոխական գաղափարներ և Հայաստանի ազատագրության խնդիրը, Մ. Փորթուգալյանն այնտեղ էր: Թերթում լույս տեսած մի հոդվածում Ա. Արփիարյանի բնորոշմամբ. «Փորթուգալեանը ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրա: Առանց

---

[26] Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, Հ 1, էջ 13:
[27] Նույն տեղում, էջ 14:
[28] «Աւետաբեր» Ամերիկյան Միսիոներաց ընկերության պարբերականը լույս է տեսել Կ.Պոլսում 1855-1915 թթ., Նախ՝ որպես երկշաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ: Պարբերականի խմբագիրներ են եղել Ջ. Գրինը, Հ. Բարնըմը, Գ. Մեթալմը, Ե. Բլիսը և ուրիշներ:
[29] «Աւետաբեր» թիվ 14, Կ.Պոլիս, 8 ապրիլի, 1911, էջ 328-331:

Յեղափոխութիւն բառն արտասանելու յեղափոխական սերունդ մը պատրաստեց»[30]:

«Կոչնակ» պարբերականն էլ[31] Մ. Փորթուգալյանին բնութագրում է որպես ազգային ու կրթական «գործերուն հմուտ», անկաշառ ու վեհանձն հայրենասեր, «յաջող ուսուցիչ», «փոթորիկ լեռ մը բլուրներուն մէջ» և ջանասեր գործիչ[32]: Թերթի կարծիքով այդ շրջանում ոչ մեկն այնքան արագ «շարժման մէջ չդրաւ Հայ ուսանողը ու այդչափ կարճ ժամանակի մէջ այդչափ մեծ արդիւնք չցուցուց»[33], որքան Փորթուգալյանը:

«Արմենիա»-ին **ընդդիմախոս** պարբերականների մեծ մասը կուսակցական պաշտոնաթերթեր էին[34], մի մասն էլ՝ ոչ[35]: Առավելապես արձագանքելով «Արմենիա»-ի հրապարակումներին՝ դրանք հրապարակում էին նյութեր, որոնց «Արմենիա»-ն կամ չէր արձագանքում, կամ պատասխանում էր հավասարակշռված ու առանց մաղձի: Ավելի հաճախակի էին բանավեճերը «Հնչակ»-ի ու նրա արբանյակների («Մարտ», «Ապտակ» և այլն) հետ: Անմիջապես վճռական գործողությունների կողմնակից հնչակյանները «ժամկետանց», «պահպանողական» և նմանատիպ ոչ այնքան իրավացի որակումներով

---

[30] «Նոր կեանք», 1899, № 18:

[31] «Կոչնակ» պարբերականը լույս է տեսել 1900 թ.-ից: 1919 թ. դարձել է «Կոչնակ Հայաստանի», իսկ 1921-ից՝ «Հայաստանի կոչնակ» մինչև 1968 թ.՝ սկզբում Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում, որպես շաբաթաթերթ, այնուհետև դարձել է ամսագիր: Տարբեր տարիներին պարբերականը խմբագրել են Վ. Քյուրքճյանը, Խ. Պեննեյանը, Հ. Խազոյանը, Վահե Հայկը, Ա. Պետիկյանը և ուրիշներ:

[32] Նույն տեղում:

[33] «Կոչնակ», 8 ապրիլի, 1911, էջ 234-327:

[34] «Հնչակ», «Մարտ», Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթեր, լույս են տեսնել Լոնդոնում, «Նոր կեանք», Վերակազմյալ Հնչակյան կուսակցության, Լոնդոնում, «Դրօշակ», Թիֆլիսում, ՀՅԴ պաշտոնաթերթ, ռամկավարների «Ազգ», Բոստոնում, «Արեւ», Ալեքսանդրիայում և այլն:

[35] «Մշակ», Թիֆլիս, «Ազատ բեմ», Ալեքսանդրիա, «Արաքս», Սանկտ Պետերբուրգ, «Իրավունք», Վառնա, «Հայաստան», Լոնդոն և այլն:

քննադատում էին աստիճանական վերափոխումների կողմնակից Մ. Փորթուգալյանին:

Փորթուգալյանին զայրացրել էր, որ «Ազատ բեմ»-ը զրպարտություններով հանդգնել էր սրբապղծել հայ ազատագրական պայքարի նահատակ Մ. Ավետիսյանի հիշատակը՝ մեղադրելով նրան Ամերիկայում հեղափոխության անունով գումարներ հավաքելու և Փորթուգալյանի հետ իրենց կարիքները հոգալու համար[36]: Նա պատասխանում էր, որ մեղադրելու համար մարդիկ պիտի պատմություն իմանան և հեղափոխության հերոսներին, որպեսզի անհիմն չպղծեն նրանց հիշատակը[37]:

Փորթուգալյան-արմենականներ հարաբերությունները[38] քննարկելով՝ Բոստոնի «Ազգ», Վառնայի «Իրավունք» և այլ թերթեր հորդորում էին Մ. Փորթուգալյանին հրաժարվել արմենականների հանդեպ ժխտողական կեցվածքից: Երբ վերջինս մերժեց, «Իրավունք»-ը մեղադրեց Մ. Փորթուգալյանին «արմէնիական» բառը «սեփականաշնորհելու» համար[39]: 1890-ականների վերջերից «Արմենիա»-ն կրկնում էր ինքն իրեն, որդեգրել էր զգուշավոր կեցվածք և դարձել երկրորդական թերթ: Հենց այդ պատճառով հաջորդ տարիներին մամուլում անդրադարձները սակավաթիվ են:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին գաղափարախոսական սահմանափակումների պատճառով Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի պատմությամբ զբաղվելը չէր խրախուսվում: Հատ ու կենտ գրվածքներում Մ. Փորթուգալյանին ու «Արմենիա»-ին անդրադարձներ գրեթե չկան, իսկ թեման լուսաբանվել է նախկին մտածողության և կոմունիստական թելադրանքի ան-

---

36 «Ազատ բեմ», 1906, ապրիլի 21:

37 Նույն տեղում:

38 Այս խնդիրը մանրամասն քննարկվում է ատենախոսության 2-րդ գլխում:

39 «Իրավունք», 1908, ապրիլի 9:

հաջող «համաձայնեցումներով», կուսակցականության շեշտադրմամբ, դասակարգային մեկնակետով և զգալի վերապահումներով[40]:

Հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը նոր մակար-դակի բարձրացավ խրուշչովյան ձնհալից հետո: Չթերագնահատելով մինչ այդ արվածը՝ նշենք, որ գրվեցին նոր ու հիմնարար պատմագիտական աշխատություններ[41]: Խուսափելով «նացիոնալիստական» պիտակավորվելուց՝ դրանք առերևույթ այնքան էլ անմիջականորեն ազգային-ազատագրական պայքարի խնդիրները չէին լուսաբանում, սակայն լավագույնս ներկայացնում էին պայքարի վերելքին նպաստող գործոնները, նշում, որ ազգային-ազատագրական պայքարն ուներ նաև սոցիալական բնույթ[42]: Անշուշտ անժխտելի է, որ խորհրդային պատմագիտությունը հետազոտել է խնդրո առարկա թեմայի առանձին կողմերը, բայց ամբողջական աշխատություն չի ստեղծվել:

Անդրադառնալով «Արմենիա»-ին՝ Ջ. Կիրակոսյանը շեշտել է, որ Մ. Փորթուգալյանն իր պարբերականով մեծապես նպաստել է հայոց վերազարթոնքի գործընթացին: Շրջանցելով կոմունիստական վարչակարգի սահմանափակումները՝ հեղինակը բարձր է գնահատել

---

[40] Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, նույնի՝ Անցեալից, Թիֆլիս, 1925, Մյասնիկեան Ա., Ազգային հարցի առթիվ, Մոսկվա, 1919 և այլն:

[41] Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 1955, Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Ե., 1956, Համբարձյան Ա., Ազգաբային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1965, Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ. - 1904), գիրք 1, Ե., 1967, Վարդանեան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967 և այլն:

[42] Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում, Ե.,1967, էջ 315:

«Արմենիան», իսկ խմբագրին համարել հայ ժողովրդի «քաղաքական մուրացկանության» օգտակարությանը կասկածող, խաբվելուց չհոգնելու սովորույթը մերժող ու նրանց մեջ ըմբոստություն ներարկող, գիտակցված և մանրակրկիտ նախապատ-րաստված հեղափոխության կոչող գործիչ[43]: Հեղինակի կարծիքով Մ. Փորթուգալյանն առաջիններից մեկը հասկացավ, որ թուրքի նպատակն է եղել «ջնջել հայկական ցեղը յուր հայրենիքի միջէն», և եթե հայ ժողովուրդը ժամանակին չսթափվի ու չպայքարի, կկորցնի ամեն ինչ, ու ինքն էլ կկորսվի: Հեղինակն իրավացիորեն շեշտում է, որ «Արմենիա»-ն առաջին թերթն էր, որ բարձրաձայնեց արևմտահայության տառապանք-ների մասին, վառեց հայրենասիրության կրակը, զարգացրեց սեփական ուժերին ապավինելու, համերաշխ գործելու միջոցով ազատությանը հասնելու դրույթները:

Պատմաբան Ա. Համբարյանն[44] էլ, քննարկելով Փորթուգալյան-արմենականներ առնչություններին, գրում է, որ իմանալով, թե իրեն ու իր թերթին են վերագրում Արմենական կուսակցության հիմնադրման պատիվը, Փորթուգալյանը հայտարարել է, որ «Արմենիան» իր անունով երբևէ կուսակցություն չի հիմնադրել: «Այնուամենայնիվ, արմենականները շարունակում էին «Արմենիա»-ն համարել իրենց գաղափարական օրգանը»,- նշում է Համբարյանը և ավելացնում, որ արմենականները «Արմենիա»-ի հետ կապված էին միայն գաղափարապես»[45]: Կիսում ենք հեղինակի տեսակետը, որ թերթը նորարա-

---

[43] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980, էջ 233:

[44] Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990:

[45] Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 160: Ժամանակաշրջանի շատ ու շատ կնճռոտ հարցեր ճիշտ ընկալելու խնդրում մեզ համար օգտակար են եղել նաև հեղինակի «Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Ե., 1965, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914)», Ե., 1979, աշխատությունները, թեև անմիջականորեն նվիրված չեն «Արմենիա» թերթի պատմությանը:

ական գաղափարների յուրահատուկ շտեմարան էր և մեծ ներդրում ունի հայ քաղաքական մտքի զարգացման գործում:

Պատմաբան Հ. Վարդանյանը, պարզաբանելով հայության ազատագրության հնարավոր ուղիները, իրավացիորեն շեշտել է, որ հայրենասիրությամբ և արիության ոգով տոգորված «Արմենիա»-ի «խնդիրն էր հայերի ծանր վիճակի մասին իրազեկել աշխարհի պրոգրեսիվ մարդկությանը, իրենց եղբայրների ազատագրության շուրջ կենտրոնացնել և պրոպագանդել պայքարի գաղափարախոսությունը»[46]:

1950-ականների երկրորդ կեսից առաջին վախվորած և խիստ զգուշավոր աշխատություններին աստիճանաբար փոխարինելու եկան ավելի համարձակ ու նպատակասլաց երկեր, որոնցում ընդհանուր, տեսական նախապայմանների քննարկումներից բացի՝ տեղ էին գտնում արդեն նաև ազատագրական պայքարի որոշ դրվագներ, և կատարվում էին տեսական լուրջ եզրահանգումներ[47]:

Խորհրդային կայսրության վերջին տարիներից սկսած, առավել ևս՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո, հայ ազատագրական շարժման, ֆիդայական պայքարի, ազգային կուսակցությունների և մի շարք այլ հարակից հարցերի պատմությամբ ուսումնասիրողներն ավելի հաճախ սկսեցին զբաղվել[48]:

---

[46] Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, էջ 291:

[47] Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Գ. Ղարիբջանյանը, Ս. Երեմյանը, Ջ. Կիրակոսյանը և ուրիշներ, օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները, մուտք էին գործում տարբեր արխիվներ, դուրս բերում մինչ այդ արգելված վավերագրեր, հրատարակում և դարձնում դրանք հանրության սեփականությունը:

[48] Գալոյան Գ., նշվ. աշխ., Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012, Գրիգորյան Հ,. Ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, նույնի՝ Հայ ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Ե., 2004, Խուդինյան Գ., ՀՅ. Դաշնակցության քննական պատմություն ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Ե., 2006, Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, Հայ ազ-

Արժևորելով Մ. Փորթուգալյանի ազգանվեր գործունեությունը՝ ակադեմիկոս Գ. Գալոյանն իրավացիորեն նշում է, որ նա ժողովրդի ազատության համար ոտքի ելած փաղանգի հավատավոր ներկայացուցիչն էր և իր «Արմենիա»-ով հայոց մեջ զինված պայքարով ազատագրվելու գաղափարախոսության հիմնադիրներից մեկը եղավ»[49]:

Ազատագրական շարժման վերելքը ըստ Ստ. Պողոսյանի, պայմանավորված էր տնտեսական, քաղաքական, մշակութային և միջազգային ազդակներով, որոնք հայ մարդու մեջ փոփոխության պահանջ առաջացրին: Այդ լուսավոր գաղափարի առաջին սերմանողներից մեկը նա «Արմենիա»-ն է համարում [50]:

Հայ ազատագրական պայքարում «Արմենիա» թերթի դերակատարությանը մեզ համար ընդունելի մոտեցում ունի Է. Կոստանդյանը: Ըստ նրա՝ Եվրոպայից դուրս մղվելուց հետո օսմանյան իշխանությունները կայսրության արևելյան շրջաններում վարում էին հայահալած քաղաքականություն, որի արդյունքում հայ և թուրք ժողովուրդների միջև եղած հակասությունը վերաճեց «ով-ումի» անզիջում պայքարի: Այդ գոյակռվի ակունքներում Կոստանդյանն առանձնահատուկ տեղ է հատկացնում «Վանում հեղափոխական սերունդ

գային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Է. Կոստանդյանի խմբագրությամբ, Ե., 2003, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918--1920 թթ.), Ե., 2005, Ներսիսյան Ա., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հ. Բ և Գ, Պէյրութ, 2008, Պէյրութ, 2013, նույնի՝ Ավետիք Մահակյան, Ե., 2006, նույնի՝ Ռուբէն, Ե., 2007, Մարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, նույնի՝ 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, Մվազյան Վ., Մարգիս Հայկունի. կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973, Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, Կարապետյան Ա., Արմենական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 1995 և այլն:

[49] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 404:

[50] Պողոսյան Ստ., Հայոց ցեղասպանության պատմություն, հ., 1, Ե., 2008, էջ 382:

ստեղծող»[51] Փորթուգալյանին: Բարձր գնահատելով վերջինիս կրթալուսավորական ու կազմակերպչական գործունեությունը և չներելով «ցուցամոլ արարքները»[52], պատմաբանը շեշտում է, որ Մ. Փորթուգալյանի աշակերտները ստեղծեցին հայ անդրանիկ Արմենական կուսակցությունը»[53]:

Հեգելյան սկզբունքով բանաձևելով ազգային կուսակցությունների եռամիասնությունը՝ թեզ (արմենականություն), հակաթեզ (հնչակյաններ)[54] և սինթեզ (դաշնակցություն), Գ. Խուդինյանը նշում է, որ արմենականությունն առաջադրեց «ազգային հեղափոխության» գաղափարը, որը պետք է հիմնվեր սեփական ուժերի և հնարավորությունների վրա: Այդ ուժերի ցրված լինելն ու տկարությունը հանգեցրինՓորթուգալյանի կողմից «ներքին ուժի» ձևավորման ռազմավարակուսն խնդրի առաջադրմանը որպես արտաքին հանգամանքների բարենպաստ դասավորությունից օգտվելու վճռորոշ պայման»[55]: Պատմաբանի բնորոշմամբ Մ. Փորթուգալյանը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ սկսվող ազատագրական մաքառումներին, ինչն էլ հանգեցնում էր նախ կրթվելու, կազմակերպվելու, ապա նաև սեփական ուժ ձևավորելու գաղափարին: Սակայն հայ երիտասարդության արմատական թևը դժգոհ մնաց «Արմենիա»-ի չափավոր ուղեգծից և որդեգրելով անմիջապես գործե-

---

[51] Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 89:

[52] Նույն տեղում, էջ 90-91:

[53] Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան (հասարակական-քաղաքական գործունեությունը), Ե., 2000, էջ 325:

[54] Ընդհանուր առմամբ, ընդունելով հանդերձ հեգելյան այս բանաձևումը, այնքան էլ համամիտ չենք հայ ազատագրական շարժման ակունքներում կանգնած կուսակցություններին ու նրանց առաջ քաշած տեսակետները՝ որպես հակադիր բևեռներ դիտարկելուն: Ի վերջո, նրանք այնքան էլ լավ չէին տիրապետում տարբեր իզմ-երին և անում էին այն, ինչ կարողանում էին, անկախ նրանից, թե ինչ էին մտածում կամ ինչի շուրջ էին բանավիճում ժնևներում նստած տեսաբան-առաջնորդները:

[55] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006,էջ 118:

լու ու առանց հապաղելու արդյունքներ տեսնելու մարտավարություն՝ «հակադրեց միմյանց ազգային դատը ու համամարդկային ազատագրության իդեալը»[56]: «Արմենիա»-ն, փորձելով կողմնորոշվել իր դավանած սկզբունքների և «Հնչակ»-ի առաջ քաշած թեզերի միջև, նկատում էր, որ «առաջինը ամեն հայու ափին մէջ մէկ մէկ մարդինի հրացան կուզէ տեսնել, երկրորդը ամեն Հայու գանկին մէջ «Կարլ Մարքս»ի միգամած վարդապետութիւնները կուզէ զետեղել»[57]: Ուստի, երբ «Արմենիան» «Հնչակի» կտրուկ հարցադրումներին պատասխանում էր «Երազով օր կանցունենք»[58] և «Միութիւնը զօրութիւն է»[59] ձևակերպումներով, ապա ակնհայտ է դառնում, եզրակացնում է Գ. Խուդինյանը, որ «նման բանաձևումների տեսական-գաղափարախոսական «պարզունակությունը», «գործնական գետնի վրա ավելի իրատեսական է, քան հնչակյանների տեսական մտքի՝ արևմտահայ իրականությանը չհամապատասխանող «խորությունը»[60]:

Թերթի հիմնադրման պատմությանը հետաքրքիր, սակայն մեզ համար անընդունելի տեսակետ է հայտնել Լ. Ալոյանը: Նրա կարծիքով, քանի որ օսմանյան իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանել ընդդիմադիրների նկատմամբ. «վերջիններս ստիպված եղան Մ. Փորթուգալյանին գործուղել (՞) Մարսել...»[61]:

Ազգային-ազատագրական շարժման, ավանդական կուսակցությունների, անհատ գործիչների գործունեության ուսումնասիրության, այս դեպքում նաև «Արմենիա» թերթի պատմությունը շարադրելիս, հատկապես արխիվային վավերագրերի սակավության պայմաններում, խիստ կարևորվում են հուշագրությունները:

---

[56] Նույն տեղում, էջ 121:

[57] Խուդինյան Գ., Հ3 դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Ե., 2006, էջ 118:

[58] Մեր ընկերը-մեր ոյժը, «Հնչակ», 1891,թիվ 3, մարտ, էջ 2:

[59] «Արմենիա», 1891, 15 յուլիս, թիվ 90:

[60] Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 124:

[61] Ալոյան Լ., «Արմենիա» շաբաթաթերթը (հրատարակության 125-ամյակի առթիվ), ԼՀԳ, Ե., 2010, № 3 (629), էջ 110:

Արմենական-ռամկավար հուշագիրները հիմնականում դրական են գնահատում Փորթուգալյանի գործունեությունն ու «Արմենիա»-ն[62]: Հնչակյան հուշագիրների[63] մոտ նկատելի է երկու մոտեցում. 1890-ական թթ. գրված հուշերում բոլորն անխտիր քննադատում են Մ. Փորթուգալյանին, պահպանողական անվանում: Հետագայում, նեղվելով ՀՅԴ-ի տիրապետող դիրքերից, սկսում են դրական վերաբերվել հավանական դաշնակից դարձած արմենականներին, նրանց հոգևոր հայր Մ. Փորթուգալյանին ու նրա թերթին: ՀՅԴ հուշագիրները[64] գնահատում և ներողամիտ վերաբերմունք են դրսևորում Մ. Փորթուգալյանի ու «Արմենիա»-ի առաջին տարիների գործունեության նկատմամբ, իսկ հետագայում գաղափարական հարցերում քննադատում են: Ավելի ուշ, գնահատելով Փորթուգալյանի դաշնակցա-

---

[62] Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, Տամատեան Մ., Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վահէ Ղազարեան, Պէյրութ, 1985, Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեքենագիր), տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշա-ձեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28, Պօղոսեան Հ., Մեր դերը, ի՞նչ եղաւ եւ ինչպիտի ըլլայ, Պոսթոն, 1935, նույնի՝ Կուսակցական կեանքի յուշերս, Պէյրութ, 1987:

[63] Ճանկուլեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն, Կ.Պոլիս, 1913, Խան-Ազատ Ռ.,Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 11, սեպտեմբեր, էջ 124-138, 1927, թիվ 1, նոյեմբեր, էջ 122-135, 1927, թիվ 2, դեկտեմբեր, էջ 112-130, 1928, թիվ 3, հունվար, էջ 114-128, 1928, թիվ 4, փետրվար, էջ 123-135, 1928, թիվ 5, մարտ, էջ 102-114, Աղամիրեան Խ., Հայ տոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության և նրա գործունեության մասին, Բաքու, 1925, ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 24, Մապպահ-Գիլեան Ստ., Փոքր Հայքի յիշատակներ, Չիկագո, 1917, Բերբերեան Ռ., Պատրանքներ-ի շրջանից և այլն:

[64] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե., 1990, Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. առաջին, Պոսթրն, «Հայրենիքի» տպարան, 1950: Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մաս 4-րդ,1937, թիվ 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, թիվ 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, թիվ 6, էջ 150-153, Լեվոն Թադէոսեանի յուշերը, գրի առաւ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 7, էջ 176-187, Կարնոյ առաջին դէպքը, «Շէրամ Ղազարեանի յուշերը», «Դիվան ՀՅ Դաշնակցության», հ. առաջին, Պոսթրն, 1934, էջ 3-10, Ղեւոնդ Կանտոյեանի յուշերէն, ամփոփեց Արսէն Թերլեմէզեան, «Հայրենիք», ամսաՀիր, 1956, թիվ 4, էջ 87-97, Մոզեան Վ., Վարդենեսցի Մարգար վարժապետը եւ Աւգուստի դէպքը, «Տարոնի արծիւ», օրգան տարոնական ոգու, 1941, թիվ 17, էջ 8-14, Ֆերահեան Մ., էջ մը անցեալէն «Հայրենիք», 1925, թիվ 1, էջ 130-132, տե՛ս նաև Յեղափոխական խմորումներ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, թիվ 1, էջ 1-14 և այլն:

մետ պահվածքը և «Արմենիա»-ն համարելով «անվտանգ», առիթը ներկայանալու դեպքում օգտագործում են թերթի ամբիոնը:

Թեև կուսակցականությունից զերծ չեն, սակայն փաստառատ են և սկզբնաղբյուրի նշանակություն ունեն Ա. Եկարյանի հուշերը: Դրանցում ներկայացնելով հեղափոխու-թյան արշալույսը՝ նա նշում է, որ «Արմէնիան ամէն կողմ տարածուած էր եւ՝ «Մշակի հետ՝ երիտասարդութեան մտքին հայրենասիրական թռիչք մը կուտար» և «Արմենիաի մէջ նոր զարկ մը տրվեց երկրի շարժումին»[65]:

1880-ական թթ. մինչև 1896 թ. ներառող Մ. Տամատյանի հուշերի առաջին մասում[66] Մ. Փորթուգալյանին հեղինակը իրավացիորեն մեղադրում է այն բանում, որ «իր յեղափոխական գինիին մէջ շատ ջուր խառնած էր, այնպէս որ իր հիմնած «Արմենիա» թերթին ի սկզբան տուաւ չափաւորական ուղղութիւն մը», և որ ինքը «խաղաղ առաջադիմական» էր ու «երկու գաղափարներու միջեւ կտարուբերէր, կէսյեղափոխա-կան ուղղութիւն մը ունէր»[67]:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի վարչակարգ է եղել հայրենիքում, Սփյուռքում գրվել են պատմագիտական ուսումնասիրություններ, որոնք, անկախ լույս ընծայման թվից, մեկտեղել ենք և միասնաբար քննարկել: Դրանք փաստառատ են, պարունակում են սթափ վերլուծություններ և եզրահանգումներ:

Սփյուռքում լույս տեսած աշխատություններից առանձնանում է ռամկավար Ա. Դարբինյանի պատմագիտական ուսումնասիրության ու հուշագրության շաղախ աշխատությունը[68], որում հեղինակը

---

[65] Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, էջ 7:

[66] Տամատեան Մ., Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1985:

[67] Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 25-29:

[68] Սովորաբար հուշագրությունները պատմագիտության մեջ համարվում են սկզբնաղբյուրներ, սակայն երբեմն (օրինակ՝ Ա. Դարբինյանի, Ռուբէնի, որոշ չափով նաև Մ. Նաթանյանի և այլ երկերի դեպքում) դրանք հուշագրության և ուսումնասիրության համադրություն են և սկզբնաղբյուր լինելով հանդերձ՝ նաև ուսումնասիրություններ են: Թե որն է դրանցում գերակշռող, միանշանակ դժվար է ասել: Կարծում ենք,

բարձր է գնահատում «Թուրք բռնապետութեան դէմ ըմբոստացող դասակարգի բողոքի ձայն «Արմենիան»[69]: Նա շեշտում է, որ «Արմենիա»-ի հրատարակությունը և «անոր միջոցավ արտայայտուած առողջ գաղափարներն են, որ ներշնչեցին փորթուգալեաններուն որոշ ուղղութիւն եւ մարմին մը տալով իրենց գաղափարական միութեան, սկիզբը դարձնել զայն նաեւ հայ անդրանիկ յեղափոխական կուսակցութեան»[70]: Խոսելով ազատագրական շարժման նախակարապետներ Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի համագործակցության մասին՝ Ա. Դարբինյանն իրավացիորեն եզրակացնում է, որ «Անոնք 40-50 տարի առաջ խորապես այն համոզման եկած էին, թե հայերը Թուրքիո մէջ ինքնապաշտպանութեան պէտք է դիմէն ամեն բանէ առաջ, ուզեցին արթնցնել հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը, բայց բնաւ չըսին, թե փութկոտութեամբ և տղայական ցոյցերով կարելի պիտի ըլլա ժողովուրդն ապստամբութեան մղել»[71]: Միաժամանակ հեղինակը խոսում է Մ. Փորթուգալյանի երբեմն դրսևորվող ցուցամոլ և անպատշաճ արարքների մասին:

«Արմենիա»-Արմենական կուսակցություն առնչությունները քննարկող Վ. Ղազարյանը կուսակցության գաղափարական հոգևոր հայր է համարում Մ. Փորթուգալյանին, իսկ ծնիչ՝ «Արմենիա»-ն. «-Հայութիւնը,- հաւանաբար նկատի ունենալով որ կազմակերպութեան յարած անդամները ստանձնած էին Փորթուգալեանի «Արմենիա» թերթին ցրումը եւ դարձած անոր միտքերուն տարածիչը,- կուսակցութեան անդամները ճանչցաւ իբրեւ արմենիականներ, եւ այդ-

---

որ աղբյուրագիտական հենքով, բարձրացրած հարցերով, առաջ քաշած տեսակետներով և հեղինակների սուբյեկտիվ մոտեցումներով դրանք ավելի շուտ պատմագիտական աշխատություններ են հիշեցնում: Մեզ համար կարևորը դրանց պատմագիտական մտքի գնահատումն է:

[69] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, յուշեր 1890էն 1940, Ե., 2003, էջ 81:

[70] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, յուշեր 1890էն 1940, Ե., 2003, էջ 81:

[71] Նույն տեղում, էջ 106:

պիսով է որ շարժումն ինքզինք անուանեց Արմենական կազմակերպութիւն»[72]: Իսկ հետագայում, երբ կուսակցությունն «արդեն գործնական աշխատանքներու շրջանին մեջ էր», հնարավոր էր համարվում «օգտուիլ այդ թերթին մէջ երեւցած թելադրութիւններէն»[73] և նյութապես օգնել նրան:

«Արմենիա»-ն իրատեսական խմբագրականներով «լաւագոյն առաջնորդը կը հանդիսանար»[74] մեր ազատագրական պայքարում իր հուշագրություն-ուսումնասիրու-թյունում արժևորում է Մ. Նաթանյանը: Հեղինակը, շարժման «աննախընթաց ծախողանքը» տեսնելով, հրամայական անհրաժեշտություն էր համարում «Արմենիա»-ի օրինակով «ընդունիլ եւ հրապարակ հանել սխալները, զգուշացնելու համար գալիք սերունդները մեր սայթաքումներէն»[75]:

XIX դարի 2-րդ կեսի արևմտահայերի ազատագրական պայքարի խնդիրներին նվիրված իր աշխատության մեջ Լ. Նալբանդյանը, ներկայացնելով այդ պայքարի զարգացման ընթացքը, իրավացիորեն նշում է, որ «ազգը բարդոպավորվածից վերածվեց արթնացած հասարակության[76] և դրանում «մամուլը կարևոր կրթական դեր խաղաց ու մատնանշեց դեպի ապստամբություն տանող ճանապարհը»[77]: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում փայփայում էր օտարի տիրապետությունից ազատվելու գաղափարը, իսկ աշխարհում տեղի ունեցած որակական փոփոխությունները, Օսմանյան կայսրության՝ փլուզման եզրին լինելու հանգամանքը հետբեռլինյան շրջանում արդեն հույս էին ներշնչում, որ կարող են արդյունավետորեն շարժվել դեպի ազատություն: Կիսում ենք հեղինակի տեսակետը, որ ժողովր-

---

[72] Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ), Պէյրութ, 1985, էջ 12:
[73] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 40:
[74] Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրէ, 1990, էջ 14:
[75] Նաթանեան Մ., նշվ. աշխ., էջ 14:
[76] Նալբանդյան Լ., Հայ հեղափոխական շարժում: Հայ քաղաքական կուսակցությունների զարգացումը 19-րդ դարի ընթացքում, Ե., 2012, էջ 55:
[77] Նույն տեղում, էջ 58:

դին դեպի այդ ուղին առաջնորդողներից էր Մ. Փորթուգալյանը, ում «...հայացքներն արագորեն շրջվեցին դեպի հեղափոխության ուղին, ով եկավ այն հավատի, որ ազատությունը չի կարող նվաճվել առանց երկար նախապատրաստության»[78]: Իրատեսորեն գնահատելով թուրքական կառավարության դեմ հայության պայքարը՝ հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ այն «համայնքի ներսում վերածվեց դասակարգայինի»[79] :

Հայոց պատգամը «Մեծ երազ» անվանած Գ. Ահարոնյանը[80] կարևորում է «Արմենիա»-ի հանդարտաբարո ընթացքը և բերած մեծ նպաստը «կարելիին արուեստ քաղաքականութիւնը» քարոզելու, ժողովրդի գիտակցությանը հասցնելու ու ոտքի հանելու գործում: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ «Արմենիա» թերթը պոռոտ քարոզչութենէ և արկածախնդրական վտանգաւոր գործունեութենէ հեռու մնաց միշտ, անիկա որդեգրեց իրատես վարքագիծ մը, եւ խուսափեցաւ շատագովելէ ծրագիրներ, որոնք կրնային անհարկի կերպով վտանգել մեր անպաշտպան զանգուածը»[81]:

Պ. Տեփոյանը «Ուխտուածներ» շարքում[82] թեև «Արմենիա» թերթին շատ տեղ չի հատկացրել, սակայն իրական գույներով է ներկայացրել երկրում տիրող ծանր կացությունը և ժողովրդի պայքարելու պատրաստակամությունը: «Պերլինի դաշնագրութեան հետեւող հայկական մտաշուարումի շրջանը երկար չտեւեց»,- արձանագրում է հեղինակը, ապա շեշտում, որ ժողովրդին «կառաջնորդէին շարժումներն ու ինքնամուղ շարժողները»[83]: Դա «սրբազան հրայրքէ մը

---

[78] Նույն տեղում, էջ 101:

[79] Նույն տեղում, էջ 50:

[80] Ահարոնեան Գ., Մեծ երազին ճամբուն վրայ (ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Գ հրատարակութիւն, Լոս Անճելըս, 1968:

[81] Ահարոնեան Գ., նշվ. աշխ., էջ 38:

[82] Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրութ, 1964, Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988, Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրութ, 1988:

[83] Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988, Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրութ, 1988, էջ 17:

բռնուած» ցեղի ուժի արտահայտիչ երիտասարդությունն էր, որը նետվեց՝ ոտքի հանելու ժողովրդին և իրագործելու ազատության անկարելի հրաշքը: Առաջինը եղավ մեր մտավոր զարթոնքը՝ «...ութսունական թուականներու վերջերուն մեր քաղաքական ազատութեան առաջապահները հրապարակ կու գային, գերագոյն վճռականութեամբ մահը իսկ արհամարհելով նետուեցան պայքարներու մէջ»[84],- գրում է Պ. Տեփոյանը և ընդգծում, որ դրանց առաջին շարքերում էր Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով:

Ներկայացնելով ազատագրական գոյամարտում թերթի ներդրումը՝ Հ. Ուզունյանը գրում է. «Արմենիա»ն հանդիսացաւ Թուրքիոյ բռնատիրական, վայրագ արարքները քողազերծող, հայ ժողովրդին բողոքը բանաձեւող եւ անոր իրաւունքները պահանջող հայ հայրենասէրին ձայնը»[85]: Ըստ Ուզունյանի՝ «Արմենիա»-ն «կթելադրէր դիմել բոլոր յարմար միջոցներուն հայ ժողովրդին ազատօրեն ինքզինք կառավարելու իրաւունքը» նվաճելու համար, «կիրատարակէր ողբալի վիճակը գաւառներու հայութեան և կարծարծէր հայրենասիրական բուռն զգացումները ժողովրդին մէջ»[86]:

Հ. Վարդիվառյանն[87] էլ նշում է, որ հայ ժողովրդին ոտքի հանելու համար անհրաժեշտ էր նախ հեղափոխել նրան գաղափարապես, ինչն էլ նախաձեռնեց «Արմենիա»-ն: Հեղինակն ընդգծում է, որ Մ. Խրիմյանի հայրենասիրությունը, Մ. Փորթուգալյանի լուսավորությունը և Մ. Ավետիսյանի ազատասիրությունը հեղաբեկում առաջացրին հայության մեջ և ծնունդ տվեցին հեղափոխական գաղափարախոսությանը, զենքի դիմելու ու ինքնապաշտպանվելու մղումներին: «Ար-

---

[84] Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988, Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրութ, 1988, էջ 25:

[85] Ուզունեան Հ., Արևմտահայ Ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և Ռամկավար Ազատական կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս Անճելըս, 1986, էջ 22:

[86] Նույն տեղում:

[87] Վարդիվառեան Հ., «Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան», հ. Ա, «Արմենական կազմակերպութիւն» բաժին,Նիւ Ճըրզի, 2015:

մենիա» թերթի գաղափարներից ծնվեց և հասակ առավ ազատագրական պայքարի գիտակցությամբ ու վճռական պայքարի լծված մի սերունդ, որը հայոց փրկությունը տեսնում էր մարտական ուժի մեջ: Հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ կուսակցության օրգանի դերը փաստորեն որոշ ժամանակ կատարել է «Արմենիա»-ն:

Ա. Ահարոնյանը[88] «Արմենիա»-ն համարում է «ազատալեզու քարոզիչ», որը «չընկալով հանդերձ բռնի ուժի ջատագով, յեղափոխական ոգի կը ներշնչէր Վասպուրականի երիտասարդ սերունդին և զայն կը մղէր ընդդէմ թուրքին»[89]: Պարբերականի քարոզչակազմակերպչական գործունեությունը բարձր են գնահատել նաև սփյուռքահայ նշանավոր մտավորականներ Մ. Ճիզմեճյանը, Կ. Սարաֆյանը, Ս.Իզմիրլեանը, Ն. Ակիշյանը և ուրիշներ[90]:

Հայ ազատագրական գաղափարախոսությանը նվիրված ծանրակշիռ ներդրում են Գ. Գյոզալյանի ուսումնասիրությունները[91]: Հայաստանի հայությանը պարտադրված խորհրդային ամբողջատիրության սկզբնական շրջանում, երբ հայ քաղաքական մտքի ու ազգային արժեքների դեմ բոլշևիկյան գաղափարախոսության դիտանկյունից ծավալվեց պատմության նենգափոխումների ալիքը, Գ. Գյոզալյանը մերկացրեց խեղաթյուրելու այդ փորձերը և ընդգծեց այն համազգային արժեքները, որոնք կարևոր էին ժողովրդի հիշողության պահպանման և վերաթարմացման գործում: Բանաձևելով, որ 1880-ական թթ. «...թուրքը երկրի իրավական տերն էր, քուրդը՝ իրա-

---

[88] Ահարոնեան Ա., Հերոսական դէմքեր Ռ.Ա.Կ.ի, Լոս Անճելըս, 2001:

[89] Ահարոնեան Ա., Երախտավորներու ոտին, հ. Ա, Լոս Անճելըս, 2006, էջ 14-15:

[90] Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնօ, 193, Սարաֆեան Կ., Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան վրայ, Պէյրութ, 1960, Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին անձնական յուշերուս ընդմէջէն, Պէյրութ, 1962, Ակիշեան Ն., Մեծերէն տասը, Լոս Անճելըս, 1990:

[91] Գիւզալեան Գ.,Պատմական խնդիրներ հեղինակ «Արազ» հրատարակչութիւն, Պէյրութ, 1937, 149 էջ, նույնի՝ Հայ Քաղաքական Մտքի Զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, մատենաշար «Դրօշակ», Թիւ 66, Փարիզ, 1927, 160 էջ, նույնի՝ Խրիմեան Հայրիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954:

կան տերը, հայը՝ հայրենիք ունեցողը եւ իրավազուրկը»[92], Գյոզալյանը պարզաբանում էր, որ ստեղծված իրավիճակում քուրդն ու թուրքը միացել էին հայի դեմ, և հենց դրա արդյունքում ծագեց Հայկական հարցը: Իսկ հայության մեջ սկսվեցին մտավոր վերածնության ու հոգևոր վերափոխման շարժումները, որոնց ակունքներում հեղինակը տեսնում է Փորթուգալյանի ու նրա «Արմենիա»-ի դերակատարությունը[93]:

Թուրք պատմաբանները[94], որոնց ձայնակցում են ադրբեջանցի կեղծարարները[95], ևս անդրադարձել են քննարկվող ժամանակաշրջանին: Նենգափոխելով պատմությունը՝ նրանք հայ ազատագրական պայքարը համարել են արհեստածին, իսկ հայությանը՝ «սնհավատարիմ ազգ», իբր որի համար էլ պատժվել են:

Աշխատությունը շարադրելիս «Արմենիա» թերթի քաղաքական բնույթի հրապարակումները համեմատել ենք ժամանակի մամուլում («Մշակ», «Հնչակ», «Դրօշակ», «Մարտ», «Նոր կեանք» և այլն) տեղ գտած տեսակետների հետ և միշտ ելակետ ենք ունեցել ու այդ գնահատականի հիմքում դրել համազգային շահը:

---

92 Գիւզալեան Գ., Խրիմեան Հայրիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954, էջ 6:

93 «Արմենիա» թերթի ու Փորթուգալյանի վերաբերյալ Գյոզալյանի տեսակետներին ավելի մանրամասն կանդրադառնանք համապատասխան գլխում:

94 Taner Akçam, TürkUlusal Kimliği ve Ermeni Sorunu. Istanbul, 1995, Documents Diplomatiques Ottomans: Affaires Armnniennes (ed. by Bilâl Şimşir), vol. 1 (1886-1893). Salahi R. S., The Ottoman Armenians, London, 1987, Ankara, 1985, Halaçoğlu Yusuf , Ermenitehciri (4 baskı). Istanbul, 2004, Esat Uras, The Armenians in History and the Armenian Question. Istanbul, 1988, Mehmed Hocaoğlu, Arşivvesi kalariyla Tarihte Ermeni MezQlimive Ermeniler, Ankara, Istanbul, 1976, E. Z. Karal, Armenian Question (1878 – 1923), Ankara, 1975 և այլն:

95 Гасымлы Муса, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг., В поисках исторической истины, М., 2014, Вердиева Х., Гусейн-заде Р., Родословная армян и их миграция на Кавказ с Балкан, Баку, 2003,. Юсиф кзы Жердиева, Первая Мировая война и Кавказские мусулмани-беженци, журнал «Истина», Астрахань, 2013, № 2, стр. 34-35. Наджафов Б., Лицо врага, История армянского национализма в закавказье в конце XIX- начале XX веков, Баку, 1993, Файгл Э., Правда о терроре, армянский терроризм-истоки и причини, Баку, 2000, էջակալված չէ:

Ավելացնենք, որ չենք կիսում այն հետազոտողների տեսակետները[96], որոնք փորձել են ստվերել «Արմենիա»-ի կարևոր տեղը հայ քաղաքական մտքի ու մամուլի պատմության մեջ: Համամիտ ենք վաստակաշատ Ջ. Կիրակոսյանի այն կարծիքին, որ. «...չի կարելի համաձայնել այն ընկերների հետ, ովքեր փորձել են նսեմացնել «Արմենիաս» թերթի տեղը հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, նրա խաղացած ակտիվ դերը արևմտահայության ազատագրության գաղափարախոսության զարգացման, գործնական քայլերի մշակման ասպարեզում»[97]: Մերժում ենք մեզանում տեղ գտած այն թյուր եզրահանգումը, թե իբր «Արմենիայի» նպատակն է եղել հայոց ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտության օգնությամբ: Թերթի հրապարակումների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերիշխող է եղել նախ և առաջ սեփական ուժերին ապավինելու դիրքորոշումը: Ավելին, Մ. Փորթուգալյանի կարծիքով ազատագրական շարժման ղեկավարները ժողովրդի մեջ ու նրա հետ պետք է լինեին, այնինչ երբեմն նրանց մեծ մասը նույնիսկ Հայաստանում չէին եղել: Իհարկե, Մ. Փորթուգալյանը դեմ չէր Եվրոպայի օգնությանն ու դիվանագիտական աջակցությանը, սակայն կոչ էր անում նախ և առաջ հույսը դնել սեփական ուժերի վրա: Այնպես որ «Արմենիա»-ն հայ քաղաքական մտքի վրա խոր ու անջնջելի դրոշմ է թողել և պարունակում է շատ ուսանելի դրույթներ, որոնք այսօր էլ արդիական են ու կիրառելի:

---

[96] Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925, նույնի՝ Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001 և այլն:

[97] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 248:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

1.1. Մկրտիչ Փորթուգալյանի կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը

«Արմենիա» պարբերականի որդեգրած քաղաքական ուղղությունը, նպատակներն ու հիմնական ասելիքը դրսևորվել են նրա խմբագրականներում, որոնց հեղինակը Մ. Փորթուգալյանն էր: Նա թերթի գլխավոր տեսաբանն էր, ուղղություն տվողն ու անփոփոխ ղեկավարը: Նա էր հաղթահարում բոլոր գործնական ու կազմակերպչական դժվարությունները, խմբագրում նյութերի մեծ մասը, ապահովում կապը թղթակիցների հետ, երբեմն էլ՝ շարում տեքստերը: Իրավիճակն էլ էր բարդ ու հակասական, երբ նա ձեռնարկեց թերթի լույսընծայումը: Օսմանյան գաղտնի ծառայությունների մշտական խոչընդոտները, Ռուսաստանի հակասական վերաբերմունքը և, ի վերջո, ֆինանսական սուղ միջոցները դժվարհաղթահարելի պատնեշներ էին ընդդեմ «Արմենիա»-ի: Մ. Փորթուգալյանն այս խոչընդոտները հաղթահարելու համար դրսևորեց աներեր վճռականություն, անկոտրում կամք, արիություն ու անսասան հավատ և կյանքի կոչեց իր հոգեզավակ «Արմենիա»-ն:

Այնպես որ հանգիստ խղճով կարելի է արձանագրել՝ Մ. Փորթուգալյան ասելով հասկանում ենք «Արմենիա» թերթ, իսկ «Արմենիա» ասելով՝ Մ. Փորթուգալյան: Հետևապես նախ կներկայացնենք Մ. Փորթուգալյան գործչին, նրա հասարակական-քաղաքական հայացքներն ու ազգանպաստ գործունեությունը, ապա «Արմենիա»-ն՝ մշտապես դիտարկելով նրանց որպես մեկ ամբողջություն և փոխպայմանավորված լինելու հանգամանքը:

XIX դարի վերջերին վերազարթնող հայության կյանքում տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ, որոնք շրջադարձային եղան ու պայմանավորեցին նրա հետագա գոյընթացը պատմության շրջապտույտում: Առանձնապես կարևորագույն դերակատարություն ունեցան ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմը և հատկապես Բեռլինի վեհաժողովի թեև մշուշապատ, սակայն հույսերով լեցուն որոշումները, «Երկաթե շերեփի» քարոզը: Դրանից ոգևորված՝ ազատատենչ հայ հերոսները, որոնք ֆիդայիներ կոչվեցին, զենքի դիմեցին, ոգեկոչեցին ժողովրդին համախմբվել և դուրս գալ պայքարի:

Ազատության համար սրբազան պատերազմի գաղափարը համակել էր շատերին: Օդի նման անհրաժեշտ էր դարձել այդ ձգտումները համակարգելու և ղեկավարելու համար ստեղծել կազմակերպական կառույցներ, որոնք կկարողանային միասնական հունի մեջ դնել, կանոնակարգել այդ շարժումներն ու հասցնել բաղձալի հաղթանակի: Հայաստանում և հայաշատ այլ վայրերում մեկը մյուսի հետևից ծնվում էին խմբակներ ու զանազան միություններ, որոնցից յուրաքանչյուրն իր հնարավորությունների ու կարողությունների չափով, գիտակցական ու գործնական միջոցներով ձգտում էր հասնել տառապած հայրենիքի ազատությանը: Ընդ որում այդ ազատությունը յուրաքանչյուրը հասկանում էր յուրովի, անկախության, ինքնավարության, ազատ գործելու իրավասության և զանազան այլ տարբերակներով: Երկար փնտրտուքից հետո հայ ժողովուրդը աշխարհի շատ ժողովուրդների նման հանգեց կուսակցություններ հիմնելու գաղափարին: Միայն, ցավոք, մեզանում ծնված կուսակցությունները երբեմն ավելի շատ շտապում էին վայելել ազատարարի փառքն ու դափնիները, ավելի հաճախ մրցակցում հենց այդ ասպարեզում, քան թե կատարում էին իրենց պատմական հիմնական առաքելությունը:

Ազատագրական այդ շարժումն ընդգրկեց նաև եվրոպաբնակ հայությանը, որի հիմնական մասը ոչ վաղ անցյալում էր արտագաղթել և հազարավոր թելերով կապված էր երկրին: Հատկապես եվրո-

պաբնակ մտավորականությունը փնտրտուքի մեջ էր՝ ինչ ձևերով ու միջոցներով գտնի ազատություն տանող ճանապարհը: Այդ ուղիների որոնման, երազած ազատությանը հասնելու հնարավոր միջոցների մատնանշման գործում անկրկնելի դերակատարություն ունեցավ արևմտահայ նշանավոր մտավորական, անխոնջ գործիչ Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա» թերթով: Մարդ, ով ամբողջովին մխրճվեց այդ շարժումների հորձանուտը և անում էր ամեն ինչ՝ սեփական ժողովրդին ազատ տեսնելու համար:

Արդեն նշեցինք, որ «Արմենիա» թերթի մասին խոսելիս ուսումնասիրողներն անդրադարձել են նաև Մ. Փորթուգալյանի կյանքի ու գործունեության կարևոր դրվագներին: Սակայն այդ անդրադարձները հպանցիկ ու պատահական բնույթ են կրել: Չկա ամբողջական և ամփոփ աշխատություն: Ընդհանրապես, չհաշված հոբելյանների և նմանատիպ այլ առիթներով զուսպ ու ժլատ որոշ հրապարակումները, մեզանում Մ. Փորթուգալյանի ու «Արմենիա»-ի մասին գրեթե չի գրվել: Մ. Փորթուգալյանի՝ ավելի շատ գործի, քան խոսքի մարդ լինելու հանգամանքն էլ այն բացասական հետևանքն է ունեցել, որ նրա կյանքի որոշակի փուլերի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները անչափ ժլատ են: Նա պարզապես լուռ և անտրտունջ տարել է նախախնամության կամքով իր ուսերին դրված բեռը բազում խոչընդոտներով լի այն ճանապարհով, որի վերջին հանգրվանը պիտի լիներ հայության ազատագրումը դարավոր բռնատիրական կապանքներից: Հաճելի ու շահեկան բացառություններ են վերը հիշատակված՝ Պ. Թորոսյանի հեղինակած «Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան»[98] գրքույկն ու «Քառասուն տարուան աշխատաւորը...»[99] հոդվածների ժողովածուն:

---

[98] Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, Կ. Պոլիս, 1912:

[99] «Քառասուն տարուան աշխատաւորը Մկրտիչ Փորթուգալեան» Յարգանքի պսակ քառասնամեայ յոբելեանի առթիւ, Տ. Չէօկիւրեանի խմբագրությամբ, Կ. Պոլիս, 1914:

Մ. Փորթուգալյանին բնորոշող անդրադարձներ կան բանագետ-ազգագրագետ-պատմաբան Վ. Սվազլյանի՝ արևմտահայոց կրթական գործի նվիրյալ Սարգիս Հայկունուն նվիրված ուսումնասիրության մեջ[100]: Հեղինակը նշում է, որ ազգային ինքնագիտակցության զարթոնքի գաղափարները լուսավորության միջոցով տարածելու նպատակին ծառայող, 1869 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Անձնուէր ընկերութեան» արգասավոր փորձից ոգևորված՝ Մ. Փորթուգալյանը Եվդոկիայի մեջ ևս կազմակերպում է այդ ընկերության մասնաճյուղը: Այնուհետև Մ. Փորթուգալյանը 1873 թ. Կազմակեր-պում է «Վարազդատեան ընկերութիւնը», որի նպատակն էր հասարակ ժողովրդին գրաճանաչ դարձնել, ընթերցանությամբ զարգացնել նրա մտավոր կարողությունները, ազգային ոգին բարձրացնել, և նամակով տեղեկացնում է Ս. Հայկունուն՝ Տրապիզոնում իրենց ընկերության մասնաճյուղերն ստեղծելու անհրաժեշտության մասին և նրան հրավիրում է Կ. Պոլիս: Իր երևակայության մեջ ստեղծված Մ. Փորթուգալյանի փոխարեն մայրաքաղաք եկած Հայկունին նրան տեսնում է «...խանի (իջևան) մի անկյունում ծալապատիկ նստած՝ հայ բեռնակիրներին մեսրոպյան տառերը սովորեցնելիս: Տեսնելով նրա կորաքամակ, վտիտ ու տառապյալ կերպարանքը՝ Հայկունին լռելյայն հասկանում է Փորթուգալյանին և հանձին նրա՝ գտնում իր բախտակցին»[101]: Հետագայում անդրադառնալով այդ հանդիպմանը՝ նա նշում է. «Այդ օրը վերջնականապես համոզվեցի, թե ժողովրդին նվիրվել կնշանակե տառապանքի ուղին բռնել»[102]: Նշենք, որ այդ ժամանակաշրջանը Մ. Փորթուգալյանի համար առանձնապես ծանր էր: Նա հոգեպես ընկճված էր և ապրում էր ծայրահեղ կարիքի մեջ: Բայց ժողովրդի մարդը

---

[100] Սվազլյան Վ., Սարգիս Հայկունի. Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973:
[101] Սվազլյան Վ., նշվ. աշխ., էջ 15:
[102] ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

կյանքի այդ պայմաններում անգամ, միայն հոգեկան բավականության համար, ձրի դասեր էր տալիս հայ պանդուխտներին:

Մ. Փորթուգալյանի անձը բնութագրող՝ նրա նվիրյալի կերպարն ըստ արժանվույն ներկայացնող մեծաքանակ հրապարակումներ կան «Բազմավէպ», «Ավետաբեր», «Կոչնակ», «Հայրենիք», «Ասպարեզ», «Արմենիա», նչպես նաև՝ «Զարթօնք», «Արեւ», «Շիրակ», «Պայքար», «Նոր օր», «Վէմ», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Արշակ Չոպանեան» և այլ պարբերականներում:

«Խրիմեանի հետ միասին յեղափոխական հայութիւն» կառուցող[103] Մ. Փորթուգալյանին բնորոշող անդրադարձ կա նաև Հ. Վարդիվառյանի աշխատության մեջ[104]: Շեշտելով, որ հայոց մայրանիստ Վանում ազատագրական պայքարի ծրագրերը խմորվում ու առարկայանում էին երեք Մկրտիչների հոգածությամբ ու հոգևոր թելադրանքով, հեղինակն իր մտածելակերպով բոլորից տարբերվող, «յստակ համոզումներու և երկաթի պէս ամուր» Մ. Փորթուգալյանին համարում է «Հայաստանի ու Կիլիկիոյ լուսատրութեան գործի» ռահվիրա, Արմենական կուսակցության հոգևոր հայր և «Թուրքահայոց եւ Ռուսահայոց գործակցութեան հիմը դնողը»[105]:

Մկրտիչ Ռափայելի Փորթուգալյանը ծնվել է 1848 թ. նոյեմբերի 9/21-ին[106] Կ. Պոլսում[107] պատվարժան, ուսումնասեր, բավական հարուստ գրադարանի տեր և շրջապատի հարգանքը վայելող սեղանավոր Ռափայելի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Կ.

---

[103] Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Պէյրութ, 1937, էջ 43:

[104] Վարդիվառեան Հ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հ. Ա, Նիւ Ճըրզի, 2015:

[105] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 60-62:

[106] «Մի քանի դատողութիւններ «Ազատ բեմ»ի գրածներին առթով», «Արմէնիա», թիվ 38, 1906: Ուսումնասիրությունների մեծ մասում մեզ անհայտ պատճառներով Մ. Փորթուգալյանի ծննդյան ամիս հիշատակվում է հոկտեմբերը, որն իրականությանը չի համապատասխանում:

[107] Քանի որ Մ. Փորթուգալյանը թուրքական իշխանությունների կողմից Վանից էր աքսորվել և մինչ այդ շուրջ 10 տարի այնտեղ էր բնակվել ու գործել, շատերը կարծում էին, որ ծագումով վանեցի է:

Պոլսում, սկզբում սովորել է «Մայր վարժարանում», հետո՝ Սամաթիայի Սուրբ Սահակյան դպրոցում, որն ավարտել է 1863 թ.: Տակավին պատանի 1859 թ. Մ. Փորթուգալյանը կորցնում է մորը, իսկ 1865 թ.՝ հորը: Արդեն վարժարանում սովորելու տարիներին «ազգային եղելությունները անտարբեր չեն ձգած զինքը»[108]: Նույն տարին ուշիմ պատանին աշխատանքի է ընդունվում իր շատ սիրելի ուսուցչի, հայասեր գրավաճառ Փիեր Թրուայի մոտ և օգնում նրան երկու լեզվով հրատարակել «Հայկական հարց» գրքույկը:

Զրկված լինելով կրթությունը շարունակելու հնարավորությունից՝ Մ. Փորթուգալյանն այնուհետև ողջ կյանքում զբաղվել է ինքնակրթությամբ: Աշխատանքին զուգընթաց հետաքրքրասեր երիտասարդը շատ էր ընթերցում և ծանոթ էր համաշխարհային պատմությանն ու գրականությանը: Նրա վրա հատկապես խոր ազդեցություն էր թողել 1848 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որ «...ռամկավարական ազնիւ սկզբունքներով կը զինէր Փարիզի հայ մտաւորականութիւնը, անոր միջոցով կու գար հայ ազգային կեանքին մաքրագործման»[109]: Այդ հեղափոխության լուսավոր գաղափարներով զինված ժամանակի փարիզաբնակ հայ մտավորականությունը դրանք փոխանցում էր արևմտահայ գրական ու հասարակական մտքի մշակներին, ազդում, հղկում էր նրանց միտքը և նպաստում ազգային կյանքի մաքրագործմանը:

Աչքաբաց երիտասարդն արդեն 1866 թ. բացում է իր սեփական գրատունը, զբաղվում գրքերի ու գրենական պիտույքների առևտրով: Հենց այդ տարիներին էլ սկսվում է Մ. Փորթուգալյանի ստեղծագործական կյանքը: Նա գրում է իր առաջին բանաստեղծություններն ու հոդվածները, թղթակցում Կ. Պոլսի մի քանի լրագրերի, զուգահեռաբար՝ 1867 թվականից, զբաղվում նաև ուսուցչությամբ: Այս շրջանում

---

[108] Չեօկիւրեան Տ., Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 9:
[109] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 60:

մասնակցում է «Գործասէր» հրատարակչական խմբի աշխատանքներին, նաև՝ արևմտահայ նշանավոր մտավորական Գր. Չիլինկիրյանի բարենորոգչական նպատակով ստեղծված «Լուսաւորչեան ընկերութեան» գործունեությանը, որի նպատակն էր բարեփոխել, նորացնել ու եվրոպական չափանիշներին մոտեցնել հայոց եկեղեցին:

Ընդհանրապես, 1863-1869 թթ. Մ. Փորթուգալյանի համար եղան ապագա ազատագրական պայքարին նախապատրաստվելու տարիներ[110]: Մի շրջան, երբ «Հայաստան» անունը երկարատև մոռացումից հետո սահմանադրության ընձեռած հնարավորության արդյունքում հայ հասարակության կողմից ծափերով էր ողջունվում. «զգացական հայրենասիրութիւնն էր որ հոգիները կը խռովեր»[111], երբ խոսքերի ու զգացմունքների շրջանին պիտի հաջորդեր «գործի» շրջանը: Գործնական ու դատող մտքի տեր հերոսն իր ակտիվ գրական ու հասարակական գործունեությամբ դարձավ XIX դարի 70-ական թթ. հայ հասարակական-քաղաքական նշանավոր այրեր Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանցի, Գ. Օտյանի, ինչպես նաև Ն. Վարժապետյանի համախոհն ու գործընկերը՝ ակտիվ մասնակցություն բերելով հայոց ազգային-քաղաքական զարթոնքի գործընթացին:

1873 թ. Մ. Փորթուգալյանի նախաձեռնությամբ Կ. Պոլսում հիմնադրվում է «Վարազդատեան» ընկերությունը, որի նպատակն էր կիրակնօրյա ձրի դասախոսություններ կարդալ մշակութային, գրական, հասարակական-քաղաքական թեմաներով, դրանցով նպաստել ազգային առաջադիմությանը: Նախատեսվում էր դասախոսներ ուղարկել նաև գավառներ և այնտեղ էլ հիմնել կազմակերպության մասնաճյուղեր: Միևնույն ժամանակ Մ. Խրիմյանի առաջարկությամբ Մ. Փորթուգալյանն սկսում է դասավանդել Գուզկունճուքի, Ռումելի Հի-

---

[110] Մ. Փորթուգալյանի մասին որոշ կենսագրական տվյալներ և հատկապես անցած ստեղծագործական ուղու մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Ա. Չոպանյանը, տե՛ս ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, թիվ 444:

[111] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 11:

սարի և Բերայի Փանոսյան վարժարաններում, աշխատակցում Կ. Փանոսյանի «Մանզումե»-ին, հանդես գալիս աշխարհաբար հայերենը զարգացնելու, եկեղեցական կյանքը բարեփոխելու պահանջներով: Զուգահեռաբար «Նորայր» և «Հրահեր» գրական կեղծանուններով Մ. Փորթուգալյանը թղթակցում էր Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» պարբերականին:

Դեռ երիտասարդ տարիներից ըմբոստ և ազատատենչ բնավորությամբ աչքի ընկնող Մ. Փորթուգալյանն ակտիվորեն պաշտպանում էր ժամանակի առաջադեմ գաղափարները. «Երիտասարդ էր նա: Յափշտակտղ և երազուն, զինուոր գրուեց գաղափարին և այդ գաղափարը շալակած դեմ ընկավ արգելքների, բայց քալեց համոզուած և ջահը ձեռքի մէջ ժողովուրդը դէպի արշալոյս տարաւ..»[112]: Ժողովրդի ցավով տառապող գործիչը, որ ծնված էր արիության համար, հավատքի և կորովի մտրակը շաչեցնելով՝ իր աշակերտների մեջ «վառեր է կայծեր, ցաներ է սերմեր, կործաներ է ծուռ կարծիքներ խաւարի ու նախապաշարման թշնամի է, ուղղութեան և ճշմարտութեան բարեկամ, իրաւունքի ու արդարութեան անձնուէր ջատագով, ազատութեան համար հոգին ի սպաս դրած էր»[113], ինչը չէր կարող վրիպել թուրքական իշխանությունների կողմից ողջ երկիրը լրտեսական ցանցով պատած ամենատես աչքից:

Շուտով նրա առջև փակվեցին Ռումելի Հիսարի վարժարանի դռները: 1873 թ. հունվարին սուլթանական կառավարությունն ակտիվ քարոզչական գործունեության և համարձակ մտքեր արտահայտելու և կայսրության անդորրը խանգարելու մեղադրանքով բանտարկեց Մ. Փորթուգալյանին և փակեց նրա տնօրինությամբ գործող Եվդոկիայի Վարդուհյան վարժարանը: Նրա բանտարկվելուն մեծապես

---

[112] Ակնունի Է., Հանրային եսը, Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 28:

[113] Գալէմքեար Զ., Մկրտիչ Փորթուգալեան, Կենսագրական գիծեր, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 30:

նպաստել էին տեղի մեծահարուստները, որոնց համար Մ. Փորթուգալյանն իր «նոր ու վտանգավոր» գաղափարներով պարզապես անընդունելի էր. «Վեճին պատճառը այն էր. մէկ կողմը կը պնդէ թէ մենք հարուստ ենք, մեր ըսածը պիտի ըլլայ. միւս կողմն ալ կըսէ թէ մենք ուսեալ ենք, մեր խօսքը պիտի քալէ. դրամին եւ խելքին տիրապետութեան կռիւն էր այս»[114]:

Ազատվելով բանտից՝ անխոնջ գործիչը, ում «կեանքն ալ եղած է համակ նուիրում իր ժողովուրդին՝ ծառայելով անոր լուսաւորութեան եւ ազատագրումին»[115], 1873 թ. դեկտեմբերին դարձավ Պոլսում հրատարակվող աչքառու լրագրերից մեկի՝ «Ասիայի» խմբագիրը եւ ծավալեց բեղուն ստեղծագործական գործունեություն՝ գրելով խմբագրականների մեծ մասը և բազմաթիվ հոդվածներ, որոնցում անվեհեր ու համարձակ մտածող մարտիկը մերկացնում ու դատապարտում էր թուրքական իշխանությունների հարստահարությունները կայսրությունում ապրող բոլոր ժողովրդների և, հատկապես, հայերի նկատմամբ: Նա կոչ էր անում ողջ պոլսահայ մտավորականությանը ջանք ու եռանդ և նյութական միջոցներ չխնայել՝Արևմտյան Հայաստանում լուսավորություն տարածելու համար: Այդ ակտիվ քարոզչական գործունեությունը դուր չէր գալիս իշխանություններին ու պահպանողականներին, որոնց «Տերոյենցի «Երեւակը» ոյժ կու տար»[116], և նրանք շարունակաբար պահանջում էին վերջ տալ այդ կեցվածքին: Սակայն Մ. Փորթուգալյանն ի պատասխան հայտարարում է. «Լաւագոյն կը համարիմ գրիչս կոտրել մէկդի նետել քան թէ շարունակել գրել՝ շողոքորթութեան մէջ զայն թաթխելով. լաւագոյն կը համարիմ որ Փորթուգալեան անունով խմբագիր մը գոյութիւն ունեցած չլինի, քան թէ յիշուի այդ անունով խմբագիր մը, որ շահի համար իր գրիչ շարժած լինի

---

[114] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 13:
[115] Հարիւրամեակ ազգենական կուսակցութեան կազմութեան 1885-1985, Փարիզ, 1985, էջակալված չէ:
[116] Վարդիվարեան Հ., նշվ. աշխ., էջ 60:

ճշմարտութեան դէմ»[117]: Քանի որ խմբագիրն անզիջում էր, իսկ ուժը՝ իշխանությունների ձեռքում, մի տարին էլ չբոլորած «Ասիան» արգելվեց: Ի դեպ, այս շրջանում էր, որ պատրիարք Մ. Խրիմյանն առաջին անգամ Հայաստանում հարստահարությունների խնդիրը «թագրիրով մը կառաւարութեան ուշադրութեան կը ներկայացներ», որով Հայկական հարցը «մանկական քայլ մը առած կըլլար այդպէսով»[118]:

Քարոզչական ու կազմակերպչական զգալի աշխատանք ծավալած Մ. Փորթուգալյանը 1876 թ. ապրիլին Օրթագյուղի մեջ ժամանակի պոլսահայ առաջադեմ մտավորականներ Մինաս Չերազի, Հ. Շիշմանյանի (Ծերենց), Ա. Արփիարյանի և այլոց հետ հիմնում է «Արարատեան ընկերութիւն հայոցը», և ինքն էլ դառնում է ատենապետը. «Արարատեան» ընկերութիւնը հիմնեցին Ա. Արփիարեան և Մուրատ Ռափայէլ վարժարանի իր մի քանի աշակերտակիցներ. իսկ ընկերութեան գործունեութիւնը Հայաստան փոխադրելու գաղափարը Գր. Արծրունին ներշնչեց (որի իրականացմանը օգնեց ապագայի մէջ)»[119]: Հետաքրքիր է եղել Մ. Փորթուգալյանի հետ իրենց առաջին հանդիպումը, որը հետագայում նկարագրում է Արփիարյանը. «Կրակոտ, յաղթանդամ, գոռացող ոչ ոք կար, նիհար, կարճահասակ, ուռած կոպիճներով, խարտեաշ, գառնուկի նման մէկը դէմս էր: Մտածելու եղանակը ուրիշներէն տարբեր էր: Ամուր, պինդ մէկը կը տեսնէի, հստակ համոզումներու, որոշ գաղափարներու տէր, երկաթի պէս երեւցաւ ինձի, զգացի թէ այդպիսի նկարագրի տէր անձերով է որ կարելի պիտի ըլլար գործեր ընել»[120]: «Արարատեանի» հիմնական նպատակն էր Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում ու գաղթօջախներում կարգավորել ուսումնական գործը, լուսավորու-թյուն

---

[117] «Կ. Պոլիս եւ Հայաստան», «Արմէնիա», թիվ 17, 1900:

[118] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 14:

[119] «Պատմութեան դաս մը Տ. Մ. Չերազին», «Արմէնիա», թիվ 16, 1902:

[120] Չէօկիւրեան Տ., Քսան տարուան աշխատատրը, կենսագրական գծեր եւ գնահատումներ, Քառասուն տարուան աշխատատրը Մկրտիչ Փորթուգալեան, յարգանքի պսակ, Կ. Պոլիս, 1914, էջ 16:

տարածել, կրթել ազգը, դաստիարակել նրան հայրենասիրության, սեփական իրավունքները գիտակցելու և դրանց տեր կանգնելու ոգով: Ինչպես նաև, միջոցներ հայթայթել ու դրանցով Հայաստանից ուշիմ պատանիներ բերել Կ. Պոլիս, կրթել, հետո ետ ուղարկել, որ ծառայեն հոգուտ հասարակ ժողովրդի բարօրության: Նա մեծ ջանքեր է գործադրել թրքախոս հայերին հայոց լեզու սովորեցնելու համար:

1863-1869 թթ. արևմտահայության համար կարելի է համարել ազգային զարթոնքի նախապատրաստական շրջան, երբ զգացական հայրենասիրությունը խռովում էր բոլորի հոգիները: Խոսքերի «ուռուցիկ շրջանէն» պիտի ծնվեր գործնական աշխատանքների շրջանը, որի նպատակակետը հայրենիքն էր, այսինքն՝ պատմական Հայաստանը: Այդ ջանքերի արդյունքում XIX դարի 70-80-ական թթ. սերնդի կարևոր ներդրումը եղավ Հայաստան աշխարհի ու Կիլիկիայի հայության լուսավորության գործի իրականացումը և, որ պակաս կարևոր չէր, հայ կնոջն այդ գործընթացներ ներգրավելը: Ի դեպ, ինչպես հետագայում վերհիշում է Մ. Փորթուգալյանը, իր բարեկամների «թախանձանքներէն ստիպուած, «Կ. Պոլիս և Հայաստան» յօդուածներ հրատարակած»[121] Մ. Փորթուգալյանը, ինքն է Մ. Չերազին, որ մինչ այդ «Գրիչ և սուր» կեղծանունով հոդվածներ էր տպագրում «Ասիայում» և «Արևելյան մամուլում», հրավիրում և դարձնում «Արարատեանի» անդամ[122]: Իսկ Մ. Չերազը տարիներ հետո իր «նորստաց բարեկամներ»ի, Դաշնակցականներին հաճելի լինելու համար ջանացած է սև գոյներով վարկաբեկ ընել իր հին զինակիցներ, հանիրավի կը մեղադրէ»[123] նաև Մ. Փորթուգալյանին՝ իբրև թե ոչ ճիշտ խոսելու համար, մի բան, որն իրականությանը բոլորովին չի համապատասխանում:

---

[121] «Ակամայ պատասխան մը», «Արմէնիա», թիվ 20, 1903:
[122] «Կ. Պոլիս եւ Հայաստան», «Արմէնիա», թիվ 21, 1901:
[123] «Ակամայ պատասխան մը», «Արմէնիա», թիվ 20, 1903:

1875 թ. Կ. Պոլսում հաստատված Թիֆլիսից եկած Միհրդատ Ամերիկյանը ձեռնարկեց «Մանզումէի էֆքյարի» հայերեն տարբերակ «Շար կարծյաց» շաբաթաթերթի լույսընծայումը: Հետագայում «Մշակ»-ի երախտավոր խմբագիր Գր. Արծրունու մահվան կապակցությամբ գրված «Գրիգոր Արծրունին մեռավ» հոդվածում Մ. Փորթուգալյանը, իր «շնորհակալութեան և երախտագիտութեան յարգանքը» հայտնելով, նշում էր, որ Մ. Ամերիկյանից համագործակցելու առաջարկ էր ստացել և, անսալով այդ առաջարկին, պարբերաբար նյութեր էր տպագրում այդ թերթում: Այդ հոդվածներում, որոնք բաժանվում էին երեք հիմնական խմբի, ասվում էր, թե հայ ժողովուրդն իր գոյությունը պահպանելու համար երեք գլխավոր գործոն ունի՝ ազգային լեզուն, եկեղեցին և ազգային վարչությունը, որոնք երեքն էլ «բարեկարգութեան կը կարոտին»[124]: Արտագաղթը համարելով հայ ազգի համար «անարիւն կոտորած մը»՝ Մ. Փորթուգալյանը հայրենի երկրում հաստատվելու անհրաժեշտություն էր քարոզում. «Փոխանակ հայաստանցին Կ. Պոլիս գալու, Կ. Պոլսեցին Հայաստան երթալով այդ երկիրը զարգացնելու է»[125], որովհետև այն ազգը, որն իր ոտքի տակ սեփական, հայրենի հողը չունի, «չկրնար կանգուն մնալ երկար ատեն»[126]: Թեև այս համագործակցությունը երկար չտևեց, որովհետև թերթը փակվեց, սակայն պատճառ դարձավ, որ Մ. Փորթուգալյանը ծանոթանար «Մշակին» և նրա խմբագիր Գ. Արծրունուն: Գր. Արծրունին, կարդալով այդ հրապարակումները, հետաքրքրվում է, թե «ո՞վ է այդ յօդուածներ գրող Մ. Փորթուգալեանը և միանգամայն փափագ յայտնած է տեսակցելու»[127]: Մ. Ամերիկյանը, որ նախկինում «Հաքուճ»

---

[124] «Կ. Պոլիս եւ Հայաստան», «Արմէնիա», թիվ 18, 1901:

[125] Չեօկիւրեան Տ., Քսան տարուան աշխատաւորը, կենսագրական գծեր եւ գնահատումներ, Քառասուն տարուան աշխատաւորը Մկրտիչ Փորթուգալեան, յարգանքի պսակ, Կ. Պոլիս, 1914, էջ 15:

[126] Փորթուգալեան Մ., Մի գաղթեք, Մարսեյլ, 1913, էջ 12:

[127] «Արմէնիա», թիվ 40, 1893:

կեղծանունով եղել էր «Մշակ»-ի աշխատակիցներից մեկը, ծանոթացնում է նրանց և կազմակերպում նրանց հանդիպումը Թիֆլիսում:

1876 թ. ամռանը, լավ գիտակցելով հայության երկու հատվածների համագործակ-ցության անհրաժեշտությունը, Մ. Փորթուգալյանն այցելում է Կովկաս: Երկու շաբաթ տևած այցելության ընթացքում հանդիպումներ է ունենում Գր. Արծրունու, այլ գործիչների ու պաշտոնատար անձանց հետ, նրանց իրազեկում արևմտահայության ծանր վիճակին, քաղաքական անցուդարձին և իր ու համախոհների ծավալած գործունեության մանրամասներին: Այս հանդիպումների ընթացքում էլ մինչ այդ ոչ հաճախակի շփումների մակարդակում գտնվող հայության տարբեր հատվածների քաղաքական դեմքերի մշտական ու կայուն համագործակցության հիմքն է դրվում: Դրանց արդյունքում Մ. Փորթուգալյանը, վերադառնալով Կ. Պոլիս, հրաժարվում է ուսուցչությունից և «առաջին անգամն լինելով ուղեւորեցայ դէպի Վան, հոն աշխատելու համար, քանզի,- խոստովանում է Մ. Փորթուգալյանը,- Կ. Պոլսեցիների գործունէութիւնը խիստ քննադատող խօսքերը մղեցին զիս դէպի Վան երթալու»[128]: Քիչ հետո սկսված ռուս-թուրքական պատերազմի ընթացքում դեպքերի բերումով Թիֆլիսում գտնվող Մ. Փորթուգալյանը ստիպված մնում է այնտեղ շուրջ մեկ տարի: Այդ ընթացքում նա ակտիվ թղթակցում է «Մշակ»-ին, հաճախ հանդիպում «շատ քաղաքավար, եւրոպական ոճով, դիւրագրգիռ վիճաբանող», սակայն նաև «դիւրամատչելի ամենքին, ընտանի ու զուարճաբան բնաւորութեամբ, անկեղծ, անաչառ, խօսակցին ոգեւորող»[129] Գր. Արծրունուն և Ռաֆֆուն, նրանց հետ քննարկում «Թուրքահայաստանի գործերին վրայ, որը շատ բեղմնաւոր մի ժամանակամիջոց եղաւ և իրենց համար ալ մի նախակապ Թիւրքիայի Հայերի գործերին հետ աւելի սերտ հաղորդակցութեան որմէ ծնան նաեւ Ռուսիայի հայերին Արծրունու միջոցավ արած նիւթական օժանդակութիւնները Թուրքա-

[128] «Արմէնիա», թիվ 40, 1893:

[129] «Կ. Պոլիս եւ Հայաստան», «Արմէնիա», թիվ 26, 1901:

հայաստանի մէջ եղած ձեռնարկներին»[130]: Գր. Արծրունու, Ռաֆֆու և մյուս արևելահայ մտավորականների հետ շփումների ու համագործակցության նշանակությունը բարձր գնահատելով՝ Մ. Փորթուգալյանն արձանագրում էր, որ եթե նրանց խորհրդով Արևմտյան Հայաստան գնացած չլիներ ու ներսից հայրենիքի դրությունն ուսումնասիրած չլիներ, չպիտի ենթարկվեր այն հանգամանքներին, «...որոնք հայրենիքի ազատութեան գործի մէջ իր գաղափարների զարգացմանն ու փորձառությանը նպաստեցին, 1885ին ալ մղեցին դէպի Եւրոպա հայ գաղթականութեան մէջ ալ մի շարժում գոյացնելու նպատակով: Հետեւապէս Արմէնիաի հրատարակման ալ անուղղակի մի պատճառ եղած կը լինի Արծրունին»[131]:

Այսինքն, եթե մինչ այդ արևելահայ և արևմտահայ հատվածների մերձեցման նախաձեռնությունը գալիս էր գլխավորապես արևելահայ գործիչներից, ի դեմս XIX դարի 60-ական թթ. սերնդի ամենավառ ներկայացուցիչներ Ստ. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի (մասնավորապես Մ. Նալբանդյանն իր գործունեությամբ հիմք դրեց մեր ժողովրդի երկու հատվածները շաղկապելու գործընթացին – Ս. Ս.), ապա շնորհիվ Մ. Փորթուգալյանի, այդուհետ արևմտահայ ու արևելահայ հատվածների ազատագրական մղումները կամրջելու գործընթացը բարձրացավ որակական նոր մակարդակի:

Կովկասից վերադառնալուց հետո ազգային լավագույն ձգտումներով տոգորված և քաղաքի ռազմավարական դիրքը հաշվի առնելով, հատկապես ռուսական սահմանին մոտիկ լինելու հանգամանքը և, ինչպես արդեն ասվեց՝ Կովկասում հանդիպում-քննարկումների ու իր համախոհների հետ ճշգրտումների արդյունքում Մ. Փորթուգալյանը որոշեց հաստատվել Վանում, այն դարձնել իր հայրենասիրական գործունեության կենտրոնը: Այն Վանում, որտեղ Մ. Խրիմյանն իր «Արծուի Վասպուրական»ովը ազգային ոգին արթնցուցած և հայրե-

---

[130] «Արմէնիա», թիվ 40, 1893:
[131] «Արմէնիա», թիվ 40, 1893:

նիքը Եկեղեցւոյ բեմը հանած էր արդէն, Գ. Սրուանձտեանցը՝ իր հայրենաշունչ գրուածներով բնատոհմիկ գրականութեան ծնունդ տուած էր»[132]:

Լավագոյնս յուրացնելով Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի 61-րդ հոդվածների դասերը՝ հոդվածներ, որոնք խթանեցին վերագնահատելու հայության ուժերը, նպատակներն ու գործունեության ձևերը, Մ. Փորթուգալյանն ակտիվորեն մասնակցում է ազգային-ազատագրությանը նպատակառղղված հեղափոխական-քաղաքական մտքի ու նոր պայմաններում գործելու տարբերակների մշակմանը: Հարաբերություններ հաստատելով Ռուսաստանի հայության համար հույսի ու իրավունքի աղբյուր համարվող արևելահայ առաջադեմ մտածողների հետ՝ նա իր համար հստակեցրեց, որ հայությունը թեև Բեռլինից իրական ոչինչ չստացավ, սակայն դարձավ իրավատեր, որ Հայկական հարցը դադարեց Թուրքիայի ներքին հարց լինելուց և վերածվեց միջազգային հարցի: Միաժամանակ նա քաղաքական հոտառությամբ զգում էր, որ մեծ տերությունների խաչաձևող շահերն օգնում են Օսմանյան կայսրությանը՝ խուսանավելու և նրանցից օգուտներ կորզելու: Իսկ Բեռլինից հիասթափված Մ. Խրիմյանը[133], լավագույնս սերտելով ու դասեր քաղելով դրանից, «երկաթե շերեփի» և այլ քարոզներով «Հայ Գոյժի» մեջ մշակեց հայոց հեղափոխության սկզբունքներն ու եղանակները՝ համարելով, որ «Յեղափոխութիւնը Աստուծոյ գործն է. յեղափոխականը Աստուծոյ առաքեալն է»[134], որ կոչված է արդար կարգ ստեղծելու այս աշխարհում: Այսինքն՝ Խրիմյանը հայության ա-

---

[132] Երամեան Հ., Մկրտիչ Փորթուգալեան Կենսագրական գիծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 33:

[133] Հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ռահվիրա, հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի կյանքն ու հասարակական-քաղաքական գործունեությունը լավագույնս լուսաբանել է Է. Կոստանդյանն իր «Մկրտիչ Խրիմյան հասարակական-քաղաքական գործունեությունը» շահեկան ուսումնասիրության մեջ, Ե., 2000:

[134] Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Մ. Փորթուգալեան, (մի էջ յեղափոխական մտքի պատմութիւնից), Պէյրութ, 1937, էջ 120:

զատագրության ուղին կրոնական քարոզների քողի ներքո դիվանագիտականից տեղափոխում էր ներքին՝ ազգային հարթակ: Այդ հայրենանվեր գործում Խրիմյանին երկրորդում և ազատագրության նույն ուղին էր ցույց տալիս հայ մեծանուն վիպասան Ռաֆֆին, ով ոչ միայն նախանշեց հայոց ազատագրության պայքարի մեթոդները, այլև ձևակերպեց հայության քաղաքական նպատակները, որոշեց նրա ձևը, տեղը և դրանով եղավ «հայոց յեղափոխութեան ներշնչողներից մեծագոյնը և Խրիմյանի հետ միասին կառուցանում էր յեղափոխական հայութիւնը»[135]: Լավագույնս յուրացնելով այս քաղաքական դասերը՝ Մ. Փորթուգալյանը ևս հանգեց այն եզրակացության, որ հարկավոր էր նախ կառուցել գաղափարական, մշակութային հայություն, ապա նոր մտածել ազատության մասին: Որպես առաջին քայլ շատերի նման նա էլ հասկացավ, որ նախ և առաջ հարկավոր է մտնել այդ երկիրը, մոտիկից շփվել, ծանոթանալ նրա հետ, որովհետև այնտեղ էր հայության ապագան, «Հայաստանի մէջն է բուն հայկական խնդիրը, իսկ մենք Պոլիսի մէջ կորոնենք զայն»:

Մ. Չերազին զիջելով Կ. Պոլսի ընդհանուր ժողովի ատենապետի բավական պատվաբեր պաշտոնը՝ Մ. Փորթուգալյանը մեկնեց հայրենի երկիր՝ լավ գիտակցելով, որ այնտեղ է ճառագելու հայ ժողովրդի փրկության լուսատու կանթեղը: Վան գնալու ճանապարհին նա այցելեց Սամսոն, Եվդոկիա, Սեբաստիա, Ամասիա, Խարբերդ, Տիգրանակերտ և Արևմտյան Հայաստանի այլ գավառներ՝ ամենուրեք մոտիկից ծանոթանալով ու խորը ցավ ապրելով հայ մարդկանց անմխիթար ու բարձիթողի վիճակի համար: Վան հասնելով՝ նա կազմում և կենտրոն է ներկայացնում Վասպուրականի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի մասին ընդարձակ մի տեղեկանք: Վասպուրականի Այլուր գյուղում հիմնում է դպրոց, միաժամանակ ամեն կիրակի բանախոսում Վանի Հայկազյան վարժարանում:

---

[135] Նույն տեղում, էջ 121:

Իր համախոհ սերնդակիցների հետ Մ. Փորթուգալյանը եղավ առաջին ծիծեռնակներից մեկը, ով մտավ «Աւետեաց երկիր», «ամպրոպի պէս պայթեցաւ Վանի մէջ», զարգացրեց կրթական ասպարեզը: Նա աշխատեց ոչ միայն դպրոցի ներսում, այլև դրանից դուրս՝ «իր թրթռուն ձայնովն և յստակ առոգանութեամբը հմայեց ամենքը»[136], հասարակության մեջ, ջանալով հեղաշրջում կատարել, ինքնաճանաչության հասցնել դարավոր նվաստացուցիչ պայմաններում մի կերպ գոյատևած, հույսը կորցրած ու ստրկացած, խոնարհ ու հեզ դարձած հայությանը: Արևմտահայ կյանքում սկսվում էր ազգային-ազատագրության պայքարի առաջին փուլը, որը ենթադրում էր նախ սթափվել դարավոր թմրությունից, կրթվել և համախմբվել ազատագրական գաղափարների շուրջ, միակամվել ու պարզել ազատության դրոշը: Այդ ակտիվ ու նպատակասլաց գործունեության արդյունքում ուսումն ու դաստիարակությունն աստիճանաբար աշխարհիկ էին դառնում, վանական տերթոդիկյան կրթական համակարգն աստիճանաբար տեղի էր տալիս աշխարհիկ կրթաձևերին, վանական վարդապետը[137] տեղի էր տալիս աշխարհիկ ուսուցչին (ընդգծումները մերն են – Ս. Ս.), փոխվում էին դասավանդման մեթոդներն ու ուսուցանվող առարկաները: Առաջադեմ էին դառնում ոչ միայն ուսուցանողներն ու ուսուցման մեթոդները, այլև հենց ինքը՝ ուսուցանվողը, ով հետո պիտի փոխեր, նորացներ մյուսին, հաջորդին: Ի վերջո, պիտի փոխվեր հայության կյանքն ընդհանրապես, հնարավոր դառնար գոյատևելու փոխարեն վերջապես ապրել:

Մ. Փորթուգալյանն արևմտահայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որ ներկայացնում էր հայ կնոջ իրավազուրկ ու տառապյալ վիճակը և առանձնակի դերակատարություն վերապահում հայ

---

136 Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Մ. Փորթուգալեան (մի էջ յեղափոխական մտքի պատմութիւնից), Պէյրութ, 1937, էջ 121:

137 Մ. Փորթուգալյանը երբեք եկեղեցական չի եղել: Այստեղ խոսքը համընդհանուր գործընթացի մասին է, որին՝ որպես աշխարհիկ ուսուցիչ, նա իր գործուն մասնակցությունն ունեցավ:

կնոջն ապագա ազատագրական մաքառումներում: Նրա կարծիքով հայ կինը նախ պետք է կրթվեր, լուսավորվեր, որովհետև երբ կինը տգետ և հասարակությունից մեկուսացված է, ազգը երբեք իր «հաւասարակշռութիւնը չպիտի գտնէր»[138]: Մ. Փորթուգալյանի համար անընդունելի էր, երբ կինը համարվում էր «առարկայ վայելքի և զարդ՝ կանանոցներու»: Դա նրա տեսակետից օտարամուտ էր, խորթ մեր ազգային բարքերին ու խառնվածքին, ժամանակավոր երևույթ, որովհետև ազգի ընդերքում բարոյական «մեծ սկզբունքները քնացած են, բայց ոչ մեռեալ»[139]: Հայ կինը լուռ և անտրտունջ կրելով կյանքի անասելի դժվարությունները, վառ ջահի պես սերնդե սերունդ փոխանցել էր ազգային կենսունակությունը, արժանապատվորեն պահպանելով արդարության և իր իրավունքների գիտակցությունը, որոնց մասին բարձրաձայնելով հանդերձ՝ Մ. Փորթուգալյանը հայ կանանց կոչ էր անում սթափվել, կանգնել իրենց այրերի կողքին, ներշնչել նրանց հաղթանակի հավատը:

Մ. Փորթուգալյանի արտահայտած ազատախոհական մտքերն ու ազգասիրական գործունեությունը չէին կարող դուրս մնալ, չնկատվել կայսրության կազմում գտնվող ժողովուրդների ազատագրական շարժումներից սարսափներ ապրող թուրքական իշխանությունների ամենատես աչքից: Իր տեսական-քաղաքական հայացքներով, հայ քաղաքական մուրացկանությանը վերջ դնելու, ազգային-ազատագրական պայքարին նախապատրաստվելու, կրթվելու, անարգ թշնամու նկատմամբ ատելություն սերմանելու, ազգային արմատներին հարազատ մնալու կոչերով և ծավալած ազգասիրական գործունեությամբ նա երկար ժամանակ գտնվում էր թուրքական գաղտնի ծառայությունների տեսադաշտում: Հատկապես 1876 թ. Դեկտեմբերին՝ Վանի շուկայի հրդեհից հետո, երբ նա բանավոր ու գրավոր խոսքով

---

[138] Եսայեան Զ., Հայ կնոջ կողմէ, Կենսագրական գիծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 31:
[139] Նույն տեղում:

շատ ավելի կտրուկ և անթաքույց քննադատական դիրք բռնեց իշխանությունների նկատմամբ, հետապնդումներն ավելի բացահայտ բնույթ կրեցին, և կայացվեց Մ. Փորթուգալյանին ձերբակալելու որոշում: Նախապես տեղեկանալով այդ որոշման մասին և անսալով Ն. Վարժապետյանի հորդորներին, ձերբակալվելուց խույս տալով՝ Մ. Փորթուգալյանը հեռանում է Պարսկաստան, ապա Կովկաս: Այստեղ նա ակտիվորեն մասնակցում է Գ. Արծրունու կողմից ի նպաստ «Արարատեանի» կազմակերպված հանգանակությանը, ապա Կ. Պոլիս է ուղարկում Ն. Տեր-Նիկողոսյանցի «Մայրենի լեզուն», որը, Կ. Պոլսում տպագրվելով, ընկերությանը տարեկան «400 ոսկի զուտ շահ կը բերէր»[140]: Այնուհետև Մ. Փորթուգալյանը ծանոթացնում է Ա. Արփիարյանին «Մշակի» խմբագրակազմի հետ, ինչը հետագայում հիմք է դառնում արգասաբեր համագործակցության: Ա. Արփիարյանը «Հայկակ» ստորագրությամբ սկսում է կանոնավոր աշխատակցել «Մշակ»-ի և հրապարակում է բավական արժեքավոր նյութեր: Կարծում ենք, որ երիցս ճիշտ չեն բոլոր այն պնդումները, թե Ա. Արփիարյանն էր արևմտահայ առաջին գործիչը, որը եղավ արևելահայ-արևմտահայ կապերի նախաձեռնողն ու սկզբնավորողը: Մեր ուսումնասիրությունները բերում են այն եզրակացության, որ այդ պատվաբեր առաքելության իրականացումն սկսվեց Մ. Փորթուգալյան - Գ. Արծրունի շփումներով, իսկ Ա. Արփիարյանն իր գործունեությամբ նպաստեց այդ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը[141]:

Հայկական հարցը խոստումնահարուստ և հուսալեցուն շրջանից հետո Բեռլինում ծանր հարված ստացավ: Դիվանագիտությանն ապավինած ու խաբված հայերը հասկացան, որ չի կարող լինել ազատ ու ապահով կյանք առանց մեծ աշխատանքի ու զոհողությունների գնով ձեռք բերված ներքին վերափոխման, որը հնարավորություն

---

[140] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 18:

[141] Այդ են վկայում նաև Արփիարյանի ու Փորթուգալյանի միմյանց ուղղված մեծաքանակ նամակները, տե՛ս ԳԱԹ, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 106, 548 և այլն:

կընձեռի նոր պայմաններում և նորովի դիմակայելու հայ ժողովրդին նետված մարտահրավերներին ու հասնելու բաղձալի ազատության:

1878-1879 թթ. Մ. Փորթուգալյանը վերադարձավ Վան: Տեղի նշանավոր այրերից Մարկոս Նաթանյանի[142] և Վանի ռոսական հյուպատոս, ազնիվ ու հայրենասեր Կոնստանդին Կամսարականի հետ նրանք ծավալում են լուսավորական, հայրենասիրական ընդգրկուն գործունեություն: 1884 թ. ամռանն այստեղ տեղի ունեցած մի տոնահանդեսից, որին ներկա էին Մ. Խրիմյանը, Կ. Կամսարականը[143], Կեդրոնական վարժարանի առաջին և երկրորդ տարվա շրջանավարտներն ու Վանի հասարակության ընտրանին, օրեր անց Մ. Փորթուգալյանը իր մոտ հրավիրելով Կեդրոնականի մի խումբ շրջանավարտների, բացատրում և համոզում է վերջիններիս, ինչի արդյունքում նրանք հիմնադրում են «Գործակցական Միութիւնը», որը փաստորեն հանդիսացավ ապագա Արմենական կուսակցության կազմակերպական կորիզը:

Տարբեր կազմակերպությունների, ընկերությունների միջոցով Մ. Փորթուգալյանն իր համախոհների հետ միասին հիմք էր դնում ժողովրդի ազատագրության քաղաքական ու գործնական աշխատանքներին: Հիմնել էր կրթական օջախ, որը Ֆրանսիայի կրթության նա-

---

[142] Արևմտահայ նշանավոր մտավորական Մ. Նաթանյանը Մ. Փորթուգալյանի հրահանգով 1877 թ. դասավանդում է Թիմար գավառի Ալյուր գյուղի դպրոցում, այնուհետև՝ Վանի Վարժապետանոցում: Երիտասարդ տարիներից թղթակցում է «Մշակին»: Որպես հեղափոխական քարոզիչ՝ 1886 թ. ձերբակալվում է ու աքսորվում Երուսաղեմ: Ազատվելով սկսում է դասավանդել Կ. Պոլսի տարբեր կրթական հաստատություններում: Հավատավոր արմենականը մեծաքանակ պատմագիտական, բանասիրական և այլ բնույթի արժեքավոր հոդվածներով հանդես է գալիս մամուլի տարբեր օրգաններում: Վախճանվել է Փարիզում 1927 կամ 1929 թվականին (Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 235):

[143] Նուխեցի Կ. Կամսարականը՝ «Փորձ», ապա «Արձագանք» պարբերականի խմբագիր Արգալ Հովհաննիսյանի քրոջ ամուսինը, Վասպուրականի և ընդհանրապես արևմտահայության կյանքում փրկարար դեր էր կատարում: Նա կապված էր ոչ միայն Կարինի ու Վանի հայ ազատամարտիկների, այլև Թիֆլիսի ու Մոսկվայի ականավոր գործիչների հետ և փաստորեն իր ընդհատակյա ու հրապարակային գործունեությամբ կամրջում էր արևմտահայ ազատագրական ոգորումներն արևելահայերի ցանկություններին:

խարարության ներկայացուցիչ, մասնավոր այցով Վան ուղարկված Էռնեստ Շանթրի նկարագրությամբ աչքի էր ընկնում իր մայրությամբ: Այդտեղ 60-ից ավելի աշակերտներ՝ բոլորը պատանիներ. «իրենց հասակի եռանդին հակառակ, լուրջ, կարգապահ եւ մանաւանդ աշխատասէր կերեւէին»[144]: Մ. Փորթուգալյանը, ով հիմնել էր այդ վարժարանը «իր եռանդի, իր կորովի ու նաեւ իր խելքի շնորհով պահպանուած էր, լուրջ արդիւնքներ կուտար 1882ին»[145]: Հենց այս պատճառով էլ օսմանյան իշխանությունների թելադրանքով «Միացեալ ընկերութեանց» գործադիր ժողովի ատենապետ Մ. Չերազին ստիպեցին 1880 թ. հունիսին փակել տալ վարժապետանոցը: Սակայն աննկուն գործիչը ոչ միայն չի հուսալքվում, այլև Մ. Խրիմյանի գործուն աջակցությամբ 1881 թ. հիմնում է իր լուսավորչական գործունեության զարդապսակ՝ Վանի «Կեդրոնական վարժարանը»: Վաստակաշատ Լեոն, ըստ արժանվույն գնահատելով այդ իրողությունը, գրում է. «Վանի հայ երիտասարդությունը, դաստիարակված Մ. Փորթուգալյանի հիմնած ու ղեկավարած Կեդրոնական դպրոցում և. վարժապետանոցում, տալիս է հայրենասիրության ու անձնազոհության գաղափարներով տոգորված երիտասարդ գործիչներ, որոնց վերապահված էր փառավոր դեր ապագա հեղափոխական շարժումների մեջ: Թուրքաց կառավարությունն արդեն ուշադրություն էր դարձրել այդ ապստամբական բույնի վրա, և խստություններն ու հալածանքները դառնում էին Վանի մեջ սովորական բաներ»[146]:

Զանազան ընկերությունների միջոցով Մ. Փորթուգալյանն իր շուրջն էր համախմբում գաղափարակիցներին, նրանց հետ միասին իրական հիմք ստեղծում ժողովրդի ազատագրության քաղաքական ու գործնական աշխատանքների ծավալման համար: «Հեղափոխութ-

---

[144] «Արմենիա», թիվ 27, 1889:

[145] Նույն տեղում:

[146] Լեո, Հայ հերոսներ: Առաջինները՝ Գոլոշեան, Ազրիպասեան, «Ռազմիկ», Ե., 1924, թիվ 4, էջ 354:

յուն» բառը չարտասանած Մ. Փորթուգալյանն արիությամբ, ճակատը բաց ամբողջ կյանքն անցկացրեց գաղափարական բարիկադի վրա: Այն ժամանակ, երբ պոլսահայ մտավորականությունը «մոռցած ժամանակակից Հայաստանը, կարբենար սոսկ Հայաստանի պատմական յիշատակներով», անշահախնդիր, ստորադասելով անձնական երջանկությունը՝ նա գնաց դեպի ժողովուրդը, կրթեց, դաստիարակեց ու պատրաստեց հեղափոխական մի ամբողջ սերունդ, պայքարի զավակներ, սովորեցրեց միաժամանակ երազել ու պայքարել ազգային իդեալների համար, «որուն առջեւ,- գրում է արևմտահայ նշանավոր մտավորական Ռ. Զարդարյանը,- ամենքս պարտաւոր ենք երախտագիտութեամբ բանալ մեր գլուխը»[147]: Առաջին կենսագիրներից Պ. Թորոսյանը հետևյալ կերպ է բնութագրում Մ. Փորթուգալյանի հայրենանվեր գործունեությունը. «Հայրենիքի փրկութեան համար յուր գլխաւոր ծրագիրն էր ոչ հայը ապստամբեցնել թուրքին դեմ. այլ հիմնել վարժապետանոց մը, ուր ուսանողներ ընդունվեին Թուրքիաի մեջ գտնված հայ, թուրք, քաղդեացի, եզիդ, հույն և ուրիշ բոլոր ցեղերեն և ամեն կողմերեն, որոնք վերադառնալով իրենց տեղեր և ազգերուն մեջ իբրև ուսուցիչներ տարածեին միօրինակ կրթութիւն մը, որն ապագային մեջ զիրար հասկանալու, զիրար չջարդելու, իրարու հետ համերաշխ ապրելու, հայրենիքին օգտակար դառնալու և զայն ծաղկեցնելու հիմնաքարը պիտի կազմեր. ուրիշ բառերով բարեկարգեալ Թուրքիա մը առաջ բերեր»[148]:

Աղբյուրների ուսումնասիրության ընթացքում հանդիպեցինք նաև ակնարկների Մ. Փորթուգալյանի՝ ռուսահայ հեղափոխական շրջանակների հետ որոշակի առնչությունների և շփումների մասին: 1882 թ. Վանում՝ Փորթուգալյանի դպրոցում մարմնամարզություն և չափական գիտություններ էր դասավանդում Հարություն Ստեփանյանը (-

---

[147] Զարդարեան Ռ., Կենսագրական գիծեր, «Քառասուն տարուան աշխատատրը», Կ. Պոլիս, 1914, էջ 35:

[148] Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեանը, Կ. Պոլիս, 1912, էջ 9-10:

՝ Կարապետ Էֆենդի Փիլիպոսյանը), որը 1875 թ. Մոսկվայում ձերբակալված և 1877 թ. հինգ տարով ազատազրկման դատապարտված Ստեփան Ստեփանյանի եղբայրն էր[149]:

Մ. Փորթուգալյանը տեղյակ էր և ոգևորված Վանում «Սեւ Խաչ» ազատագրական կազմակերպության[150] հիմնադրմամբ, որը հավանաբար նաև նրա գործունեության ու քարոզների շնորհիվ իրականացավ: Իսկ Հ. Վարդիվառյանի ասելով. «Մ. Փորթուգալեանի խոհուրդով եւ մասնակցութեամբ Վանի մէջ կը ստեղծուի Սեւ Խաչ ազատագրական կազմակերպութիւնը»[151]: «Սեւ Խաչը» դաժան բռնատիրության պայմաններում ծավալեց բավական ակտիվ ազատագրական գործունեություն և անխնա պատժում էր հատկապես մատնիչներին: Հայ բազմաչարչար ժողովրդի ազատագրումը սուլթանական արյունախում ճիրաններից կապելով զինված պայքարի հետ՝ Փորթուգալյանը ծրագրում էր նրան լուսավորել, կրթել և նախապատրաստել «ապագա ահեղ ու զոհառատ գոտեմարտին»: «Փորթուգալեանը Արեւմտահայաստանի մեկէ ավելի շրջաններուն յատկապես Վանի մեջ հիմնած է վարժարաններ եւ միութիւններ», որոնք դարձան ազգային գիտակցության զարթոնքի հնոցներ, «ուրկէ դուրս եկած շրջանաւարտներն եւ ուր համախմբված հայութիւնը անխտիր լծված են ազգային-հասարակական գործունեութեան՝ հետապնդելով Արեւմտահայաստանի ազատագրութիւնը»[152]: Այս առումով առանձնապես կարևորվում են 1878 թ. աշնանը «չորս տարուան շրջանով» հիմնադրված Վանի Վարժապետանոցն ու հատկապես 1881-ին ռուսական հյուպատոս Կ. Կամսարականի օգնությամբ նույն Վանում հիմն-

---

[149] «Նորք», թիվ 4, Ե., 1924, էջ 354:

[150] «Մև խաչի» մասին մանրամասն տե՛ս Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005:

[151] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 63:

[152] Հարիւրամեակ Արմենական կուսակցութեան կազմութեան 1885-1985, Փարիզ, 1985, էջակալած չէ:

ված Հայկազյան Կեդրոնական վարժարանը[153]: Դարբնոց, որտեղ կոփվեց մի սերունդ, որն իր ուսերին կրեց հայ իրականության մեջ առաջին ազգային նուաակցությունն ստեղծողի դժվարին ու պատվավոր սառաքելությունը: Անդրադառնալով այս շրջանին՝ Մ. Խրիմյանը գրում էր. «Փորթուգալեան էֆենտին բնիկ պոլսեցի է, բայց իր բուռն հայրենասիրութեան ոգին զինքն վարեր է Հայաստան եւ ինքն իբրեւ անխոնջ մշակ կը տքնի, կ'աշխատի մեր հայրենեաց յառաջադիմութեան համար: Ուստի ուսումնասէր ազգայնոց նուիրական պարտքն է որ ձեռն տան, քաջալերեն զինքն իր ձեռնարկութեան մէջ, գիտնալով որ Կեդրոնական դպրոցը մեր ամենակարեւոր հաստատութիւն եւ միջոց է Վանայ ազգայնոց յառաջադիմութեան»[154]:

Անընդհատ փնտրտուքի մեջ գտնվող Մ. Փորթուգալյանը դպրոցաշինության ու մատաղ սերնդի դաստիարակությամբ զբաղվելուն զուգընթաց չի մոռանում նաև տարեց աշխատավոր մարդկանց: Նա հիմնում է կիրակնօրյա դասընթացներ և կանոնավոր հաճախողներին շահագրգռելու նպատակով իր անձնական «դրամէն քառասունական փարայ կը յատկացնէ, զոր կը վճարէ դասերէն յետոյ»[155]: Նա Վանում հիմնում է նաև գիշերային ակումբ, որտեղ այցելում էին տեղացի բոլոր ազգերի ներկայացուցիչները, այդ թվում՝ նաև թուրքերը: Այդտեղ արգելված էր ոգելից խմիչքներ գործածելը, սակայն հաճախակի հավաքվում էին, բանախոսում ամենատարբեր խնդիրների շուրջ: Այնուհետև ծավալվում էին աշխույժ քննարկումներ, բանավեճեր, որոնց ոգին ու հիմնական «շարժիչ ուժը» Մ. Փորթուգալյանն էր, ով երբեմն մոռանալով, թե ինչպիսի երկրում է գործում, առաջ էր քաշում հեռուն գնացող գաղափարներ:

Օսմանյան իշխանություններին իրապես մտահոգում էր, որ 1884 թ. Վանում Մ. Փորթուգալյանի հիմնադրած «Լուսատրեալ միութիւնը»

---

[153] Գրականության մեջ ավելի հաճախ հանդիպում է արևմտահայ «Կեդրոնական» ձևը:
[154] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 64:
[155] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 18:

և «Երկրագործական ընկերութիւնը» հայ երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակելու, նրանց Եվրոպայում կրթության ուղարկելու հեռուն գնացող նպատակներ էին հետապնդում: Ամենայն հավանականությամբ իշխանությունները ծանոթ էին նաև Մ. Փորթուգալյանի «Հրանտ» կեղծանունով հրապարակած մեծաքանակ նյութերին, որոնք տպագրվում էին «Մշակ», «Մասիս» և այլ պարբերականներում ու աստիճանաբար ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն առաջացնում արևմտահայության իրավազուրկ վիճակի մասին: «Հայկազեան» վարժարանի սրահում մի բանախոսության ժամանակ ակնարկելով, թե «Թուրքիո մեջ շներն անգամ հայերեն ավելի արժեք ունեն» և մոռանալով ամեն մի զգուշություն, նա ուղղակի հարցադրում էր. «Ժամը հասած է, հայեր, ի՞նչ ընենք»: Հաջորդ օրը նրան բանտարկում են, և միայն իշխանությունների մոտ անվերապահ հեղինակություն վայելող Գ. Սրվանձտյանցի ու Մ. Նաթանյանի միջամտության շնորհիվ, զգուշացումներ ստանալով, ազատվում է կալանքից: Սակայն հետապնդումները շարունակվում են, և Վանի պահպանողական հոսանքի ջանքերով ու օսմանյան իշխանությունների հրամանով 1885 թ. մարտի 15-ին Մ. Փորթուգալյանին ուղարկում են մայրաքաղաք՝ Կ. Պոլիս, որպեսզի պահեն անմիջական և խիստ հսկողության պայմաններում: Նույն թվականի հունիսի 3-ին իշխանությունները փակում են Կեդրոնականը:

Աքսորվելով Վանից՝ նա փորձում է հաստատվել Կ. Պոլսում, սակայն հետապնդումները շարունակվում են, և խուսափելով ձերբակալվելու իրական վտանգից, 1885 թ. կեսերին ընդմիշտ լքում է իր ծննդավայրը, դառնում տարագիր, հաստատվում Ֆրանսիայի Մարսել քաղաքում և ձեռնարկում «Արմենիա» թերթի հրատարակությունը. «Թիւրք կառավարութենէն հալածուած Հայ մը, Մ. Փորթուգալեան, որչափ հայրենասէր՝ այնչափ եռանդուն և անձնուէր, ապաստանեցաւ ֆրանսական ազատ հողի վրայ և գրաքննական խիստ կապանքներէ, բռնութեան անլուր ճնշումներէ զերծ՝ շարժեց գրիչն և հ-

բապարակ հանեց Արմէնիան, որ իր նոր յատակագծով կուգար մեր ազգային մամլոյ մէկ պակասն լրացնել: Մեր մամուլն ունէր բաւական տարբեր թերթեր, բայց իբր գերի և ճնշուած ժողովուրդ չունէինք թերթ մը, որ հայրենասիրական և ազատասիրական գաղափարներու ծաւալման ծառայէր այդ թերթն՝ հրապարակային այդ պրոպագանդան, եղաւ Արմէնիան: Այնու իմացանք մեր տարաբաղդ հայրենիքի վէրքերն, այնու ուսանք մեր ազգային ամենէն սուրբ պարտականութիւններն և այնու ծանոթացանք միմեանց իրարմէ անծանօթ համարիւն Հայերս»[156]: Իսկ Մ. Փորթուգալեանն իր համեստ կենսագրականում հետևյալ կերպ է նկարագրում «Արմենիայի» հիմնադրումը, «-Թիւրք կառավարութեան ձեռքով երրորդ և վերջին անգամն լինելով վտարուեցանք մեր հայրենի երկրէն, ոգևորիչ յիշատակներով լեռլեայն անցանք Եւրոպա և ձեռնարկեցինք Մարսեյլի մէջ ունենալ հայերէն տպարան և մի ազատ լրագիր, հայաստանցի եղբայրների դրութիւնը աշխարհահռչակ դարձնելու, արտասահմանեան Հայերի ուշադրութիւնը անոնց վրայ հրաւիրելու աջակցութիւն խնդրելու, մեր գաղափարներ Հայ Ժողովրդին մէջ տարածելու եւ մեր փորձառութեան արդիւնքներին համեմատ գործելու նպատակով»[157]:

«Արմենիա» պարբերականն առաջիններից մեկն էր, որ «ըմբոստութեան ձայնը կը բարձրացներ բռնութեան դէմ»[158]: Թերթն զգալի դեր խաղաց մեր ժողովրդի մեջ ազատասիրական ձգտումներ սերմանելու գործում դառնալով յուրահատուկ դարբնոց, որի քուրայում Վանում ծնվեցին ու հասակ առան Արմենական կուսակցությունն ու այլ քաղաքական կառույցներ, լույս տեսան նոր թերթեր, ազատության սուրբ գործին զինվորագրվեցին բազմաթիվ նվիրյալներ: Թերթ, որի էջերում, հավատարիմ մնալով իր ազատախոհական հավատամ-

---

[156] «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարսեյլ, 1890, Յառաջաբան, էջ Բ-Գ: «Արմէնիա»-ի յուշարար»-ը 1885-1886 թթ. լույս տեսած «Արմէնիա» լրագրի հիմնական բաժինների վերահրատարա-կությունն է՝ Մ. Փորթուգալյանի առաջաբանով:

[157] Նույն տեղում, էջ Բ:

[158] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 66:

քին, Մ. Փորթուգալյանն առաջադրում էր բուլղարացիների օրինակով հայ ժողովրդին ազատագրական զինված պայքարի նախապատրաստելու, այդ պայքարում թուրքական լծի տակ տառապող ժողովուրդների հետ դաշնակցելու խնդիր: Թերթ, որը դարձավ ազատական գաղափարների խոսափողը և «հայելին՝ արդարութեան սպասող հարստահարեալ արեւմտահայութեան վիճակին»[159]:

Այս շրջանում սկսվում է արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի երկրորդ՝ գաղափարաքարոզչական և գործնական փուլը, որը համընկավ Մ. Փորթուգալյանի կյանքի նոր՝ կտրուկ շրջադարձի հետ և դարձակետ եղավ նրա ճակատագրում ու գործի մեջ. ուսուցիչը՝ կրթական գործի մշակը, դառնում է խմբագիր, ապա՝ հեղափոխության քարոզիչ: Սակայն ժամանակակիցները միաբերան վկայում էին, որ «իր խառնուածքը յեղափոխականի չէր»: «1885էն Մ. Փորթուգալեանի կեանքին երկրորդ շրջանն է: Մինչեւ 1885 իր գործունեութիւնն ու խօսքը տրամադրած էր ի նպաստ Հայկական կեանքին, իսկ 1885էն մամուլի միջոցաւ միայն իր գործունէութիւնը ի յայտ պիտի գայ»[160]: Այս շրջանը պայմանականորեն կանվանենք «Արմենիական» (բոլոր ընդգծումները մերն են – Ս. Ս.), քանի որ հետագա բոլոր տարիները նա անմնացորդ նվիրաբերեց այդ պարբերականի գոյատևման դժվարին գործին:

Եկամտի աղբյուրներից զուրկ Մ. Փորթուգալյանը, տիտանական ջանքեր գործադրելով, հրատարակում էր «Արմենիան». «Ան իր թերթին տէրն ու ծառան էր միանգամայն», գրաշարը, տպագրիչը, հասցեատերերին առաքողը, թարգմանիչը, հոդվածագիրն ու խմբագիրը: «Վերջին տարիներու մէջ միայն, իր երկու շնորհալի աղջիկները կօգնեն իրենց հօր գործին»[161]: Մարսելում հաստատվելուց հետո[162] նա

---

[159] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 66:
[160] Չէօկիւրեան Տ., նշվ. աշխ., էջ 18:
[161] Նույն տեղում, էջ 22:

կապեր է հաստատում նախկին սաների հետ և շարունակում իր հայանպաստ գործունեությունը: Սակայն երբեմնի ուսուցչի և աշակերտների միջև հարաբերությունները սրվում են, հենց որ վերջիններս հիմնում են իրենց կուսակցությունը և զբաղվում ակտիվ քաղաքական գործունեությամբ:

Հետագայում անդրադառնալով «Արմենիա»-ի հրատարակության դժվարություն-ներին՝ Մ. Փորթուգալյանը շեշտում էր, որ այն շարունակելը միշտ բարդ է եղել, սակայն իրենք շնորհիվ հայ հասարակության գիտակից մասի աջակցության, կարողացել են հաղթահարել այդ դժվարությունները և առաջ գնալ, քանի որ հավատացել են իրենց սկսած գործի արդարացիությանն ու հաղթանակի հնարավորությանը: Եղել են պահեր, վերհիշում է Մ. Փորթուգալյանը, երբ «Արմենիան» լույս է տեսել շաբաթը մեկ անգամ, «մինչեւ որ նիւթական միջոցնէրն բաւականացնէին շաբաթն երկու անգամի վերածելու»[163]: Հնարամիտ խմբագիրը երբեմն դիմում էր տարբեր միջոցների, որպեսզի կարողանար գումար հայթայթել: Օրինակ՝ նա ստեղծել էր «Արմենիայի» օժանդակողների ինստիտուտը, նրանց համար գրել կանոնագիր, որի սահմանած նորմերի հիման վրա հօգուտ թերթի նրանք պարբերաբար վճարումներ էին կատարում: Օժանդակողներն իրավունք ունեին իրենց ստացած «1 օրինակ Արմենիաէն զատ, քանի անձի համար որ ուզեն, Արմենիա բերել տալ իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դրուելով և կէս բաժանորդագնով»[164]: Այնուհետև կոչ էր արվում բոլոր ընթերցողներին, ովքեր ուզում էին օգնել թերթին, կանխիկ վճարող բաժանորդներ գտնել և խուսափել ապառիկ բաժանորդներից, որոնք քիչ չէին հայ իրականության մեջ: Նոր բաժանորդներ հայթայթելու և մարդկանց գրավելու համար Մ. Փորթուգալյանը

---

[162] Սկզբում Vacod թիվ 50, ապա Alleesle Meihan թիվ 44 փողոցներում և ի վերջո՝ Place Alexandre Labadie թիվ 17 մենավոր և խաղաղ տանն էր բնակվում վաստակաշատ գործիչը:

[163] «Արմենիաի 18դ շրջանը», «Արմենիա», թիվ 40, 1902:

[164] Նույն տեղում:

որպես նվեր երկու ֆրանկի արժողության սահմաններում պարբերականի տպարանում հրատարակված գրքերից առաջարկում էր բոլոր նրանց, ովքեր կանխիկ գումարով կբաժանորդագրվեին թերթին[165]:

Նեղսրտելով իր հասցեին ընդդիմադիր տարբեր պարբերականներում գրված անհարկի մեղադրանքներից՝ հատկապես «Ազատ բեմի»՝ տարիքով մեծ լինելու պատճառաբանությամբ ասպարեզը թողնելու պարտադրանքից, Մ. Փորթուգալյանը բացատրում էր, որ ազգային-ազատագրական պայքարը տարիքային որևէ սահմանափակում չի նախատեսում, իսկ կենսափորձը, որի կարիքն այնքան ունեին մեր գործիչներն ու շարժումն ընդհանրապես, խիստ անհրաժեշտ էր: 1906 թ. նշելով, որ իր տարիքն ընդամենը 58 է, Մ. Փորթուգալյանը հիշեցնում էր, որ «20-30 տարեկան երիտասարդները զօրք կը լինին սակայն ոչ թէ զօրապետ»[166] և համաշխարհային պատմությունից բազմաթիվ օրինակներ վկայակոչելով՝ ցույց էր տալիս, որ հասուն տարիքում են մարդիկ իրականացնում խոշորամասշտաբ գործառույթներ և հաղթում: «Ես իմ պատանեկան հասակէս ի վեր,- գրում էր Մ. Փորթուգալյանը,-ազգային գործերով հետաքրքրուած, ազգիս համար գրչով, խօսքով ու գործով աշխատած եմ»[167]: Այնուհետև Մ. Փորթուգալյանը վերհիշում էր, որ այդ նպատակով բուն Հայաստան էր մեկնել ու այնտեղ, հայրենանվեր աշխատանքներ կատարելու համար, մի քանի անգամ թուրքական իշխանությունների կողմից՝ իբրև հեղափոխական, ձերբակալվել: Իսկ Կ. Պոլսից ոչ թե փախել էր, ինչպես անամոթաբար զրպարտում էին ոմանք, այլ «օրինատր անցաթուղթով, իր ազատ կամքով և իր մտադրած ծրագրով» անցել էր Ֆրանսիա և սկսել հայերեն ազատ թերթ հրատարակել՝ «ար-

---

[165] Նույն տեղում:

[166] Մի քանի դատողութիւններ «Ազատ Բեմ»ի գրածներին առթով, «Արմէնիա», թիվ 38, 1906:

[167] Նույն տեղում:

տասահմանի Հայերին ալ ուշադրութեան առարկայ դարձունելու համար հայկական խնդիրը»[168]:

Մ. Փորթուգալյանին հատկապես շատ էր զայրացրել «Ազատ բեմի»՝ իր և Մ. Ավետիսյանի հասցեին Ամերիկայում փողեր հանգանակելու և յուրացնելու զրպարտանքը: Նա նենգ ստախոսություն էր որակել դա, բացատրել պատմության չիմացությամբ և անհարգալից վերաբերմունք համարել՝ հայրենիքի համար նահատակվածների հիշատակի նկատմամբ[169]:

Մ. Փորթուգալյանի ողջ կյանքն ու գործունեությունը նպատակաուղղված էին հայ ժողովրդին ազատագրական պայքարի դուրս բերելու և քաղաքակիրթ ազգերի նման ազատ ու խաղաղ ապրելու նպատակի իրականացմանը: Նա չէր հանդուրժում վախկոտներին, նյութապաշտներին, իսկ լոկ խոսքով հեղափոխականներին ու զրպարտողներին անարգանքի սյունին էր գամում :

1.2. Մ. Փորթուգալյանի դերը արևմտահայության ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում

Արևմտյան Հայաստանում, հատկապես Վասպուրականն աշխարհում, ազատաբաղձ սերունդ պատրաստելու գործում մեծ են Մ. Փորթուգալյանի ծառայությունները: Վանի դպրոցական-կրթական կյանքն աննախադեպ աշխուժացրած գործիչն իր համախոհների աջակցությամբ պատրաստեց մի սերունդ, որը քաղաքականապես հասունացավ և տոգորվեց հայրենասիրական ոգով: «Ինձ թւում է,- վկայում է ՀՅԴ առաջին սերունդի ականավոր դէմքերից եղեռնի նահատակ Հարություն Շահրիկյանը,- թէ 1875-1885 թուականներու թրքահայ սերունդի այն փոքրաթիւ մասը, որ նուիրուել է հասարակական

---

[168] Մի քանի դատողութիւններ «Ազատ Բեմ»ի գրածներին առթով, «Արմենիա», թիվ 38, 1906:

[169] Նույն տեղում:

դատին եւ գնաց միանալու երեք յեղափոխական կուսակցութիւններից մէկն ու մէկին, անպայման կրել է Փորթուգալեանի ու նրա հաւատամքի սկզբնական ազդեցութիւնը: Աւելի՞ն կ'ասեմ. Փորթուգալեան մենակը եղաւ թրքահայոց մէջ եւ մենակը մնաց իբրեւ հիմնադիր ու կազմակերպիչ ըմբոստացման՝ ընդդէմ բռնատիրութեան»[170]: Այդ սերնդի ու նրանց գաղափարական առաջնորդի մասին հիացմունքով են արտահայտվել մեծ թվով շատ այլ ուսումնասիրողներ ևս:

Պատմաբան Հ. Ղազարյանը, բարձր գնահատելով Վանում ծավալած նրա գործունեությունը, նշում էր. «Մ. Խրիմյանի և Կ. Կամսարականի հետ կազմելով մի եռամեծություն, Մ. Փորթուգալյանը գործուն մասնակցություն բերեց երկրամասում խմորվող ազատաբաղձ գաղափարների ձևավորմանը, նպաստեց հեղափոխական ընդհատակյա կազմակերպությունների հիմնադրմանը»[171]: Մ. Խրիմյանին գործակցած Մ. Փորթուգալյանն իր բեղուն ազգանպաստ գործունեությամբ ձևավորեց մի սերունդ, որին այլևս ստրուկ պահելն անհնարին էր դարձել: Մի սերունդ, որն զգալով գլխին կախված դամոկլյան սրի սպառնալիքը և դրանից խուսափելու անհնարինությունը, դրանք հարկադրաբար դիմագրավելու հաջող ու անհաջող փորձեր էր անում, հիմնում ընդհատակյա հեղափոխական խմբակներ ու կազմակերպություններ, բալկանյան սլավոնների օրինակով ծնունդ տալիս հայդուկային շարժմանը՝ բոլորովին չանտեսելով արտերկրից ստացվելիք օգնության ակնկալիքները, կայսերահպատակ մյուս ազգերի հետ գործակցելը, ի վերջո հանգում էր այն հաստատ եզրակացության, թե ժողովուրդը ազատության կարող է հասնել հիմնականում սեփական ուժերին ապավինած, հեղափոխական պայքարի միջոցով:

---

[170] Մկրտիչ Փորթուգալեան (1848-1921). հայ ազգային-ազատագրական շարժման յառաջապահ դրօշակակիրը, www.azator.gr/yushateta/:

[171] Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, էջ 526:

Մ. Փորթուգալյան քաղաքական գործչի ու երևույթի մասին խոսել են շատերը, սակայն բոլորն էլ հպանցիկ, իսկ ավելի հաճախ պարզապես հիշատակել են նրա անունը, երբ անդրադարձել են հատկապես «Արմենիա» լրագրին ու նրա առաջ քաշած թեզերին: Այնինչ Մ. Փորթուգալյանն էր, որ իր կրթալուսավորական ու քարոզչական գործունեությամբ և համագործակցելով ժամանակակից նվիրյալների հետ՝ ընդարմացումից հանեց հայությանը, սերմանեց ազատաբաղձ գաղափարներ: Արևմտահայ գործիչներից առաջինը կամրջեց արևելահայ ու արևմտահայ ազատատենչ ձգտումները և Գր. Արծրունու հետ դրանք ուղղորդեց գործնական հուն: Մինչև գաղափարաքաղաքական ու աշխարհայացքային դրույթներին անդրադառնալը՝ հակիրճ ներկայացնենք նրա մարդկային նկարագիրը: Այդ դժվարին գործում մեզ օգնել են արխիվային վավերագրերը, նամակները, ժամանակակիցների հուշերը, «Արմենիա», «Ավետաբեր», «Կոչնակ», «Հնչակ», «Նոր կեանք», «Մարտ», «Անահիտ» և այլ պարբերականներում առկա փոքրաթիվ անդրադարձները, Մ. Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեության քառասունամյա հոբելյանի առթիվ լույս տեսած հոդվածների «Քառասուն տարուան աշխատատրը» ժողովածուն[172], Մ. Փորթուգալյանի հավատարիմ սաներից, Վանի վարժապետանոցի շրջանավարտ Պ. Թորոսյանի գրքույկում զետեղված նկարագրական-վերլուծական նյութերը, մերօրյա որոշ ուսումնասիրողների աշխատություններում տեղ գտած փոքրաթիվ, սակայն զուսպ ու տարողունակ բնորոշումները և այլն:

«Մեծ հայրենասեր», ազատության վիշտ ու ցավերը կամովին հանձն առած, նույնիսկ մահվան գնով նպատակին հասնելու համար պատրաստ հերոսը, ժամանակակիցների վկայությամբ, «կարմրախառն ճերմակ թավ մազեր ուներ, բոլորովին ճերմակ մորուք», ինչը վաղաժամ ծերության մասին էր վկայում: Թեև հաճախ հին ու կիսա-

[172] Թորոսեան Պ. Ռ., Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914:

մաշ էին նրա հագուստները, սակայն միշտ ճաշակով ու մաքուր էր հագնվում: Խնամված արտաքինն ու նոտրբ վարվելակերպը հուշում էին նրա կատարյալ ազնվական նկարագրի մասին:

Մշտապես կքած էր ընտանիքի հոգսերի տակ[173], «զուրկ հասույթի նուազագոյն աղբիւրներէն»: Հաճախ էին լինում դեպքեր, երբ պարտքերը մարելու համար աճուրդի էին հանվում նրա ունեցվածքը, գրքերն ու պիտույքները: Մշտապես հիվանդ քրոջ տնքոցներն ու դեղերի պակասը տանջում էին, սակայն նա ոչ մի անգամ «դժգոհութեան բառ մը չը թողուց որ սպրդի իւր բերնէն»[174], հալածական ու գաղափարի գիտակից զոհ էր, տանջվող, բայց ոչ երբեք վհատվող վտարանդի էր, որովհետև ազատության համար պայքարի դժվարությունները նա սիրով ու գիտակցաբար էր հանձն առել: Ծանր ու դրամատիկ է եղել նաև նրա ընտանեկան կյանքը: Հետագայում անդրադառնալով այդ հարցին՝ 1906 թ. իր երիտասարդության շրջանի պոլսահայ ընկեր Միհրան Բաղդասարյանին ուղղված մի նամակում Փորթուգալյանը գրում է.¦«Թյուրքիա ունեցած երկու զավակներս ալ մեռան այստեղ, անդրանիկ աղջիկս, Արմենուհին, որ Եվդոկիա ծնած էր եւ Վան բերած էի, 17 տարեկան հասակին մեջ մեռավ այստեղ. Տիգրանս ալ, որ Վան ծնած էր և 2 ամսական եղած ատեն այստեղ բերված, 7 տարեկան հասակին մեջ մեռավ: Այժմ ունիմ 2 մանչ և 4 աղջիկ[175] զավակ, որոնք ամենքն ալ Մարսեյլ ծնած են: Ամենէն մեծը,

---

[173] Մ. Փորթուգալյանն ամուսնացել էր Եվդոկիայում և շուտով Վանից իր ընտանիքը տեղափոխեց Մարսել:

[174] Թորոսեան Պ., նշվ. աշխ., էջ 4:

[175] Գրեթե միշտ իրենց հայրիկի կողքին ու նրա գործի նվիրյալները եղան Շու-շան և Հայկանուշ դուստրերը, որոնք բոլոր գործերում օգնում էին Փորթուգալյանին և հայ իրականության մեջ իրավամբ համարվում են առաջին կին գրաշարները: Տե՛ս Նիկողոսյան Ա., Գենդերային փոխակերպումները հայոց պատմության մեջ, Ե., 2006, էջ 112:

Վահանս, 19 տարեկան է այժմ լիսեին ընթացավարտ ելած է Bachelier-ի դիպլոմով»[176]:

Կ. Պոլսում ծնված ու բարեկեցիկ պայմաններում մեծացած պատանին ամերիկյան հայտնի ազատության համար պայքարի նվիրյալ Պատրիկ Հենրիի[177] նման կամավոր զինվորագրվեց «մահ կամ ազատություն տգիտությունից» բանաձևին՝ սեփական ժողովրդին այդ ամոթալի վիճակից դուրս բերելու ուղիների շուրջ երկար մտորելուց հետո:

Լավ ճանաչողների ներկայացմամբ նա մարմնով նիհարակազմ էր, բայց հոգով հզոր, մտքով հեռատես, կամքով աննկուն: Չէր հանդուրժում անտարբերությունն ու թուլակամությունը, խավարն ու տգիտությունը: Դրա համար էլ դարձավ լուսավորության անդրանիկ զինվորներից մեկը և, թողնելով Բոսֆորի երանելի ափերը, մատաղ սերնդին կրթելու վեհ առաքելությամբ 1869 թ. մեկնեց Եվդոկիա: Որտեղ էլ շուտով ճաշակեց դավաճանության, զրպարտանքի, նախանձի ու ատելության դառնությունները:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ Մ. Փորթուգալյանը շարունակեց իր սկսած դաստիարակչական գործունեությունը: Նրա սանը հիշում է, որ հոգնել չգիտեր. «Ռումելի Հիսարի Ազգային վարժարանէն, Բերայի Փանուսեան Վարժարանը. Ագապեան Վարժարանէն անհատական տները կը վազէր ու վազվզէր դասեր տալու: Մէկ օր Մանզումէի էֆքեարին մէջ «Ազգային խոհերը» կը բերեր, միւս օր «Մեղուին» կը թղթակցէր Նորայր և Հրաեր ծածկանուններով, հուսկ ուրեմն և «Ա-

---

[176] Փափազյան Հ., Մկրտիչ Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին (Մ. Փորթուգալյանի նամակն իր ընկեր Մ. Բաղդասարյանին), «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1-2, 1996, էջ 318:

[177] Պատրիկ Հենրին ամերիկյան հայտնի քաղաքական գործիչներից էր, անկախության համար պայքարի նվիրյալ մարտիկ: Վիրջինիա նահանգի օրենսդիր ժողովում 1755 թ. նա հանդես եկավ Ամերիկայի ժողովրդի իրավունքների պաշտպանական կրակոտ ճառով, որտեղ նրա արտասանած «Տվեք ինձ ազատություն կամ մահ» (give me liberty or give me death) դարձվածը դարձավ դասական թևավոր արտահայտություն և մինչև օրս էլ չի կորցրել իր արդիականությունը:

սիաի» խմբագրութիւնը ստանձնելով», նա միայնակ ու քաջաբար կռվեց կղերական կամայականության ու ամիրայական դասի դեմ, իսկ մյուս կողմից ջանք չէր խնայում, որ հայ ժողովուրդը հինգհարյուր տարվա թմբիրից դուրս գա և հասնի «պարտուց ու իրաւանց գիտակցութեան»[178]:

Ապագա հանճարեղ հրապարակագիրը վիատվել չգիտեր. մի օր «Վարազդատյան», մյուս օրը՝ «Արարատեան», հաջորդ օրը՝ «Հայոց միացեալ» ու էլի այլ անուններով ընկերություններ էր հիմնում և այդ անմեղ անունների տակ շարունակում ծավալել իր դաստիարակչական ու քարոզչական աշխատանքները: Նա միշտ փորձում էր տեսականն ու գործնականը զուգակցել: Այս առումով խիստ բնորոշ է նրա և Ամերիկյանցի «Շար Կարծեաց»-ում գրած «Փոխանակ Հայաստանցին Կ. Պոլիս գալու, Կ. Պոլսեցին Հայաստան երթալով այդ երկիրը զարգացնելու է» կոչ-հորդորը:

Հատկանշական է, որ Մ. Փորթուգալյանին ժամանակին բարձր է գնահատել Գր. Արծրունին: Նա ոչ միայն սիրով ու պատրաստակամ հանդիպել ու քաջալերել է Փորթուգալյանին իր ազգանվեր հղացումներում, այլև օգնել է նրան Թիֆլիսում հանդիպելու տեղի հայ մտավորականների, ռուս մեծ դիվանագետ իշխան Միրսկոյի և այլ նշանավոր այրերի հետ ու խոսել արևմտահայոց ապագայի մասին: Այս շփումների արդյունքում էլ դրվում են արևելահայ և արևմտահայ հատվածների հետագա մերձեցման, նրանց ազատատենչ ձգտումները կամրջելու հիմնաքարերը:

Կյանքում նա դրամասեր չէր, թեև դրամի կարիքը միշտ ուներ: **Դրամ** բառը նրան ավելի շատ գրավում էր հակառակ կողմից ընթերցվող **մարդ** իմաստով: Իսկական հայրենասեր մարդկանց կարիքը նա շատ էր զգում: Դրա համար էլ ծրագրում էր ոչ միայն հայ, այլև կայսրության տարածքում բնակվող մյուս ժողովուրդների շնորհալի ե-

---

[178] Թորոսեան Պ., նշվ. աշխ., էջ 8-9:

րիտասարդներին ուղարկել տարբեր երկրներ, կրթել, դաստիարակել նորովի, որպեսզի նրանք՝ որպես կիրթ ու խելացի մարդիկ, իրար հասկանային և միմյանց հանդուրժելով ու աջակցելով՝ զարգանային և ոչ թե կոտորեին միմյանց:

Հետաքրքիր էր նրա տեսակետը դարավոր ստրկությունից հայ մարդու հոգեբանական ամլացման մասին. «Մարդիկ Եւրոպայի մէջ կապրին, բայց Տաճկաստանի մէջ կը բուսնին»[179]: Պատահական չէր, որ առաջինը գիտակցելով այդ տխուր կացությունը՝ հենց նա էլ առաջինը եղավ հայության մեջ ինքնավստահություն ներշնչողն ու նույնն էլ բոլոր հայերից պահանջողը:

Խուսափելով մնացած կյանքը թուրքական բանտում ու տաժանակրության մեջ զուր տեղը վատնելուց՝ «Վանէն 3 անգամ թիւրք կառաւարութեան կողմէն իբրև յեղափոխական վտարուած...»[180] Փորթուգալյանն ստիպված ու սեփական ժողովրդին անմնացորդ ծառայելու նպատակով լքեց ծննդավայրը, կամավոր դարձավ տարագիր, հաստատվեց Ֆրանսիայի հարավում գտնվող Մարսել նավահանգիստ-քաղաքում ու ձեռնարկեց «Արմենիա» թերթի հրատարակությունը: Պարբերական, որը հայության բողոքի ձայնը բարձրացրեց համիդյան բռնատիրական վարչակարգի դեմ և առաջին անգամ աշխարհին ցույց տվեց Թուրքիայի իսկական դեմքը. «Արմենիա»ով՝ առաջին ըմբոստության ձայնն էր որ կը բարձրանար բռնության դէմ»[181]: «Արմենիայի» հիմնադիր-խմբագիրը,- հետագայում գրում էր Մ. Փորթուգալյանը,- «պատահմամբ ինկած չէ Եւրոպա ապրուստ ճարելու», այլ որոշակի ծրագրերով էր հայտնվել այնտեղ, ինչն արդյունք էր ու հետևանք Հայաստանի մեջ երկար տարիների գործունեության ու մտորումների: Այդ տարիներին,- շարունակում էր վերհիշել ազգի նվիրյալ խմբագիրը,-արտասահմանում բնակվող հայերի մեծամաս-

---

[179] Թորոսեան Պ., նշվ. աշխ., էջ 8-9:
[180] «Արմէնիա»ի գործը, «Արմէնիա», թիվ 48, 1905:
[181] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 66:

նությունն այն աստիճանի աղոտ պատկերացում ուներ Արևմտյան Հայաստանի ողբալի վիճակի մասին, որ «շատեր կըսէին այն ատեն թե սուտ են Արմէնիայի գրածները. մի՞թե այդպիսի հարստա-հւսրություններ կը լինին Հայաստանի մէջ»[182]:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը փորձեց շլացուցիչ վարձատրություններով ու առատ խոստումներով լռեցնել «Արմենիա»-ն, սակայն Փորթուգալյանը մերժեց հայերի արյունով շաղախված փողերն ու շքանշանները և հայտարարեց. «Արմենիան» ինքնին պիտի դադրի այն ատեն միայն, երբ Սուլթանը Հայաստանը իսկապէս բարեկարգ;, տալով Հայոց ապրելու ազատութիւն, կեանքի եւ ինչքի ապահովութիւն»[183]:

Այս մերժումով Մ. Փորթուգալյանը ցույց էր տալիս, որ ինքը գործիչ էր, ում խիղճը մաքուր էր, ճակատը՝ պարզ: Մի շատ կարևոր հանգամանք էլ են շեշտել ժամանակակիցները՝ «եթե ծառը իր պտուղէն կը ճանչցուի», ապա Մ. Փորթուգալյանն էլ՝ իր սաներով: Իսկ նրանցից շատերը դարձան հայրենիքի ազատության գործի նվիրյալներ, ոմանք էլ նահատակվեցին այդ սրբազան պայքարում, ինչպես օրինակ՝ հայ հեղափոխության անդրանիկ նահատակ Հովհաննես Ագրիպասյանը, Արմենական կուսակցության հիմնադիր, Վանի «Մեծ դեպքի» անզուգական ղեկավար, ժողովրդի վիշտ ու ցավով տառապող ու նրա համար մատաղված Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանը և շատ ուրիշներ: Մ. Փորթուգալյան մարդու, հայի զենքը գրիչն էր, գործելակերպը՝ գաղափարակիցներ պատրաստելն ու ներքին ուժ ձևավորելը: Նա արեց ամեն ինչ՝ իր ժողովրդին դարավոր քնից հանելու, սթափեցնելու ու իր ոտնահարված իրավունքներին տեր դարձնելու համար: Փորձեց հայերին վերադարձնել զարգացած ազգերի շարքը, ձերբազատել նրան հեզ ու խոնարհ ռայայի կեցություն-հոգե-

---

[182] Նույն տեղում:

[183] Ղարասէֆէրեան Գ. Նշան, Ո՞վ է Փորթուգալեան, «Աւետաբեր», ապրիլ 8, 1911, թիվ 14, էջ 331:

կերտվածքի ստրկական գոյավիճակից և այդ կարգավիճակում նորովի ներկայացնել աշխարհին: Միևնույն ժամանակ Մ. Փորթուգալյանը, հիմնելով «Արմենիան», ցանկանում էր ոչ միայն ազատագրության համար ոտքի հանել ժողովրդին, այլև այդ գործընթացում ձեռք բերված փորձառությունը կուտակել, «կեդրոնացնել ու ամփոփիլ մի տեղ», դասեր քաղել դրանցից, թերթի միջոցով ուղղորդել ժողովրդին, «զգուշացնել ազգավնաս ընթացքներէն» և առաջ մղել ազգանվեր գործը[184]:

Իբրև գաղափարի նվիրյալ, «սրի նման փայլատակող գրչի ու գրելու արվեստին տիրապետող մարդ»[185], նա երբեք չկաշառվեց: Քաջարի ու անվիատ զինվորի նման կռիվ տվեց հայրենիքի թշնամիների դեմ՝ վաստակելով ժամանակակիցների մեծ մասի խոր հարգանքն ու ակնածանքն իր անձի ու գործի նկատմամբ: Նա փայլուն ճառասաց էր. «բեմէն ժողովուրդին խօսելու արհեստին մէջ գերազանց, պզտիկ մարդ մըն է, չունի փառահեղ երևույթ մը, խօսածները կը նմանին զուլալ առուակի մը, բարձր իտէալներ դիւրամարս կընե, ճէնթլմեն է...»[186]: Ի վերջո, Փորթուգալյանը ժամանակակիցների վկայությամբ շարժուն ու աշխույժ, շրջապատին գրավող, իր գաղափարներով վարակող-ոգևորող շնորհն ուներ. «Մոգող, դիպող, ներշնչող, բռնկցնող անձ մ'էր, իր կենդանութիւնը եւ աշխույժը շուտով իրեններուն կանցունէր»[187],- վկայում էին ժամանակակիցները:

Մ. Փորթուգալյանի անձն ու գործունեությունը բարձր են գնահատել ժամանակակից գրեթե բոլոր նշանավոր հայ մտավորականներն ու հասարակական-քաղաքական գործիչները: Նրան ձոնել են բանաստեղծություններ, երգեր: Հայոց վերազարթնումի, ինքնաճանաչման, ազգային ինքնագիտակցության և արժանապատվության արժ-

---

[184] «Արմէնիա»ի գործը, «Արմէնիա», թիվ 48, 1905:

[185] Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, հ. 2, Ե., 2012, էջ 14:

[186] «Արեւտաբեր», թիվ 14, 1911, էջ 330:

[187] «Կոչնակ», թիվ 12, ապրիլի 8, 1911, էջ 326:

ևորման ու գաղափարապես սպասվող գոյամարտերին նախապատրաս-տելու գործում կարևոր ներդրումների համար Մ. Փորթուգալյանին համարում էին կենդանի լեգենդ: «Լեռները կոնակնին կը ծռեն անոր քայլերուն ներքև: Երկինքը հուր կը տեղայ ու երկիրը արեւը կը փայլէ շոտջը այդ նորօրինակ առաքեալին»,- Մ. Փորթուգալյանի մասին գրում է արևմտահայ մեծանուն բանաստեղծ Դանիել Վարուժանը,- ով գնում է դեպի Երկիր, որտեղ «անցնող դարեր հերկած է միմիայն ոճիրը իր ճիրաններով, որուն իտաքանչիւր օրոցքին վրայ կռունկը կու լայ»: Երկիր, որի փետրաթափ աղավնիները «ստիպուած են խլել իրենց կերը ագռաւներու կտուցէն»: Երկիր, որտեղ գնում էր մեր ռահվիրան, չորացնում այնտեղի ճահիճները, սալարկում ճանապարհները, բացում նորերը, որոնք «կը հորդէն սիրտէ սիրտ, սերունդէ սերունդ, ուրկէ պիտի քալէր ազգային յեղափոխութիւնը Հայկական»: Նրա շունչը համեմատելով գարնան զեփյուռի հետ՝ Դ. Վարուժանը նշում էր, որ այն բացում էր մոռացված հյուղակների դռները, որտեղ «հաւատքը վառիլ կը սկսի թոնիրներուն բոցին պէս, կը ծնանին կտրիճները, կը զարթնու հրդեհը հաջորդ օրուան»[188], և քանդվող խավարի փլատակներից կվերընձյուղվի Նորածին ու հզոր Հայաստանը:

Արևմտահայ մեծանուն բանաստեղծ Վահան Թեքեյանն էլ, Մ. Փորթուգալյանին համարելով «մեծ ազգասէր մը», գրում էր. «Ան Արմենիան կը սիրէր իր միւս զաւակներուն հաւասար, քանի որ ասիկա աւելի տոկուն էր, ձայն չէր հաներ, համբերութեամբ կը սպասէր բաժանորդներու բարի-կամքին»: Վ. Թեքեյանը մի շատ հետաքրքիր տեղեկություն է հայտնում. «ինձի առաջարկեց **փոխանորդաբար խմբագրել Արմենիան**» (ընդգծումը մերն է – Ս.Ս.): Հետագայում թեև նրանք գաղափարական որոշ տարաձայնությունների պատճառով հեռացան միմյանցից, սակայն դա բոլորովին չխանգարեց, որ Վ.. Թե-

---

[188] Վարուժան Դ., Ռահվիրաները, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 66-67:

քեյանը գորովալից ու գնահատող տողեր նվիրեր Մ. Փորթուգալյանին. «Տարիներու վշտաչարչար կեանքէն ետք, լիովին իրաւունք ունի անխտիր ամբողջ հայ ազգին երախտագիտութեանը, անոր կէս-դարու ջարթնումին աշխատած և ահաւոր ցնցումներու մեջտեղ, անոր յոյսն ու հաւատքը իր մէջ անսասան կրած ըլլալուն համար»[189]:

Մ. Փորթուգալյանի անձն ու գործունեությունն արժանվոյնս են գնահատել ու իրենց հարգանքի տուրքը մատուցել նաև նրա գաղափարական հակառակորդներից շատերը: ՀՅԴ նշանավոր գործիչ-տեսաբան Գ. Խաժակը[190], արժևորելով նրա կատարած մեծագույն ներդրումը հայ կյանքի վերաւիոխման համար մղված պայքարում, գրում էր, որ այն ժամանակ, երբ «տգիտութիւնը սև թուխս էր նստած հայութեան հոգու վրա, երկաթէ մարդը առաւ լուսոյ ճրագը և ընկաւ ծովը: Հայ կը պատրաստէր»[191]: Անծայր տառապանք, կարիք, քաղց, հաճւսխ «ճանկոտեր են անոր դուռը», բայց նա մնացել է անդրդվելի: «Քար ըլլար կը փշրուեր, ծով ըլլար կը ցամքէր», բայց նրա ամուր հոգին տոկաց հանուն հայության բարօրության, հանուն իր կրոնի, որ էր Հայապաշտությունը. «Ան քիչիկ-քիչիկ ողջակիզուեր է Հայութեան մեծ Մողոքին առջև»[192]: Իսկ «Արմենիա» թերթը Գ. Խաժակի գնահատմամբ առաջին «հայ յեղափոխական օրաթերթն էր ու եղաւ միակ ժամադրավայրը (մինչև «Հնչակի» և մյուս հեղափոխական թերթերի լույսընծայու-մը – Ս. Ս.) հայ ըմբոստներու որ կը կոչէր Հայութիւնը միշտ դէպի կազմակերպութիւն և պատրաստութիւն»[193]:

---

[189] Թեքեյան Վ., Անձնական յիշատակներ, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 38-39:

[190] Գարեգին Խաժակ (Չազալեան, Բաբա, 1867-1915):

[191] Խաժակ Գ., Տոկուն մարդը, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 40-42:

[192] Նույն տեղում:

[193] Խաժակ Գ., Տոկուն մարդը, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 40-42:

«Կեդրոնականի» նախկին սան, Արմենական կուսակցության հավատարիմ անդամ Միք. Նաթանյանը[194] Մ. Փորթուգալյանի մեծագույն ներդրումը հայոց վերազարթնումի գործում համարում էր այն, որ նա պատրաստեց մի ողջ սերունդ՝ «հայրենի ազատագրության մարտիրոսների», պատրաստ հայրենիքին նվիրաբերելու ամենաթանկը՝ սեփական կյանքը: Մ. Նաթանյանը փաստում էր, որ Մ. Փորթուգալյանը խստորեն պատժում էր բոլոր վախկոտ պատանիներին և պարտադրում, որ իր սաները «զիրար օգնեն ու պաշտպա-նեն»՝ փոքր տարիքից սերմանելով համերաշխ գործելու առավելությունները[195]:

«Արմենիա» կը թուեր ըլլալ շքեղ մեկ խորհրդանիշը Հայրենիքիս, Փորթուգալեան՝ անոր ազատութեան, յոյսին ու փրկութեան իտէալին լծորդած դիւցազնափայլ դէմքը,-հիշում է արևմտահայ նշանավոր մտավորականներից պոլսահայ Արշակուհի Թեոդիկը,- Ան իր թերթով հայրենիքի տառապանքը ճանչցուցած էր մեզ, ազատութեան ու ինքնագիտակցութեան ոգին արթնցուցած էր իր հայրենակիցներուն սիրտին մէջ, հայ ազատագրումի գործին համար ի սպաս դրած էր իր կորովն ու գրիչը, տարիներ նժդեհ ապրելով իր ազգօգուտ գործունեութեամբ անձնուրաց գործիչներուն շարքին մէջ»[196]:

Արևմտահայ իրականության մեջ Մ. Փորթուգալյանն առաջիններից մեկն էր, որ ձգտում էր հայ ժողովրդին հանել դարավոր թմրությունից ու անտարբերությունից, նպաստել նրա զարթոնքին, թե ֆիզի-

---

[194] Արմենական, իսկ հետագայում ռամկավար գործիչ Մ. Նաթանյանը տնական ժամանակ շատ ակտիվ թղթակցել է Մ. Փորթուգալյանի «Արմէնիա»-ին՝ հոդվածները ստորագրելով «Մէն-Մէ» կեղծանունով: Նրա գրչին են պատկանում «Հայ ազատագրման շարժման հետքերով-ՌԱԿ ծագումն ու կեանքը», «Արմենական կուսակցություն-ծագումէն մինչեւ Սահմանադրական ռամկավար կուսակցութեան կազմութիւնը» աշխատությունները, «Սպան Պետրոսեանի», «Մելգոնեան հարազատներու», «Մկրտիչ Փորթուգալեանի», «Համբարձում Երամեանի» և այլոց կենսագրականները, «Ծյարներ Միհրան Տամատեանէ» շարքը և մեծաքանակ այլ հրապարակումներ:

[195] Նաթանեան Մ., Յիշատակաց բովերէն, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 44-47:

[196] Թեոդիկ Ա., Վերյիշում մը, Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, էջ 36-37:

կական, թե իրավական ու տնտեսական առումներով նրան մղել ինքնապաշտպանության: «Նա առաջինը եղավ մեռած հայության մեջ ինքնավստահություն ներշնչելու»[197]:

Պոլսահայ մտավորական Վ. Շահրիմանը Մ. Փորթուգալյանի նվիրումը հայոց ազատագրության գործին համարում է «անստուեր գործողութիւն մը, արժանի՝ ամէն անկեղծ հիացումի» և բարձր գնահատում, որ աննկուն քարոզիչն անդրդվելի «կամքով մը մարտնչեցավ Արդարութեան հաղթանակը փութացնելու համար և ժայռի մը պէս անխախտ կեցավ իր գաղափարներու պատուանդանին վրայ»[198]: Նա ցնցեց ժողովրդին, մղեց նրան նոր ու արժանավայել կյանքի համար պայքարելու, հնչեցրեց հայ հեղափոխական «շարժումին առաջին հուժկու ռազմերգը»,- գրում է Շահրիմանը, ապա շարունակում,- «Փորթուգալեանը հայրենասիրութեան Խրիմեանն էր»[199], նա մաքուր ու հանդուգն սկզբունքներով զինված վերազարթնումի լույսի շողերը նետեց հայության վրա՝ իր ողջ կյանքը դարձնելով ճշմարիտ վերածնության ու անձնուրաց նվիրումի ուսանելի օրինակ:

Մ. Փորթուգալյանի՝ հայ ժողովրդին լուսավորելու, կրթելու, ազատության ձգտում ներարկելու, երիտասարդ սերնդին գալիք անխուսափելի պայքարին ոգեկոչելու և «յեղափոխութեան առաքեալներ» պատրաստելու ազգանվեր հատկանիշներն է շեշտում ամերիկահայ գործիչ, նրա նախկին սան Ասքանազ Չթչյանը, ում կարծիքով հայոց տառապանքի արձագանք «Արմենիա» թերթը նյութական ու բարոյական զրկանքների գնով պարզեց գաղափարի իր դրոշը, «յեղափոխաշունչ գրուածներով» նպաստեց խոսքը գործի վերածելուն, դաստիարակեց մի սերունդ, որը կանգնել էր ազատության փշոտ ճանապար-

---

[197] Թորոսեան Պ., նշվ. աշխ., էջ 10:

[198] Շահրիման Վ., Մարտնչողը, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 54-55:

[199] Շահրիման Վ., Մարտնչողը, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 54-55:

հին, գրկել զենքը և աներեր բարձրացել ազատության համար պայքարի[200]:

Արևմտահայ նշանավոր մտավորական Բ. Շահպազը, նշելով Կ. Պոլսի հայ «ազգային օրգանիզմի մէջ» որպես ուղեղի կարևորագույն դերակատարություն, ընդգծում է այդ ուղեղի ու Մարմարայի ափերից շատ հեռու գտնվող Հայաստան-մարմնի անջատված լինելու հանգամանքը, որը խանգարել է դեպի ազատության լուսեղեն հորիզոնները սավառնելու ընթացքին, կաշկանդել հայ ժողովրդի առաջընթացը: Այս խորապատկերում Բ. Շահպազը տեսնում է Մ. Փորթուգալյանի առանձնակի դերակատարությունը, ով Հայաստանի մեջ «Հայ Կամքի մը ստեղծման գաղափարով» հափշտակված ապրեց իր ամբողջ գիտակցական կյանքը[201]:

Հայ ազատագրական պայքարի անմնացորդ նվիրյալ Փորթուգալյան գործչի կարևոր դերակատարության մասին խոսուն փաստեր են պարունակում նաև նրա կողմից գրված և նրան հասցեագրված նամակները: Նա ակտիվ նամակագրական կապերի մեջ էր ժամանակի գրեթե բոլոր նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների հետ[202]: Նա աշխույժ նամակագրական երկխոսություն է վարել հատկապես ազգային գործի նվիրյալ, մաքուր ու պայծառ մտավորական Ա. Արփիարյանի հետ: 1898 թ. հուլիսի 21-ին գրած նամակում, իր և իր տիկնոջ անունից շնորհակալություն հայտնելով Արփիարյանին՝ դստեր՝ Արմենուհու մահվան առիթով վշտակցություն հայտնելու

---

200 Չթչեան Մ. Ասքանազ, Ուսուցիչը, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 55-61:

201 Շահպազ Բ., Հայաստանի կամքը, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 48-50:

202 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի համապատասխան ֆոնդերում մեզ հաջողվեց գտնել դրանցից մի քանիսը՝ ուղղված Արփիար Արփիարյանին, Աբգար Հովհաննիսյանին, Վահան Մալեզյանին, Բագրատ Նավասարդյանին, Մկրտիչ Բարխուդարյանին, տղային՝ Վահան Փորթուգալյանին, մի քանի հայկական պարբերականների խմբագիրներին և այլն: Դրանք օգնում են ամբողջական պատկերացում կազմելու նրա մարդկային դրական որակների և ծավալած ազգանվեր գործունեության ու ծրագրերի մասին:

համար, Փորթուգալյանը պարզաբանում էր, որ Ամերիկա մեկնելը հնարավոր չէ, քանի որ այդպիսի ֆինանսական միջոցներ չունի և երբեք էլ չի ունեցել. «Գալով ընտանիքով մեկտեղ փոխադրուելու խորհրդին, այդ մասին մտածելը աւելորդ կը համարեմ բոլորովին, քանի որ ես ինքս առանձին մի ճամփորդութիւն անելու անկարող վիճակի մը մէջ կը գտնուիմ այժմ»[203]: Ինչ վերաբերում էր իր հարուստ լինելու մասին խոսակցություններին, Փորթուգալյանը ցավով արձանագրում է. «Շատ անգամ արդարացած է այն առածը, թե «Թմբուկին ձայնը հեռուէն անուշ կուգայ»[204]:

Այնուհետև հարցնում է, թե արդյո՞ք Մարսելում իրենց կազմած ազատագրական ծրագիրն Ա. Արփիարյանի և Մ. Չերազի հանդիպման հետևանքով Փարիզում «ջուրն է ընկել», նոր վե՞ճ է բորբոքվել իրենց միջև, «թէ հին խանձի հոտ է որ կայ բաց»[205], և խնդրում, որ արդյունքների մասին անպայման տեղեկացնի:

Մեկ այլ՝ 1899 թ. դեկտեմբերի 2-ին գրած նամակում Փորթուգալյանը ներողություն է խնդրում պատասխանն ուշացնելու համար և բացատրում, որ տղան՝ Լևոնն է հիվանդ եղել, և հետո Արփիարյանի ուզած թղթերը պիտի երկար փնտրի, որ գտնի, և խոստանում է շատ արագ կատարել նրա խնդրանքը. «Ձեր հարցերին ճիշտ կերպով պատասխանելու համար կը պարտավորվէի քէօշէ դոքումի հին ու մին թուղթեր փնտռտելով աչքի անցունել. միևնոյն ժամանակ փոքրիկ տղաս Լևոնս ալ 3 շաբաթէ ի վեր fievre typhoide-էն ծանր կերպով պառկած լինելով, ոչ սիրտ և ոչ ժամանակ կունենայի այդպիսի խուզարկութիւնների համար»[206]:

1903 թ. մարտի 8-ին «սիրելի բարեկամ և պաշտոնակից» Արփիարյանին գրած նամակում Փորթուգալյանը տագնապահար և վր-

---

[203] ԳԱԹ, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 106:
[204] Նույն տեղում:
[205] ԳԱԹ, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 548:
[206] ԳԱԹ, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 515:

դրվված շտապում է իր ցավակցությունն ու զորակցությունը հայտնել նրա դեմ կազմակերպված մահափորձի առիթով. «...կը խնդրեմ ընդունել իմ ցավակցութիւնս և զայրոյթի բուռն ցասումս այդ գարշելի ոճրագործութեան դեմ որ կը բերի խեղդելու հայ գրչի ազատութիւնը նոյնիսկ արտասահմանի մէջ»[207]:

1887 թ. հուլիսի 19/31-ին մոսկվայաբնակ **Մկրտիչ Բարխուդարյանին** գրած նամակում Մ. Փորթուգալյանը, Հայաստանի զավակների միության վարչության անունից պատասխանելով վերջինիս կողմից տպագրության ակնկալիքով ուղարկված մեծանուն բանաստեղծ Հովի. Հովհաննիսյանի գործերի մասին, ցավով գրում է, որ «...ընթերցասիրութիւնը այն աստիճան յառաջ գնացած չէ մեր մէջ որ այդպիսի հրատարակութիւններն նիւթական շահ գոյացունէն, մանաւանդ որ այդ հրատարակութիւններ չիյնալով ոչ Ռուսիա և ոչ Թուրքիա մտնել, պետք է ծախել միայն եվրոպաբնակ հայերին մէջ, որոնք մի մեծ թիւ չեն կազմեր և որոյ մեկ մեծ մասն ալ հայերեն չեն գիտեր»[208], չի կարողանում հանձն առնել այդ գործը:

1907 թ. մայիսի 1/14-ին գրած մեկ այլ նամակում՝ ուղղված Թիֆլիսում լույս տեսնող «**Լումայ» թերթի խմբագիր Ազանյանին**, Փորթուգալյանը համագործակցության և միմյանց թերթերը փոխանակելու և տեղեկատվությամբ իրար օգտակար լինելու առաջարկ է անում: «Պատուարժան պաշտոնակցին» Փորթուգալյանը հորդորում է ավելի ակտիվ լինել, քանի որ արդեն «Արմենիաի Ռուսիա տանիլը թոյլատրուած է այժմ»[209]:

Գրեթե նույն բովանդակությամբ մի նամակ էլ Փորթուգալյանը հասցեագրել է Թիֆլիսում լույս տեսնող «**Հայրենիք» թերթի խմբագրությանը**[210]: Նա հայտնում է, որ սխալ հասցեագրելու հետևանքով ի-

---

[207] Նույն տեղում, թիվ 1058:

[208] Նամակ Մկրտիչ Բարխուդարեանին, ԳԱԹ, ֆ. 28, թիվ 503:

[209] Նամակ «Լումայ» թերթի խմբագիր Ազանյանին, ԳԱԹ, Աղայան Գյուտ քահանայի ֆոնդ, թիվ 941-942:

[210] Նույն տեղում:

րենց թերթը նախ գնում է Փարիզ՝ Մ. Չերազին, և նոր միայն վերջինս ուղարկում է Մարսել, ինչի հետևանքով ժամանակի կորուստ է լինում, իսկ լուրերն էլ հնանում են: Փորթուգալյանը զարմացած է, որ «23 տարիներէ ի վեր Մարսեյլ քաղաքին մէջ Արմենիան կը հրատարակուի», իսկ հայրենիքցիներն իրենց թերթը Փարիզ են ուղարկում: Պարզաբանելով խնդիրը՝ Փորթուգալյանը բացատրում է, որ Փարիզում իրոք Մ. Չերազն այդ նույն անունով թերթ հրատարակում էր, սակայն այն ֆրանսերեն էր, բոլորովին այլ պարբերական և «մի տարիէն աւելի է որ դադրած է»[211]:

Փորթուգալյանը ոչ միայն հասարակական-քաղաքական գործիչ էր, թերթի խմբագիր ու բանաստեղծ, այլ նաև արժանավոր ու արժանապատիվ հայ էր, ընտանիքին նվիրված մարդ ու հոգատար հայր: Նրա գրած նամակներում անսահման սեր կա ընտանիքի հանդեպ, պատասխանատվության բարձր գիտակցություն և մշտական ծնողական հոգածություն ընտանիքի բոլոր անդամների նկատմամբ: Հայտնի իրողություն է, որ նա կորցրել էր իր 4 զավակներին, մեծ ցավ էր ապրել, սակայն կարողացել էր իր մեջ ուժ գտնել և իր ծնողական պարտականությունները լավագույնս կատարել կենդանի մնացած զավակների նկատմամբ: Մի դեպքում 1911 թ. լուսանկարով և «Ապագային կը հաւատամ, այդ հաւատքով ցավքս թեթեւնան» վերտառությամբ 1914 թ. մայիսի 8/21-ին որդուն՝ Վահանին գրած բացիկ-նամակում նա դժգոհում է, որ իր մոտ եղած նյութերը որդին իրեն չի ուղարկել[212]: Մյուս դեպքում իր՝ Կ. Պոլսում 1873 թ. և 1911 թ. Մարսելում լուսանկարներով և «յիշատակ քառասնամեայ յոբելեանի» վերտառությամբ փոստային բացիկի վրա 1917 թ. հուլիսի 26-ին գրած նամակում նա Ազգային լեգեոնի սպա Վահան որդուն հայտնում է ընտանիքի ապողջ լինելու մասին[213]: Իսկ մեկ այլ դեպքում՝ 1917 թ. ապրիլի 28-ին,

---

[211] Նույն տեղում:
[212] ԳԱԹ, Մկրտիչ Փորթուգալյանի ֆոնդ, թիվ 2:
[213] Նույն տեղում:

1911 թ. լուսանկարով և «Ապագային կը հաւատամ, այդ հաւատքով ցավքս թեթեւնան» վերտառությամբ բացիկ-նամակում հայտնում է Լևոն որդու ողջ և առողջ լինելու և ֆրանսերեն ուղած գրքերն ուղարկելու մասին[214]:

1907 թ. ապրիլի 25-ին **Բագրատ Նավասարդյանին**[215] գրած նամակում Փորթուգալյանը բացատրում է, որ «Արմենիան» 22 տարի լույս է ընծայել մեծ զոհողությունների գնով, իսկ դժվարություններն հետզհետե ավելանում են, և խնդրում է որպես «ազգային գործերին ոչ անտարբեր» անձ, իր ու մտերիմների բաժանորդագրվելով նպաստեն թերթի զարգացմանը: Հատկապես որ Ռուսաստանի ներքին գործերի նախարարության «հրամանագրով մը վերցուած է այժմ Ռուսիա մտնելու արգելքը. հետևապես ազատ եք այն ստանալու»[216]: Այնուհետև բացատրում է, որ «Արմենիաի ուղղութիւնը հայ հայրենասիրական է, հեռու մնալով թե՛ պահպանողական և թե՛ ծայրահեղ ազատական շարժումներէ»[217]:

Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում նաև Փորթուգալյանին հասցեագրված նամակները: Հետաքրքիր է, որ բացի թղթակցություններից, անձամբ Փորթուգալյանին նամակներ էին հասցեագրում աշխարհի բոլոր հայաշատ օջախներից գրեթե բոլոր նշանավոր

---

[214] ԳԱԹ, Մկրտիչ Փորթուգալյանի ֆոնդ, թիվ 2:

[215] Բագրատ Նավասարդյան (1852-1934), հայ հասարակական գործիչ, բժիշկ: Ավարտել է Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան (1878), կամավոր մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին (Կովկասյան ռազմաճակատում), բժշկական օգնություն ցույց տվել հայ գաղթականներին ու չքավորներին: Կարինի «Պաշտպան հայրենյաց»-ի հիմնադիրներից է: 1903 թ. հայ եկեղեցու գույքի և կալվածքների բռնագրավման կապակցությամբ կազմակերպած հակացարական ելույթների համար ձերբակալվել է, ապա արտաքսվել Անդրկովկասից: 1905 թվականին վերադարձել է Թիֆլիս, շարունակել հասարակական և բժշկական գործունեությունը: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների (հրատարակված «Մշակ»-ում, «Տարազ»-ում, «Առողջապահական թերթ»-ում, «Կավկազ»-ում և այլն): Բ.Նավասարդյանի կերպարը Ռաֆֆին մարմնավորել է «Խենթ» վեպում:

[216] ԳԱԹ, Բագրատ Նավասարդյանի ֆոնդ, թիվ 341:

[217] Նույն տեղում:

գործիչներն ու մտավորականները: Հատկապես մեծ թիվ են կազմում Արփիար Արփիարյանի նամակները: Հայության ազատագրության երկու նվիրյալ ազնվաբարո մտավորականները շատ հարցերում միակարծիք էին: Երկուսն էլ անընդհատ փնտրտուքի մեջ էին, հոդվածներ էին գրում, պարբերականներ խմբագրում, ելույթներ ունենում ու զանազան կազմակերպություններ հիմնում՝ մշտապես հետապնդելով մեկ նպատակ՝ ծառայել սեփական ժողովրդի բարօրությանն ու շուտափույթ ազատագրության գործին:

1899 թ. Ալեքսանդրիայից գրած մի նամակում Արփիարյանը Փորթուգալյանին խուրհուրդ է տալիս ուշադիր լսել Մարսելում գտնվող Փանոսին ու Բաղեշցյանին[218], որոնք «հստակ գաղափար ունին Հայաստանի վիճակին վրայ, ողջմիտ խորհուրդներ տալու ճշմարիտ հայրենասերներ են, ու պիտի կրնան օգտակար ըլլան ազգային դատին»[219]: Ապա ավելացնում. «Ձեր եւ իրենց միջև սերտ յարաբերութիւն մը կրնայ արդիւնաւոր ըլլայ»[220]:

Մեկ այլ, 1901 թ. օգոստոսի 20-ին գրած նամակում Արփիարյանը հայտնում է, որ այլևս «Նոր կեանքի» խմբագիրը չէ, ուզում է Իտալիա տեղափոխվել և «նոր ամսաթերթ մը հիմնել»[221]: Սակայն նոր պարբերական հրատարակելու փոխարեն ավելի նպատակահարմար է գտնում միավորել ուժերն ու նյութական միջոցները և «ուժ տալ արդեն եղածներուն, զանոնք զորացնել, և աւելի օգտակար գործ մը անել»[222]: Այդ նկատառումով էլ առաջարկում է Փորթուգալյանին, եթե համաձայնի. «հնարաւոր է որ ի հարկին Արմենիաի շուրջը բոլորինք»[223]: Շարունակելով զարգացնել այդ տեսակետը՝ Արփիարյանը

---

[218] Խոսքն Արմենական կուսակցության առաջին սերնդի գործիչներ Փանոս Թերլեմեզյանի և Գրիգոր Բաղեշցյանի մասին է:
[219] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, թիվ 106:
[220] Նույն տեղում:
[221] Նույն տեղում:
[222] Նույն տեղում:
[223] Նույն տեղում:

Փորթուգալյանին ներկայացնում է մի քանի կետերից բաղկացած ծրագիր, որում մասնավորապես շեշտում է, որ միավորվելու դեպքում «Արմենիա»-ի բացարձակ խմբագիր-ատենապետ կմնա Փորթուգալյանը, ով թերթի գաղափարական ուղղության որոշողը կլինի, իսկ Արփիարյանը կստանձնի միայն իր գրած հոդվածների պատասխանատվությունը: Իսկ բոլոր այն նյութերը, որոնք հարմար չի գտնի, թող չհրատարակի: Այնուհետև նշում է, որ «Նոր կեանքի 3 1/2 տարուան խմբագրական ուղղութիւնը Ձեզի գաղափար մը տուած է անշուշտ իմ ուղղութեան վրայ: Նոր կեանքին խմբագրական ծրագիրը կողմ է Արմենիային: Այնպես որ նյութերուս մէջ տեսակետները զգալապէս չտարբերին Ձերիններէ՝ հետևաբար անուղղելի դժվարութիւններ ստեղծելու վտանգ մը չեմ տեսնիր»[224]: Արփիարյանն առաջարկում է նաև թերթի վիճակն ավելի բարելավելու նպատակով այն հրատարակել ոչ թե շաբաթը երկու, այլ ամիսը երեք անգամ պարբերականությամբ: Թերթի աշխատակիցը դառնալու դեպքում Արփիարյանը ակնկալում է ստանալ չնչին վարձատրություն և այն էլ սոսկ գոյատևել կարողանալու համար և ավելացնում, որ եթե դա էլ հնարավոր չլինի, ինքը չի նեղանա և կգիտակցի դժվարությունը:

Բացառությամբ Փորթուգալյանի պահվածքի ցուցադրական որոշ դրսևորումների և 1890-ականների վերջերից սկսած «ոչ հեղափոխական» կեցվածքի քննադատության[225], խորհրդահայ պատմագիտությունը[226] XIX դարի վերջին քառորդին նոր թափ առած ազատագրական պայքարի կրթաքարոզչական և գաղափարախոսության զարգացման գործում անուրանալի է համարում նրա դերակատարությունը: Նոյնպիսի մոտեցում ունեն նաև սփյուռքահայ ուսումնասիրողների մեծ մասը: Լ. Նալբանդյանը նշում է, որ Փորթուգալյանը

---

[224] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, թիվ 106:

[225] Վարդանյան Հ., Պարսամյան Վ., Ղազարյան Հ., Կոստանյան Է. և ուրիշների նշված աշխատություն-ները:

[226] Տե՛ս ներածությունում նշված խորհրդահայ պատմաբանների նշված աշխատությունները:

«...նպաստել էր երիտասարդների կրթմանը, որոնք Հայաստանի բոլոր մասերից հավաքվել էին Վանի դպրոցներում: Այդ նա էր, որ ազատության շունչ փչեց ամբողջ Վանով մեկ»[227]: «Հայ ազատագրական շարժման ռահվիրաներէն՝ ազատական բայց ոչ յեղափոխական, ներշնչող ուսուցիչ բայց ո՛չ ընդհատակեայ գործիչ կամ մարտիկ՝ Մ. Փորթուգալեանին վիճակուած էր պատիւը դառնալու գէթ անուղղակի հիմնադիրը հայ քաղաքական-յեղափոխական անդրանիկ կուսակցութեան»[228]: Մ. Փորթուգալյանի հայրենանվեր գործունեության, նրա հոգեզա-վակ «Արմենիայի» մասին գնահատանքի ջերմ խոսքեր են գրել ժամանակի շատ ու շատ նշանավոր մտածողներ, որոնց բոլորին անդրադառնալը նպատակահարմար չենք գտնում[229]: Ինչպես արդեն նշեցինք՝ այդպիսի հրապարակումներ շատ կան նաև ժամանակի մամուլում:

Մ. Փորթուգալյանն այն գործիչն էր, որ երբեք չհետապնդեց անհատական շահ, անձնականը միշտ ստորադասեց հայրենիքին, հանիրավի մոռացումի ու մերժման դառն պահեր ապրեց, սակայն երբեք չընկրկեց, միշտ մնաց իր ժողովրդի լավագույն ապագայի համար պայքարի պատնեշի վրա, հայրենիքի հետ, հայրենիքի կողքին: Նա ժամանակաշրջանի ծնունդն էր և հենց ժամանակաշրջանն էլ դրել է նրա կյանքի ու գործի վրա իր անջնջելի կնիքը: Նրա ապրած ավելի քան 70 տարիները համընկան հայ ժողովրդի պատմության ամենադրամատիկ էջերին՝ իրենց պարունակած խավարով ու պայքարի վայրիվերումներով: Մ. Փորթուգալյանն ազնիվ է եղել գործունեության երկար ու ձիգ տարիների փոթորկուն հոլովույթում, հաճախ ճշմարիտ և իրավացի՝ գործելակերպի թե հայացքների մեջ սխալվել է երբեմն, սակայն, միշտ եղել է ազնիվ: Եվ բնական էր, որ սխալվեր

---

[227] Նալբանդյան Լ., նշվ. աշխ., էջ 101:
[228] Տաունապետեան Հ., նշվ. աշխ., էջ 47:
[229] Պազիլ Խան, Քառասուն տարի, Կարապետեան Գ., Մօտաւոր անցեալի յիշատակներէն, Վասիլեան Պ., Յոբելեարը եւ Արարատեան ընկերութիւնը և ուրիշներ:

նաև, որովհետև պատմականորեն սահմանափակ էր նրա աշխարհայացքը, որը հատուկ էր իր ձևավորման ժամանակաշրջանին և այն սերնդին, որին պատկանում էր ինքը: Հենվելով իր նախորդների վաստակած փորձի վրա և շարունակելով նրանց կատարած գործը, բայց սկսելով գրեթե նորից և գրեթե միայնակ, քաղաքակիրթ ազգերի հայացքի առջև բարձրացրեց հայկական իրականությունը՝ ոչ թե կարեկցանք ու խղճահարություն հարուցելու, այլ հպարտությամբ հիացմունքի ու խոնարհումի պահանջ՝ իր ժողովրդի էության, անտանելի ցավի ու ծանր վիճակի հանդեպ: Արևմտահայ ազգային զարթոնքի, դարավոր ստրկական շղթաները խորտակելու և քաղաքակիրթ ազգերի շարքում լինելու ձգտումները ժողովրդի մեջ սերմանելու և հայրենիքն ու սեփական ժողովրդին օսմանյան բռնատիրությունից ազատագրված տեսնելու սրբազան գործի նվիրյալ Մ. Փորթուգալյանի գործունեությունն արժանի է մեծարման և գնահատանքի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԾՆՈՒՆԴԸ

2.1. «Արմենիա» թերթի «Շրջաբերական»-ը

ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

«Արմենիայի» լույս ընծայումից մի քանի շաբաթ առաջ՝ 1885 թ. հունիսի 18(6)-ին, թերթի խմբագիրն ու նրա մտերիմ գաղափարակիցները «փոփոխացին վիմագրութեամբ (ձեռագիր – Ս. Ս.) հրատարակել» շրջաբերական մի հայտարարություն, որում ներկայացվեցին պարբերականի նպատակը և հիմնական ուղղությունը: Շրջաբերականում շեշտվում էր, որ աշխարհի շատ երկրներում սփռված հայության մի հատվածն էլ բնակվում է Եվրոպայում, և նրա հարաբերությունը «ամեն կողմի հայերին հետ շատ օգտակար կլինի»: Իսկ այդ հարաբերման համար անփոխարինելի և «գլխավոր միջոցներէ մին ալ լրագիրն է», որը զանազան վայրերում ապրող հայության կյանքի մա-

սին լրատվությամբ կապող օղակ կդառնա ու «միութիւն և համերաշխութիւն կրնայ յառաջ բերել» հայության մեջ[230]:

«Արմենիայի» հրատարակությունը ձեռնարկելով՝ Մ. Փորթուգալյանն իր առջև դրել էր հետևյալ հիմնական խնդիրները.

«ա. Օտարներու ուշադրութիւնը հրաւիրել Թըրքահայաստանի կացութեան եւ հայ ժողովուրդի կեանքի պայմաններուն վրայ. բ. Օժանդակել հայրենիքին՝ արտերկրի հայութեան ամբողջական նեցուկով. գ. Փորթուգալեանի ազատական գաղափարները տարածել հայութեան մէջ. դ. Խմբագրի փորձառութիւնն ու ձեռնահասութիւնը դնել հայութեան տրամադրութեան տակ՝ առ ի օգտագործում»[231], ինչպես նաև՝ ե. կապ հաստատել հայության բոլոր հատվածների միջև, զ. դառնալ կապող օղակ տարբեր երկրներում բնակվող գործարար հայերի համար, է. օգտվելով Ֆրանսիական հանրապետության մարդասիրական օրենքների ընձեռած հնարավորությունից, հաստատել այնտեղ հայկական տպարան՝ մշտապես հարգելով հայաշատ Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի (որտեղ գլխավորապես պիտի տարածվեր «Արմենիան» – Ս. Ս.) օրենսդրական նորմերը:

«Արմենիա»-ի հրատարակիչները, որպեսզի իրենց գործունեության նկատմամբ տվյալ պահին կամ ապագայում սխալ ենթադրությունների ու կասկածների տեղիք չտային, և «ապահոված կը լինի արդեն Արմենիաի ազատ մուտքը ամէն հայաբնակ երկրին մէջ» (խոսքը հայաշատ երկրների մասին է - Ս.Ս.), հայտարարում էին, որ թերթը այնպիսի քաղաքական ուժի ձեռքին գործիք չի դառնա, որը, օգուտ քաղելով «իւր դիրքեն, նպատակ ունենայ զսպել այն ինչ տիրող պետութիւնը կամ պարսաւիլ այն»[232]:

---

[230] «Արմենիա»-ի ուղղությունն ու ծրագիրը ներկայացվել է 1885 թ. հունիսի 18-ի շրջաբերական հայտա-բարության մեջ, Ազգային գրադարան, «Արմենիա» թերթի հավաքածու, էջ 1:

[231] Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 47: Տես նաև՝ Նալբանդյան Լ., նշվ. աշխ., էջ 101:

[232] Ազգային գրադարան, «Արմենիա» թերթի հավաքածու, էջ 2:

Այնուհետև նրանում ներկայացվում էին հայ ժողովրդի վիճակը և «Արմենիայի» ունենալիք դիրքորոշումն այդ հարցում: Այդ տարիներին «Տաճկահայաստանը, Պարսկահայաստանը և Ռուսահայաստանը մեծ մասամբ պտըտած», կյանքի մեծ մասն այդ վայրերում ապրած և ամեն բան սեփական աչքերով տեսած խմբագիրը շեշտում էր, որ չի կարող աչքակապությամբ զբաղվել, երջանիկ վիճակի մեջ ներկայացնել հայ ժողովրդին և դրանով հուսախաբության մատնել մարդկանց: Այդպիսի լավատեսությունը, նրա կարծիքով դավաճանություն կլիներ հայ ազգի իրական շահերին. «...շատ ցաւալի է մեր ազգի արդի վիճակ. մենք չենք անոնցմէ որք չեն ուզէր տեսնել թե հայ ազգը մի ամեհի անդունդի եզրը կը կենայ. այսօր տնտեսական, վաճառականական, մտաւորական և բարոյական տեսակետներով շատ տխուր կացութեան մեջ ենք և հետզհետե ավելի կը վատթարանա մեր վիճակ»[233]: Մխիթարական ի՞նչ ունենք,- հրապարակախոսական հարց էր հնչեցնում հեղինակը, և ինքն էլ փորձում պատասխանել՝ դպրոցնե՞ր, որոնք վաղնջական վիճակում են ու լավագույն դեպքում հազիվ տառաճանաչ են դարձնում երեխաներին, թե այն, որ մի «Կեդրոնական վարժարան չենք կրնայ ունենալ Կ. Պոլսոյ մէջ»: Նրա տեսակետով ամաչել է պետք նույնիսկ հույներից, որոնք, Օսմանյան կայսրությունում գտնվելով գրեթե նույն կարգավիճակում, ունեն կրթական հրաշալի կառույցներ, որոնք բարձր կրթություն են տալիս մատաղ սերնդին:

Հեղինակի կարծիքով հարստությամբ էլ հայերը չէին կարող հպարտանալ, քանի որ այդ մասին խոսելը նույնիսկ ավելորդ էր. «...ամեն հայ գիտէ այսօր թէ Թուրքիահ տնտեսական վիճակի անկումը ամենէ աւելի հայերին վնասած է. ամիրայութեան ժամանակի սեղանաւորութեան հետքն անգամ ջնջեցին եվրոպական կամպանիաները (նկատի ունի բանկերը – Ս. Ս.), որոնց մեջ գրեթէ բաժին

[233] Ազգային գրադարան, «Արմէնիա» թերթի հավաքածու, էջ 2:

չունեն հայերը, իսկ վաճառականութեան մեջ ալ ուրիշներին հետ մրցելու անկարող դրութեան մէջ կը գտնվինք այժմ»[234]: Այստեղ ակնհայտ երևում ն թուրքական իրականություն օտարերկրյա կապիտալի ներթափանցելու տնտեսական նվաճողական, գաղութատիրական տխուր հետևանքները, որոնց անխուսափելիորեն տուժում էր նաև հայ առևտրական բուրժուազիան: Իսկ անվիճելի ճշմարտություն է, որ «ազգի նյութական և մտաւորական անկումը կառաջնորդէ նաև բարոյական անկումի»: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ այն առաքինությունները, որոնք անհրաժեշտ էին իբրև քաղաքացի ապրել ցանկացող յուրաքանչյուր անձի համար, հայերի մեջ ոչ տեղ ունեին, ո՛չ անգամ նշանակություն. «այլևս ոչ կրոնական առաքինութիւնները կը քաջալերենք և ո՛չ ալ քաղաքական առաքինութիւնները կրնանք յառաջ բերել»[235]: Հեղինակի կարծիքով մեծագործ բարեպաշտներ ու անձնվեր հայեր էլ գրեթե չկան, քանզի մեծագործության և անձնազոհության համար հարկավոր է «հափշտակիլ վսեմ գաղափարներէ որք այս կամ այն տեսակետով կոգևորեն մարդկանց ոյժ կը տան և առաջ կը մղեն»[236]: Հայության կյանքը ողողած նյութական գծուծ հաշիվները «չեն թողուր մեզ բարձրանալ վսեմի աստիճանին, մարդկային գեղեցիկ մտատիպարներին (ideal): Բարիին, ճշմարիտին և գեղեցիկին գաղափարները մեր մէջ զարգացնելու պիտի ջանայ Արմենիան և պիտի քաջալերէ նոքայ գրելու ջանքերը»[237]:

Փորթուգալյանը «Արմենիայի» կարևոր գործառույթներից էր համարում մարդկային այն նվիրական իրավունքների (ազատություն, հավասարություն, եղբայրություն) պաշտպանությունը, որոնք ընդունելի էին քաղաքակիրթ աշխարհի կողմից և նվիրական՝ անկախ նրանից, թե «ինչ ազգի ալ պատկանի և ինչ տէրութեան տակ ալ

---

[234] Նույն տեղում, էջ 2-3:

[235] Նույն տեղում:

[236] Ազգային գրադարան, «Արմէնիա» թերթի հավաքածու, էջ 3:

[237] Նույն տեղում:

գտնուի, անհրաժեշտութիւն պետք է որ ունենայ իբր մարդ ապրելու համար»[238]: «Արմենիան», պաշտպանելով մարդկային այդ նվիրական իրավունքները, գտնում էր, որ ինչպես յուրաքանչյուր ընտանիք անում է ամեն ինչ հանգիստ ու խաղաղ ապրելու, գլխավերևում սեփական տանիք ունենալու համար, այնպես էլ բոլոր ազգերը պետք է ունենան իրենց հայրենիքը, որը որևէ մեկը չի կարող խլել: Հետևապես Փորթուգալյանը և նրա «Արմենիան» շատ բան չէին պահանջում. «...միայն թէ հայեր կարող լինեն ապրել իբր հայ-մարդ, զարգանալ տնտեսապես, հանգստութեամբ ապրելու միջոցներ ունենալ, ազատութեամբ պաշտել իրենց կրօն, ազատութեամբ կառաւարել իրենց եկեղեցի և ազատ լինել իրենց միտք զարգացնելու և յառաջադիմելու, մինչեւ այժմ իրենց վայելած առանձնաշնորհումների համեմատ, թող հայեր իրենց ուժ կեդրոնացնեն իրենց վարժարանների վրայ և աշխատեն ուսման, վաճառականութեան և արհեստների մեջ յառաջ երթալ, գէթ որչափ որ հանգամանքները թոյլ կը տան այժմ»[239] (ընդգծումը «Արմենիայինն» է – Ս. Ս.):

Պարբերականի հիմնադիրները հայտարարում էին, որ «Արմենիան» կրոնական թերթ չէ, հետևապես առաքելություն չունի կրոն քարոզելու: Սակայն, նկատի առնելով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը դեռևս պետականություն չունի, ու հայոց եկեղեցին դարեր շարունակ փոխարինել է պետությանը և «հայ ազգութեան ապաստան եղած է», ուստի «Արմենիան» կհարգի այդ եկեղեցին և կընդունի, որ նա կարող է դեռ երկար ժամանակ լուրջ ազդեցություն ունենալ հայ ժողովրդի վրա, քանի որ Արևելքի մեջ կա մի ստվար մեծամասնություն, ով քաղաքական կյանքի գաղափարն անգամ դեռ չի կարողանում ըմբռնել: Քանի որ այնտեղ «էրմենի մէլիեպի», «քաթոլիկ միլլեթի» բառերը դեռ «անխտրապէս կը գործածուին տիրող լեզուին մեջ և ըստ այնմ կը ճանչցուին պաշտոնապես», քանի որ քաղա-

---

[238] Նույն տեղում:
[239] Նույն տեղում:

քական առաքինությունները դեռ արմատացած չեն մեծ թվով հայերի սրտի մեջ: Այդ պատճառով էլ «Արմենիան» ցավ է ապրում՝ Հայոց եկեղեցու մեջ պառակտումներ տեսնելով, որովհետև դրանք կարող են տկարացնել այն: Սակայն միևնույն ժամանակ գտնում է, որ այդ եկեղեցուց բաժանված հայերին հալածելը ճիշտ չէ և «հակառակ է» հենց եկեղեցու սկզբունքներին:

Ազատության ջերմ պաշտպան «Արմենիան» խղճի ազատության իրավունքը կարևորներից էր համարում, հետևապես չէր կարող դավաճանել մարդկային այդ ամենամեծ՝ «իրաւունքի, խղճի ազատութեան և կրօնական թոյլտուութեան (tolerance)» (հանդուրժողականություն – Ս. Ս.) սկզբունքներին: Պարբերականը հայտարարում էր, որ «...միշտ զրկուածների և հարստահարուածների կողմը պիտի լինեն, ժողովրդին վրայ բռնացողների և հարստահարողների դեմ: Տկարին ու զրկուածին իրաւունքը պաշտպանել, ճշմարտութեան ջատագով կանգնել, չվիատիլ և չընկրկիլ բռնաւորի իշխանութեան դառնաշունչ քամիներեն, այդ կլինի Արմենիաի գալիք ճանապարհի գիծը, լաւագոյն համարելով մինչև իսկ մեռնիլ այդ գծին վրա, քան թե շեղիլ այդ գծէ»[240]:

Մ. Նալբանդյանին հետևելով՝ Մ. Փորթուգալյանը նշում էր, որ հարուստներն ու պաշտոնյաներն իրենց ապահով են զգում իրենց «ոսկեկոտ զրահների տակ» և կարիք չունեն «Արմենիայի» պաշտպանության, ուստի թերթը «նուիրուած է զրկուածներին, որք միջոց և ձայն չունին զիրենք պաշտպանելու համար և սակայն հարստահարուած հայ ժողովրդի մեծամասնութիւնը կը կազմեն: Թուրքիայի գաւառցի հայերը որք մեր ազգի մեծ մասը կը կազմեն և որք սակայն աւգային խնդիրների մէջ ամենէն աւելի զրկուածներն են և գաւառական մի թերթ ալ չունենալուն համար իրենց ձայն հաճախ կը խնդրուի, նոյնիսկ ազգային շրջանակին մէջ, այդ գաւառցի հայեր իրենց ընդհան-

---

[240] Ազգային գրադարան, «Արմենիա» թերթի հավաքածու, էջ 3:

ական դատերի պաշտպանութեան համար բաց ասպարեզ պիտի գտնին Արմենիայի մեջ»[241]:

Շրջաբերականի հեղինակները հանդես են գալիս 1863թ. «Ազգային Սահմանադրության» բարեփոխման պահանջով. «Սահմանադրութեան մեջ ժամանակիս պահանջներին աւելի յարմար բարեխղճութիւններ մտցնելը անհրաժեշտ և ստիպողական կը համարենք: Չենք կարող ուրանալ նաև, որ մեր արդի Սահմանադրութիւն դիւրութիւն կը ընծայէ ճարպիկ շահագէտներին անցնել ժողովրդի գլուխը և ամիրայների և նոցա արբանեակների արած զրկողութիւնները ի գործ դնել տարբեր և շլացուցիչ միջոցներով»[242]: Նրանք ցավով արձանագրում են, որ ազգի վիճակը հետզհետե ավելի է վատանում, որովհետև աննախադեպ ավելացել են կեղծ ազգասերների և իմաստակ կիսագրագետների թիվը, որ ասպարեզ է իջել «յուսահատների» բազմություն, «որք այսպէս մի բաւական ստուար թիւ ունեն» և հալածում են ազգասերներին, որոնք ստիպված համբերությամբ սպասում են, որ խավարի իշխանության օրերն անցնեն, և իրենց ազատության ու գործելու պահը հասունանա:

Շրջաբերականում Մ. Փորթուգալյանը դատապարտում էր եկեղեցական վերնախավին և հարուստներին, որոնք կարծում էին, թե «...մեծութեան և սրտի ազատութեան հայելին են արտաքին փայլին ձգտողները և թե հասարակ կոչուած ժողովուրդը հպատակելու, իսկ իրենք հրամայելու համար են ստեղծուած», որոնք, մոռանալով ամեն սրբություն, ոչ միայն անխղճորեն հարստահարում էին ժողովրդին, այլև խեղդում էին «ազատ մտածումները»: Նա վտանգավոր էր համարում շահախնդիր այն վարժապետներին, որոնք անկեղծ «ազգասիրութեան վրայ հիմնուած հաստատուն չլինելով այս կամ այն կու-

[241] Նույն տեղում:
[242] Նույն տեղում:

սակցութեան գործիք կը դառնան իրենց շահի համար և տգետներէ աւելի վտանգաւոր կը լինեն իրենց իմաստակութիւններով»[243]:

Մ. Փորթուգալյանի կարծիքով «Արմենիան» լինելու էր ժողովրդին նվիրված ազատական թերթ, որն ազատախոհությունը ոտնահարող կրոնավորներին, հասարակ ժողովրդին արհամարհող մեծահարուստներին ու զանազան խաբեբաներին պիտի քննադատեր, անարգանքի սյունին գամեր՝ «միայն հարգելով ջերմապես ազատամիտ և ազատասեր եկեղեցականները, ժողովրդասէր իշխանները և անձնուեր վարժապետները»[244]: Միևնույն ժամանակ թերթը չպիտի վախենար այն ընդդիմադիրներից, որոնք քափ ու քրտինք մտած պիտի պայքարեն իր դեմ, որովհետև հայ ժողովրդի ճշմարիտ բարեկամներ էլ շատ կան, «որք իրենց բերան եղող Արմենիան պիտի քաջալերեն բարոյապէս և նիւթապէս, յառաջ մղելով տգիտութեան և բարոյութեան դէմ բացուած կռիւը»[245]: Այդ վստահությունից էլ ոգևորված՝ պարբերականի հեղինակները շրջաբերականը տարածեցին բոլոր ծանոթ-բարեկամների շրջապատում, որպեսզի իրենց համախոհների համատեղ ջանքերով կարողանային առաջ տանել սկսած հայրենանվեր գործը:

Թերթի առաջին համարը, ինչպես վստահեցնում էին նախաձեռնողները, անկախ նրանից, որ Մարսելում հայերեն տառեր ու հայերենի իմացությամբ գրաշարներ չկային, և նյութական ու բազում այլ դժվարություններ էին առկա, լույս պիտի տեսներ նախատեսված օրը՝ 1885 թ. օգոստոսի 1-ին: Սակայն եթե ոմանք արձագանքեին, ու նախապես նյութական միջոցներ հավաքվեին, ավելի դյուրին կլիներ նախանշված ծրագրերի իրագործման ծառայելը: Հետաքրքիր է, որ Մ. Փորթուգալյանը հույս ուներ, որ շատերը, նույնիսկ մինչև թերթը ստանալը ֆինանսապես կօգնեն: Առաջ անցնելով նշենք, որ եղան

---

[243] Նույն տեղում, էջ 4:

[244] Ազգային գրադարան, «Արմենիա» թերթի հավաքածու, էջ 4:

[245] Նույն տեղում:

նաև այդպիսի օգնություններ, որոնք, սակայն, հետագայում չշարունակվեցին՝ և պակասելով իսպառ դադարեցին:

Շրջաբերականի վերջին մասում բացատրվում էր, որ շտապել են այն «վիմագրոպեամբ հրատարակել», որովհետև մինչև տպարան տեղադրեն, արդեն կարելի կլինի սկսել բուն թերթի հրատարակությունը, և զուր ժամանակ չի վատնվի: 1885 թ. հունիս 18/6-ով թվագրված Շրջաբերականը ստորագրել են «Արմենիայի» համարատու Ֆելիքս Անֆանդյանը և «Արմենիայի» խմբագիր-տնօրեն Մ. Փորթուգալյանը[246]:

Պարբերականի խմբագրակազմը, հաղթահարելով նյութական և կազմակերպ-չական մի շարք դժվարություններ, սկսեց «Արմենիան» լույս ընծայել ճիշտ նախանշված օրը: Թերթի հրատարակության աշխատանքների կազմակերպման գործում ակտիվ դերակատարություն ունեին Մ. Փորթուգալյանի մտերիմները: Քիչ ուշ նրանց միացավ նաև խմբագրի նախկին սան, Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանը, ով թուրքական իշխանությունների կողմից աքսորվել էր Լիբիա, որտեղից կարողացել էր փախչել և անցնել Մարսել ու միանալ իր ուսուցչին[247]:

Շրջանցելով բազում խոչընդոտներ՝ «Արմենիան» շարունակեց լույս տեսնել մինչև 1923 թվականը: Դժվար ու բարդ, ելևէջներով հարուստ ու խրթին է եղել թերթի անցած ուղին: Սկզբնական տարիներին հայ ազգային-ազատագրական պայքարի առանցքը դառնալու հավատը ժամանակի հետ աստիճանաբար թուլացավ: Պակասեցին, իսկ վերջում գրեթե դադարեցին նվիրատվություններն ու օգնությունները: Նյութական միջոցները մշտապես չէին բավարարում: Խմբագրության աշխատակիցները, որոնք միաժամանակ և՝ թղթակից էին, և՝ սրբագրիչ, և՝ գրաշար, չէին խորշում կատարել նաև ամենատարբեր բնույթի ֆիզիկական աշխատանքներ: Իսկ վարձատրությունը լի-

---

[246] Նույն տեղում:

[247] Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 6:

նում էր այնքան, որ կարողանային մի կերպ գոյատևել: Քիչ չէին դեպքերը, երբ շարունակում էին աշխատել՝ այդ չնչին վարձավճարներն էլ չստանալով, որովհետև նրանք իրենց գործի նվիրյալներն էին, և հայրենիքին որևէ կերպ իրենց նպաստը բերելու գիտակցումն էր նրանց ուղենիշը, կյանքի նպատակը:

2.2. Պարբերականի ընդհանուր նկարագիրը

XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների պատմության «լուսաբանմանը» հայերից[248] բացի անդրադառնում են նաև օտարազգի հեղինակները, ավելի հաճախ՝ թուրք և ազերի պատմաբանները: Պատմությունն իրենց հարմար ձևով վերափոխելով՝ նրանք հընթացս քննարկում են նաև արևմտյան կապիտալի տեղական միջնորդներ ու ծառաներ[249] հայ ժողովրդի եկվոր լինելու[250], ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորման ընթացքի, ազգային կուսակցություն-ների[251], հայերի «ապստամբ»[252] և տեռորիստական բնույթ ունենալու[253], հայալեզու մամուլի և մասնավորապես «Արմենիա» թերթին առնչվող խնդիրներ:

Նկատենք նաև, որ խնդրո առարկա ժամանակաշրջանին, մասամբ նաև «Արմենիա» թերթի պատմությանն անդրադարձող աշխատությունների և հուշագրությունների կողքին կան նաև ժամանակաշրջանին նվիրված գեղարվեստական երկեր, որոնք պատկերավոր ու տպավորիչ դրվագներով, երբեմն ամենաիրական գույներով և այնքան իրատեսական նկարագրություններով են արտացոլում ժա-

---

[248] Թեմային առնչվող հայալեզու աշխատությունները նախորդիվ արդեն նշել ենք:

[249] AkchamT. Tyurk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. Istanbul, 1995, 4-րդ հրատարակություն, էջ 76:

[250] Вердиева Х., Гусейн-заде Р., Родосйовная армян и их миграция на Кавказ с Байкан, Баку, 2003, стр.

[251] Наджафов Б., Лицо врага, История армянского национализма в закавказье в конце начале в, Баку, 1993, стр. 8.

[252] McCarthy J., McCarthy C., Turks and Armenians, Baky, 1996, page 27:

[253] Файгл Э., Правда о терроре, армянский терроризм-истоки и причини, Баку, 2000:

մանակը, տիրող բարքերը, տիպիկ ու կենդանի կերպարների միջոցով ներկայացնում տեղի ունեցածը, որ անդառնալիորեն դրոշմվում են մարդու ուղեղում և ուղեկցում նրան ողջ կյանքում: Այս իմաստով Վան-Վասպուրականի, «Արմենիա» թերթի, ավանդական կուսակցությունների ու նրանց ծավալած գործունեության մասին շարադրանքով անփոխարինելի է Գ. Մահարու «Այրոտղ այգեստաններ» պատմավեպը, որում «վաղվա ճանապարհների անցման» ակնկալիքը կա և պատմականի ու գեղարվեստա-կանի վարպետ միաձուլումը, հատվածներ, որ քեզ թվում է՝ պատմագիտական նյութ ես կարդում և ոչ պատմավեպ[254]:

Ուսումնասիրել ու անհրաժեշտության դեպքում համեմատել ենք ժամանակի մամուլում տեղ գտած հրապարակումներն «Արմենիայում» տպագրված նյութերի հետ: Այդ պարբերականներից կարևորներն են «Մշակն» ու «Հնչակը»[255], որոնք, չնայած գաղափարական-տեսական լուրջ հակասություններին, հատկապես սկզբնական տարիներին, զգալի ընդհանրություններ ունեին «Արմենիայի» հետ: «Հնչակի» ու «Մշակի» էջերում էլ հետևողականորեն լուսաբանվել են օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող բռնությունները, արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը, Հայկական հարցում եվրոպական մեծ տերությունների որդեգրած երկդիմի ու շահամոլ քաղաքականությունը: Դրանք ևս «Արմենիայի» նման բազմաթիվ հոդվածներ ու հաղորդումներ են արտատպել օտար պարբերականներից, որպեսզի հայ ընթերցողին ծանոթացնեն եվրոպական երկրների քաղաքական ու տնտեսական անցուդարձին, սուր քննադատության ենթարկեն ցարական ինքնակալությանը և հատկապես ազգային-ազատագրա-

---

[254] Մահարի Գ., Այրվող այգեստաններ, Երևան, 2004, էջ 331, 332, 336, 499 և այլն:

[255] Որոշ վերապահումով նաև «Նոր Դարը», «Հայաստանը», «Արաքսը», «Արևը», «Ազգը», «Դրօշակը», «Նոր կեանքը», «Նոր օրը», «Ղայքարը», «Վան-Տոսպը» և այլ պարբերականներ:

կան շարժումների նկատմամբ նրա վարած հետադիմական քաղաքականությանը: Ընդհանրապես, ինչպես «Արմենիան», այնպես էլ «Մշակը», «Հնչակը» և այդ ժամանակաշրջանում լույս տեսած մի շարք այլ պարբերականներ անգնահատելի սկզբնաղբյուր են ազգային ազատագրական պայքարի, ազգային կուսակցությունների և հայ քաղաքական մտքի պատմության ուսումնասիրիության գործում: Սակայն նրանցում տեղ գտած նյութերից օգտվելիս, աշխատել ենք անկողմնակալ ուսումնասիրողի դիրքերից մոտենալ բարձրացված խնդիրներին, քանի որ այդ պարբերականները բազմաթիվ հարցեր լուսաբանելիս հաճախ զերծ չեն մնացել միակողմանի, կանխակալ մոտեցումներից:

Ինչպես արդեն նշեցինք, իրականությանը չի համապատասխանում այն տեսակետը, թե իբր «Արմենիայի» նպատակն է եղել հայոց ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտության օգնությամբ»[256]: Թերթի նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը հուշում է, որ ավելի շատ սեփական ուժին ապավինելու տեսակետն է գերիշխող եղել: Այսպես, «Գործելու ասպարեզը» խմբագրականում Մ. Փորթուգալյանը, անդրադառնալով այս խնդրին, հարց է տալիս. «Հայաստանը ազատելու համար գործի ասպարեզը ո՞ր տեղն է. Եւրոպա՞ մէջ թէ Հայաստանի մէջ» և ինքն էլ պատասխանում. «Գործի բուն ասպարէզը Հայաստանի մէջ է»[257], իսկ Եվրոպայի մեջ հայերը կարող են ազատ գրել, խոսել: Ավելին, Մ. Փորթուգալյանի կարծիքով ազատագրական շարժման ղեկավարությունն էլ բուն ժողովրդի մեջ ու նրա հետ պիտի լինի. «դրամական, մտաւորական և այլ ուժէր Հայաստանի մէջ պիտի գոյանան», իսկ դրանց հզորանալուն «հեռուէն նպաստել կրնան արտասահմանի Հայերը, բայց ոչ զանոնք կառավարեն»[258], քանի որ, ըստ Փորթուգալյա-

---

[256] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 248:
[257] «Արմենիա», թիվ 36,1894:
[258] Նույն տեղում:

նի, նրանց մեծ մասը նույնիսկ Հայաստանում չի եղել ու չի էլ ճանաչում երկիրն ու մարդկանց: Պիտի ճանաչել ժողովրդին, անել ամեն հնարավորը, որ նա չարտագաղթի, որքան էլ թուրքական իշխանությունները նպաստեն ու ստիպեն, որովհետև երբ «հայ ժողովուրդ չլինի Հայաստանի մէջ, Հայաստանի խնդիր ալ չլինիր»: Այնպես որ, եզրակացնում է Մ. Փորթուգալյանը, «գործի բուն ասպարէզը Հայաստանի մէջ է»[259]: Այսպիսով, Մ. Փորթուգալյանը թեև դեմ չէր Եվրոպայի օգնությանն ու դիվանագիտական աջակցությանը, սակայն կոչ էր անում նախ և առաջ հույսը դնել սեփական ուժերի վրա, առանց սեփական ուժի, հավաքական ճակատի ստեղծման անհնարին էր համարում խնդրի դրական լուծումը:

«Արմենիայի» առաջին համարի խմբագրականում Մ. Փորթուգալյանը պարզաբանում էր՝ քանի որ մինչ լրագրի լույսընծայումը «Շրջաբերականով» արդեն լուսաբանվել են դրա հիմնական ուղղությունն ու որդեգրվելիք հետագա քաղաքականությունը, ուստի ավելորդ լուսաբանություններից խուսափելով, չենք անդրադառնա հայ ժողովրդի տպագիր մամուլի նկատմամբ վերաբերմունքին: Հետաքրքիր դիտարկումներ կատարելով՝ Մ. Փորթուգալյանը, ափսոսանք հայտնելով հանդերձ պաշտոնական վիճակագրության բացակայության համար, ցավով արձանագրում էր, որ աշխարհում ապրող շուրջ վեց միլիոն հայերից լրագիր է կարդում լավագույն դեպքում «ազգի մէջ 6000 մարդէն հազիւ մէկ մարդ»[260]: Այդ տվյալը համեմատելով Մարսել քաղաքի տվյալների հետ, որտեղ 1882 թ. մոտ 400 հազար բնակչություն կար և 60 լրագիր, որոնց մեծ մասը սպառվում էր պատկառելի քանակներով և հաշվարկներ կատարելուց հետո, մեծ տխրությամբ արձանագրում է, որ մեկ մարսելցին 20 հազար հայի չափ լրագիր է կարդում[261], իսկ հայերն այնքան էլ չեն սիրում կարդալ: Սակայն

---

[259] «Արմէնիա», թիվ 36,1894:
[260] «Արմէնիա», թիվ 1, 1885:
[261] Նույն տեղում:

պարզ ճշմարտություն է, որ կարդացող, զարգացած մարդը չի հաշտվում ստրկական վիճակում ապրելու մտքի հետ, և եզրակացնում է. հայերն էլ եթե շատ ընթերցեն, շփումները շատ կլինեն աշխարհի հետ, հետևապես ազատության ու առաջընթացի պահանջ կծնվի, նրանք էլ ոտքի կելնեն՝ դարավոր բռնատիրության շղթաները փշրելու:

Ընթերցելու նկատմամբ սեր ներարկելու, ժողովրդի մեջ ցանկություն սերմանելու համար կարևոր գործոն կարող էին լինել պարբերական հրատարակությունները, հատկապես թերթերը, քանի որ դրանք համեմատաբար մատչելի էին և հասանելի շատերին: Մասնավորապես այնպիսիք, որոնք իրենց էջերում տեղ էին հատկացնում ժողովրդին հուզող խնդիրներին, անդրադառնում նրա դարդ ու ցավին: Աշխարհի զարգացած երկրներում վաղուց հասկացել ու գնահատում էին պարբերական հրատարակությունների կարևոր դերակատարությունը: Սակայն դա գրեթե չէր վերաբերում օսմանյան խավարամիտ իրականությանը. «այն որ լրագրի պէտքը, անոր օգտակարութիւնը, ոյժն ու ազդեցութիւնը դեռ չէ հասկցած, կը նշանակէ թէ աշխարհի ընթացէն դեռ բոլորովին անտեղեակ է»[262], ավելի ուշ համոզված գրում է Մ. Փորթուգալյանը: Իսկ բոլոր նրանք, ովքեր ըմբռնում էին լրագրերի կարևորությունը և ազգանպաստ գործոն լինելը, Մ. Փորթուգալյանի կարծիքով «պարտք կունենան աւելի օգնելու, կանոնատրապէս օժանդակելու իրենց համակրած լրագրին, որ պակաս զգացում ունեցողներին տեղը լեցունեն և գործը յառաջ երթայ կանոնատրապէս»[263]:

Թերթի կարծիքով ազատ ապրելու համար անհրաժեշտ էին ևս շատ հատկանիշներ, որոնց առկայության դեպքում միայն հայ ժողովուրդը կարող էր նվաճել բաղձալի ազատությունը: Դրանցից էր, օրինակ, անձնազոհության վեհագույն հատկությունը, որը պատմական ճակատագրի բերումով դարեր շարունակ հայերի մեջ ոչ միայն չէր

---

262 «Արմենիա», թիվ 27, 1910:

263 Նույն տեղում:

խրախուսվել, այլև օտար տիրողներն ամեն կերպ այն արմատախիլ էին արել: Օտար տիրապետության ծանր պայմաններում անձնական շահը հաճախ կուրացրել էր մարդկանց, մղել վնասակար արարքների, ինչը շարունակաբար հովանավորվել ու քաջալերվել էր տիրողի կողմից:

«Արմենիայի» ասպարեզ իջնելու շրջանում արդեն «Ռուսճուքցի» հոդվածագրի կարծիքով հայ ժողովուրդը պիտի գիտակցի ու նաև հրաժարվի այդ հոռի սովորություններից ու հոգեբանությունից և ինքնակազմակերպվի ու ոտքի ելնի ազատագրական պայքարի: Դրա համար մշտապես պետք է պատրաստ լինի մեծ զոհողությունների, առանց որոնց ոչ մի ժողովուրդ ձեռք չի բերել իր ազատությունը. «պատմութիւնը չյիշեր բնաւ մի ազգ որ առանց զոհողութեան և ճիգերի անկեալ վիճակէն անցած լինի նախանձելի վիճակի. հայ ազգը չի կրնար սպասել որ իր վիճակին բարելաւումն յանկարծ հրաշքով տեղի ունենայ. պատմութիւնը եւ փիլիսոփայութիւնը իրենց օրէնքները ունին, որք նոյնն են և կը մնան նոյն իսկ հայուն համար»[264]:

Նույնիսկ հայ գյուղացին, որ կեղեքված, ապրուստի տարրական միջոցներից զրկված, վաշխառուների ու հարկահավաքների պարտքերից մոլորված և կեղծ քաղաքակրթության հախուռն հարձակումներից շփոթված է, կարիք ունի կազմակերպվելու և գտնե ինքնապաշտպանվելու: Շուկայական հարաբերությունների հախուռն ներթափանցումը կյանք ստիպեց աշխարհի շատ ժողովուրդների սթափվել, կրթվել, զարգանալ, համախմբվել ու ինքնակազմակերպվել՝ նոր համակարգերին հարմարվելու և մարդավայել գոյությունը շարունակելու համար: Հայերն էլ XIX դարի վերջին փորձեցին նույնն անել: Միայն թե սեփական պետականությունը չունենալով՝ նրանք սկսեցին որպես դիվանագետներ, զորապետներ ու խելացի տնտեսվարողներ արարել օտար «ազգերի ծառայութեանց մէջ»[265], հատկապես Օսմանյան

[264] «Արմենիա», թիվ 17, 1885:
[265] «Արմենիա», թիվ 23, 1885:

կայսրությունում, որտեղ նրանք շատ էին: Սակայն որքան էլ հայերը նվիրված ու փայլուն ծառայեին, որքան էլ խելացի ու օգտավետ ասարեին, միևնույնն է, նրանք չէին կարողանա դիտվել որպես հավասար իրավունքների տեր:

Իսկապես, քրդերի ու չերքեզների վայրագությունների, թալանի, կողոպուտների ու սպանությունների և պատժելու փոխարեն իշխանությունների կողմից նրանց փառաբանումների պայմաններում ինչ խոսք կարող էր լինել հավասարության մասին: Երբ լավ զինված ու արտոնյալ թշնամու դեմ հայը նույնիսկ զենք չուներ ու իրավունք էլ չուներ այն ունենալու, ինչ էր մնում անել, եթե ոչ համախմբվել ու զենքի դիմել, քանզի. «Ազգային պաշտպանութեան միակ միջոցը փրկարար զէնքն էր»[266]:

Ցավալի է, սակայն հաճախ ենք կորուստներ ունեցել, շեշտում էր «Արմենիան», որովհետև «մենք խօսքով ազգասէրներ ենք, իսկ գործով ո՛չ»[267]: Հատկապես, երբ համազգային որևէ կարևոր միջոցառում իրականացնելու համար անհրաժեշտ է եղել դրամական լուրջ ներդրումներ կատարել: Իսկ ակնհայտ է, որ անհատներն առանձին-առանձին որքան էլ փայլուն գործեր իրականացնեն, միևնույնն է, դրանք փոշիանալու են, ուստի հարկավոր է համախմբված արարել, քանի որ «գործ մը երբ առանձնակի կը գործուի, միութեամբ գործուածին չափ զօրաւոր չի կրնար լինիլ»[268]:

Հրատարակության առաջին ամիսներին Մ. Փորթուգալյանն իրեն և իր կատարած գործը չէր հակադրում Օսմանյան կայսրությանը, այլ առաջին իսկ համարներից սկսած՝ ավելի շատ իր առջև խնդիր էր դրել ընթերցողին ծանոթացնել արևմտահայության անտանելի վիճակին, սակայն գաղթաշխարհում ու հայրենիքում լայն տարածում գտած «Արմենիան» ձեռքից ձեռք էր անցնում, վարակում ու ոգևորում

---

266 Նույն տեղում:

267 «Արմէնիա», թիվ 33, 1885:

268 «Արմէնիա», թիվ 33, 1885:

հայ մարդկանց, հանուն հայրենիքի, հանուն բաղձալի ազատության ոգեկոչում պայքարի, օտար աշխարհին ներկայացնում արևմտահայ ժողովրդի թշվառ վիճակը, հանուն Հայկական խնդրի արդարացի լուծման ձգտում համագործակցություն հաստատել աշխարհի տարբեր գաղթօջախների միջև:

Հետագայում՝ տարին մեկ անգամ, հատկապես հրատարակման տարվա վերջում, այսինքն՝ մայիսի վերջին - հունիսի սկզբին, թերթը մեկուկես-երկու ամսով գնում էր արձակուրդ, խմբագիրն իր ընթերցողների ու գաղափարակիցների առջև հանդես էր գալիս ինքնատիպ, սակայն ոչնչով չպարտադրված հաշվետվությամբ: Դրանցում ամփոփվում էին տարվա ձեռքբերումներն ու կորուստները, թերթի ինչպիսի նյութական վիճակում գտնվելը, անպայման շեշտվում էր ազատագրական գաղափարախոսության տարածման բնագավառում արձանագրված առաջընթացը: Այդ հաշվետվության մեջ, որպես կանոն, մշտապես խոսվում էր նաև սեփական սխալների, բացթողումների ու թերությունների մասին, երբեմն տեղ էին գտնում ինքնաքննադատական ծավալուն հատվածներ:

«Արմենիայի» ու նրա խմբագրի հպարտությունն էր հատկապես այն իրողությունը, որ պարբերականը Եվրոպայում լույս տեսնող հայերեն առաջին քաղաքական լրագիրն էր, քանի որ մինչ այդ հրատարակվող Վենետիկի «Բազմավէպն» ավելի շուտ գիտաուսումնական հանդես էր և որպես կանոն քաղաքական խնդիրներով չէր զբաղվում: «Արմենիան» լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ, տարբեր տպաքանակներով, ամենաշատը՝ 1300, իսկ մնացած դեպքերում՝ 800, միջին հաշվով՝ 1000 օրինակ, որոնց կեսից պակաս թիվ էին կազմում բաժանորդները: Թերթի տարածման պատկերը, օրինակ՝ 1893 թ.՝ հրատարակման ութերորդ տարում, հետևյալ տեսքն ուներ՝ Պարսկաստան 166 օրինակ, ԱՄՆ՝ 75, Ռումինիա՝ 37, Բուլղարիա՝ 27, Գերմանիա՝ 27, Եգիպտոս՝ 19, Ֆրանսիա՝ 22, Մեծ Բրիտանիա՝ 17, Հունաստան՝ 8, 50 օրինակ էլ «կը դրկուին նաեւ այնպիսի տեղեր զորս

անուանել աւելորդ կը համարուեր», 100 օրինակ էլ հատավաճառ, յուրաքանչյուր բաժանորդի մեկ կամ մի քանի օրինակ էլ թերթի օժանդակողներին տալու համար և այլն[269]:

Պարբերականի տպաքանակի չափի վրա խիստ բացասականորեն անդրադարձան սկզբում օսմանյան[270], ապա ռուսական[271], իսկ ավելի ուշ՝ օսմանյան իշխանությունների պնդմամբ՝ նաև պարսկական տերությունների տարածքներ թերթի մուտքի արգելման հրամանագրերը: Ճիշտ է, «Արմենիան» գաղտնի ճանապարհներով ու զանազան միջոցներով, այնուամենայնիվ, թափանցում էր նաև հիշյալ երկրներ, սակայն դա կրում էր ոչ պարբերական և կանոնավոր բնույթ, քանի որ «լրագրի տարածմանն արգելք դնել ուզողները հասարակ ոյժեր չէին, այլ հզոր ու անզիջում տէրութիւններ»[272]: Սակայն թերթի խմբագրակազմը, մշտապես մաքառելով բազմապիսի դժվարությունների և ճնշումների դեմ, շարունակում էր իր հայրենանվեր գործը, որի նյութականն ապահովվում էին ոչ թե նրա բաժանորդավճարները, այլ «գլխատրապէս հասկացող Հայերի նուիրատվութիւնները»[273]:

Ընդգծենք նաև, որ չնայած չափազանց դժվարին «ձեռնարկ էր մի հայերէն թերթ հրատարակելը որի դէմ արտաքին հզօր թշնամիներ և ներքին ծախուած հակառակորդներ ամէն տեսակ արգելքներ կը գործադրեին», «Արմենիան» հերոսաբար դիմակայում էր նյութական ու գաղափարախոսական այդ բոլոր դժվարություններին և, ըստ էության, 1890-ական թթ. ամենատարածված հայեցի պարբերականն էր, ինչը «մի մեծ յաղթանակ էր Արմենիաի թշնամիների դէմ»[274]: Հաղթահարելով այդ «փշալից» ճանապարհը՝ խմբագրի խոստովանութ-

---

269 «Արմէնիա»ի տարածումը, «Արմէնիա», թիվ 83, 1893:

270 «Արմէնիա»-ն Օսմանյան կայսրությունում արգելվեց չորրորդ համարի հրատարակումից հետո՝ 1885 թ. օգոստոսի 19-ին: Մինչ այդ թերթը 400 բաժանորդ ուներ, որոնցից 300-ը՝ միայն Թուրքիայում:

271 Թերթի մուտքը Ռուսաստան արգելվեց 1886 թ. փետրվարի 2-ին:

272 «Արմէնիա», թիվ 56, 1894:

273 Նույն տեղում:

274 «Արմէնիա»ի տարածումը, «Արմէնիա», թիվ 83, 1893:

յամբ նահատակության հավասար զոհողությունների գնով թերթն առաջ էր ընթանում իր նախագծած ուղիով և երբեք չընկրկեց, չխոնարհվեց ո՛չ թշնամիների և ո՛չ էլ դատարկախոս բամբասողների առջև: Պարբերականի այդ մաքառումների գնով ցանած գաղափարներն օրեցօր ծիլեր էին տալիս, արմատավորվում հայության մեջ, ճյուղեր տալիս ու տարածվում աշխարհի բոլոր հայաշատ մասերում, համախմբում, մղում նրան հանուն ազատ ու մարդավայել կյանքով ապրելու համար պայքարի: Շնորհիվ «Արմենիայի» հայերն աստիճանաբար հաղթահարում էին օտարների շռայլ խոստումներին խաբվելու սովորույթը, ինչը պակաս կարևոր ներդրում չէր, քանի որ «մենք Հայերս խաբուիլ կը սիրենք»[275]: Պարբերականի աշխատակազմն ու համակրողներն իրենց առաջնորդ Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ պատվով էին կատարում իրենց առաքելությունը և միշտ առաջնորդվում էին այն հստակ գիտակցությամբ, որ «ազգի ներկայ վիճակէն փրկութեանը համար սկզբում անհրաժեշտ է գաղափարի տարածումը»[276], որի գլխավոր իրագործող միջոցներից մեկը, անկասկած, ազատ ու համարձակ գործող լրագիրն էր՝ ի դեմս «Արմենիայի»:

Ընդհանրապես, «Արմենիա» լրագրի իսկական էությունը լավ ըմբռնելու համար, հարկավոր է նախ նկատի առնել, թե ինչ հանգամանքներում է ծնունդ առել այն: Ինչպես վերևում արդեն նշեցինք, պարբերականի խմբագիրը մինչև Մարսելում հաստատվելն ու թերթի հիմնադրումը երկար տարիներ աշխատել էր մայր հայրենիքում, հատկապես Վանում, լավ գիտեր օսմանյան բռնապետական վարչակարգի իսկական էությունն ու հայության անելանելի վիճակը: Տարիներ շարունակ ականատես էր եղել, թե ինչպես օրեցօր հալվում-կորսվում էր մեր ժողովուրդը, իսկ դրա մասին մինչ «Արմենիաի հրատարակիլը արտասահմանի Հայերի մեծամասնութիւնը տեղեակ չէր»[277]: Խմբագիրը հետագայում խոստովանում է, որ «մէծ հանդգնութիւն կը համարուէր Եւրոպայի մէջ հայերէն ազատական մի թերթ հրատարա-

---

[275] «Արմենիաի» օժանդակողներ, «Արմենիա», թիվ 82, 1898:
[276] Նույն տեղում:
[277] Նույն տեղում:

կելը»[278]: Հիմնադրելով «Արմենիա» թերթը Մ. Փորթուգալյանը ցանկանում էր դարձնել այն աշխարհի բոլոր հայերի միջև հաղորդակցության միջոց, որի էջերում հնարավոր կդառնար ազատ խորհրդակցել, քննարկել կարևոր, համազգային նշանակության հարցեր, ելք որոնել՝ ստեղծված կործանարար վիճակից դուրս գալու համար: «Արմենիան տարիներ առաջ է ծնած. բայց նա շարունակութիւնն է իրեն ծնող հանգամանքներին, այն երկարատև գործունեութեան, փափաքներին և ծրագրերին որ հետզհետէ կատարելագործուած է հետագային»,- հիշում էր Մ. Փորթուգալյանը[279]:

Նշենք, որ «Արմենիա» թերթը, անկասկած, առաջադիմական դերակատարություն ուներ իր ժամանակին: Այն նոր երևույթ էր, նոր մոտեցումների ու հարցադրումների, արևմտահայության վիճակը բարեփոխելու ուղղությամբ բացահայտ պահանջների մունետիկ ու ջահակիր: Գրաքննությունից ազատ «Արմենիան» համարձակորեն ու իրական գույներով ներկայացնում էր սեփական ժողովրդի անտանելի վիճակը թուրքական բռնատիրության պայմաններում, ինչը մեծ ներդրում էր ազգային զարթոնքի և ազատագրական պայքարի գաղափարախոսության արմատավորման տեսանկյունից:

Սովորաբար որևէ պարբերական ուսումնասիրելիս հավասարապես ներկայացնում են նրանում եղած հիմնական խորագրերն ու բաժինները: Սակայն «Արմենիայի» դեպքում այդ համամասնության սկզբունքը միանշանակ կիրառելը ճիշտ չի լինի, քանի որ կան բաժիններ, որոնք իրենց հրատապությամբ գերակա են եղել մյուսների նկատմամբ, օրինակ՝ «Խմբագրականները», «Նամականին» և այլն: Դրանց կողքին կան հազվադեպ և ոչ այնքան կարևոր բովանդակությամբ խորագրեր, օրինակ՝ գիտության որևէ բնագավառի վերաբերող նորություններ, Լատինական Ամերիկայում հազվադեպ երևույթներ և այլն: Եղել են նաև բաժիններ, որոնք ժամանակի ընթաց-

---

[278] «Արմէնիա»ի գործը, «Արմէնիա», թիվ 53, 1898:

[279] Նույն տեղում:

քում, կապված որևէ կարևոր իրադարձության հետ, ակտիվացել, հրատապ են դարձել, սակայն հետագայում աստիճանաբար մարել են ու անհետացել, օրինակ՝ միջազգային անցուդարձի, կարևոր հանդիպումների, օտարերկրյա խորհրդարաններում հայանպաստ ճառերի մասին պատմող նյութերը և այլն:

Թերթն ուներ հետևյալ կայուն խորագրերն ու բաժինները՝ «Խմբագրականներ», «Նամականի», «Հայկական հարցը և դրա նկատմամբ եվրոպական երկրների վերաբերմունքը», «Գաղթաշխարհ», «Մամուլի», «Բանասիրական», «Գովազդ»-ի, «Հայտարարություններ»-ի և այլն:

«**Խմբագրականներ**»-ը հասարակական-քաղաքական ու միջազգային իրավիճակի, Օսմանյան կայսրությունում տիրող բարքերի և Արևմտյան Հայաստանի ու ընդհանրապես հայության գոյավիճակի մասին վերլուծականներ էին, ստեղծված ծանր պայմանների իրատեսական նկարագրություններ ու դրանցից դուրս գալու ուղիների փնտրտուք: Հետագա տարիներին՝ նաև Հայկական հարցի, աշխարհամասերտի, կամավորական շարժման, Մեծ եղեռնի, հայոց պետականության վերականգնման ու ընդհանրապես հայության հետագա ճակատագրի մասին սրտացավ, տագնապներով լի, բայց ամենադժվարին պահերին անգամ զարմանալիորեն միշտ լավատեսական, ապագայի նկատմամբ անհողդողդ հավատով տոգորված վերլուծություններ: Դրանք, չնչին բացառությամբ, գրում էր Մ. Փորթուգալյանը: Միայն թերթի լույս տեսնելու վերջին երկու-երեք տարիներին սկզբում որոշ դեպքերում, իսկ հետո՝ ամբողջությամբ դրանք գրում էր Մ. Փորթուգալյանի հավատարիմ դաշնակից ու գաղափարական հետևորդ, «Արմենիայի» վերջին խմբագիր Եղիշե Թորոսյանը:

«**Նամականի**», որը պարբերականի ամենագողտրիկ, ընթերցողների կողմից սիրված ու ցավաշատ մասն էր: Այստեղ իրենց դարդ ու ցավի, ամենօրյա անարդարությունների, հայ գյուղացու տառապանքների, իրավազուրկ վիճակի ու անապահ կարոտի մասին տե-

ղեկացնում էին իրենք՝ տեղացիները, Արևմտյան Հայաստանից ու հայաշատ բոլոր անկյուններից ուղարկված նամակներով[280]: Այս խորագրի ներքո տպագրվում էին նաև այնպիսի նյութեր, որոնք պատմում էին հայոց կյանքում եղած արատավոր երևույթների, հնի, ավանդականի ու նոր բարքերի հակադրության և այդ անծանոթ բավիղներում մոլորված հայ մարդու ողբերգության մասին: Հայկական հարցի վերաբացման շրջանում աշխարհի տարբեր անկյուններից ստացված նամակներն ավետում էին մոտ ապագայում մեծ տերությունների օգնությամբ Հայաստանի մոտալուտ ազատագրման մասին: Համաշխարհային պատերազմի սկսվելուն զուգընթաց աստիճանաբար ավելանում էին բազմաբնույթ նամակները, Արևմտյան Հայաստանից՝ տագնապներով լեցուն, իսկ ավելի ուշ նաև մահասարսուռ նկարագրություններով և օգնություն աղերսող ճիչ-աղաղակներով ողողված նյութերը: Այնուհետև նամակների քանակն զգալի ժամանակ նվազում է: «Նամականին» կրկին սկսում է աշխուժանալ հետեղեռնյան տարիներին, մասնավորապես Սփյուռքի ձևավորման շրջանում:

«**Հայկական հարցը և դրա հանդեպ եվրոպական տերությունների վերաբերմունքը**»: Իրական գույներով պատկերվում էին դիվանագիտական և այլ ձևաչափերի այն ամբողջ անցուդարձը (թարգմանաբար արտատպվում էին նաև նշանավոր լրագրերում տեղ գտած հայանպաստ նյութերը), քաղաքական տարբեր ատյաններում տարբեր մեծության գործիչների կողմից հնչեցրած տեսակետները, որոնցում անդրադարձներ էին լինում Հայկական խնդրին՝ ամեն անգամ ոգևորվելով որևէ գործչի հայանպաստ հայտարարությամբ և հիասթափվելով հերթական անհաջողությունը տեսնելով: Միաժամանակ հաճախ հոդվածներ էին տպագրվում պետականության բացակա-

---

[280] Այս նյութերի մեծ մասի հեղինակները երկրի ամենահեռավոր անկյուններում իրենց հայրենանվեր գործի նվիրյալ վարժապետներն էին, ովքեր, տեսնելով ու նաև իրենց մաշկի վրա զգալով հայ մարդու տառապանքները, այլ ելք չգտնելով, դրանց մասին բարձրաձայնում էին «Արմենիա»-ի էջերում:

յության պայմաններում փաստորեն նաև այդ գործառույթը որդեգրած ու իրականացնող հայոց եկեղեցու մասին՝ հիմնականում չներելով ու չհանդուրժելով նրանում տեղ գտած արատավոր երևույթները, ընչաքաղց, երբեմն նաև թուրքական իշխանությունների հետ գործարքների գնացող հոգևորականների հակաժողովրդական կեցվածքը: 1912 թ. Հայկական հարցի վերաբացմանը զուգընթաց այս թեմայով հրապարակումներն զգալիորեն ավելանում են: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին արդեն այս խորագիրը դառնում է «Արմենիա» թերթի կարևորագույն թեմատիկան, որը նույն մակարդակով շարունակվում է նաև հետագայում՝ ամեն անգամ ավելացնելով հայության դառը հուսախաբության տարեգրության էջերի քանակը:

«**Գաղթաշխարհ**»: Հայությանը թիկունք կանգնելու, անհրաժեշտության դեպքում նյութապես օգնելու ակնկալիքներ ունենալու կտրվածքով թերթի հիմնական նշանակետը գաղթաշխարհի հայությունն էր, որին հասցեագրվում էին տարաբնույթ կոչեր հայրենիքը չմոռանալու, ամեն ինչով նրան սատարելու և միշտ նրա կողքին լինելու անհրաժեշտության մասին: Այս խորագրի ներքո տպագրվում էին նաև գաղութներից ստացված թղթակցություններ, ժողովրդին օգնելու, նրա բաղձալի ազատությանը հասնելու առաջարկներ, համայն հայության փրկության գործին սատար կանգնելու իրենց պատրաստակամության մասին և այլ բովանդակությամբ նյութեր: Հատկապես Հայոց Մեծ եղեռնից հետո այս խորագրի ներքո տպագրված նյութերում ահագնացող ցավ կա, կորստի անլուր տառապանք, բայց նաև հույս ու աներեր հավատ ապագայի, հայության լուսաշող գալիքի հանդեպ:

«**Մամուկ**»-ի բաժնում հաճախ այլ պարբերականների հետ բանավեճերի, դրանցից արտատպումների, այլ լեզուներով հրատարակվող պարբերականներից թարգմանված նյութերի ու վկայակոչումների միջոցով քննարկվում էին հայությանը հուզող բազմաթիվ հարցեր:

Այստեղ հաճախ ենք հանդիպում Մ. Փորթուգալյանի և «Արմենիայի» մյուս հեղինակների արձագանքներին այլ պարբերականներում տպագրված քննադատական հրապարակումներին, սակայն ոչ մի արձագանք-հրապարակման մեջ մաղձ, վիրավորանք կամ նման այլ դրսևորում այդ հրապարակումների կամ նրանց հեղինակների հասցեին չկա, ինչը, մեր խորին համոզմամբ, յուրաքանչյուր պարբերականի համար մեծ պատիվ կարող է լինել:

«**Բանասիրական**»: Թերթը բավական հարուստ է գեղարվեստական ոչ ծավալուն ստեղծագործություններով և հատկապես գրախոսական-վերլուծականներով: Մեծ ծավալի ստեղծագործությունները տպագրվում էին մաս-մաս տարբեր համարներում: Համոզված ենք, որ ապագայում այդ նյութերը լուրջ ուսումնասիրության առարկա կդառնան:

«**Գովազդ**»-ի բաժնում առկա էին ամենատարբեր բնույթի ու բովանդակության հայտարարություններ, առաջարկներ, նոր լույս տեսած գրքերի մասին տեղեկացումներ, ծանուցումներ կազմակերպվող զանազան միջոցառումների մասին և այլն: Եղեռնին հաջորդած տարիներին հիմնականում անվճար այստեղ տպագրվում էին կորած հարազատներին փնտրելու մասին մեծաքանակ հայտարարություններ, որոնք հաճախ արդյունավետ ավարտ էին ունենում, ինչի մասին վկայում են հարազատներին գտնելու մասին նամակ-շնորհակալությունները:

Խմբագրականների, որոնց մեծ մասը շոշափում էին ազգային կարևորագույն խնդիրներ, տեղեկացնում համաշխարհային քաղաքական իրադրության մասին, ճնշող մեծամասնության հեղինակը Մ. Փորթուգալյանն էր՝ հիմնականում «Մ. Փ.» ստորագրությամբ: Անխոնջ այս հայ գործիչը մեն-մենակ, նյութական «ամէն զոհողութեամբ» էր լույս ընծայում «Արմենիան»՝ զորակից ունենալով իր ընտանիքի անդամներին և աշխատակից-թղթակիցներին, որոնք «Վա-

նէն, Մուշէն, Խարբերդէն, Կ. Պոլսէն կը համախմբուին հոն՝ հայ կեանքը պատկերացնելու»[281]:

Երբեմն հանդիպում են խմբագրականներ, որոնք թեև ստորագրված չեն, սակայն գրելաոճից, թեմատիկայից ու բարձրացված խնդիրների բովանդակությունից ելնելով, հստակ կարելի է արձանագրել, որ դրանք էլ Մ. Փորթուգալյանի գրչի արգասիք են: Արդեն նշվել է, որ Փորթուգալյանն օգտագործել է մի քանի գրական կեղծանուններ, ինչպես օրինակ՝ «Նորայր», «Հրահեր», որոնցով նա հիմնականում թղթակցել է Թիֆլիսում լույս տեսնող Ստ. քահանա Մանդինյանցի «Մեղու Հայաստանի» պարբերականին, իսկ «Հրանտ» կեղծանունով՝ Գր. Արծրունու «Մշակ»-ին և այլն:

«Արմենիա»-ում Մ. Փորթուգալյանը կարծես թե կեղծանուններից օգտվելու խնդիր չուներ, սակայն չմանրամասնելով նշենք, որ թեև քիչ թվով, բայց հանդիպեցին մի քանի առաջնորդողներ ու հոդվածներ, որոնք իրենց բովանդակությամբ, արծարծված խնդիրներով, լեզվով ու ոճով կրկին հիշեցնում են խմբագրին: Ցավոք, մեր փնտրտուքներն այս հարցում մեծ արդյունքներ չտվեցին[282]: Պարզապես նշենք, որ «Հրուտեն», «Հայասէրք», «Վասպուրէս», «Պանդուխտ» գրական կեղծանունների հետևում եթե անգամ Մ. Փորթուգալյանը չէ, ապա հաստատ նրա հրապարակագրական դպրոցի որևէ ներկայացուցիչ է կանգնած:

Մեզ հաջողվեց պարզել նաև «Արմենիայի» համարներում առկա որոշ կեղծանունների իսկական կրողներին: Այսպես օրինակ՝ «Լեռենցը» Հնչակյան կուսակցության հիմնադիր ու ղեկավար Ավ. Նազարբեկյանն է, «Կաֆանը»՝ Հնչակյան կուսակցության հիմնադիր-գործիչներից Գ. Կաֆյանն է, «Կոռանը» Մոնպելյեի հայտնի խմբակի ամե-

---

[281] «Արմէնիա», թիվ 13, 1913:

[282] Որոշ կեղծանունների իսկական տերերին ճշտելու հարցում օգտակար եղավ ԳԱԹ-ի համապատասխան ֆոնդը, տե՛ս ԳԱԹ, Գարեգին Լևոնյանի ֆոնդ, թիվ 1044-1046:

նաակտիվ անդամներից Մ. Շահազիզյանն է, «Մեն-Սէն»[283] նախկին հավատավոր արմենական, իսկ հետագայում նվիրյալ ռամկավար Միքայել Նաթանյանն է և այլն: Դրանց կողքին առկա են երեսունից ավելի կեղծանուններ, որոնց իրական անվանատերերին պարզել չհաջողվեց: Սակայն կարևորն այն է, որ բոլորն էլ, անկախ նրանից, թե ինչ անունով կամ կեղծանունով են հանդես եկել, իրենց հրապարակած նյութերում ցավ են ապրել հայության ծանր վիճակի համար, և յուրաքանչյուրն իր ձևով ու իր աշխարհայացքային ելակետից փորձել է ուղիներ մատնացույց անել՝ դրանից դուրս գալու համար: Եվ որ ամենակարևորն է, մեր կարծիքով, նրանք բոլորն էլ անկեղծ էին ու գրում էին այն և այնպես, ինչը կարևոր էին համարում ու ընդհանուր գործին օգտակար:

Իր ազատական գաղափարների ու հայ ժողովրդի երազած մարդավայել պայմաններում ապրելու ձգտումներն իրականացած տեսնելու մղումներն անսքող ներկայացնելու համար «Արմենիայի» մուտքը շատ արագ արգելվեց, ինչպես արդեն վերևում նկատեցինք, սկզբում՝ Օսմանյան կայսրությունում, այնուհետև՝ «Ներքին Գործերի Նախարարէն 1886 յունվար 20/2 փետրվարին տրուած Բարձրագոյն որոշումով»[284] Ռուսաստանում: Վերջին հանգամանքը մեծ զարմանք էր պատճառել աշխարհի իրական գույներին ոչ այնքան ծանոթ ու երազող Մ. Փորթուգալյանին: Նա պարզապես չէր կարողացել ըմբռնել մի պարզ ճշմարտություն. Թուրքիայի նման Ռուսաստանը նույնպիսի կայսրություն էր և ուներ իր կայսերապաշտական շահերը, իսկ «Արմենիան» անուղղակիորեն մերկացնում էր նաև նրա նվաճողական նկրտումները: Պակաս կարևոր չէր նաև այն, որ մեծությամբ երկրորդ արևելահայ հատվածը գտնվում էր Ռուսաստանի տիրապետության ներքո: Հետագայում, Թուրքիայի ակտիվ միջնորդությամբ և սեփական մեծապետական մղումներին հագուրդ տալու նպատակով, «Ար-

---

[283] Վարդիվառեան Հ., նշվ. աշխ., էջ 246:

[284] «Արմէնիա»ի Ռուսիա մտնելուն արգելքը, «Արմէնիա», թիվ 59, 1886:

մենիայի» մուտքը Ռուսաստան ևս մեկ անգամ հատուկ հրամանագրով արգելվեց[285]:

Անդրադառնալով այդ խնդրին՝ «Արմենիան» պարզաբանում էր. իմանալով, որ «մանիֆեստով մամուլի ազատութիւնը կհայտարարուեր», որոշեցինք «Արմէնիա ղրկել Ռուսիա»: Սակայն ընդամենը չորս ամիս հետո կրկին թերթի մուտքը երկիր արգելվում է: Մ. Փորթուգալյանի համար այս նոր «արգելքն ալ անհասկանալի կը մնար»[286], քանի որ կայսերապաշտական շահերի գիտակցումն ամբողջովին հասու չէր նրան:

Ավելացնենք, որ ավելի ուշ՝ 1895 թ. Մայիսին, «հայ ազգին ոխերիմ թշնամի թիւրք կառավարութեան չարամիտ թելադրութիւնների» արդյունքում «Արմենիայի» մուտքն արգելվեց նաև Պարսկաստանում: Դրա համար հիմք էին ծառայել թուրքական իշխանությունների տարածած սուտ լուրերը. «... թէ Ռուսաստանի և Պարսկաստանի հայերը մեծ պատրաստութիւններ տեսած են մայիս ամսին մի ընդհանուր յեղափոխութիւն ծագեցնելու համար Թուրքահայաստանի մէջ» և «պարսիկ տէրութեան ալ կասկածանքը հրաւիրել իր հայ ժողովրդի վրա»[287]: Քանզի թուրքական իշխանությունները միշտ «նախանձոտ աչքով կը նային պարսիկ տէրութեան և իր հպատակ հայ ժողովրդի սիրալիր յարաբերութեանը վրայ և ամեն ջանք կը թափեն հակառակութեան սերմեր ցանելու իրենց մէջ»[288],- գրում է «Արմենիան»:

Թերթում շեշտվում էր, որ «20 տարիի ընթացքին մէջ ապառիկ բաժանորդագիններ երեսէն Արմէնիաի ունեցած կորուստը 50.000 ֆրանգը կանցնի...»[289]: Մի գումարի մասին է խոսքը, որով կարելի էր հսկայածավալ ազգանպաստ գործեր կատարել: Ի դեպ, դա մի երևույթ էր, որ բավական տարածում էր գտել հայ իրականության մեջ և

---

[285] «Արմէնիա»ի Ռուսիա մուտքը վերստին արգիլուած, «Արմէնիա», թիվ 35, 1906:
[286] Նույն տեղում:
[287] «Արմէնիա»ի Պարսկաստան մտնելուն արգելքը, «Արմէնիա», թիվ 85, 1895:
[288] Նույն տեղում:
[289] Արմէնիա»ի 21-րդ տարեշրջանը, «Արմէնիա», թիվ 44, 1905:

խանգարում էր իրագործել շատ ազգանպաստ ձեռնարկներ: «Ապառիկ բաժանորդագրութիւնը հայ լրագրութեան ժանտախտն եղած է»,- ցավով արձանագրում էր «Արմենիան»[290]: Այս ամենի արդյունքում փոխվում էր թերթի լույսընծայման հաճախականությունը: Այսպես, սկզբնական տարիներին, երբ նյութական օգնությունը համեմատաբար լավ վիճակում էր, թերթը լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերին, իսկ երբ միջոցները պակասեցին՝ շաբաթական մեկ անգամ՝ չորեքշաբթի օրը:

Պարբերականի լույսընծայման և երկարակյաց լինելու գործում կարևոր դերակատարություն ուներ «**Արմենիաի օժանդակներ**» կառույցը, որի մասին առաջին հրավերը թերթում հայտնվեց 1897 թ., որին հաջորդեց «Արմենիաի օժանդակների կանոնադրութեան» լույսընծայումը: Գաղտնիք չէր, կարդում ենք «Արմենիայում», որ հանրային գործն առաջ կգնա միայն ժողովրդի ջանքերի շնորհիվ: Իսկ ժողովրդի ուժերը հավաքելու և համախմբելու համար հարկավոր էին գաղափարներ և գաղափարակիցներ: «Գաղափարի տարածումն արդէն,- գրում էր Մ. Փորթուգալյանը,- գործ մէ և գործին ամենադժուար մասը՝ իբրև սկզբնատրութիւն...երբ գաղափարը պէտք եղածին պէս տարածուած լինի ժողովրդին մէջ, ալ անկարելի կը լինի յաղթել այդ գաղափարի ուժին»[291]: Այդ գաղափարների տարածման գլխավոր միջոցներից էր տպագիր խոսքը, հատկապես լրագիրը, որը տարիներ շարունակ տարածում էր հայրենիքի ազատության գաղափարը, մատնանշում դեպի բաղձալի ազատություն տանող ճանապարհները, ձգտում էր «ճանչցունել Եւրոպան Հայաստանցիներին և Հայաստանն ալ ճանչցունել արտասահմանի հայերին», փորձում հետզհետե ավելացնել գաղափարակիցների բանակը և միացնելով, համախմբելով նրանց՝ «մի ՈՅԺ յառաջ բերել՝ մի գեղեցիկ օր նպատակին հասնելու

---

[290] Նույն տեղում:

[291] «Արմէնիայի» օժանդակներ, «Արմէնիա», թիվ 45, 1905:

համար[292]: Մ. Փորթուգալյանը վկայում էր, որ տարիների փորձը ցույց էր տալիս, թե զենքը ձեռքին հայրենիքի համար հոժար կամքով նահատակվելու պատրաստ մարդիկ ավելի հեշտ է գտնել, քան այդ կռվին պատրաստվելուն քարոզող, ամեն օր ու ամեն ժամ աստիճանաբար հերոսացող ու դանդաղ մեռնելու պատրաստ գործիչներ:

Մ. Փորթուգալյանը հիշում էր, որ «Արմէնիայի» սկզբնավորման ժամանակ «հայկական գործերին նկատմամբ գրէթէ մեռելութիւն կը տիրէր արտասահմանի հայ գաղութներին մէջ»[293], և բոլորին տարօրինակ և անիրագործելի էր թվում արտասահմանում հայերեն ազատ լրագիր հրատարակելը, որի մուտքն անտարակույս արգելվելու էր հայրենի եզերքներ, որտեղ թագավորում էր վախկոտության և ամեն բանի լուռ ու անտրտունջ համակերպվելու մտայնությունը: Ավելին, շատ դեպքերում, խուսափելով հայրենիքի ու հարազատ ժողովրդի համար որևէ օգտակար գործ կատարելուց, մի շարք «վայ գործիչներ» «խոհեմութեան անունով ձգտում էին գալ տիրապետել և յուսահատութիւն սփռելով թմրեցունել ազգային գործունեութեան նորարծարծ ոգին»[294]: Նրանք մոռանում էին մի պարզ ճշմարտություն, կարդում ենք «Արմենիայում», որ որքան էլ լալկան գանգատասերներն ու անճարակները բողոքեն, շարժումն անխուսափելի օրինաչափություն է: Անկախ այն բանից, թե որոշ գործիչներ խոհեմության պատրվակով որքան անշարժություն կքարոզեին, «Արմենիան» անում էր ամեն հնարավորը հանուն ժողովրդի վերազարթնումի՝ չնայելով, որ «երեք տէրութիւններ միացած հետզհետէ ամբարտակներ կանգնեցին նրա մուտքն արգիլելու համար իրենց հայաշատ երկրների մէջ», որ գտնվում էին նաև մարդիկ, ովքեր ստեր ու զրպարտություններ էին տարածում թերթի հասցեին, զանազան դժվարություններ էին հարու-

---

[292] Նույն տեղում:
[293] «Արմէնիա»ի 20-դդ տարեշրջանը, «Արմէնիա», թիվ 48, 1905:
[294] Նույն տեղում:

ցում «թերթը կործանելու համար»[295]: Քանի կենդանի շունչ կա բերաններումս, վստահեցնում էր աննկուն խմբագիրը, պիտի շարունակենք մեր գործը և կենդանի ու առողջ պահենք մեր պարբերականը:

Ժամանակին լինում էին անհատներ, որոնք հարց էին տալիս, թե «Արմենիան ի՞նչ գործ ունի արած, ու՞ր է իր գործ, որ չերեւիր»[296]: Այդ տեսակ մարդիկ գործ ասելով հասկանում էին, որ ելնես մի «յիմարութիւն անես և 100 հազարատոր Հայեր ջարդել տաս զուր տեղը», այդ ժամանակ կերևա իրենց աչքին, թե «իրաւ գործ կը կատարես եղեր»[297]: Ազատության գաղափարի տարածումը «արդէն գործ մ'է ևգործին ամենադժուար մասը՝ իբրև սկզբնատրութիւն»,- գրում է վաստակաշատ խմբագիրը, ապա շարունակում, եթե հայրենիքի ազատության սուրբ գործի գաղափարը մեր ժողովրդի մեջ պետք եղածի չափ տարածված լիներ, ապա որոշ քաղաքական ուժերի ու պատեհապաշտ անհատների ազգավնաս գործունեությունը չպիտի կարողանար տեղ «գտնել Հայերի միամտութեան մէջ և վնասել հայկական յեղափոխութեան գործին»[298]: Քրիստոնեության տարածման օրինակը վկայակոչելով և վստահ լինելով իր կատարած գործի օգտակարության մեջ՝ Մ. Փորթուգալյանը համոզված գրում է. «Մի անգամ երբ գաղափարը պէտք եղածին պէս տարածուած և զարգացած լինի ժողովրդին մէջ, ա'լ անկարելի կը լինի յաղթել այդ գաղափարի ուժին»[299]: Ուրեմն, նույն ոգով հետագայում պարզաբանում էր ազգասեր խմբագիրը, «Արմենիայի» գլխավոր գործը պիտի լինի հայրենիքի ազատության գաղափարը ժողովրդի մեջ տարածելը, նրան դեպի նպատակ առաջնորդելը:

Մ. Փորթուգալյանը գրում էր, որ ավելի լավ կլինի, եթե այդ մարդիկ հարց տային, թե մինչև «Արմենիայի» լույս ընծայելը հայ գաղութ-

---

295 «Արմէնիա»ի 20-րդ տարեշրջանը, «Արմէնիա», թիվ 48, 1905:
296 Յարատեւութեան ոգին, «Արմէնիա», թիվ 36, 1906:
297 Նույն տեղում:
298 «Արմենիայի օժանդակներ», «Արմէնիա», թիվ 27, 1910:
299 Նույն տեղում:

ներն ի՞նչ տեղեկություն ունեին ազգային դրության և մասնավորապես Հայաստանի վիճակի մասին: Կամ ինչպիսի՞ նոր ոգի արթնացավ հայության ներսում: Դա մի գործընթաց էր, որը նման է երեխայի մեծանալու ընթացքին: Երբ աչքիդ առջև է նա մեծանում, գրեթե չես զգում այն, իսկ երբ ուշ-ուշ ես տեսնում, աճն ակնհայտ է դառնում: Ահա այդ աճն էլ եղել է պարբերականի գործը, որը հար և նման է այն բանին, որ «ջուրը կաթիլ-կաթիլ բայց յարատեւ կաթելով, ապառաժն իսկ կը մաշեցունէ»[300]: Իսկ դրան հասնելու համար հարկավոր էր նախ և առաջ տգիտության և նախապաշարմունքների դեմ կռվել: Ընդ որում կռվել ամեն օր ու ամեն ժամ՝ մաս առ մաս սպանելով այդ հրեշներին, որոնք դարեր շարունակ բռնել էին ժողովրդի կոկորդից ու բաց չէին թողնում, որ ազատ շնչել կարողանա: Հետագայում հայոց փրկության գաղափարախոսության մունետիկն ու խորաթափանց պրպտողը պիտի խոստովաներ, որ իրենք (խմբագրակազմը) սովորություն չունեն նոր տարեշրջանների առիթներով «խոստումներ շռայլելու, ռէքլամի ձևով յայտարարութիւններ ընելու» և թերթի զարգացման համար «ըրած ենք և կընենք ինչ որ կարելի է մեզ. նոյն իսկ երբեւէն անկարելին ալ փորձել յանդգնած ենք»[301], որ այն ապրի ու բարգավաճի: «Արմենիան» հայ ազատական մամուլի անդրանիկ փողհարներից մեկը եղավ Եվրոպայում և աշխարհի այլ հայաշատ վայրերում, նրա ձայնն առաջին անգամ հնչեց նույնիսկ այնպիսի տեղերում, որտեղ մինչ այդ անապատական լռություն էր տիրում, սակայն երբեք չդավաճանեց իր որդեգրած հավատամքին և սկզբից մինչև վերջ «անշեղ քալած է միևնոյն ուղղութեամբ»[302]: Խմբագիրը գրում էր, որ եղել են դեպքեր, երբ իրենց հասցեին մեղադրանքներ են հնչել որդեգրած ուղղությունից շեղվելու, այս կամ այն ուժին տուրք տալու և նմանատիպ այլ բաների համար, որոնք, սակայն, իրակա-

---

[300] «Յաղատեւութեան ոգին», «Արմենիա», թիվ 36, 1906:
[301] «Արմենիայի 29դ տարեշրջանը», «Արմենիա», թիվ 49, 1913:
[302] Նույն տեղում:

նության հետ որևէ աղերս անգամ չունեն և արհեստածին են ու նախանձի, երբեմն էլ՝ հակառակորդի կամ թշնամու սադրանքի արգասիք: Դրանց լավագույնս պատասխանել է Արմենական կուսակցության հիմնադիր, Մ. Խրիմյանի ու Մ. Փորթուգալյանի արժանավոր հետևորդ ու սան, հայոց փրկության նահատակ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանը «Արմէնիան իր ուղղութիւն փոխա՞ծ է արդեօք» վերնագիրը կրող և «Արմենիայում» հրապարակված հոդվածով[303]: Այդ հոդվածում հեղինակը հիմնավոր կերպով ցույց է տալիս իրենց հակառակորդների տեսակետների կանխակալ ու ոչնչով չհիմնավորված լինելը և հակված էր այն կարծիքին, որ դրանք ավելի շատ նախանձի արդյունք էին: Իսկ ինչ վերաբերում էր թունառատ և զրպարտանքներով լեցուն հրապարակումներին, ապա դրանցում հեղինակը նկատում է թշնամու ձեռքի շարժն ու թելադրանքը և կոչ անում բոլորին հեռու մնալ այդօրինակ նեղմտությունից ու սերունդների առջև «պարզճակատ մնալ»:

Ավելի ուշ, խոսելով թերթի հասցեին կատարված դիտողությունների ու արտահայտված ցանկությունների մասին, Մ. Փորթուգալյանը նշում էր, որ իրենք էլ իրենց բարեկամների չափ և ավելի «կը զգանք լաւագոյն փոփոխումներ մտցունելու պէտքը և բայց ընդարձակուելու համար միջոցներ պէտք են»[304]:

Մ. Փորթուգալյանը յուրաքանչյուր տարեշրջանի սկզբին հանդես էր գալիս յուրակերպ ամփոփումներով. շնորհակալություն էր հայտնում բոլոր ընթերցողներին, թղթակիցներին և նյութապես ու բարոյական աջակցություն ցույց տված անձանց: Ներկայացնում էր դժվարություններն ու թերթի հրատարակության գործին նպաստող դրսևորումները: Տեղեկացնում էր, որ թերթը պատրաստ է լսելու ինչպես առողջ ու բարեկամաբար արված քննադատությունները, այնպես էլ «սիրով կընդունէ համակիր բարեկամներէ եկած խորհուրդները Ար-

---

303 Նույն տեղում:

304 «Արմէնիաի 30րդ տարեշրջանը», «Արմէնիա», թիվ 45, 1914:

մէնիաի յառաջդիմութեան և աւելի օգտակարութեան. Արմէնիան աւելի տարածելու և լաւագոյն վիճակի մը վերածելու համար»[305]:

«Արմենիա»-ն այդ դժվարին ու տիտանական համբերություն պահանջող առաքելությունը կատարում էր շնորհիվ իր օժանդակողների, քանի որ «Հայ ազգի զգացող և հասկացող դասակարգը» սատարում էր թերթին, իսկ այդ օգնությունը «կանոնատր և շարունակական դարձնելու համար էր հենց կազմուած Արմէնիաի Օժանդակների կանոնագիրը», որի կետերին համապատասխան պիտի գործեին նրան անդամագրվածները[306]՝ որպես երաշխիք ունենալով թերթի անցած դժվարին ու փորձություններով լի ճանապարհին ու հայրենիքի ազատագրման գործին նրա անմնացորդ նվիրումն ու այդ ուղուց երբևէ չշեղվելու համոզմունքը:

Տարիներ հետո, խոսելով թերթի որդեգրած առաքելության և անցած ուղու մասին, խմբագիրը նշում է, որ «Արմենիայի» «ուղղութիւն հայ հայրենասիրական է և Հայ ժողովրդի ազատութիւնը քան ուրիշ ամէն խնդիրներ նախընտրելի է իրենց համար: Ինչպէս ծուկը առանց ջրի, նոյնպէս ժողովուրդ մը առանց ազատութեան կը նուաղի, չկրնար ապրիլ»[307]: Այդպես էլ խմբագրի կարծիքով եվրոպաբնակ հայերը ևս չէին կարող ապրել առանց իր թերթի, ինչի ապացույցը «Արմենիայի» երեսունութամյա գոյությունն էր: Թերթի կոչումը եղել է իր ընթերցողներին «մտատր պաշար և զարգացում տալը, հայ հայրենիքի վիճակին և անոր հետ կապ ունեցող խնդիրների վրայ լուրեր, տեղեկութիւններ հաղորդելը, արտասահմանի և Հայաստանի Հայերին միջև յարակցութեան կապ մը ստեղծել ջանալը»[308]: «Արմենիան» Հայաստանի ազատությանը հասնելու միջոց էր համարում ոչ միայն մտավոր զարգացումը, այլև «յեղափոխական գործը», որի համար

---

[305] «Արմէնիաի 29դ տարեշրջանը», «Արմէնիա», թիվ 49, 1913:
[306] «Արմէնիաի օժանդակներ», «Արմէնիա», թիվ 45, 1905:
[307] «Արմէնիաի 30դ տարեշրջանը», «Արմէնիա», թիվ 45, 1914:
[308] «Արմէնիաի 31-դ տարեշրջանին առթիվ», «Արմէնիա», թիվ 41, 1915:

նախապատրաստվելու, ներքին ուժ գոյացնելու «անհրաժեշտ պէտքը ցոյց տուած է», ինչպես նաև՝ «ամէն դասակարգերին միաբան և համերաշխ գործելու յորդոր տուած է»: Դասակարգային և ընկերվարական խնդիրներով, որոնք իրականում Հայկական հարցի հետ որևէ կապ չունեին, թերթը չի զբաղվել: Ինչպես նաև հարստությունը հանցանք չի համարել. «ո՛չ ալ աղքատութիւնը առաքինութիւն մը»: Համոզված է եղել միշտ, որ մարդու գործն է որ «կը բարձրացնէ իր արժանիքը և ոչ թէ իր դրամական վիճակը»[309]:

Ավելացնենք, որ «Արմենիայի հրատարակմանը լավագույնս նպաստող «Օժանդակների կանոնագիրը» սահմանում էր օժանդակի կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները: Հիմնականն այն էր, որ օժանդակը պարտավոր էր տարածել թերթը, հայթայթել նոր բաժանորդներ և դրա համար իրավունք ուներ ստանալ «Արմենիայի» 10 օրինակ ու բաժանել իր ծանոթ-բարեկամներին և համոզել նրանց բաժանորդագրվել թերթին: Տարիների ընթացքում երկարում էր նաև թերթի արձակուրդային ժամանակը: Սկզբում թերթն արձակուրդ էր մեկնում մեկ ամսից ոչ ավելի, իսկ հետո այն դարձավ երկու ամիս: «Արմենիայի» տարին ավարտվում էր հունիսի վերջերին և հաջորդն սկսվում էր օգոստոսի սկզբին, իսկ հետագայում արդեն՝ հոկտեմբերի սկզբներից: Հիմնականում այս ժամկետները պահպանվում էին, սակայն լինում էին արտակարգ դեպքեր կամ իրավիճակներ, երբ թերթի խմբագրակազմը չէր կարողանում անտարբեր դիտորդի դերում լինել և հրապարակում էր արտակարգ կամ ոչ նախատեսված լրացուցիչ համարներ: Եղել են դեպքեր, երբ խմբագրությունը մինչև արձակուրդ գնալը «պարտք է մնացել» որոշ համարներ, որոնց փոխարեն լրացուցիչ համարներ է լույս ընծայել արձակուրդից վերադառնալուց հետո՝ թերթի ճակատին գրելով «այսինչ համարի փոխարեն» վերտառությունը:

---

[309] «Արմէնիայի 31-դ տարեշրջանին առթիվ», «Արմէնիա», թիվ 41, 1915:

Կարելի է ենթադրել, որ դրանք ոչ թե ծուլանալու կամ անփութության հետևանքով էին լինում, այլ հիմնականում դրամական միջոցների տվյալ պահին բացակայության:

Թերթի լեզուն աշխարհաբար էր, արևմտահայերենի ու արևելահայերենի յուրակերպ շաղախ: Երբեմն հանդիպում են նաև զգալի գրաբարյան լեզվաոճային դրսևորումներով հրապարակումներ: Ընդհանրապես զգալի է այն միտումը, որ խմբագրությունն աշխատել է հարազատ մնալ հեղինակներին հատուկ լեզվին ու ոճին: Աչքի է ընկնում բարեխիղճ, սրտացավ ու անթերի սրբագրական աշխատանքը: Նկատելի է նաև, որ որևէ հեղինակ, հատկապես տեսաբան-հոդվածագիր, որոշակի շրջանում տիրապետող դիրք է ունեցել, գրել է շատ խմբագրականներ, հիմնասելիք պարունակող հոդվածներ: Հաստատ կարելի է ենթադրել, որ Մ. Փորթուգալյանը, որ այնքան էլ չէր վստահում ուրիշներին, թեկուզ շատ հարազատ ու մտերիմ մարդկանց, կամ շատ է հավանել վերոնշյալ գրածները կամ առողջական ու այլ բնույթի պատճառներով է ժամանակավորապես զիջել առաջին ջութակի իր անփոփոխ դերակատարությունը: Թերթի հրատարակության աշխատանքների կազմակերպման գործում ակտիվ մասնակցություն է ունեցել Մ. Փորթուգալյանի նախկին սան, Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանը, ով թուրքական իշխանությունների կողմից աքսորվել էր Լիբիա, որտեղից կարողացել էր փախչել և անցնել Մարսել ու միանալ իր ուսուցչին[310]:

Ավելի ուշ՝ «Արմենիայի 32րդ տարեշրջանին առթով» խմբագրականում, ամփոփելով թերթի ավելի քան 30-ամյա գործունեությունը, վաստակաշատ Մ. Փորթուգալյանը, արձագանքելով ընթերցողների այն հարցին, թե ինչպիսի հեղափոխություն է կատարել «Արմենիան», գրում է, որ այդ հեղափոխությունը կատարվեց նախ և առաջ «**հայ մտքերին մէջ**» (ընդգծումը մերն է – Ս. Ս.), որն ամբողջությամբ հաս-

---

[310] Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 6:

կանալու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ, թե ինչպիսին էր «գաղափարական վիճակը» հայության մեջ մինչև թերթի լույսընծայումը և ինչպիսին՝ դրանից հետո: Երբեք չի կարելի թերթի «մէկ թէն մինչև միւս թուին լոյս տեսնելը» համեմատություն անելով՝ փոփոխություն փնտրել, քանի որ «մտքերի յեղաշրջումը կը կարօտի երկար ժամանակեայ աշխատանքի»: Երեխան ամեն օր մեծանում է, գրում է խմբագիրը, բայց ամեն օր հնարավոր չէ նկատել այդ աճը, իսկ տարիներ հետո այդ փոփոխությունը մեծապես զգալի է դառնում: Այսպես տեղի են ունենում նաև գաղափարների ծնունդը, մանկությունը և զարգացումը[311]:

Կարծում ենք, կարելի է փաստել, որ «Արմէնիան հայ ազգային պատմութեան տարեգիրքն եղած է»[312], որևէ տերության ճնշումից կամ կուսակցական փառաբանության պահանջներից անկախ գրված «Հայոց պատմութիւն»: Համոզված ենք, որ հայոց պատմության, հատկապես XIX դարի ազատագրական շարժման ծագումն ու դրա զանազան հոլովույթները մանրամասն և անկողմնակալ ուսումնասիրել ցանկացողը անհրաժեշտաբար պիտի դիմի թերթի օգնությանը: «**Արմէնիաի** դրօշակը եղած է հայրենասիրութիւնը. անոր վրայ գրուած է **Հայը Հայաստանին եւ Հայաստանը Հային**»[313] (ընդգծումները բնագրինն են – Ս. Ս.): Այդ նպատակին հասնելու համար թերթն ուս ուսի տված շարժվել է առաջ բոլոր նրանց հետ, ում համար թանկ են եղել հայրենիքի գաղափարը, միասնության, ազատ ու մարդավայել ապրելու մղումները՝ անկախ նրանից, թե քաղաքական ինչ ուղղության կամ կուսակցության են նրանք պատկանել:

Խմբագրի կարծիքով հայ ժողովուրդը նպատակին հասնելու ճանապարհին «յապաղման գլխատր պատճառներէ մին ալ մեր տգի-

---

311 «Արմէնիաի 32րդ տարեշրջանին առթով», «Արմէնիա», թիվ 52, 1916:

312 Նույն տեղում:

313 «Արմէնիաի 32րդ տարեշրջանին առթով», «Արմէնիա», թիվ 52, 1916:

տոպիւնն եղած է»[314]: Այսինքն՝ մեր ազգի իսկական վիճակին և նրա պահանջներին, արտաքին հանգամանքներին, մեր ունեցած ուժերին և մեր անելիքներին անծանոթ և անտեղյակ մնացած և երևակայական հույսերով սնած լինելն է: Դրա համար էլ թերթը ջանացել է ազգի վիճակի, նրա ներքին ու արտաքին հարաբերությունների մասին, մեր ազգային կյանքից ընթերցողներին ավելի շատ լուրեր և տեղեկություններ տալ, քան թե խրատական «...շաղակրատության տանող յոդուածների տեղ տալ», որոնք մի բան անելը ցույց տալու համար անպայման «կերկարաբանեն և աւելորդ տեղ կը բռնեն»[315]: Թերթի հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրը համոզված էր, որ «Արմենիայի» հրաւարակությամբ «կարևոր ծառայութիւն մը մատուցուած է ազգին»: Թերթի տարածած սերմերն այնպիսի պտուղներ էին տվել, որ դրանց արտաքին կեղևները կարծր ու շատ դառն էին, բայց չնայելով այդ արտաքին «դառնութիւններին և դժուարութիւններին, կարժէ աշխատիլ և կերպ մը գտնել, անոնց միջուկը, պտուղը ունենալու համար»,[316]: Իր ասածն ավելի համոզիչ դարձնելու համար հոդվածագիրը փիլիսոփայորեն փաստում է, որ «առաջին անգամ ընկոյզ ուտողը ծոյլ մարդ մ'եղած լինելու չէ հաստատ»[317]: Այդ հավատի ու աշխատասիրության շնորհիվ էր գոյատևում «Արմենիան», որոնք խմբագրի վկայությամբ հնարավոր էին դարձնում հաղթահարել տարատեսակ «նիւթական թէ բարոյական» դժվարությունները, որոնցից էին տպագրական թղթի պակասն ու անընդհատ թանկանալը, աշխարհի անկայուն վիճակն ու դրամի սակավությունը և այլն:

---

[314] Նույն տեղում:
[315] Նույն տեղում:
[316] Նույն տեղում:
[317] «Արմենիայի 32րդ տարեշրջանին առթով», «Արմենիա», թիվ 52, 1916:

Մ. Փորթուգալյանի գաղափարական ժառանգորդ և նրանից բացի «Արմենիայի» միակ ու վերջին խմբագիր Եղիշե Թորոսյանն[318] էլ, խոսելով թերթի անցած ուղու մասին, նմանեցնելով նրան հոգնատանջ ճամփորդի, նշում էր, որ այն «գաղափարական բարձունքի մը վրայ իր ջահը որոնելու կերթայ, Արմէնիան կը յառաջանայ հաւատատ ու յաղթական՝ իր կտրած ճանապարհը որ արահետ մը չէր հարթ ու լայնանց, այլ կածան մը քարքարուտ, փշոտ նեղանցք մը»[319]:

Թերթի գոյատևման տարիներին դեգերումների, ցավի ու հույսի «ամբողջ կեանք մը», դյուցազնական ընդվզումների շարունակական մի ողջ պատմություն ապրեց Հայաստանը և նրա հետ, «թէև իրմէ հեռու, բայց անոր համար միայն, ապրեցաւ և Արմէնիան»[320],- յուրակերպ սիրով ու գորովանքով ամփոփում էր Թ. Եղիշեն[321], ապա նույն ջերմությամբ շարունակում՝ թեև ծերությունից պարբերականի թերթերը դժգունել են, խունացել, սակայն «հաւատքի հիւթովը օծուած մեր առջև կը պարզեն աւետարան մը ուր կը կարդանք հայրենիքը միայն: Նորագոյն պատմութիւն մը ճշգրիտ անցքերու, հայրենի պահանջներու աղաղակը կը բերէ մեզ ու անոր ամէն մէկ թերթը ծաղիկ մ'է ուրկէ պիտանի մեղուները իրենց հիւթը կը ծծեն»[322]: Այնուհետև ավելացնում, որ «Արմենիան» իր ցեղի կորովն ու կամքն էր խորհրդանշում և երբեք չի ընկրկել սարսափների մեծությունից, որովհետև «Հայաստանէն իսկ ուած էր հաւատալ ապագային և դիմագրաւել բոլոր խութերուն»[323]: Այդ խութերն ու խոչընդոտները շատ էին, բայց քանի որ գաղափարը, որի համար պայքարում էր թերթը, նվիրական էր և

---

318 Ավելի ուշ՝ «Արմէնիա»-ի դադարումից հետո, Ե. Թորոսյանը, հավատարիմ մնալով իր աներհոր՝ Մ. Փորթուգալյանի ու նրա «Արմէնիա»-ի ավանդույթներին, սկսեց հրատարակել «Հայ սիրտը» անունով թերթը:

319 31 տարի, «Արմէնիա», թիվ 4, 1916:

320 Նույն տեղում:

321 Եղիշե Թորոսյանը բոլոր հրապարակումները ստորագրում էր՝ Թ. Եղիշե:

322 Նույն տեղում:

323 31 տարի, «Արմէնիա», թիվ 4, 1916:

«թառած էր Հայաստանի սրտին վրայ»[324], դրա համար էլ նահանջելու տեղ ու հնարավորություն չկային, իսկ ապագան, որը պայծառ էր լինելու, բոլորս միասին պիտի կերտեինք, լավատեսորեն գրում էր Թ. Եղիշեն:

Ավելի ուշ, «Արմենիայի» 33-րդ տարեշրջանի առիթով գրած խմբագրականում Մ. Փորթուգալյանը կրկին ընդգծում էր, որ ժամանակի պահանջներին համապատասխան գործելակերպի փոփոխություններ կարող են լինել, բայց «նպատակն ու ուղղութիւնը կը մնան միշտ հայրենասիրական ձգտումների վրայ»[325]: «Արմենիան» հայերեն ազատագրական անդրանիկ թերթերից մեկն էր և միշտ հեռու էր մնացել ծայրահեղություններից, թեև լավ գիտեր, որ հուսահատական վիճակը, որում հաճախ էր հայտնվում հայ ժողովուրդը, երբեմն մղում էր ծայրահեղ քայլերի: Այդ էր հիմնական պատճառը, գրում էր հոդվածագիրը, որ երկու ծայրահեղ կողմերը, խոհեմ պահպանողականները և առաջ վազող կարմրագույն հեղափոխականները, «իրար մօտեցած և շրջանակ մը կազմած են Արմէնիան իրենց մէջ սեղմելով անզօր դարձնելու համար»[326]: Սակայն միշտ «Արմենիայի» համար ելակետային է եղել այն դրույթը, որ խոհեմությունը լոկ զրո է, բայց երբ մեկ քաջության հետ է միանում, տասնապատիկ արժեք է ստանում: Ափսոս, որ հաճախ կուսակցական մոլեռանդությունը խանգարում էր թիվ մեկ հարցի՝ Հայաստանի ազատագրության խնդրի բարեհաջող լուծմանը: Ուստի, գրում էր հեղինակը, «Արմենիան» սրտով կը միանայ այն ամէն Հայերի հետ, որոնք ինչ կուսակցութեան ալ պատկանին իրենք, և համերաշխութեամբ ու անկեղծօրէն կաշխատին մի նշանաբանով՝ Հայը՝ Հայաստանին եւ Հայաստանը Հային»[327]:

---

[324] Նույն տեղում:
[325] «31 տարի», «Արմէնիա», թիվ 49, 1917:
[326] «31 տարի», «Արմէնիա», թիվ 49, 1917:
[327] Նույն տեղում:

Հատուկ ընդգծելով, որ «Արմենիան» «կազմակերպուած ոևէ կուսակցութեան նիւթական աջակցութիւնը չունի», Մ. Փորթուգալյանը նշում էր, որ արտասահմանի հայության ուժերով հնարավոր է ունենալ այդպիսի թերթ, եթե կուսակցական մոլեռանդության «հոտող քամիներ, անխոստովանելի դրդապատճառներէ շարժուելով», չփչեն «Արմենիայի» դեմ և չտապալեն «ազգօգուտ ամէն ձեռնարկ»[328]:

Ավելացնենք, որ Մ. Փորթուգալյանը թերթի հրատարակության բոլոր տարիների ընթացքում մշտապես պահեց իր զգուշավոր և վերապահ դիրքը, իսկ վերջին տարիներին հակվեց դեպի Դաշնակցությունը: Այն կուսակցությունը, որի դեմ մինչ այդ համառ պայքար էր մղել, դատապարտել այդ քաղաքական ուժի անհանդուրժող կեցվածքն ու «ազատարարի» դափնիները մենաշնորհելու հակումները, թուրքական խորհրդարանի փափուկ նստարաններից որոշ ժամանակ «բթանալն» ու իր հետ նաև ողջ հայ ժողովրդի զգոնության կորստին նպաստելը և, վերջապես, երիտթուրքական հաշիշանման խայծը կուլ տալով՝ հայոց դիմադրական ոգուն զգալի վնաս հասցնելը: Այդ ամենով հանդերձ, խմբագրապետը մինչև մահը պահեց «Արմենիայի» անկախ դիրքն ու յուրահատուկ ուղղությունը:

Մ. Փորթուգալյանի մահվան առիթով գրած խմբագրականում, արժևորելով հայ ազատագրական պայքարի գաղափարաբանության նվիրյալի կատարած հայրենանվեր գործը, Թ. Եղիշեն գրում էր. «Արմէնիան կորուց իր պատուական հայրը, բայց ան չպիտի սայթաքի բնաւ, որովհետև 36 տարիներու փորձառութեամբ չափահաս մըն է և երակներու մէջ կզգայ պաշտելի հօր աւիւնը, սրտի մէջ՝ մեծ հայրենասէրի ոգին, էութեանը մէջ՝ անոր նուիրական շունչը: Ոչ մէկ արձան աւելի պանծալի պիտի ըլլար, քան իր կատարած գործի շարունակութիւնը սերունդներու սրտին մէջ»[329]: Չնայած Մ. Փորթուգալյանի մարմինը, բոլորելով նախախնամությամբ սահմանված շրջանը, հասաւ

---

[328] Նույն տեղում:

[329] «Արմէնիա», թիվ 12, 1921:

իր հանգրվանին, սակայն նրա բարոյական կյանքը երբեք չպիտի մեռներ ու ավարտ չունենար այնքան ժամանակ, որքան եկող սերունդներն իրենց սրտի մեջ «յարգանքի անկիւն մը պահեն իր յիշատակին համար. ինչ որ անտարակուսելի է»[330]:

Տարիների ընթացքում որդեգրած նվիրական գործի հավերժացման համար հետագայում ևս կձգտի «Արմենիան», գրում էր հոդվածագիրը, որովհետև այն համազոր էր Մ. Փորթուգալյանի «յափտենականութեանը հայրենասիրական անխախտ ոգիի, ազնիւ ու բարի զգացումներու և վեհ գաղափարներու»[331]: Փորթուգալյանի աճյունը պիտի խաղաղ հանգչեր, ու հոգին պիտի հավետ հրճվեր՝ վայելելով այն վստահությունը, որ իր գործը շարունակվում է իր մահից հետո էլ: Ճանապարհը, որով անցել էր «Արմենիան», փշոտ էր ու ամբողջովին խոպան: Թերթն իբրև իրեն զորավիգ չի ունեցել կազմակերպական կառույցներ ու կուսակցություններ, ինչպես նաև՝ նյութական ամուր նեցուկներ: Այդ ամենի փոխարեն ունեցել է իր կատարած գործի օգտակարության գիտակցությունը, հավատ հայրենասիրական գաղափարների անմահության և ապագայի նկատմամբ: Հայոց «Ցեղի հաւատքն էր որ ժառանգած էր Փորթուգալեան և Փորթուգալեանի հաւատքն էր որ ժառանգած է Արմէնիան»[332], ուստի օժանդակել թերթի հզորացմանը, «կը նշանակէ Փորթուգալեանի յիշատակը անմահացնել», համոզված նշում էր հոդվածագիրը:

Չխախտելով տարիների ընթացքում ձևավորված սովորույթը՝ «Արմենիայի» նորընծա խմբագիր և Մ. Փորթուգալյանի գործի հավատավոր շարունակող Եղիշե Թորոսյանը թերթի գոյատևման վերջին երկու տարիներին ևս տարեմուտների նախօրյակներին հանդես էր գալիս խմբագրականներով, որոնք իր ընթերցողներին յուրակերպ հաշվետվություն էին տարվա ընթացքում կատարած աշխատանքնե-

---

330 Նույն տեղում:
331 Նույն տեղում:
332 Նույն տեղում:

րի վերաբերյալ: Դրանցից մեկում հոդվածագիրը ցավով էր արձանագրում, որ նախորդ տարիների նման 1922 թ. ևս թերթը «խնդաբեր ոչինչ կրնայ ծօնել իր ընթերցողներուն եթէ ոչ յաւիտենական կառչում մը դէպի Հայու անխախտ հաւատքը»[333]: Ընդհակառակը, հայության վիշտն ավելի էր ծանրացել, որովհետև կորցրել էր Մ.Փորթուգալյանին՝թերթի «գորովագութ ու վեհ հիմնադիր հայրը»: Թերթ, որը իր վիշտը միախառնելով ազգային մեծ վշտին, «ազգին հետ կը քալէ հաւատքի եւ յոյսի անվերջ ճամբաներէն»՝ երազելով, որ իրեն միշտ կուղեկցեին իր բոլոր ընթերցողները: Այնուհետև ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունն ու աշխարհի բոլոր հզոր տերությունների կողմից խաբված լինելու հանգամանքը՝ հոդվածագիրն իրեն հատուկ լավատեսությամբ շեշտում էր, որ բոլոր դեպքերում մեր հույսը միայն մեզ վրա պիտի դնենք, իսկ «պատահած վերջին դէպքերը որչափ ալ ցաւառիթ լինին, յուսահատական չեն բնաւ»[334]:

Հաջորդ ու վերջին տարեմուտյան խմբագրականում Թ. Եղիշեն հատուկ ընդգծում էր, որ հայերը «կը սիրեն խաբուիլ, բայց յոյսով խաբուիլ», իսկ նրանց «աշխարհին շղթան է յոյսը»[335]: Զարգացնելով միտքը՝ հեղինակը նշում էր, որ հայ ազգը թաքուն հզորությունների անհատակ շտեմարան է: Հայությունը չգիտի, գրում էր հեղինակը, թե 1923 թ. ինչ է նախատեսում իր համար, և քանի որ տևական խաղաղության հեռապատկերն ամպամած ու անտեսանելի էր, ստիպված դարձյալ պիտի ապավինեին հույսին, որը «Երևանեան կորիզը կը ներշնչէ: Հոն կայ խաղաղութիւն և կայ ուրեմն կարելիութիւն կազմակերպուելու և զօրանալու»[336]: Այսինքն՝ հերթական անգամ առանց հատուկ այդ խնդիրը քննարկելու «Արմենիան» անթաքույց իր համակրանքն էր հայտնում Հայաստանի Երկրորդ հանրապետությանը

---

333 «Արմենիա», թիվ 23, 1922:

334 Նույն տեղում:

335 Նույն տեղում:

336 Նույն տեղում:

և հայ ժողովրդի ապագան աներկբայորեն կապում նրա հետագա հզորացման հետ: Քանի որ տարիների ընթացքում որդեգրած սկզբունքների համաձայն՝ իրատես էր, լայնախոհ ու հանդուրժող: Ելնում էր բացառապես հայ ժողովրդի շահերից: Մերժում էր կուսակցականությունը, հայրենիքի ու սեփական ժողովրդի շահը բարձր էր դասում մնացած ամեն ինչից ու թեև չէր կիսում բոլշևիկյան իշխանությունների գաղափարական սկզբունքներն ու մերժում էր նրանց անհանդուրժող գործելակերպը, սակայն համարում էր, որ Ռուսաստանի հովանավորությամբ հայությանը պարգևած խաղաղությունը կարող է փրկել նրան վերջնական կործանումից և հնարավորություն ընձեռել հետագա առաջընթացի, իսկ անհրաժեշտ նպաստավոր պայմանների առաջացման դեպքում՝ նաև ազատ ու անկախ պետականության ստեղծման համար:

Մեծ է «Արմենիայի» մատուցած ծառայությունը: Նրա էջերում արտացոլվել են ժամանակի հայ հասարակական-քաղաքական շրջանակների մտածելակերպը, սեփական հայրենիքն ազատ տեսնելու ձգտումը, մարտավարական միջոցների շուրջ փնտրտուքն ու դրանց պատասխանները գտնելու փորձերը: Պարբերականն իր ծավալած ազգօգուտ գործունեության համար բարձր է գնահատվել առաջին իսկ տարիներից. «Ան, որ Արմենիաի ազգային բարոյական սնունդը ընդունած է, բոլորովին նոր մարդ եղել է...: Արմենիա խիստ մեծ ցնցում տուած է գաղթական ու պանդուխտ Հայութեան, զարթուցեր է քնած ու թմբրած ժողովրդին, գործ մը, որ իրական սահմանին մէջ մեծ գործունէութիւն կը նշանակէ»[337]: Ազատատենչ պարբերականն իր համարձակ ասելիքով վերափոխելու մղեց հայ հասարակության բոլոր խավերին. «Վաճառականն, արուեստաւորն, կօշկակարն ու դերձակն կարդացին Արմենիան ու փոխուեցան: Արմենիան բորբոքեց բեռնակիր Հայն, որ նուիրեց իր լման Արմենիա կարդալու: Ար-

[337] «Հայրենասէրն, Ջերմապէս կը շնորհաւորենք «Արմէնիա» ի Դ տարեշրջանը», «Արմէնիա», թիվ 7, 1888:

մենիան թէ՛ հարուստ ու թէ՛ աղքատ դասակարգի մէջ մտցուցեր է Ազգի ու Հայրենիքի սէրն ու մտածումն»[338]: Թերթի ազդեցությամբ ոգեկոչվեց ոչ միայն գաղթաշխարհի հայությունը: Նրա լուսավոր շողերը թափանցեցին երկրի խորքերն ու այնտեղ էլ տարածեցին այդ ուրամադրությունները. «Արմենիան ներգործեր է. նաեւ Հայաստանի խորքերում»: Հաճախ փորձել են փակել նրա ճանապարհը և ոչ միայն թուրքական իշխանությունները, որոնց դեմ նա կատաղի ու անհավասար պայքար է մղել շարունակ. «Մեծ է Արմենիաի դիմադրութիւնը, իր Ազգի մէջ գտնուած խել մը հին ու փտած մարդոց դէմ, հարուստ դասին դէմ, կղերականաց դէմ, պատերազմած է բարոյական ու նիւթական կրկին արգելքներուն դէմ, որոնց դէմ նիւթական նեղութեանց դառն պայմաններն յանձն առեր ու վարեր է իր սուրբ ուխտն իր նպատակի համար»[339]:

Հաճախ ուղղակի և անուղղակի ճանապարհներով «Արմենիայի» գործունեությունը խոչընդոտում էին նաև ռուսական իշխանությունները: Նրանք արգելեցին թերթի մուտքը Ռուսաստան, որով գրեթե կիսով չափ պակասեց բաժանորդների թիվը: Իսկ դա անում էին, որովհետև նրանց ռազմավարական ծրագրերում Արևմտյան Հայաստանը ներկայանում էր սոսկ որպես ապագայում գրավվելիք աշխարհագրական տարածք, որտեղ իրենց պատկերացմամբ հայ ժողովրդի գոյությունը, մեղմ ասած, ավելորդ գլխացավանք կարող էր լինել:

«Արմենիան» էլ իր հերթին անտարբեր չէր արևելահայության կյանքին: Հատկապես XIX դարի վերջերին ծայր առած և XX դարի սկզբներին կիրառում գտած հայոց եկեղեցու գույքի բռնագրավման չարաբաստիկ քաղաքականությունը մշտապես գտնվում էր թերթի ուշադրության կենտրոնում: Պարբերականում տպագրվում էին տեղեկատվական, վերլուծական և այլ բնույթի նյութեր, որոնցում անար-

---

338 Նույն տեղում:

339 «Հայրենասէրն, Ջերմապէս կը շնորհաւորենք «Արմէնիա» ի Դ տարեշրջանը», «Արմէնիա», թիվ 7, 1888:

գանլՀի սյունին էին գամվում ռուսական իշխանություններն ու նրանց երկդիմի քաղաքականությունը, պատմական էքսկուրսներ էին կատարվում, և մատնացույց էր արվում այն տխուր իրողությունը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդն իր հայացքը հառել էր հյուսիս, առիթը ներկայանալու դեպքում՝ վտանգելով նույնիսկ իր ֆիզիկական գոյությունը, բոլոր հնարավոր միջոցներով սատարել, նպաստել ռուսական զենքի հաղթանակին և ամեն անգամ էլ հուսախաբ եղել, որովհետև ամեն անգամ էլ ստորաբար խաբվել էր Ռուսաստանի կողմից: Օգտագործելով եկեղեցական գույքի բռնագրավման ռուսական նկրտումների առիթը՝ «Արմենիան» իր ձայնը բարձրացրեց այդ փորձի դեմ և կոչ արեց աշխարհասփյուռ հայությանը, որ բոլորը մեկ մարդու նման ոտքի ելնեն, ստիպեն իրենց ապրած երկրների կառավարություններին, որ վերջիններս պահանջեն Ռուսաստանից ձեռնպահ մնալ նմանատիպ հայատյաց դրսևորումներից[340]:

Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով մեծապես նպաստեց հայ ազգային զարթոնքին: Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Վան-Վասպուրականում, ծավալած կրթալուսավորական գործունեությամբ և իր թերթով նա հայությանը, հատկապես նրա արևմտահայ հատվածին, կոչ արեց ձերբազատվել օտարի տիրապետությանը ստրկամտորեն համակերպվելու ստորացուցիչ սովորությունից, համոզեց հրաժարվել իրեն ստորակարգ ժողովուրդների շարքում տեսնելու և անընդհատ ուրիշներից օգնություն աղերսողի կերպարից ու նրան նպատակաուղղեց համարձակ և անվախ պարզել ազատության դրոշը:

Էությամբ համեստ, երբեք փառքի չձգտող Մ. Փորթուգալյանը քաջ էր, հոգով արի, համառ ու իր կատարած գործի հանդեպ անսասան հավատով լի: Նա միշտ համոզված էր իր ճշմարտացիության մեջ և երբեմն կրքոտ ու անզիջում, երբեմն հանդարտ ու համոզիչ

---

[340] «Ռուսիայի հայ եկեղեցիների կալուածների գրաւումը», «Արմենիա», թիվ 23; 1903:

ներկայացնում, ապացուցում էր իր տեսակետները: Մ. Փորթուգալյանի դեմ գործում էր օսմանյան պետական ողջ համակարգը: Նրան խանգարում, շփոթեցնում էին հայերի նկատմամբ Ռուսաստանի և եվրոպական երկրների հակասական ու անկայուն դիրքորոշումները: Սակայն ուղղակի և միջնորդավորված մշտական հետապնդումները, արգելքներն ու սպառնալիքները և նույնիսկ նյութական ու բարձր շնորհների արժանանալու շռայլ խոստումները չսասանեցին նրա հավատն իր բռնած գործի նկատմամբ:

Մ. Փորթուգալյանի իդեալն ընդարմացումից սթափված և ազատ ու բարեկեցիկ կյանքի համար հաստատ վճռականությամբ պայքարի ելած հայն էր: Մարդ, որը թոթափել էր դարերի ճնշող փոշին, հասկացել սեփական ուժին ապավինելու անհրաժեշտությունը, ձերբազատվել ուրիշի օգնությամբ ազատություն նվաճելու սնանկ մտայնությունից: Աշխարհը հեղափոխող հայի տեսակն ստեղծելու երազ ու ցանկությունն ուներ նա: Դրա համար էլ հենց ինքը դարձավ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գլխավոր դերակատարներից մեկը:

«Արմենիա» պարբերականը դարձավ կապող օղակ աշխարհասփյուռ հայության համար՝ փորձելով կամրջել նրա տարբեր հատվածների միջև խորացող անդունդը, հավաքել, մեկտեղել համազգային իղձերն ու ցանկությունները: Պարբերականում ճշմարիտ արտացոլում էին գտնում XX դարի սկզբին հայ հասարակայնությանը (արևմտահայ, արևելահայ, գաղութահայ) հուզող կարևորագույն խնդիրները, հանրային մտահոգություններն ու համազգային մարտահրավերները: Թերթի էջերում մշտապես հրապարակվում են բանավիճային հոդվածներ և դիտարկումներ, որոնցում խորությամբ լուսաբանվում էին հայ հասարակական-քաղաքական միտքը հուզող արդիական հիմնահարցերը:

Հայ մարդը, ի դեմս «Արմենիա»-ի, գտավ իր վշտի ու ցավի թարգմանին, սեփական ժողովրդին որևէ կերպ օգտակար լինելու

մղումների ջատագովին: Հատկապես հրատարակության առաջին տասնամյակում թերթը կարևոր դերակատարություն ունեցավ հայ ազգային-ազատագրական գաղափարախոսության հստակեցման գործում: Դարձավ ամբիոն, բանավեճի հրապարակ, որտեղ քննարկվում, բացահայտվում ու բանաձևվում էին ազատագրության ուղիները, հստակեցվում դրանց արդյունավետության աստիճանը, մերժվում ցուցադրական ու անհեռանկար գործողությունները, լուսավորում հայ ժողովրդի ազատության, օսմանյան գեհենից փրկության փնտրտուքի հորձանուտում հայտնված մտավորականությանը, գալիք սերունդների համար ճանապարհ հարթում դեպի բաղձալի ազատություն:

Մ. Փորթուգալյանի մահից (1921 թ. սեպտեմբերի 26) հետո նրա գաղափարական հետևորդները Եղիշե Թորոսյանի գլխավորությամբ ևս երկու տարի թերթը լույս ընծայեցին «Արմենիա» անունով: Այնուհետև կարճ դադարից հետո Ե. Թորոսյանը շարունակեց իր ուսուցչի գործը «Հայ սիրտ» անունով[341]: Նա հետևեց Մ. Փորթուգալյանի օրինակին և «Հայ սիրտը» խմբագրեց թեև անկախ, բայց Դաշնակցությանը համակիր ուղղությամբ, մինչև որ Մարսելում ապաստանած դաշնակցականների այլամերժ, մենատիրական ու անհանդուրժող գործելակերպը ստիպեցին, որ խմբագիրը թերթը վերածի իրապես անկախ և լուրջ, շահեկան բովանդակությամբ և հավասարակշռված, ողջամիտ ուղղության շաբաթաթերթի:

---

[341] «Հայ սիրտ», լրագիր ազգային, քաղաքական, գրական և հասարակական: Լույս է տեսել 1925-1939 թթ. Ֆրանսիայի Մարսել քաղաքում, տնօրեն-խմբագիր՝ Եղիշե Թորոսյան: Տե՛ս Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Բաբլոյան Մ. Ա., Ե., 1986, էջ 161:

2.3. Մ. Փորթուգալյան - Արմենական կուսակցություն առնչությունները

Սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու հերոսական գոյամարտի պատմության ընդհանուր շղթայի կարևորագույն, միաժամանակ ինքնատիպ օղակներից են XIX դարի 80-ականները[342], որոնք, չնայած իրենց դարակազմիկ վաղեմությանը, թե՛ հայրենաբնակ, թե՛ սփյուռքահայ պատմաբանների կողմից արժանի են ավելի մեծ ուշադրության: Քանի որ հենց այդ տասնամյակում էր, որ նոր աստիճանի բարձրացավ հայ ազատագրական, համազգային շարժման գաղափարախոսությունը, ամենուրեք սկսեցին թևածել Հայոց ազատ, անկախ, միասնական պետականության վերընձյուղման կոչերը, որոնք, քայլ առ քայլ բյուրեղանալով, ապագա գործողությունների ծրագրերի կերպարանք ստացան: Հերթականությամբ հրապարակ իջան ազգային երեք կուսակցությունները: Մ. Փորթուգալյանի ծավալած հայրենանվեր գործունեության անմիջական արդյունքն ու զարդապսակը նաև նրա սաների կողմից հայ իրականության մեջ առաջին՝ Արմենական կուսակցության ստեղծումն էր: Անհրաժեշտ ենք համարում պարզաբանել այդ գործընթացը և Մ. Փորթուգալյանի ու իր աշակերտների փոխհարաբերությունները՝ փորձելով արժևորել այն կարևոր ներդրումը, որ ունեցան Արմենական կուսակցությունն ու նրա գաղափարական ակունքներում կանգնած, ազատաբաղձ սերունդ պատրաստելու գործում մեծ ավանդ ունեցած Մ. Փորթուգալյանը:

1884 թվականին Վանում Մ. Փորթուգալյանն իր վարժապետանոցի 12 շրջանավարտների հետ հիմնում է «**Գործակցական միութիւնը**», որի նպատակն էր արտասահմանից թարմ գրականություն հայթայթել և «զարկ տալու ժողովրդին մտավոր զարգացման»[343]:

---

342 XIX դարի 80-ականները Ջ Կիրակոսյանն անվանում է «Արևմտահայության ազատագրության նախակուսակցական շրջան», տե՛ս Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 159:
343 Պեռզիկեան Գ., Խսրի տուն, «Արծվի Վասպուրականի» ամսագիր, 1941, հր. 4, էջ 2:

Սակայն արևմտահայության ծանր վիճակը, Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» քարոզը, հայրենասիրական մղումներն ու երիտասարդական խանդավառությունն այդ միության անդամներին ավելիին էին մղում: Եվ նրանք իրենց ապագա գործունեությունը ծրագրելու և առաջ տանելու համար հավաքվում էին Թերլեմեզյանների հնձանում՝ Խսրի տանը, որը դառնում է «հայկական առաջին քաղաքական կուսակցության՝ Արմենական կազմակերպության առաջին օրրանը»[344]:

Հենց Խսրի տանը Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի ղեկավարությամբ 1885 թ. աշնանը, երբ Մ. Փորթուգալյանն արդեն հեռացել էր Երկրից, Գրիգորիս (Գրիգոր) Թերլեմեզյանը, Ռուբեն Շատվորյանը, Գրիգոր Օտյանը, Գրիգոր Աճեմյանը (գրող Գ. Մահարու հայրը), Մեսրոպ (Մաքնոս) Պարոնթճյանը, Ղևոնդ Խանջյանը, Գրիգոր Պեռզիկյանը (Շիկահեր), Գարեգին Մանուկյանը (Բաղեշցյանը) «նախաձեռնարկ ըլլալով, կազմեցին առաջին հեղափոխական կուսակցությունը, որը կոչվեցավ Արմենական»[345]: Շուտով նրանց միացան անվանի հայդուկ, 1915 թ. Վանի հերոսամարտի ռազմական ղեկավար Արմենակ Եկարյանը, ապագա հայ մեծանուն գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը (նա Մկրտիչ Ավետիսյանի հորեղբոր տղան էր – Ս. Ս.), Մուշի և Բիթլիսի մասնաճյուղերի հիմնադիր Հայրապետ Ճանիկյանը, Պոլսի մասնաճյուղի հիմնադիր Արմեն Շիտանյանը, անվանի մտավորականներ Արիստակես Ախիկյանը, Միքայել Նաթանյանը, Արտակ Դարբինյանը, Հովհաննես Գուլոզյանը և ուրիշներ, ովքեր հետո դարձան կուսակցության նշանավոր գործիչներ[346]:

---

[344] Տեր-Մկրտչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Բոստոն, 1966, էջ 496:

[345] Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարյուրամեա յեղափոխութեան մասին անձնական յուշերուս ընդմեջէն, Պէյրութ, 1962, էջ 26: Հանգամանքների բերումով քացակայում էին մինչ այդ կուսակցաստեղծ աշխատանքներին ակտիվ մասնակցած Եղիշե Գոնտակչյանը, Գաբրիել Նաթանյանը և Գալուստ Ասլանյանը:

[346] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 64:

«Արմենականութիւնը ծնունդ առաւ Վանի մէջ, ուր օրըստօրե հող գտաւ Երկրին մեջ: Վանի ընտիր երիտասարդութիւնը գործեց նվիրումով, անոր ոգիով ու ծրագրով»[347],- գրում է ՀՅԴ ականավոր գործիչ, երկար տարիներ Վանում գործող Կոմսը (Վ. Փափազյան): ՀՅԴ կուսակցության տեսաբաններից Մ. Վարանդյանը ևս դրականորեն է արտահայտվում Արմենական կուսակցության սկզբնավորման և դրա համար գաղափարական նախադրյալներ ստեղծողների մասին: Անհնար է չհամաձայնել նրա հետևյալ կարծիքի հետ. «Յեղափոխական գաղափարի ամենէն առատ ցանքը կը կատարուեր Վանի մէջ, ուր կ'ապրեր Խրիմեան (Վարագայ վանքը), ուր հաստատուած էր և Մկրտիչ Փորթուգալեան իր համբաւաւոր Վարժապետանոցով»[348]: Այս տեսակետն է արտահայտում նաև Վ. Ավետիսյանը. «Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ արևմտահայության մեջ ծնունդ առած առաջին և վերջին կուսակցությունը,- գրում է հեղինակը,- կյանքի կոչված է Վանի մեջ, իբրև կորիզ ունենալով Երկրագործական միությունը»[349]:

Սակայն կուսակցության կազմավորման պատմությունն այսպես չեն ներկայացրել մեր ազատագրական շարժումների պատմության հարցերը լուսաբանած մի շարք հեղինակներ: Նրանք, առանձին ուսումնասիրության առարկա չդարձնելով Արմենական կուսակցության պատմությունը և կրկնելով միմյանց, կուսակցության հիմնադրման այլ վայր են նշում և այլ առաջնորդ[350]:

---

[347] Փափազեան Վ. (Կոմս), Իմ Յուշերը, հ Ա, Բոստոն, 1950, էջ 211:

[348] Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 1-ին, Փարիզ, 1932, հ. Բ, Գահիրէ, 1950, նաև՝ Ե., 1992, էջ 27:

[349] Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 161-162:

[350] Օրինակ՝ Վ. Պարսամյանը գրում է. «Առաջին քիչ թե շատ կազմակերպված կուսակցությունը՝ 1885-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնված արմենականների կուսակցությունն էր» (Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, էջ 211): Մ. Փորթուգալյանին սխալմամբ «Թիֆլիզահայ մանկավարժ ու գրող» համարող Լեոն էլ նույն միտքն է արտահայտում (Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 47-49):

Մեր պատմագիտության մեջ այս հարցի առնչությամբ ձևավորվել է նաև մեկ այլ տեսակետ, համաձայն որի Փորթուգալյանն իր ազգասիրական գործունեությամբ, իր «Արմենիա»-ով սերմնացանը եղավ, մեծապես նպաստեց խնդրին, հուշեց գաղափարը, այրվեց այդ նպատակի համար, սակայն իրերի բերումով (աքսորը Վանից, ապա ընդհանրապես Թուրքիայից) չդարձավ կուսակցության անմիջական հիմնադրողը: Սա, իհարկե, չի նսեմացնում ո՛չ նրա հիշատակը և ո՛չ էլ ստվեր է գցում նրա հայրենասիրական ոգուն: Չէ որ, ի վերջո, այդ խնդրի իրագործողները նրա սաներն էին, նրա գաղափարական դարբնոցում թրծված Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ:

Այս տարբեր տեսակետների առկայությունը շփոթի արդյունք է: Բանն այն է, որ ուսումնասիրողների մի զգալի մասը Արմենական կուսակցությունը բխեցնում է Մարսելում, Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ «Արմենիայի» շուրջ համախմբված գործիչների կողմից հայ ազգային-ազատագրական պայքարը ղեկավարելու և ուղղորդելու համար ստեղծված Հայոց հայրենասիրական միությունից[351]: Այսպես, «Փորթուգալյանի գաղափարների ու մտահղացումների ազդեցության տակ կազմակերպվեց «Հայոց հայրենասիրական միությունը» (ՀՀՄ)՝ մի գաղտնի կազմակերպություն, որը սկիզբ դրեց Արմենական կուսակցության գործունեությանը»,-գրում է Ջ. Կիրակոսյանը[352]:

---

[351] Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, 1934, էջ 44, Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը (վավերագրեր), Կահիրե, 1956, էջ 105-108, Մերոյեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937, էջ 98-99 և Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Կահիրե, 1948, էջ 184, Իզմիրեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 124-126, Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, էջ 287, Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Բոստոն, 1950, էջ 130, Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980, էջ 245, Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 255, Գազանճեան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950, էջ 210 և այլն:

[352] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 245: Ջ. Կիրակոսյանն այն անվանում է «Հայոց հայրենակցական միություն»:

Իրոք, Արմենական կուսակցության գաղափարական արմատները սնվում են Մ. Փորթուգալյանի գաղափարախոսությունից, սակայն կուսակցությունը բխեցնել դրա ստեղծումից միայն չորս տարի հետո իրականում գործել սկսած «Հայոց հայրենասիրական միությունից», ճիշտ չէ: Նախ՝ միությունն ունեցել է ավելի համեստ խնդիր՝ նյութական և բարոյական օգնություն կազմակերպելով՝ ապահովել «Արմենիա» թերթի անխափան գործունեությունը: «Եվ սակայն պատմական ճշմարտությունը կը դրդէ յայտարարել,- գրում է Ա. Դարբինյանը,- թէ Մ. Փորթուգալեան, որ «Արմենիա» թերթին համընթաց ձեռնարկած է հիմնելու նաև «ՀՀ Միութիւն» անունով մարմին մը, և որ ավելի շատ նպատակ ուներ նպաստելու իր թերթին և օգնելու անոր գաղափարներուն տարածումին, ուղղակի կազմողը և հիմնադիրը չեղավ Արմենական կուսակցության»[353]: Եվ հետո, բոլորը, խոսելով ՀՀՄ-ի մասին, չնչին բացառություններով չեն նշում նրա ստեղծման թվականը: Իսկ Վ. Ղազարյանը գրում է. «փաստերը ցոյց կուտան ընդհանրապէս, որ ան կազմուած է Արմէնական կուսակցութենէն ետք»[354], ինչին գալիս է լրացնելու հետևյալը. «Արմենիայի» շուրջը համախմբված գործիչները 1889 թ. կազմակերպեցին «ՀՀ Միությունը», որի ծրագրային հիմքը Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» գրքույկն էր»[355]: Այն կազմված էր հարց ու պատասխանի ձևով: Այսպես, օրինակ՝ հարց. «Ո՞վ պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից»: Պատասխան. «Ինքը հայ ազգը պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից»: Ծրագրային այդ գրքույկում նշված էին հաջողության հասնելու ուղիներն ու միջոցները: Կետերից մեկում ասվում էր, որ յուրաքանչյուր հայրենասեր իր արյունն ու ունեցվածքը պետք է նվիրի Հայաստանի ազատագրության սուրբ գոր-

---

353 Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 121:

354 Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը, Պէյրութ, 1985, էջ 10:

355 Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, հատ. 6-րդ, Ե., 1981, էջ 187:

ծին: Բայց նկատելի է մի անհամապատասխանություն, որը զարմանալիորեն վրիպել է շատերի ուշադրությունից: Մ. Փորթուգալյանը որոշ փոփոխություններով ու լրացումներով «Վարդապետարանը» հրատարակել է միայն 1889 թվականին. «նշանակալի հանգամանք է, որ 1889-ին Փորթուգալյանը, առանց հեղինակի անվան հիշատակման, որոշ փոփոխություններով առանձին տետրակով լույս ընծայեց արմենական կազմակերպության քրեդոն»[356]: Այս տեսակետն են արտահայտել նաև Լեոն, Հ. Վարդանյանը և ուրիշներ: Սակայն վերն արդեն նշվեց, որ Արմենական կուսակցությունը նույնացնել «Հայոց հայրենասիրական միության» ճիշտ չէ և երկրորդ՝ մի՞թե կուսակցությունը մինչև 1889-ը չուներ ծրագիր, հարցը նրանց մոտ բաց է մնում: Արմենական կուսակցությունը ծրագիր, իհարկե, ուներ:

Համենայն դեպս, եթե նկատի առնենք, որ մեզ հայտնի բոլոր աղբյուրներում ՀՀ Միության ստեղծման թվականի մասին միայն այս տվյալներն են, կարող ենք վստահորեն ասել, որ 1885 թ. ստեղծված կուսակցությունը (սա ընդունում են բոլոր ուսումնասիրողները – Ս. Ս.) չէր կարող ծնվել նրանից տարիներ հետո կազմակերպված միությունից[357]:

«Արմենականները հատկապես Վասպուրականի և Ատրպատականի մեջ գործած են ՀՀ Միության անունով»[358] երկու պարզ պատճառով. այդպիսի «անմեղ» անվամբ շատ գործ կարելի էր անել, քան հակապետական, արգելված կուսակցության: Երկրորդ, թե՛ Արմենական կուսակցությունը և թե՛ Հայոց հայրենասիրական միությունը սնվել ու հասակ էին առել նույն գաղափարական անդաստանում, և բացառված չէին նրանց շփումն ու, ինչու չէ, նաև համագործակցությունը: Իսկ նույնացնել կուսակցությունը և ՀՀՄ-ն ճիշտ չէ, ինչպես որ

---

[356] Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Ե., 1956, էջ 124:

[357] Այս հարցերի մասին մանրամասն խոսվում է այս ուսումնասիրության առանձին բաժնում, ուստի այստեղ խնդիրը չենք մանրամասնում:

[358] Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, էջ 40:

սխալ է «նոյնիսկ զայն (ՀՀՄ-ն) նկատել իբրև ծնուցիչ հայ քաղաքական առաջին կազմակերպութեան»[359]: «Ինքը՝ Ավետիսյանը,- վկայում է Ա. Դարբինյանը,- հիմնադիրը եղած էր այդ հեղափոխական կուսակցության, և նրա գաղափարակիցները հետզհետե ամրացուցին նորաստեղծ այդ կազմակերպությունը»[360]:

Իսկ Մ. Փորթուգալյանին «կարելի է նկատել հոգևոր հայր մը արմենականութեան», որը սկզբից ևեթ ժխտում էր որևէ կապ Արմենական կուսակցության հետ, և քանի որ իր հիմնադրած «Արմենիա» լրագրի «պաշտօնը գաղափարի տարածումն էր հայ ժողովրդի մէջ», որ թերթի խմբագրությունը երբեք «յաւակնութիւն չէր ունեցել հայկական ապստամբութեան մը կամ յեղափոխական շարժման մը իր լրագրի անունով», այլ իրենց կոչումը եղել էր ժողովրդին ընդարմացումից հանելը: Համարելով իրեն հողի մշակ և հայ ժողովրդի մեջ գաղափարներ սերմանող՝ Մ. Փորթուգալյանը հայտարարում էր, թե ժողովուրդը պիտի այդ սերմերը պտղաբեր դարձնի. և «Արմէնիական» անունով յեղափոխական կուսակցութիւն մ'ալ երբէք չենք կազմակերպած, որովհետև մեր կուսակցութիւնն է արդէն Հայ ժողովուրդի յեղափոխական կուսակցութիւնը»[361]: Այսպիսով, Արմենական կուսակցությունը հիմնադրվել է 1885-ին Վանում Մ. Ավետիսյանի կողմից՝ ավելի վաղ, քան «Հայոց հայրենասիրական միությունը»:

Մեր կողմից վերը նշվածն ավելի հիմնավոր դարձնելու համար քննարկենք կուսակցության ծրագրի հետ կապված որոշ խնդիրներ: Արմենականների առաջին ծրագիրն ընդունվել է 1885 թ., սակայն այն չի պահպանվել և մեզ չի հասել, որովհետև եղել է միայն ձեռագիր վիճակում և չի բազմացվել «առաջնորդվելով մասնաւորապէս գաղտնապահութեան մասին որդեգրած սկզբունքէն,- վկայում է Ա.

---

[359] Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 11:

[360] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 19:

[361] «Արմէնիա»ի 21դդ շրջանի վերջաւորութեան առթով», «Արմէնիա», թիվ 44, 1906: Տե՛ս նաև Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 125-126: Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 14:

Դարբինյանը,- ձեռագիր ծրագրի սահմանափակ օրինակները, ընդամենը 7-8 օրինակ, պիտի մնային կեդրոնի ու մասնաժողովներու քով միայն, ի հարկին կարդացուելու համար ուր որ անկ է»[362]: Չտպագրելու ու չբազմացնելու նույն պատճառն են շեշտում նաև Վ. Ղազարյանը («ծրագիրը կպահվեր ձեռագիր վիճակում թելադրուած գաղտնապահութեան մտահոգութիւններէն»[363]) և Լ. Աճեմյանը («Արմենական կուսակցութիւնը իր անդամներուն արգելած էր ամեն մի հրապարակային արտայայտութիւն՝ թշնամիին որևէ փաստ չհայթայթելու կանխահոգութեամբ»[364]): Եթե նկատի ունենանք, որ 1894-ին ընդունված ծրագիրն առաջինի խմբագրված ու լրացված, գուցե նաև մասամբ փոփոխություններ կրած օրինակն է, ինչպես դա եղել է և լինում է բոլոր կուսակցությունների և մասնավորապես ընդհատակում գտնվող կազմակերպություն-ների ու նրանց ծրագրերի առնչությամբ, ինչպես նաև կուսակցության ակունքներում կանգնած բոլոր հուշագիրների (Ա. Դարբինյան, Ա. Եկարյան, Գ. Պեռզիկյան) միատեսակ պնդումները,ապա կարող ենք եզրակացնել, որ 1894 թ. ընդունված ծրագիրն ամբողջությամբ ներառում է և արտահայտում նաև 1885 թ. ընդունված կուսակցության առաջին ծրագիրը:

1894 թ. ընդունված Արմենական կուսակցության ծրագրում ասվում էր, որ կազմակերպության նպատակն է «յեղափոխութեամբ Թիւրքիո հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատօրէն կառավարելու, որով կարող կլինի իբրև մարդ ապրելու միջոցներ գիտնալ և զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց համեմատ»[365]: Սակայն գործնականում սկզբնական շրջանում արմենականները դեմ էին բռնի միջոցներին և թուրքական պետությունից

---

[362] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 124:
[363] Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 17:
[364] Եկարեան Ա., նշվ. աշխ., տպագրության առաջաբանը գրեց Լ. Աճեմյանը, էջ 1:
[365] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 66, թ. 7:

վարչական բարենորոգումներ ստանալու ճանապարհով փորձում էին ապահովել հայ ժողովրդի ունեցվածքի, պատվի իրավունքը:

Սկզբում նրանք զարկ տվին կրթական գործին: Ըստ էության արմենականների գործողության շառավիղը հիմնականում սահմանափակվեց Վան-Վասպուրականի տարածքով: Նրանց մարտավարությունը զգուշավոր իրատեսական էր և հիմնականում ծավալվում էր մշակութային-կրթական քողի տակ: Հետագայում, թուրքական վարչակարգում եղած փոփոխություններին ու իրադարձություններին զուգընթաց, երբ արևմտահայության դեմ սանձազերծված հալածանքներն սկսեցին շեշտված քաղաքական նպատակներ հետապնդել, նրանք իրենց ծրագրում որոշակիորեն դրեցին Հայաստանի ազատագրման հարցը: Իսկ թե ինչպիսի վարչակարգ էր լինելու, դա թողնում էին այդ իրավունքի նվաճումից հետո լուծելու: Ենթադրվում էր, որ թուրքական տիրապետությունից լիակատար ազատագրվելուց հետո միայն ազատ ու ինքնօրեն պայմաններում, հայ ժողովրդի տարբեր խավերը կարող էին խորհրդակցել, վիճաբանել, քննարկել այն ուղիները, զարգացման այն հեռանկարները, որոնք իրենց տրամադրության տակ կլինեին, կամ իրենք ուզում էին ստեղծել[366]:

Այստեղ մենք նպատակ չունենք մանրամասն ներկայացնելու Արմենական կուսակցության հիմնադրման և հետագա տարիներին ծավալած գործունեության պատմությունը[367], սակայն անհրաժեշտ ենք գտնում պարզաբանել մի քանի կարևոր դրսևորումներ, որոնք բնորոշում են Մ. Փորթուգալյանին որպես հայության ցավով տառապող

---

[366] Արմենական կուսակցության ստեղծման պատմության, նրա ծրագրի, կանոնագրի, կարևոր դերակատարների և նմանաբնույթ այլ հարցերի մասին մանրամասն տե՛ս Մարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2008:

[367] Այդ հարցերը մանրամասն քննարկել ենք մեր նախորդ աշխատություններում՝ «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ.», Ե., 2009, «1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային- ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ», Ե., 2010 և տարբեր գիտական պարբերականներում լույս տեսած մի շարք հոդվածներում: Ավելի մանրամասն տե՛ս գրականության ցանկում:

գործչի ու արդեն նաև խմբագրի: Բանն այն է, որ նա, քարոզելով հայության բոլոր խավերի մասնակցությամբ հեղափոխական թեզեր, դեմ էր առանձին կուսակցությունների ստեղծմանը, այդ թվում նաև՝ Արմենականների: Վերջիններս, սակայն, այլ կարծիքի էին և մի քանի անգամ փորձեցին համոզել նրան, որ լինի իրենց գաղափարական ու գործնական ղեկավարը, բայց ապարդյուն: Ինչպես հուշագրում է այդ հարցերին լավատեղյակ Սարգիս Չթչյանը, դեռ 80-ական թթ. «Փորթուգալյանը հեղափոխական շարժումներ ղեկավարող մի որևիցե հայկական կազմակերպության հակառակ էր եղել սկզբից և հակառակ էլ մնում էր»: Նրա սաները, մասնավորապես Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Թերլեմեզյան-Ավետիսյանը, 1888, 1890, 1892 թվականներին և հետագայում ևս մի քանի անգամ դիմեցին Փորթուգալյանին՝ խնդրելով դառնալ իրենց ղեկավարը, սակայն «Արմենիայի» հիմնադիրը հետևողականորեն մերժում էր՝ «համարելով դա վնասակար և խիստ վտանգավոր տաճկահայոց շահերին»[368]:

Այդպիսի փորձ 1888 թ. սեպտեմբերին ձեռնարկեցին նաև ԱՄՆ-ում բնակվող արմենականները և նրան հրավիրեցին Ուստր քաղաք[369]՝ ազգապահպան կառույցներ ստեղծելու և օտարության մեջ հայտնված հայերի շրջանում հայկականության ոգին ու բնօրրանի հետ կապը վառ պահելու և փոխադարձ համագործակցություն ապահովելու նպատակով: Այստեղ Մ. Փորթուգալյանի ատենապետությամբ տեղի է ունենում համագաղութային մակարդակի առաջին հրապարակային ժողովը[370], և ստեղծվում է ամերիկահայ առաջին կազմակերպություններից «Կաճառ Հայկականը»[371]: Արմենականության գաղափարական նախահայր Մ. Փորթուգալյանի կրակոտ ելույթները

---

[368] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13, նաև «Պայքար», 1951, մարտի 17, թիվ 63:
[369] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 14:
[370] Մերոբյան Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը, Ա տարի, 1912, էջ 106:
[371] Մերոբյան Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը, Բ տարի, 1913, էջ 51:

չէին կարող անտարբեր թողնել հայրենակարոտ ամերիկահայերին, որոնք, հետզհետե համախմբվելով, ձեռնամուխ են եղել տեղերում ազգային կազմակերպությունների ստեղծմանը, որպեսզի դրանց միջոցով հնարավոր լիներ իրենց մասնակցությունը բերել հեռավոր հայրենիքին ու ժողովրդին բարոյապես ու նյութապես սատարելուն, ինչպես նաև կուսակցության շարքերի համալրմանն ու օտարության մեջ ազգային արժեքների պահպանմանը: Չնայած այդ կարևոր առաքելության փայլուն իրականացմանը՝ Մ. Փորթուգալյանը դարձյալ մնաց անդրդվելի և իր այցելությունից հետո հետամուտ եղավ միայն ամերիկահայության շահերի պաշտպանությանը, որի արդյունքում շուտով ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում հիմնադրվեցին եկեղեցիներ[372]:

1896 թ. արմենականները կրկին փորձեցին լեզու գտնել Մ. Փորթուգալյանի հետ, սակայն նա ոչ միայն մերժեց նրանց առաջարկները, այլև 1897 թ. թերթում հրապարակած «Զգուշութիւն» վերնագրով խմբագրականում անթաքույց դրսևորեց իր ոչ բարյացկամ վերաբերմունքը և որակեց նրանց թերթի թշնամիներ. «Արմենիաի բարեկամի դիմակով ապրում են նրա համբավը»[373]:

Հետագայում Մ. Փորթուգալյանի հետ լեզու գտնելու նպատակով 1905 թ. ԱՄՆ-ում բնակվող արմենականները նրան հրավիրեցին Բոստոն[374]: Սակայն վերջինս ոչ միայն մնաց անդրդվելի[375], այլև հանդես եկավ հատուկ հայտարարությամբ. «Արմէնիական անունով յեղափոխական կուսակցութիւն մալ երբեք չենք կազմակերպած»[376]: Այլևս չհանդուրժելով Մ. Փորթուգալյանի այդ մերժողական կեցված-

---

372 Megerdichian, R. The Armenian Churches in North America: Apostolic, Protestant and Catholic. A Geographical and Historical Survey (Society for Armenian Studies. Occasional Papers. No. 2). Cambridge, 1983, pp. 5-7.

373 «Արմէնիա», թիվ 84, 1897:

374 Մկունդ Տ., Հայ կղերն Ամերիկայի մէջ, ԱՄՆ, 1945, էջ 116:

375 ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13:

376 «Արմէնիա», թիվ 44, 1906:

քը՝ 1908 թ. «Գաղափարակցական միությունը»[377] Բոստոնում լույս տեսնող «Ազգ» թերթում հայտարարեց, որ թեև Արմենական կուսակցության արմատները սնվել են «Արմենիա» թերթի գաղափարական անդաստանում, սակայն այն երկրի ծոցում ծնված, ինքնուրույն քաղաքական կազմակերպություն է:

Նշենք, որ երկու տասնամյակից ավելի «Արմենիա»-ի հետևորդներ համարվող արմենականներն ի վերջո խզեցին կապը իրենց ուսուցչի հետ: Իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո միավորվելով Վերակազմյալ հնչակյաններին՝ ստեղծեցին Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Մ. Փորթուգալյանն էլ իր հերթին մոռացավ նրանց գոյության մասին: Համենայն դեպս՝ 1908 թ. հետո «Արմենիա»-ում այլևս արմենականների մասին ոչ մի անգամ չի խոսվում:

---

[377] «Գաղափարակցական միությունը» ստեղծվել է 1907-ի օգոստոսին: Արմենական կուսակցության հիմնադիրներից Գ. Պեռզիկյանը, Պարսկահայքի մասնաճյուղերը վերակազմակերպելով, նույն թվականին անցնում է Բուլղարիա, որտեղ Ա. Շիտանյանի հետ ստվարացնում են տեղի արմենականների շարքերը, նրանց են միացնում հնչակյան կենտրոնից դժգոհ «Հեղափոխական Միությունը» և հռչակում այդ կազմակերպության ծնունդը: 1907 թ. Լոնդոնում հրատարակված նրանց ծրագրում միության նպատակ է հռչակվում Հայաստանի անկախության նվաճումը. «զինուզօրութեամբ ազատել Օսմանեան լուծէն Հայաստանը և կազմել անկէ քաղաքականապէս ինքնուրոյն, անկախ և ազատ Հայկական իշխանութիւն մը»՝ բացառելով սոցիալիզմի գաղափարախոսությունը, օտարի օգնության ակնկալությունը և մահուան դատապարտելով մատնութիւնն ու դավաճանութիւնը» (Ծրագիր և կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենո-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնդոն, 1907, էջ Ա:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԱՐՄԵՆԻԱ»-ՈՒՄ

3.1. «Արմենիա»-ն արևմտահայերի կացության մասին

XIX դարի վերջերին Օսմանյան կայսրությունում իրադրությունն աստիճանաբար ավելի ու ավելի էր սրվում, սակայն թուրքական իշխանությունները շարունակ դիմում էին խարդավանքների ու նենգ միջոցների՝ աշխարհին, մասնավորապես եվրոպական տերություններին, իրավիճակը երկրում լավագույն կողմերով ներկայացնելու համար: Այսպես. տեղական իշխանության ներկայացուցիչները խաբեությամբ, շատ քիչ դեպքերում համոզելով, իսկ ավելի հաճախ ահաբեկելով, հասարակ ժողովրդից հանրագրեր էին կորզում և ուղարկում մայրաքաղաք: Իսկ այստեղի վերնախավը դրանց պատճենները հրապարակում էր Կ. Պոլսի լրագրերի մեջ և ցույց տալիս Եվրոպային, որ «ամենակատարեալ ապահովութիւն և հանգստութիւն կը տիրեն Վանի մէջ... թէ հարստահարութեան լուրեր տարածողներն չարամիտ մարդիկ են որոնք կուզեն գրգռութիւն ձգել հայ ժողովրդին մէջ»[378]: «Արմենիան» այս առիթով գրում է, որ գրգռված հայերին հանգստացնելու և ճշմարտությունը Եվրոպայից թաքցնելու նպատակով հանրագրերին դիմելու խայտառակ պատմությունը նշան էր արդեն «թէ նա բոլորովին նեղը մնացեր է Հայենական խնդրի առջեւ»[379]:

Բավական հետաքրքիր ու զգաստ վերլուծական մոտեցմամբ Կահիրեից ուղարկված Զարմայր հեղինակի «Մեր թշնամին և մենք» հոդվածում ներկայացվում էր, թե ինչպես էին օսմանյան իշխանությունները դիմում տարբեր տեսակի խարդավանքների, խաբեության ու նաև բիրտ ուժի, որ «Հային ճնշեն անագորոյն գազանի մը պէս, ցամքեցնեն մեր Ազգի կաթիլ մ'արիւնն ալ, հիւծախտի պէս դանդաղо-

---

378 «Արմէնիա», թիվ 81, 1889:

379 Նույն տեղում:

րէն, անզգալապէս, բնաջինջ ընելու համար մեր ազգային գոյութիւնն»[380]: Դա նրանց չհաջողվեց, որովհետև հայը կենսունակ էր, դիմացկուն: Շատ փոթորիկներ էին անցել նրա գլխով, շատ ջրեր էին հոսել, սակայն Մասիսի ստորոտին նրա կենսահյութով ու հզորությամբ տոգորված հայը դեռ այնպիսի կայծեր ու կրակ ուներ, «զորս չեն կրցած մարել ո՛չ ժամանակն, ո՛չ ալ բռնութիւնը»[381]: Դրա համար էլ, հոդվածագրի կարծիքով, թուրքերը, ոչ մի խտրականություն չդնելով միջոցների մեջ, որոշել էին հենց իր բնում խեղդել հայ ժողովրդին: Դրա համար նրանք նախ սկսեցին հայերին տնտեսապես տկարացնել: Այդ նպատակով չերքեզներով, քրդերով ու այլ կիսավայրենի ցեղերով ողողեցին մեր երկիրը, որոնք հափշտակեցին մեր արտն ու կոյսին և «մահ և աւեր գործեցան ամենուրեք»: Չկարողանալով տոկալ՝ հայ ժողովրդի զգալի մասն սկսեց «դուրս գաղթել տնովին»[382]: Օսմանյան վերնախավը հայաշատ գավառներից հատկապես դուրս էր մղում այն մարդկանց, ովքեր այդ բռնաճնշումներին դիմանալու համար կազմակերպում, քաջալերում էին հայությանը: Այնուհետև փակեցին ազգային վարժարանների մեծ մասը՝ փորձելով դրանով «իրենց խանձարուրի մէջ սպաննել» ազատատենչ ձգտումներն ու դեռ չձևարձակված յուրաքանչյուր հեղափոխական դրսևորում:

Հայկական հարցը միջազգային դիվանագիտական ասպարեզում շրջանառության մեջ հայտնվելուց հետո թշնամին անում էր ամեն հնարավորը «մեր բողոքն մեր կոկորդի մէջ խեղդելու համար», չխորշելով նույնիսկ կաշառել «փառատենչիկ Հայ էֆէնտիներն», դրամական նվերների ու շնորհների ուժով ստիպել, որ Պոլսի պատրիարքարանը «Եւրոպաբնակ մեր եղբարց հրապարակային տրտունջներն հերքէ պաշտօնապէս»[383]: Իսկ ի±նչ դիրքորոշում պիտի որդեգրեին

---

[380] «Արմենիա», թիվ 78, 1889:
[381] «Արմենիա», թիվ 78, 1889:
[382] Նույն տեղում:
[383] Նույն տեղում:

հայերը, որ կարողանային դիմագրավել այդ հայատյաց քաղաքականությանը, հարցնում է հոդվածագիրը, և ինքն էլ փորձում պատասխանել: Նախ՝ անհրաժեշտ էր ունենալ մի ազատ ու համարձակ թերթ, որը կկարողանար բարձրաձայնել ժողովրդի ցավն ու մորմոքը, ձգտումները, ծանոթացներ, միմյանց մերձեցներ աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածներին, նրանց կապեր հայրենիքին: Հենց այդ թերթը եղավ «Արմենիան», որի շնորհիվ բարոյական զգալի «յեղաշրջում մ'էր արդէն ազգային սուրբ դատովն ընդհանուրի հետաքրքրուիլը»[384], որին պիտի հաջորդեր բոլոր հայրենասիրական խմբակների համախմբումը մեկ կազմակերպության մեջ, և բոլորն իրենց ջանքերը ներդնեին ի նպաստ հայափրկման սրբազան գործի: Այդ հավաքական ուժը «ցորչափ զօրանար նիւթապէս և բարոյապէս, այնչափ պիտի ջլատէր Թիւրք կառավարութիւնն իւր ընդդիմամարտ ջանքերու մէջ»[385]:

«Արմենիա»-ն իր էջերում լայն տեղ էր հատկացնում Արևմտյան Հայաստանում հարստահարությունները, չարաշահումները, սպանություններն ու այլ բնույթի բռնությունները նկարագրելու և դրանց արմատները հնարավորինս լուսաբանելու համար: Թերթն ստեղծել էր լայն թղթակցային ցանց, որը հանգամանորեն ներկայացնում էր գրեթե բոլոր կարևոր իրադարձություններն ու գործող դեմքերին: Ամենահետաքրքիրն այն էր, որ այդ նամակ-թղթակցություններում լավագույնս, հաճախ սկզբնաղբյուրի արժեք ունեցող նյութերով ներկայացվում էին ժամանակն ու տիրող բարքերը: Իսկ թուրքական իշխանությունների հայակուլ քաղաքականությունը լավ հասկանալու համար բավական է ծանոթանալ «Արմենիա»-ում տեղ գտած այն հրապարակումներին, որոնց գլխավոր դերակատարը հայտնի ավազակ, իշխանությունների հովանավորությունը լիուլի վայելող քուրդ Մուսա բեյն էր: Նրա հետ կապված խարդավանքներով ու անարդարություն-

---

[384] «Արմենիա», թիվ 79, 1889:

[385] Նույն տեղում:

ներով լի հարուստ պատմությունը վկայում է, թե թուրքերը որքան հայատյաց ու անարդարացի էին և, որ նրանցից ոչնչով հետ չէին մնում նրանց հլու կամակատար քրդերը. «Քիւրդեր բոլորովին կը թալնեն Բաղէշի շրջակայ գիւղերն և սպանութիւններ կը գործեն: Թիւրք կառավարութիւնն կը քաջալերէ զանոնք: Մոտկանի գիւղերը գրեթէ բոլորովին ոչնչացած են: Չուխարի մէջ, Մուշաչէն գիւղի ռէս Մանուկի տունն 30 քուրդ կուգան 20 զօրքի հետ մէկտեղ և բոլորովին կը կողոպտեն. Մուսա պէյի դէմ ունեցած դատին պատճառով»[386]:

Ամենազավեշտալին այս պատմության մեջ այն էր, որ Մուսա բեյը հայտարարում էր, թե ինքը պատրաստ է իր պատիժը կրելու, եթե դատարանը որոշեր իր մեղքը և համապատասխան վճիռ կայացներ այդ առնչությամբ: Իսկ եթե դատարանն իրեն անմեղ ճանաչեր, ապա բոլոր ցուցմունք տվողներն իբրև զրպարտիչներ պիտի խստորեն պատժվեին: Այս իրավիճակը «կատարեալ խայտառակութիւն» անվանելով, «Արմենիան» եզրակացնում էր. «Թիւրք կառավարութիւնը իր այս ընթացքով պարզապէս կուզէ մի թակարդ լարել անոր մէջ ձգելով պատժելու և խեղդելու համար միամիտ Հայերի ձայներն»[387]: Որովհետև այդ նույն Մուսան թերթի բազմաթիվ նամակագիրների վկայությամբ կատարյալ հանցագործ էր, «մի փորձանք է Մուշի գիւղերին մէջ և հատորներ կը լեցուն նորա կատարած վատաբարո գործեր»[388]: Բազմաթիվ օրինակներով թերթը ներկայացնում էր ստեղծված տխուր իրավիճակը. մի դեպքում նա առևանգում էր Խարս գյուղից մի փոքր տղայի, ապա նույն գյուղից՝ 1000 ոչխար, Մուշաչէնից՝ 14-ամյա մի կույս աղջկա, Երիզակից 100 ոչխար ու սպանում օգնություն կանչելու համար գյուղ վազող երիտասարդ հովվին, Արտոնքից իր հաճույքի համար գնդակահարում է Մալխասին և այսպես շարունակ:

---

[386] «Արմէնիա», թիվ 91, 1889:
[387] «Արմէնիա», թիվ 79, 1889:
[388] Նույն տեղում:

Այս իրադարձությունները, որոնք հաջորդում էին իրար, և դրանց վերջն էլ չէր երևում, իհարկե, ունենում էին նաև իրենց անմիջական արձագանքները: Հայերը, չհանդուրժելով այդ ավազակաբարո գործողությունները և այլևս հավատ չընծայելով իշխանությունների «օրինապահ» կեցվածքին, երբեմն պոռթկում էին, զենքի դիմում և սեփական ձեռքերով պատժում անարգ ավազակին: Ինչպես, օրինակ, վկայում է Մուշից ուղարկված մի նամակ. «Մուշի դաշտին մէջ մեծ յուզում կայ, Մուսա պեյին դէմ: Վարդենիս գիտի Հայերն խմբովին զէնքի դիմած և քաջութեամբ կռուած են Մուսա պէյի ասպատակներին դէմ»[389]:

Օսմանյան իշխանությունների հակահայ կեցվածքը դարավերջին այնպիսի այլանդակ աստիճանի էր հասել, որ այլևս չկարողանալով հանդուրժել նրանց անմարդկային արարքները՝ հայերը փորձեր էին ձեռնարկում, հակակառավարական ելույթներ կազմակերպում, որպեսզի իրենց խնդրի վրա հրավիրեին եվրոպական այն երկրների ուշադրությունը, որոնք ստորագրել էին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, հետևապես պատասխանատու էին և հետամուտ պետք է լինեին Հայկական բարենորոգումների իրագործման համար: Այդպիսի ելույթ էր հնչակյանների կողմից կազմակերպված և 1890 թ. հուլիսի 15-ին եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն իրագործել տալու Գում Գափուի հայտնի ցույցը: Ձեռնպահ մնալով ցույցի մանրամասների նկարագրությունից՝ նշենք միայն, որ «Արմենիան» ամբողջությամբ զետեղեց ինչպես ցույցի ակտիվ կազմակերպիչներից վանեցի Հարություն Ճանկյուլյանի կարդացած «Մեր պահանջը» փաստաթուղթը, այնպես էլ նույն թվականի հուլիսի 31-ին թուրքական կառավարության կողմից եվրոպական երկրների դեսպաններին հեռագրով ուղարկված «Բարձր Դռան ծանուցագիրը»:

---

[389] «Արմենիա», թիվ 81, 1889:

«Մեր պահանջքը» հրապարակման մեջ մասնավորապես ասվում էր, որ Հայաստանի մեջ հաճախակի են դարձել անտեղի ծերբակալություններն ու ոչնչով չպատճառաբանված հետապնդումները և հետզհետե դրանց թիվը բազմապատկվում է: Բանը հասել էր նրան, որ անընդհատ խուզարկվում էին հայերի համար ամենանվիրական վայրերը՝ եկեղեցիները, դպրոցները և այլն: Իսկ երբ, օրինակ, Կարինում ժողովուրդն ընդդիմացավ տեղի հայկական եկեղեցու ապօրինի խուզարկությանը «զօրաց կողմանէ ժողովրդեան արդար բողոքին վրայ ոչխարի պէս սուինահար անխնայ ջարդուեց»[390]: Իսկ նմանատիպ դեպքերը գրեթե նույն սցենարով կրկնվում էին Վանի, Մուշի ու այլ գավառներում, և դա այն դեպքում, երբ այդ վայրերում «Թրքաց և Քրդաց զէնքեր կը բաշխուին»[391]: Նկատի առնելով այս հանգամանքը՝ պահանջագրի հեղինակները «Պոլսոյ Հայ ժողովուրդի» անունից Պոլսի պատրիարքից ու Ազգային վարչությունից պահանջում էին, որ «մեզ առաջնորդէք կառավարութեան, որպէս զի անձամբ խնդրենք իրմէ որ հաճի Մայր Երկրին այժմեան անտանելի կացութեան վերջ մը տալ»[392]:

Կառավարության «Ծանուցագրում», բացառապես իշխանությանը ձեռնտու կողմնակալությամբ, նենգափոխված նկարագրելով տեղի ունեցածը և չափազանցելով ու խտացնելով գույները, հաղորդվում էր, թե իբր հայերի հարձակումներից «Մի քանի զօրքեր ծանրապէս վիրաւորուեցան և երկու Հայեր սպանուեցան հրացանի հարուածներով»[393]:

«Մենք ինչո՞ւ թշվառ ենք» խորագիրը կրող հետաքրքիր ու տարողունակ հրապարակման մեջ Օնանդր հեղինակը փորձում էր բացատրել հայերի տկար լինելու պատճառները և սպառիչ գծերով ներ-

---

[390] «Արմենիա», թիվ 83, 1889:
[391] Նույն տեղում:
[392] Նույն տեղում:
[393] Նույն տեղում:

կայացնել այդ հանգամանքից օգտվողներին: Մեր թշվառությունը հոդվածագիրը պատճառաբանում էր նախ նրանով, որ եռանդ չունեինք, շուտ հուսալքվող էինք, ամեն ինչ պահանջել գիտեինք, սակայն ինքներս գործող չէինք: Լալկաններ շատ ունենք, «տասը բանաստեղծից, ինը լալկան են. հազար հովիւից՝ 999ը լալկան. լալկանների պէտք չունինք. թէ մեռել թաղող վայնասունների չափ զինուոր ունենայինք, մեռելները կը յարուցանէինք»[394]: Այդ դեպքում ում վրա պիտի հույսը դներ հայ ժողովուրդը, հարցնում է հեղինակը, և ինքն էլ պատասխանում՝ երիտասարդների, որոնց եռանդը հարկավոր էր միայն բորբոքել, ուղղորդել դեպի ազգային փրկության ուղին: Հեղինակի կարծիքով մեզ մշտապես խանգարում էր անմիաբանությունը, տեղից վեր կացողը ուզում էր առաջնորդ լինել, բայց հաճախ «դարտ ու բալա դառնում այլոց գլխին, դեռ այբն չսովրեցրած, բենն է ասում այլև խեն ու ծան»[395]: Հայերը վերջապես հարկավոր էր գիտակցեին, որ յուրաքանչյուրն ամբողջի մեկ անդամն է միայն, և եթե ընդհանուր գործը մեր անմիաբանությամբ խանգարեինք, ապա դրանով «ամենայն ինչ կը քանդենք որևէ բան շինելու փոխարեն»[396]:

Ժողովրդի կերպարը ձևավորվում է անհատների վարքից և նրա ազգանպաստ պահվածքից: Հարկավոր է, որ յուրաքանչյուրս մեր կեցվածքով, մեր աշխատանքով ու հայրենանվեր գործերով ներկայանանք ու մեր ազգը ներկայացնենք աշխարհին: Վերջապես հասկանանք նաև, որ նա, ով նվիրվում է ազգային սուրբ գործին, ունի նաև իրավունքներ, կարող է մյուսների օգնությունը պահանջել: XIX դարի վերջին Արևմտյան Հայաստանում ո՛չ օրենք կար, ո՛չ օրենք պահանջող, որովհետև օրենքի մասին, ըստ էության, գաղափար էլ չկար: Եվ երբ հայ ժողովուրդը ձգտում էր ազատության, դա Թուր-

---

394 «Արմենիա», թիվ 84, 1889:

395 Նույն տեղում:

396 Նույն տեղում:

քիայում դիտվում էր որպես սանձարձակություն, օրինախախտում և նույնիսկ դավաճանություն:

Հոդվածագիրը համեմատում էր արևմտահայ և արևելահայ (ռուսահայ – Ս. Ս.) իրականությունը և իրավացիորեն նկատում, որ այստեղ թեև թերի, կիսատ-պռատ, սակայն օրենքներ կային, «չկայ աւազակութիւն կառավարութեան կողմից, չկայ և կոտորած. սակայն կայ ճնշում, կայ խաբեութիւն, կայ ռուսացումն խաբեութեամբ, կայ խօսքի կաշկանդումն»[397]: Մեծ հաշվով երկու հատվածներում էլ գործում էր ազգային խտրականության ավերիչ թեզը, սակայն ռուսահայ իրականության մեջ երբեք չի եղել ֆիզիկական ոչնչացման վտանգը, և այս իմաստով նույնիսկ համեմատության եզրեր փնտրելն անշնորհակալ գործ է: Հարկավոր է չանտեսել, իհարկե, որ Ռուսահայաստանում ջանում էին ուծացնել բոլոր ժողովուրդներին, «որպէս զի անհետանայ ազգային գաղափարը», «արհամարհում էին ժողովրդի պատմութիւնը և իբր թէ եղբայրութիւն է քարոզում»[398], մինչդեռ իրականում անում էին հնարավոր ամեն ինչ՝ ազգերը ձուլելու, ռուսացնելու համար:

Այս տխուր իրավիճակը հարկավոր էր պարզաբանել, ի լուր աշխարհի հայտարարել: Այդ կարևոր առաքելությունն ինքնակամ որդեգրել էր հենց «Արմենիա» լրագիրը, որի էջերում պարզ ու հասկանալի լեզվով պարզաբանվում էին հայ ժողովրդի առաջ ծառացած խնդիրները և դրանք հաղթահարելու համար միավորվելու անհրաժեշտությունը:

Լոնդոնի «Echo» լրագրի 1888 թ. սեպտեմբերի 17-ի համարում տպագրված այն տեսակետը, թե իբր ժողովրդագրական կտրուկ փոփոխությունների արդյունքում էր, որ «Հայաստան» անունը փոխարինվել էր «Քուրդիստանով», նույն քաղաքի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Կ. Շրումֆը հետաքրքիր վիճակագրական և հիմնա-

---

[397] «Արմէնիա», թիվ 87, 1889:
[398] Նույն տեղում:

ռար փաստական տվյալներով համոզում էր «Արմենիայի» ընթերցողներին, որ սխալ ու անհիմն էին այն պնդումները, թե այդ «փաստը կը տկարանայ նոր հրատարակած վիճակագրական հաշիւներէն»[399]: Դրանք տեղեկացնում էին, որ այդ երկրամասի շուրջ 3 մլն բնակչության[400] երկուս ու կես մլն-ը հայեր էին, 410 հազարը, թուրքեր էին, և հազիվ 175 հազարն էին քրդեր, մնացածն այլ ազգությունների ներկայացուցիչներ էին. Մասնավորապես. «Էրզրում, Ալաշկերտի և այլ նի մէջ կելնէ 390,000 Հայ՝ 80 հազար Թիւրքի և 10,000 Քիւրդի դէմ. Վանի մէջ 154,000 Հայ կայ 15,000 Թիւրքի և 21,000 Քիւրդի դէմ. Մուշի մէջ 118,000 Հայ կայ 25,000 Թիւրքի և 10000 Քիւրդի դէմ և այսպէս մնացածը»[401]: Իսկ հայերը, նամակագիր պրոֆեսորի կարծիքով, իրենց պաշտպանելու և այդ անմարդկային պայմաններում գոյատևելու համար պիտի նախ գտնե իրենք իրենց պաշտպանելու թույլտվություն ստանային և «առաջին քայլը պիտի լինէր Հայերէն մի ոստիկանութեան կազմակերպուիլը»[402]:

Մի օտարազգի նամակագիր, անդրադառնալով Էրզրումի հայտնի դեպքերին, գրում էր, որ հայերը եթե ուզեին, առանց դժվարության կարող էին տիրանալ քաղաքին, որովհետև թուրք զինվորներն ու ժողովուրդը «սարսափի մէջ էին»: Բայց երբ տեսան, որ հայերի մի զգալի մասը, փոխանակ իրար օգնելու, սկսեցին թաքնվել, դրանից ավելի համարձակ դարձան ու սկսեցին ավելի մեծ թափով հարձակվել: «Մատնիչ Հայերն էլ շատ վնասներ էին տալիս Հայերին,

---

399 «Արմենիա», թիվ 96, 1889:

400 Իհարկե, այս տվյալները որպես բացարձակ ճշմարտություն չենք կարող ընդունել, սակայն մի քանի տարբեր աղբյուրների հետ համեմատելիս պարզ է դառնում, որ դրանք շատ մոտ են իրականությանը (օրինակ՝ Sarafian Vahe A., Turkish Armenian and Expartiarte Population Statistics, The Armenian Review, IX (Autumn, 1956), 119): Իսկ թե ինչ չափով, ներկա դեպքում ճշգրտելը մեր խնդիրը չենք համարում:

401 «Արմենիա», թիվ 96, 1889, տե՛ս նաև Հայոց պատմություն, հ. 3, գիրք Ի: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ, Ե., 2010, էջ 451-452:

402 Նույն տեղում:

ցոյց տալով ապաստանած Հայերի տեղերը»,- գրում է նամակագիրը, ապա շարունակում, որ մեծ սխալ էին թույլ տալիս հայերը մշտապես թուրքին գայլ, իսկ հային գառ ներկայացնելով: «Անկոթ կացին» անվանելով հայերին՝ նա ցավով արձանագրում էր, որ օտարազգիները, հային մեռած դիակ համարելով, ամեն մեկը մի կողմ էր քարշ տալիս: Իսկ հայերը թյուրիմացաբար կարծում էին, թե իրենք շատ թանկագին ու անփոխարինելի են, դրա համար են բոլորը ձգում դեպի իրենց, այնինչ իրականում «խղճալի Հայը չէ գիտում, որ բոլորը միացած քարշ են տալիս իրեն դէպի գերեզման. – դէպի կորուստ»[403]:

Քրդերի ու իշխանությունների հակահայ պահվածքի ուղղակի վկայությունները շատ են «Արմենիայի» էջերում: Թղթակիցներն ու նամակագիրները, միմյանց հերթ չտալով, պատմում էին, թե ինչ վայրագություններ էին կատարում քրդերը, և թե ինչպիսի անբարո ձևով էին ուրդարությունը «պաշտպանում» իշխանության ներկայացուցիչները: Մշո դաշտից ուղարկված նամակում ներկայացվում էր, որ բարբարոսներն անթիվ էին, երկիրն ավերակ էին դարձրել, թալանել տարել էին անասունները, վառել տներն ու մարագները. «Մշոյ դաշտին մէջ օրէն 10-20 կամ 30 մարդ կսպանուի...: Վարդենիս գիւղի մէջ մէկ կռիւ եղաւ, 4 Քուրդ 2 Հայ սպանուեցան. յետոյ Քուրդեր Մշոյ կառավարութեան իմաց տուին. 500 զինուոր գիւղին վրայ ղրկեցին. չորս օր այնտեղ մնալով փոքրիկ զաւակունք, կնիկ եւ աղջիկներ բոլոր գէշ վիճակի դարձուցին: Վարդենիս և Արտօնք գիւղերն, ամեն մէկ գիւղ երկու հարիւր տունէն աւելի է, մէկէն աւերակ ըրին»[404]: Տանջված, տառապած հայ գյուղացին ստիպված էր զենք վերցնել, որովհետև նրան այլ ելք չէր մնում, որովհետև պարզ էր, որ հիմնական թշնամին հենց իշխանություններն էին. «ի՞նչ ընենք, մենք քիւրդերու աւերուած չենք,

---

[403] «Արմենիա», թիվ 98, 1889:
[404] «Արմենիա», թիվ 98, 1889:

այլ կառավարութեան աւերուածն ենք. թէ որ կառավարութիւնը անոնց օգնական չըլլար, հացի պէս Քիւրդերն կուտէինք»[405]:

Քրդերի սոսկալի եղեռնագործությունների մասին այդ տարիներին հաճախ և ամենուրեք խոսվում ու գրվում էր, սակայն երբեմն նրանք կատարում էին այնպիսի արարքներ, որ սոսկում էր պատճառում բոլոր նորմալ մարդկանց: Օրինակ՝ Մուշի մեջ մեծաքանակ սպանություններով ու տարատեսակ չարագործություններով չբավարարվելով՝ քրդերը «ողջ ողջ վառած են Արգավանեցի Օհանը»: Իսկ ամենազարմանալին այն էր, որ այդքանից հետո դեռևս լինում էին մարդիկ, ովքեր «անամօթ և լիրբ են այսչափ սոսկալի հարստահարութիւններէ յետոյ դեռ երես կունենան ըսելու թէ Թիւրք կառավարութիւնը բարեխնամ է... Եթէ մէկը յատկապէս կը փակէ իւր աչքեր և կամ արդէն կոյր է և կը յայտարարէ թէ արեւը գոյութիւն չունի»[406], ապա նրան պատասխանելը պարապ ու անիմաստ գործ է: Իհարկե, ամեն տեղ էլ ավազակներ ու ոճրագործներ լինում են, սակայն առաջնորդողի հեղինակի կարծիքով Թուրքիայի բոլոր հայաշատ վայրերում քրդական շատ ցեղեր հաճախակի սպանում ու թալանում էին հայերին, իսկ կառավարությունը, աչք փակելով քրդերի այդ արարքների վրա, պատժում էր այն բոլոր հայերին, ովքեր համարձակություն էին ունեցել իրենց պաշտպանելու համար զենքի դիմելու: Քրդերի հետ «հաշիւ կարգադրելը դիւրին էր. բայց աւազակ Քիւրդին զարնելը Թիւրք կառավարութեան զարնել է»[407] ցավով արձանագրում էր դեպքերի կիզակետում գտնվող հայերից մեկը: Իսկ հոդվածագիրը, այլ ելք չտեսնելով, եզրակացնում է, որ պէտք էր «յեղափոխութեամբ տապալել այդ խեղճ երկրի վրայ» ծանրացող բռնապետությունը:

Ի դեպ, քրդերը շարունակաբար նոյնատեսակ վայրագություններ էին կատարում նաև կայսրության կազմում բնակվող այլազգի

---

[405] Նույն տեղում:

[406] Նույն տեղում:

[407] «Արմէնիա», թիվ 98, 1889:

փոքրամասնությունների նկատմամբ. «Թիւրքիայի բնակիչներէն Յոյներու գիտը այրած և կիներն ու զաւակներն ջարդած են Քիւրդերն...»[408]:

Թուրքական կողմն էլ, տեսնելով հայերի «անհնազանդությունը», մոլուցքով անում էր ամեն ինչ՝ նրանց հնազանդ պահելու համար և դիմում էր ահաբեկումների ու ձերբակալությունների փորձված մեթոդներին. «Թիւրք կառավարութիւնը խելակորոյս դարձած, աջ ու ձախ որի որ պատահի, կուտօրէն կը ձերբակալէ»[409]:

Մուշի մեջ տեղի ունեցած սոսկալի դեպքերի, քուրդ ու թուրք խուժանի կատարած վայրագությունների ու նրանց իշխանությունների կողմից անվերապահորեն պաշտպանելու մասին շատ արձագանքներ էին եղել տեղական ու արտասահմանյան լրագրերում, մինչև անգամ Անգլիայի խորհրդարանում այդ մասին հարցումներ էին եղել: Սակայն արդյո՞ք նմանատիպ բողոքները կարող էին վերջ դնել հայերի անտանելի դրությանը: Իհարկե ոչ: Ձեռքերը ծալած նստելով ու օտարի օգնությունն ակնկալելով միանշանակ հնարավոր չէր ազատվել թուրքական բռնատիրությունից: Ընդհակառակը, այդպիսի «երազական յոյսեր կը թմրեցուներ միայն հայ ժողովրդի հոգեկան կարողութիւնները, վնասակար կը դառնան...»[410]: Անհրաժեշտ էր, որ հայերն իրենք նախ աշխատեին իրենց համար, սովորեին զոհողություններ անել, ուժ գտյացնել մայր հայրենիքի ազատությանն ի նպաստ և թշնամուն զորություն ցույց տալով, ստիպեին նրան զիջումների գնալ, իսկ հակառակ դեպքում նաև ուժով ու արյունով նվաճեին ազատությունը:

«Եթէ Հայաստանի մէջ գտնուողներէն կը պահանջենք որ իրենց արիւն թափեն հայրենիքի անկախութեան համար, Հայաստանէն դուրս գտնուող Հայերն ալ գէթ դրամական զոհողութիւններ անե-

---

[408] «Արմենիա», թիվ 99, 1889:
[409] «Արմենիա», թիվ 101, 1889:
[410] «Արմենիա», թիվ 63, 1889:

լով գործին օգնելու պարտատոր են»[411],- գրում է «Արմենիայի» խմբագիրը: Այնինչ հայերի մեծ մասը, Մ. Փորթուգալյանի կարծիքով, առաջնորդվում էր «փող մի՛ ուզեր ինձնէ, որ չսառիմ քեզնէ» հայտնի ասացվածքով:

Արևմտյան Հայաստանում այդ շրջանում հարստահարություններն ու վայրագությունները ոչ միայն շարունակվում, այլև նոր թափ էին առնում: Դրանց մասին երկրի տարբեր մասերից «Արմենիային» ուղարկված նյութերում, որոնք այնուհետև տպագրվում էին թերթում, առկա են բազմաթիվ վկայություններ: Հատկապես բազմաթիվ են այն նամակները, որոնք նկարագրում են, թե ինչպիսի զարհուրելի պահվածք դրսևորեց բանտից փախած և Մուշի կողմերը վերադարձած հայտնի Մոռան: Նախ՝ նա հավաքում է իր ավազակախումբը, ապա հարձակվում հայկական այն գյուղի վրա, որի բնակիչները համարձակվել էին դատարանում ցուցմունք տալ նրա կատարած բռնությունների մասին: «Այդ գիւղի երեւելի անձերէն մի քանին ձեռք անցունելով և անոնց վրայ քարիւղ (petroleum) թափելով այրեր և բոցերի մատներ է»[412]: Այնուհետև հարձակվում է Արգավանք, Խարց և այլ գյուղերի վրա և՛ ամենուրեք սարսափելի ու աննկարագրելի տմարդի արարքներ կատարում: Իսկ Մուշի գյուղերից մեկում հարսանիքի ժամանակ քրդերը հարձակվում են «հարսնեւորներին վրայ, բոլոր հիւրերը կողոպտեցին, նաեւ հարսին ալ պատիւն բռնաբարեցին. ի վերջոյ հարսնիքի կերակուրներին համար եռացող կաթսաներէ մէկին մէջ նետելով հարսը խաշեցին»[413]:

Իշխանությունները, փոխանակ բռնելու ու պատժելու մեղավորներին, օրըստօրե ավելի էին խստացնում իրենց հայահալած քաղաքականությունը: Օրինակ՝ ձերբակալում են Ա. Մաթիկյան լուսանկարչին միայն այն բանի համար, որ նա եղել էր Եվրոպայում: Հայերին ա-

---

411 Նույն տեղում:
412 «Արմենիա», թիվ 63, 1889:
413 «Արմենիա», թիվ 66, 1889:

հաբեկելու համար Տիգրանակերտում նույնիսկ գիշերները «բանտէն կը թողուին ձերբակալուածները և քաղաքի մէջ ամեն գողութիւն և ոճիր ու շնութիւն գործելէ ետքը կրկին կը վերադառնան ի բանտ...»[414]: Մի օր քաղաքի շուկայի մեջ բոլորի ներկայությամբ մի թուրք տղա հենց այնպես, իր հաճույքի համար հայհոյում ու ծեծում է մի քանի հայ երիտասարդների, բայց երբ հայերը բողոքում են, թուրք տղան անպատկառորեն հայտարարում է, թե «կեավուրները իմ կրօնս անարգած են»[415], և այս հայտարարությունը, չնայած մեծաքանակ վկաներին, բավարար հիմք է դառնում, որ հայերը ձերբակալվեն և բանտ նետվեն: Իսկ երբ հայերի ելույթների մասին լուրերը հասնում են սուլթանին, վերջինս, ըստ ժամանակին տարածված լուրերի, իր մոտ է հավաքում բոլոր նախարարներին և սարսափած բացականչում՝ եթե Եվրոպան իմանա այս ամենի մասին, ես ինչպե՞ս արդարացնեմ ինձ: Իսկ նախարարները հանգստացնում են նրան ու վստահեցնում, որ «եթէ բոլոր Հայ ազգը սրի անցնենք, Եւրոպան երբէք մեզ բան պիտի չասէ..., Եւրոպաի իրաքանչիւր տէրութիւն աշխատում է Թուրքիոյ բարեկամութիւնը ձեռք գցել»[416]:

Թուրքական իշխանությունները հայերին ճնշում էին նաև չափազանց խիստ և ոչնչով չպայմանավորված ու չպատճառաբանված հարկեր հավաքելով: Իսկ եթե որևէ հայ փորձեր հարկահավաքին (մուխթար) պատասխանել, որ չունի պահանջվող գումարը կամ ինքն արդեն վճարել է այդ տուրքը, ապա մուխթարը «ծեծելով կառաջնորդեր անոր դէպի բանտ»[417]: Պարզապես թուրքերն այնքան էին մտահոգ հայերի ազատագրական մղումներից, որ նրանց համար «Հայաստան» բառն ուղղակի սարսափելի ուրվական էր հիշեցնում: Նրանք պատրաստ էին կոկորդում խեղդել այն ձայնը, որը կհամար-

---

[414] «Արմէնիա», թիվ 62, 1889:
[415] «Արմէնիա», թիվ 63, 1889:
[416] «Արմէնիա», թիվ 104, 1889:
[417] Նույն տեղում:

ձակվեր ի լուր աշխարհի լսելի դարձնել հայերի ամենաանմեղ որևէ գանգատ: Նույնիսկ օրենքները Թուրքիայում երկու նշանակություն ունեին՝ «մէկը իրան տաճիկ կառավարութեան համար, միաը Եւրոպացիներին խաբելու»[418]: Անհրաժեշտ էր թեկուզ աննշան ծանոթ լինել Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակին՝ հասկանալու համար, թե ինչ աստիճանի տգիտության ու խավարի պայմաններում էին գոյատևում հայերը, թե ինչպիսի ու ինչ չափերի կամայականություններ էին կատարվում այդ երկրում ամեն օր և ամեն ժամ:

Նվաճելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքերը հենց առաջին օրվանից աղքատություն և խավար բերեցին իրենց հետ Միջին Ասիայի անապատներից, ամենուրեք ավեր ու թշվառություն էին տարածում իրենց տիրապետության ողջ ընթացքում: Վերջապես «նոքա ոչ միայն կանգնեցրին հայկական քաղաքակրթութեան զարգացումը, այլ և նորան դարերով յետ մղեցին»[419]: Հայը, դարեր շարունակ միշտ բռնություն, անարգանք տեսնելով, կորցրել էր իր արիությունը, դեմքն ու ինքնասիրությունը, սակայն լավ էր, որ աստիճանաբար սկսել էր վերազարթնել դարավոր ընդարմացումից, ուղղել մեջքը և ազատության դրոշ պարզել խավարի իշխանության դեմ:

1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումից հետո ենթադրվում էր, որ Օսմանյան կայսրությունում արմատական փոփոխություններ կլինեն, որոնց արդյունքում արևմտահայության վիճակը ևս կբարելավվի: Սակայն, չնայած ամպագոռգոռ այդ խոստումներին, ըստ էության նրանց վիճակի մեջ որևէ էական բարելավում տեղի չունեցավ: Ավելին, շուտով վրա հասած ողբերգական իրադարձությունները եկան ևս մեկ անգամ ապացուցելու, որ թուրքը նույն թուրքն էր, և նրա տմարդի էությունը ոչնչով չէր փոխվել:

---

[418] «Արմէնիա», թիվ 85, 1889:
[419] «Արմէնիա», թիվ 85, 1889:

3.2. Հայ կյանքի թերությունների քննադատությունը «Արմենիա»-ի հրապարակումներում

«Արմենիա» պարբերականի անդրանիկ համարում հատկապես մեծ թիվ են կազմում հայ ժողովրդի՝ ժամանակի ոգուն չհետևող ընթացքի ու արատավոր կողմերի լուսաբանմանը նվիրված հրապարակումները: Հոդվածագրի կարծիքով, որը հեռու չէր իրականությունից, մեր ժողովուրդը տարբեր պատճառներով հետ էր մնացել համաշխարհային զարգացումներից: Դա էլ նրա հետամնացության ու օտարի տիրապետությունն այդքան երկար հանդուրժելու կարևորագույն հետևանքներից էր: Թերթի տեսանկյունից արատավոր կողմերից էին նաև լրագրերի հանդեպ անտարբերությունն ու ընթերցասեր չլինելը: Քանի որ ընթերցանության տարածված լինելու շնորհիվ նոր մտքեր, հայտնագործություններ ու գաղափարներ են փոխանցվում միմյանց, տարածվում, որոնց շնորհիվ ուսուցիչը, քաղաքագետը, արհեստավորն ու մշակը «յառաջադիմութիւններ կունենան» անկասկած: Այնպես որ, եզրակացնում էր պարբերականը, «լրագիրը հացին չափ պէտք է»[420] մեր ժողովրդին:

Մամուլը զարգացած և առաջադեմ ազգերի համար կարևոր գործոն էր՝ կյանքում տեղի ունեցող զարգացումներին ու փոփոխություններին տեղյակ լինելու, հասարակական, մշակութային անցուդարձին մոտ լինելու համար: Հայ իրականության մեջ մամուլի միջոցով ժամանակի առաջավոր ընթացքին, գաղափարական նոր ուղղություններին հետևելուն խանգարում էին մի շարք օբյեկտիվ պատճառներ, դրանցից էին, օրինակ՝ ժողովրդի մեծ մասի անգրագիտությունը, սոցիալական ծանր վիճակը և շատ դեպքերում նաև մամուլի բացակայությունը: Այնպես որ հայ ժողովրդի համար ազատ, անկաշկանդ պարբերականների գոյությունն օդի նման անհրաժեշտ էր: Քանի որ դարավոր ընդարմացումից հայ մարդուն արթնացնելու, սեփական

[420] «Արմենիա», թիվ 85, 1889:

ինչքին, պատվին ու կյանքին տեր լինելու համար սթափվել, ուշքի գալ էր անհրաժեշտ: Դա կարող էր իր սրտացավ հրապարակումներով ու կազմակերպվելու, պայքարի ելնելու կոչեր անող, ժողովրդի ցավ ու դարդին դարման անելու, օտարի լուծը թոթափելու ազգանվեր գործին նվիրված պարբերականը. «Ներկայ դրութեան մէջ խիստ զգալի եղած էր ազգային մի ազատ թերթի պակասութիւնը,- այդ վեհ գիտակցությամբ արձանագրում էր «Արմենիան», ապա շարունակում,- «Արմէնիա»ն իւր առաջին թիւէն սկսաւ բողոքել թիւրք կառավարութեան պաշտօնէից կողմէն հայոց ազգին եղած հարստահարութեանց և նոցա գործած զեղծումներու դէմ»[421] և, պայքարի դրոշ պարզելով, կոչ արեց ոտքի կանգնել ու թշնամու դարավոր լուծը թոթափել:

Արևմտյան Հայաստանում տիրող թուրքական իշխանություններին տմարդի և անօրեն գործելակերպն ամեն անգամ աղաղակող ապացույցներ էր ներկայացնում՝ կարծես ցանկանալով դրանով մարտահրավեր նետել եվրոպական այն տերություններին, որոնք վավերացրել էին Բեռլինի դաշնագիրը, որի 61-րդ հոդվածը պարտավորեցնում էր Թուրքիային բարենորոգումներ իրականացնել և բարելավել հայության վիճակը՝ շարունակաբար հանդես գալով որպես «թէ՛ ամբաստանող և թէ՛ դատաւոր, կը դատէ և կը դատապարտէ, եթէ մի քրիստոնեայ ստրուկ յանդգներ է իւր անձ պաշտպանել մի աւազակ թիւրքի դէմ»: Թուրքերն ու քրդերն էլ կառավարության «պաշտպանողական և աչառու ընթացքէն քաջալերուած, կը կողոպտեն, կը բռնաբարեն, կսպաննեն, ամեն ինչ կանեն համարձակ և աներկիւղ»[422], որովհետև գիտեն, որ վերջում անպատիժ են մնալու և դեռ ավելին՝ այդ արարաքների համար խրախուսվելու են: «Հիմա ո՞վ է մեղաւոր Հայաստանի մէջ հարստահարութիւնները վերջ չը գտնելուն համար. քի՞ւրտը որ անուղղակի կը քաջալերուի իւր ընթացք շարունակելու հա՛յը որ զինք պաշտպանելու ամեն միջոցներէ զրկուած է օրենքով.

[421] «Արմէնիա», թիվ 11, 1885:
[422] «Արմէնիա», թիվ 20, 1885:

թէ թի՞ւրք կառավարութիւնը որ անձնապաշտպանութիւնը իբր ոճիր կը պատժէ»[423],- տառապանքով լի, զայրացկոտ հարց է տալիս բազմաչարչար խմբագիրը:

Երկար պարզաբանելով «ազգ» և «ազգություն» եզրույթները[a] «Արմենիա»-ն, ելնելով իր ժամանակի իշխող տեսակետներից, բացատրում էր, որ յուրաքանչյուր ազգ առանձին գոյատևելու և իր անկախ պետությունն ունենալու իրավունք ունի: Սակայն այդ թեզի հակառակորդներն էլ պնդում էին, որ ոչ բոլոր ազգերն են, որոնք ունակ են և իրավունք ունեն ինքնակառավարվելու: Հետևապես, ըստ Ռուճուքցի հոդվածագրի, «այս յատկութենէ զուրկ ազգեր պէտք ունին քաղաքական առաքինութիւններով օժտեալ ազգերի հովանաւորութեան»[424]: Իսկ ինքնակառավարվելու իավունք կստանային այն ազգերը, որոնք հանդես կբերեին այդպիսի հատկանիշներ և անպայման ինքնակառավարվելու ձգտում, սրտի արիություն և սեփական արժանապատվության գիտակցում: Մենք՝ հայերս, հոդվածագրի կարծիքով, համեմատաբար ավելի շատ ինքնակառավարվելու ընդունակություն և արիություն ենք ցույց տվել պատմական տարբեր ժամանակներում, քան «մեզ ճնշող Թիւրքը, Քիւրտը և Չէրքեսը, հետևաբար ակներև է մեր իրաւունքը մեզմէ ամեն մասով շատ ստորին բարբարոս տարրերի մէկ կողմ նետելու»[425]: Եթե այդ ժամանակ հայերի ուժը բավարար չէր իրենց ազգային իրավունքները գործադրելու, ապա պետք չէր հուսահատվել կամ ոտիշի օգնությանն ապավինել, այլ հարկավոր էր, որ հայերը, իրենք համախմբվելով ու կազմակերպելով, հզորանային և համառորեն ու արժանապատվությամբ պաշտպանեին իրենց ազգային «ամեն իրաւունքներն ու առանձնաշնոր-

---

[423] Նույն տեղում:
[424] Նույն տեղում:
[425] «Արմէնիա», թիվ 20, 1885:

հումները և միանգամայն մեր արժանաւորութիւնը և ինքնօրինութեան իրաւունքը ցոյց տալով քաղաքակիրթ աշխարհի»[426]:

Հետագայում ևս անդրադառնալով ազգի ու ազգայինի խնդիրներին՝ «Արմենիան» փորձում էր ներկայացնել հայությանը, ցույց տալ նրա դրական հատկանիշներն ու թերությունները՝ բնութագրելով հայ ժողովրդին որպես պատերազմ չսիրող, անկախության վեհ գաղափարն իր մեջ անխաթար պահող, «ճարպիկութեան և ընչաքաղցութեան համար ճաշակով և զգօնութեամբ» աչքի ընկնող և այլ դրական հատկանիշներով: Դարեր շարունակ որպես շնորհալի վաճառականներ, սեղանավոր-ներ, աշխարհահռչակ ձեռագործ վարպետներ ճանաչված հայերը, սակայն, առիթը ներկայանալու դեպքում չկուլեցին, իրենց անձն ու ինչքը պաշտպանելուց խուսափեցին և դրանք պատճառաբանում էին մի շարք հանգամանքներով: Նախ՝ կայսրության մեջ բնակվող մյուս ժողովուրդների համեմատ իրենց նվազ թվաքանակով: Ապա նրանով, որ առավել աշխույժ, քաջ, կազմակերպական հատկանիշներով օժտվածները, բռնաճնշումներից խուսափելով, թողել-հեռացել էին երկրից: Այնուհետև ասպատակությամբ և թալանով ապրող քրդերն էին մեր հարևանները, որոնք առիթը ներկայանալու դեպքում ավելի մեծ վնասներ էին պատճառում հայերին: Վերջապես, շարունակաբար հարձակումների ենթարկվելով թուրք, քուրդ, չերքեզ և այլ անուն ու հատկանիշներ կրող կիսավայրենի ցեղերի կողմից, «կոտրած է իրենց մէջ զօրութեան ոգին», և այն հայը, որ հանճարեղ զորապետներ է տվել պարսիկին, ռոային, «շահեցրել Սուլթանի գանձերը», կարգավորել մյուս պետությունների հետ հարաբերությունները, կերտել է ու կառուցել հոյակապ շինություններ ու տաճարներ, ապրելով դարեր շարունակ վախի ու զրկանքների պայմաններում՝ միակամ ու անվախ չէր բարձրացնում զենքը անարգ ոսոխի դեմ: Պակաս կարևոր նշանակություն չուներ նաև այն հանգամանքը, որ

---

[426] Նույն տեղում:

հայերի ստվար մեծամասնությունը դարերի ընթացքում տոկաց ու հաճախ նահատակվեց հանուն քրիստոնեական հավատի, «նախամեծար համարեց իրենց կեանք նուիրել քան թե մահմետականութիւն ընդունիլ», իսկ քրիստոնեական տերությունները միայն հեռվից դիտում էին այդ գողգոթան և մատը մատին չէին տալիս: Հայկական սերունդն էլ, որ «մարդկութեան խիստ եզակի և շահեկան ցեղերէն մին է»[427], օր-օրի թուլակամ էր դառնում, հրաժարվում կռվելուց: Հենց Մ. Փորթուգալյանի, նրա «Արմենիայի» և իրենց գաղափարակից փաղանգի մեծագույն ավանդը հայոց վերազարթնումին նպաստելն էր: Իսկ թե ինչ միջոցներով էր հնարավոր հասնել սեփական ճակատագիրը տնօրինելու, այսինքն՝ ազատ ու անկախ ապրելու գոյավիճակին, «Արմենիայում» առկա էին տարբեր մոտեցումներ: Հանգիստ, աստիճանական ու առանց արյան բաղձալի ազատությանը հասնելու կողմնակիցները պնդում էին, որ հայ ժողովուրդը «միայն կուլտուրական կեանքով առաջ ընթանայ, սրանից դուրս այլ միջոցների դիմելը կորստաբեր կը ըլլա»[428]: Աստիճանական զարգացման ուղու կողմնակիցները «մոռանում էին», որ իրենց առաջարկած ճանապարհն արդյունավետ կարող էր լինել միայն այն դեպքում, երբ հայ ժողովրդին տիրող և նրան շրջապատող հարևան ազգերը «նոյնպէս կուլտուրական ազգեր լինէին, այլ ոչ թէ արիւնռուշտ յափշտակիչ բաշիբուզուկներ»[429]: Որովհետև ամբողջ պատմությունը վկայում է, որ «Քուրդի, Թուրքի, բաշիբուզուկների և այլ սրանց նման բարբարոս ցեղերի բնածին յատկութիւնն է քանդելը և աւերելը»[430]: Այս պայմաններում օդի նման անհրաժեշտ էր դառնում, որ Հայաստանը նախ ավերիչ հարձակումներից ազատվեր, ապա «մարդկային պատիւը լիրբ բարբարոսներին ճանչցնել տուող ազատարար հրացանին» ապավիներ:

---

[427] Եզական ազգ մը, «Արմէնիա», թիվ 46, 1897:
[428] «Արմէնիա», թիվ 60, 1886:
[429] Նույն տեղում:
[430] Նույն տեղում:

Նախկինում ազատ խոսելն ու գրելը մեծ քաջություն էին համարվում, իսկ հետո իրադրությունն սկսեց կամաց-կամաց փոխվել, և դա ակնհայտ երևում է «Արմենիա»-ի համարների թեկուզ թռուցիկ ուսումնասիրությունից: Տպագրված նյութերը հետզհետե ավելի ու ավելի համարձակ էին դառնում, պահանջկոտ ու ազատության կոչերով լի: Այդ զարգացումը հատկապես ցայտուն երևում է թերթի գլխավոր տեսաբան Մ. Փորթուգալյանի, ապագա Հնչակյան կուսակցության հիմնադիրներից՝ «Լեռենց» - Ավետիս Նազարբեկյանի, ժամանակի նշանավոր մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ «Կոդան»-Մատթեոս Շահազիզյանի և այլոց տեսական-վերլուծական, ծրագրային հոդվածներում: Այդ հրապարակումներում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ հարկավոր է այլևս լուրջ գործով զբաղվել և խոսքից անցնել գործի: Խոսելը համեմատելով սերմ ցանելու, իսկ գործելը ծլած բույսը սրտացավ խնամելու գործընթացների հետ, Մ. Փորթուգալյանն աներկբայորեն հայտարարում էր. «Գործելու ժամն է հասել» և ավելացնում, որ հարկավոր է ճշտել, թե յուրաքանչյուր հայ մարդ, ում համար թանկ են հայրենիք ու սեփական ազգը, ինչ և ինչպես պետք է անի: Տարիների փորձից ելնելով՝ Մ. Փորթուգալյանը եզրակացնում էր. «Հայի համար Ազգային պաշտպանութեան միակ միջոց փրկարար զէնքն է»[431], ապա ավելացնում, որ բոլոր հայերը, անկախ բնակվելու և գտնվելու վայրից, մեղապարտ կլինեն, եթե ազգային դատի համար մեկ մարդու նման չկազմակերպվեն և հարկ եղած դեպքում հնարավոր ու անհնարին բոլոր միջոցները չներդնեն ազգային փրկության գործի համար: Կազմակերպվելու, միջոցներ և ուժ գոյացնելու համար, հեղինակի կարծիքով, ժամանակ և միջոցներ էին հարկավոր, որոնք հայթայթելու համար վայրկյան անգամ հապաղել չէր կարելի: Հակառակ դեպքում, ինչպես 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, երբ հայերի ազա-

[431] «Արմէնիա», թիվ 61, 1886:

տության համար բավական նպաստավոր պայմաններ էին հասունացել, սակայն քանի որ մենք պատրաստ չէինք, պահը բաց թողեցինք ու դատարկածեռն մնացինք: Միևնույն ժամանակ Մ. Փորթուգալյանը նշում էր, որ պետք չէ անտեսել նաև խոսքի ազդեցության ուժը: Հետևապես, հարկավոր է «խօսիլ և միանգամայն գործել. պէտք է գրել և միանգամայն կազմակերպուիլ... շարժել տակաւին դանդաղ յետամնացներին և անշարժ անտարբերներին»[432]:

Շարունակելով թեման՝ Վարանզադէն հոդվածագիրը, դիմելով բոլոր հայերին, հարց էր բարձրացնում՝ ինչո՞վ ես մարդ՝ այդ հարցը համարելով ընդհանուրի խղճի անողոք ձայնը: Ապա առաջարկում՝ ժամանակն է, որ յուրաքանչյուր հայ խորտակի ստորացուցիչ բոլոր նախապաշարմունքները և թեկուզ արյան գնով իր համար վաստակի արժանապատիվ «մարդ» կոչումը: Դա հոդվածագրի կարծիքով հնարավոր կդառնար միայն հայրենիքի ազատությանն անմնացորդ նվիրված պայքարով, նրա համար ոչինչ չխնայելով, քան թե թողնելով, որ հայրենիքը «թունաւորուի Տաճկաց անբարոյականացուցիչ հարստահարութեանց տակ և հետևապէս թունաւորէ ապագայ սերնդի բարոյական կազմուածքը»[433], իսկ անտարբերությունը նա համարում էր աններելի ոճրագործություն: Մարդը նրանով է մարդ, շեշտում էր հեղինակը, որ ունի մարդկային տարրական ազատ իրավունքներ, իսկ ազգային արժեքներն անաղարտ պահպանելու համար պատրաստ են պայքարելու լոկ նրանք, ում մոտ հոգեկանն ու բարոյականը կարողանում են գերիշխել նյութականի նկատմամբ: Ստեղծված պայմաններում հոդվածագիրը եզրակացնում էր, որ հայերին մի ելք էր մնում, որպեսզի շարունակեին իրենց մարդավայել գոյությունը և քայլ անել դեպի առաջ, որը ձևակերպվում էր հետևյալ կերպ՝ «ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ և այն էլ ո՛չ թէ խօսքով, այլ գործով»[434]:

---

[432] «Արմէնիա», թիվ 61, 1886:
[433] «Արմէնիա», թիվ 62, 1886:
[434] Նույն տեղում:

Հեղափոխությունից բացի, (որն այս դեպքում ավելի շուտ ազատագրական պայքարի իմաստն ուներ – Ս. Ս.), եվրոպական կառավարություններին դիմումներ ուղղելու կողմնակիցներին բացատրում էր Մ. Փորթուգալյանը, անհրաժեշտ էր և կարևոր ավելի զգոն ու զգույշ լինել, քանի որ «այդպիսի դիմումներ, ապարդիւն մնալէ զատ, Թիւրք կառավարութեան կասկածները և չարակամութիւնը հրաւիրած են իրենց վրայ»[435]: Հստակ էր մեկ բան, որ թուրքական կառավարությունը բոլորովին տրամադրված չէր բարենորոգումներ կատարելու իր ասիական տիրույթներում, քանի որ համոզված էր, թե ժողովրդին քաոսի ու «վայրենական վիճակի մէջ պահելով է որ ինք պիտի կրնայ միշտ գերազանց վիճակի մէջ գտնուիլ»[436]: Ամբողջովին չմերժելով դիմումներ ուղղելու գործառույթի օգտակարությունը, իսկ դիմումներ կատարելու ժամանակահատվածը համարելով «հայկական խնդրի մանկական շրջանը», իր ժողովրդի ցավով տառապող խմբագիրը հայությանը կոչ էր անում կրթական մակարդակով ու նյութապես այն աստիճան հզորանալ, որ ողջ կայսրության կտրվածքով տնտեսության ու բանկային բնագավառներում դառնա թելադրող, ուղղորդող, հետևապես և քաղաքական ասպարեզում՝ վճռական խոսքի իրավունքի տեր: Իսկ եթե այդ միջոցներով հնարավոր չլիներ որևէ դրական տեղաշարժ ապահովել Հայկական հարցի լուծման առումով, մանրակրկիտ նախապատրաստվել, կազմակերպվել և հարմար ու նպաստավոր պահին սկսել «ՊԱՅՔԱՐ ԲՌՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ»[437]:

Ազգային ազատագրական շարժման սկզբից ի վեր հայոց ցավերով տառապող, սեփական ժողովրդի ազատությանը ձգտող ու իր ողջ գիտակցական կյանքն այդ սուրբ գործին նվիրաբերած Մ. Փորթուգալյանը ամեն անգամ, երբ ականատես էր դառնում ազգային ո-

---

[435] «Արմենիա», թիվ 37, 1885:

[436] Նույն տեղում:

[437] Նույն տեղում:

որոշ գործիչների անխոհեմ գործելակերպին ու անհաշվենկատ քայլերին, խոր ցավ էր ապրում: Քայլեր, որոնք հանգեցնում էին անցանկալի երևույթների, ժողովրդին կանգնեցնում կոտրած տաշտակի առաջ, իսկ հաճախ էլ նույնիսկ սովի ու զանգվածային կոտորածների մատնում: Իրադարձություններ, որոնք նյութական ու մարդկային մեծաքանակ կորուստներից բացի, բերում էին խոր հիասթափություն, տրամադրությունների անկում, ժողովրդի մեջ այլևս պայքարելու ցանկության իսպառ կորուստ, համատարած անտարբերություն ամեն ինչի նկատմամբ և որ վատթարն էր՝ զանգվածային արտագաղթ: Երկիրը դատարկվում էր, անտեր մնում, իսկ մեր թշնամիներն ու նրանց քսու կամակատարները քաղցած բորենիների նման անմիջապես հարձակվում էին, կլանում ամեն ինչ, տեր դառնում մեր հող ու ջրին, մեր պապենական տարածքներին ու տներին, իրենց անամոթաբար հայտարարում տեղացիներ, մեր ապուպապերի մասունքները յոտացնում, նույնիսկ հավատի մեր տները՝ եկեղեցիները, զանգվածաբար մզկիթների էին վերածվում էին, իրենցը դարձնում:

Հետաքրքիր են «Արմենիայի» ու նրա խմբագրի մոտեցումները գաղթելու ցավալի իրողության վերաբերյալ. «Գաղթականութիւնը ոչ միայն ինքնասպանութիւն է հայու համար, այլ և ազգասպանութիւն: Հայաստան առանց Հայու, Հայն առանց Հայաստանի կորած են»[438],- գրում էր թերթը, այնուհետև բացատրում, որ թուրքական իշխանություններն ամեն տեսակ բռնարարքներով ու ճնշումներով, ինչպես նաև հայերին ինքնապաշտպանության բոլոր միջոցներից զրկելով ու «զինեալ վայրենի Քրդին յանձնելով», «թուրքաց պէս կեղեքելու, սպանելու և կողոպտելու»[439] հեռանկարով դեպի Թուրքիա ձգտող չերքեզների գրկաբաց ընդունելով, նպաստում են, ստիպում հայերին՝ թողնել հայրենի եզերքներն ու գաղթել օտար երկրներ: Հայ ժողովուրդը, որին դարեր շարունակ բնորոշ են եղել հողը սիրելու ունակությունը,

---

[438] Գաղթականութեան վտանգներ, «Արմէնիա», թիվ 22, 1893:
[439] Գաղթականութեան վտանգներ, «Արմէնիա», թիվ 22, 1893:

աշխատասիրությունը, չափավորությունն ու հավատարմությունը, երբեք կամավոր չի լքել իր հայրենի տունն ու ընտանիքը, այլ անուղղորմ հալածանքն ու կյանքը կորցնելու իրական վտանգներն էին, որ նրան դարձրել էին տնավեր ու թափառական: «Հայն իր գլուխն ազատելու համար թողուց երկիրը և փախաւ», իսկ քրդերն ու թուրքերը, հայոց լքյալ հողերին տիրանալով, «ամայութիւնը կրկնապատկած են»[440]: Երբեք քուրդն ու չերքեզը, թուրքական կողմին զգուշացնում էր Մ. Փորթուգալյանը, որ միայն թալանով ու կողոպտելով կարող են գոյատևել, շարունակ իրար միս էին ուտում, մշտական հակասությունների մեջ էին, հայի չափ պետությանը հավատարիմ և օգտակար չէին կարող լինել, «անոնց քաջութիւն անզէն անպաշտպան Հայու վրայէն անդին չանցնիր»: «Օտար սերմ Հայաստանի հողին վրայ արմատ բռնած չէ»[441],- գրում էր թերթը, սակայն պատմության ընթացքն ու ժամանակը բոլորովին այլ բան ցույց տվեցին, որ նույնիսկ ամենաանորակ սերմը բերրի հողում կարող է աճել, պտուղ տալ:

Մ. Փորթուգալյանն «Արմենիայում» մի շարք այլ խնդիրներին զուգահեռ քննարկում էր նաև ազգի ու եկեղեցու հարաբերակցության հարցերը՝ այնքանով, որքանով դա առնչվում էր ազգային-ազատագրական շարժմանը: Ազգությունը համարելով զանազան կապերով իրար հետ «միացած մարդերի» մի մեծ ընկերություն՝ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ Արևելքում ազգությունները տարբերվում են ցեղային, կրոնական և լեզվական միությամբ: Ազգային պատմական հայրենիքի ըմբռնումը երբեմն ընկալվում էր կրոնական պատկանելության գործոնով: «Հայ մը մահմետականութիւն եթե ընդունի, Տաճիկ կը դառնայ»,- կարդում ենք «Արմենիայում,-իսկ Արևելքում ընդհանրապես «ազգայնութեան մը գլխաւոր յատկանիշը կը կազմէ կրօնքը»[442]:

---

[440] Նույն տեղում:

[441] Գաղթականութեան վտանգներ, «Արմէնիա», թիվ 23, 1893:

[442] Հայ ազգը եւ եկեղեցին, «Արմէնիա», թիվ 2, 1906:

Օսմանյան կայսրության ողջ տարածքում[443] դարեր շարունակ «պաշտօնական թուղթերի մէջ Էրմենի միլլէթի (Հայ ազգ) կանուանէ միայն լուսաւորչական Հայերը»[444]: Այդպես էր նաև Ռուսաստանում, երբ որևէ հայ ռուսադավան էր դառնում, նա ինքնաբերաբար դադարում էր հայ լինելուց և բոլոր փաստաթղթերում ներկայացվում էր ազգությամբ ռուս: Օրինակ՝ ժամանակին երբ Փարիզում լույս տեսնող «Թեմփս» («Temps») լրագրի խմբագիր Շարլ Գուդուլին հարցրել էր հանրահայտ Լոռիս-Մելիքովին ազգային պատկանելության մասին, նա անկեղծանալով պատասխանել էր, որ «Հայաստան մը կայ, բայց Հայեր չկան[445]: Ես Ռուսիա ծնած եմ, իմ հայրենիքս Ռուսիան է և ազգով Ռուս եմ, բայց հայադաւան Ռուս մը»[446]: Սակայն եվրոպական երկրներում, Ամերիկայում և մի շարք այլ վայրերում ազգային պատկանելությունը որոշվում է տարածքային գործոնով: Այսինքն՝ որ երկրում մարդը ծնվում էր, ինքնըստինքյան համարվում էր այդ ժողովրդի ներկայացուցիչը: Լեզուն, կրոնը, ազգը ոչ մի նշանակություն չունեին, դրա համար էլ երբ որևէ եվրոպացու ասվում էր, թե հայ եմ և Թուրքիայում կամ Ռուսաստանում եմ բնակվում, չէր կարողանում ըմբռնել հարցի էությունը:

Քանի որ մենք դարեր շարունակ պետականություն չենք ունեցել, գրում էր Մ. Փորթուգալյանը, մեր ազգային պատկանելությունը հնարավոր էր պահպանել ազգակցական կապերի, լեզվի և եկեղեցու միջոցով, որոնք այլ ազգերի մոտ թույլ գործոններ են եղել, իսկ մեզ համար միակն էին ու որոշիչները, ահա թե ինչու մենք «պինդ բռնենք ատոնք՝ մեր հայ ազգութիւնը չկորսնցունելու համար»[447]: Մեզ՝ հայերիս

---

[443] Այպես էր նաև Ռուսաստանում, Պարսկաստանում և մնացյալ բոլոր վայրերում:
[444] Հայ ազգը եւ եկեղեցին, «Արմէնիա», թիվ 2, 1906:
[445] Իսկ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սայիդ փաշան, ճիշտ դրան հակառակ, բանակցություններից մեկի ժամանակ հայտարարում էր, «թե Հայաստան մը չկայ, այլ Հայեր միայն կան»:
[446] Հայ ազգը եւ եկեղեցին, «Արմէնիա», թիվ 2, 1906:
[447] Հայ ազգը եւ եկեղեցին, «Արմէնիա», թիվ 2, 1906:

համար բոլոր ժամանակներում և բոլոր դեպքերում պետք է ուղենիշ լինի այն պարզ ճշմարտությունը, որ անկախ նրանից, թե որ երկրում ենք բնակվում, ինչ լեզվով ենք խոսում, ինչպիսի կրոնական և գաղափարական համոզմունքներ ունենք, պետք է հստակ գիտակցենք մեր հայ լինելը և բոլոր միջոցներով տեր կանգնենք այդ սկզբունքին:

Շարունակելով պարզաբանել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության ուղիներն ու հնարավորությունները՝ Մ. Փորթուգալյանն «Արմենիայում» գրում էր, որ հայերին շատ են խանգարել մի քանի հոռի սովորություններ ու հատկապես՝ տգիտությունը: Թեև ոչ մահացու, բայց բավական վնասակար էր այն, որ հայերի շրջանում տարածված էր բամբասանքի ախտը: Քննադատությունը չմերժող Մ. Փորթուգալյանը գրում էր, որ քննադատությունն անհրաժեշտություն է, «նա խթան մէ յառաջադիմել տալու համար», սակայն կեղծ ու պատիր հերյուրանքներ տարածելը խիստ վտանգավոր է, դրա համար ժողովուրդը պոռոտախոսներին «պէտք է հասկցունէ թե ինք բամբասանք մտիկ ընելու սէր ու յօժարութիւն չունի»[448], որպեսզի հնարավոր դառնար բաղձալի հաղթանակին հասնել:

Մյուս կարևոր թերությունը հայերի՝ «դիվանագիտություն» բառի իսկական իմաստի չիմացությունն էր ու դրա նշանակության անգիտացումը, ինչն էլ «գլխաւոր պատճառներէ մին եղած է Եվրոպայի վրայ մեր չափազանց յոյսեր դնելուն»[449]: Հեռատես խմբագրի կարծիքով հայերը չափից ավելի միամիտ էին՝ հավատալու համար, թե եվրոպական մեծ տերությունները «լոկ մեր վրայ գթալով կուգան մեզ կը ազատեն» և դա այն դեպքում, երբ այդ նույն Եվրոպան նույնիսկ փոքրիկ շահ ունենալու համար չէր ափսոսում իր սեփական զավակներին էլ զոհելու. «մի՞թէ պիտի վարանի մեզի պէս օտար փոքր ազգ մը զոհելու»[450],- իրավացիորեն հարցնում էր Մ. Փորթուգալյանը: Շրջահա-

---

448 Բամբասանքի սէրը, «Արմենիա», թիվ 20, 1897:

449 Եւրոպական դիւանագիտութիւնը եւ հայերը, «Արմենիա», թիվ 75, 1897:

450 Նույն տեղում:

յաց տեսաբանը կոչ էր անում բոլոր հայերին սթափվել, զգուշորեն ու մանրամասն վերլուծել կատարված իրադարձությունները՝ փոխանակ աջ ու ձախ, սրա-նրա հասցեին մեղադրանքներ հնչեցնելու, վեր հանել ու գիտակցել հատկապես սեփական սխալները՝ դրանք չկրկնելու, դրանցից ապագայում զերծ մնալու համար. «Մենք փոխանակ մեր սխալները տեսնելու, հարկավոր զգուշութիւններ ձեռք առնելու, եղած ճգնաժամէն կարելի եղածին չափ քիչ վնասով պրծնելու համար»[451], պիտի նախ գիտակցենք, որ յուրաքանչյուր պետություն առաջնորդվում է նախ և առաջ իր քաղաքական ու տնտեսական շահերով:

Այս ամենին ականատես մեր քաղաքական այրերը, կարծես կուրացած, մոռացած իրենց կոչումն ու ժողովրդին անշահախնդիր ծառայելու բարձրագոչ խոստումները, զբաղված էին երբեմն այնպիսի խնդիրներով, որոնք մեղմ ասած ո՛չ տեղին էին այդ ժամանակ ու այդպիսի պայմաններում, ո՛չ էլ անհրաժեշտ: Այդպիսի ոչ ցանկալի երևույթներից էր, օրինակ, այսպես կոչված «բաց ու գոց»-ի խնդիրը: Դրա բովանդակությունն այն էր, որ XX դարի սկզբին հայ քաղաքական կուսակցությունների որոշ անխոհեմ գործիչներ փորձում էին եկեղեցական բեմերն օգտագործել իրենց քարոզչական նպատակներով, ինչին, բնականաբար, ընդդիմացան ժողովրդի մեծ մասն ու շրջահայաց մտավորականությունը: Քանի որ վերջինների տեսակետով եկեղեցին հոգևոր կենտրոն էր և պիտի հեռու մնար քաղաքական արկածախնդրական տարատեսակ մոտեցումներից:

«Արմենիա»-ն Օրմանյան պատրիարքի հրաժարականի պահանջների կապակցությամբ, անդրադառնալով այդ հարցերին, ընդգծում էր, որ մենք՝ հայերս, զրկված ենք մեր իշխանության ու գործադիր մարմիններն ունենալու հնարավորությունից: Միակ համախմբող կառույցը՝ լավ թե վատ, մեր եկեղեցին է, որը «թէև թնդանօթ և զորաբանակներ չուներ զինք իբրև իշխանութիւն յարգել տալու համար»[452],

---

[451] Նույն տեղում:

[452] Օրմանեան պատրիարք եւ «չպիտի յիշուի», «Արմէնիա», թիվ 6, 1899:

բայց բարոյական ու հոգեկան զորությունն ուներ, ուստի երբեք պետք չէր եկեղեցիները դարձնել քաղաքական շահարկումների առարկա և զրկել ժողովրդին նաև այդտեսակ իշխանությունից, համախմբող ուժից ու նաև հայ մարդու հոգս ու ցավի միակ ապավենից, վերջապես Հայկական խնդրի միակ հետապնդողից: Մեր քաղաքական կառույցները, առավել ևս կուսակցությունները «պէտք է կանգ առնեն եկեղեցիի դուռին առջև և անկէ ներս չմտնեն, եկեղեցին պէտք է հեռու մնայ այդպիսի կռիւների ասպարէզ դառնալէ»[453]: Այս առումով Մ. Փորթուգալյանը կարևորում էր նաև պարբերականների, նրանց խմբագիրների ու մյուս հեղինակների ունենալիք կարևոր դերակատարությունը ժողովրդին ճիշտ ուղղորդելու և անկանխատեսելի հետևանքներից զերծ պահելու համար, քանի որ մեր թշնամիներն ակնդետ հետևում էին, հաճախ կրակին յուղ լցնում, կրքեր էին բորբոքում, որ հեշտությամբ իրականացնեին իրենց որդեգրած «բաժանիր, որ տիրես» գործելաոճը: «Իր կոչում ըմբռնող հայ խմբագրի պարտականությունն է առաջնորդել,- գրում է Մ. Փորթուգալյանը,- հանրային կարծիքին և ոչ թէ զանազան կողմերէ փչող քամիների առջև ինկած, անոնց հոսանքէն մղուիլ դէպի այս ու այն կողմ»[454]: Այսինքն՝ վաստակաշատ խմբագիրն առաջարկում էր ցանկացած, այդ թվում և եկեղեցիների հարցում, ազգանպաստ դիրքորոշում ունենալ և տուրք չտալ անպատեհ և ժամանակավրեպ գործողությունների, քանի որ այդ տարիներին, երբ ըստ էության նժարի վրա էր դրված հայ ժողովրդի լինել-չլինելու խնդիրը, եկեղեցիների ազատականացման հարցը ոչ միայն տեղին չէր, այլև խիստ վնասակար էր՝ ազգը պառակտելու, ուժերը մասնատելու տեսանկյունից. «...ազգաւնաս գործունեութիւններէ կը զգուշացունենք մեր հայրենակիցներ, քանի որ հարստահարութիւնները և սովառիթ անապահովութիւնը չեն դադրիր Հայաստանի մէջ»[455]: Այդ

---

[453] Օրմանեան պատրիարք եւ «չպիտի յիշուի», «Արմէնիա», թիվ 6, 1899:
[454] Ներկայ վիճակ, «Արմէնիա», թիվ 2, 1899:
[455] Նույն տեղում:

մտահոգությամբ էլ թերթը նշում էր, որ տվյալ պահին ժողովրդին նմանատիպ խնդիրների մեջ ներքաշելը կարող էր կործանարար լինել, ուստի հարկավոր էր պայքար ծավալել դրանց դեմ, քանի որ դրանք «վնասակար կրնան դառնալ հայ ժողովրդին և այդ վնասակար հոսանքների դէմ թումբեր կանգնելը քիչ դժուար աշխատանք մը չէ»[456]:

«Արմենիայի» տեսաբան Մէն-Սեն շեշտելով, որ վաղուց արդեն հայ ժողովուրդն սթափվել, խելքի էր եկել ու պայքարում էր իր ազատության համար, որ անգիտության ժամանակներն անցել էին, որ ցավալի իրողությունն ու կոտորածների տխուր փաստը ստիպում էին, պահանջում գոնե «զգուշություններ ձեռք առնել», որպեսզի հեղափոխության գաղափարը մնար և «ընթանար իր ճշմարիտ կոչումին և ճանապարհին մէջ»[457], որ գոնե այդքան փորձություններից հետո ժողովուրդն իր լավն ու վատը իմանար, կարողանար ճանաչել իսկական նվիրյալին, աջակցեր նրան ու մերժեր, պախարակեր պատեհապաշտ արկածախնդիրներին, որ առիթ չտար «ամեն հասնողին ազգին խնամակալի անկոչ դերը ստանձնելով ազգին խաղցունել»[458]:

Հայերի թերություններից «Արմենիան» առանձնացնում էր նաև առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների, որպեսական ոգևորությամբ քայլեր կատարելու արատավոր սովորությունը: «Միշտ կը սխալինք ու յետոյ կը զղջանք»,- գրում էր թերթը և ավելացնում, որ վտանգավոր է ընդհանրապես հայոց եկեղեցին ներքաշել քաղաքական մանկամիտ խաղերի մեջ, առավել ևս՝ արտասահմանյան երկրներում գտնվող հայկական եկեղեցիները, որոնք միակ հայապահպանություն իրականացնող կառույցներն էին և բավականին հաջող էին իրականացնում իրենց այդ վեհ առաքելությունը: «Վտանգավոր բան է,- գրում էր Մ. Փորթուգալյանը,- այդ ախտը մտցունել արտասահմա-

---

[456] Ներկայ վիճակ, «Արմենիա», թիվ 2, 1899:
[457] Ժողովուրդին, «Արմենիա», թիվ 32, 1899:
[458] Նույն տեղում:

նի հայ եկեղեցիներին մէջ, ժողովուրդին կարծեցնել տրուի թէ յոյս ոչ թէ իրեն վրայ դնէ, այլ օտարի, որ այդ տեսակ խժդժութիւններով կուզէն ազգի ընդդիմադիր ոյժը կոտրել ազգի ձեռքով»[459]:

Հարկավոր էր, որ ըմբռնեինք նաև, որ «ինք ժողովուրդ չէր գործող ու յեղափոխուող, նա խաբեցաւ գործիք ու միջոց դառնալով ուրիշների ձեռք»[460]: Իսկ այդպիսի դեպքերում, որ ամենացավալին է, ժողովուրդը կորցնում է վստահությունն առաջնորդների հանդեպ, դառնում անզգա ու անտարբեր բոլոր հարցերի ու խնդիրների նկատմամբ: Ազատության գործի նվիրյալներին մնում էր մեկ ելք՝ «հաստատել ու զօրացնել ժողովրդի վստահութիւնը դէպի ճշմարիտ յեղափոխական գործունեութիւնը», որպեսզի հնարավոր դառնար վերականգնել մարդկանց «թմրած հաւատքը»: Բացատրել անցյալի վնասների իրական պատճառները, թե ինչու, հակառակ մեր ակտիվ ու գործուն պայքարին, չունեցանք մեր ակնկալած արդյունքները: Հարկավոր էր չխնայել ո՛չ միջոցներ, ո՛չ ջանքեր, կրկին ոգևորել, ոտքի հանել ժողովրդին, որովհետև հստակ էր, որ բոլոր դեպքերում ցանկացած հեղափոխություն «ժողովրդին վրայ հիմնուելու է»[461], այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հեղափոխության շարժիչ ուժն ու անմիջական իրագործողը հասարակ ժողովուրդն է:

«Արմենիան» ընդգծում էր նաև, թե փորձը ցույց է տվել, որ հայերի մեջ գործունեությունը բանականությունից, իրական պայմաններից ավելի «առաջացել էին և իրագործուել լոկ զգացմունքից»[462]: Իհարկե, զգացմունքը դատապարտելու խնդիր չենք առաջադրում, սակայն ազատարար շարժումների դեպքում դրանցով չէ, որ պիտի առաջնորդվեր ժողովուրդը, այլ սառը հաշվարկներով ու հստակ դատողությամբ պետք է քննարկեր ու տեսներ բոլոր թեր և դեմ կողմերը:

---

[459] Միշտ կը սխալինք ու յետոյ կը զղջանք, «Արմէնիա», թիվ 4, 1899:
[460] Ծայրայեղութիւնների վնասներ, «Արմէնիա», թիվ 30, 1899:
[461] Նույն տեղում:
[462] Հայրենասիրութիւն, «Արմէնիա», թիվ 58, 1900:

Հակառակ դեպքում հավանաբար չէինք ունենա այն, ինչ ունեցանք: Իսկ այդ ցավալի իրադարձությունները տեղի ունեցան նաև այն պատճառով, որ հաշվի չառնվեց մի պարզ հանգամանք. բոլորը չէ, որ ունակ էին ղեկավարելու, առաջնորդելու ժողովրդին, քանի որ ինքնահռչակները կարող էին մեծ դժբախտությունների առիթներ ստեղծել, որի իրավունքը ո՛չ իրենք, առավել ևս՝ ո՛չ էլ ժողովուրդն ուներ: «Իրաւունք ունի՞ն ազգին բաղդն կոյրզկուրայն և քմածին թելադրութիւններով գահավիժելու»[463],- արդարացիորեն հարցնում է Մեն-Սէն:

Միևնույն ժամանակ Մ. Փորթուգալյանը բոլորին կոչ էր անում դասեր քաղել անցյալում թույլ տված սխալներից և դադարել դյուրահավատ լինելուց, քանի որ այն զգալի վնասներ էր պատճառել ժողովրդին ու նրա ազատագրական շարժմանը: Առավել ևս, որ թուրքական իշխանությունները XX դարի նախաշեմին զգալիորեն փոխել էին իրենց մարտավարությունը հայոց ազատագրական շարժումները ճնշելու գործում: «Երբ Դուռը տեսաւ թէ արտասահմանի Հայերի ոգևորութիւնը խեղդել և նորարծարծ յեղափոխական զգացումը մարել չի կարելի հակառակաբանութիւններով, իր գործելու կերպը փոխեց և սկսաւ, համոզելու կամ վախցունելու տեղ, խաբելով և ժէզուիթական դարձուածներով իր գործ յառաջ տանիլ»[464]:

Շատ անգամներ թշնամին չի կարողացել զենքի ուժով մեզ հաղթել, սակայն մեր դյուրահավատությունը հաղթել է: Թուրքերը տեսնելով, որ 1894-1896 թթ. ջարդերը կազմակերպելով՝ չկարողացան ծնկի բերել հայերին և դրանցով հնարավորություն էին ընձեռում մեծ տերություններին, այդ առիթն օգտագործելով, միջամտելու իր ներքին գործերին, կրկին որդեգրեցին խարդավանքների փորձված ճանապարհը. «...մեր մէջ կը տարածէ լուրեր, որոնք ժողովուրդին զգացումները շոյելով կը գրգռեն զայն, կը խաբեն, իսկ հայ ժողովուրդին օգտին համար աշխատողները կործանել կուտան հայ ժողովուրդի ձեռ-

---

[463] Նույն տեղում:

[464] Դիւրահաւան չլինինք, «Արմենիա», թիվ 4, 1899:

քով, անոր դիւրահաւատութենէն օգտուելով»[465]: Հատկապես սուլթան Համիդը, որ բանսարկության և խարդավանքների մեծ վարպետ էր, անում էր ամեն ինչ, որ «Հայը Հային հետ կռուեցունէ և իր չախորժաձը Հայի ձեռքով պատժել կուտայ, կոչնչացնէ»[466]:

Պատահական չէր, որ տարիների ընթացքում «Արմենիան» հաճախ էր անդրադառնում այս խնդրին և դյուրահավատությունը համարում հայ ժողովրդի թույլ կողմերից մեկը: Հատկանիշ, որը դարեր շարունակ թեև զարդարել էր մեզ՝ որպես մաքուր ու զուլալ կերպար ունեցող ժողովրդի, սակայն շատ էլ վնասներ էր պատճառել: Հիշենք թեկուզ բոլոր այն դեպքերը, որոնց ժամանակ հայ թագավորներն ու զորապետները, հավատալով օտարի կեղծ խոստումներին ու վստահեցումներին՝ հայտնվել են թակարդում: Ազատագրական պայքարի ընթացքում ևս հայերը վստահ լինելով, որ թշնամին խաբելու է, կրկին հավատում էին նրան: Իսկ թե ինչու էր այդպես, դա էլ իր պատճառներն ուներ: Նախ՝ յուրաքանչյուր ժողովուրդ իր չափանիշներով է վերաբերվում աշխարհին, իսկ հայերը մեծ հաշվով երբեք չեն խաբել և հետո շատ դեպքերում, այլ ելք էլ չունենալով, ստիպված տպավորություն են ստեղծել, թե հավատում են, որ գոնե ապագայում իրենց հետնորդներին հակառակորդին՝ թշնամուն մեղադրելու հնարավորություն ապահովեն: Մեր ժողովրդի դժբախտության գլխավոր պատճառներից մեկը համարելով դյուրահավատությունը՝ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ տգետ ամբոխին հաճելի լինելու համար «պէտք է ցոյց տալ իրեն ոչ թէ ճշմարտութիւնը, այլ երազել տալ իրենց փափաքների գործադրութեան յոյսը մօտ ապագայի մէջ»[467], և նա, մոտակա հաջողության երազներով ներշնչված, կհավատա նրան, ինչ ներկայացնես ճշմարտության փոխարեն:

---

[465] Նույն տեղում:

[466] Դիւրահաւան չլինինք, «Արմենիա», թիվ 22, 1899:

[467] «Արմենիա», թիվ 33, 1906:

Ազգային փրկության գործում հաջողության հասնելու համար, գրում էր Մ. Փորթուգալյանը, անհրաժեշտ էր «համբերատար յարատեւութեամբ» աշխատել, ամեն գրածի ու ասվածի չհավատալ, այլ հարկավոր է քննել-պարզել, թե ով է ասողը, և որքանով են իրական ասվածները: Կարճ ասած՝ հարկավոր է, որ մենք՝ հայերս, ոչ թե հավատանք այն ամենին, ինչ ուզում ենք, ցանկանում ու երազում, այլ իրատես լինենք, հաշվի առնենք փաստերն ու իրողությունները, որոնց հիման վրա կատարված եզրակացություններն ընդունենք ի գիտություն և այդ իմացությունն օգտագործենք հօգուտ ազգաշահ գործի:

Եթե գործ ես անում, գրում էր «Արմենիայի» խմբագիրը, անկարելի է, որ թշնամիներ չունենաս: Եթե բարի գործ ես անում, չարերը կբամբասեն և հակառակը: «Թշնամի կամ հակառակորդ չունենալու համար, պետք է պառկիլ գերեզմանին մէջ: Պտուղ չունեցող ծառին քար նետող ալ չի լինիր»[468]: Որպեսզի մեկը ժողովրդի բարօրության համար որևէ օգտակար գործ կատարի, նախ՝ կարևոր է, որ այն կատարելու գիտակցությունն ունենա, հասկանա ու գիտակցի դրա անհրաժեշտությունը: Իսկ այն մարդիկ, որ չունեն իրենց սեփական համոզմունքները. «դիւրահաւանութեամբ կը հետևին շատ աղմուկ հանող կողմին և անոր անտեղի իրատունքներ կուտան»[469],- կարդում ենք թերթում: Հոդվածագիրն այնուհետև ցավով ավելացնում է, որ դժբախտաբար այդպիսիք հայերի մեջ «մեծ բազմութիւն կը կազմեն» և լավ չպատկերացնելով իրերի իսկական դրությունը՝ հաճախ մեծ վնասներ են պատճառում ազատագրական պայքարի գործին:

Շատ են լինում դեպքեր, գրում է Մ. Փորթուգալյանը, որ առանց ճշտելու, թե ով է հարցը ներկայացնողը, ինչ նպատակներ է հետապնդում, ինչից ելնելով է գովում կամ պարսավում մեկին, «դիւրութեամբ կը հաւատան նրան և աջ ու ձախ կօգնեն կամ կը հարուածեն»: Պատահական չէր, որ այդ դյուրահավատությունը շատ դեպքե-

---

[468] «Արմենիա», թիվ 40, 1905:
[469] Նույն տեղում:

ռում վնասում էր ազգանպաստ որևէ կարևոր գործընթացի և ծանր հետևանքների պատճառ դառնում:

Տարիներ շարունակ «Արմենիան» ու նրա կողմնակիցները, մոտիկից ու շատ լավ ճանաչելով թշնամուն, իմանալով նրա նենգ ու տմարդի բնույթը, քարոզում էին լինել չափազանց զգույշ ու շրջահայաց, գործել՝ ոչ թե վաղն իսկ արդյունք ակնկալելով, այլ երկար ու շարունակաբար մտածված քայլերով: Անչափ կարևոր էր նաև, որ ամեն պատահածին հավատ չընծայվեր և այդ դյուրահավատության ախտին «դէմն առնելու համար ժողովուրդի դատողութիւնը զարգացունել», ինչը հնարավոր կլիներ, եթե մարդիկ գրագետ ու հետաքրքրվող դառնային, լուսավորվեին ժամանակի ընթացքում:

Քննադատելով հայության մեջ առկա թերությունները՝ Մ. Փորթուգալյանը նշում էր, որ «ամենէն գէշ ախտն է յուսահատութիւնը», որից պետք է զգուշանա ցանկացած ժողովուրդ, որն ուզում է ապրել: Նույնիսկ քրիստոնեությունը չի ընդունում և դատապարտում է բոլոր նրանց, ովքեր ձեռք են բարձրացրել իրենց վրա, էլ ուր մնաց մի ամբողջ ժողովուրդ նման փորձ անի: Այնպես որ հայերն իրավունք չունեին անգամ այդ ուղղությամբ մտածելու և հուսալքվելու, այլ պիտի կորստի ու վիրավորանքի ցավից ատամները սեղմած՝ կրկին դուրս գային պայքարի: Պատմության ընթացքում շատ են եղել դժվարին իրավիճակներ, սակայն հայերը երբեք «չեն յուսահատած իրենց ազգութիւնը պահպանելէ և կապրին դէռ մինչ իրենց վիճակակից շատ ազգեր ոչնչացած են», համոզված գրում էր Փորթուգալյանը, ապա շարունակում, որ հուսահատությունը հայի թե՛ կրոնական թե՛ ազգային բնավորությանը հարիր չէ. «Ով որ յուսահատօրեն կը խօսի, հայերէն չխօսիր: Ով որ կը յուսահատի, նա հայ չէ»[470],- յուրահատուկ սահմանում էր ազգասեր խմբագիրը: Ուղղակի այդքան կորուստներից հետո անհրաժեշտ էր ավելի սթափ, ավելի շրջահայաց ու նախա-

[470] Յուսահատութիւն, «Արմէնիա», թիվ 2, 1901:

պատրաստված լինելու դեպքում միայն սկսել ազատության համար պայքարը: Տուրք չտալ չարախոսներին ու հուսալքվողներին, հստակ պատկերացնել մի պարզ ճշմարտություն, որ «յանցատրը յեղափոխակսն գաղափարը չէր», ինչպես պնդում էին ոմանք, այլ «յեղափոխութեան անունով ժողովուրդին ներկայացող գործիչների մէկ մասը»[471]: Պետք չէր, որ ազատագրական պայքարի ճշմարիտ ուղին որդեգրած գործիչները տուրք տային երկու ծայրահեղ թևերին՝ պահպանողականներին ու անպատրաստ հեղափոխության կողմնակիցներին, այլ հանդարտ ու հաստատ քայլերով առաջ ընթանային, քանզի առաջադիմությունը «քալելով կը լինի, ոչ թէ ցատկելով»:

Որտեղ բռնություն կա, այնտեղ կլինի նաև պայքար այդ բռնության դեմ, իսկ Արևմտյան Հայաստանում XX դարի սկզբին բռնության ծով էր, օվկիանոս: Թուրքերը թալանում, բռնաբարում ու սպանում էին քրիստոնյա ժողովուրդներին ու հատկապես, հայերին, քանի որ նրանք համարձակվել էին չհամակերպվել մորթվողի կարգավիճակին ու ըմբոստացել էին դրա դեմ: Բայց, ցավոք, սխալներն անպակաս եղան մեր պայքարում, հաշվի չառնվեցին մի շարք կարևոր գործոններ, որոնք ոչ միայն կարևոր էին, այլև վճռական, ինչի արդյունքում էլ սպասված արդյունքները չունեցանք: Նախ՝ շարունակաբար խաբվեցինք Եվրոպայից, բայց խելքի չեկանք: Գիտակցում էինք, որ մեր ուժերը բավարար չեն թուրքին հաղթելու համար, բայց քանի որ անհապաղ ազատություն էինք ցանկանում, ոտքի ելանք ու, առանց հաշվի առնելու ուժերի հարաբերակցությունը, կրակի լույսի վրա թիթեռնիկների նման այրվեցինք, մոխրացանք: Միասնությունն էլ չկար, կային կուսակցությունները, որոնք ավելի շատ իրենց ջանքերն «ուղղած էին իրար չեզոքացնելու, քան հասարակաց թշնամիին դէմ զինելու»[472]: Իհարկե, սա չի նշանակում, թե կուսակցություններ չպիտի լինեին մեզանում: Անվիճելի է, որ «...յառաջադիմութեան անիւը շարժող միակ

---

[471] Յուսահատութիւն, «Արմէնիա», թիվ 2, 1901:
[472] Մեր դրութիւն, «Արմէնիա», թիվ 12, 1901:

ոյժը եղել է տարբեր գաղափարների մրցումն»,- գրում էր Փորթուգալյանը, ապա շարունակում. «կոաակցականների մոլեռանդ հակառակոփիւնն է որ մեզ վնասել է. մեր մէջ եսը գերազանցել է աւելի, քան հասարակաց շահը»[473]:

Հիրավի, թե չէ ինչպես բացատրել, առավել ևս՝ արդարացնել փառասիրական, եղբայրասպան այն դրսևորումները, որոնցով բավական հարուստ է մեր ազատագրական շարժման պատմությունը, և որոնք վնասելով շարժմանը, մեծ հարված էին հասցնում ժողովրդի հավատին, ինչն ուղղակի ներելի չէր: Իսկ հայերը դժվարանում էին հասկանալ, որ թոփքական վայրագ քաղաքականությունն ուղղված էր մեկ նպատակի՝ «հայութիւնը ջնջել և տկարացուցել իր բոյնին մէջ»[474]: Իսկ հայությանն այդ դեպքում ոչինչ չէր մնում անելու, քան շարունակել սկսած կռիվը, որովհետև պատմության նախախնամությամբ այդ կռվում պիտի որոշվեր նրա ճակատագիրը: Ժողովուրդն ու ազգային անկախության գաղափարը, ըստ Մ. Փորթուգալյանի, այնքան «միացած են որ չէ կարելի բաժան նկատել այլևս»[475], և հայությանը մեկ բան էր մնում անելու՝ ավելի կազմակերպվել, հզորանալ, ճիշտ պահը ընտրել և նոր միայն դուրս գալ հրապարակ: Հակառակ դեպքում կունենայինք այն ցավալի իրողությունը, ինչ ունեցանք 1890-ական թթ. կեսերին:

Հայոց ազատագրական պայքարի ընթացքում եղան նաև խոր հիասթափության պահեր, երբ աջ ու ձախ մեղադրանքներ էին հնչում հեղափոխական ուժերի հասցեին: Անկումային տրամադրություններն այնքան խորն էին, որ հոռետեսները չէին խնայում նույնիսկ հեղափոխության նվիրյալներին ու նահատակներին, նրանց ղեկավարած կուսակցություններին՝ անխոհեմ գործելակերպ որդեգրելու և թշնամուն կոտորելու անհարկի առիթներ տալու համար: Սակայն բանն այն էր,

---

[473] Նույն տեղում:

[474] Ինչու՞ չենք հասկնար, «Արմէնիա», թիվ 25, 1901:

[475] Նույն տեղում:

որ կոտորածներն ու հալածանքները պարբերաբար շարունակվում էին անկախ այն բանից, «լինին պատրուակներ և կամ ոչ»[476]: Ուրեմն, եզրակացնում էր «Արմենիայի» տեսաբան Մեն-Սէն, հարկավոր էր մեր բոլոր ուժերն ու կուսակցությունները, առավել ևս՝ Դաշնակցությունը, որն, ի դեպ, ամենազորեղ ուժն էր հայ իրականության մեջ, ընդհանրապես հուսալքվելու իրավունք չունեին, անկախ այն բանից, թե ով ինչ կբարբաջեր, ինչպես կվատաբաներ հայ հեղափոխական շարժումը: Հարկավոր էր մեկընդմիշտ հասկանալ, գրում էր հոդվածագիրը, որ «սիրտը գլխին մէջ չի» և սթափ ու մտածված գործել, իսկ զգացմունքներն առայժմ թող սպասեն[477]:

Մի կարևոր հանգամանք էլ էին նշում «Արմենիա»-ի գաղափարախոսները: Դա այն էր, որ ստեղծված ծանր պայմանների ու հալածանքների արդյունքում 1890-ական թթ. երկրորդ կեսին, հայության կարող ուժերը, խուսափելով ոչնչացման իրական վտանգից, հեռացել էին երկրից ու հեղափոխության քարոզով զբաղվում էին դրսում, հիմնականում եվրոպական ազատ երկրներում: Մի հանգամանք, որն օգուտի փոխարեն վնասում էր սրբազան գործին: Այն իմաստով, որ բուն երկրում աշխատանքները գրեթե դադարել էին, և դրանով թուրքական իշխանություններին ավելի էին գազազեցնում և գրգռում ու բաց թողնում երկրում ապրող, երկիրը պահող, անզեն ու անպաշտպան ժողովրդի վրա: Ըստ «Արմենիայի», «գաղափարական գործիչը բուն երկրում միայն կրնայ արդիւնավէտ գործ մը ունենալ», իսկ դրսերում արվածներն անցողիկ ու ոչինչ չփոխող գործառույթներ էին[478]:

Քննարկելով հայության միասնության խնդիրը և ազատագրական պայքարի դառը փորձը՝ «Արմենիան» շեշտում էր, որ XX դարի նախաշեմին հայ ժողովրդի խնդիրները փաստորեն մնացին չլուծված: Դեռ ավելին, օտարերկրյա միջամտություններից գազազած

---

[476] Ինչու՞ չենք հասկնար, «Արմէնիա», թիվ 25, 1901:

[477] Նույն տեղում:

[478] Ո՞վ պիտի մտածէ Հայաստանը, «Արմէնիա», թիվ 34, 1901:

թշնամին ավելի ու ավելի է կատարելագործում հայությանը ծնկի բերելու, ոչնչացնելու միջոցները: «Արմենիա»-ի Վահէ թղթակիցը շեշտադրում էր, որ այդ պայմաններում հայ ժողովուրդն «աւելի պէտք ունի խելացի ու լուրջ մարդիկների, զօրեղ գործիչների, ովքեր կուրծք տային Հայ ազգին այս գահավիժումին դէմ», սակայն կատարվում էր հակառակը. հրապարակ էին գալիս մարդիկ, ովքեր նույնիսկ իրենց գոյությամբ «...յուսայատութիւն կը պատճառեն, Հայը հազիւ տեսած լինին, ազատութեան գործ կուզեն ղեկաւարել, քննադատութիւնը հայհոյանքէն չեն կարող զանազանել, շանտաժներով ազգին ծառայութիւն կը մատուցանեն»[479]:

Պարզապես ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր նախ ձեռնպահ մնալ վաղաժամկետ ու վնասակար գործելակերպից և ամեն հնար գործադրել՝ հիասթափվելու վտանգավոր երևույթն ու անտարբերությունը կանխելու համար: Կարևոր էր գիտակցել նաև, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող երկու ծայրահեղ ուղղություններն էլ վտանգավոր էին և ժողովրդին միայն վնասակար: Հետևապես, անհրաժեշտ էր անել ամեն ինչ՝ նրանց նորովի աշխուժացումը կանխելու համար, քանզի դրանք հավասարապես ժողովրդի համար վտանգավոր էին ու կարող էին հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Առանց նախկինում թույլ տված սխալները բացահայտելու, ճանաչելու ու համապատասխան հետևություններ սնելու՝ հնարավոր չէր առաջ գնալ. «Հիմակուհիմա մեր ներքին վնասակար կողմերը ճանաչելով զգուշանալ,- գրում էր «Արմենիան»,- մեր մէջ եղած աղտեղութիւնները մաքրելու ենք նախ»[480]:

Անդրադառնալով XX դարի սկզբներին հայության մեջ ծայր առած անիմաստ եղբայրասպան և ուժերը խիստ ջլատող կռիվներին՝ կռիվներ, որոնք ներկուսակցականից հաճախ վերաճում էին միջկուսակցականի և մեծ վնաս հասցնում ազատագրական շարժմանը,

---

[479] Մի տխուր երեւոյթ, «Արմենիա», թիվ 24, 1900:

[480] Ներկայ վիճակ, «Արմենիա», թիվ 1, 1902:

«Արմենիան» դատապարտում էր այդ արգահատելի արարքները և անարգանքի սյունին գամում կատարողներին՝ անկախ այն բանից, թե ովքեր էին նրանք կամ նրանց պատվիրատուները: Ա. Արփիարյանի, Մխո-Շահենի, Գ. Չիթճյանի և էլի շատ նվիրյալների սպանության ցավալի իրողությունները «Արմենիան» գարշանքով անվանելով «-Թիւրքի հացին եղ քսել», այսինքն՝ անել մի բան, որն ամբողջությամբ նրա սրտով էր, ցավով արձանագրում էր, որ հայերը, սպանելով իրար, կատարում էին թուրքերի ցանկությունը և մեջտեղից վերացնում նվիրյալներին: Թերթը նշում էր, որ փոխանակ «խօսքով ու գրչով մրցիլ իրար հետ, փոխանակ ռէվոլվերով իրար սպաննելու», այդ նույն ուժերը կարող էին մի ցավի, մի աղքատ ընտանիքի դարման գտնել[481]: Իսկ մի փոքր ուշ, երբ այդ ահաբեկումներն սկսեցին նաև դրամ հավաքելու նպատակներ հետապնդել և ներգրավեցին հայաշատ բոլոր վայրերը, «Արմենիան» զայրացած հարցնում էր. «...իրաւունք կա՞յ այս կամ այն Հայը սպաննելու, որ չէ հետեւել քո գաղափարներուն կամ չուզեր իր դրամ տալ յեղափոխութեան Ս. Գործին անունով պահանջողներին» և ինքն էլ փորձում էր պատասխանել:

Նախ, պարզաբանում էր պարբերականն իր խմբագրականում, դրամատերը չճանաչելով պահանջողին, չէր կարող վստահել նրան, և հետո, եթե նա չի կիսում հեղափոխության գաղափարները, հետևաբար՝ հնարավոր չի համարում նաև դրա հաղթանակը, ուրեմն այլ կարծիք, տեսակետ ունենալու համար պիտի սպանե՞լ այդ մարդուն: Իհարկե, դա ճիշտ մոտեցում չէր, և հարցին իրական լուծում տալու հավանականությունն էլ զրոյական էր: Հետևապես այդպիսի սպանությունները ոճրագործություններ էին և ուրիշ ոչինչ. «ոչ մի կերպ ներելի չէ սպաննել կարծիքի ազատութեան համար», հատկապես, երբ ինքդ հավակնում ես այդ ազատության համար պայքարելու[482], կարդում ենք «Արմենիայում»: Պարբերականի կարծիքով, եթե շարժման

---

[481] Հայը կը սպաննէ Հային, «Արմէնիա», թիվ 21, 1903:
[482] Սպանութիւններ Ս. Գործին անունով, «Արմէնիա», թիվ 1, 1902:

գաղափարները հիմնավորապես տարածվեին ժողովրդի մեջ, մարդկանց բացատրեին հեղափոխության նպատակներն ու ներկայացնեին ապագայում սպասվելիք դրական փոփոխությունները, դրամն ինքնին կգար, քանզի մեր ժողովուրդը պատրաստ էր տալու ամեն ինչ, միայն թե ժամ առաջ ազատվեր թուրքական այլևս անտանելի դարձած բռնատիրությունից: Իսկ երբ այդ ամենն արվում էր ստիպողաբար, ահաբեկումներով, ապա նույնիսկ նրանք, ովքեր կամովին տալիս էին այդ դրամը, կհիասթափվեին, կփոխեին իրենց կարծիքը թե՛ շարժման, թե՛ գործիչների մասին, և իրենք էլ կդադարեին տալուց: Այնպես որ, եզրակացնում էր թերթի տեսաբանը, «սրբապղծութիւն է Յեղափոխութեան Ս. Գործին անունով ոճրագործութիւններ կատարելը, քանզի դրանք հայ ժողովուրդը Յեղափոխական գաղափարին բոլորովին հակակիր կը դարձունեն»[483]:

Ընդհանրապես, դրամ ուզելու համար փոխանակ համոզելու «մահ սպառնալով դրամ կորզելը երբէք յանձնարարելի գործելակերպ մը չէ» և իրար սպանելու ազգակործան երևույթը սրբապղծում էին հայ ազգային-ազատագրական շարժման վարկը[484], կարդում ենք «Արմենիայում»: Հատկապես այդ շրջանում, երբ ճգնաժամ կար հայ ժողովրդի հոգեոլորտում, երբ երկու աղետալի հոսանքների միջև ազգի ոգին էր թավալվում, առավել քան կարևոր էին դառնում գիտակցական ու հաշվենկատ մոտեցումները դեպի ազատարար շարժումը: Իսկ որ այդ երկու իրար ոչ մի կերպ չզիջող հոսանքներն առկա էին հայ իրականության մեջ, կասկած չկար: Դրանք էին «ներկա պահին Յեղափոխական գաղափարին անկման և վաղը, այսօր, այս ժամուն Յեղափոխութեան ջատագովութիւնը»[485], որոնք երկուսն էլ հավասարաչափ վնասակար էին ու վտանգավոր ազգային-ազատագրական շարժման համար:

---

[483] Սպառնութիւններ Ս. Գործին անունով. «Արմէնիա», թիվ 1, 1902:
[484] Ազգակործան երեւոյթներ, «Արմէնիա», թիվ 29, 1905:
[485] Գիր եւ գործ, «Արմէնիա», թիվ 24, 1902:

Իրար անվանարկելու, վատաբանելու և սպանելու փոխարեն հայ գործիչներն ավելի շատ պետք է մտածեին ազգին ջարդերից հետո խելքի բերելու, նրա ոգին ու կորովը վերականգնելու և հատկապես ջարդերի պատճառով անտեր մնացած բազմաթիվ որբերին հավաքելու, խնամելու մասին, քանի որ հայ ժողովրդի համար այդ շրջանում կենսական խնդիր էր հայ ազգի մնացած ուժերի պահպանումն ու վերականգնումը: Այս խորապատկերում «ինքնասպանութիւն չէ՞ր լինի,- հարցնում էր «Արմենիայի» տեսաբան Մեն-Սէն,- բիփատր կորած ընտանիքների ապագայ ծիլերը անխնամ կորստեան մատնելը»[486]:

Հայկական բնավորության պակասավոր ու թերի կողմերի մասին խոսելիս «Արմենիան» հաճախ էր նշում մեր «ինքնախաբեութեան» վնասակար սովորության մասին: Օրինակ, գրում է Մեն Սէն, ժամանակին հերոս կռաակցություն Հնչակը բոլորին ներշնչում էր, թե «հայ արիւնի ցոլքերը և ցաւին աղաղակները պիտի դղրդէին Եւրոպայի կառաւարութիւնները նոր խաչակրութիւն մը ծնեցունելու չափ զօրեղ»[487]: Սակայն իրականում հայության վիճակը մազաչափ անգամ դեպի լավը չփոխվեց, հայերն էլ չխրատվեցին: «Հնչակից» հետո «Դրոշակն» էլ իջավ ասպարեզ, իր քաջագործություններով շլացրեց հայ ժողովրդին, «մինչ երկիրը միշտ նոյն անփոփոխ վիճակի մէջ և ժողովուրդն ալ իր այս բովանդակ յոյսերովն ոչ իսկ ապահով կը մնայ կոտորուելու մղձաւանջից»[488]: Այս ամենը մատնացույց անելով՝ «Արմենիան» ցույց էր տալիս, որ առիթը ներկայանալու դեպքում հայկական կուսակցություններն էլ չէին վարանել հայության միամիտ խանդավառությունը շահագործել, և զգուշացնում էր հետագայում խուսափել դրանից: Քանի որ մեզանում եղել էին ու կային տարրեր, որոնք այդ ամենն օգտագործում էին «ժողովրդի մէջ կոյր հաւատք, դրամ և

---

[486] Ազգային գործերի շուրջ, «Արմենիա», թիվ 20, 1902:
[487] Երկու երեւոյթներ, «Արմենիա», թիվ 11, 1903:
[488] Նույն տեղում:

անուն վաստակելու համար»[489]: Այնպես որ, եզրակացնում էր նյութի հեղինակը, ինքնախաբեությունը գիտակցական ոճիր է, ազգասպանություն, իսկ պատասխանատուները հայոց մեջ գործող զանազան մարմիններն էին, որոնք հեղափոխության անունից թույլ էին տալիս սխալ սխալի հետևից:

Պակաս վտանգավոր չէր նաև անտարբերությունը, ինչը Մ. Փորթուգալյանի կարծիքով ազգի թշվառ վիճակի նախապայմաններից ու նրա անբաժան ուղեկիցներից էր եղել դարեր շարունակ: Հանրային ցանկացած գործ առաջ մղելու համար անհրաժեշտ է ողջ հասարակության ակտիվ օժանդակությունը: Իսկ երբ անտարբերները մեծամասնություն են կազմում, որևէ գործ առաջ մղելն ուղղակի անհնարին է դառնում: Առավել ևս, երբ խոսքն ազգային-ազատագրական պայքարի մասին էր, ազգովին էր հարկավոր ոտքի ելնել, միասնաբար մաքառել ու հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները: Այդպիսի ծանր, հայ ազգի համար չափազանց վատ պայմաններում, կործանման եզրին հայտնված վիճակում, ըստ Մ. Փորթուգալյանի, «անտարբերութիւնը չկրնար բնաւ արդարանալ, չէզօք հայրենասէրներ կը նմանին անանձրև ամպերի, առանց օգտակարութեան: Իր դժբաղդ Ազգի վիճակին հանդէպ անտարբեր մնալն ալ պակաս ոճրագործութիւն մը չէ, եթէ ոչ աւելի»[490]:

Աշխարհում անթերի ժողովուրդներ չկան: Հայ ժողովուրդին էլ են բնորոշ եղել ոչ դրական հատկանիշներ, սակայն ժողովրդին դրանցով բնորոշելն անթույլատրելի է: 1880-ական թթ. սկսված հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի շրջանում, հետագայում ևս հայերի մոտ եղան որոշ բացասական դրսևորումներ, սակայն այն համազգային ոգևորությունն ու հանուն գաղափարի շատերի զոհվելու համատարած պատրաստակամության դիմաց դրանք չնչին մանրուքներ էին: Հենց այս ընդհանուր պատկերացումն էլ ելակետ ունե-

---

489 Երկու երեւոյթներ, «Արմէնիա», թիվ 11, 1903:

490 Անտարբերները, «Արմէնիա», թիվ 42, 1905:

նալով էր այդ խնդրին մոտենում «Արմենիան»: Լինելով համազգային ցավի ուղղակի արտահայտիչն ու այդ ցավով տառապող, այն չէր կարող բոլորովին չտեսնելու տալ այդ բացասական դրսևորումները և իր բոլոր հրապարակումներում հետապնդում էր մեկ նպատակ դասեր քաղել թույլ տված սխալներից՝ ապագայում դրանցից զերծ մնալու համար, որպեսզի հանուն ազատության ներդրված ջանքերն առավել նպատակային ու արդյունավետ լինեին:

3.3. **Արևմտահայության դրության արտացոլումը «Արմենիա»-ի «Նամականի»-ում**

«Արմենիայի» հրապարակումներում մեծ տեղ էր հատկացվում ընթերցողների նամակներին ու դրանց արձագանքներին: Սա հայ իրականության մեջ առաջին պարբերականներից մեկն էր, որ ոչ միայն տպագրում, այլև հետևողականորեն հետամուտ էր լինում, թե ինչ հետևանքներ, արձագանքներ ու լուծումներ էին գտնում այդ նամակներում բարձրացված հարցերը: Իհարկե, առաջ անցնելով նշենք, որ մեծ մասամբ այդ նամակներում առաջ քաշված խնդիրներն իշխանությունների մեղքով անլուծելի էին մնում: Սակայն գոնե ի լուր աշխարհի տպագրված-տարածված լինելով, իսկ շատ հազվադեպ նաև որոշ երրորդական հարցեր վճռված տեսնելով՝ հասարակ ժողովուրդը հավատով էր լցվում դեպի «Արմենիան» ու նրա խմբագիրը:

Պարբերականի «Նամականին»[491] տարիների ընթացքում դարձել էր հայ մարդկանց հուզող հարցերին արձագանքողն ու, թերևս, ամենասիրելի ու, լրատվության բաժնին զուգընթաց, ամենաընթերց-

[491] Այս խորագրի ներքո տպագրվում էին ոչ միայն ընթերցողների, համակիրների, այլև թերթի տեղական, արտահաստիքային թղթակիցների նամակ-թղթակցությունները, որոնք բոլորն էլ գրական պատշաճ տեսքի էին բերվում ու սրբագրվում էին խմբագրակազմի կողմից: Ինքնըստինքյան հասկանալի է նաև, որ նամակների զգալի մասը գրվում էր խմբագրության պատերի ներսում, բայց ներկայացվում իբրև որևէ տեղից ուղարկված: Ի դեպ, այս երևույթը հատուկ է եղել ոչ միայն «Արմենիա»-ին:

վող բաժինը: Սկզբնական տարիներին ամենաշատ նամակներն ստացվում ու տպագրվում էին Արևմտյան Հայաստանից, մասնավորապես Վան-Վասպուրականից ու Օսմանյան կայսրության հայաշատ վայրերից: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Արևմտյան Հայաստանում ու կայսրության կազմ ներառված այլ վայրերում էին բնակվում ամենահոծ հայազանգվածները: Այդ նամակներն սկզբնական շրջանում հիմնականում սոցիալ-տնտեսական բովանդակություն ունեին, իսկ հետագայում աստիճանաբար փոխվեցին ու ավելի հաճախ սկսեցին պարունակել նաև քաղաքական պահանջներ, իսկ երբեմն էլ տոգորված էին զայրալի, պոռթկումնալից ու հայերի նկատմամբ դարեր ի վեր գոյություն ունեցող աղաղակող անարդարությունները փշրելու, վերացնելու շնչով: «Սարերի մէջ քիւրտերով շրջապատեալ բոյնս դրած եմ. անոնք ուրիշ բան չեն մտածեր,- կարդում ենք «Արմենիայում»,- եթէ ոչ իրենց ոչխարաց և ասպատակութեանց վրայ...: Ինչպե՞ս խլեն հայ մշակեն ինչք, կիներ, անասուններ...: Բայց ինչ ալ լինի, միշտ վնասուողներ հայեր են»[492]: Սակայն այս ամենին զուգահեռ նամակագիրը հպարտությամբ արձանագրում է, որ «այս լեռների զաւակներ որչափ որ վայրենի ու անկիրթ, բայց ազնիվ են, վեհանձն և երբեմն այնպիսի ազատ գաղափարներ կը յայտնեն, որ մարդ կը հիանայ, կը նախանձի»[493]:

Մեկ այլ նամակում էլ հեղինակը մոլորված է ու պարզապես չգիտի «ներքի՞ն, թե՞ արտաքին հարստահարութիւնները» ողբա, ո՞ր մեկ ցավը հայտնի՝ «կրօնական թէ քաղաքական տգրուկների որք ժողովրդի արեան վերջին կաթիլը կուզեն ծծել»: Նկարագրելով այդ շրջանում Վան-Վասպուրականում առկա տխուր կացությունը և այնտեղ ծավալված պողոսյան-ապողոսյան պայքարը՝ նամակագիրը նշում է, որ շնորհիվ շահամոլ ու թուրքական իշխանությունների կամակատար Պողոս եպիսկոպոսի, «ազգը 50 տարի յետ կը դարձուն

---

[492] «Արմենիա», թիվ 11, 1885:

[493] Նույն տեղում:

Վանի մէջ»: Որովհետև նյութապաշտ պողոսները, լինելով իշխանությունների հլու գործիքներ, անում էին ամեն ինչ, որ հայ «տղաք բաւական է փոխ ասել և շարական կարդալ գիտնան. անկե աւելին պէտք չէ Վանեցիներին համար»[494]:

«Ես չտեսայ մի թղթակից որ իւր երկրի բարոյական և նյութական կացութեանը վրայ լիովին ուրախացուցիչ տեղեկութիւն մը տար մեզ ընթերցողներիս» կասէր անցեալ օր մի երիտասարդ ուսանող»,- կարդում ենք մեկ այլ նամակում: Սակայն նույն տեղում էլ բացատրվում է, թե ինչու է այդպես: Պարզապես թուրքական բռնատիրության պայմաններում իրապես չկար մի լուսավոր կետ, մի անկյուն, որ ուրախություն պարգևեր մարդկանց և հենց «Արմենիայի» հետ կապված օրինակ է բերվում: 1885 թ. սեպտեմբերի 28-ից թուրքական իշխանությունները, մեծ վտանգ տեսնելով ի դեմս «Արմենիայի», ոչ միայն հատուկ հրամանով արգելեցին նրա մուտքը Թուրքիա, այլև «ամենախիստ հարցաքննութեան կենթարկէ բաժանորդներն, նոքա մերձակա ծանոթներն ու բարեկամները», այսինքն՝ Թուրքիայում հանցանք էր դիտվում նույնիսկ որևէ մեկի ծանոթ կամ բարեկամ լինելը[495]: Սրան, կարծես, լրացնում է մեկ այլ նամակ. «...մի յուսաք երբէք իմ նամակներ կարդացած ժամանակ սփոփուիլ և կամ թե ինձնից մի ուրախառիթ լուր մի սպասեք երբէք»: Ցավով նշելով, որ ստիպված է երկրի մորմոքն ու ցավը հրապարակ հանել, որովհետև ուրախ առիթ չկա, Վանից Վահէ նամակագիրը խորը վշտով արձանագրում էր, որ Պողոս եպիսկոպոսն ու իր նմաններն արեցին ամեն ինչ, որ եթե մարդը մի փոքր բարեկեցիկ կյանքով էր ապրում, ապա համարվում էր գող, եթե մի քիչ ուսումնասեր լիներ՝ հեղափոխական, բարձր խոսեր՝ ապստամբ: Այս ամենը հանգեցնում էին նրան, որ ամենուրեք նոր բանտեր էին կառուցվում, որովհետև հներն այլևս չէին բավականացնում: Եվ պատահական չէր, երբ «Պարոն Մկրտիչ Թէրլէմէ-

---

[494] «Արմենիա», թիվ 10, 1885:
[495] «Արմենիա», թիվ 24, 1885:

զեան[496] շուկային մէջ իւր պատրաստութիւններ կը տեսնէր Եւրոպա ուղեւորելու համար, յանկարծ ձերբակալուեցաւ»: Ու թեև ոչ մի էական հանցանշան չգտան, սակայն «ահա երկու գիշեր է որ այդ բարեկիրթ և ազնուասուն երիտասարդ, այդ տաղանդաւոր և բազմաշխատ հայ ուսուցիչ բանտին մէջ կանցունէ եղեռնագործների հետ»[497]: Եվ դա միայն նրա համար, որ Մ. Թերլեմեզյանը համարձակվել էր դեմ լինել պողոսականներին: Հիմա «Վանի մէջ մարդ չի կայ,- շարունակում էր նամակի հեղինակը,- շարժուն մեռելներ ենք. յարութիւն առնելու համար այլեւս շատ և շատ տարիներ պէտք են»,- տխուր վերջացնում էր նամակագիրը:

Վանից հղված մեկ այլ նամակում խոսվում էր այն մասին, որ այնտեղ շարունակվում էին բռնություններն ու անօրինականությունները, որոնց նպաստում էին նաև որոշ ծախու հայեր: «Պարոն Մկրտիչ Թէրլէմէզեան տակաւին բանտարկուած կը մնայ: Պատժական ատեանը տարին բերին պ. Մ. Թէրլէմէզեանը 3 անգամ, առանց մի բան անելու և առանց մի բան ասելու. ի վերջոյ, օրը տարաժամած է ասելով դարձեալ տարին բանտը նետեցին»[498]: Իսկ շուկան հսկող հայերը, երբ փորձել էին դուրս վռնդել գիշերով թալանելու նպատակով այնտեղ մտած մի քանի թուրքերի, «առանց երբէք հարցաքննելու կամ դատաստան տեսնելու, երէկ ներքին բանտը դրաւ նրանցից Պետրոս Կանափմանողեանին, 91 օր բանտարկութեան վճիռ տալով»[499]:

Կարինից էլ տեղեկացնում էին, թե ինչպես քուրդ զինված հրոսակախմբերն ազատ շրջում էին գավառում և «ամեն տեսակ ոճիրներ ի գործ կը դնէին», իսկ հայերը, որոնք իրավունք չունեին զենք ունենալու և կրելու, փաստորեն զրկված էին ինքնապաշտպանվելու հնա-

---

[496] Արմենական կուսակցության հիմնադիր առաջնորդ Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանը հայ նշանավոր գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի հորեղբոր որդին էր:
[497] «Արմենիա», թիվ 17, 1885:
[498] «Արմենիա», թիվ 31, 1885:
[499] Նույն տեղում:

ռավորությունից: Նամակագրի հավաստմամբ, այդ նույն վիճակն էր տիրում Ալաշկերտում, Բայազետում և այս ամենից «կարելի է գաղափար մը կազմել երկրին վիճակին և ժողովրդեան թշուառութեան վրայ»[500]:

Վանում պողոսականները ժողովրդին անդառնալի չարիքներ էին պատճառում՝ ողջ ազգին նետելով իշխանությունների երախը: Հենց նրանց շարունակվող այդ ապօրինությունների մասին էր հերթական նամակը: Այն, նկարագրելով հայերի նկատմամբ իրականացվող պատժարշավը, ներկայացնում էր դա Մ. Թերլեմեզյանի օրինակով: Վանում մեծ հարգանք վայելող այս անձնավորության «եղեռնագործությունն» այն էր, որ ձեռքով մի քարտեզ էր գծել և ուղարկել Կարին՝ այնտեղի դպրոցում օգտագործելու համար: Անգամ իրենց իսկ ստվերից ահաբեկված և աշխարհագրությունից սակավ գաղափար ունեցող բռնակալները, որոնց համար Ռուսաստան և Պարսկաստան բառերն անգամ սահմանի նշանակություն ունեին և սաստիկ խրտնեցնում էին, այն համարել էին «ռազմագիտական տեսակետով շինուած», որովհետև այնտեղ նշված բնակավայրերն ավելի շատ հայկական անուններով էին և փաստորեն անուղղակի ներկայացնում էին Հայաստանը: «Վանի հայ երիտասարդութեան բարէկիրթ, ազնուական և ուսեալ ներկայացուցիչներէ մին, որ է արդիւնաւոր հայ ուսուցիչ մըն էր» թուրքերի տեսանկյունից պիտի պատժվեր, որովհետև հայ երեխաները, որոնց աշխարհագրություն էր դասավանդել Մ. Թերլեմեզյանը, համարձակվել էին ավելի շատ ու հիմնավոր գիտելիքներ ունենալ աշխարհագրությունից, քան թուրք երեխաները[501]:

Շարունակելով իրենց կամայականությունները՝ թուրքական իշխանություններն արեցին ամեն ինչ՝ Մ. Թերլեմեզյանին պատժելու համար. «Վա՜յ քեզ, աշխա՜րհ,- ակամա բացականչում էր նամակագիրը,- ուր գծագրութիւն գիտնալը եղեռնագործութիւն կը համարուի և

---

[500] «Արմենիա», թիվ 33, 1885:
[501] «Արմենիա», թիվ 37, 1885:

աշխարհագէտը աքսորուելու կարժանանայ...»[502]: Իսկ հաջորդ նամակը տեղեկացնում էր, որ ոչ միայն բաց չէին թողնում ձերբակալվածներին, այլև նորերին էին բանտ տանում, որովհետև. «Թիւրքը կը մտածէ եղեր թէ այդ անձեր ապստամբական խորհուրդներ կանեն: Մենք ալ կը մտածենք թէ քանի որ հայեր առանց ապստամբելու կը կրեն ապստամբութեան դառն հետևանքները, լաւագոյն կը լինէր դիմել իրօք ապստամբական միջոցներին և փոխանակ երկարատև չարչարանքներով ոչնչանալու, մէկ անգամէն մեռնելը աչք առնել և այդ կերպով ազատել իրենց կամ գէթ իրենց զաւակների»[503]:

Մ. Թերլեմեզյանին, որի «յանցանքը ուրիշ բան չէ եղեր բայց եթէ ուսուցիչ և հայ լինելն»[504] էր, 106 օր պահելուց, դաժան փորձությունների ենթարկելուց և մանկավարժությամբ զբաղվելու իրավունքից զրկելուց հետո, վերջապես, ազատ էին արձակել: Թվում էր՝ արդարությունն էր հաղթանակել, ուրախանալու առիթ կար: Սակայն իրականում նվաստացում, ցավ ու մորմոք էր ժայթքում նամակի ամեն տառից ու բառից:

Կրթության, դպրոցների վիճակի մասին նամակը լուսաբանում էր, որ Վանում միայն Հանկոյսների թաղի Կիրակնօրյա վարժարանն էր գործում, որովհետև նյութական ահռելի խեղճության մեջ, «յորում կը տառապի այժմ ամեն Վասպուրականցի, մտատր կրթութեան համար մեր անելիք ամեն ջանքեր ի դերև ելնելու դատապարտուած են...»[505]:

Շարունակելով թուրքական իշխանությունների վարած կամայական ու հայատյաց քաղաքականության թեման՝ շեշտվում էր, որ իշխանություններն օրըստօրե ավելի վարպետանում էին նորանոր մեղադրանքներ հնարելու գործում: Կարնեցի մի երիտասարդ, ընթեր-

---

502 «Արմենիա», թիվ 44, 1886:
503 «Արմենիա», թիվ 55, 1886:
504 «Արմենիա», թիվ 57, 1886:
505 «Արմենիա», թիվ 82, 1886:

ցելով Ղ. Ալիշանի գործերը, շատ է հավանում դրանք և իր երախտագիտությունը դրսևորում է՝ տաղանդավոր հայագետի նկարին շրջանակ նկարելով: Հայկական զարդանախշերով այդ նկարը համարվում է մեծ մեղք, և սուլթան Համիդը, որը մի ձեռքով Ղ. Ալիշանին մեծարել էր՝ թուրքական «Մէճիտիէ» շքանշան շնորհելով, մյուս ձեռքով էլ բանտ էր նետում այդ անձի նկարը սիրելու ու զարդարելու համար[506]:

Թուրքական բարբարոսություններն ու անհիմն մեղադրանքները հայերի դեմ շարունակում էին մոլեգնել, որովհետև սուլթան Համիդը օրօրի ավելի էր սարսափում հայկական շարժումներից և առանց որևէ պատճառի բանտարկում, խոշտանգում ու երկարատև պատիժների էր ենթարկում քիչ թե շատ աչքի ընկած հայերին, հատկապես մտավորական գործիչներին: Այդպիսի փաստեր շատ կային, որոնցից մեկին էլ անդրադարձել է «Արմենիայի» նամակագիրներից մեկը: Նկարագրելով, թե երբ Արսեն Թոխմախյան վարդապետը մեկնել էր Մոկս-Շատախի կողմերը՝ «ժողովրդական հէքեաթներ, առածներ հաւաքելու և տպագրութեան տալու համար (որք եղած են Սասունցի Դաւիթի հեքեաթ...)», նրան տեղի վալին ձերբակալում է և երկար ժամանակ պահում անազատության մեջ: Պատճառն այն էր, որ «զինք ամբաստանած էին արդէն իբր յեղափոխական», «քանի մը հայերի ձեռամբ զրպարտեալ զՀայր Սուրբն իբր ռուսական գործիք մը, խռովարար» և այլն: Իսկ մատնիչները դարձյալ պողոսականներն էին, որովհետև «Թօխմախեանը Խրիմեանի մարդ կը համարուէր»[507]:

Հաճախ արևմտահայ «հեղափոխականներին» թուրքական հատուկ ծառայությունները փնտրում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև կայսրության հայաշատ մյուս վայրերում, մասնավորապես մայրաքաղաք Կ. Պոլսում: Ահավասիկ, «Հրուդեն» անունով թղթակիցը Կ. Պոլսից հայտնում էր, որ «դեկտ. 8/20ին ոստիկանութիւնն կը ձերբակալէ հետեւեալ Վանեցիներն. Մկրտիչ Թէրլէմէզեան,

---

[506] «Արմենիա», թիվ 16, 1887:
[507] «Արմենիա», թիվ 40, 1887:

Յարոպթիւն Աղանեան. Յ. և Գ. Իսագուլեան եղբարք և Թաչ Վարդան», ովքեր «ամբաստանեալ են որ իբր թէ Արմենիաի հետ յարաբերոպթիւն ունին, Արմենիա կընդունին, կը թղթակցին»[508]: Սակայն իրականում նրանց մեծ մասը բոլորովին, իսկ «Թէրլէմէզեան արդէն Վանէն աքսորեալ մ'է, այստեղ սեղանատորոպթիւն կընէ խեղճ տղան»[509] և բավականին ժամանակ չէր հարաբերվում թերթի հետ: Թուրքական հատուկ ծառայություններն այս մասին տեղյակ էին, պարզապես նրանք նպատակ ունեն ամենուրեք սարսափ տարածելու, դրա համար էլ ձերբակալել էին նրանց:

Հաճախ թուրքական իշխանություններն իրենց անօրեն գործելակերպը սքողելու և եվրոպական տերությունների աչքին ժողովրդավար երևալու համար դիմում էին ամենապարզ խարդախությունների: Հաշվի չառնելով, թե որ անհատն ու մարմինն էր հեղինակել որևէ փաստաթուղթ, նրանք կեղծում էին այն, կամ վարվում, ինչպես իրենց էր ձեռնտու. «Պատրիարքը աղերսագիր մը տալով Կայսեր, խնդրած է աքսորեալներու ազատոպթիւնը և անոր կից ուրիշ թղթով մ'ալ կանխաւ շնորհակալոպթիւններ կը մատուցանէ Կայսեր»[510]: Իսկ իշխանություններն այդ առիթը բաց չեն թողնում հայերի կողմից գրված այդ շնորհակալագիրը ներկայացնել՝ Եվրոպայի աչքին հայասեր երևալու համար. «...կը մոռնան ետ դարձնել խնդրագրին հետ նաև շնորհակալութեան գիրը ան Եվրոպիոյ ներկայացնելու նպատակավ: Խաղ մը, փոքր թէ մեծ, միշտ օգտակար կը համարին Թուրքերը»[511]:

«Արմենիայի» «Նամակներ Հայաստանից» շարքը կարևոր անդրադարձ է հայրենի երկրին ու ժողովրդի ծանր վիճակին: Ներկայացնելով թերթի կատարած շնորհակալ աշխատանքը՝ հոդվածագիր Հ-րոտենը (հոդվածաշարի երրորդ մասից սկսած՝ այն ստորագրված է

---

508 «Արմենիա», թիվ 40, 1887:
509 Նույն տեղում:
510 «Արմենիա», թիվ 38, 1889:
511 Նույն տեղում:

«Վ. Յ.» – Ս. Ս.) մանրամասն ներկայացնում էր արևմտահայերի տառապանքներով լի կյանքը և անհրաժեշտ համարում հայրենիքի թշվառ վիճակի մասին եվրոպաբնակ հայությանը իրական գույներով տեղեկացնելը: Հիմնադրման օրվանից «Արմենիայի» բոլոր համարներն անխտիր ընթերցած հոդվածագիրը, թերթի շնորհիվ տեղեկանալով եվրոպաբնակ հայերի մասին, «նրանց հայկական խնդրի վրայ ունեցած գաղափարներին ու ձգտումներին»՝ ցավով արձանագրում է, որ «չորս տարուան անընդհատ տեսական գործունէութիւնից ոչ մի գործնական օգուտ չի եղել»[512]: Ավելին, նրանք մայր հայրենիքում ապրող ազգակիցների վերաբերյալ իրար գերազանցող ամենաեվրոպական ազատամտությամբ, գեղեցիկ ու ամփոփ մտքեր արտահայտելով, նրանց ցեխոտելով, «անողորմ, բարբարոս ու խաւարամիտ ազգ, լուսաւորութեան ու քաղաքակրթութեան անընդունակ մի ժողովուրդ» համարելով և «մխիթարիչ մականուններով ընկերութիւններ կազմելով միայն գոռում էին, թե «Թիւրք կառավարութիւնը անգութ է, բռնատէր է, հարստահարիչ է, հայութեան ոխերիմ թշնամի է»: Ահա նրանց հայրենասիրությունը, եզրակացնում էր հոդվածագիրը: Այնինչ, ստեղծված պայմաններում առավել քան անհրաժեշտ էր գովել ազգային դրական ու գովելի առանձնահատկությունները, մեծարել ժողովրդի «հանճարը և դարիս լուսաւորութեան ու քաղաքակրթութեան ազգի ընդունակ լինելը»: Ահա թե որն է ճշմարիտ հայրենասիրություն, եզրակացնում է հեղինակը:

Իսկ հայրենիքի համար որևէ օգտակար գործ կատարելու, առավել ևս նրա ազատագրության խնդիրները բարձրացնելու համար, հեղինակի կարծիքով, նախ և առաջ խիստ անհրաժեշտ էր, որ տվյալ գործիչը շատ լավ պատկերացում ունենար իր հայրենիքի վիճակի մասին, ծանոթ լիներ նրա պատմությանը, ունեցած հնարավորություններին, որպեսզի չհիմնավորված, վերացական տեսակետներով ու

[512] «Արմենիա», թիվ 38, 1889:

կոչերով վտանգի չենթարկեր ու կորստի չմատներ առանց այն էլ անհետացման եզրին հասած մեր ժողովրդին: Որովհետև աշխարհում յուրաքանչյուր ազգ ձգտում է ապահովել իր քաղաքական ինքնուրույնությունը և, ազատ պահելով այն օտարի միջամտությունից ու ազդեցությունից, իրականացնել իր քաղաքական ու հասարակական երազանքները: Այդ գոյաձևը բացում էր մի մրցադաշտ, որի «վերջը մի ազգի բարօրութիւն և միւսի ընկճումն է»[513]: Գաղտնիք չէ, որ ողջ տիեզերական պատմությունը հենց այդ մրցման հաջորդակռիվն է: Իսկ Օսմանյան կայսրությունը, որի պատմությունը մյուս ժողովուրդներին տիրելու, նրանց թալանելու ու կեղեքելու, նրանց հաշվին գոյատևելու գոյաձևի արտահայտություն է եղել, XIX դարի վերջերին, կորցնելով իր եվրոպական տիրույթները և, փաստորեն ասիական տերության վերածվելով, ավելի կատաղի ու անհանդուրժող էր դարձել իր տիրապետության կազմի մեջ մնացած այլ ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ:

Օսմանյան իշխանություններն անում էին ամեն ինչ, դիմում բռնության ամենավայրագ միջոցների՝ ճգնելով «այսոտիտեւ ճնշել, ոչնչացնել նրան մնացած հպատակներին, որոնք յայտնում են ազատ ապրելու ցանկութիւն, կամ որոնց կեանքը և անցեալը տրամադրում է ձգտելու այդ ցանկութեան կատարման»[514]: Սակայն ըստ էության այդ բռնարարքները «բումերանգի էֆեկտի» արդյունք էին տալիս, և վերջում «Թիւրքիան կատարելապէս համոզուեցաւ՝ որ Հայութեան մէջ կայ մի ապստամբական շարժում, իրան վտանգաւոր ազատ ապրելու ձգտում», որը ժամանակի ընթացքում ծավալվում էր և աստիճանաբար ավելի կազմակերպված բնույթ ստանում[515]:

XIX դարի վերջին տասնամյակներին հալածանքների նոր ալիքն ընդդեմ հայերի լայն թափ էր հավաքում և նոր ձևեր յուրացնում: Այն

---

[513] «Արմենիա», թիվ 35, 1889:
[514] «Արմենիա», թիվ 35, 1889:
[515] Նույն տեղում:

վիլայեթը, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, բնակեցվում էին «չէրքէզ, չաչան և լազգի» գաղթականներով, ավելի էին ծանրացվում հարկերը, անպատիժ էին թողնվում քրդերի բարբարոսությունները, հալածվում էր ամեն մի առաջավոր միտք, հետապնդում էին ուսուցիչներին, անարգվում էին կրոնն ու եկեղեցին, «Հայ հասարակությունը աւելի ևս անբարոյականացնում է, պատիւ, պաշտօն և արծաթ տալով ցածերին ու մատնիչներին»[516]:

Հայերը, որոնց հիմնական մասը բնակվում էր Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Երզնկա վիլայեթներում, կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը, զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, և մի փոքր մասն էլ՝ խաշնարածությամբ, շատ ծանր տնտեսական վիճակում էին: Թեև երկրի տարբեր մասերում հայտնի էին հայկական խաղողն ու գինին, «մանր տուրեւառը և վաճառականութիւնը մեծ մասամբ Հայերի ձեռքն էին: Օտար երկիրների հետ յարաբերութիւն ունեցող վաճառականները Հայերն էին: Նշանաւոր էին Հայ հարուստ Բաղէշցիք ու Կարնեցիք՝ որոնք առեւտրական յարաբերութեան մէջ էին Պարսկաստանի, Ռուսաստանի ու Ֆրանսայի հետ»[517], սակայն, ընդհանուր առմամբ, հայության վիճակն օրհասական էր:

Բավական զարգացած էր ոչխարաբուծությունը: Ոչխարաբույծ հայերը, հեղինակի վկայությամբ, «կոպիտ ու անտաշ են, պինդ հայրենական աւանդութեանց ու եկեղեցական օրէնքներին: Վերին աստիճանի մեծ յարգ են ընծայում հոգեւորական դասին ու գրագէտին առհասարակ, պարզ, բացասիրտ ու դիւրագրգիռ են: Բոլորն էլ համարեայ զինուած են»[518]:

Ինչ վերաբերում էր արհեստներին, ապա հայերը Թուրքիայում «գրաւած են բացառիկ ու նշանաւոր տեղ, դարբիններ, տակառա-

---

[516] Նույն տեղում:
[517] «Արմենիա», թիվ 81, 1889:
[518] «Արմենիա», թիվ 82, 1889:

գործներ, հիւաներ, ոսկերիչներ, դերձակներ, կոշկակարներ, պղնձագործներ, ներկարարներ միայն Հայերն են»[519]: Հոդվածագիրն ընդգծում էր մի շատ կարևոր հանգամանք. բոլոր հայ արհեստավորները ձգտում էին արհեստը զարգացնել ազգային ոգով: Հատկանիշ, որը ազգապահպանության յուրակերպ դրսևորում էր, հակազդեցություն բռնաճնշումներին, ծուլման և բնաջնջման ուղեգիծ որդեգրած իշխանության քաղաքականության և, վերջապես, այն սեփական դիմագիծն անաղարտ պահելու ինքնաբուխ, երբեմն նույնիսկ չգիտակցված ձգտում էր:

Հեղինակի ներկայացմամբ հայ ժողովրդի տնտեսական դրությունը վատ էր, երկրում նյութական հարստություն արդեն գրեթե չէր մնացել, հաճախակի սով էր լինում, գյուղացին ստիպված վաշխառուներին էր թողնում հողն ու կայքը, «Ժողովուրդն այս վիճակի մէջ մի փրկութիւն էր ճանաչում-պանդխտանա՛լ»[520]: Իսկ պանդխտությունը վարակիչ ախտ էր, որը քայքայում, դատարկում էր հայրենի երկիրը, որովհետև գնացողը հիմնականում ոչ միայն չէր վերադառնում, այլև իր հետևից տանում էր հարազատին, բարեկամին, հարևանին ու այդպես շարունակ: Անելանելի վիճակից մարդիկ մեկնում էին մի այլ գավառ, զգալի մեծ էր հոսքն օրինակ՝ Մանազկերտից, Բուլանըխից, Մշո դաշտից, Արճեշից դեպի Ալաշկերտ ու Խնուս: Գաղթողների հողն ու կալվածքներն անցնում էին հիմնականում քրդերի ձեռքը, օրեցօր երկիրը դատարկվում էր, ամայանում: Եվ մի ժողովուրդ, որ տնտեսական այսպիսի դրության մեջ էր, «անկարող է ազգային գոյութեան համար մրցել, եթէ նրա հակառակորդը աւելի ապահովուած է տնտեսապէս»[521],- եզրակացնում էր նամակագիրը: Ուրեմն, հարկավոր էր նախ մտածել մարդկանց ապրելու հնարավորություն ստեղծելու, նրանց կրթելու, լուսավորելու մասին և նոր միայն ազատագրութ-

---

519 Նույն տեղում:

520 Նույն տեղում:

521 «Արմենիա», թիվ 82, 1889:

յան բարձրագոչ հայտարարություններ հնչեցնել եվրոպական երկնագույն արժեքներով պարուրված ամբիոններից, ամփոփում էր իր ասելիքը հայոց ցավով տառապող և օր առաջ նրա ազատությունը բոլորից շատ երազող հոդվածագիրը:

Ոտքի ելած հայ մարդն այլևս նախկինը չէր: Նա աստիճանաբար ձերբազատվում էր կախյալի, հլու ենթարկվող ռայայի հոգեվիճակից և փորձում իր ուժերով տեր կանգնել իր ինչքին ու պատվին: «Հազիւ թե Գումգափուի դեպքին[522] առիթով բանտարկվածներէն մաս մը ազատեցան,- գրում էր նամակագիրը Թուրքիայից,- կառավարութիւնը կը ջանայ ուրիշներ բանտարկել», բայց պետք է բոլորն իմանան, որ «այժմեան Հայը չվախնար բանտէ կամ աքսորէ զի այդ սովորական դարձաւ»[523]: Իսկ եթե իշխանություններն սկսեն «մահու պատիժ ի գործ դնել», ապա դա էլ իզուր կանցնի, որովհետև դրանով հնարավոր չի լինի «հայրենասէր Հայերու վերջը բերել», քանի որ նրանք շատ էին ու օր-օրի նորերն էին գալիս: Իհարկե,- զգոնության կոչ էր անում հեղինակը,- պետք չէր մոռանալ նաև զգուշության մասին, քանի որ ամենուր «բազմաթիւ լրտեսներ կը վխտան ամեն ազգերէ»[524], կառավարությունն էլ շարունակում էր իր անօրեն պահվածքը:

«Մեր այժմեան վիճակը յուսահատական է»,- գրում էր «Շաւարշան» անունով նամակագիրը Վանից, իսկ լացելն այլևս օգուտ չունի: Հարկավոր է գործել, պայքարել, սակայն ցավալին այն է, որ չկային այն անձինք, ովքեր կարող էին առաջնորդել, ղեկավարել ժողովրդին,

---

[522] Կ. Պոլսի մայր եկեղեցու և առաջնորդարանի թաղամասում՝ Գում Գափուում, որպես բողոքի նշան՝ ոստիկանության կողմից Կարինի հայկական եկեղեցին խուզարկելու դեմ հնչակյանների կողմից կազմակերպված ցույցի արդյունքում տեղի են ունենում բախումներ, որի հետևանքով երկուստեք արձանագրվում են զոհեր: Սա, ինչպես նշում է այդ օրերին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանը, առաջին դեպքն էր, երբ քրիստոնյաները համարձակվում են դիմադրել զինվորներին: Տե՛ս Turkey, N 1 (1890-1891), էջ 62-64:

[523] «Այրմէնիա», թիվ 100, 1889:

[524] Նույն տեղում:

որովհետև «նոքա բոլորն էլ վտարուած և աքսորուած են»[525]: Թուրքերն էլ, օգտվելով առիթից, օրեցօր ավելի անողոք ու կատաղի էին դառնում, քրդերի հետ միասին «հայ տարրը փճացնելու գործով կը զբաղին»[526], իսկ օրինակներ, «Պստուկ» նամակագրի վկայությամբ՝ ինչքան ուզեք. Շաքիր անօրենին թեև իշխանությունները ձերբակալեցին, սակայն պատժելու փոխարեն ոչ միայն շուտով բաց թողեցին, այլև նրան հատուկ հրահանգով՝ «ծծել Հայերի արիւն, հափշտակել հայ գյուղացու մնացած վերջին ապրուստն եւս, առևանգել նորապսակ հարսունք և կոյս աղջկունք», հետ ուղարկեցին: Մոկաց Թուղարամ գյուղից Խիզանի շեյխն առևանգել էր երկու հայ հարսների, որոնց վերադարձնելու պայմանը հարսների բոլոր հարազատների կրոնափոխությունն էր:

Ստացվել էր մի վիճակ, երբ սաստկացող կեղեքումները երկրից վանում էին բնիկներին, և բնիկ գեղջուկներն իրենց երկրի սեփական լինելը հարազատների գերեզմաններով էին ուզում հավաստել՝ ջանալով կյանքում վերակենդանացնել ազգի հոգին, որպեսզի հայերն ազատվեն եվրոպական մայրաքաղաքներում անանուն ու անպատիվ թափառելուց և գնչուների խմբին դասվելուց: «Ի՞նչ ընելու ենք»,-հարցադրմանը հենց ինքը՝ «Սամաթիացի» նամակագիրն էլ պատասխանում էր՝ «համախմբիլ և ներքին ոյժ գոյացունել»[527] և գործ կատարել բուն Հայաստանի ներսում: Իսկ համախմբվելու համար «Արմենիա» թերթն էր հրաւիրակ» համարում, ում միջոցով հնարավոր էր միացնել մեր ցաքուցրիվ ուժերը, ստեղծել մի կարևոր դրամագլուխ, որը հայերի ազատության գինը կարող էր դառնալ: «Բոլորուինք այդ ծայնին շուրջը»[528],- կոչ էր անում հեղինակը, որ հայրենասիրական գործողությունների խարիսխը պիտի դառնար:

---

525 Նույն տեղում:
526 «Արմենիա», թիվ 84, 1889:
527 «Արմենիա», թիվ 83, 1889:
528 Նույն տեղում:

Վանից «Աննիբալ» նամակագիրն էլ հայտնում էր, որ նախորդ տարիների համեմատությամբ հարստահարություններն ավելի ու ավելի էին սաստկանում: Իսկ ամենավտանգավորն այն էր, որ եթե նախորդ տարիներին քրդերն առանձին էին գործում, ապա այժմ «կառավարութեան օժանդակութեամբ կը գործեն և անոր պատրաստած ծրագրով առաջ կընթանան»[529]: Իսկ այդ նույն ժամանակ, թուրքական իշխանությունների կողմից հատուկ այդ նպատակով նշանակված գործակալ Մյունիր բեյը, կառավարության ոսկիները շռայլելով, եվրոպական ազդեցիկ թերթերին կաշառում, համոզում էր «դադարեցնեն իրենց կծու լեզու գործածելն Թիւրքիայի դէմ»[530], որը, սակայն, նրան միշտ չէ, որ հաջողվում էր, որովհետև եվրոպական լրագրերը թուրքական «ստակն կառնեն և կը խնդան անոր քթին»[531],- տեղեկացնում է «Շ. Կ.» նամակագիրը: Որովհետև բռնարարքներն ու անօրինականությունները շարունակական բնույթ էին կրում և գնալով ավելի սաստկանում: Ինչպես գրում է «Շաւարշ» նամակագիրը Վանից, քաղաքի շատ բնակիչներ գրեթե առանց պատճառների ձերբակալվում էին: Օրինակ՝ Գրիգոր Բաղեշցյանը, Հարություն Բարսեղյանը, Հակոբ Ժամագործյանը, Արմենակ Եկարյանը (հեռակա) դատապարտվեցին սոսկ այն բանի համար, որ մեծ հարգանք էին վայելում ժողովրդի մեջ: Յուրաքանչյուր դեպքում, երբ հայերը փորձում էին բողոքել, թուրք պաշտոնյաները, ինչպիսիք էին օրինակ՝ Նուրի ոստիկանապետը, արճեշցի ավազակապետ Համզոն, Մուկուրցի ցեղապետ Թիմուրը, անթաքույց ու լկտիաբար հայտարարում էին՝ «Սուլթանը արտոնութիւն տուած է Հայերը ջնջելու»[532]:

Գավառների նման, իրադրությունը լարված էր նաև մայրաքաղաքում, որը, «Շ. Կ.» նամակագրի հավաստմամբ, հիշեցնում էր ծանր

---

[529] «Արմենիա», թիվ 101, 1889:
[530] «Արմենիա», թիվ 106, 1890:
[531] Նույն տեղում:
[532] Նույն տեղում:

շղթայով պաշարված ամրոց: Այնտեղ ոստիկանական մեծ ապարատի կողքին ավելացել էին «900 լրտեսներ ամեն ազգէ և ամեն սեռէ», ամենօրյա խուզարկությունները սովորական երևույթ էին դարձել, սուլթանը խիստ հուզված էր «Հայոց ըրած շարժումներէ, իր առաջին հոգ Հայոց յեղափոխական ցոյցերն կը կազմեն եղեր...»[533], և ամեն օր վիճակն ավելի էր վատթարանում: «Երկրորդ Բաբելոն մի դարձած» Կ. Պոլիսը վերածվել էր ձերբակալությունների ու խոշտանգումների միջնաբերդի, որտեղ անլսելի չարչարանքներ էին բաժին ընկնում մեր «քաղաքական ամբաստանելոց», որոնցից շատերը «ալ չկարենալով դիմանալ այն սոսկալի տանջանաց, մեռած էին բանտի մէջ»[534]: Իսկ մարդասեր Եվրոպան, ում դեսպանների աչքի առջև էին տեղի ունենում այդ վայրագությունները, «մարդազուրերու համար աչքփակ կը մնար և չտեսնել կը ձեւացուներ», պակաս հանցավոր չէր այդ ամենի համար, որովհետև հենց այդ նույն Եվրոպան էր խոստանում «մեզ երջանկութիւն պիտի գնէ», իսկ մենք, միամտություն ունենալով, հավատացել էինք և վստահ եղել, որ «առանց մեր անձնուրացութեան և զոհողութեան մեզ փրկութիւն չը կայ»[535], և նետվեցինք քուրայի մեջ այրվելու, ազատության զոհասեղանին մատաղվելու:

«Արմենիայի» թղթակից-նամակագիրները ջանադրաբար ներկայացնում էին տեղերում կատարվող բռնարարքներն ու բազմատեսակ ապօրինությունները, որոնք դիմորոշ էին թուրքական իշխանություններին: Նրանք իրենց նամակներում մանրամասն նկարագրում էին նաև զանազան պաշտոնյաների կողմից կատարվող այնպիսի ստոր գործառույթներ ու խարդավանքներ, որոնք շատ հաճախ կատարում էին՝ իրենց անմարդկային դեմքը թաքցնելու և սանմեղ հրեշտակի կերպարով հանրությանը ներկայանալու համար: Որպեսզի կենտրոնական իշխանությունների աչքին, իսկ վերջիններս էլ Եվ-

---

533 Նույն տեղում:

534 «Արմենիա», թիվ 108, 1890:

535 «Արմենիա», թիվ 106, 1890:

ռոպայի մոտ, մարդասեր ու օրինապաշտ երևան, համոզում, իսկ ավելի հաճախ սպառնում ու ամենաբիրտ միջոցներով ստիպում էին հայերին «շնորհակալութեան թուղթեր» գրել և ուղարկել մայրաքաղաք. «Վանայ կուսակալ Խալիլ փաշան իբրեւ հիւր հրավիրում է իրեն մօտ Վանայ Ազգային և կրօնական ժողովոյ անդամներին և նրանց բռնի կերպով ստորագրել է տալիս մի նախապատրաստուած թղթի, ուր գրած է եղեր... Հայերս շնորհակալ ենք ողորմած Սուլթանի կառավարութիւնից... մեր խաղաղ և բարեկեցիկ վիճակին և Եւրոպայի տէրութեանց միջամտութիւնը չենք ուզեր»[536]: Այնուհետև շեշտվում էր, որ կառավարության վերոհիշյալ դրածոն Հայաստանի «ամեն կողմեր պտըտելով այսպիսի շնորհակալութեան թուղթեր կառնէ»[537]:

Իր հետաքրքիր եզրահանգման մասին էր տեղեկացնում «Փայլակ» անունով թղթակիցը «Ինքնասպանութիւն» նամակ-հոդվածում: Նա գրում էր, որ Օսմանյան կայսրության բռնած դիրքը կործանարար է, հար և նման ինքնասպանության պատրաստվող մարդու վարքին, քանի որ թե՛ արտաքին և թե՛ ներքին քաղաքականության բնագավառներում անում էր քայլեր, որոնք ուղիղ գծով կայսրությունը տանում էին կործանման: Թուրքերին համարելով «միայն ձրի ուտելու և բացարձակ հնազանդելու մարդմեքենաներ», նրանց պատմությունը «արեան շաղախ ու դաւադիր խոստումներու ամբողջ շարք մը»՝ հոդվածագիրը զգոնության կոչ էր անում հայերին և վստահեցնում, որ «թիւրքաց խոստումներուն հաւատալու և կրկին տուժելու փոխարեն, պետք է քաջազուն Կիլիկեցւոց նման մեր զէնքին, մեր ուժին միայն հաւատանք: Այս հաւատք պիտի զօրացնէ և փրկէ զմեզ»[538]: Հակառակ դեպքում, վստահեցնում է հոդվածագիրը, չենք կարողանա դիմագրավել թուրքերի կողմից սանձազերծված արյունաշաղախ բռնություններին: Արարքներ, որոնցից ոչ մեկը պատահական չէր և

---

[536] «Արմենիա», թիվ 108, 1890:
[537] Նույն տեղում:
[538] «Արմենիա», թիվ 111, 1890:

իրականացվում էին իշխանությունների կողմից նախապես ծրագրված սցենարներով, որովհետև թուրքերը սարսափում էին հատկապես այն շրջաններից, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում և անում էին ամեն ինչ՝ տարածքի ժողովրդագրական պատկերն արմատապես փոխելու համար: Խուրշիտ նամակագրի վկայությամբ, օրինակ՝ Մուշի Հաճի Տայիպ արյունարբու շեյխն ահաբեկված էր, որ «Հայերը թուով շատ-շատ են և իրենց նպատակը մեր հպատակութենէն դուրս գալ է», ուստի թուրքերին այլ բան չէր մնում անելու, քան ղեկավարվել Ղուրանով և «պատերազմել այն ազգերի հետ որոնք քո կրօնքիցը չեն. սպաննէ սրի տակ, միով բանիւ բնաջինջ ըրէ նրանց»[539] սկզբունքով: Իսկապես, սա հարցերի լուծման թուրքական տարբերակն էր, որի մասին նույնիսկ խոսելն արդեն արգահատանք է առաջացնում:

Հետաքրքիր է, որ «Արմենիայի» «Նամականիում» տեղ են գտել նաև այլ երկրներից, որտեղ հայաշատ գաղութներ կային, ուղարկված նամակներ, որոնցում հայրենիքում տիրող տխուր վիճակի համար խոր ցավ կա արտահայտված, ափսոսանք ու նրա ապագայի նկատմամբ՝ տագնապ: Ն. Կ. Յ. թղթակիցը Պարսկաստանից հայտնում էր, որ, «ազգօգուտ լրագրում» (խոսքն «Արմենիայի» մասին է – Ս. Ս.) կարդալով հայրենիքի խառնաշփոթ դրության և արյունաքամ լինելու մասին, մեծ ցավ է ապրում և միաժամանակ՝ ուրախություն: Որովհետև բավական եղավ ինչքան «գերութեան տակ թմրած հայ մարդը մոռացել էր իր ազատութիւնը և հլու հնազանդութեամբ տանում էր իր վզին դրած ծանր լուծը»[540]: Որ վերջապես նա ոտքի ելավ՝ մարդկային իր իրավունքները պաշտպանելու, մարդավայել ապրելու համար պայքարի, որովհետև «Թրքահայ ժողովրդի դառն վիճակը աւելի եւս սաստկացաւ, սրբութիւններ ոտնակոխ եղան, ուսումը և կրթութիւնը ժողովրդին յիշեցրեց իրենց անցեալը, լրագրի ժրաջան աշխատանքը

539 Նույն տեղում:
540 «Արմէնիա», թիվ 104, 1890:

յեղափոխական գաղափարներ ներշնչեց հայ ժողովրդին, ինչն էլ ստիպեց Հային ինքզինքը պաշտպանելու միջոցները փնտռել...»[541]: Մինչդեռ նախկինում նույնիսկ ժողովրդի ուսյալ մասը մի տեսակ թմրած, ապշած սպասում էր, որ մի օր որևէ զորեղ պետություն պիտի գար, արյուն թափեր և ազատեր իրենց թուրքական գերությունից: Իսկ այս վերազարթնումի գործընթացում նա կարևորում էր նաև հեղափոխական մամուլի դերակատարությունը՝ համարելով, որ օրինակ «Արմենիան», բարի խորհուրդներից բացի, պետք է «զգոյշ հրահանգներ տայ յեղափոխականներին», որպեսզի հնարավոր լինի խուսափել անցանկալի հետևանքներից:

Պարսկաստանից ուղարկված «Ման-Արմէնի» նամակից տեղեկանում ենք, որ այդ երկրում հայերը քիչ թե շատ հարմար կացություն ունեն, քան թե Օսմանյան կայսրությունում: Քանի որ պարսկական կառավարությունն անհամեմատ ավելի բարեհաճ էր հայերի նկատմամբ և բարձր էր գնահատում մեր ժողովրդի ստեղծագործ, շինարար և խելացի ու գիտակ հատկությունները[542]:

Նույն «Ման-Արմէնի» մեկ այլ նամակում բավական արժեքավոր տեղեկություններ կան Ուրմիա և Սալմաստ գավառներում բնակվող ասորիների մասին: XX դարի սկզբներին այդ շրջանում բնակվում էին 8-9000 ասորի, կարդում ենք նամակում, և մեկ դար է արդեն, որ միսիոներներն աշխատում են նրանց իրենց կողմը գրավելու ուղղությամբ և հաճախ հասնում են հաջողության: Իսկ հայերը յուրաքանչյուր կորսված ասորու համար մեծ ցավ էին ապրում, որովհետև հայոց ազատագրական պայքարի ընթացքում ասորիներն անփոխարինելի դաշնակիցներ էին և մեծ դերակատարություն ունեին հայերին սատարելու գործում: Մենք վաղեմի հարևաններ ենք և շատ բան կարող

---

[541] Նույն տեղում:

[542] Նամակ Պարսկաստանէն, «Արմէնիա», թիվ 59, 1899:

ենք անել նրանց համար և նրանց հետ, իր խոսքը եզրափակում էր նամակագիր «Ման-Արմէնը»[543]:

Հետաքրքիր երևույթ է, որ «Արմենիա»-ում տպագրված նամակների աշխարհագրությունն ընդգրկում է բոլոր բնակելի աշխարհամասերը: Նամակներ կան եվրոպական գրեթե բոլոր երկրներից, Ասիայից, հատկապես Հնդկաստանից, Բիրմայից, Պարսկաստանից, աֆրիկյան մայրցամաքից՝ Եգիպտոսից, Եթովպիայից, Մարոկկոյից, ամերիկյան մայրցամաքի տարբեր երկրներից և նույնիսկ Ավստրալիայից ու Նոր Զելանդիայից:

Հայաշատ այլ երկրներից «Արմենիա»-ին ուղարկված նամակները բավական արժեքավոր տեղեկություններ ու փաստեր էին պարունակում, և այսօր էլ դրանք տեղեկատվության տեսակետից գնահատելի են: Օրինակ՝ Բուլղարիայից ուղարկված մի նամակից տեղեկանում ենք, որ 1885 թ. հայերը՝ շուրջ 700 տուն, բնակվում էին գլխավորապես այդ երկրի Ռուսչուկ, Շումնու և Վառնա քաղաքներում, և նրանց, հատկապես կրթամշակութային ասպարեզում, վիճակը մինչ բուլղարական իշխանության հաստատումն ավելի բարվոք էր, որովհետև մինչ այդ ասպարեզը ղեկավարում էին խելոք, բանիմաց մարդիկ, քան դրանից հետո, երբ «ամեն ոք սկսաւ ազգային ղեկավար դառնալ, աշխատած են պաշտօնի գլուխ անցնիլ և այժմ կուզեն սափրիչութիւնը ազգին գլխուն վրայ սովրիլ»[544] և «անհամաձայնութիւններ կը շարունակվին տակավին ու կջլատէն ազգօգուտ ուժեր»[545]: Այսինքն՝ ստեղծվել էր մի իրավիճակ, որը բնորոշ է գրեթե բոլոր այն երկրներին, որոնք անկախությունը կորցնելուց հետո՝ երկար տարիներ անց, ազատվել էին օտարի տիրապետությունից և առաջին շրջանում կռվողներից ոմանց՝ անկախ այն բանից, թե ունեն համա-

---

543 Նույն տեղում:

544 «Արմէնիա», թիվ 27, 1885:

545 Նույն տեղում:

պատասխան կրթություն և փորձ, որպես յուրակերպ փոխհատուցում՝ վստահվել էին բարձր պաշտոններ:

Հետաքրքիր բովանդակություն ունի «Մ. Ք.» հեղինակի ուղարկած նամակը Հնդկաստանից: Նամակագիրը հայտնում է, որ շառլատաններ են հայտնվում Հնդկաստանի տարբեր քաղաքներում և հայ հեղափոխության կամ ՀՅԴ-ի անունից գումարներ շորթում տեղի հայերից և անհետանում՝ զգուշացնելով մարդկանց այդ համբակներին չխաբվել և ոչինչ չտալ, քանի որ նրանք հիմնականում արկածախնդիրներ են, ոչ մի կապ չունեն հեղափոխության հետ և իրենց այդ վարքով մեծ վնաս են հասցնում ազատագրական շարժմանը, վարկաբեկում այն[546]: Հնդկահայ նշանավոր մտավորական, մանկավարժ ու դպրոցական գործի նվիրյալ Մեսրոպը Յ. Սէթեանցն էլ հայտնում է այն խոշորամասշտաբ միջոցառումների մասին, որոնք իրականացվեցին հնդկահայ գաղութում և նվիրված էին նշանավոր հայորդի Հովի. Լազարյանցի մահվան տարելիցին: Նամակագրի վկայությամբ միջոցառումը վերածվեց հայանպաստ «աքթի» և կարևոր նշանակություն ստացավ հատկապես մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում[547]:

Աֆրիկա մայրցամաքում գտնվող Տրիպոլի բնակավայրից ուղարկված մի նամակից էլ տեղեկանում ենք, որ այդ շրջանում այնտեղ բնակվում էին մոտ քսան պանդուխտ հայեր, իսկ մշտապես՝ յոթ ընտանիք, մեծամասնությունը՝ Սեբաստիայից[548]:

Տերանսիայից Ն. Պոյաճյան նամակագիրն էլ, «Արմենիա» թերթը եվրոպաբնակ հայերի «սրտի և գաղափարի ճշմարիտ թարգմանը» համարելով և ափսոսանք հայտնելով, որ բավական ուշացել էինք, առաջավոր ազգերից հետ ընկել, որ նմանատիպ թերթ անհրաժեշտ էր վաղուց ունենալ, գրում է. «անձնուէր խմբագիրը 10 սանթիմ իւր յա-

---

[546] Նամակ Հնդկաստանէն, «Արմէնիա», թիվ 25, 1899:
[547] Նամակ Հնդկաստանէն, «Արմէնիա», թիվ 8, 1901:
[548] «Արմենիա», թիվ 11, 1885:

տուկ քսակէն կը վճարէ իւրաքանչիւր օրինակի վրայ»[549], որպեսզի եվրոպաբնակ հայերին ծանոթացներ Հայաստանին ու Հայկական խնդրին: Հեղինակի կարծիքով իսկական հայրենասերն իր անձնվիրության, հայրենիքին անմնացորդ ծառայելու համար վարձատրություն չի ակնկալի, սակայն պետք էլ չէ այդ նվիրաբերվելը միայն ուրիշների գործը համարել, այլ հարկավոր էր, որ բոլորը մասնակցեին այդ սրբազան գործին: Թե չէ շատ հայ հարուստներ հպարտանում էին մեծ գումարներ խաղատներում կամ այլ զվարճանքի վայրերում մսխելով, սակայն երբ խոսվում էր ազգանպաստ որևէ գործի համար իրենց դրամական թեկուզ չնչին մասնակցությունը բերելու մասին, անխղճաբար մերժում էին: Ստացվում էր, որ «հայք չեն ուզեր կորուստներ տալ, այլ սոսկ հանդիսատես ըլլալով իրենց երկրին անկախութիւնը կը փափաքին տեսնել»[550]:

Ռուսաստանից ուղարկված նամակի հեղինակ Նուրբաչյանն էլ ներկայացնելով, որ արմավիրցի հայերը շատ խելացի ու քաջ մարդիկ են, նկարագրում էր, թե ինչպես հարբած և բթացած մուժիկների 6000-հոգիանոց խառնամբոխին հայերը 500 հոգով դաս էին տվել, երբ այդ մուժիկները, չլսելով հանդարտվելու հորդորները, անկարգություններ էին թույլ տվել հայերի նկատմամբ: «Ահա՛ թէ ինչ կարող է անել Հայը՝ երբ նա զայրացած է,- գրում էր նամակագիրը և եզրակացնում,- երանի՜ նա միշտ զայրացած լինէր, գուցէ դրանով կը ստիպէր իւր հակառակորդներին յարգանք զգալ տալ դէպի ինքը...»[551]: Իհարկե, թվական տվյալները հավանաբար չափազանցված են, սակայն համոզված ենք, այնքան էլ հեռու չեն իրականությունից, քանի որ հայերը միավորվելու, բռունցքվելու դեպքում միշտ հաղթել են՝ անկախ նրանից, թե ինչպիսի ուժ է եղել նրանց դեմ կանգնած (Վանի

---

549 «Արմենիա», թիվ 27, 1885:

550 Նույն տեղում:

551 «Արմենիա», թիվ 4, 1887:

1915 թ. ինքնապաշտպանություն, 1918 թ. հերոսամարտերը և այլն – Ս. Ս.):

Հունաստանից «Արմենիային» ուղարկած նամակում Սիմ-Սարյան հեղինակը շատ ցավալի հարց էր բարձրացնում՝ արտագաղթի խնդիրն ու հայ ժողովրդի համար դրա աղետալի հետևանքների թեման: Նկարագրելով Կորնթոսի պարանոցում սկսված ծավալուն կառուցապատման գործընթացը և զանազան խոստումներից խաբված, տուն-տեղ անտեր թողած, փող աշխատելու ու նյութական մեծաքանակ խնդիրներ լուծելու ակնկալիքով այնտեղ հայտնված հայերի աղետալի վիճակը՝ նամակագիրը վկայում էր, որ հայ գյուղացին սովորած լինելով Հայաստանի կենսատու օդին և ջրին, «տեղս չը կրցաւ ապրիլ. հետեւաբար տեղտյս կլիմայն սպառեց շատերու շունչը, շատեր փչեցին իրենց վերջին շունչ մեքենայից անիւներու և փլատակաց տակ և թաղուեցան Յունական հողին տակ»[552]: Այդ ամենի արդյունքում 3000 բանվորներից մեկ տարում կենդանի էին մնացել ընդամենը մոտավորապես 700-ը, վկայում էր նամակագիրը և ափսոսանք հայտնում, թե ինչեր կարող էին անել նրանք հայրենի Մուշում, եթե կազմակերպող, խելացի ղեկավար ունենային և իրենց կարողությունները գործադրեին ի նպաստ հայրենիքի շենացման ու ազատագրության գործին:

Հեռավոր ԱՄՆ-ից գրված մի նամակից տեղեկանում ենք, որ տեղի ամերիկահայերից քչերն էին մասնակցում եվրոպաբնակ հայերի ազգանպաստ ձեռնարկներին, ինչը խորհելու առիթ էր տալիս և այդ իրավիճակը շտկելու անհրաժեշտության զգացում առաջացնում: Հավանաբար Բեռլինի դաշնագրի բովանդակությանը ծանոթ չլինելով կամ դիտմամբ՝ ոգևորելու նպատակով, այդ դաշնագրի 61-րդ հոդվածին վերագրելով «հայրենեաց ազատութիւն» շնորհելու և «Տաճիկի բարբարոս իշխանութեան» վերջ տալու իրականությանը չհամապա-

---

[552] «Արմենիա», թիվ 22, 1888:

տասխանող լիազորություններ, նամակագիրն առաջարկում էր «Ամերիկայի մէջ 500էն աւելի» հայերին հայրենասիրական պարտականություններով կապել եվրոպաբնակ հայերի հետ, Նյու Յորքում բացել կենտրոն և իռլանդացիների օրինակով «խիստ մեծ զոհողութիւններ ընել հայրենի ժողովրդի համար»[553]: Քանի որ մենք փոքրաթիվ ժողովուրդ ենք, ուստի պետք չէր մեզ կուրորեն նետվել պատերազմի դաշտն ու փոշիացնել սակավաթիվ մեր ուժերը, եզրակացնում էր նամակագիրը և առաջարկում, որ հոյն հարուստների նման մեր մեծահարուստները միջոցներ տրամադրեին, իսկ հասարակ ժողովուրդն էլ ջանասիրաբար կրթվեր, լուսավորվեր, հատկապես լավ իմանար Հայաստանի աշխարհագրությունն ու զինվորական գործը և «երբ պատեհ ժամանակը գայ», դուրս գար հայրենափրկիչ պատերազմի:

Տարիների հոլովույթում թերթի «Նամականին» գրեթե չէր փոփոխվում: Պարզապես ժամանակին համահունչ արտահայտչաձևերով կրկին ու կրկին խոսում էր հայ մարդու անելանելի վիճակի մասին: Վերածվելով յուրակերպ փաստական աղբյուրի՝ այն իր մեջ խեղդված հոգու ճիչ էր դառնում, հայության նպատակների շտեմարան: Շատ դեպքերում նույնիսկ չգիտակցելով դա՝ նամակների հեղինակներն առաջ էին քաշում կարևորագույն թեզեր հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրների, ձևերի ու երազած նպատակին հասնելու միջոցների մասին:

Մերօրյա թուրքական պատմագրությունն ու քարոզչամեքենան հաճախ են շահարկում այն դրույթը, թե հայերն Օսմանյան կայսրությունում «արտոնյալ» էին, տիրապետող դիրք ունեին տնտեսության մեջ, շատերը բարձր պաշտոններ էին զբաղեցնում արտաքին հարաբերությունների, բժշկության, իրավական ոլորտներում, ճարտարապետությունն ու արվեստի գրեթե բոլոր ճյուղերը, գրատպությունն ու մամուլի ասպարեզը նույնպես տնօրինում էին հայերը և այլն: Պար-

---

553 «Արմենիա», թիվ 92, 1886:

զապես նրանք «մոռանում են» մի պարզ ու հասարակ ճշմարտություն. թուրքերը ոչ թե կամավոր ու սիրահոժար էին հայերին «զիջել» այդ բարձունքները, այլ իրենք, գտնվելով զարգացման անհամեմատ ցածր մակարդակի վրա և չկարողանալով կատարել համապատասխան գործառույթներ, ստիպված էին դա արել: Իսկ երբ սկսեցին զարգանալ, կրթվել ու տիրապետել ղեկավարման նոր ու նորովի մեթոդներին, անմիջապես «մոռացան» այդ մեծահոգության մասին և ոչ միայն սկսեցին հայերին դուրս մղել բոլոր կարևոր ոլորտներից, այլև, զգուշանալով նրանց հետագա առաջընթացից, լայն ճակատով անցան հարձակման ու որդեգրեցին հայաջինջ քաղաքական ուղղություն: Այդ քաղաքականությունը, որը հաջորդեց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմին ու հատկապես Բեռլինի վեհաժողովին, իր գագաթնակետին հասավ դարավերջին:

1895-96 թթ. ողբերգական իրադարձությունների ընթացքում զոհ գնացին ավելի քան 300 հազար անմեղ հայեր: Հետագայում թերթում շատ էին թուրքական իշխանությունների բռնությունների, սպանությունների, թալանի և այլ բնույթի գազանությունների, ինչպես նաև քրդերի ու չերքեզների վայրագությունների մասին նամակները: Այսինքն՝ 1894-96 թթ. սկսված Հայոց ցեղասպանության առաջին փուլն ավարտ չունեցավ, այլ, ըստ էության, շարունակական բնույթ ունեցավ: Նամակներում նկարագրվում էին, թե ինչպես շատ հաճախ առանց հիմնավոր պատճառների բանտարկելով, խոշտանգելով ու դաժան կտտանքների ենթարկելով, սարսափի էին մատնում հայերին, ստորագրել տալիս ինքնավարկաբեկող թղթեր, իսկ վերջում՝ կաշառքի օգնությամբ «ընդհանուր ներողություն (չգործած հանցանքնուն ներում)» էին հայտարարում: Այդ միջոցներով նրանք փորձում էին Եվրոպայի աչքին ներկայանալ սպիտակաթև հրեշտակի, օրենքի տառը հարգողի ու իրագործողի կերպարանքով: Այս վիճակին տեղյակ «Արմենիայի» «A.B.C.» նամակագիրը զգուշացնում էր, որ եթե «քաղաքական պատճառներով փախստական հայեր կան Եվրոպայի և Ամերի-

կայի մէջ, չխաբուին ու գան թակարդի մէջ իյնան»[554], «ներվում էին» հիմնականում իրական անմեղները, իսկ հատկապես քաղաքական թեկուզ զանցանք թույլ տվածները երբեք ներման չէին արժանանում:

Այդ մասին ուղղակի վկայում է Թուրքիայից ուղարկված և «Արմենիայում» տպագրված հերթական նամակը, որում նկարագրվում էր այն ցնծությունը, որն ապրում էր ժողովուրդը Վանի բանտից ազատվածների առիթով (դրանք 5-6 տարով թեթև հանցանքների համար դատապարտվածներն էին հիմնականում – Ս. Ս.): Սակայն մյուսները «կարգ մը ծանր դատապարտեալների և շատ մը թեթևների չարձակուիլը սրտակոտոր ըրաւ ժողովուրդը»[555]: Իսկ «Շավարշ» նամակագիրը, լավ ըմբռնելով, որ իշխանությունների վարած քաղաքականությունը վերևից է ուղղորդվում, պետական բնույթ ունի և անձերի խնդիր չէ բնավ, գրում է, թե Վանի կուսակալ Պահրի փաշան պաշտոնանկ է արվել, և նրա փոխարեն նշանակվել է Նազըմ փաշան, ինքը, լավ իմանալով պատասխանը, հարց է տալիս. «...տեսնենք սոխի քաղցրը կը լինի՞»[556]:

Հերթական նամակն էլ հետաքրքիր հարցի է անդրադառնում: Օսմանյան իշխանությունները հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ից վերադարձող հայերն օրինական անցաթղթեր ունեին, նրանց վերադարձնում էր սկզբում Հունաստան, ապա՝ Մարսել, իսկ վերջում արդեն՝ ուղղակի Միացյալ Նահանգներ: «Կհասկցուի յայտնապէս որ ալ Ամերիկայէն վերադարձող Հայերը ասկէ ետ պիտի ճամբուին կրկին Ամերիկա, եթե նոյնիսկ անցաթուղթ ալ ունենան»[557]: Թուրքական իշխանությունները, գրում է «Ես» նամակագիրը, դրանով լուծում էին միանգամից երկու կարևոր խնդիր: Նախ՝ երկրից հեռացածներն այլևս չէին կարող գալ ու տեր դառնալ իրենց

---

554 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 1, 1895:
555 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա» թիվ 16, 1895:
556 Նույն տեղում:
557 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 17, 1895:

հողերին ու ինչքին, հետևապես դրանք կմնային թուրքերին կամ քրդերին և հետո՝ ԱՄՆ-ում ապրած-աշխատածները, շփվելով տեղացիների հետ, գաղափարապես ավելի ազատամիտ էին դարձել և նյութապես ավելի ուժեղ: Ինչը վտանգավոր է, քանի որ վերջինները կարող էին իրենց լուրջ նպաստը բերել ազատագրական պայքարի գործին:

Բավական հետաքրքիր ու փաստառատ մի նամակ էլ, մանրամասն տեղեկացնելով Կ. Պոլսի Մայր եկեղեցում տեղի ունեցած Գում Գափուի հայտնի ցույցի մասին հայտնում էր, որ «երկու կողմէն ալ բաւական թուով մարդ սպաննուեցաւ...: Քաղաքում տիրող սարսափը մէծ է»[558], որին հաջորդում են նամակագրի տխուր մտածումները պոլսահայերին սպասվող մեծ վտանգի վերաբերյալ: Այնուհետև շարունակելով ներկայացնել ստեղծված տխուր կացությունը՝ նամակագիրը նկարագրում է ցույցին հաջորդած գիշերը, թե ինչպես 270 հոգի եկեղեցում գիշերեցին՝ պատրիարքին թուրք խուժանից պաշտպանելու համար: Կամ ինչպես ցույցի հաջորդ օրը Կ. Պոլսի թաղերից մեկում մի բախման ժամանակ 50 հայ, 10 թուրք և 2 ոստիկան զոհվեցին[559]: Ամբողջ ժողովուրդը, կարդում ենք «Եսի» գրած նամակում լցված են Մայր, Ղալաթիայի և Բերայի եկեղեցիները և վախենում են դուրս գալ, որ չսպանվեն: Սակայն այդ զգուշությունները ոչնչով չօգնեցին, և զոհերի թիվն օր օրի աճում էր: Այսպես, առաջին օրը մոտավոր հաշվումներով սպանվեցին 300 և կալանավորվեցին 1000 հայեր: Հաջորդ օրը համապատասխանաբար՝ 1000 և 2000 և այդպես ամեն օր ավելի վտանգավոր էր դառնում պոլսաբնակ հայերի համար, մինչև եվրոպական վեց երկրների դեսպանների միջամտությունը: Նամակագրի վկայությամբ դեսպաններն ստիպեցին մեծ եպարքոսին՝ որ թույլատրեն իրենք քննեն կատարվածը, իսկ որպեսզի չմերժվեն, մի քանի նավեր նախապատրաստվեցին՝ Կ. Պոլսից շուտա-

---

[558] Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 20, 1895:

[559] Նույն տեղում:

փոյթ հեռանալու համար: Միայն մեկ շաբաթ հետո ժողովուրդը համոզվելով, որ դեսպանների միջնորդությունը գործել է, դուրս եկավ եկեղեցիներից: Հաջորդ նամակը[560] տեղեկացնում էր, որ թեև քաղաքում միճակն աստիճանաբար կարգավորվում էր, սակայն կոտորվելու վախը դեռևս առկա էր, իսկ մարդիկ համատարած սգում էին իրենց հարազատների ու նյութական հսկայական կորուստները:

Նամակագիրներ «Պիծակն» ու «Օ.Ֆ.»-ն էլ նկարագրում էին մայրաքաղաքում և գավառներում տեղի ունեցած և նոր միայն հայտնի դարձած վայրագությունների մասին: Նրանք զարմացած գրում էին նաև այն իրողության մասին, որ հայությունը, շատ արագ մոռանալով կատարված դժբախտությունները, կարծես ոչինչ չէր էլ եղել, ուգևորվում էր բարենորոգումների մասին իշխանությունների տված հերթական սին խոստումներով[561]:

Նամակագիր «Գարեգինն» էլ հեռավոր ԱՄՆ-ից վկայում էր, որ «Արմենիան» էր այն լրագիրը, որ ոչ միայն կոչ էր անում ազատության համար ոտքի ելնել, այլև մշտապես ժողովրդին զգուշացնում էր ակնկալվող արհավիրքներից, քանզի Մ. Փորթուգալյանն ու իր թիմակիցները լավ էին ճանաչում թշնամուն, գիտեին նրա՝ արյան ծարավի ու հարցերը սպանելով լուծելու հոգեբանությունը[562]: ԱՄՆ-ից մեկ այլ նամակագիր «Ապահն» էլ իր մտահոգությունն էր հայտնում, կոչ անում բոլորին զգուշանալ հատկապես շառլատաններից, քանի որ նրանք, իրենց անձը գերագնահատելով, փորձում են կեղծ հերոսներ ներկայանալ և անձնական օգուտներ քաղել ազատարար շարժումից:

Հետագայում «Արմենիայում» «Նամակ ...ից» (օրինակ՝ Նամակ Պարսկաստանից – Ս. Ս.) խորագրերին աստիճանաբար գալիս էին փոխարինելու «...էն լուրեր»-ը (օրինակ՝ Վանէն լուրեր – Ս. Ս.): Իհար-

---

560 Նամակ Կ. Պոլսէն, «Արմէնիա», թիվ 37, 1895:
561 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 49, 1895:
562 Նամակ Ամերիկաէն, «Արմէնիա», թիվ 69, 1895:

կե, բովանդակային էական որևէ փոփոխություն չկար, պարզապես խմբագիրը փորձում էր նախ, օգտագործելով թերթային ընդունված բառաձևը, ավելի լրջություն հաղորդել տրվող տեղեկությանը, նաև ավելի նոր ու թարմացրած թերթի տպավորություն ստեղծել ընթերցողների շրջանում:

«Արմենիան», հավատարիմ մնալով իր որդեգրած նախասիրություններին, հաջորդ տարիների ընթացքում ևս ավելի հաճախ Վանից ուղարկված նամակներն էր հրապարակում: Հավանաբար, այդ գործում իրենց ազդեցությունն ունեին Մ. Փորթուգալյանի՝ Վանում ապրած և բեղուն աշխատանքներ ծավալած տարիներն ու այն ոչ պակաս կարևոր փաստը, որ XIX դարի վերջերին հայ ազատագրական շարժման ընդհանուր կտավի վրա հետզհետե ավելի ու ավելի էր կարևորվում հենց Վան-Վասպուրականի դերակատարությունը մի քանի առումներով: Նախ՝ Վանի վիլայեթը համեմատաբար հայահոծ բնակչություն ուներ, և, բնականաբար, այստեղ ակնառու էին իշխանությունների խտացված հայադավ քաղաքականությունն ու ժողովրդի ծանր կացությունը: Կարևոր էր նաև այն, որ Վանը գտնվում էր ռուս-պարսկական կապուտիների վրա, և այնտեղ շփումների հնարավորությունները «դրսի» աշխարհի հետ շատ էին:

Դարավերջին Վան քաղաքն ու շրջակա բնակավայրերը հայտնվել էին բավականին ծանր կացության մեջ: Դեռ թարմ էր կոտորածների ու 1896 թ. Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի ղեկավարությամբ հերոսական դիմադրության կազմակերպիչների ու մասնակիցների ընտրանու նահատակության իրողության ծանր տպավորությունը, չէր բավարարում սնունդը, մեծ վնասներ էին պատճառում տարափոխիկ հիվանդությունները: «Ժամանակէ մը ի վեր,- կարդում ենք Վանից ուղարկված Գ.-ի նամակում,- Վանի օրուայ խնդիր հիւանդներն են, որ գրեթէ առանց բացառութեան կան ամէն տան մէջ: Երկու ամիս կլլինի որ ժանտատենդ թիֆօ, փորահարութիւն, աչքացաւ, փողա-

ցաւ, կարմրուկ, ջերմ և այլն այնչափ կոտորած կանեն մեր քաղաքի մէջ, որչափ չեղաւ յունիսի անցքերի մէջ:

Յուսահատական է որ ոչ բժիշկ ունինք և ոչ դեղատուն...»[563]: Ամենացավալին նամակագրի վկայությամբ այն էր, որ այդ կողմերում քրիստոնյա բժիշկներին արգելված էր բուժումներ անելը, իսկ թուրք բժիշկներին ժողովուրդը հիմնավոր պատճառներով չէր վստահում:

Այդ տխուր ու անելանելի կացությանն էլ գումարվում էին այն սարսափելի ապրումները, որոնցից ժողովուրդը տանջվում էր՝ ամեն րոպե սպասելով, որ ցույց տված դիմադրության և հատկապես Արմենական կուսակցության անզուգական առաջնորդ Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանի գլխավորությամբ 1896 թ. հունիսի 3-ից մինչև 8-ը կազմակերպված և «Մեծ դեպք» անվանված Վանի հերոսական ինքնապաշտպանության պատճառով կատաղած իշխանությունները պիտի կոտորածներ սկսեն, իսկ թուրք խուժանն էլ պատրաստ սպասում էր, թե երբ իրականացնի այդ ջարդերն ու թալանը: Թուրքի սովորությունն է, բանաձևում էր նամակագիրը, ամեն անգամ իրեն դիմադրող «ոյժ տեսած ժամանակ թողած և սկսած է անզէններ, կնիկներ և տղայներ կոտորել»[564]:

«Մուշեղ» անունով նամակագիրն էլ, ներկայացնելով երկրում ստեղծված ծանր տնտեսական և սոցիալ-հոգեբանական անհանդուրժելի մթնոլորտը, նկարագրում է հայերի համար առաջացած անելանելի վիճակը: Երկրում հաց շատ կա, գրում է նամակագիրը, ապա պարզաբանում, սակայն այն թուրքերի ու քրդերի ձեռքին է: «Իշխանութիւնը Հային ջնջելու համար խլեց հացը: Վանի ողջ հացը կուտակվեց Հիւսեյն և Էմին քուրդ փաշաների քով»[565]: Սրանով կառավարությունը լուծում էր միաժամանակ երկու խնդիր: Նախ՝ «մսահմեդականութեանը սովից ապահովում էր, իսկ անհնազանդ հայերին

---

563 Նամակ Վանէն, «Արմենիա», թիվ 23, 1896:

564 Նույն տեղում:

565 Նամակ Վանէն, «Արմենիա», թիվ 34, 1899:

«անոթի կպահեր»: Դրսից եկած դրամը, շարունակում է ներկայացնել անհույս վիճակը նամակագիրը, նորից հայից էր խլում: Կառավարությունը բանակի համար «գնումներ» էր անում և փոխարենը «սէնետի մախսուսիներ» էր տալիս (ըստ էության ոչ մի երաշխիք չունեցող գրավոր ստացականներ – Ս. Ս.), որոնք իրականում դատարկ թղթեր էին, որովհետև եթե որևէ մեկը դրանց դիմաց որևէ բան պահանջեր, խստագույն կպատժվեր: Այնպես որ այդ կողմնակի խորագրի ներքո հիմնականում տեղ էին գտնում մայր հայրենիքից, հատկապես Վան–Վասպուրականից ուղարկված նամակները:

Երկրորդ տասնամյակից սկսած՝ պարբերականում լույս տեսած նամակների աշխարհագրությունն աստիճանաբար ընդլայնվում է՝ ներառելով գրեթե բոլոր բնակեցված աշխարհամասերը: Առանձնապես շատ էին ԱՄՆ-ից ուղարկված նամակները, որոնք բազմաբովանդակ էին և շոշափում էին ամենատարբեր թեմաներ, որոնք առնչվում էին հայերին ու հայկականին: Թերթի նամակների միջոցով կարելի է բավականին ընդարձակ պատկերացում կազմել ամերիկահայ գաղութի առօրյայի, այդ երկրում հայության կրած անասելի դժվարությունների և աստիճանաբար որպես առանձին էթնիկական համայնք ԱՄՆ-ում կազմավորվելու գործընթացների մասին: Թերթի գրեթե բոլոր համարներում կան ԱՄՆ-ից ուղարկված ամենատարբեր թեմաներ շոշափող նամակ-թղթակցություններ: Շատ են հատկապես հայերի ծանր կացության, ավանդական կաշկանդիչ կապանքներում մեծացած և նոր պայմաններում հայտնված նրանց շփոթի, տեղի գաղութում սկսված խժդժությունների, ինչպես նաև նոր պարբերականներ լույս ընծայելու, եկեղեցակրթական, մշակութային կյանքի և բազմաթիվ այլ թեմաների մասին նյութերը: Այսպես, օրինակ «Սեւ Ծովը» գրում էր, որ ԱՄՆ-ում հայեցի լրագրերը քիչ են ու տկար, որովհետև անհրաժեշտ չափի գումարներ չկան[566]: Կամ մեկ այլ նամակ, որը

---

[566] Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմէնիա», թիվ 49, 1898:

հայտնում էր հայերի հայրենակցական հենքի վրա ստեղծվող և հայանպաստ աշխատանքներ ծավալող խմբակների գործունեության, հայեցի կրթություն ստանալու անհրաժեշտության, հայրենիքին սատարելու և նրա ազատագրության մասին չմոռանալու և այլ հրատապ թեմաների մասին: Իսկ «Յ. Ն.» նամակագիրն էլ բարձրացնում էր շատ կարևոր մի խնդիր: Նա գրում էր, որ ամերիկյան ազատությունը կարծեցյալ է, և շատ ժամանակ չի պահանջվի, ու հայերը կձուլվեն Ամերիկա կոչված կաթսայում[567]:

Այդ շրջանում մեծ թիվ էին կազմում նաև Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ բազմաթիվ անարդար դատավարությունների մասին[568], ինչպես նաև մեծաքանակ հայերի կողմից հայրենի տունն ու եզերքները լքելու և հատկապես Ամերիկա արտագաղթելու մասին նամակները, որոնց հեղինակները մեծ ցավով հայտնում էին, որ երկիրը դատարկվում էր և մնում օտարներին: Ավելին, ԱՄՆ գաղթածներից շատերը, հայտնվելով օտար ափերում, չտիրապետելով տեղի լեզվին ու օրենքներին, դառնում էին նյութապաշտ և ոչ մի սրբություն չճանաչող բարքերի զոհերը[569]: «Նազլու» անունով նամակագիրը, նկարագրելով ԱՄՆ ներգաղթած հայերի տխուր կացությունը, պարզաբանում էր, որ այդ թշվառներին պետությունն ամսական 1–2 դոլար թոշակ էր տալիս, նրանք ինչպե՞ս գոյատևեին: Սակայն ամենացավալին այն էր, որ նրանք վերադարձի որևէ հնարավորություն էլ չունեին[570]: Բայց դրանով չբավարարվելով՝ ԱՄՆ-ի կառավարությունն օրեցօր ավելի էր խստացնում ներգաղթի պայմանները, երկիր թողնելու համար պարտադիր էր համարվում գրագիտության որոշակի մակարդակը, որևէ ազգականի երաշխավորությունը եկվորի համար կամ 500 ԱՄՆ դոլար կանխիկ գումարի առկայությունը, որն այն

---

567 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմէնիա», թիվ 70, 1898:
568 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 26, 27 և այլն, 1896:
569 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմէնիա», թիվ 30, 1896:
570 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմէնիա», թիվ 45, 1897:

ժամանակ շատ մեծ գումար էր[571]: Սակայն այդ պայմաններում էլ հայերը շարունակ ձգտում էին մեկնել «Ավետյաց երկիր»-ԱՄՆ, ինչը, մի շարք սոցիալ-քաղաքական պատճառներին զուգընթաց, հետևանք էր նաև միսիոներական կառույցների քարոզչական գործունեության և սիրալիր վարվելակերպի: Նկարագրելով այդ գրավիչ ու խաբուսիկ վարվելակերպի զոհերի ծանր վիճակը՝ «Եղյի համալսարանից Տիքիկոս» նամակագիրը, որպես եզրափակիչ խոսք՝ վկայակոչելով ամերիկացիների հայտնի նշանաբանը՝ «ամեն մարդ իրեն համար, Աստուած բոլորի համար», ցավ էր հայտնում և մյուսներին տեղեկացնում, որ այնքան էլ ավետյաց չէ իրենց երկիրը[572]:

Մեկ այլ նամակում, նկարագրելով ԱՄՆ ներգաղթած հայերի թշվառ վիճակը, հեղինակը հայտնում էր, որ միակ մխիթարությունն այնտեղ այն է, որ ԱՄՆ-ում թուրքի կործանարար սուրը չկա, սակայն այստեղ էլ «այդ պակասն կուգան լրացունել մեր ազատասէր դաշնակցականներ, ատելութիւն և կռիւ սերմանելով այստեղ համարիւն եղբարաց մէջ»[573]: Չափազանցելով գույները և դառնությամբ մեղադրելով դաշնակցական գործիչներին ցուցադրական գործողությունների ու դրանց հետևանքով ջարդերի առիթներ տալու համար նամակագիրը խոսքը եզրափակում էր շատ տխուր և ցավաշատ երանգով. «Այդ չարագործներ Տաճկաստանի և Պարսկաստանի մէջ իրենց պակաս թողուցածներ կուզեն այստեղ լրացուներ»[574]:

Հարմանալի էր, կարդում ենք «Արմենիային» ուղարկված մեկ այլ նամակում, որ այդ ծանրաբեռ պայմաններում դեռ մարդիկ խոսում, քննարկում էին մեծ տերությունների օգնությամբ հայության ազատագրության մասին: Այդ տերություններին համարելով անհույս խաղամոլներ՝ նամակագիրը պատկերավոր ներկայացնում էր մի իրավի-

---

571 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմենիա», թիվ 50, 1897:
572 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմենիա», թիվ 50, 1897:
573 Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն, «Արմենիա», թիվ 35, 1898:
574 Նույն տեղում:

ճակ, երբ խաղասեղանի շուրջ նստած այդ տերությունները տարբեր չափերի խաղադրույքներ են կատարում, սակայն բոլորի նպատակը մեկն է. հայկական խաղաքարտով մեծ զիջումներ կորզել Թուրքիայից: «Վեց պետութեանց առաջարկութեամբ,- կարդում ենք նամակում,- Սուլթանի ընդունած բարենորոգմանց նշանաւոր ծրագիրը՝ որ մկրտուեցաւ հարիւր հազարաւոր հայ ժողովրդի արիւնով ու բոցավառ աւերակներով», դեռ մարդկանց հույս է տալիս, ոգեշնչում: Բավական չեղա՞վ, հարցնում էր նամակագիրը:

Թերթում շատ հազվադեպ, բայց տպագրվում էին նաև բարի լուր ավետող նամակներ: Օրինակ՝ Կ. Պոլսից ուղարկված մի նամակում ուրախությամբ հայտնվում էր այն մասին, որ պատրիարքարանի հետ բանակցելով և իրեն հետաքրքրող հարցերի մասին սպառիչ պատասխաններ ստանալով՝ կառավարությունն աստիճանաբար ազատում էր ձերբակալվածներին՝ չմոռանալով, իհարկե, ամեն անգամ սրտաճմլիկ ներկայացում բեմադրել, որոնց պարտադիր հրավիրվում էին եվրոպացի դիվանագետներ և թղթակիցներ[575]:

«Արմենիայում» կան նաև նամակներ, որոնք գաղափարաքարոզչական ուղղվածություն ունեն և մեր կարծիքով տպագրվել են «Նամականիում»՝ ընթերցողներին ավելի վստահություն ներշնչելու, առաջին հայացքից ոչ քաղաքական թեմատիկ ընդգրկում ունենալու, հասարակ մարդկանց սրտամոտ լինելու և, պարզապես, «ազատ» զրուցելու տպավորություն թողնելու նպատակով՝ միաժամանակ ասելով, ներկայացնելով իրենց գաղափարախոսական նկրտումները: Ահավասիկ՝ «Վարդը» Թավրիզից «Բաց նամակ Հայաստանցիներին» նյութում հարցնում է՝ ով է իսկական հեղափոխականը, և ինքն էլ պատասխանում է. «Յեղափոխականը բռնութեան դէմ կռուող գաղափարի զինուորն է, անմեղ հալածեալին օգնութեան ձեռք մեկնողը: Նա պէտք է լինի ազնիւ և մաքուր, բռնութեան դէմ կռուողը ինք բռնաւոր

575 Նամակ Թուրքիաէն, «Արմէնիա», թիվ 2, 1897:

չը պէտք է լինի»[576]: Իսկ Վ. Շահէնն էլ, բաց նամակով դիմելով իր գաղափարակիցներին, շեշտում է, որ եթե իսկապես մենք գաղափարակիցներ ենք, ուրեմն հաշիվ պիտի տանք ինքներս մեզ. «Ի՞նչ ենք տուել այդ գրական գանձանակին: Գործը որչափ լինի ճշմարիտ ու ազնիւ,- կարդում ենք նամակում,- գործիչը միակ չի կարող իւր ձգտումներին գոհացում տալ, երբ համակիրներ չլինին: Հրատարակել այսպիսի հանգամանքներում Արմէնիան, ես իմ կողմից նահատակութիւն եմ համարում»[577], ուստի հարկավոր է համախմբվել թերթի շուրջ և առաջ ընթանալ ազատություն տանող նրա նշած ուղիով:

Պարբերականում շատ են նամակները նաև Ռուսաստանից, որը հայաշատ երկրորդ կայսրությունն էր, և նրա կազմում էր Արևելյան Հայաստանը: Նամակագիրները «Արմենիայի» միջոցով ներկայացնում էին հայերի դրությունը, ցույց տալիս, որ թեև այստեղ Օսմանյան կայսրության նման հայերի ֆիզիկական գոյությունը հարցականի տակ չէր, սակայն սոցիալական, իրավական ու ազգային բռնաճնշումներն այստեղ էլ քիչ չէին: Ավելին, ռուսական քաղաքականությունն ուղղված էր դեպի տաք ջրեր պետրոսմեծյան հայտնի կտակի իրականացմանը, իսկ այդ ճանապարհին իր բազմաթիվ ու բազմատեսակ խնդիրներով կանգնած էր հայ ժողովուրդը: Այսինքն՝ Հայաստանն իր ռազմավարական գերակա դիրքով շատ էր անհրաժեշտ Ռուսաստանին, սակայն առանց «գլխացավանք» հայերի: Հենց այս թեզն էր բանալին՝ հասկանալու համար այն քաղաքականությունը, որը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին վարում էր Ռուսաստանը հայերի նկատմամբ: Այս են վկայում նաև «Արմենիայում» լույս տեսած մեծաքանակ նամակները: Ահավասիկ, դրանցից մեկը գուժում էր, որ ռուսները Կովկասի «մէջ հայ տարրի ազդեցութիւնը և թիւը ոչնչացունել և այդ նպատակի համար Ռուսաստանի խորքերից ռուս գյուղացիներ էր գաղթեցնում Կովկաս և Հայից խլելով հողերը տալիս էր

---

[576] Բաց նամակ Հայաստանցիներին, «Արմէնիա», թիվ 48, 1898:

[577] Բաց նամակ գաղափարակիցներիս, «Արմէնիա», թիվ 81, 1898:

նրանց»[578]: Մեկ այլ նամակում էլ խոսվում էր այն ցավոտ հարցի մասին, որ ժամանակի ընթացքում չարիքի էր վերածվել հայերի գլխին: Խնդիրն այն էր, որ Արևմտյան Հայաստանից գաղթած բոլոր այն հայերը, որոնք անմիջապես չէին ընդունում ռուսական հպատակություն, հետ էին վերադարձվում և կուտակվում Կարսում: Օսմանյան կայսրությունն էլ իր հերթին էր հրաժարվում հետ ընդունել վերջիններին, և նրանք հայտնվում էին փակուղում: Այս ամենը, նամակագրի կարծիքով, արվում էր այն դիտավորությամբ, որ հայերն այդ քաշքշուկներից խուսափելու համար հեռանային, և տարածաշրջանը մնար օտարներին[579]: Մի ուրիշ նամակում էլ ցավով նշվում էր, թե բավական չէր, որ հայերը Թուրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում ճնշվում էին, 1899 թ. դեկտեմբերին այդ ճնշումներին եկավ միանալու ավերիչ երկրաշարժը, որն ընկճեց Թիֆլիսը և կործանեց, հողին հավասարեցրեց հատկապես Ախալքալաքի շատ բնակավայրեր՝ անտուն թողնելով հազարավոր մարդկանց[580]: Հավանաբար ճիշտ է այն թևավոր խոսքը, եզրակացնում է նամակագիրը, որ «կարկուտը միշտ ծեծած տեղն է ծեծում»:

Ընդհանուր առմամբ Ռուսաստանից ուղարկված նամակներն առանձնանում են նրանով, որ դրանցում ներկայացված են հայերի սոցիալական ծանր կացությունը, սակայն քաղաքական պահանջները գրեթե բացակայում են: Հետո նամակագիրները որքան էլ դժգոհացած են գրում հայ մարդու տնտեսական վատ դրության մասին, քննադատում պաշտոնյաներին, սակայն երբեմն կիսաբերան, երբեմն բացահայտ իրենց համակրանքն են դրսևորում Ռուսաստանի նկատմամբ՝ ամեն անգամ իրենց փրկության հույսով աղերսուն հայացքն ուղղելով հյուսիս: Իհարկե, հանդիպում են նաև հակառուսական տրամադրություններ պարունակող նամակներ, սակայն դրանք

---

578 Նամակ Ռուսիաէն, «Արմէնիա», թիվ 20, 1899:
579 Նամակ Ռուսիաէն, «Արմէնիա», թիվ 1, 1902:
580 Նամակ Ռուսիաէն, «Արմէնիա», թիվ 51, 1900:

այնքան քիչ են, որ հանգիստ խղճով կարելի է արձանագրել՝ հայերն անոտղելի ռուսամետներ էին:

Երբեմն-երբեմն «Արմենիայում» տպագրվում էին նամակներ եվրոպական երկրներից: Առավել հաճախ դրանք ոտղարկվում էին Բուլղարիայից, Ռումինիայից, Ավստրո-Հունգարիայից, Ֆրանսիայից և մյուս հայաշատ երկրներից: Ամենաակտիվը բուլղարական համայնքն էր: Քանի որ ոչ վաղ անցյալում, գտնվելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ և իր մաշկի վրա դարեր շարունակ զգալով նրա ծանր ու անտանելի ճնշումը, բուլղար ժողովուրդը սիրահոժար նպաստում էր հայերի համախմբմանն ու թուրքական բռնատիրության դեմ ակտիվ ազատագրական պայքարի ծավալմանը: Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսչուք, Բուրգաս և այլ քաղաքներում կային բավական մեծ հայ համայնքներ, որոնք ունեին իրենց կրթամշակութային, եկեղեցական ու քաղաքական կառույցները: Հենց դրանց գործունեության լուսաբանման, կազմակերպած զանազան հանդիսությունների, հայանպաստ գործառույթների մասին էլ գրված նամակները հաճախ լույս էին տեսնում թերթի էջերում:

Հաճախ թերթը նամակագրական թղթակցություններ էր ստանում նաև ասիական երկրներից, որոնցում ներկայացվում էին ակտիվ հայեցի օազիսներ դարձած հնդկահայ, բիրմահայ և այլ գաղութները: Ավելի հաճախ նամակներ էին տպագրվում Հնդկաստանից, որոնք նկարագրում էին տեղի հայերի վիճակը, իշխանությունների հիմնականում բարեհաճ վերաբերմունքը ստեղծագործ և առևտրի մեջ վարժ հայերի նկատմամբ, որոնք զարգացնում էին այդ երկրի տնտեսությունն ու բանկային համակարգը: Օրինակ՝ «Վանիկ» անունով նամակագիրն անթաքույց ուրախությամբ շեշտում է տեղում իշխող անգլիացիների ընդգծված հայանպաստ դիրքորոշումը և գրում, որ այն բոլոր քաղաքներում, որտեղ հայեր էին ապրում, չկար մի միջոցա-

ռում, կարևոր իրադարձություն, որոնց պատվավոր տեղում չմասնակցեին հայերը[581]:

Աստիճանաբար ակտիվանում էին աֆրիկյան մայրցամաքում հաստատված հայերը: Մասնավորապես բուռն զարգացում էր ապրում եգիպտահայ գաղութը, որտեղ տնտեսական հնարավորություններին զուգընթաց ավելանում էին նաև հայրենիքին և մայր ժողովրդին օգտակար լինելու, ինչ-որ ձևով սատարելու ձգտումները: Սակայն այստեղ էլ ամեն ինչ չէ, որ լավ վիճակում էր հայերի համար: Բացի նրանից, որ նրանք բոլոր բացասական հետևանքներով օտարներ էին համարվում, այստեղ խիստ զգալի էր կրոնական անհանդուրժողականությունը քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ: Նմանաբնույթ օրինակները շատ են: Բերենք դրանցից մեկը: «Հերազ» անունով նամակագիրը հայտնում էր, որ հայերը Թուրքիայից մի կերպ փախան, սակայն այստեղ էլ հանգիստ չգտան: Մոլեռանդության ախտով վարակված՝ հիմա էլ տեղի արաբներն են հայերի նկատմամբ ոտնձգություններ կատարում: Ամեն միջոցի դիմում են՝ նրանց տնտեսական հնարավորությունները սահմանափակելու, ազգային արժանապատվությունը վիրավորելու և նրանց ունեցվածքին տեր դառնալու համար[582]:

Ինչ-որ չափով նպաստավոր պայմաններ գտնելով՝ շատ հայեր էին գաղթում Եգիպտոս: Բնականաբար, այստեղ աստիճանաբար կուտակվում էին նաև հայ ժողովրդի ցավերը դարմանելու առաքելությամբ ստեղծված հայկական կուսակցությունների բազմաթիվ անդամներ: Ընդհանրապես, Եգիպտոսի՝ Թուրքիային հարևան լինելու հանգամանքով և համեմատաբար տանելի թողտվության առկայությամբ պայմանավորված, XX դարի սկզբներին այստեղ կուտակվեցին հեղափոխական կարող ուժեր, որոնք, հայանպաստ գործունեությանը զուգընթաց, սկսեցին նաև միմյանց վնասել: Տուրք տալով կուսակ-

---

581 Նամակ Հնդկաստանէն, «Արմէնիա», թիվ 67, 1897:

582 Նամակ Եգիպտոսէն, «Արմէնիա», թիվ 74, 1897:

ցամոլության զազրելի սովորույթին՝ շատ գործիչներ, հաճախ մոռանալով իրենց իսկական կոչումն ու ժողովրդին անշահախնդիր ծառայելու տված երդումները, ավելի հաճախ բոլոր հնարավորություններն օգտագործում էին կուսակցությունները պառակտելու, միմյանց թուլացնելու ու վնասելու համար՝ հասնելով նույնիսկ եղբայրասպան կռիվների աստիճանի: Ներկայացնելով այդ տխուր կացությունը՝ «Արդուարդ» նամակագիրը ծավալուն թղթակցությունում փորձում է գտնել եգիպտահայ գաղութի յուրաքանչյուր անդամին տանջող ցավոտ հարցի պատասխանը՝ ի՞նչ ենք ուզում մենք իրարից, ինչու՞ ենք մենք իրար վրա զենք բարձրացնում: Հարցերի պատասխանները փնտրելու ճանապարհին նամակագիրը ցավով արձանագրում է, որ այդպիսի պահվածքով մենք ոչ միայն պատվազրկվում ենք օտարների առջև, այլև դրանից խիստ տուժում են գաղութահայ կյանքի շատ կարևոր օղակներ, ինչպիսիք են օրինակ՝ կրթական գործը, պարբերականների լույսընծայումը, հայրենակցական և այլ բնույթի զանազան միություններն ու ընկերությունները, որոնք կարևոր դերակատարություն ունեն ազգապահպանության խնդրում[583]:

Հետագա տարիների[584] ընթացքում ևս «Արմենիան» ստանում էր մեծ քանակությամբ նամակներ աշխարհի տարբեր ծայրերից: Առանձնապես նամակների հոսքն ավելացավ հետեղեռնյան շրջանում: Դրանք հիմնականում եղեռնից հրաշքով փրկված ականատեսների վկայություններ էին թուրքերի ու քրդերի անմարդկային, սահմռկեցուցիչ վայրագությունների մասին, ինչպես նաև կորցրած հարազատներին գտնելու հույսով լեցուն, նրանց մասին տեղեկություններ պարունակող գրություններ:

---

583 Նամակ Եգիպտոսէն, «Արմէնիա», թիվ 74, 1897:

584 «Արմէնիա» թերթի, հետևապես նաև «Նամականի» խորագրի ներքո լույս տեսած նյութերի հետեղեռնյան, հայոց պետականության վերականգնման, ՀՀ Առաջին հանրապետության և խորհրդային առաջին տարիների, այսինքն՝ 1915-1923 թթ. շրջանի պատմությանը կանդրադառնանք ատենախոսության V գլխում:

Ամփոփելով նշենք, որ «Արմենիա» թերթն իր հրապարակումներում քաղաքակիրթ աշխարհին ներկայացնում էր այն ծանր ու անելանելի կացությունը, որում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայտնվել էր հայ ժողովուրդը: Սակայն ազատ ու մարդավայել ապրելու ձգտումը, որ միշտ ուղեկցել էր հայությանը, այդ դժվարին պահին ևս նրա հոգում էր, որովհետև նա կենսունակ էր, դիմացկուն, Մասիսների կենսահյութով ու հզորությամբ տոգորված: XIX և XX դարերի սահմանագծին հստակ դրված էր «թվ-ումի» բախտորոշ հարցը: Բարիկադի մի կողմում հզոր Օսմանյան կայսրությունն էր, մյուսում՝ թույլ ու անկազմակերպ հայ ժողովուրդը: Իշխանությունները հայությանը վերջնականապես տկարացնելու և իր հայրենի օրրանից դուրս մղելու համար ձեռնարկեցին մի շարք քայլեր.

ա) աննախադեպ խստացրին հարկերը, խլեցին ու յուրացրին մեծաքանակ հայապատկան հողեր, որի արդյունքում հայերը հոծ խմբերով արտագաղթում էին,

բ) հովանավորում էին քրդերի ապօրինությունները,

գ) քարոզում էին կրոնական անհանդուրժողականություն և այն, որ իբր մահմեդական ժողովուրդները վատ են ապրում հայերի մեղքով:

դ) փակում էին հայկական կրթօջախներն ու թերթերը, հալածում՝ հոգևորականությանը,

ե) հայերին ֆիզիկապես ոչնչացնում էին և միջազգային հանրությանը հավատացնում, թե հայը ապստամբ է, դրա համար են պատժում:

Այս ամենին «Արմենիան» փորձում էր հակադրել վերափոխումների իր ծրագիրը, որը մերկապարանոց կլիներ առանց որոշակի գաղափարաբանական և տեսական հիմնավորումների: Իսկ դրանցում պարունակվող հետևություններն անհրաժեշտաբար կայացվել էին գոյություն ունեցող փաստերի հիման վրա: Ավելի իրատեսական լինելու համար «Արմենիան» վկայակոչումներ էր անում չեզոք և օտարազգի հեղինակներից: Թերթի կարծիքով հայ ժողովրդին ոչինչ չէր մնում

անել, քան ծերբազատվել իր մեջ գոյություն ունեցող, իրեն ներսից կրծող թերություններից և երկար ու մանրակրկիտ նախապատրաստվելուց հետո՝ պայքարի դուրս գալ: Այդ թերություններն ու խանգարող հանգամանքները, ըստ «Արմենիայի», հետևյալներն էին.

ա) դարեր շարունակ գտնվելով հետամնաց Օսմանյան կայսրության բռնատի-րության ներքո՝ հայերը հետ էին մնացել համաշխարհային զարգացումներից, ինչի արդյունքում էլ այդքան հանդուրժել էին բռնակալներին,

բ) կրթական ցածր մակարդակի պատճառով հայերը զրկված էին միջազգային հանրության մասին տեղեկատվությունից և ձեռք էին բերել ամեն ինչին հարմարվելու սովորույթ,

գ) կաշկանդված էին թուրքերի և քրդերի թվական գերակշռությունից,

դ) դարավոր պարբերական ճնշումների ու հալածանքների հետևանքով կոտրված էր ու կաշկանդված հայերի՝ բռնավորներին դիմակայելու ոգին,

ե) հայությունը դարեր շարունակ տոկաց ու դիմակայեց օտարներին՝ նաև հանուն քրիստոնեական հավատի, իսկ քրիստոնեական աշխարհը ոչ միայն չօգնեց, այլև սեփական շահի գերակայությամբ առաջնորդվելով՝ հաճախ աչք փակեց աղաղակող հակահայ դրսևորումների նկատմամբ,

զ) հայությանը զգալի վնասում էր այն վնասակար սովորույթը, որ հայեր էին համարվում միայն լուսավորչական եկեղեցու հետևորդները, որից նրանց թվաքանակն արհեստականորեն իրականից պակաս էր հաշվվում,

է) հայերը երբեք դիվանագետներ չդարձան, չխորամանկեցին, չխաբեցին, այլ միշտ մնացին գլխավորապես զգացմունքներով առաջնորդվող ժողովուրդ և հաճախ գառան վիճակում հայտնվեցին գայլերի ոհմակում,

ը) չսովորեցին դասեր քաղել անցյալից, չօգտագործեցին դրանք կյանքում և ավելի զգույշ, շրջահայաց չեղան, որ չտառապեին ինքնախաբեությամբ ու միմյանց հանդեպ՝ անտարբերությամբ:

«Նամականի»-ն XIX դարի վերջի և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ իրականության կենդանի հուշարձան է, փաստառատ ու վստահելի սկզբնաղբյուր, մի կողմից հայի հոգու ճիչ, խտացած ցավ, բողոք ու պարսավանք անօրենների հասցեին, իսկ մյուս կողմից՝ հայության երազանքների շտեմարան, զորավոր հավատ ապագայի նկատմամբ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԱՆ ԽՆԴԻՐԸ «ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

4.1. Մ. Փորթուգալյանի տեսակետները արևմտահայության ազատագրության հարցի վերաբերյալ

Մ. Փորթուգալյանի աշխարհայացքը դրսևորվում է ինչպես իր գրվածքներում, այնպես էլ «Արմենիայի» գաղափարախոսական թեմայով հրապարակումներում: Քանի որ, անկախ այն բանից, թե ովքեր էին հեղինակները, և ինչ բովանդակություն ունեին հրապարակված նյութերը, թերթի վերջնական դիմագիծն ու գաղափարական ուղղվածությունը որոշում էր խմբագիրը: Առաջին տարիներին պարբերականին թղթակցում, իրենց գաղափարներն էին արծարծում, առաջարկություններով հանդես գալիս քաղաքական տարբեր ուղղություններ դավանող գործիչներ, որոնք, բնակվելով աշխարհի տարբեր երկրներում ու կրելով գաղափարական տարբեր ազդեցություններ, հանդես էին գալիս էականորեն տարբեր ծրագրային դրույթներով: Սակայն Փորթուգալյանն ավելի կարևորում, շեշտադրում էր այն հրապարակումները, որոնք ավելի մոտ էին իր տեսակետներին: Հետագայում անդրադառնալով այդ շրջանի իրենց գործունեությանը՝ Փորթուգալյանն իր վաղեմի բարեկամ Միհրան Բաղդասարյանին գրած մի նամակում շեշտում էր. «...ես կարծիքի ազատութեան ջերմ բարեկամ եմ, թեև իմ համոզումներս ալ ջերմորեն կը պաշտպանեմ և կաշխատիմ տարածել»[585]:

Աշխարհասփյուռ հայության գիտակից մասը հետաքրքրված էր համահայկական խնդիրների երդվյալ որդեգիր «Արմենիա»-ով: Այն

---

585 Փափազյան Հ., Մկրտիչ Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին (Մ. Փորթուգալյանի նամակն իր ընկեր Մ. Բաղդասարյանին), «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1-2, 1996, էջ 319:

տարածվում էր Արևմտյան Հայաստանում, Ռուսաստանում և հայաշատ մյուս գաղթօջախներում, ձեռքիցձեռք անցնում, իր հեղափոխական բովանդակությամբ և ազգանպաստ ծրագրային դրույթներով վարակում, ոգևորում հայ մարդկանց, կոչ անում նրանց սթափվել, ազատության դրոշ պարզել, պայքարել մարդավայել ապրելու համար: Խմբագիրն իր պարբերականով քաղաքակիրթ աշխարհին իրական գույներով ներկայացնում էր արևմտահայության ծանր վիճակը, ջանքեր թափում՝ եվրոպական տարբեր գաղթօջախների միջև համագործակցություն հաստատելու Հայկական հարցի քաղաքական լուծման համար, որն այդ տարիներին գրեթե անհնարին խնդիր էր: Մ. Փորթուգալյանը ցավ էր ապրում, որ հենց սկզբից հայ ազգային-ազատագրական պայքարը գլխավորելուն հավակնող գործիչներն ու շարքային ուժերը միասնական չեղան, հանուն հայրենիքի ու սեփական ժողովրդի ազատության չմիավորվեցին: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ 1885-1890 թթ. ընթացքում այդ ուժերը որոշ փորձեր ձեռնարկեցին համախմբվելու և միասնաբար հանդես գալու ուղղությամբ: Այսպես օրինակ՝ «Մոնպելյեի Ակումբը», «Հայաստանի Զավակների» և «Հայոց Հայրենասիրական» միությունները, Լոնդոնի «Անգլո-Ամերիկյան Էսոսիեյշն» ընկերությունը և, վերջապես, Արմենական, Հնչակյան ու Դաշնակցություն կուսակցությունները, որոնք զգալի գործունեություն ծավալեցին, սակայն այդ ձեռնարկները մեծ արդյունքներ չտվեցին (հետագայում ևս փորձեր շատ եղան, սակայն միշտ էլ ձախողվեցին – Ս. Ս.):

Միավորման նմանաբնույթ մի փորձ էլ ձեռնարկվեց 1886 թ., երբ Լոնդոնում Կ. Հակոբյանի նախագահությամբ հրավիրվեց խորհրդաժողով, և ձեռնարկվեցին միասնական ազգային ճակատ ստեղծելու աշխատանքներ: Բայց, ցավոք, այս փորձն էլ անհաջող ավարտ ունեցավ, որից հետո սկսվեց միմյանց դեմ բացահայտ պայքարի, փոխադարձ մեղադրանքների, տեղին ու անհարկի կշտամբանքների և, որ ամենացավալին է, նաև դատավարությունների ու դավադրություններ-

որի մի շրջափուլ: Այսինքն՝ հայ ազատագրական պայքարի հենց արշալույսին սկսվեց ու շարունակվեց մի տխուր գործընթաց, որը տարբեր ելևէջներով շարունակվեց մինչև մեր օրերը: Ցավով պիտի արձանագրենք, որ այն երբեմն-երբեմն տեղ է գտնում նաև մեր օրերում թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում ընթացող քաղաքական գործընթացներում:

Սկզբում հակասություններ ծայր առան ու հետզհետե սրվեցին Մ. Փորթուգալյանի ու նրա «Արմենիա»-ի և Հայկական խնդիրը հեղափոխության միջոցով ու անմիջապես զենքի դիմելու ճանապարհով լուծելու կողմնակիցների միջև: Այնուհետև՝ «Արմենիա»-ի ու լոնդոնաբնակ Կ. Հակոբյանի, Մ. Սվազլյանի, Հ. Պրուսալյանի ու նրանց «Հայաստան» թերթի և այլ նշանավոր հայ գործիչների միջև, ովքեր ընդհանրապես դեմ էին ու վնասակար էին համարում որևէ հեղափոխություն և հանդես էին գալիս դիվանագիտական ճանապարհով Բեռլինի վեհաժողովում 61-րդ հոդվածի տեսքով բանաձևած հայոց հարցը լուծելու պաշտպանությամբ: Այնպես որ սկզբնական շրջանում «Արմենիան» հստակ, ավարտուն տեսքով մշակված քաղաքական ուղղություն չուներ, ինչի արդյունքում էլ նրա էջերում միմյանց կողք կողքի հանդես էին գալիս արևմտահայության ազատագրության խնդիրներով շահագրգռված, սակայն տարբեր քաղաքական դավանանքների տեր, տարբեր տեսությունների ազդեցության տակ գտնվող անհատներ: Ստացվել էր մի իրավիճակ, ինչպես արդեն նշել ենք, երբ կարևոր ուղղությունների դավանող ազատախոհ գործիչները հիմնականում համախմբվել էին արտասահմանում լույս տեսնող մի քանի պարբերականների շուրջ: Դրանք էին.

1. Լոնդոնի «Հայաստան»-ը[586], Վառնայի «Իրավունք»-ը[587], որոնք Հայկական հարցը լուծելու համար որդեգրել էին մեծ տերութ-

---

586 «Հայաստան» պարբերականը լույս է տեսել Լոնդոնում 1888-1889 թթ., հայերեն և ֆրանսերեն, Հայկական Հայրենասիրաց ընկերության, ապա Անգլո-հայկական ընկերության օրգան, խմբագիրներ՝ Մ. Սվազլյան, Հ. Պրուսալյան: Տե՛ս Հայ պարբերական

յուններին դիմումներ հղելու և Բեռլինի դաշնագրով իրենց ստանձնած պարտավորությունների մասին հիշեցնելու գործելակերպ,

2. «Հնչակ»-ն ու «Դրոշակ»-ը՝ հեղափոխության,

3. «Արմենիա»-ն, որ տատանվում էր այս երկու ուղղությունների միջև:

Վերջինս մեծաքանակ թղթակիցների ցանց ուներ: Նրանք գրում էին Արևմտյան Հայաստանից, Կ. Պոլսից ու Օսմանյան կայսրության այլ վայրերից, Բալկաններից, Ռուսաստանից, Պարսկաստանից, աշխարհի հայաշատ բոլոր գաղթավայրերից և նույնիսկ հեռավոր ԱՄՆ-ից: Թղթակիցների մեծ մասը Եվրոպայի տարբեր համալսարաններում ուսանող հայ երիտասարդներն էին, բուն երկրում ապրող-աշխատող տարբեր մասնագիտությունների տեր անձինք, հիմնականում ուսուցիչներ, հասարակական գործիչներ, ինչպես նաև հատուկենտ առաջադեմ հոգևորականներ: Ամենաէականն ու դրականն այն էր, որ խմբագրի ջանքերով «Արմենիայի» էջերում բացահայտ ուրվագծվում էին ժամանակի հայ հասարակական-քաղաքական շրջանակների մտածելակերպը, սեփական հայրենիքն ազատ տեսնելու ձգտումը, սրբազան նպատակին հասնելու մեթոդների և միջոցների շուրջ բանավեճերը, հարցադրումներն ու առաջարկվող դեղատումները:

Ինչպես արդեն նշել ենք չենք կիսում այն ուսումնասիրողների տեսակետները, ովքեր փորձել են նսեմացնել «Արմենիա»-ի ու նրա խմբագրի դրական դերակատարությունը հայ հասարակական-քաղաքական մտքի ու լրագրության պատմության մեջ, նրա ներդրումն արևմտահայության զարթոնքի, ազատագրական գաղափարախո-

---

մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Բաբլոյան Մ., Ե., 1986, էջ 45:

587 Մինչ «Արմենիա»-ի լույսընծայումը արտերկրում լույս տեսնող ազատախոհական թերթերի առաջնեկ կարելի է համարել1885 թ. սկզբներից Բուլղարիայի Վառնա քաղաքում շաբաթը երկու անգամ հայերեն և ֆրանսերեն լույս տեսնող ազգային, հասարակական-քաղաքական «Իրաւունք» թերթը: Պատասխանատու՝ Թազվոր Փափազյան, խմբ.՝ Հակոբ Մ. Մավիյան: Տե՛ս Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Բաբլոյան Մ., Ե., 1986, էջ 43:

սությունն հստակեցման ու կատարելագործման, ինչպես նաև՝ պայքարի գործնական միջոցների շարունակական փնտրտուքի և տարբեր եզրահանգումների դժվարին գործում: Անկասկած եղել են նաև տեսագաղափարական ոչ ճիշտ դրսևորումներ, սակայն ոչոք չի կարող ժխտել «Արմենիայի» ու նրա խմբագրի ունեցած էական դերակատարությունն ազգային զարթոնքի, ազատագրական պայքարի գաղափարներն արևմտահայ ու գաղութահայ իրականության մեջ տարածելու դժվարին գործում:

Միանգամայն համամիտ ենք Ջ. Կիրակոսյանի հետ, ով, անդրադառնալով այս խնդիրներին, գրում է. «Ոմանք նույնիսկ ծանոթ չլինելով թերթի համարների բովանդակությանը, գրել են միանգամայն անհիմն բաներ...»[588]: Ավելացնենք, ի դեպ, որ Ջ. Կիրակոսյանն էլ, հետաքրքրված լինելով 1870-1880-ական թթ. հիմնախնդիրներով, մեր կարծիքով խորությամբ ուսումնասիրել է «Արմենիա» թերթի միայն առաջին հինգ-վեց տարիներին լույս տեսած համարները: Կարող ենք արձանագրել նաև, որ ուսումնասիրողների մեծ մասը 1895-ից հետո լույս տեսած համարների բովանդակությանը հիմնականում ծանոթ չեն:

Ինչպես արդեն վերը նշեցինք, հիմնազուրկ են նաև այն պնդումները, որ Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով ձգտում էր Արևմտյան Հայաստանի ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտության օգնությամբ: Իրականում հակառակն էր: «Արմենիա»-ն երբեմն մեղմ, երբեմն կտրուկ մերժում էր այդ միջոցի օգտակարությունը. «այդ տեսակ դիմումները ապարդիւն պիտի մնան, ինչպէս որ բազմաթիւ փորձեր ալ ապացուցած են զայդ»[589] և հստակ կոչ անում նախ՝ «իբր Հայ, ճանչել մեր հայրենիք»[590], «մանրամասնօրէն

---

588 Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 248:

589 «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսելյ, հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի, 1890, էջ 45:

590 Նույն տեղում, էջ 41:

ուսումնասիրել Հային և Հայաստանի դիրքն ու պահանջները»[591], տնտեսապես հզորանալ, կռթնել միայն սեփական ուժերին, կազմակերպվել զգուշորեն և հարմար պահին միասնաբար ոտքի ելնել ու պարզել բաղձալի ազատության դրոշը. «Միակ ելքը մնացած է ՆՅՈՒԹԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԸ, Հայերի բողոքը գործնական միջոցներով, ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԲՌՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ»[592] (որոշ բառեր բնագրում մեծատառերով են գրված– Ս. Ս.):

Ելնելով խնդրի կարևորությունից՝ մեկ անգամ ևս ուզում ենք ընդգծել, որ չմերժելով մեծ տերությունների դիմումներ ուղղելու ձեռնարկները և դրանց օգնությամբ նպաստավոր տրամադրվածություն ապահովելու գործելակերպը՝ Մ. Փորթուգալյանը հստակ առաջարկում էր նախ՝ կազմակերպվել, բռունցքվել ու միակամվել, ապա՝ նպաստավոր պահին դուրս գալ ազատակռվի: Այստեսակ մոտեցումները վկայում են, որ խորապես ծանոթ չլինելով «Արմենիա» թերթի պատմությանն ու նրա խմբագրի տեսական, աշխարհայացքային մոտեցումներին՝ որոշ կուսակցական գործիչներ, հուշագիրներ և տեսաբաններ արել են հիմնազուրկ հետևություններ և երբեմն ըստ արժանվույն չեն գնահատել Մ. Փորթուգալյանի ծավալած հայրենանվեր գործունեությունը[593]:

XIX դարի 80-ական թթ. հայ ժողովրդի կյանքում սկսվում էր պայքարի նոր փուլ, որը, բնականաբար, ենթադրում էր հաղթանակներ ու հիասթափություններ: Մի ժամանակաշրջան և իրավիճակ, որն, ի դեպ, բավականին ընդհանրություններ ու աղերսներ ունի մեր օրերում զարգացող երևույթների հետ, և որը մասնագիտական խորը հետազոտության կարիք ունի: Պատմագիտության խնդիրն է դառնում, հետևապես, այսօր ամենայն բարեխղճորեն ու սրտացավութ-

---

591 Նույն տեղում:

592 Նույն տեղում, էջ 45:

593 ՀԱԱ, ֆ. 51, գ. 90, թերթ 37, Ղարաջեան Գ., Յեղափոխականի Յիշատակարանը», տե՛ս նաև Բարսեղյան Խ., նշվ. աշխ., էջ 165:

յամբ ուսումնասիրել և ճշմարտացիորեն բնութագրել հայ հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր իրադարձություն ու երևույթ՝ որպես ուղեցույց ունենալով անաչառ, չկուսակցա-կանացված մոտեցումներն ու ղեկավարվելով բացառապես պատմականության մեթոդով:

«Արմենիա»-ում լույս տեսած նյութերի մեջ ծանրակշիռ տեղ են գրավում արևմտահայության ծանր, հաճախ անելանելի դրության մասին նկարագրությունները: Իսկ ամենացավալին այն էր, որ ի զորու չլինելով դիմակայելու չորս կողմից եկած հարվածներին՝ հայ մարդը որդեգրում էր պայքարի պասիվ ձևը. թողնում հեռանում էր՝ անտերության մատնելով հայրենի հողն ու նախնիների շիրիմները: Իսկ չարանենգ թուրքը, շատ լավ պատկերացնելով լայնածավալ արտագաղթի հետևանքները, ամեն ինչ անում էր այն արագացնելու, դրա չափերը մեծացնելու համար: Այդ նպատակին լիարժեք հասնելու համար նախ և առաջ զրկում էր ժողովրդին կազմակերպելու, առաջնորդելու ու ղեկավարելու ունակ կարող ուժերից, հատկապես մտավորականությունից ու նաև ունևոր դասի ներկայացուցիչներից:

Պարբերականի առաջին իսկ համարում նկարագրվում է Վան–Վասպուրականում տիրող տխուր ու տագնապալի կացությունը. «1885ի գարունը Վանի համար տարէգլուխ եղավ նոր աղետների: Նոր օր, նոր գոյժ կը յաջորդեն իրարու անդադար»[594]: Զանազան հնարածին պատրվակներով Վանից հեռացվում էին «Վասպուրականի Կեդրոնական Վարժարանի» հիմնադիր-տնօրեն Մ. Փորթուգալյանը, Խրիմյան Սրբազան Հայրիկը, Այգեստան թաղի վարժարանի տեսուչ Այգավարդ Ասլանյանը և շատ այլ նշանավոր անձինք, փակվում էին Կեդրոնական վարժարանը, Վարագի վանքի տպարանը և այլ մշակութային հիմնարկներ, ձերբակալվում էին նշանավոր վանեցիներ Կարապետ Նաթանյանը, Խաչատուր Սոլախյանը, Գևորգ Շերեն-

---

[594] «Արմէնիա», թիվ 1, 1885:

ցը, Գարեգին Բաղեշցյանը և շատ ուրիշներ, որոնց միակ «հանցանքը» ժողովրդի մեջ հեղինակություն ունենալն էր ու հարգվելը: «Տեղական կառավարությունը մի տեսակ պաշարման վիճակի մէջ դրած է Վանը, ամենուրեք կըվխտան լրտեսներ և լրտեսուհիներ, եղբայր իր եղբայրէ սկսած է կասկածիլ այժմ իբր լրտես»[595]: Հոդվածագիր-խմբագիրը միամտաբար հավատում էր, թե իբր սուլթանն ու կառավարության անդամները տեղյակ չէին այդ հակաօրինական գործողություններին ու թերթում, բաց նամակի տեսքով ներկայացնելով ստեղծված ծանր կացությունը, դիմում էր նրանց հետևյալ սրտաճմլիկ տողերով. «Իբր հաւատարիմ հպատակ օսմ. տէրութեան, Վանի հայերի խեղճ և վտանգաւոր դրութեան մասին ճշմարտութիւնը ներկայացնելու համար, Նորին Բարձրութեան ուշադրութիւնը և գթութիւնը հայցել աշխատողների միակ վարձատրութիւնը կը լինի այժմ զոհ երթալ զրպարտիչներին, ուշադրութիւնը դարձնել Վանի անմեղ հայ ժողովրդի այս տառապեալ վիճակին վրայ»[596]:

Շարունակելով հայերի անելանելի վիճակի նկարագրությունը՝ «Արմենիան» գրում էր, որ իշխանություններն այնքան էին անհանգստացած ու վախեցած հայերից, որ նույնիսկ նրանց հասցեագրված նամակներն էին մանրամասն ընթերցվում, նոր հետո միայն հանձնվում տերերին. «Վանի բօլիսը որ գրաքննիչի պաշտօն ալ ստանձնած է, բոլոր նամակներ ինք կը կարդա, յետոյ կը հանձնէ իրենց հասցէներին»[597]: Իշխանությունների դրդմամբ Վանում վիճակն իրապես լարված էր. հայերը բաժանվել էին խմբավորումների ու անզիջում պայքար ծավալել միմյանց նկատմամբ: Իսկ խնդրի էությունն այն էր, որ Վանի առաջնորդական տեղապահ Պողոս եպիսկոպոսը թուրքերի օժանդակությամբ ամենաանմարդկային միջոցներով փորձում էր հայերին վերագրել զանազան՝ իրականում գոյություն չունեցող մեղքեր,

---

595 «Արմէնիա», թիվ 1, 1885:

596 Նույն տեղում:

597 «Արմէնիա», թիվ 6, 1885:

մեղադրել նրանց և, օգտվելով առիթից, հարստություն դիզել: Թերթն անարգանքի սյունին էր գամում թուրքական իշխանություններին ծառայած ապազգային բոլոր տարրերին, դատապարտում Պողոս եպիսկոպոսին ու նրա նմաններին, որոնք Վանում անխնա «կմատնէին և կզրպարտէին» ժողովրդի լավագույն զավակներին: Իսկ հայերը, բնականաբար, պիտի ընդվզեին, որպեսզի կարողանային ընդդիմանալ թուրքական իշխանությունների ու նրանց կամակատարների վայրագություններին: «Ի զուր թող չբամբասեն, թե ռուսական գործակատարներ յեղափոխութեան կը գրգռեն հայ ժողովուրդը Արմենիայի մէջ, գրում թերթը, ինչ հարկ կայ որ Ռուսիան ի զուր ծախքեր անէ...: Արդեն թիւրք պաշտոնեայներ իրենց բարբարոսութիւններով կատարած կը լինեն այդ պրոպագանդան ի նպաստ Ռուսիաի...»[598]:

Օսմանյան իշխանությունները ոչ միայն չէին փոխում իրենց անմարդկային գործելակերպը հայ ժողովրդի նկատմամբ, այլև փորձում էին բռնի արգելանքների միջոցով հասնել հեղափոխական տրամադրություններ ունեցողների հնազանդեցմանը: Այս իմաստով բավականին հետաքրքիր իրավիճակ ստեղծվեց «Արմենիայի» շուրջ: Թերթի լույս տեսնելուց ընդամենը մեկ ամիս հետո, զգուշանալով երկրի իրական վիճակի շարունակական բացահայտումներից և վախենալով ժողովրդական հուզումներից, թուրքական իշխանությունները հատուկ որոշումով արգելեցին թերթի մուտքը երկիր. «Օսմանէան տէրութեան բարձրագոյն հրամանովն արգիլուած է Արմէնիաի մուտքը Թիւրքիաի մեջ»[599]: Սակայն երկրի իշխանությունների վախկոտ ու կրավորական պահվածքին քաջատեղյակ խմբագիրը չի ընկճվում այդ փաստից և հայտարարում է. «Բ. Դրան այդ արգելք մի պատճառ չլինիր մեր թերթի հրատարակութիւնը դադրեցունելու»[600]: Միևնույն ժամանակ «-Թուրքիան չուզեր լսել» հրապարակման մեջ պարզաբանում է, որ

---

[598] «Արմէնիա», թիվ 13, 1885:
[599] «Արմէնիա», թիվ 11, 1885:
[600] Նույն տեղում:

դեռևս այն ժամանակ, երբ Արմենիայի նույնիսկ առաջին համարը հասնում է Վան, «նահանգային գրաքննիչ ժողովը (որովհետեւ Վանի մեջ մասնատր գրաքննիչ ժողով կայ լրագիրների համար, մինչդեռ Թիւրքիաի ուրիշ նահանգների մէջ չկայ այդ) վտանգատր համարելով զայն, կարգիլէ ցրուել բաժնորդներին: Իսկ Կ. Պոլիս ալ մինչև 4րդ թիւը մտնելէ յետոյ, Բ. Դուռը կարգիլէ Արմէնիաի մուտքը օսմանեան պետութեան մեջ»[601]: Այդպիսի որոշման համար, խմբագրի կարծիքով, այն պարզ իրավիճակն էր եղել, որ հայերը չէին հասկանում, որ թուրքական իշխանությունների համար «իբր վճռուած դրութիւն ընդունուած էր ճնշել և հարստահարել հայ ազգը որ հետզհետէ բոլորովին վերնայ աշխարհիս երեսէն»[602], իսկ «Արմենիան» իր մերկացումներով խանգարում էր այդ գործընթացին, հետևապես չէր կարող մուտք գործել երկիր: «Թիւրքիան իւր այս արգելքով որոշեր է որ ինք ճշմարտութեան, արդարութեան ձայնը չլսէ»,-եզրակացնում էր պարբերականը:

Մ. Փորթուգալյանն սկզբում իրեն համարում էր Թուրքիայի շահերին նվիրված, «հավատարիմ հպատակ օսմանեան տերութեան և նրա ճշմարիտ շահերի պաշտպան»: Նա իր գործը չէր հակադրում Թուրքիային, դեպի օսմանյան հայրենիքն ուներ «անհողդողդ սեր», աշխատում էր օգտակար լինել իր ազգի և օսմանյան տերության զույգ շահերին նվիրված գործին»[603]: Նրա կարծիքով պաշտոնյաներն էին հարստահարում հասարակ ժողովրդին, իսկ դրանից սուլթանն ու բարձրաստիճան իշխանավորներն ոտղակի տեղյակ չէին: Սկզբնական շրջանում Մ. Փորթուգալյանը միամտաբար կարծում էր, որ եթե այդ հարստահարությունների մասին իշխանություններն իմանային, ամեն ինչ կփոխվեր դեպի լավը, իսկ քանի որ ժողովուրդը հնարավո-

---

601 Նույն տեղում:

602 «Արմէնիա», թիվ 11, 1885:

603 Օտյան Գ., Սահմանադրական խոսքեր և ճառեր, դամբանականներ, Կ. Պոլիս, 1910, էջ 131:

րություն չուներ իր խոսքը տեղ հասցնելու, ուստի դա կարվեր «Արմենիայի» միջոցով: Մ. Փորթուգալյանը, արևելահայ նշանավոր մտածող Ստ. Նազարյանի նման երկարմատ էր պատկերացնում հայոց կարգավիճակը, փորձում ազգայինը և համապետականը հաշտեցնել միմյանց հետ, հային համարում էր քաղաքականապես թուրք, մշակույթով՝ հայ, ժխտում էր դրսի՝ ռուսական կամ անգլիական կողմնորոշումը ու հային պատկերացնում, կաղապարում-պահում էր թուրքական պետության կազմի մեջ և այդ պետությունից ակնկալում նրա վիճակի բարելավում:

Թերթի առաջին համարներից սկսած՝ Մ. Փորթուգալյանն իր առջև խնդիր էր դրել ընթերցողներին հնարավորինս մանրամասն ծանոթացնել արևմտահայության ծանր վիճակին[604], ինչպես նաև եվրոպական մամուլում երբեմն-երբեմն երևացող հայանպաստ նյութերին, որոնք թարգմանաբար արտատպվում էին «Արմենիայում», մոտ անցյալի իրադարձություններին, իրազեկ պահում դիվանագիտության ասպարեզում Հայաստանին ու հայ ժողովրդին առնչվող անցուդարձին, Հայկական հարցում եվրոպական տերությունների դիրքորոշմանը: Պարբերականի մշտական հոգածության դաշտում էին հասարակ մարդիկ: Լրագիրը հաճախ կոչ էր անում բոլոր առողջ ուժերին իրենց ձայնը բարձրացնել՝ վերջիններիս ոտնակոխ արված իրավունքները պաշտպանելու և ապագայում հաղթանակ ապահովելու համար զարկ տալ տնտեսական, մշակութային և կրթական կյանքի զարգացմանը:

Օսմանյան իրականության մեջ տեղի ունեցած փոփոխություններին ու իրադարձությունների զարգացմանը զուգընթաց Մ. Փորթուգալյանի՝ թուրքական պետության հանդեպ քաղաքացիական պարտքի գիտակցումն ու նվիրվածությունն սկսում էին երերալ, ճաքեր տալ.

---

[604] Աշխատության մեջ Արևմտյան Հայաստանում տիրող աոցիալ-տնտեսական և քաղաքական դժնդակ պայմանների, այնտեղ հաստատված անմարդկային, իրավազուրկ վիճակի մասին ներկայացվում է առանձին բաժնով:

«Եթէ համապետական կարգերը չեն հանդուրժում հայոց հաւաքականութիւնը, ապա անխուսափելի է պայքարը «օսման. քաղաքացու» հոգու մէջ»: Հա՞յ, թե՞ օսմանցի շեքսպիրյան «լինե՞լ, թե՞ չլինել»-յան շեշտադրում ունեցող հարցը բարձրացավ նրա առջև: Սակայն Թուրքիայում մոլեգնող հայատյաց քաղաքականությունը, շարունակ կրկնվող Մ. Փորթուգալյանին ստիպեցին փոխել դիրքորոշումը տերության նկատմամբ: «Արմենիայի» առաջին համարների խոհեմ ու զգուշավոր լեզուն, թերթի մուտքը Թուրքիա[605], ապա Ռուսաստան արգելվելուց հետո[606], զգալիորեն փոխվեց, և չնայած բազմաթիվ խոչընդոտներին, թերթը «կերթար տարածել իր գաղափարները Հայաստան, Կովկաս, Եւրոպա. իր խմբագրին շատ պարզ, համոզկեր, ողջմիտ լեզուն, փորձ, խոհական և հեռատես ոգին մեծապէս կը գնահատուէին»[607]:

Մ. Փորթուգալյանը հիասթափվում է օսմանյան իշխանությունների վարած հակահայ քաղաքականությունից, սթափվում «բարի ու գործից անտեղյակ» սուլթանի պատրանքից և հակվում այն տեսակետին, որ այդ սուլթաններն ու նրանց շրջապատը մտադիր չեն իրականացնել ո՛չ բարենորոգումներ և ո՛չ էլ կյանքի ու գոյքի տարրական ապահովություն ստեղծել հայկական նահանգներում: Ավելին, նա աստիճանաբար համոզվեց այն պարզ ճշմարտության մեջ, որ հենց սուլթաններն իրենք էին ամենադաժան հարստահարողներն ու կեղեքիչները, թալանողներն ու սպանողները: Նրա համար պարզորոշ ու ակնհայտ դարձավ վերջապես, որ թուրք ազգի ու նրա արյունով ու ավազակությամբ ստեղծված պետության ամբողջ պատմությունը որևէ հույս չէր ներշնչում, որ նրանք կփոխվեին դեպի լավը, մարդկայինը:

---

605 «Արմենիա»-ն արգելվեց Օսմանյան կայսրությունում չորրորդ համարի հրատարակումից հետո՝ օգոստոսի 19-ին:Մինչ այդ թերթը 400 բաժանորդ ուներ, որոնցից 300-ը՝ միայն Թուրքիայում:

606 Թերթի մուտքը Ռուսաստան արգելվեց 1886 թ. փետրվարի 2-ին:

607 Չէօկիւրեան Տ., Կենսազրական զծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 22:

Իսկ բարենորոգումներ կատարելու բոլոր փորձերն անհաջող բեմականացված ներկայացումներ էին և կատարվում էին սոսկ արտաքին աշխարհին խաբելու համար: Թերթի տեսաբանները բացատրում էին իրենց ընթերցողներին, որ թուրքական իշխանությունները երբեք չեն ցանկանա արտոնել Բեռլինի վեհաժողովում բանաձևված 61-րդ հոդվածի իրականացումը, քանի որ նրանց կարծիքով այն օրից, երբ հայերն ինքնավար դառնային և հատկապես զենք կրելու իրավունք ստանային, կդառնային մի նոր Բուլղարիա, որի արդյունքում իրենց պետության գոյությունն իսկ կվտանգվեր: Այդ դեպքում օրինական հարց էր բարձրացնում «Արմենիան». «Ո՞վ է որ պիտի լուծէ 61-րդ հոդվածը, ցորչափ Թուրքիա չկամիր իրացնել և Եվրոպա շատ փոյթ չունի զայն գործադրել տալու», և ինքն էլ պատասխանում. «Հայը - հայաստանցին և ոչ ուրիշը...»[608]:

Օսմանյան քաղաքացին տեղի տվեց ազգային գործչին, որովհետև Մ. Փորուգալյանը հստակ գիտակցում և ուրիշներից էլ պահանջում էր, որ հային դիտարկեն իբրև ազգ, ինքնուրույն էթնոսի իմաստով և ոչ որպես կրոնական համայնքի: Քանի որ, ըստ Մ. Փորթուգալյանի, «Կրոնական ժողովուրդ» լինելը ոչ միայն սխալ էր, այլև վնասակար. այն բաժանում էր հային ինքն իր մեջ, մասնատում, պառակտում լուսավորչական, կաթոլիկ, բողոքական և զանազան այլ, երբեմն նույնիսկ, իրարամերժ խմբերի: Ավելին, չուրանալով դարերի ընթացքում հայոց եկեղեցու կատարած դրական դերակատարությունը, Փորթուգալյանը համարում էր, որ եկեղեցին թմրեցնում է ժողովրդի քաղաքական ձգտումները: Այն ազգային ընդհանուր համակարգի հաստատություններից մեկն էր, եկեղեցին էր ժողովրդի համար և ոչ հակառակը: Փորթուգալյանը եզրակացնում էր, որ հայությունը քաղաքական պայքարի պիտի դուրս գար առանց հոգևորականության: Եթե նկատի ունենանք, որ ազգահավաքման գործին չէին կարող

---

608 «Արմենիա», թիվ 55, 1886:

նպաստել պատմության թատերաբեմից անհետացած նախարարական տները, ինչպես նաև հայ հարուստ խավերը, որոնց համար ազգը դիրք, հարստություն ու փառք կուտակելու միջոց էր միայն, ինչպիսին էր նաև գավառի հայ ունեևոր խավը, ապա ստացվում էր, որ հայոց քաղաքական վերածնությունը հնարավոր էր սոսկ հայության «խոնարհ խավերի» կամ դասական բնորոշմամբ՝ աշխատավոր զանգվածների ուժերով: Հայության քաղաքական պայքարի մեջ բացառիկ դեր վերագրելով հասարակ ժողովրդին՝ Մ. Փորթուգալյանի դավանած ուսմունքն ստանում էր ընդգծված ժողովրդավարական, մարդասիրական բնույթ: Ավելին, մեր կողմից կատարված մանրամասն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մ. Փորթուգալյան գործիչը, հավանաբար, գտնվելով այդ շրջանում եվրոպական գրեթե բոլոր երկրներում «մոդայիկ» դարձած առաջադեմ գաղափարախոսությունների ազդեցության տակ, առանց դրանց անունը տալու, փորձում էր դրանցում եղած դրույթները տեղայնացնել արևմտահայ իրականության մեջ և վերջինների օգնությամբ մեկնաբանել ու մատուցել, օտարի համար հեշտ ընկալելի դարձնել հայոց հարցի էությունն ու բովանդակությունը:

Ազատության նվիրյալն անդրադառնում էր նաև այնպիսի մի հարցի, որը խիստ արդիական ու կիրառելի է նաև մեր օրերում: Հայության պահպանման ու հետագա զարգացման, նորովի հավաքականության ստեղծման համար Մ. Փորթուգալյանը խիստ կարևորում էր լեզվական յուրահատուկ միության և պատմական կարևոր իրադարձությունների տարեդարձները ազգային տոների վերածելու գործոնների դերակատարությունը. «Ամեն ազգեր, որոնք ազգասիրական և հայրենասիրական զգացումներին, քաղաքացիական առաքինություններին մեծ արժէք կը տան, ազգային կամ թէ ասենք քաղաքական տօներ հաստատած են, որոնք մեծ հանդէսներով կտօնէ թե

ժողովուրդը և թէ իրենց կառավարութիւնները»[609]: Վկայակոչելով Վարդանանց պատերազմը և այն համարելով «խղճի ազատութեան» և «քաղաքական ինքնավարութեան զոյգ պահանջների» խտացում գտնում էր, որ այն հայ ժողովուրդը միշտ պետք է տոնի և անցյալի հերոսական օրինակներով դաստիարակի սերունդներին:

Ժամանակակիցների կողմից միաձայն անուղղելի լավատես, երազող ու «ռոմանտիկ» որակված Մ. Փորթուգալյանը ոչ պակաս իրատես էր: Նա ազգային փրկության աշխատանքներն անմիջականորեն կապում էր բավարար քանակությամբ նյութական պաշարների կուտակման անհրաժեշտության հետ, իսկ դրանք արարելու համար անհրաժեշտ պայման էր համարում նոր ու ավելի կատարելագործված տնտեսություն վարելու նրբություններին տիրապետելը. «Միայն առողջ նիւթական հիմքերի վրա կառուցված հայութիւնը կլինի ընդունակ «հոգևոր հարստութիւն» ստեղծելու և ազգ դառնալու»[610]:

Պարբերականի հեղինակները, շարունակելով տուրք տալ նախկինում հաստատում գտած ու ավանդական դարձած «Հյուսիսային» կողմնորոշմանը, սկզբնական շրջանում լուրջ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ[611]: Նրանք համոզված էին, որ «Ռուսիան ոչ միայն Հայաստանի պաշտպան կիանդիսանա, այլև հույս կներշնչէ, թե այսուհետ պիտի ունենանք մի զորավոր թիկունք, ամեն անգամ, որ պիտի զգամք մեր ձայնը բարձրացնելու մեր մարդկային և ազգային անբռնաբարելի իրավունքների բռնաբարման դէմ»[612]:

Հոգեբանական ու քաղաքական այս մթնոլորտում էլ Մ. Փորթուգալյանի հայացքներում կտրուկ շրջադարձ է կատարվում: Նրա մեջ ծնվում է հեղափոխության գաղափարը: Իսկ որ Հայկական հարցի

---

609 «Այրմէնիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսելյ, հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի, 1890, էջ 138:

610 Գիւզալեան Գ., նշվ. աշխ., էջ 142:

611 Հայ-ռուսական առնչություններին «Արմէնիա»յի» անդրադարձների մասին կխոսենք ստորև:

612 Նույն տեղում:

լուծումը դեռ որոշ ժամանակ Մ. Փորթուգալյանը շարունակում էր կապել Օսմանյան կայսրության հետ, պատճառն, անշուշտ, հայերի ներքին թուլության գիտակցումն էր, «անպատրաստ գտնվիլը»: Նա մի որոշ ժամանակ էլ շարունակում էր կրկնել, թե «պէտք է ուղղակի Թիւրքին դիմել և բողոքել, գիտնալով հանդերձ թէ անլսելի կը մնայ: Այդ կերպով մենք մեր հպատակութեան պարտքը կատարած կը լինինք»[613]: Սակայն դա էլ երկար չտևեց, նա շատ արագ համոզվեց, որ հայության ապագան Օսմանյան կայսրության հետ կապելը պարզապես անհնարին էր դարձել. «Թուրք կառավարութեան ամենէն յուսահատական կողմն սա է արդէն, որ բնաւ չուզեր խօսք հասկանալ, նա բնաւ միտք չունի բարեկարգութիւն մտցնելու իւր ասիական երկրների մէջ»[614]:

«Արմենիայի» մուտքի արգելումը Օսմանյան կայսրություն Մ. Փորթուգալյանը համարեց հետևանք այն բանի, որ թուրք ղեկավարներն անընդունակ են «ճշմարտութեան ու արդարութեան» ձայնը լսելու. «Թուրքիան որոշել է վերջնապէս բնաւ խօսք չհասկնալ»[615]: Այս կարևոր իրադարձությունից հետո նշանավոր հրապարակագրի մեջ տեղի է ունենում կտրուկ շրջադարձ. ավարտվում է «հաւատարիմ հպատակութեան» շրջանը, և նա ձգտում է խզել կապը բռնակալ Թուրքիայի հետ:

Գաղափարական, աշխարհայացքային հասունացմանը զուգընթաց Մ. Փորթուգալյանը հասկանում էր, որ Բեռլինի վեհաժողովից հետո հայկական նահանգներում հալածանքները կրում էին շարունակական, կազմակերպված, ուղղորդված և շեշտված քաղաքական-հակահայ բնույթ: Որովհետև աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում եվրոպական տիրույթները կորցնելով՝ Օսմանյան կայսրության մտահոգության հիմնական առարկաները դարձան

---

[613] «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 46:
[614] Նույն տեղում, էջ 45-46:
[615] «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 46:

արևմտահայկական նահանգները: Թուրքիան այլևս դարձել էր ասիական պետություն: Կապիտալիստական կացութաձևի զարգացմանը զուգընթաց ծնվել էին պանթուրքական և պանիսլամական գաղափարախոսությունները[616], որոնց իրականացման ծրագիրն առճակատվում էր Բեռլինի դաշնագրով իրավատեր դարձած հայ ժողովրդի հետ: Ավելին, թուրք-հայկական հակասությունները լարվել էին, որովհետև հայկական բարենորոգումների պատրվակով ցանկացած պահի Թուրքիայի ներքին գործերին կարող էր միջամտել տարածաշրջանում նրա մշտական հակառակորդ-թշնամի Ռուսաստանը: Այս ամենն էլ «հիվանդ և մահվան մահիճում գալարվող կայսրության» թուրք ղեկավարությանը մղում էր որդեգրել հատկապես հակահայկական քաղաքականություն: Եվ քանի որ թուրքերն այդպես էլ չկարողացան զարգանալ ու առաջադեմ ժողովուրդ դառնալ, նրանց թերզարգացած ուղեղները հարցերի լուծման միայն վաղմիջնադարյան մեթոդներին ու ձևերին էին տիրապետում, դրա համար էլ ծրագրեցին ու աստիճանաբար սկսեցին իրականացնել իրենց՝ թուրքերին հատուկ ծրագիր՝ բնաջինջ անել հայերին և թուրքավարի լուծել Հայկական հարցը: Այլևս թուրք-հայկական շահերը հակադիր էին, և նրանց մեկտեղ գոյակցելը դարձել էր անհնարին: Այս առումով հատ-

---

[616] Պանիսլամիզմը ձևավորվել է XIX դարի 2-րդ կեսին, նպատակն էր պահպանել ֆեոդալական պետությունների անկախությունն իմպերիալիստական զավթումների պայմաններում, դիմակայել եռգաղութարարներին: Առաջին քարոզիչը Ջամալ ադ դին ալ Աֆղանին էր, որը ձգտել է հիմնել մահմեդականների ընդհանուր միություն՝ դրա իրագործումը կապելով մերթ Իրանի շահի, մերթ թուրքական սուլթանի հետ: Մեծ տարածում է գտել Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդ II-ի ժամանակ՝ բարձրանալով պետական քաղաքականության մակարդակ:
Պանթուրքիզմը սկզբնավորվել է XIX դարի վերջերին իբրև թուրքական նորաստեղծ բուրժուազիայի գաղափարախոսություն, դարձել երիտթուրքերի ներքին ու արտաքին նվաճողական քաղաքականության հիմնական գաղափարական զենքը: Հայտնի տեսաբաններն էին Զիյա Գյոքալփը, Յուսուֆ Աքչուրան, Ահմեդ Աղանը: Հետագայում բոլոր մահմեդական ժողովուրդներին Օսմանյան կայսրությանը ենթարկելու իրագործման ճանապարհին հիմնական խոչընդոտներից էին համարում Հայաստանն ու հայ ժողովրդին: Հենց այս հանգամանքն էլ եղավ Մեծ եղեռնի գլխավոր պատճառներից մեկը:

կանշական է, որ մի քանի տարի հետո, երբ հայերը փորձում էին ինքնապաշտպանվել և փրկվել բնաջնջման իրական վտանգից, արտահայտելով թուրքական իշխանությունների այս տեսակետը, Վանի կուսակալ Ջևդեթը, հայերին ամբաստանելով չեղած խռովություն բարձրացնելու մեջ, լկտիաբար հայտարարում էր. «...եթե հայերը մի կրակոց արձակեն... ես քաղաքը կոչնչացնեմ, չթողնելով նույնիսկ իմ ծնկից բարձր երեխա»[617]:

Հենց այս ըմբռնումը Մ. Փորթուգալյանի համար նոր իմաստ էր հաղորդում Վանում և ընդհանրապես Հայաստանում կատարվող դեպքերին. «Սա մի պատահար կամ բացառութիւն չէ Համիտ փաշայի կողմէն, այլ Բ. Դրան կողմէն յատուկ նպատակով ընդունուած մի դրութիւն է՝ պառակտել Արմենիայի ժողովուրդը, անդադար անհանգիստ անել նրան»[618]: Դրա հետևանքով էլ Հայաստանում ստեղծվել էր «քաղաքական ստրկութիւն, ապահովութեան բացակայութիւն, տնտեսական անստոյգ և միշտ աղետաբեր վիճակ»: Մ. Փորթուգալյանի համար այլևս գաղտնիք չէր թուրքական քաղաքականության իմաստը. թուրքական կառավարության համար ընդունված ծրագիր էր «...ճնշել և հարստահարել հայ ազգը, որ հետզհետէ բոլորովին վերանայ աշխարհի երեսից: Չե՞ք տեսներ, որ քանի տարիներ առաջ 5 միլիոն հոչակուած հայը 3 միլիոնի իջած է այժմ, նրա մէկ միլիոնէ ուելին ալ Ռուսիայի մէջ է. իսկ Թուրքիայի մէջ հազիւ 2 միլիոն կը գտնի այժմ: Դուք մեր այսչափ ջանքերի և զոհողությունների դէմ, ինչպէ՞ս կը յանդգնիք պաշտպանել հայ ազգի գոյութեան դատը»[619]: Ուստի, Մ. Փորթուգալյանն ընտրելով հայկական շահերի պաշտպանության ուղին, առանձնացնում էր մի քանի կարևոր գործողություններ, որոնք

---

617 Knapp G. H., The Tragety of Bitlis, Being Majnli the Narratives of Grisel M. Mc Laren and Myrtel O. Shane, N. Y., 1919:

618 Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Պէյրութ, 1937, էջ 147:

619 «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսելյ, 1890, էջ 35:

կնպաստեին նոր ու ազատ Հայաստան կերտելու հիմքեր ստեղծելուն: Դրանք էին՝

1. հայրենիքի ճշմարիտ և բազմակողմանի ճանաչումը. «Մենք մեզ չենք ճանչնար»[620]: Այլևս նրա համար անիմաստ խոսք էր հայ-թուրքական համատեղ գոյակցությունը,

2. դեպի ժողովուրդ գնալը՝ հասնել երկրի ամենահեռավոր անկյունները, բացատրել մարդկանց իրենց վիճակի էությունը, ցույց տալ մեղավորներին[621],

3. պայքար սկսել՝ ազգային ոտնահարված իրավունքները վերականգնելու և մարդավայել ու արժանապատիվ կյանքով ապրելու համար, որն արդյունավետ կլիներ եթե ոչինչ չխնայեինք և զինվեինք,

4. պայքարի այդ բավիղներում չմոլորվելու և, առավել ևս, չպարտվելու համար, հարկավոր էր համախմբվել, միակամվել մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, որն էր՝ ազատություն:

Ստեղծված նոր պայմաններում Մ. Փորթուգալյանը հարցնում էր՝ ինչ էր անհրաժեշտ անել, և ինքն էլ փորձում էր պատասխանել: Հարկավոր էր խոսքը գործի վերածել. Նախ՝ համախմբվել, մի հզոր միություն ստեղծել և հետո դիմել հայի համար ազգային պաշտպանության միակ փրկարար միջոցին՝ զենքի ուժին: Զարգացնելով այդ գաղափարը և վկայակոչելով «Արմենիայի» ընթերցողների բազմաքանակ նամակներում տեղ գտած «ՀՐԱՀԱՆԳ ԿԸ ՏՐՈՒԻ ԳՈՐԾԵԼՈՒ» կոչը՝ Մ. Փորթուգալյանը հայտարարում էր, թե «մեր ազգային դատը պաշտպանելու համար պէտք է յեղափոխութիւն յա-

---

[620]Չեօլիւրեան Տ., Կենսագրական գծեր, «Քառասուն տարուան աշխատաւորը», Կ. Պոլիս, 1914, էջ23:

[621] Այս թեզը շատ նման է ռուսական իրականության մեջ XIX դարի վերջին մեծ տարածում գտած նարոդնիկական շարժմանը: Չնայած երկար փնտրտուքներին՝ մեզ չհաջողվեց գտնել դրանց մեջ կապի կամ փոխազդեցության մասին որևէ վկայություն: Մնում է եզրակացնել, որ երկու երկրներում միաժամանակ և իրարից անկախ ծնվել են նույնանման գաղափարախոսություններ: Ավելացնենք, որ նմանատիպ դրսևորումներ նկատվել են նաև այլ ժողովուրդների ազատագրական մաքառումների ընթացքում:

ռուցանել Արմենիայի մէջ»[622]: Այս մտայնությունն աստիճանաբար տիրապետող էր դառնում հայկական շրջաններում և տրամադրում նրանց եզրակացնելու, որ «գիրն ու խօսքը իրենց հետևանքն ունեցած են»: «Այժմ մեզ ոչ թէ կուլտուրական միջոցների, այլ ուղղակի մարդկային պատիւը լիրբ բարբարոսներին ճանաչացնել տուող ազատարար հրացանին դիմելու ժամանակն է»[623], նույն գաղափարն էր զարգացնում նաև այդ շրջանում դեռևս Փորթուգալյանի համախոհ Ավ. Նազարբեկյանը:

Մնում էր, որ աշխարհասփյուռ հայությունը համախմբվեր, բռունցքվեր, ստեղծեր մեկ ղեկավար կենտրոն, բոլոր միջոցներով սատարեր նրան և պայքարեր Արևմտյան Հայաստանի ազատագրության համար: Մ. Փորթուգալյանը համոզված էր, որ Թուրքիայում չի եղել մի ազգ, որ «առանց կռի ու արիւն թափելու ձեռք բերած լինի իր ազատութիւնը»: Հետևապես հայությունը ևս միայն հեղափոխությամբ կարող էր ձեռք բերել «քաղաքացիական և ազգային քաղաքական ազատութիւններ»[624]:

Մ. Փորթուգալյանն իր այս եզրահանգումներով մոտենում էր հայ ազգային- ազատագրական պայքարի գաղափարական նախակարապետներ ու անմիջական ոգեկոչողներ Մ. Խրիմյանին, Մ. Նալբանդյանին, Գ. Արծրունուն, Ռաֆֆուն, Ռ. Պատկանյանին ու նրանց հետ միասին նախապատրաստում էր հանուն ազատ գալիքի ապագա հերոսական մաքառումները: Կարճ ասած՝ նա դարձավ հայոց ազատագրական շարժման ուսուցանողներից մեկը: Նրա կարծիքով, անկախ բնակության վայրից, ամբողջ հայությունը պետք է համախմբվեր ու ի նպաստ Արևմտյան Հայաստանի ազատագրության գործի ներդներ բոլոր ուժերը: Դրանով ազատության անխոնջ մունե-

---

[622] ««Արմէնիա»»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 74:

[623] Ի՞նչ միջոցների պէտք է դիմի հայ ազգը քաղաքային ազատ ամբողջութիւն ձեռք բերելու համար, «Արմէնիա», թիվ 64, 1886:

[624] «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-1886, Մարսել, 1890, էջ 152:

տիկը կանխորոշեց հայկական դատի ըմբռնումը, որը մինչ այդ լողում էր արևելահայ-արևմտահայ ուղեծիրներում: Միևնույն ժամանակ Մ. Փորթուգալյանը նաև նպաստում էր, որ հստակվի «մեկ, միախմբված հայության» գաղափարը և այն էլ՝ Արևմտահայաստանի շուրջ:

Ոտքի ելնող հայությանն օդի նման անհրաժեշտ էր համախմբվել ու մեկտեղել ուժերը: Հենց այդ միավորման անհրաժեշտության գիտակցումն էր ստիպել, որ Արևմտյան Հայաստանում ու հայահոծ այլ վայրերում մեկը մյուսի հետևից ծնվեին շարժումը ղեկավարելուն կոչված գաղտնի ու բացահայտ գործող խմբակներն ու կազմակերպությունները, քիչ ուշ նաև՝ կուսակցությունները: Սակայն ստեղծված առանձին գաղտնի խմբակներն ու ֆիդայական կռիվներն ի զորու չէին լուծելու հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները: Մանավանդ որ արևմտահայ «կոմպրադորական բուրժուազիան չէր վարանում քծնանքի նամակներով իր հավատարմությունը դրսևորել Աբդուլ Համիդի նկատմամբ»[625] և, վախենալով նյութական կորուստներ տալու հեռանկարից, վստահեցնում, որ «հայ հավատարիմ հպատակները» ապստամբների «նպատակին չեն ծառայեր»: Քաղաքական կազմակերպված ուժի պահանջ էր զգացվում:

Շարժումը համահայկական դարձնելու և ղեկավարելու համար շատերը դիմում էին Մ. Փորթուգալյանին, սակայն ամեն անգամ էլ մերժում էին ստանում: Այդ դիմում-հորդորներն ու «Արմենիայի» անխափան հրատարակության ծախսերը հոգալու համար Մ. Փորթուգալյանը հիմնեց «**Հայոց Հայրենասիրական Միություն**» (այսուհետ՝ ՀՀՄ, ընդգծումը մերն է – Ս. Ս.) կազմակերպությունը[626]: Միության նպատակը, Մ. Փորթուգալյանի պատկերացմամբ, պետք է լիներ ժողովրդին «վարչական բարենորոգումներու և ազգային ինքնավարու-

---

[625] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Ե., 2004, էջ 403:

[626] Միության ստեղծման թվականի և գործելու տևողության հարցերի մասին տե՛ս հաջորդիվ:

թիւն ձեռք բերելուն պատրաստումը»[627]: Հայ ժողովրդի գիտակցութիւնն արթնացնելու, «ազատօրէն ինքզինք կառավարելու այն հարստահարութիւններ որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին»[628] վերացումը: Ներքին ուժ ձևավորելու համար Միության ծրագիրն առաջարկում էր այդ գաղափարը տարածել մամուլով, բանավոր ու գրավոր խոսքով, կենդանի օրինակներով և «համընթացաբար գաղափարակիցներու միջեւ կապակցութիւններ հաստատելով»[629]: Միությունը «կազմուած էր Արմէնիաի մէջ արտահայտուած և պաշտպանուած որոշ ուղղութեան համոզուող անձերէ, բնակապէս այդ մարմնի ղեկավար լինելու պիտի կոչուէր այն անձ որ նոյն ուղղութեան ամենէն յայտնի տարածողն եղած է»,- բացատրում էր Փորթուգալյանը, ապա ավելացնում, որ այդ կազմակերպության անդամ չէր կարող լինել նա, ով «այդ նոյն ուղղութեան համար մաքառողի դիրքը և պատասխանատուութիւնը հրապարակաւ հանձն առնել կը վարանի»[630]: Շեշտելով ՀՀՄ-ի հայ ազատագրական շարժման սկզբնավորողի առաքելությունը՝ «Արմենիան» պարզաբանում էր, որ այդ կազմակերպության «առաջնորդող համոզումն այն էր ոչ միայն արթնցունել, այլ նաեւ իրեն միջոցներ սովրեցունել գործելու, ոյժ պատրաստել իր մէջ, արտաքին նպաստաւոր պարագայներ ստեղծել կամ գոնէ անոնցմէ օգուտ քաղել»[631]: ՀՀՄ-ն ինքնազգուշացնում էր և մյուս քաղաքական ուժերին էլ կոչ էր անում, որ աւեն մի կատարվելիք քայլ հարկավոր էր նախապես մանրամասն քննարկել, հստակ ծրագրել, քանզի «անյաջող շարժումների դեպքում ժողովուրդն աւելի կը վհատի», ինչը վտանգավոր էր ընդհանուր գործին: Միևնույն ժամանակ ՀՀՄ-ի տեսաբաններն անօգուտ էին համարում բոլոր այն կազմակերպությունների գործողությունները, որոնք «կապ-

---

627 «Հայոց հայրենասիրական միություն», «Արմէնիա», թիվ 72, 1893:
628 «Հայոց հայրենասիրական միություն», «Արմէնիա», թիվ 72, 1893:
629 Նույն տեղում:
630 «Հայոց հայրենասիրական միություն», «Արմէնիա», թիվ 73, 1893:
631 Նույն տեղում:

կօրէն հետևելու էին եւրոպական ռեւէ յեղափոխական ծրագրի» կամ շլացուցիչ, «մեծամեծս խոստացող ծրագիրներ էին ներկայացնում ո-րոնք անգործադրելի կը մնային» և կոչ էին անում բոլոր խելամիտ ու-ժերին գիտակցության և փորձի վրա առաջ տանել հայրենասիրա-կան գործը: «Գաղափարի տարածման և կապակցութեան խնդիրը,- կարդում ենք կազմակերպության ծրագրում,- ամենէն էական խնդիրն եղած է ՀՀՄ-ի համար»[632]:

Ի դեպ, «ՀՀՄ»-ի ստեղծման տարեթվի վերաբերյալ ուսումնասի-րողները կամ խուսափում են որոշակի թվական նշելուց, կամ էլ այդ հարցում տարակարծիք են: Այսպես, Արմենական կուսակցության հավատավոր ու գործուն անդամներից, նշանավոր ֆիդայի, Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության ռազմական ղեկավար Ա. Եկարյանը հուշագրում է, որ երբ Մ. Փորթուգալյանն անցավ Մար-սել ու ձեռնամուխ եղավ «Արմենիայի» հրատարակման գործին, շու-տով աքսորից փախավ և նրան միացավ նրա սաներից Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Ավետիսյանը, որը «ան-խոնջ փրոփականթիստը եղաւ «Հայոց Հայրենասիրական»ին, որ 1885-էն քիչ յետոյ կազմուած էր Լոնտոնի մէջ»[633]: Այնուհետև ավե-լացնում է՝ «90-ական թուականներուն Հայոց Հայրենասիրական միութիւնը իր կատարելութեանը հասած էր»[634]:

Արմենական կուսակցության պատմության խորագիտակ Վ. Ղա-զարյանն էլ ցավ հայտնելով, որ հայ պատմաբաններից շատերը, խո-րամուխ չլինելով հարցի էության մեջ և «զիրար կրկնելով», «Արմենա-կանութիւնը բխեցուցած են Հայոց Հայրենասիրական Միութենէն», մինչդեռ «փաստերը ցույց կուտան թէ ան կազմուած է Արմենական Կուսակցութեան հիմնադրութենէն ետք»[635]: Մոտավորապես նույն

---

632 «Հայոց հայրենասիրական միություն», «Արմենիա», թիվ 73, 1893:

633 Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 7:

634 Նույն տեղում, էջ 23:

635 Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ), Պէյրութ, 1985, էջ 9-10:

տեսակետն են հայտնել նաև այնպիսի նշանավոր գործիչ-հուշագիրներ ու պատմաբաններ, ինչպիսիք են՝ Լեոն, Գ. Լազյանը, Մ. Սերոբյանը, Կ. Իզմիրլյանը, Հ. Վարդանյանը, Վ. Փափազյանը, Հ. Երամյանը, Լ. Գազանճյանը և ուրիշներ[636]:

«Պատմական ճշմարտությունը կը դրդէ յայտարարել,- գրում է հայտնի արմենական գործիչ Մ. Նաթանյանը,- թե Մ. Փորթուգալեան «Արմենիա» թերթին համընթաց ձեռնարկած էր հիմնելու նաև Հայոց Հայրենասիրական Միութիւն» անունով մարմին մը»[637]: XIX դարի վերջին քառորդի ու հայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունը հետազոտած Ջ. Կիրակոսյանն էլ փաստում է, որ «1886-ին Մ. Փորթուգալյանն ստեղծեց «Հայոց հայրենասիրական ընկերությունը»[638]: Ակադեմիկոս Գ. Գալոյանն էլ գրում է. «Ազատագրական շարժումներին կազմակերպված բնույթ հաղորդելու առաջին փորձը կատարեց 1885 թ. Վանում ստեղծված «Հայոց Հայրենասիրական Միություն» կազմակերպությունը»[639]: Սակայն փաստերի համադրումն ու ինքը՝ Մ. Փորթուգալյանն այլ բան են ասում: «Արմենիայի» մի հրապարակումից տեղեկանում ենք, որ հայությանը համախմբվելու ու համատեղ ջանքերով հայոց ազատագրության գործին նպաստելու կոչ-հորդորներին անսալով՝ «Արմենիաի խմբագրութիւնը առաջարկեց մի ընհանուր ժողով գումարել Պր. Յակոբեանի նախա-

---

[636] Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Հ. Ա., Փարիզ, 1934, էջ 144: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 105-108: Մերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948, էջ 184: Իզմիրլեան Կ, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 124-126: Վարդանյան Հ, Արևմտահայերի ազատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, էջ 287: Փափազեան Վ, Իմ յուշերը, հ. Ա., Պոսթըն, 1950, էջ 130: Երամեան Հ, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 255: Գազանճեան Լ, Վերածնունդ Վան-Վասպուրականի, Պոսթըն, 1950, էջ 210:

[637] Նաթանեան Մ., նշվ. աշխ., էջ 11:

[638] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 232:

[639] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 403:

գահութեամբ եւ մի կանոնատր ընկերութիւն կազմակերպել»[640]: Այդ համաժողովը գումարվում է «1886ի յունիս ամսին մէջ»[641]: Սակայն դրանից հետո, փոխանակ կանոնավոր գործող ընկերություն ստեղծելու, մասնակիցների շրջանում հայ ազգային ազատագրական պայքարի ձևերի, մեթոդների ու միջոցների, ինչպես նաև ղեկավար կառույցի շուրջ ունեցած անհամաձայնությունների արդյունքում ավելի հաճախ կռիվներ, «թշնամութիւններ և մաս առ մաս բաժանումներ յառաջ եկան» այնպիսի չափերով, որ մեկ տարի հետո «Արմենիաի» խմբագրությունը հարկ համարեց «վերջապէս հայ ժողովրդին իմացունել, «Համարատուութիւն հայ հայրենասերներին առջեւ» վերնագրով մի յօդուածով և դարձեալ ընդհանուր հայ ժողովրդին դիմել մի ընդհանուր միութիւն գոյացունելու համար»[642]: Այսինքն՝ մեղմ ասած, նախկինում այդպիսի ընկերություն հիմնելու մասին հայտարարություն եղել էր, սակայն, իրականում այն չէր ստեղծվել: Այդ անհամաձայն տարրերից միություն կազմելու համար «4 տարի շարունակ աշխատանք և ժամանակ կորսնցունելէ յետոյ, համոզվելով, որ նմանատիպ միութիւն ավելի հնարավոր ու գործնական է «համակարծիքների մէջ գոյացունել», «Արմենիայի» շուրջ համախմբվածներն այդ անորոշ կացությանը վերջ տալու համար «ալ ժամանակն հասած համարեցին» ու հայտարարեցին «իրենց առանձին ունեցած գոյութեան» մասին: Նրանք «կազմակերպուած ներկայացան հայ ժողովրդին՝ «1889 ապրիլի 5/17ին հրատարակելով իրենց կազմատրիչ կանոնադրութիւն և իրենց ընկերութեան անունն որ էր «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ»[643]:

Բոլոր կարծիքները մեկտեղելով և համեմատելով՝ կարող ենք արձանագրել, որ «Հայոց հայրենասիրական միություն» ստեղծելու ա-

---

[640] «Արմէնիա»ի յուշարար, Պետք է գծել մեր ծրագիր, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 77:

[641] Նույն տեղում:

[642] Նույն տեղում:

[643] Նույն տեղում:

ռաջին փորձը վերաբերում է 1885-1886 թթ.: Սակայն ակնհայտ է նաև, որ այն, ըստ էության, ծնվել է մահացած վիճակում և, բացառությամբ չնչին դեպքերի, չի գործել, այլ ընդամենը եղել է «անունը կա-ամանում չկա» կարգավիճակում: Հենց այս հանգամանքն էլ, մեր կարծիքով, տարակարծություն-ների տեղիք է տվել: Իրականում այն՝ որպես համախոհների կուռ միասնություն, նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկեց 1888 թ. սկսած, իսկ 1889 թ., որպես լուրջ հավակնություններ ունեցող կառույց, հրապարակեց նաև իր ծրագիրը: Այս տեսակետին, որն աստիճանաբար քաղաքացիություն է ստանում վերջին շրջանում ու արդեն տիրապետող դառնում հայ պատմագիտության մեջ, համակարծիք են մեծ թվով հեղինակներ: Օրինակ՝ «Հայոց հայրենասիրական միություն, հայ ազգային-ազատագրական կազմակերպություն: Ստեղծել են «Արմենիա» լրագրի շուրջ համախմբված գործիչները 1888-ին Մարսելում (Ֆրանսիա)՝ Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ»[644]. փաստում են ՀՍՀ-ի, «Հայ սփյուռք» հանրագիտարանի, համացանցի «Վիքիպեդիա» կայքի[645] և մի շարք այլ տպագիր ու էլեկտրոնային աղբյուրների[646] հոդվածների հեղինակները՝ որպես արդեն անվիճելի իրողություն: Իսկ ավելի ուշ ՀՀՄ-ի գործունեության դադարեցման առիթով Մ. Փորթուգալյանի հեղինակած «Արմենիայի» հրապարակման մեջ կարդում ենք. «ՀՀՄ-ի կազմուելէն ի վեր 4 տարիներ անցած են և այս քառամեայ շրջանէն վերջ Վարչութիւնը կուգայ յայտարարել թէ **ՀՀՄ-ն կանոնաւորապէս շարունակուելէ կը դադրի այլ ևս, թեև Միութեան նպատակն եղող հայրենասիրական գաղափարները տարածելու ջանքերը կը շա-**

---

644 ՀՍՀ հանրագիտարան, Ե., 1980, էջ 200: «Հայ սփյուռք հանրագիտարան», Ե., 2003, էջ 623:

645 «Հայաստանի համառոտ հանրագիտարան», էջ 241: Wikipedia.com: Hy wikisource.org և այլն:

646 Աշխատանքն ավելորդ չծանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում դրանք թվարկելուց: Այդ տեսակետն առկա է 1990 թ. հետո լույս տեսած բոլոր աշխատություններում:

ռունակուին»[647] (ընդգծումը մերն է – Ս. Ս.): Կարծում եմ, որ սա այն դեպքերից է, երբ ընդունված է ասել՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Հետագայում Մ. Փորթուգալյանը հիշեցնելով, որ կազմակերպության գործունեության «կերպը բացատրուած է կազմատրիչ կանոնագրի 21րդ յօդուածին մէջ»՝ ներկայացնում էր ՀՀՄ-ի կատարած ազգանպաստ գործերը: Նշում էր, որ նրա միջոցով հայ մարդկանց մեջ սերմանում, նրան վարժեցնում էր կարգապահության, որ նա սովորեր ազգօգուտ գործերի համար պարբերաբար վճարել, զերծ մնար ռոպեական ոգևորությունից և վարժվեր «յարատեւ կանոնատր գործունեութեան», չլսեր, չթեքվեր այն կողմ, «ուրկէ իրենց մեծահնչիւն խոստումներ եկած են», դառնար քաղաքակիրթ և ներկայանալի, որ ոչ միայն լսեին նրան, այլև հարգեին նրա խոսքը:

Ինչ վերաբերում է ՀՀՄ-ի գործունեությունը դադարեցնելու պատճառներին, ապա Մ. Փորթուգալյանը տալիս է խուսափողական, անորոշ և գրեթե ոչինչ չասող բացատրություններ. «կազմակերպութիւնս ինչ ինչ հանգամանքներէ ստիպուած է դադրիլ իւր այժմեան կազմատրիչ կանոնագրի գործադրութենէն»[648]: Իրականում ՀՀՄ-ի գործունեության դադարեցման հիմնական պատճառներն ավելի խորքային բնույթ ունեին: Նախ՝ կազմակերպությունը մեծ տարածում չունեցավ, ամենաշատն այն ունեցավ 380 անդամ, որոնց զգալի մասը համագործակցում և անդամատուրք էր մուծում դեպքից դեպք, ոչ պարբերաբար, ոմանք էլ կամ անդամավճար չէին մուծում, կամ իրենց գործն ավարտված էին համարում՝ որոշ գումար նվիրաբերելով, և ոչինչ չէին անում: ՀՀՄ-ի ստեղծման հենց առաջին պահից լայնածավալ հակաքարոզ էին իրականացնում ոչ միայն թուրքական հատուկ ծառայությունները, այլև «Արմենիայի» ու նրա խմբագրի ընդդիմադիր գործիչները, որոնք մեկ բերան դարձած տարաբնույթ հերյու-

---

[647] «Յայտարարութիւն Հայոց Հայրենասիրական միութեան», «Արմենիա», թիվ 81, 1893:
[648] «Յայտարարութիւն Հայոց Հայրենասիրական միութեան», «Արմենիա», թիվ 81, 1893:

ռանքներ էին տարածում՝ գամարներ յուրացնելու, և այլ արհեստածին մեղադրանքների տեսքով: Պակաս կարևոր չէր նաև այն, որ ասպարեզ իջած կուսակցություններն իրենց հերոսական գործերով, երբեմն էլ ամպագոռգոռ խոստումներով իրենց կողմը գրավեցին շատերին: Որովհետև գաղտնիք չէ, որ հայերն զգացմունքային ժողովուրդ են և հանգիստ, երկարատև ու հավասարակշռված նախապատրաստական գործելակերպի առաջարկներն ընդունելուն և դրանք կյանքի կոչելու ձեռնարկներին զուգընթաց, միևնույն ժամանակ շատ շուտ ոգևորվում են ու հակվում թեկուզ ոչ ճիշտ համարվող, բայց անմիջապես ինչ-որ բան անողների կողմը:

«Հայոց Հայրենասիրական Միության» ծրագրային դրույթներում, որոնք զգալի աղերսներ ունեին Արմենական կուսակցության առաջին ծրագրի հետ, կարդում ենք.

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թուրքահայաստանի մէջ, հայոց տեղական պետքերու համաձայն: Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրեն ինքզինք կառավարելու, որով միայն պիտի կրնան վերանալ այն հարստահարութիւնները, որոնք այսօր Հայաստանի թշուառութեան եւ աւերակ դառնալուն պատճառ կը լինեն»[649]:

«Հայոց Հայրենասիրական Միութիւնն» իր նպատակը իրագործելու համար, իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջների համեմատ: Կաշխատի ներքին ուժ գոյացնել Ազգին մէջ իր ազատութեան համար: Հրատարակութիւններ կանէ որոնց որ պէտք է եւ նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց, որոնք անձնուիրութեամբ կաշխատին Հայրենիքի Ազատութեան գործին:

---

[649] «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 156:

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր, որ բացի զանազան լուրեր տալէ իբր լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան, ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի եւ տարաբնակ հայերի դրութեան վրայ եւ կը ծառայէ հայասիրական եռանդը արծարծելու հայերին մէջ:

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպաստէ «Արմենիա» լրագրի հրատարակութեան»[650]:

Ինչպես ակնհայտ երևում է, համախոհների հետ Մ. Փորթուգալյանի ստեղծած այս կառույցի պահանջներն զգալի չափավոր էին, իսկ նպատակը՝ Բեռլինի դաշնագրով վավերացված բարենորոգումների իրականացումը, դրան հասնելու միջոցները՝ դիմումը Թուրքիային, մեծ պետություններին: Կարևորվում էր թերթին բոլոր միջոցներով սատարելու անհրաժեշտությունը: Թեև մշուշապատ, սակայն նախատեսվում էին համախմբման և նպաստավոր պայմանների առկայության դեպքում՝ նաև ապստամբության ու հեղափոխության գաղափարները: Այլ խոսքով, ծրագրի գլխավոր հեղինակ Մ. Փորթուգալյանը պահանջում էր Թուրքիայի սահմաններում ստեղծել հայկական ինքնավարություն և դրա համար առաջինը դիմում էր հենց Թուրքիային, «գիտնալով հանդերձ թէ անլսելի կմնայ»: Նա չէր հավատում նաև մեծ տերությունների միջամտությամբ 61-րդ հոդվածի իրականություն դառնալուն: Մնում էր մի ելք՝ «նիւթական ճնշումը, հայերի բողոքը գործնական միջոցներով, ապստամբութիւնը բռնութեան դեմ»[651]: Իսկ Հնչակյան կուսակցության հիմնադիր Ավ. Նազարբեկը («Արմենիայում նա հանդես էր գալիս հիմնականում «Լեռենց» կեղծանունով – Ս. Ս.), անդրադառնալով այս հարցերին ու խոսելով հայության ազատագրության խնդրների շուրջ և արձագանքելով «Արմենիայում» տեղ գտած խաղաղ ճանապարհով դրան հասնելու հորդորներին, զարմացած ու զայրացած գրում էր. «Մի՞թէ 19րդ դարումը հայ երիտասար-

650 Նույն տեղում:

651 «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 156:

դրութեան համար ամօթ չի, որ հրաշքի է սպասում...: Ո՞վ է տեսել, որ մի ազգ ազատուէր առանց արիւն թափելու...: Այո, շատ ամօթ է կարծել, թէ մենք մեր տեղը հանգիստ նստած, Եւրոպան իւր խոստմունքները կը կատարի և Հայերի լաց ու կոծն էլ կը դադարի»[652]:

XIX դարի 80-ական թթ. Մ. Փորթուգալյանի հեղինակությունը շատ մեծ էր. Վանում նրա աշակերտները հիմնեցին հայ իրականության մեջ առաջին՝ Արմենական կուսակցությունը, արտասահմանում ուսանող երիտասարդությունը հավաքվեց նրա անձի ու «Արմենիա» թերթի շուրջը: Սակայն այդ համակրանքը երկար չտևեց, որովհետև, ինչպես ներկայացնում են ժամանակակիցները, նա իր նկարագրով հեղափոխական չէր, այլ «յեղափոխական գաղափարների սերմնացան»[653]: Հենց այդ պատճառով էլ 80-ական թթ. երկրորդ կեսից ասպարեզ մտած երիտասարդությունը գտնում էր, որ գաղափարը մշակված էր արդեն, ուստի պետք էր այդ գաղափարը փոխադրել արևմտահայ իրականություն և այնտեղ պատվաստել ու իրականացնել այդ հեղափոխությունը: Միևնույն ժամանակ պարզ էր դառնում, որ որքան ուժեղանում էին թուրքական իշխանությունների ճնշումները, այնքան ավելի համարձակ էր դառնում հայերի դիմադրությունը: Ակնհայտ էր, որ եվրոպական և ոչ մի երկրի կառավարություն չէր ցանկանում իրական ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հայերի նկատմամբ բռնաճնշումներին վերջ դնելու համար: Ավելին, «հայերը մեղադրում էին տերություններին, որ նրանք դարձել էին Բ. Դռան մեղսակիցներ»[654]:

Հնչակյան կուսակցության հիմնադիրներից Ռ. Խանազատը, բավական անաչառորեն գնահատելով Մ. Փորթուգալյանի գործունեությունը և ընդգծելով հատկապես նրա «Արմենիայի» ոգևորիչ նշանա-

---

652 Մեր երիտասարդութիւնը եւ նրանց դէպի Հայաստան ունենալիք պարտաւորութիւնները, «Արմէնիա», թիվ 66,1886:

653 ««Արմէնիա»»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարսել, 1890, էջ 157:

654 Salahi R. S., The Ottoman Armenians, London, 1987, էջ 211:

կությունը հայ երիտասարդության համար, միևնույն ժամանակ նշում էր, որ չնայած դրան՝ Մ. Փորթուգալյանը հիասթափեցնում էր այդ նույն երիտասարդությանը՝ թերթում հայտարարություն տպելով այն մասին, որ նրա նպատակն է «մեծ զարկ տալ հայ վաճառականությանը»[655]: Ժամանակակիցներից՝ հայ ազգային-ազատագրական ռահվիրաներից Մ. Տամատյանն էլ իր հուշերում արձանագրում էր, որ Մ. Փորթուգալյանն իր «յեղափոխական գինիին մէջ շատ ջուր խառնած էր և իր հիմնած «Արմենիա» թերթին ի սկզբան տուաւ չափաւորական ուղղութիւն մը»[656]: Այսինքն՝ թերթի էջերում աստիճանաբար ուրվագծվում էր երկու հիմնական ուղղություն՝

ա) չափավոր, աստիճանական զարգացման և

բ) բռնի միջոցներով՝ հեղափոխության և անմիջապես նպատակին հասնելու համար գործողությունների դիմելու կողմնակիցների:

Մի կողմից թերթը նշում էր, որ հայերն ապստամբ, խռովահույզ ու անհավատարիմ ժողովուրդ չեն և պարզապես «յուր 61-րդ հոդվածի գործադրութիւնը կհուզէ և այս իրականութեամբ միայն ազգային ապահովութիւնը և անդորրութիւնը կխնդրէ և ոչ այլ ինչ»[657]: Մյուս կողմից «Կոռանն» իր հոդվածներից մեկում զարգացնում էր այն թեզը, որ ոչ մի ազգ չի ազատագրվել «առանց արյուն թափելու, առանց կորուստներ ունենալու» և վկայակոչելով բուլղարների ու հույների օրինակը՝ ցույց էր տալիս նրանց նման հայրենիքին նվիրվելու, նրան անմնացորդ ծառայելու, անհրաժեշտության դեպքում սեփական կյանքը չխնայելու կատարված իրողությունը. «Հայ երիտասարդներ, բաւական է, որքան քնեցիք. ժամ է, արթնացեք, Հայաստանը մեզ է կանչում և մեզնից է սպասում յուր փրկութիւնը»[658]: Ի վերջո, Մոնպելյեի ակումբի անդամների ավելի արմատականորեն տրամադրված

---

[655] Salahi R. S., The Ottoman Armenians, London, 1987, էջ 68:

[656] Տամատեան Մ., Իմ յուշերէս, խմբագրեց եւ ծանօթագրեց՝ Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1985, էջ 27:

[657] «Արմենիա», թիվ 24, 1886:

[658] «Արմենիա», թիվ 64, 1886:

թևը և Ժնևում հաստատված հայ ուսանողների անմիջապես գործունեություն ծավալելու կողմնակիցների խումբն (որ յետոյ «Հնչակի Խումբ» անունը պիտի առնէր) առաջարկեց Մ. Փորթուգալյանին համախմբվել ու «հայ յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել»[659]: Ի պատասխան այդ առաջարկին՝ Մ. Փորթուգալյանը հայտարարեց, «թէ ինք յեղափոխական չէ, այլ՝ խաղաղ առաջադիմական»[660] և անմիջապես խոսքից գործի անցավ: Նա հիմնեց «Հայաստանի Զավակների Միություն» անունով մի կազմակերպություն, որի նպատակն էր Հայաստանից խելացի, ուշիմ և օժտված երիտասարդների բերել և բոլոր միջոցներով օգնել, որ նրանք եվրոպական համալսարաններում բարձրագույն կրթություն ստանան և հետո վերադառնան հայրենիք ու իբրև բժիշկներ, փաստաբաններ, հողագետներ, գյուղատնտեսներ ու ուսուցիչներ՝ իրենց գիտելիքներն ի սպաս դնեն ի նպաստ ժողովրդի բարօրության: Առաջ անցնելով փաստենք, որ նրա այդ ծրագիրն առանձնապես չաշխատեց, քանի որ հայ հարուստները չտրամադրեցին անհրաժեշտ գումարները, և մեկ տարի անց կազմակերպությունն այլևս չէր գործում:

Փաստորեն, ըմբռնելի էր դառնում այն պարզ ճշմարտությունը, որ մեծ տերությունները Հայկական հարցը շահարկում էին տարբեր տեսքով ու բովանդակությամբ, սակայն միշտ իրենց շահերին համապատասխան: «Որչափ խորհեցանք, այնչափ անգթությամբ մեր կոնակի բեռը ծանրցուցինք»,- գրում էր «Վհուկ» անունով հոդվածագիրը և պահանջում այլևս ոչխարի դերում չլինել՝ «քիչ մ'ալ գայլ ըլլանք»: Նրա կարծիքով ազգն իր հույսը միայն կաթողիկոսի և պատրիարքի վրա չպետք է դնի, այլ «յուր անհատական զորութեան վրա եւ այս զորութիւնն է, որ հրաշքներ կգործէ» ու կոչ էր անում, 61-րդ

---

659 Տամատեան Մ., Իմ յուշերէս, խմբագրեց եւ ծանօթագրեց՝ Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1985, էջ 28:
660 Նույն տեղում:

հոդվածն իրականացնելու համար, անհապաղ դիմել վճռական գործողությունների[661]:

Մոսկվայից «Ս.» հոդվածագիրն էլ, արտահայտելով շատերի տեսակետը, առաջարկում էր մի «հայկական միություն» հիմնադրել, որն ազգային միասնության գաղափարի հենքի վրա կմիավորեր համամասն ընկերություններին: Այդ կազմակերպության կենտրոնը պիտի գտնվեր մի ազատ երկրում, այն մանրամասն տեղեկատվություն պիտի կուտակեր Հայաստանի մասին, այնտեղ «յեղափոխական մտքեր տարածեր» և ոչնչացներ «ամեն մի մատնիչի»[662]:

Բուլղարիայից «Պանդուխտ» անունով թղթակիցն էլ պահանջում էր, որ Կ. Հակոբյանի ղեկավարությամբ գործող Լոնդոնի «Կենտրոնական հանձնաժողովի» անդամները, հայանպաստ հոդվածներ տպագրելով, չպիտի բավարարվեն, այլ նշանակեն լիազորներ, որոնք կշրջեն գաղթօջախներում, կներկայացնեն Հայկական հարցի էությունը, կբացատրեն ապագայում արվելիք քայլերի իմաստը և կոչ կանեն ողջ գաղութահայությանը, որ միասնաբար զորավիգ լինեն հայանպաստ բոլոր այդ գործառույթներին:

Հետագայում «Արմենիայի» էջերում արծարծվում էին Երկիր մտնելու, այնտեղ որևէ պատճառաբանությամբ հաստատվելու, քարոզչական աշխատանքներ տանելու գործնական առաջարկները և նույնիսկ զինված պայքարի անհրաժեշտությունն ու այն վարելու ձևերը. «...հայաստանցին այլևս ճշմարտութիւն կխնդրէ մենե և կուզէ, որ յեղափոխութիւն քարոզողի գործով ցուցնեն իրենց հայրենասիրութիւնը և մինչև իսկ ի զէն ի ձեռքն դիմէն ի Հայաստան յորոց յայնժամ միայն պիտի յետևի և անզէն հայաստանցին...»[663]:

Հեղափոխության գաղափարն էր զարգացնում նաև «Արմենիայի» Յ. Սամվելյան հոդվածագիրը «Հայաստանը և նրա յեղափոխու-

---

[661] «Արմէնիա», թիվ 68, 1886:
[662] «Արմէնիա», թիվ 72, 1886:
[663] «Արմէնիա», թիվ 73, 1886:

թիւնը» ծավալուն հոդվածում, որտեղ ասում էր. «Ինչ կողմից էլ նայենք հարցին, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ հարկավոր է յեղափոխութիւն», որը նշանակում էր հասարակական ձևերի արմատական փոփոխություն: Հեղինակը կոչ էր անում մտնել ժողովրդի մեջ և անհնարին համարում դրսից հեղափոխական շարժումներ ղեկավարելը. «Անհրաժեշտ է, որ գլխավոր կազմակերպութիւնը գտնվի այնտեղ, ուր լինելու է յեղափոխութիւնը»[664]: Իսկ այդ հեղափոխության իրական շարժիչ ուժը պետք է լիներ երիտասարդությունը, որը դեռ ապականված չէր կյանքի «գործնական և ցածր կողմերի ազդեցութիւնից և պարտական է նվիրել իրան յուր ժողովրդի բարօրութեան գործին»[665]: Ավարտելով ասելիքը՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «ժողովրդական ապստամբութիւնը» միայն կարող էր Հայաստանին ազատություն տալ: Այս մտայնությունը համարից համար ավելի էր արմատավորվում ու տիրապետող դառնում «Արմենիայում»: «Կոռանը» Մոնպելյեից ևս ողջունում էր հեղափոխության գաղափարը՝ չբացառելով, որ այդ ճանապարհին կլինեն նաև դժվարություններ, խոչընդոտներ և նույնիսկ զոհեր: Նա պահանջում էր գործել համերաշխ, միմյանց փոխօգնության առկայության պայմաններում, որ զոհերը քիչ լինեն և որքան հնարավոր էր շուտ «մեր մէջ հիմնել մի գործունյա ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ», քանի որ «մեր թշնամին արդեն գործում է»[666]:

Այս իմաստով հետաքրքրական է Խանազատի այն տեղեկությունը, որ Ա. Նազարբեկյանն առաջարկություն էր անում Մ. Փորթուգալյանին՝ նախաձեռնել նոր և անմիջապես գործնական հիմքերի վրա գործող կազմակերպության ստեղծումը, ստանձնել ժամանակավոր

---

[664] Նույն տեղում:

[665] «Արմենիա», թիվ 73, 1886:

[666] «Արմենիա», թիվ 87, 1886: «Արմենիա» թերթի 1885 և 1886 թթ. մի քանի համարներում առկա են նմանաբնույթ հրապարակումներ, որոնցում Մ. Փորթուգալյանը հստակ ու միանշանակ հայտարարում է, որ այդպիսի կազմակերպություն արդեն կա (նկատի ունի Հայոց Հայրենասիրացը), և նորն ստեղծելու անհրաժեշտությունը չի տեսնում:

գանձապահի պաշտոնը և գումարներ հավաքել նորաստեղծ հեղափոխական կազմակերպության համար: Բայց վերջինս մերժում է՝ թերթում տպելով և՛ Ա. Նազարբեկյանի առաջարկը, և՛ իր մերժման խոսքը: Ընդ որում այն պատճառաբանությամբ, որ ինքն արդեն նոր կազմակերպություն էր ստեղծում, ինչը խոր հիասթափություն և զայրույթ է առաջ բերում հայ ուսանողության մեջ: Ա. Նազարբեկյանը գրում է «Հայակեր քամելեոնը» հոդվածը, որը նրա կողմնակիցները տպագրում և տարածում են ամենուր: Իսկ թե ինչու էր Մ. Փորթուգալյանը մերժում այդ առաջարկը, պատճառը, ինչպես նշեցինք, Մ. Փորթուգալյանի կողմից նոր կազմակերպության ստեղծումն էր, ինչի մասին նա հանդես եկավ հատուկ հայտարարությամբ: Մ. Փորթուգալյանի նորաստեղծ «Հայրենասիրաց միություն» անունով այդ կազմակերպությունը, «որի նպատակն էր՝ Հայաստանից պատանիներ բերել Եվրոպա, կրթել, ուսում տալ նրանց, որպէսզի նրանք, հայրենիք վերադառնալով, բարեկարգեն երկիրը»[667], թեև մեծ տարածում չգտավ, սակայն հետապնդում էր ապագա հնչակյանների համար ոչ առաջնահերթ խնդիրներ: Դրա համար էլ նրանց ու Մ. Փորթուգալյանի հետագա համագործակցությունը անհնարին դարձավ:

1886 թ. հունիսին Փարիզից Լեռենցը բանաձևում էր, որ Թուրքիայում հայերի այլևս անտանելի «դրութեանը վերջ տալու միակ միջոցն է յեղափոխութիւնը և մենք պետք է այդ անենք» ու քննադատում էր բոլոր նրանց, ովքեր փրկության հույսը կապում էին 61-րդ հոդվածը «թուրքին գործադրել տալու» հետ: Նա կործանարար էր համարում նաև սպասելն ու ազատագրական պայքարի հետաձգումը. «-Միայն արյունն է, որ Հայ ժողովրդին կարող կլինի փրկել այն ախտից, որով նա հիմա տանջվում է. միայն արյունն է քաղաքականութիւնը թուրք կառավարութեան դէմ. միայն արյունն է, որ կարող է սարսափեցնել բռնավորին»[668]: «Լեռենցն» առաջարկում էր ամենու-

---

[667] «Արմէնիա», թիվ 73, 1886:

[668] Նույն տեղում:

րեք, որտեղ շատ հայեր կան, ստեղծել հայ երիտասարդական մարտունակ խմբեր, որոնք նույն գաղափարական հենքի վրա կկուտակեին նյութական միջոցներ, կմարզվեին, կկատարելագործվեին, կծավալեին լայն քարոզչական աշխատանքներ, կգործեին միասնական ծրագրով և կապահովեին բաղձալի հաղթանակներ[669]:

«Արմենիա»-ի տեսաբանները հեղափոխության անհրաժեշտության մասին հարցադրումներին զուգահեռ առաջ էին քաշում որոշակի, գործնական քայլեր: Օրինակ՝ «Կոռանն» առաջարկում էր Արևմտյան Հայաստանում նախապատրաստվող հեղափոխությանը մասնակից դարձնել նաև այնտեղ բնակվող ոչ հայ ժողովուրդների գիտակից մասին[670]: Այդպիսի փորձեր հետագայում տարբեր քաղաքական ուժերի կողմից բազմիցս եղան, սակայն դրանք բոլորն էլ անհաջողության մատնվեցին, քանի որ շրջակա ցեղերից քրդերը վաղմիջնադարյան ավատատիրական կացութաձևի մակարդակում գտնվելով, ամբողջովին թուրքական իշխանությունների ազդեցության տակ էին, իսկ հույներն ու ասորիները հայերից ոչ պակաս ճնշված էին, իրավազուրկ, փոքրաթիվ էին ու վախեցած, հետևապես և խիստ զգուշավոր:

«Կազմատրուենք ժամ առաջ» խմբագրականում հեղափոխության անհրաժեշտությունն էր շեշտում նաև էությամբ ոչ այնքան հեղափոխական Մ. Փորթուգալյանը: Ներկայացնելով երկրում այլևս անտանելի և օրեցօր ավելի վատացող իրավիճակը՝ նա կոչ էր անում խոսքից գործի անցնել[671]: Իսկ գործի անցնելուց առաջ «Արմենիան» առաջարկում էր հնարավորինս ձերբազատվել հեղափոխության գաղափարին դեմ ուժերից, մերկացնում ու խիստ քննադատում էր թուրքական իշխանությունների հլու կամակատար ապազգային տարրերին, ինչպիսիք էին օրինակ՝ Վանում գործող տմարդի Պողոս եպիսկոպոսն ու նրա նմանները, որոնք, ցավոք, քիչ չէին: «Արմենիան» ցա-

---

669 «Արմենիա», թիվ 89, 1886:

670 Նույն տեղում:

671 «Արմենիա», թիվ 3, 1886:

սումով դատապարտում էր թուրքական իշխանությունների՝ «Հայաստան» անունն արգելելու վերաբերյալ որոշումը և բողոքում, որ Թուրքիայում այդ անվան փոխարեն օգտագործվում էր «հայ կրոնով օսմանցիներով բնակուած նահանգներ»[672] հոլովույթը: Ի միջի այլոց, զավեշտական է, բայց փաստ, սակայն թե՛ թուրքական, թե՛ ցարական իշխանությունները, զգուշանալով հայկական ազատագրական շարժումներից, «արգելում էին նույնիսկ հայկական երգերի տպագրությունը»[673]:

Բոլորի համար պարզ էր դարձել, որ Բեռլինի դաշնագրի ստորագրումից որոշ ժամանակ անց թուրքական իշխանություններն առանց խղճի խայթի ու վախի, հանդուգն կերպով վերսկսեցին քրիստոնյաների և հատկապես հայերի ճնշումը՝ մոլորության մեջ գցելով ամբողջ Եվրոպային և նույնիսկ Մեծ Բրիտանիային ու Ռուսաստանին, և ոչ ոք չհարցրեց, թե ինչպիսին է իրոք հայ ազգի վիճակը, «մի պատմական ժողովրդի, որը փառավոր անցյալ էր ունեցել»: Մինչդեռ հայերն այդ ժամանակ գտնվում էին աղքատության ստորին աստիճանին, իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար ստիպված լինելով վաճառել իրենց ամբողջ ունեցվածքը՝ գույքը, տունը, հողը: Նրանցից շատերը ստիպված թողնում էին իրենց տներն ու օրվա հացը վաստակելու համար բռնում պանդխտության ճանապարհը՝ հետագայում այլևս հնարավորություն չունենալով վերադառնալ հայրենի օջախները: Վասպուրականի հարավային ու արևելյան շրջանները համարյա դատարկվել էին քրիստոնեական տարրից, որոնք հիմնականում հայեր էին, և նրանց տեղը գրավում էին քրդերը, թուրքերը, չերքեզները և այլ մահմեդական ժողովուրդներ: Նույնիսկ օտարներն էին վկայում, որ «թուրքի աչքում հայը ստրուկ էր և ճորտ ու ծառա»: Ողջ Արևմտյան Հայաստանում տիրում էին ապօրինությունը, թալանն ու կողոպուտը: Դրանց նկատմամբ կառավարությունը փա-

---

[672] «Արմենիա», թիվ 1, 1886:
[673] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 411:

կում էր աչքերը, որոնց պատճառով «յուրաքանչյուր ապօրինություն մնում է չբացահայտված»: Բանտերը լցված էին անհամար հայերով, որոնք բոլորն էլ բանտարկված էին առանց հիմնավոր պատճառների և պահվում էին մութ, ցուրտ ու խոնավ ներքնահարկերում, առանց ջրի ու հացի: Այս տխուր իրավիճակից մոլորված հայերն ակամա հարց էին տալիս. արդյո՞ք Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան «երկար ժամանակ պետք է լռեն...ինչու՞ նրանք չեն սանձում «թուրքական իշխանություններին»[674]:

Գործնական քայլեր կատարելու անհրաժեշտությունն էր առաջ քաշում նաև «Լեռենցը» և զգուշացնում, որ անհրաժեշտ է արագ կազմակերպվել և «շուտով կազմել ընկերութիւն: Ժամ է, ով հայ մարդ հյուսիսային միապետը իր անընդհատ յետաքրքրութիւններով Տաճկահայաստանի հայերի կացութեան վերաբերութեամբ եւ անգլիական միսիոներները մեր երկրում՝ մեզ դեմ օձային խարդախ քաղաքականութեան որոգայթն են լարում...»[675]: Հեղափոխության այս տեսաբանը գտնում էր, որ «յեղափոխական գործում առաջին պայմանն է մարդ, երկրորդը՝ դրամ» և պարտադիր համարում, որ աշխարհասփյուռ հայությունը, եթե ուզում է հայրենիքի «ազատութիւնն ու հանգիստը», պետք է հնարավոր բոլոր միջոցներով օժանդակի սրբազան այդ գործին[676]: «Այսուհետեւ համբերութիւնը,- կարդում ենք «Արմենիայի» այս հրապարակման մեջ,-օտարների վրա հույս դնելը մեր հիմարութիւնը եւ տգիտութիւնը պետք է ցոյց տա, իսկ «անձնվիրութեամբ, զգուշութեամբ եւ գաղտնապահութեամբ գործելը՝ մեր խելքը»[677]:

Հեղափոխության անհրաժեշտությունն էր ընդգծվում նաև Լոնդոնից մի արևմտահայի ուղարկած վերլուծական հոդվածում: Հեղի-

---

674 „British documents on the Ottoman Armenians,, vol 1, էջ 547-550:
675 «Արմենիա», թիվ 3, 1886:
676 «Արմենիա», թիվ 10, 1886:
677 «Արմենիա», թիվ 11, 1886:

նակը, վկայակոչելով բժշկության ասպարեզում հաճախ կիրառվող բուժձևերից մեկը, նշում էր. «Պիտի ընէնք օր մը ասանկ բան մը, եւ այս հիւանդ ազգին երակը կտրել պիտի տանք քիչ մը արիւն դուրս հանելու», իսկ հայ հարուստներին կոչ էր անում, որ ձեռքները գրպանները տանեն, ժլատություն չանեն, քանի որ «ազգը գալիք յեղափոխութեան մը պատրաստել խոսքով չըլլար եւ ոչ ուղերձներով, դրամ պետք է, դրամ»[678]: Վառնայից մեկ այլ թղթակից էլ գրում էր, որ հարկավոր է փոխել, արմատախիլ անել դարերի ընթացքում հայ վերնախավի մոտ առաջացած ուրիշին ծառայելու հակումը. «Սթափուենք, հայէր, միանամք եւ զորանամք քաջութեամբ եւ եռանդով նայիմք դեպի մեր հայրենիք...Ցուցընեմք մէր բազուկներով եւ մէր սրտերով եթե ճշմարիտ Հայկա սերունդէն իջած մարդիկներ ենք եւ պատերազմենք համարձակ մէր ազատութեան համար»[679]:

1886 թ. մայիսին «Ոսկան» անունով հեղինակը «Նամակ Ամերիկայի Միացեալ նահանգներէն» ծավալուն վերլուծականում ընդգծում էր զինվորներ պատրաստելու անհրաժեշտությունը, կոչ անում «մոռանամք այդ 61րդ յօդուածն, յորջորջեմք «հայրենիք» և «ազատութիւն» բառերն և ԳՈՐԾԵՄՔ»: Թղթակցի կարծիքով. «...արդէն հայերս լաւ հասկցած ենք որ եւրոպական տերութեանց շահն կը պահանջէ Սուլթանի գահակալութիւնն ի Կ. Պոլիս, կամ որ նոյնն է, Եւրոպան, մանաւանդ Անգլիան-որոյ բարոյական ազդեցութիւնն երթալով կը նուազի քաղաքական խնդրոց մէջ-չը շիկնիր իւր եսութեան զոհ ընել որ և է ժողովուրդ. հետևաբար խնդրել, աղաչել եւրոպական տերութեանց որ հայոցմ գործին աշխատին և այսպէս ժամանակ անցունել, ուրիշ բան չէ բայց եթէ մենք մեզի վնասել»[680]: Բաղձալի նպատակին հասնելու համար՝ հարկավոր էր ձեռնարկել անհրաժեշտ քայլեր,- շարունակում էր իր միտքը զարգացնել հեղինակը,- առաջին հերթին

---

[678] «Արմենիա», թիվ 78, 1886:
[679] «Արմենիա», թիվ 80, 1886:
[680] «Արմենիա», թիվ 83, 1886:

«ԴՐԱՄ և ՄԱՐԴ պէտք է պատրաստուին մեծ խնամքով»: Այնուհետև բացատրում էր, որ մարդ պատրաստելը ենթադրում էր «Հայրենասիրաց թիւն աւելցնելու և հայրենասիրաց հայրենասիրութիւնը կորովացնելու ջանից հետ պէտք է միանայ զինուորներ պատրաստելու հոգսն», ընդ որում «կրթեալ զինուորներ ունենալու եմք որ երբ պատեհ ժամանակը գայ կազմեն ու կազմավորեն հայ զինուորներն և հրամայեն նոցա զինուորական հմտութեամբ»[681]:

Շարունակելով թեման՝ Փարիզից «Սամվելյան» հոդվածագիրը հայտարարում էր, որ «ժամանակ է թողնելու այն հույսը, թե եվրոպական դիպլոմատիան որևիցե բան կանի Հայաստանի համար», քանի որ Հայաստանին տրվելիք ամենափոքրիկ ազատությունն անգամ նրանց շահերին դեմ է լինելու, որովհետև այդ «ողորմելի ավտոնոմիայի հետ զարթնում է արևելյան սոսկալի հարցը, որի լուծումից սարսափով աշխատում է խուսափել յուրաքանչյուր դիպլոմատ»[682]: Այնպես որ մեծ հաշվով Եվրոպան մտադիր չէր բավականություն տալ հայերի թեկուզ արդար պահանջներին և միայն այն ժամանակ որևէ բան կձեռնարկեր, եթե դա կհամընկներ իր հետապնդած շահերին:

Այս տեսակետները, նրանց միջև եղած անհամաձայնություններն ու անհաշտությունն առկա էին ամենուր: Դրանք հաճախ իշխող էին դառնում հայ իրականության մեջ ու շատ դեպքերում սկզբնավորվում էին Մոնպելյեի ակումբի տեսաբաններից: Ակումբում, որն, ի դեպ, ունեցել է տասը գործադիր անդամ, հաճախ էին վեճեր ծագում գործունեության վայրի՝ արևմտահայ թե արևելահայ շրջանակներում, գործունեություն ծավալելու առաջնությունների խնդրում, գործելամիջոցների և այլ հարցերի շուրջ: Ստեղծված նոր պայմաններում անհրաժեշտություն էր առաջացել վերանայելու ու նոր պայմաններին համապատասխան նորովի խմբագրելու ակումբի հին ծրագիրը, կազմելու «մի բոլորովին նոր յեղափոխական ընկերութիւն, այն պայմանով, որ

---

681 Նույն տեղում:

682 «Արմենիա», թիվ 84, 1886:

յուրաքանչիւր անդամը երբ յուր ուսման ընթացքը պրծնի, ընկերութեան կարգադրութեամբ պարտավորված լինի գնալ Տաճկահայաստան յեղափոխական ազնիվ պրոպագանդայով պարապելու»[683]:

Ընդհանրապես վաղուց հայտնի ճշմարտություն է, որ XIX դարի վերջին նոր թափով ծավալվող հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ռահվիրաները (Մ. Նալբանդյան, Ռաֆֆի, Գ. Արծրունի, Ռ. Պատկանյան, Մ. Խրիմյան, Մ. Մամուրյան, Հ. Սվաճյան, Մ. Պեշիկթաշլյան, Մ. Փորթուգալյան և ուրիշներ-Ս.Ս.) միակամ չէին ազատագրական պայքարի միջոցների ընտրության հարցում, իսկ այդ տարակամությունը, ցավոք, ժառանգեցին նաև մեր ազատագրական պայքարին զինվորագրված հաջորդ բոլոր սերունդները, այդ թվում՝ Մոնպելյեի ակումբի անդամները:

«Արմենիա»-ի խմբագրի ու նրա կողմնակիցների կարծիքով բոլորը Հայաստանի ազատությունն էին ուզում, բայց «մեր մէջ հայկական խնդրի նկատմամբ դեռ որոշ ծրագրով կազմակերպուած կուսակցութիւններ չկային», և որոշակի մարտավարություն ու ռազմավարություն մշակված չէր, այլ «դեռ կսպասեն, որ ուրիշներ իրենց հրամայեն, ուրիշներ իրենց հրահանգ տան, որ իրենք ալ կարենան որևէ մի բան գործել»: Ոմանք, առաջին դժվարություններից հուսահատված, անօգուտ էին համարում որևէ գործողության դիմել կամ, նկատի ունենալով ուժերի անհավասարությունն ու այլ դժվարություններ, պայքարի մեջ մտնել: Մեկ այլ խումբ, զգուշանալով զոհողությունների հեռանկարից, խնդրի լուծումը տեսնում էր եվրոպական տերություններին դիմումներ հղելու մեջ: Մյուսները, անօգուտ չհամարելով խոշոր տերություններին դիմումներ հղելու և եվրոպական մամուլում հայանպաստ հրապարակումներ անելու օգտակարությունը, միաժամանակ կարևոր էին համարում «ներքին մի զօրութեան գոյացունել Արմենիա-

683 «Արմենիա», թիվ 14, 1886:

յի մէջ յեղափոխական շարժումներ առաջ բերելու համար, պարագային հարմար միջոցներով»[684]:

«Արմենիա»-ի խմբագրութիւնը սկզբունքով կպատկանի վերոհիշեալ երրորդ կուսակցութեանը»,- աներկբայորեն հայտարարում էր Մ. Փորթուգալյանը: Այսինքն՝ կողմնակից էր Հայաստանում մանրակրկիտ նախապատրաստվելուց և անհրաժեշտ քանակությամբ կարող ուժեր գոյացնելուց հետո իրականացնել հեղափոխական շարժումներ. «Մենք համոզուած ենք, թե առանց յեղափոխական շարժման չի կարելի ազատութիւն ձեռք բերել և միևնոյն ժամանակ գիտենք, թե այդ շարժումի համար մենք անպատրաստ ենք դեռ»[685]: Գրեթե նույն կերպ էին մտածում նաև Արմենական կուսակցության տեսաբանները, որոնք, լինելով ժողովրդին ազգային պայքարի ոգեկոչելու գաղափարախոսության դրոշակակիրներ, սակայն խորշում էին Աբդուլ Համիդի դեմ ընդվզած մահմեդականների և Օսմանյան կայսրության մյուս ճնշված ազգերի այլախոհների հետ դաշնակցելու գաղափարից: Վստահ չլինելով Հայաստանը զինված պայքարի միջոցով ազատագրելու խնդրում՝ նրանք գրավել էին սպասողական դիրք ու չկարողացան ժողովրդական զանգվածներին տանել իրենց հետևից: Հետագայում էլ, իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ինքնապաշտպանության և Արևմտյան Հայաստանում բարեկարգումներ իրականացնելու գաղափարի պրոպագանդմանն ու մեծ զոհեր տալով 1896 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, խիստ թուլացան և շուտով հեռացան քաղաքական ասպարեզից:

Մեծ ցավով պետք է արձանագրենք, որ հայ ազգային-ազատագրական պայքարը ղեկավարելու, առաջնորդելու հավակնությամբ քաղաքական ասպարեզ իջած բազմաբնույթ խմբակներն ու կազմակերպությունները հենց սկզբից ներքաշվեցին ու ընդմիշտ մնացին երկ-

---

[684] «Արմենիա», թիվ 16, 1886:
[685] «Արմենիա», թիվ 16, 1886:

պառուկության, միմյանց չընդունելու, չհանդուրժելու հսկայական միջոցներ ու մարդկային ռեսուրսներ կլանող ճահիճում: Օր առաջ փառաբանվելու, հաղթանակի դափնիների արժանանալու եսասիրական մղումները հաճախ կուրացրին, նրանց եռանդի առյուծի բաժինը խլեցին, բոլոր ջանքերն ընդհանուր թշնամու դեմ կենտրոնացնելու փոխարեն: Այսպես շարունակվեց երկար տարիներ: Ավելին, այդ ուժասպառիչ ախտը փոխանցվեց նաև կուսակցություններին, որոնց դեպքում հակասությունները նույնիսկ եղբայրասպանության ցավալի ու ամոթալի դրվագներ արձանագրեցին: «Ինչպիսին սկիզբն էր, այնպիսին եղավ և շարունակությունը»[686],-ցավով արձանագրում է Ջ. Կիրակոսյանը, և նրա այս տեսակետին համամիտ է մեր ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունը:

Ընդհանուր առմամբ հայ ազատագրական պայքարի պատմության, մասնավորապես XIX դարի 80-ականներից սկսած, ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ խոսքն ավելի շատ էր, քան գործը: Մեկ մարդու նման բոլորը կարծես որդեգրել էին «գաղափարական ոլորտում շատախոսություն, գործնականում՝ անկարող ու սխալական» կարգախոսը: Ինչպես մեզ հայտնի շատ աղբյուրներում, այնպես էլ «Արմենիա»-ում լույս տեսած նյութերում, 80-ական թթ. կեսերից սկսած, շատերն էին կոչ անում համախմբվել, միասնաբար հակաուսլթանական ճակատ ստեղծել, սակայն գործնականում անում էին հակառակը: Արդյունքում փոշիանում էին առանց այն էլ սուղ միջոցները, ջլատվում էին կարող ուժերը, տեսակետները հեռանում էին միմյանցից, շատերն էլ շփոթվում, մոլորվում էին այդ լեզվակռվային շքերթից ու լքում ասպարեզը: Անդրադառնալով այս իրավիճակին՝ «-Կաֆլանը» (Գ. Կաֆյան)[687] ժնևից ուղարկած թղթակցությունում, դի-

---

[686] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 276:

[687] Կաֆյան Գ. (1860-1930), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: 1887 թ. Ա. և Մ. Նազարբեկյանների հետ մասնակցել է «Հնչակ» թերթի ու Հնչակյան կուսակցության հիմնադրմանը: 1890 թ. Կ. Պոլսում մասնակցել է հակաուլթանական հայտնի ցույցին: Մի քանի անգամ ձերբակալվել է հեղափոխական գործունեության համար,

մելով հայ երիտասարդությանը, գրում է. «Ամո՞թ չէ, որ արտասահմանում գտնուող հայ երիտասարդութիւնը 15 ընկերութիւններ ունենա, այս ինչ խայտառակութիւն է: Ամոթ չէր հայ երիտասարդներիս կռուել և հայհոյել այն ժամանակ, երբ Վանում մէր եղբայրները ցոյց էին տալիս և ցոյց տուին ամբողջ Եվրոպային, որ նախ ստրուկ չենք, որ նոքա արժանի են հայ կոչումին» և, միաբանության կոչ անելով հանդերձ, պահանջում էին հայի ազատությունը պաշտպանել մինչև արյան վերջին կաթիլը[688]:

Նույն՝ միավորվելու և ազատագրական պայքարը ղեկավարելու համար միասնական կենտրոն ունենալու անհրաժեշտությունն էր պահանջում նաև «Պանդուխտ» անունով հոդվածագիրը Սիլիստրեից. «Եվրոպիո ամենաազատ մի երկրին մէջ յեղափոխական յայտնի մի կենտրոն ունենալ և երկրորդ՝ մի նախագահ ընտրել, որ յուր գործակիցներու յետ միատէղ ազատ պետք է լինի որևիցե անձնական մի պարապմունքից»[689]:

Մ. Փորթուգալյանի անհամաձայնությունն իր ընդդիմախոսներին ուներ մեկ այլ պատճառ: Ի տարբերություն եվրոպահայ ուսանողության, որոնք երբևէ նույնիսկ չէին էլ եղել Արևմտյան Հայաստանում, Մ. Փորթուգալյանն այդ միջավայրի ծնունդ էր, տարիներ շարունակ գործել էր Օսմանյան կայսրության դժնդակ պայմաններում, ծանոթ էր տեղի պայմաններին և վստահաբար գիտեր, որ այն գաղափարները, որոնցով տոգորված էին նազարբեկյանները, Արևմտյան Հայաստանում կյանքի կոչելը տվյալ ժամանակաշրջա-նում անհնարին էր: Տեղացուն հատուկ իրատեսությամբ զինված տեսաբանը գտնում էր, որ անհրաժեշտ էր նախ՝ գաղափարապես նախապատրաստել ժողովրդին, զինել հանուն ինքնապաշտպանության և ոչ թե հեղափոխութ-

---

սակայն որպես ռուսահպատակ ի վերջո հանձնվել է ռուսական իշխանություններին: Մասնակցել է Ռուսաստանում 1917թ. տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությանը:

688 «Արմենիա», թիվ 18, 1886:

689 «Արմենիա», թիվ 19, 1886:

յան, որը դեռ չէր հասունացել, և որի համար անհրաժեշտ նախապայմանները դեռևս բացակայում էին: Պատահական չէր, որ այս ըմբռնումներով էին Վանում գործում նրա աշակերտները Մ. Ավետիսյանի գլխավորությամբ, ովքեր տեղաբնիկներ էին և շատ լավ տիրապետում էին ստեղծված պայմաններին, հրաշալի ճանաչում էին թշնամի թուրքին, որը հաղթելու դեպքում ոչնչացնում էր միայն: Ահա սա էր Մ. Փորթուգալյանի կողմից անհապաղ հեղափոխության կողմնակիցներին մերժելու բուն պատճառը, որի արդյունքում էլ քիչ հետո՝ 1887 թ., ծնվեց Հնչակյան կուսակցությունը:

Հզուշանալով վաղաժամկետ և չկշռադատված քայլերից և պատասխանելով ընդդիմախոսներին՝ Մ. Փորթուգալյանը գտնում էր, որ հասարակությունը, ըստ իր համոզմունքների ու աշխարհընկալման բնույթի, նախ պիտի բաժանվի զանազան կուսակցությունների, ապա կուսակցություններ կազմակերպելուց հետո գործելու համար. «պիտի միանան ամէն հայրենասէր հայեր, իհարկէ յուրաքանչյուրը միանալով յուր յամոզման և վստահութեան համեմատ այդ կուսակցութիւններից մեկին հետ: Այս է միութեան բնական ընթացքը»[690]:

Մ. Փորթուգալյանը համոզված էր, որ միասնաբար գործելու անհրաժեշտության գաղափարին զուգընթաց հարկավոր էր ըմբռնել բուն երկրում գործելու անհրաժեշտությունն ու առաջնահերթությունը: Մ. Փորթուգալյանն իր կողմնակիցների հետ հիմնադրեց «Հայաստանի զաւակների միութիւն» կազմակերպությունը, որին նվիրված առաջնորդողում, զարգացնելով այս տեսակետները, գրում էր. «Մենք այն խոր համոզումը ունենք, թե Հայաստանի ժողովրդի յառաջադիմութիւնը, նորա մէջ արհեստներ ծաղկեցնելու, ուսում և գիտութիւն ծաւալելու և բարոյական զգացումներ ներշնչելու գործը տեղական ուժերով առաջ տանելու պետք է աշխատել..., իսկ այդպիսի գործի կառավարութիւնը Հայաստանէն դուրս կենտրոնացնելու ջանքերը չէն

[690] «Այմէնիա», թիվ 19, 1886:

կրնար սպասուած արդիւնքն յառաջ բերել»[691]: «Հայաստանի զաւակների միութեան» նպատակ էր հռչակվում օժանդակել Հայաստանի մտավորական, բարոյական ու նյութական զարգացմանը: Միության կանոնադրության մեջ ասվում էր, որ կազմվում է վարչություն իր տեսուչով, խորհրդականների ժողովով: Միությանը կարող էր մասնակցել անդամակցությամբ և նվիրատվությամբ 21 տարին լրացած ամեն ոք՝ վճարելով 5 ֆրանկ մուտքի համար և 20 ֆրանկ տարեկան տուրք[692]:

Ի տարբերություն Մ. Փորթուգալյանի՝ «Կոռանն» անզիջում էր և, խիստ տոնով պատասխանելով իր ընդդիմախոսներին, հայտարարում էր, որ անհնարին էր համարում հայրենիքի ազատության համար մղվելիք պայքարում հարուստների հետ նույն դրոշի տակ միավորվելը և ատելություն էր սերմանում նրանց նկատմամբ, որովհետև, նրա կարծիքով, վերջիններս, ապահովված լինելով նյութապես, իրենց փողի քսակների հետևից անկարող էին տեսնել որևէ այլ բան այս աշխարհում: «Կոռանը», ծաղրելով ընդդիմախոսներին և նրանց խորհուրդ տալով ընկերանալ բանկիրների հետ, միևնույն ժամանակ առաջին պլան էր մղում սոցիալական ու դասակարգային հենքի վրա միմյանցից սահմանազատվելու և նոր միայն հանուն ցանկալի ապագայի միանալու. «Մենք և մէր հետ բոլոր ազնիվ մարդկութիւնը այն պինդ համոզմունքն ունենք, որ բոլոր բուրժուաներն իրենց աւազակութեամբ, միայն հրեշային չարութիւններ են պատճառել անմեղ և գայլերի առաջ անպաշտպան մարդկութեանը»[693]:

Այս նոր սերունդը, որ ջանում էր հաշտեցնել ազգային հարցն ու սոցիալիզմի գաղափարաբանությունը, չէր կարող հանդուրժել իր ազգային ազատական աշխարհայեցողությամբ, իր չմշակված ու կցկտուր տնտեսական մոտեցումներով ներկայացող Մ. Փորթուգալ-

---

691 «Արմէնիա», թիվ 20, 1886:

692 Նույն տեղում:

693 «Արմէնիա», թիվ 15, 1886:

յանին, ով նոր սերնդի համար պարզապես պահպանողական է և նույնիսկ հետադեմ: «Արմենիա»-ի հայրն իր վարչական ինքնավարության պահանջով այլևս ժամկետանց էր նոր սերնդի առաջ քաշած անկախության ծրագրի համար: Դրա համար էլ նրան չհաջողվեց իր ու իր թերթի շուրջ համախմբել աշխարհի տարբեր երկրներում հայրենիքի ապագայով մտահոգ, նրա մասին գրող ու խոսող, նրա համար պայքարող բոլոր ուժերին: Ինչպես հայտնի է ազատագրական շարժումների պատմությունից, յուրաքանչյուր շարժման արշալույսին էլ լինում են տարակարծություններ, տեսակետների ու մոտեցումների բազմազանություն, սակայն դրանք ընթացքում աստիճանաբար հաղթահարվում են, հանուն ընդհանուր գործի հաղթանակի՝ տարբեր մոտեցումների հեղինակները փոխզիջումների են գնում, փնտրում-գտնում են լավագույն, արդյունավետ ճանապարհը: Սակայն նույնը չեղավ հայոց դեպքում: Տարակարծությունները ռազմավարական ու մարտավարական ուղիների շուրջ աստիճանաբար խորացան, և ոչ միայն մեր ազատագրական պայքարը չտվեց ցանկալի արդյունքը, այլև այդ փուլում հանգեցրեց ցավալի պարտության:

«Արմենիա»-ի շուրջ համախմբված ազատաբաղձ գործիչների շրջանում ևս աստիճանաբար ուրվագծվեցին մոտեցումների տարբեր ուղղություններ: Ոմանք առաջարկում էին գործելու միջոցների միջև տարբերություն չդնել՝ համարելով, որ բաղձալի ազատություն տանող ճանապարհին ընդունելի են բոլոր մեթոդներն ու ձևերը: Մյուսներն առաջարկում էին գործունեության չափավոր և խիստ զգուշավոր մեթոդներ: Հենց այս վերջին ուղեգծի կողմնակիցներն էլ, որոնք թեև շարունակում էին խոսել հայրենիքի ազատագրման «հեղափոխական» ուղու մասին, համախմբվում էին Մ. Փորթուգալյանի շուրջը: «Արմենիա»-ն բացառում էր անմիջապես, առանց լուրջ ու երկարատև նախապատրաստության բռնի միջոցների դիմելու նպատակահարմարությունև՝ կասկածի տակ դնելով դրա արդյունավետությունը: Նա հանդես էր գալիս երկարատև աշխատանք տանելու, ազգը կրթելու,

նրան հայրենասիրական ոգով դաստիարակելու, երկրում գիտակից, անձնազոհ ուժեր կուտակելուց հետո միայն վճռական քայլերի դիմելու գործելակերպի օգտին: Թերթի կարծիքով պետք չէր պատեհապաշտ լինել և շարժվել ոչ ինքնուրույն՝ հոսանքի բերանն ընկած փայտի կտորի նման: Այլ հարկավոր էր լինել կայուն համոզմունքների տեր, վստահ ապագայի ու ազատության հաղթանակի համար. «քամին որ կողմէ մի քիչ ուժով փչել, դէպի այն կող դարձող և անոր հոսանքի առջեւն ընկնող փոփոխամիտ Հայեր» պետք չեն, որովհետև նրանք ոչ միայն օգուտ չեն տալու ազատության սրբազան մաքառումին, այլև նույնիսկ վտանգավոր կարող էին լինել: Քանի որ այդպիսիք «կուզեն որ մեր հայրենիք առանց մեծ զոհողութեան, և այն ալ վաղուան օրը, ինքնավարութիւն ունենայ»[694]:

Հարկավոր է զգույշ լինել, հիշեցնում էր «Արմենիան», որ իզուր չվատնվեն մեր առանց այն էլ սուղ միջոցներն ու կենսական ուժերը: Որովհետև եթե նախկինում եղած պատերազմները թագավորներն են հրահրել, ապա սա հայ ժողովուրդն ինքն էր նախաձեռնել, «ինքն էր որ հրաման հանեց պատերազմելու», որ ապրի իբրև հայ: Հենց այս գաղափարով տոգորված ոտքի ելած ժողովրդի պայքարը հայ ազգային պատմության փառավոր էջերից մեկը դարձավ: Այս առումով վտանգավոր էին ոչ միայն անտարբերներն ու մատնիչ-դավաճանները, այլև հուսահատները, որոնց կարծիքով եթե անմիջապես հաղթանակ չի լինում, ուրեմն պարտությունն անխուսափելի էր դառնում: «Արմենիա»-ն չէր ընկրկում նման դրսևորումներից և «ժողովրդի յեղափոխական դաստիարակութիւնը առաջ տարած է և դարերէ ի վեր ստրկացած ամբոխին մէջ անձնապաշտութեան զգացումը արթնցուցած էր»[695]: Մի բան, որը դարեր շարունակ բացակայել էր հայերի մեջ, մի բան, որը դարձավ «Արմենիա-ի» խաղացած ամենաաչքի ընկնող դերակատարությունը:

---

[694] «Արմէնիա», թիվ 46, 1893:

[695] Յուսահատողներին, «Արմէնիա», թիվ 71, 1893:

«Արմենիա»-ի կարծիքով հասունացել էին ժամանակն ու պայմանները, որ ընդհանուր գործի համար յուրաքանչյուրն իր ներդրումն անելու պարտքի գիտակցությունն ունենար, համախմբվեր ու միասնաբար դուրս գար պայքարի. «Հայերը շատ սխալ կը լինին երբ առանձնացած խմբակներով տէրութեան դէմ ապստամբելու վտանգաւոր խաղերին կը ձեռնարկեն որոնք բնակապէս ապարդիւն կը մնան և իրենց ազգ չօգտուիր անկէ»[696]: Մի փոքր ավելի ուշ «Արմենիան» զգուշացնում էր, որ «առաջ վազողներ գահավէժ չվազեն և ոչ ալ անշարժութեան մէջ փնտրել ազգի փրկութիւնը»[697], հակառակ դեպքում կրկին ազատության համար պայքարը կգահավիժեին:

Մ. Փորթուգալյանի ու «Արմենիա»-ի ընդդիմախոսները հաճախ շեշտում էին, որ ազգային փրկության գործի համար մեծ դրամական միջոցներ էին անհրաժեշտ, և քանի որ այդ դրամը չկար, «գործ յառաջ չերթար»: Իհարկե, ոչ ոք չէր կարող ժխտել դրամի կարևոր դերակատարությունը, սակայն նախ և առաջ հարկավոր էր ազատության գաղափարը սերմանել ժողովրդի մեջ, քանի որ ազատատենչ, գիտակից մարդիկ ոչ միայն դրամ, այլև սեփական կյանքը չէին խնայի հանուն ամենօրյա ստորացումներից ու կեղեքումներից իրենց փրկության: Դրամ բառը, պարզաբանում էր Մ. Փորթուգալյանը, որ կողմից էլ կարդաս (դրամ-մարդ), անհրաժեշտություն է, միայն այն տարբերությամբ, որ «դրամը խօսք չհասկնար, մարդն է որ խօսք կը հասկնայ», ուստի նախ հարկավոր էր մարդուն դիմել. «Եթէ մարդ լինի, նա կը գոյացունէ դրամը և կծառայեցունէ իր նպատակի»[698]:

Ուղղակի հայ մարդը դեռևս այնքան զարգացած չէր, ազատության անհրաժեշտությունն ըմբռնելով հանդերձ՝ դեռևս դրա զոհասեղանին ազգովին մատաղվելու պատրաստակամությունը չուներ, թե չէ դրամական միջոցներ ուներ: Հաստատ ուներ, որովհետև ամենա-

---

[696] «Արմէնիա», թիվ 10, 1893:
[697] Պէտք է գործել, «Արմէնիա», թիվ 43, 1898:
[698] Դրա՞մ թէ մարդ, «Արմէնիա», թիվ 1, 1905:

պարզ դիտարկումները ցույց էին տալիս, որ թուրքական իշխանություններին աշարի, աղնամի, թեմեթյունի և տարբեր այլ հարկատեսակներով հիմնական վճարողը, նրա բանակն ու կառավարական համակարգը պահողը հայն էր: Ուստի հայն այնքան էլ աղքատ չէր, որքան ներկայանում էր, երբ խոսքն ազատագրական պայքարին դրամ զոհաբերելու մասին էր, եզրակացնում էր «Արմենիան»[699]: Այնպես որ հարկավոր էր լուրջ բացատրական աշխատանք տանել և դրամը կգտնվեր:

Հայ ժողովրդի միասնականությունը որոշ վերապահումով վտանգվեց նաև այն ժամանակ, երբ հայ իրականության մեջ ծնվեցին կուսակցությունները: Սակայն մեր ազգային շարժումների վրիպումները միայն կուսակցություններին վերագրելը, ինչ խոսք, ճիշտ չէր: Մեր «յեղափոխական գործին մէջ պատահած անհաջողութիւնների շատ փոքր մասը միայն,-գրածանագրում է «Արմենիան»,- կուսակցական սնափառութեան և երկպառակտման արդիւնք է»[700]: Չպետք է մոռանանք նաև, որ կուսակցությունների ծնունդը «ինքնին օգտակար ալ եղած են հայ ժողովրդին» մի քանի առումներով: Նախ՝ ժողովրդի մի մասը մինչ կուսակցությունների հանդես գալը «դէպի սխալը կերթար», իսկ դրանից հետո նրանք հետ կանգնեցին այդ ճանապարհից: Կուսակցական անկեղծ ոգին շահախնդիրների և մատնիչների ասպարեզը սահմանափակեց: Կուսակցությունները ստիպում, պարտադրում էին անընդհատական աշխատանք և չէին թողնում հուսալքվել, հիասթափվել սրբազան գործից: Վերջապես, կուսակցություններն իրենց պահվածքով և գործելակերպով հնարավորություն էին տալիս ժողովրդին ճիշտ պատկերացում կազմելու իրենց մասին և ընտրելու ու նրա հետևից գնալու, ով կշահեր ընդհանուրի վստահությունը, կարդարացներ նրա սպասելիքներն ու օգուտ կբերեր ընդհանուր մղումներին:

---

699 Նույն տեղում:

700 Կուսակցութիւնների հետեւանքը մեր մէջ, «Արմէնիա», թիվ 14, 1893:

Հայոց վերազարթոնքի ջատագով և հայրենի ժողովրդի ճակատագրով մտահոգ Մ. Փորթուգալյանը, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ այդ ամենի նկատմամբ և, անկասկած, իր ակտիվ մասնակցությունն ուներ և «ներսից» էր տեղյակ «սահմանադրական» շարժման ողջ խոհանոցին:

XIX դարի երկրորդ կեսին սկիզբ առած հայ ազատագրական շարժումները, Մ. Փորթուգալյանի կարծիքով, ունեցել են երեք շրջան: Այդ մոտեցումն իր ոչ այնքան հստակ բնորոշումներով հանդերձ՝ բավականին հասուն է և իրատեսական.

Ա. 1860-ականին սկսված՝ Սահմանադրական,

Բ. 1880-ական թթ. սկիզբ առած՝ Ինքնավարական,

Գ. 1890-ական թթ.՝ Հեղափոխական[701]:

Առաջին երկուսի և երրորդ կետերի միջև եղած տարբերությունն այն էր, որ եթե առաջինի և երկրորդի ժամանակ այդ շարժումներով հետաքրքրված էին հայ ժողովրդի բոլոր խավերն ու խմբերը, ապա «-Հեղափոխական» շարժումներն սկսվեցին ժողովրդի ստորին, «աելի խոնարհ դասերի մէջ» և աստիճանաբար իրենց մեջ առան նաև ունևոր խավերին, քանի որ Թուրքիայում ճնշվում ու հալածվում էին բոլոր հայերը: Արձանագրենք, որ հեղափոխական, ազատագրական պայքարի վերելքին մեծապես նպաստեց մամուլը, որի մեջ իր առանձնահատուկ տեղն ու դերակատարություն», անկասկած, ունի «Արմենիան»:

Մ. Փորթուգալյանն «Արմենիա»-ում երբեմն անդրադարձել է նաև ազգային հարցին[702]: Թերթի էջերում մշտապես հրապարակվում էին բանավիճային հոդվածներ և դիտարկումներ, որոնցում խորությամբ

---

[701] Յետախաղաց շարժումը, «Արմէնիա», թիվ 25, 1893:

[702] Ազգային հարցին «Արմէնիա» թերթի մոտեցումների մասին հոդված է հեղինակել հայրենաբնակ պատմաբան Ա. Կարապետյանը, որն իր դրական կողմերով հանդերձ՝ այնքան էլ խորությամբ չի լուսաբանել խնդիրը: Տե՛ս Կարապետյան Ա., Ազգային խնդիրների ուրծարծումը «Արմէնիա-ի» էջերում (XX դ. սկիզբ), ԼՀԳ, թիվ 3, 2014, էջ 101-107:

լոաաբանվում էին հայ ժողովրդի ապագային վերաբերող արդիական հիմնահարցեր: Նրա կարծիքով Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովուրդները բաժանվում էին երկու հիմնական խմբի՝ ա-ռարող և յուրացնող: Այդ բաժանման հիմքում տեսնելով զարգացման մակարդակն ու կրոնի ազդու դերակատարությունը՝ Մ. Փորթուգալ-յանը միշտ հիշեցնում ու զգուշացնում էր հայությանը, որ ավելի շատ զգուշանան հատկապես միայն սպառողի հոգեբանությամբ գոյատ-ևող ցեղերից: Թուրքերը, գրում էր Փորթուգալյանը, եկել տիրացել են մեր հող ու ջրին, մեր «Հայրենիքն անուանում են իրենց վաթանը», իսկ մնացած ժողովուրդներին վերաբերվում են որպես ռայայի: Միայն այն տարբերությամբ, որ մահմեդական ռայաներն ունեին ո-րոշ արտոնություններ, օրինակ՝ զենք կրելու իրավունք: Քրիստոնյա-ները որակվում էին գյավուր ռայաներ կամ ստրուկներ, որոնք զրկված էին որևէ իրավունքից, իսկ նրանց միակ արտոնությունն էր օրինիբուն աշխատելը, ստեղծելը, որ վաթանատերերը վայելեին:

Ավելի ուշ՝ XX դարի սկզբներին, հայ-թաթարական բախումների առիթով Մ. Փորթուգալյանը պարզաբանում էր, որ թուրքական իշ-խանությունների հայաջինջ քաղաքականությունը թելադրված էր ազ-գային ու կրոնական գործոններով, որ դրանք «Սուլթան Համիտի ծրագրած համիսլամական շարժման խաղերն են», որ հայերն այդ քաղաքականության իրականացման ճանապարհին սուր ոսկորի նման խրվել-մնացել են նրանց կոկորդում և խանգարում էին այն ի-րագործել: «Մեր պայքարը,- գրում էր Փորթուգալյանը,- մահմետա-կան կամ նոյն իսկ թիւրք ժողովրդին դէմ չէ», այլ թուրքական իշխա-նությունների, որը մոլորեցրել էր հասարակ ժողովրդին և տրամադ-րել հայերի դեմ[703]: «Հետևապես, չպետք է սին հույսեր ու պատրանք-ներ ունենալ, թե այդ քաղաքականությունը կարող է փոխվել»[704]: Այն-

---

703 Վարագոյրը բացուած է, «Արմէնիա», թիվ 3, 1905:

704 Կարապետյան Ա., Ազգային խնդիրների արծարծումը «Արմէնիա»-ի» էջերում (XX դ. սկիզբ), ԼՀԳ, թիվ 3, 2014, էջ 105:

պես որ Կ. Պոլսում էր ծրագրվում, ֆինանսավորվում ու գործի դրվում կովկասյան թաթարների պահվածքը: Արվում էր ամեն ինչ՝ Կովկասը ռուսների ձեռքից խլելու համար, իսկ հայերը միշտ խանգարում, պատնեշում էին այդ ծրագրի իրականացմանը: Այստեղից էլ այն մարդատյաց մակարդակի թշնամանքը, որ արդեն դարերի պատմություն ունի:

Լայնախոհ խմբագիրն առանձնակի տեղ էր հատկացնում քրդերին՝ բնորոշելով նրանց «կիսավայրենի թալանչիներ»՝ «Քիւրդը մէկ բան գիտէ ձի, թալան, ավազակութիւն»: Այդ ժողովուրդը, մշտապես տեղաշարժվելով ու նորանոր արոտավայրեր փնտրելով, մորեխների պարսի նման իր ճանապարհին ոչնչացնում էր ամեն ինչ՝ կառույցներ, ցանքատարածություններ, բարոյականություն և նմանատիպ այլ բարձր արժեքներ, որոնք հասու չէին նրան: Առավել վտանգավոր էին,- Մ. Փորթուգալյանի կարծիքով, «Համիդիէ գունդերը»: Դրանք քրդական զինված խմբեր էին, որոնք «պաշտպանում էին» կայսրությունը չգիտես ռմից ու ինչպես, և առաջացել էր մի իրավիճակ, որ այդ համիդիեները գոյատևում ու զբաղվում էին քրիստոնյաներին թալանելով ու անարգելով նրանց սրբությունները: «Կ՞ոնան Հայն ու քիւրտը բարեկամ ըլլալ»,- հարցնում է Մ. Փորթուգալյանը, և ինքն էլ պատասխանում, որ «անոնց մակարդակը կը յուշէ թե վաղաժամ է ատոր վրա մտածելը»[705] և առաջարկում առերևույթ սիրաշահել, սակայն միշտ նրանցից պաշտպանվելու մասին չմոռանալ:

«Արմենիա»-ն երբեմն անդրադարձել է և ներկայացրել իր մոտեցումները հայ իրականության մեջ ոչ հաճախ արծարծվող, սակայն իր կարևորությամբ առանձնահատուկ մի հարցի ևս: Դա եզդի ժողովրդի և հայերի հետ նրանց փոխհարաբերությունների թեման է: Մեծ տարբերություն չտեսնելով քրդերի ու եզդիների միջև՝ Մ. Փորթուգալյանը տեղեկացնում էր, որ եզդիները նույնքան քաջ են, ցանկացած պահի

---

[705] Հայն ու քիւրտը, «Արմէնիա», թիվ 25, 1889:

պատրաստ ինքնապաշտպանվելու, ինչպես քրդերը: Բայց ամենազարմանալին այն էր, որ բոլորն էլ հավասար են ծնվում, գրում էր Մ. Փորթուգալյանը, սակայն արդյունքը բոլորովին տարբեր էր ստացվում.[1] «Ո՞վ կարող է համարձակիլ ասել թէ Հայն տկար, վախկոտ կը ծնի. իսկ Քուրդն ու Եզտին պնդակազմ և քաջ, հետեւաբար ստրկութիւնը մեզ համար անխուսափելի ճակատագիր դարձած է»[706]:

Պատասխանը մեկն է.[1] «ստրկամիտ ծնողք կը պատրաստեն շղթաներ ու օղակներ» և մի երկար շղթայի ձևով տարեցտարի հագցնում են մանկան վզին «զգոյշ և երկչոտ, կեանքը պահպանելու համար իչոք անկեանք ապրելու կը դատապարտէն»[707]: Իսկ եզդիները մանկությունից կիսամերկ, կիսաքաղց ու բոկոտն, սակայն միշտ պատրաստ կռվով ու պայքարով իրենց ինչքին տեր կանգնելու, պաշտպանելու հոգեվիճակով են մեծանում, դրա համար էլ ամբողջ կյանքի ընթացքում տեր են կանգնում իրենց անձին ու ունեցվածքին: Մ. Փորթուգալյանը խոստովանում էր, որ զարգացման մակարդակներով եզդիներն անհամեմատ հետ են մնացել հայերից և «ամօթ էր զգում «Հայն ու Եզտին» վերնագրով բաղդատական յօդուած գրելուց», սակայն իրողությունը հուշում էր մի կարևոր հանգամանք, որ «-Թուրքաց Հայաստանի Եզտին քաջ է և Հայը վախկոտ այսօր»[708]: Դեռ լավ էր ընդհանրապես, որ հայն ու եզդին միշտ եղբոր նման են վերաբերվել միմյանց, հատկապես դա ակնառու ընդգծված էր Վասպուրական աշխարհում, որտեղ եզդի ցեղապետերը նույնիսկ Ամենայն Հայոց Հայրապետ՝ «Ամենուն սիրելի Հայրիկին շնորհաւորութեան ուխտի կերթային Էջմիածին», մասնակցում էին հայերի հարսանիքներին, տոնախմբություններին և այլ միջոցառումներին: Թուրքը, որ ամեն տեղ իբրև հայհոյանք էր օգտագործում եզդի բառը, տեսնելով այդ «քաջութիւն ու վիճակ, կակնածէ» նրանից: Իսկ հայերը տես-

---

706 Հայն ու Եզտին, «Արմենիա», թիվ 27, 1893:

707 Նույն տեղում:

708 Նույն տեղում:

նում էին, որ թուրքերը ստիպելով փորձում էին մահմեդականացնել եզդիներին, բայց ոչինչ չէին ձեռնարկում, այլ սպասում էին, որ նա էլ միանա թուրքերին ու քրդերին, և հայության ոչնչացումը կատարյալ լինի: Ուրեմն հայերին մնում էր ավելի սիրաշահել, ջերմ հարաբերություններ պահպանել եզդիների հետ, որ առիթը ներկայանալու ժամանակ տխուր ավարտ չլինի:

«Արմենիա»-ում թեև շատ քիչ, սակայն անդրադարձներ են եղել նաև հայ կանանց ու նրանց խնդիրներին: Թերթի հրապարակումներից մեկում, ներկայացնելով հայ կնոջ իրավազուրկ վիճակը, Ֆօքշանից «Վ. Մ.» թղթակիցը գրում էր՝, որ հայ կինը պատմության ընթացքում մեծ մասամբ աննկատ, ստվերում մնալով, իսկ երբեմն էլ քաջաբար հրապարակում կանգնելով, պայքարել է թշնամու դեմ կամ ամեն ինչով նպաստել՝ տղամարդկանց հաղթանակները կատարյալ դարձնելուն: Կինն է եղել հայ օջախի պահապանն ու ջերմացնողը, և ազատագրական պայքարի ընթացքում ևս նա կարևոր դերակատարություն ուներ. «Մեր ապագայն ձեզմէ կախում ունի, հայ կիներ,- դիմելով նրանց՝ գրում էր հոդվածագիրը,- ձեր ափին մէջն է ազգին սիրտն ու ճակատագիրը»[709]: Հիրավի, հայ կինը, երբեմն նույնիսկ մոռանալով սեռային տարբերությունը, ինքն էր զենք վերցրել, ինքն էր մաքառել անարգ ոսոխի դեմ, ինչը մեծ պատիվ էր բերել ու հարգանք ներշնչել նրա հանդեպ: Հոդվածագիրն ազգային հեղափոխության շրջանում ևս մեծ առաքելություն էր վերապահում հայ կնոջը՝ հորդորելով նրան, հայ տղամարդկանց համար դառնալ «թելադրիչներ, ունեցած ժամերէն մաս հանէլ ու հայրենասիրական հուրն հրահրել, մտածումներէն մաս մ'ալ ազգին և հայրենեաց նուիրել և դա սրտի ու խղճի պարտք մը նկատել»[710]: «Արմենիա»-ն հայ կնոջ համար նախատեսում էր նաև գորովալից մոր նման փայփայել, իր ծոցում ջերմացնել հեղափոխության գործի նվիրյալներին, կերակրել, սատարել նրանց, որ վերջին-

---

[709] Կանանց դերը ազգային վերաշինութեան Ս. գործին մէջ, «Արմէնիա», թիվ 75, 1893:
[710] Նույն տեղում:

ներս թևեր առնեն, ոգևորվեն ու անվախ արծվի նման խոյանան թշնամու վրա, ծվատեն նրան: Հայ կինը բնատուր խելքին զուգընթաց պետք է նաև որոշ գրագիտություն ունենար, պատկերացում կազմեր տեղի ունեցող դարակազմիկ երևույթների մասին, որ կարողանար լավ պատկերացնել հայոց ազատագրական շարժման իմաստն ու նպատակները և, իհարկե, «ճանաչէ իր դերը ազգային վերաշինութեան Ս. Գործին մէջ»[711]:

Հետաքրքիր են «Արմենիա»-ի ու նրա խմբագրի մոտեցումները հայության մեջ բավականին տարածված գաղթելու արատավոր սովորույթին. «Գաղթականութիւնը ոչ միայն ինքնասպանութիւն է հայու համար, այլ և ազգասպանութիւն: Հայաստան առանց Հայու, Հայն առանց Հայաստանի կորած են»[712],- գրում էր թերթը, այնուհետև բացատրում, որ թուրքական իշխանություններն ամեն տեսակ բռնարարքներով ու ճնշումներով, ինչպես նաև հայերին ինքնապաշտպանության բոլոր միջոցներից զրկելով ու «զինեալ վայրենի Քրդին յանձնելով», «թուրքաց պէս կեղեքելու, սպաննելու և կողոպտելու»[713] հեռանկարով դեպի Թուրքիա ձգտող չերքեզներին գրկաբաց ընդունելով, նպաստում էին, ստիպում հայերին՝ թողնել հայրենի եզերքներն ու գաղթել օտար երկրներ: Հայ ժողովուրդը, որին դարեր շարունակ բնորոշ էին եղել հողը սիրելու հատկությունը, աշխատասիրությունը, չափավորությունն ու հավատարմությունը, երբեք կամավոր չի լքել իր հայրենի տունն ու ընտանիքին: Անողորմ հալածանքն ու կյանքը կորցնելու իրական վտանգն էին, որ նրան դարձրել էին տնավեր ու թափառական: «Հայն իւր գլուխն ազատելու համար թողուց երկիրը և փախաւ», իսկ քրդերն ու թուրքերը հայոց լքյալ հողերին տիրանալով, «ամայութիւնը կրկնապատկած են»[714]: Երբեք քուրդն ու չերքեզը,-

---

711 Նույն տեղում:

712 Գաղթականութեան վտանգներ, «Արմենիա», թիվ 22, 1893:

713 Գաղթականութեան վտանգներ, «Արմենիա», թիվ 22, 1893:

714 Նույն տեղում:

թուրքական կողմին հիշեցնում էր Մ. Փորթուգալյանը,- որ միայն թալանով ու կողոպտելով կարող էին գոյատևել, իրար միս էին ուտում, մշտական հակասությունների մեջ էին, հայի չափ պետությանը հավատարիմ և օգտակար չէին կարող լինել, «անոնց քաջութիւն անզէն, անպաշտպան Հայու վրայէն անդին չանցնիր»: «Օտար սերմ Հայաստանի հողին վրայ արմատ բռնած չէ»[715],- գրում էր թերթը, սակայն պատմության ընթացքն ու ժամանակը բոլորովին այլ բան ցույց տվեցին, որ նույնիսկ ամենաանորակ սերմը բերրի հողում կարող է աճել, պտուղ տալ:

Ի վերջո այս տեսակ բանավեճերի, հակասությունների ու գաղափարական տարակարծությունների արդյունքում 90-ական թթ. վերջերին Մ. Փորթուգալյանը գրեթե մենակ մնաց իր «Արմենիա»-ի ու փոքրաթիվ համակիրների հետ:

Անդրադառնալով հայ ազատագրական շարժման որոշ գործողություններին ու դրանց հաջորդած 1894-1896 թթ. թուրքական բարբարությունություններին, որոնց զոհ գնացին ավելի քան 300 հազար անմեղ հայեր, տնտեսապես ունեզրկվեցին հազարավորները, որոնք ստիպված բռնեցին գաղթի ճանապարհը, արյունաքամ ու անօգնական մնացին շատ-շատերը, Մ. Փորթուգալյանը յուրակերպ ամփոփում է; կատարում և արձանագրում. այո՛, եղան շատ զոհեր, սակայն աշխարհի ոչ մի ժողովուրդ առանց զոհերի ազատություն ձեռք չի բերել, այն միշտ էլ նվաճվել է ուժով և պայքարով: Այդ պայքարի ընթացքում լինում են նաև զոհեր: Սակայն թե՛ Մ. Փորթուգալյանը, թե՛ ժամանակի մյուս գործիչներն ու կուսակցական տեսաբանները, խոսքերը մեկ արած, հայ ժողովրդից շարունակաբար կարծես զոհեր էին պահանջում՝ ամեն անգամ չբավարարվելով դրանց թվով: Նրանք եվրոպական համալսարաններում էին ուսանել, տեղյակ էին եվրոպական ժողովուրդների պատմությանը, գիտեին նաև, որ նրանք

---

[715] Նույն տեղում:

էլ էին ազատությունն ու ժողովրդավարությունը զենքով նվաճել: Սակայն այդ գաղափարախոսներին պակասում էր շատ կարևոր մի հանգամանքի գիտակցում, որ մեր դեպքում թշնամին, տիրողն ու բռնակալը վաղմիջնադարյան մակարդակում գտնվող, միայն թալանով ու ասպատակությամբ ապրած, ուրիշների հայրենիքն ու ունեցվածքը մշտապես յուրացնող թուրքն էր:

Լավ իմանալով, որ բացարձակ հանգիստ միայն «գերեզմանին մէջ կրնար լինել», որ «ապագան ներկայի ծնունդն է», որ «թիւրք կառավարութեան դէմ այս կերպ կռիւ շարունակելը՝ հայ ազգը բոլորովին ջլատելով բնաջինջ դարձնելու պէս բան մ' էր»[716], Մ. Փորթուգալյանը գիտակցում էր նաև, որ այլ ճանապարհ, փաստորեն, հայ մարդը չուներ, պետք է պայքարեր: Բավական էր, ինչքան հույսն օտարի վրա դրեց, քանի որ «օտարի գթութեամբը չէ որ մենք կըրնանք մեր ազատութիւն ձեռք բերել»[717]: «Արմենիայի» շրջահայաց խմբագիրը բացատրում էր, որ պայքարը շարունակել, միանշանակ անհրաժեշտ էր, քանի որ վաղուց արդեն հստակ էր դարձել, որ թուրքական իշխանությունները որոշել են Հայկական հարցի իրավատիրոջ ոչնչացումով լուծել այն, անկախ նրանից՝ կպայքարի՞ հայը, թե՞ լուռ ու մունջ և անտրտունջ կանհետանա պատմության թատերաբեմից: Ուրեմն, ավելի լավ էր պատվով մեռնել և, բացի այդ, պայքարողը կարող էր հաղթելու հույս ունենալ և ոչ թե ոչինչ չձեռնարկողը: Հստակ էր այլևս, որ հայը հասկացել էր. «յեղափոխական ոգին Հայերի մէջ տարածելու ամենէն զօրաւոր գործիքն ինք եղաւ, թիւրքը, իսկ հալածումը տարածում է»[718]:

Մ. Փորթուգալյանը նաև բացատրում, զգուշացնում էր, որ թուրքերն իրենք էին շատ դեպքերում գրգռում, ոտքի հանում հայերին, որ հետո ծերբակալեին, ոչնչացնեին և ուժազրկեին հայերին. «Բ. Դուռը

---

716 Կռի՞ւ թե հանդարտութիւն, «Արմէնիա», թիվ 12, 1897:

717 Նույն տեղում:

718 «Արմէնիա», թիվ 37, 1898:

ամեն ջանքեր կընէ Հայ ժողովուրդը թիւրքին դէմ գրգռելու համար»[719], «թիւրք ոստիկանութիւնն ինք կը գրգռէր հայ յեղափոխականներ, որն յետոյ առիթ կուտար Հայեր ի զուր ձերբակալելու, հայ երիտասարդութիւնը բանտերի մէջ մաշեցունելով ջլատելու»[720]:

Ոչ պակաս կարևոր էր, որ դարերով ճնշված հայ մարդն իր ազատության համար որդեգրել էր հեղափոխության միջոցով ազատագրվելու ուղին, և դա սխալ չէր: Սխալը «յեղափոխական գործունեութեան եղանակն էր»[721]: Հեղափոխություն իրականացնելու համար Մ. Փորթուգալյանը միշտ շեշտում էր նախ՝ դրա գաղափարի տարածման անհրաժեշտությունը, ապա՝ երկարատև լուրջ նախապատրաստական աշխատանքի անհրաժեշտությունը, այնուհետև՝ նպաստավոր պայմանների առկայությունը, քանի որ հայերը միայնակ անզոր էին հաղթել իշխանություններին, որոնք ունեին հզոր բանակ, լուրջ նյութական ռեսուրսներ և քրդերի ու չերքեզների նման տհաս դաշնակիցներ, որոնք, միայն թալանի ու կողոպուտի գաղափարից ոգևորված, ընդունակ էին ամեն տեսակ անմարդկային արարքների: Անհրաժեշտ էր նաև կուռ քաղաքական կառույցի, խելացի ու պատրաստված, ոչնչից չերկնչող ու հավատավոր մարդկանց, նվիրյալների մեկտեղված խումբ, որն ընդունակ էր առաջնորդելու համազգային պայքարը և հասցնելու այն ցանկալի ավարտի: «Այնինչ, գրում էր Մ. Փորթուգալյանը,- մեր մէջ յեղափոխական կազմակերպութիւն չկայ, իսկ եղածները լոկ ցուցարարական կազմակերպութիւններ են»[722], իսկ վերջի տարիների կորուստները պետք չէ հեղափոխությանը վերագրել, որովհետև դա հեղափոխություն չէր, այլ «լոկ ցոյցեր և յեղափո-

---

[719] Բ. Դրան վարմունքը, «Արմէնիա», թիվ 58, 1898:
[720] Կռի՞ւ թե դադար, «Արմէնիա», թիվ 10, 1897:
[721] Պատճառները, «Արմէնիա», թիվ 74, 1898:
[722] Յեղափոխութիւն եւ ցոյցեր, «Արմէնիա», թիվ 56, 1898:

խոսթիւն ընելու ալ դեռ չէր պատրաստուած և դեռ չէ պատրաստուած մեր ժողովուրդ»[723]:

«Ազատութեան շունչը միայն կրնայ կեանք տալ մեզ,- համոզված հայտարարում էր Մ. Փորթուգալյանը,- այժմ հարկավոր է, որ ազատութեան սուրբ գործին վրայ մտածենք միշտ, բայց չպոռանք միշտ, փոխենք մեր կռուելու կերպերը մեր կացութեան, հանգամանքների պահանջներին և մեր ուժի համեմատ»[724]: Անխոհեմ, հախուռն, անկարգ, շատ դեպքերում ցուցադրական, որպես առաջ հաղթանակի դափնիներ նվաճելու ու փառաբանվելու, անկազմակերպ ու միմյանցից տարանջատ գործելակերպի պատճառով ազատության հսկայ մղվող գոտեմարտում եղան նաև պարտություններ, «թշուառութիւնից մի աւելի սոսկալի թշուառութեան մէջ ընկնել», սակայն հայության ներսում անթեղված գոյատևելու ու պայքարելու հզոր ուժը ստիպեց, որ նա իր «օրինակելի տոկունութեամբ ամաչեցնէ բոլոր թշնամիներին, թուլամորթներին ու վատոգիներին»[725]:

Հարկավոր էր, որ հայ ժողովուրդը ստեղծված վիճակին համակերպվելու քաջությունն ունենար, չհուսահատվեր, ավելի համախմբվեր, բռունցքվեր և աշխատեր, ներքին ուժերն ավելացնելով՝ հզորանար: Մ. Փորթուգալյանի կարծիքով անհաջողությունների ու պարտությունների հիմնական պատճառն այն էր, որ «ներքին ուժերն արհամարհեցինք և արտաքին ոյժերէ շլացած շարժեցանք»[726]՝ մոռանալով, որ արտաքին ուժերը սոսկ շլացնում էին, խաբուսիկ էին, քան թե զորացնող: Իսկ ներքին ուժերը կարող էին հզոր լինել հզոր նյութական միջոցների առկայության դեպքում միայն: Բայց հայ հարուստնե-

---

723 Նույն տեղում: Իհարկե, Փորթուգալյանն այս դեպքում ծայրահեղություն է դրսևորում, սակայն համակարծիք ենք, որ շատ դեպքերում այդ պայքարը հախուռն էր, հաճախ հաշվի չէին առնվում բոլոր հնարավորություններն ու հետևանքները, դրանցից ժողովուրդը դժվարին կացության մեջ էր հայտնվում:

724 Երկու ծայրեր, «Արմէնիա», թիվ 25, 1897:

725 Պատճառները, «Արմէնիա», թիվ 74, 1898:

726 Երկու ծայրեր, «Արմէնիա», թիվ 25, 1897:

որը, «Արմենիա»-ի տեսակետով, զլանում էին փող նվիրաբերել՝ սրբազան գործի հաջողությունն ապահովելու համար, մոռանալով, որ «սխալ խնայողութիւն կատարելով կը վնասեն ինքզինք, քանզի սխալ խնայուած կարծուած դրամը կորսուած դրամ կը դառնայ»[727]: Դա նման էր այն իրավիճակին, երբ մարդը, խնայելով դրամ ծախսել ուտելիքի ու բնակարանի ջերմությունն ապահովելու համար, հետագայում ստիպված կրկնակի ու եռակի է ծախսում բժիշկների ու բուժման համար: Հայ հարուստներն ու ընդհանրապես ունևորները հաճախ զլանում էին փոքրիկ նվիրատվություններ կատարել ազատարար գործի համար, իսկ արդյունքում թուրքը խլում էր նրանցից վերջին կոպեկն ու նաև՝ կյանքը. «Վերջին տարիների կոտորածների միջոցին Քիւրտերն ու Թիւրքերը Հայերէն կողոպտելու համար բաւական մեծ գումարներ գտան, որոնց քանակը մի քանի միլիոնների կը հասնի եւ որոնց 1/10ը չէր հաճեր Հայ ազգը ինքնաբերաբար զոհել իր ազատութեան գործին համար»[728]:

Հայ ժողովուրդն ուներ խնդիր, այն էլ արդար խնդիր, որ դրված էր աշխարհի ու քաղաքակիրթ մարդկության առջև, խնդիր, որը եթե նախկինում ավելի շատ սոցիալ-տնտեսական բնույթ ուներ, ապա աստիճանաբար դառնում էր ժողովրդի լինել-չլինելու, գոյատևելու հարց, սակայն չունեինք այն ուժն ու տոկունությունը, որ կարողանայինք լուծել կամ ստիպել, որ լուծում տրվեր այդ խնդրին: Հույսներս շատերի օգնության վրա դրեցինք, բայց ամեն անգամ այդ հույսերն ի դերև ելան, ձեռնունայն մնացինք, այնպես որ հարկավոր էր՝ նախկին փորձն ու կորուստները հաշվի առնեինք ու այլևս հույսներս մեզ հետ կապեինք. «մեր դատն է մենք պէտք է առաջ քշենք, մենք այն պիտի պաշտպանենք մեր կյանքի գնով»[729],- եզրակացնում էր «Արմենիան»:

---

[727] Միւալ խնայողութիւն, «Արմենիա», թիվ 33, 1897:
[728] Ու՞ր պէտք է փնտռել ոյժը, «Արմենիա», թիվ 28, 1897:
[729] Մեր դատը, «Արմենիա», թիվ 28, 1899:

Մ. Փորթուգալյանի տեսակետները զարգացնում էր նաև թերթի տեսաբան «Մէն-Սէ»-ն, որի կարծիքով դառը փորձություններից հետո հայ ժողովուրդը չէր կորցրել հույսը և այն անձնվեր հերոսների բազմաթիվ ոգևորիչ ու սփոփիչ դեմքերը, որոնք կային մարդկանց հիշողության մեջ, դարձել էին «լուսատու և միանգամայն յուսատու աստղեր», որոնք ապագայում ևս կառաջնորդեին ժողովրդին սրբազան պայքարի: Պարզապես հարկավոր էր, որ այլևս ժողովուրդը միամիտ ու կույր ոգևորությամբ չհետևեր ամեն պատահածի, ով իրեն ազատարար կհռչակեր, որ հասկանար վերջապես, զանազաներ ժողովրդի նվիրյալին պատեհապաշտից: Դատապարտեր այն ոչ ճիշտ մեկնությունները, որոնք մեծ ու անդառնալի վնասներ էին հասցրել ժողովրդին. «Հնչակը» կոտորածները «շեշտակի յեղափոխութիւն» կանուանէ, իսկ «Դրօշակ» ժողովուրդի մը պատրաստութիւն և զինում մի միայն կռուի մէջ կը տեսնէ և ոչ թէ պատրաստութեան մէջ»[730]: Ըստ էության, այդ ժամանակ Հայաստանում կռիվ, չկար, այլ կային կոտորած, սով, արհավիրք, համաճարակ, հալածանք, ամայություն, ավեր: Եվ այն պնդումը, թե ժողովրդին զինավարժելու համար էին եղել «հարիւր հազարների կորուստները», երկրի ամայացումը,ու նրա երևակայական կռվելու ընդունակությունը վառ պահելու նպատակով էին եղել այդքան զոհողություններ, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Որովհետև ապագայում այդ կռվողներն ու ժողովրդին զինողները շատ արագ մոռացան ամեն ինչ, լքեցին հասարակ ժողովրդին, սիրախաղեր սկսեցին թշնամու հետ, հետո էլ հասցրին ճողոպրել իրենց բարեկամ-դաշնակիցների ճիրաններից: «Մեն-Սէն» հրապարակային հարց էր բարձրացնում. «այդ բարձր պոռացող ու պարծեցողները Հայաստանի ժողովրդին պատրաստութեան գործում արի՞ն և գործադրեցի՞ն կռուից առաջ ինչ որ իրանց պարտքն էր...»[731]:

---

[730] Մեր դիրքերը, «Արմենիա», թիվ 44, 1899:
[731] Մեր դիրքերը, «Արմենիա», թիվ 48, 1900:

Պատասխանելով ընդդիմախոսների այն պնդումներին, թե «Արմենիա»-ն ու նրա խմբագիրն արդեն ժամկետանց են և պետք է իրենց տեղը զիջեն նոր ուժերին, որ թերթն իբր փոխել է իր դավանած ուղղությունը, որ «առաջ յեղափոխութիւն կը քարոզէր, արդէն արգելք կը լինի եղեր Հայաստանի մէջ յեղափոխական շարժման»[732], որպեսզի հույ ազգային-ազատագրական շարժումը զարգանա և առաջ ընթանա, իր ողջ կյանքն այդ գործին նվիրաբերած խմբագիրը պարզաբանում էր. նման անհեթեթ պնդումներ էին անում մարդիկ, ովքեր երբեք թերթ չեն կարդում, հատկապես «Արմենիա», և իրենց տեղեկատվության միակ աղբյուրը հակառակորդների տարածած սխալ տեղեկություն-ներն էին, որոնք պնդում էին, թե մեր թերթն առաջ հեղափոխական էր, հետո պահպանողական էր դարձել: Ի դեպ, հակառակորդներն այնքան էլ հեռու չէին ճշմարտությունից. իսկապես «Արմենիա»-ն ու նրա խմբագիրը 90-ականների կեսերից զգալի նահանջել էին նախկին հեղափոխական դիրքերից ու կամ տեղապտույտ էին տալիս կամ վերատպագրում էին նախորդ տարիների ծրագրային, հեղափոխական շնչով գրված հոդվածները, իսկ նոր բան՝ այլևս գրեթե չի հանդիպում: Որպեսզի ընդդիմախոսներին պատասխանն ամբողջական լիներ, «Արմենիան» վերատպագրում էր Մ. Ավետիսյան–Թերլեմեզյանի՝ տարիներ առաջ գրած ու թերթում տպագրված հոդվածը[733], որում մասնավորապես ասվում էր. «պէտք է ներքին ոյժ գոյացնել ազգին մէջ յեղափոխութեան համար: Եթե մենք անպատրաստ մի շարժում կատարենք, ուրիշ բան ըրած չենք լինիր եթէ ոչ մեզ անօգուտ մի ջարդ առաջ բերել և Ռուսիաի շատ ցանկացած կոչ տալու Հայաստան պատառը մեր արյունով կակղեցունել»[734]: Այնուհետև Մ. Փորթուգալյանը նշում էր, որ ժամանակին «Արմենիա»-ն

---

[732] Արմէնիաի ուղղութիւնը արդեօ՞ք փոխուած է, «Արմէնիա», թիվ 43, 1906:

[733] Խոսքն Ալեքսանդրիայից ուղարկված և 1893 թ. հունվարի 25-ի համարում թերթում տպագրված հոդվածի մասին է:

[734] Արմէնիաի ուղղութիւնը արդեօ՞ք փոխուած է, «Արմէնիա», թիվ 43, 1906:

պայքարում էր դիվանագիտական օրորներ կարդացողների, իսկ հետագայում էլ՝ մյուս ծայրահեղության՝ անմիջապես հեղափոխություն կատարողների դեմ: Դրա համար էլ պահպանողականի պիտակավորում վաստակեցինք: Մարդիկ կամ չեն ուզում, կամ չեն կարողանում հասկանալ, պարզաբանում էր Մ. Փորթուգալյանը, որ «եթէ Հայաստանցին չը շարժիր, պատճառն այս է որ տակաւին չկրնար», և անժամանակ ցույցերն ու գործողությունները միայն սաստկացնում էին կառավարության հայակոչ մոլուցքը, ինչն էլ դատապարտում էր «Արմենիա»-ն և դրանով դառնում պահպանողական[735]:

Ընդգծենք, որ «Արմենիա»-ն այն եզակի պարբերականներից էր, որն առանց վարանելու քննադատում էր նույնիսկ ամենամտերիմ գործիչներին, եթե նկատում էր նրանց կողմից հայրենիքի շահերի դեմ որևէ արտահայտություն և հակառակը՝ ջատագովում էր նույնիսկ իր հակառակորդին, եթե նրա պահվածքն ու գործը նպաստում էին իր հայրենիքի շահերին: Թերթն ու նրա տառապյալ խմբագիրը հնչակյան-դաշնակցական ուռա-հայրենասիրական կեցվածքի հետնախորքի (ֆոնի – Ս. Ս.) վրա, իհարկե, «պահպանողական» պիտի որակվեին: Չէ որ նրանք այնքան էլ լավ չէին տիրապետում եվրոպական բազմաբնույթ -իզմերին, տուրք չէին տալիս հատկապես նորաձև դարձած սոցիալիզմի գաղափարախոսությանը, վարդագույն երազներով ու տղայական հատուկենտ ցուցադրական արարքներով չէին ոգևորում ուղնուծուծով զգացմունքային էություն ունեցող հայ ժողովրդին: Այլ լավ ճանաչելով երկիրն ու թշնամուն, ով հաղթելու դեպքում ոչնչացնում էր միայն, տեղյակ լինելով նրա դարդ ու ցավին ու իրավազուրկ վիճակին, խոհեմության, զգուշության կոչ էին անում:

Անաչառության սկզբունքից ելնելով՝ անհրաժեշտ է նշել նաև, որ «Արմենիա»-ն ու նրա խմբագիրը իսկապես զգալիորեն հետ էին մնացել մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցող խմորումներից: Մ.

---

[735] Նույն տեղում:

Փորթուգալյանը, երկար տարիներ ապրելով Հայաստանից, հայ ժողովրդից հեռու, լավ չէր պատկերացնում այն էական տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել այդ տարիների ընթացքում, ամբողջությամբ չէր տիրապետում այն մղումներին, որոնք հայությանը տանում էին առճակատման, քանի որ այլևս թուրքական բռնատիրությունը հանդուրժել հնարավոր չէր: Մ. Փորթուգալյանի համար Հայաստանն ու հայ ժողովուրդը նախկինն էին մնացել[736], դրա համար էլ նա շարունակում էր իր «Արմենիա»-ով քարոզել այն, ինչ, ըստ էության, քարոզել էր տասնամյակներ առաջ: Կարճ ասած՝ կրկնում էր ինքն իրեն: Բայց քանի որ ազատագրական շարժումը, անկախ ստացած նոր երանգներից, էությամբ ու լուծելիք գլխավոր խնդիրներով նույնն էր մնացել, ուստի «Արմենիա»-ն ու նրա խմբագիրն ավելի շուտ հնաոճ էին դարձել, քան պահպանողական: Այդ մասին են վկայում նաև թերթի բազմաթիվ այն հրապարակումները, որոնք կամ նախկինում լույս տեսած հոդվածներն էին, կամ բովանդակային առումով նախկինների կրկնությունները: Հաճախադեպ էին անդրադարձները նախկինում կատարված գործերին, հիշատակվում էր անցյալի փառքը և այլն, որոնք, իհարկե, ծերության փաստի առկայության վկայություն են: Սակայն ոչ միշտ և ոչ բոլոր դեպքերում է ծերությունը վնասակար: Չէ որ այն հարուստ կենսափորձը, որ կուտակվում է տարիների ընթացքում, հիանալի դպրոց կարող է լինել սերունդների համար: Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով՝

1. առաջիններից էր, որը բարձրաձայնեց հայ ժողովրդի տառապանքների մասին և իր արդարացի բողոքն ուղղեց Օսմանյան Թուրքիայում միջնադարյան կանոններով ու մեթոդներով գոյատևող անմարդկային կացութաձևի դեմ,

2. ժողովրդի գիտակցությանը հասցրեց, որ մարդու ինքնապաշտպանությունը նրա բնական, ի վերուստ տրված իրավունքն է,

---

[736] Մ. Փորթուգալյանը հայրենիքից հեռացավ 1885 թ. և այլևս երբեք չվերադարձավ այնտեղ:

3. հայ գաղթաշխարհում տարածեց հայրենասիրության ու միմյանց սատարելու անհրաժեշտության գաղափարը,

4. նպաստեց մայր հայրենիքի և գաղթաշխարհի, ինչպես նաև տարբեր գաղթօջախների միջև կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը,

5. ժողովրդի կարող ուժերի համար բացահայտեցն կազմակերպական կառույցներ ստեղծելու և ներքին ուժ գոյացնելու կարևորությունը,

6. հասարակ մարդկանց պարզաբանեց յուրաքանչյուր անհատի և էթնոխմբի կրոնական զգացումները հարգելու, ազգային լեզուն անաղարտ պահելու և զարգացնելու, ընտանեկան սրբություններն ու ավանդույթները լավագույնս պահպանելու անհրաժեշտությունը,

7. խիստ կարևորեց երկրի տնտեսությունը նոր մեթոդներով կազմակերպելն ու դրանով ժողովրդի համար նյութական բարեկեցիկ պայմաններ ստեղծելը,

8. փորձեց կրթել նույնիսկ ամենաանքաղաքակիրթներին,

9. ազատագրական պայքարի հաջողության համար անհրաժեշտ էր համարում ապահովել ազգային բոլոր հոսանքների և կուսակցությունների համախմբումը:

Ամփոփելով «Արմենիա»-ի մեզ հասած ողջ ժառանգությունն ու հայ ազգային-ազատագրական պայքարի գործում պարբերականի կատարած աշխատանքները, հատկապես Փորթուգալյանի ծրագրային-նպատակային խմբագրականներն ու տեսական-վերլուծական հոդվածները՝ նշենք, որ Փորթուգալյանը միշտ պարտավորու-թյուն էր զգում շարադրելու իր հայացքները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զարգացման հետագա ուղիների մասին և ինչ-որ չափով իր անհատական գործուն ճիգերը ներդնելու այդ պայքարի հաջողության գործում: Նա միանգամայն իրավացի էր, որ մոսյլ հոռետեսությամբ չէր կարելի խախտել հայ ժողովրդի հավատը ազատագրական պայքարի հաղթանակի հանդեպ և դրանով թուլացնել

պայքարելու ոգին ու կորովը: Որպեսզի տեսանելի լինեին ժողովրդի հնարավոր ուժերը և արտաքին աշխարհում նրա հնարավոր դաշնակիցները, ազատագրական պայքարի ուղիների որոնումը նա կապում էր ներքին ու արտաքին հնարավորությունների օբյեկտիվ վերլուծության հետ: Քանի որ ակնհայտ էր, որ հայ ազգային-ազատագրական շարժումը նաև կանգնած էր արտաքին աշխարհում բնական դաշնակից ընտրելու անհրաժեշտության առջև. տևական փնտրտուքնի արդյունքում Փորթուգալյանի գաղափարախոսության տեսլականում հավանական այդ դաշնակիցն ի վերջո դարձավ Ռուսաստանը:

Ընդգծենք նաև, որ Փորթուգալյանն «Արմենիա»-ով հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործը կատարեց իր գաղափարական-քաղաքական ըմբռնումների կարողության սահմաններում: Նրա հայացքներին առհասարակ բնորոշ էր այն, որ նա դեպքերի անաչառ վերլուծության ընթացքում մերթ ընդ մերթ անում էր հետևություններ կամ մտահանգումներ, որոնք սուբյեկտիվ տարրը առաջին դիրքի վրա էին դնում այս կամ այն պատմական, հասարակական կամ քաղաքական եղելության ճակատագրում և աշխարհընկալման ու տեսական- գաղափարական մեկնաբանությունների ժամանակ:

4.2. Ազգային կուսակցությունների հայրենիքի ազատագրության հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշումները և դրանց արտացոլումը «Արմենիա»-ի էջերում

Հրատարակության առաջին տարիներին «Արմենիա»-ն իր դռները լայն բացել էր հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ հասարակական-քաղաքական գաղափարական բոլոր ուղղությունների ներկայացուցիչների առջև: Թերթի էջերում հաճախ հանդես էին գալիս եվրոպական տարբեր երկրներում բնակվող, ոչ վաղ անցյալում պանդխտության ցուպը բռնած կամ տարբեր համալսարաններում ուսանող երիտասարդության ներկայացուցիչներ: Նրանց մոտեցումները հայ-

ռենիքի ազատագրության խնդրում տարբեր էին, սակայն բոլորը միակարծիք էին ամենակարևոր հարցում. նույն կերպ շարունակել այլևս հնարավոր չէր, անհրաժեշտ էր պայքարել՝ բաղձալի ազատությունն ու մարդկային կենսակերպի բնական պայմաններ նվաճելու համար: Պարբերականում ակտիվ էին հատկապես «Մոնպելյեի ակումբի» անդամները, որոնք հոդվածներ էին գրում, քննարկում-բանավիճում էին, թե ինչ ճանապարհներով ու միջոցներով կարելի է բարելավել ժողովրդի վիճակն ու, իհարկե, նվաճել հայրենիքի ազատությունը: «Երբ Հնչակն ու Հայաստան սկսան հրատարակուիլ,- հետագայում հիշում է Մ. Փորթուգալյանը,- ատոնց հիմնադիրները նախապէս մի ժամանակ Արմենիաի հետ լինելէ և անոր մէջ գրելէ յետոյ, բաժնուեցան Արմենիաէն և հիմնեցին իրենց առանձին թերթէր»[737]: Սկզբում նրանք կարծես միակարծիք էին ու միակամ, սակայն երբ քննարկումները շարունակվեցին ու խորացան, աստիճանաբար ուռվագծվեցին, իսկ վերջում արդեն հստակ տարանջատվեցին մի քանի հիմնական մոտեցումներ՝ Եվրոպայի օգնությամբ, աստիճանական, բարեփոխումների կամ բռնի միջոցներով, այսինքն՝ հեղափոխության միջոցով:

Բնականաբար, այդ ուղղությունների ներկայացուցիչների միջև ծայր առավ ու անվերջ շարունակվեց մի բանավեճ, որն աստիճանաբար դրսևորվեց սկզբում «Արմենիայի» էջերում, իսկ հետագայում՝ բազմաբնույթ հոդված-հրապարակումների ձևով, «Հայաստան»[738], «Հնչակ»[739], «Հայք»[740] և նրանց արբանյակներ համարվող այլ պար-

---

[737] «Արմենիա», թիվ 53, 1894:

[738] «Հայաստան» երկշաբաթաթերթ՝ բերան Հայկական հայրենասիրաց ընկերության: Տե՛ս Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986, էջ 42:

[739] «Հնչակ»՝ ՍԴ Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան: Տե՛ս Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986, էջ 45:

բերականներում: Տարաձայնությունները հետզհետե խորացան, վերածվեցին հակասությունների, իսկ վերջում՝ նույնիսկ հակադրությունների: Հակասությունների հիմնական պատճառն այն էր, որ նրանք «ուզեցին թէ Արմենիան միջազգային յեղափոխական նպատակների ծառայէր»[741]: Եվ դա այն դեպքում և այն իրավիճակում, երբ մեր ազգային խնդիրներն անհապաղ լուծման կարիք ունեին, երբ նժարի վրա էր դրված ազգի լինել-չլինելու հարցը, կոչ էին անում ազգային կարողությունները «ընկերվարական դատին ծառայեցնել»[742]:

Ինչպես իրավացիորեն վկայում է Մ. Փորթուգալյանը, Լոնդոնում լույս տեսնող «Հայաստանը» յեղափոխական գաղափարների տարածմանը հակառակ էր»: Դրա մասին թերթը հայտարարել էր իր առաջին համարում և հույս հայտնել, որ հայերը, Եվրոպայում պարբերականներ հրատարակելով, նրանցում հայանպաստ նյութեր զետեղելով և իրենց հայրենիքի մասին բանախոսություններ կարդալով ու քաղաքակիրթ աշխարհին հայի վիճակին ու ցավին տեղեկացնելով, «կը հաջողին Հայաստանի ինքնավարութիւնը ձեռք բերել Անգլիաի միջոցով»[743]: Այդ ճանապարհն այնքան էլ արդյունավետ ու ոգևորիչ չեղավ, և շուրջ երեք տարի գոյատևելուց հետո, կորցնելով իր ազդեցությունն ու հետևորդներին՝ թերթը փակվեց:

Մ. Փորթուգալյանը, անդրադառնալով Հայաստանի ազատագրության ուղիների խնդիրներին, «Արմենիա»-ի էջերում ապացուցում էր ինչպես «Հայաստան»-ի, այնպես էլ «Հնչակ»-ի որդեգրած ուղեգծի անընդունելիությունը: Խմբագրի կարծիքով «Հնչակը» կուզէ այժմէն զբաղեցնէ հայաստանցիներին նույնիսկ տնտեսական և ընկերվա-

---

[740] «Հայք» գրական և քաղաքական թերթ «Հայկական միության»: Տե՛ս Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986, էջ 47:

[741] Փորթուգալյանը նկատի ունի սոցիալիզմի գաղափարախոսությունն ու դրա հետևորդների քարոզած «համաշխարհային» հեղափոխությունը:

[742] Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986), էջ 47:

[743] «Արմենիա», թիվ 53, 1894:

ական այնպիսի խնդիրներով, որոնք դեռևս Եվրոպայի և Ամերիկայի ամենէն առաջադէմ ազգերի մէջ ալ վեճերի առարկա դարձած են և դեռ վերջապես չեն լուծուած. ինչպե՞ս պահանջել հայաստանցիներէն այժմէն լուծել այդ խնդիրներ մինչդեռ նոքա որևէ կերպ զիրենք կառաւարելու իրաւունք չունէն դեռևս»[744]:

Մ. Փորթուգալյանը ժամանակավրեպ էր համարում այն, որ «Հնչակն» իր խնդիրն էր համարում գործարանատերերի ու բանվորների միջև եղած հակասությունները, հանդես գալիս աշխատանքի պայմանների բարելավման պահանջներով, քանզի գտնում էր, որ Արևմտյան Հայաստանում չկային ո՛չ «գործարաններ (ֆաբրիկ) և ո՛չ իսկ այդպիսի բանվորներ»: «Հնչակը» «հարկ կհամարի այդպիսի խնդիրներով զբաղեցնել հայերին. իսկ մենք, երբ դեռ ոչ մի գործարան չկա մեջտեղ, այլ քանդված ու ավերակ դարձած մի Հայաստան, ապագային մէջ դեռ բացվելիք գործարաններին մէջ աշխատելիք բանվորների խնդիրներով այժմվեն հուզվել, վեճեր հանել և հայ ժողովուրդն այդ գաղափարներով հեղափոխութեան գրգռել տղայամտութիւն կհամարինք»[745]: Նրա կարծիքով Հայաստանին և հայաստանցու կացությանը նայելով, թվում է, թե «այդ տեսակ ատենախօսներ գոնե 50-60 տարի ժամանակէն շատ կանուխ ծնած են»[746], Հայաստանի վիճակի ինչ լինելը չհասկանալով, «կուզեն Եւրոպայի յեղափոխականներէ մէկ մասին միայն շարժումները կապկօրէն դիտելով և ընդօրինակելով, նոյն շարժումներ կցանկան անել նաեւ Հայաստանի մէջ»[747]: Փոխանակ որոշակի ու անհապաղ լուծումներ պահանջող անելիքների մասին խորհելու, սեփական ժողովրդի վտանգված ապագայի մասին մտածելու, «սոսիալիզմի երևակայական ու հեռաւոր» խնդիրներով թանկագին ժամանակ են կորցնում և «այսչափ պառակ-

---

744 Նույն տեղում:
745 «Արմէնիա», թիվ 52, 1889:
746 «Արմէնիա», թիվ 30, 1892:
747 «Արմէնիա», թիվ 57, 1893:

տուած Հայերի մէջ, դասակարգային նոր պառակտում ալ առաջ կբերեն»[748]: Իսկապես, միանգամայն ճիշտ էր Մ. Փորթուգալյանը, քանի որ ամբողջ երկիրը ծայր աղքատության ու միջնադարյան խավարի մեջ էր, իսկ սոցիալիստական գաղափարներն այդ պայմաններում տիեզերք թռչելու նման մի բան էին՝ շատ հեռավոր և անիրական: Այդ պոռոտախոսությունների հետևանքով «ապարդիւն հալածանքներն աւելի շատցած են և ազգի հոյսն եղող երիտասարդութեան ու զգայուն Հայերի մեծ մաս մը կամ բանտերի մէջ ի զուր մաշելու կամ հայրենիքը թողլով օտար երկրներ թափառելու դատապարտված են»[749]:

Հարկավոր էր մեկընդմիշտ հիշել, որ ազատություն ասվածը բոլոր ժամանակներում «այնչափ դիւրաւ ձեռք բերուելիք բան մը չէ», դրա համար զոհողություններ, նախապատրաստական լուրջ աշխատանքներ, դրամ ու սեփական անձը նվիրաբերելու կարողությունը պետք է ունենանք, նպաստավոր հանգամանքների առկայությունն էլ խիստ անհրաժեշտ պայման է և ոչ թե աջ ու ձախ սոցիալիզմի քարոզները, այն էլ անմիջապես տեսնելու ակնկալիքով: Չէ՛, դա լինելու բան չէ, համոզված հայտարարում էր Մ. Փորթուգալյանը, ապա ավելացնում՝ «մեզնէ յետոյ եկողներին համար ճամբան պատրաստենք»[750]: Թե չէ երազել, որ մի օր «մեր լեռներու համալսարաններէն ելնող պարկեշտ, զարգացեալ և հարստահարեալ Քիւրդերու հետ միացած դրամատերերուն կտապալենք և ընկերվարական կառավարութիւն կը կազմենք»[751], մեղմ ասած, սին ու պատիր երազներ էին:

Իրավ է, որ մեր ժողովուրդը, քաղաքակրթության ավելի ցածր աստիճանի վրա կանգնած լինելով, ներքին բարոյական ուժի շնորհիվ ընդունակ է բարձրանալու նաև ինքնուրույն, գրում էր թերթի ԼԻՕ անունով վերլուծաբանը[752], սակայն ճշմարիտ է նաև, որ զարգացած

---

[748] «Արմէնիա», թիվ 43, 1893:
[749] «Արմէնիա», թիվ 30, 1892:
[750] «Արմէնիա», թիվ 43, 1893:
[751] Ի՞նչ կընենք, «Արմէնիա», թիվ 62, 1893:
[752] Մեզ չհաջողվեց ճշտել այս հեղինակի իսկական անուն-ազգանունը:

ժողովուրդներից շատ բան ունենք սովորելու ու ընդօրինակելու, ինչպես որ կյանքում է. ամեն բան սկսվում է պարզից և բարձրանում է դեպի բարդը: Մեկ այլ հարց է, սակայն, որ մեր ժողովուրդը «սօսիալիզմի գաղափարը իրագործելու համար պատրա՞ստ է, թէ ոչ»: Չէ՞ որ եվրոպական համալսարան ավարտելուց բացի, հարկավոր էր ճանաչել ժողովրդին, «աւարտել Վանի, Սալմաստի, Երեւանի և այլ ժողովրդական կեանքի համալսարանները», այլապես մեր հասարակության համար անօգտակար կլինի, եթե «նոյն իսկ մեր սոսիալիստներ մի մի Մարքսներ լինին»[753], արտահայտելով «Արմենիայի» տեսակետը՝ գրում է ԼԻՕ-ն:

Շարունակելով ընդդիմախոսել «Հնչակ»-ին՝ Մ. Փորթուգալյանը բացատրում էր իր ընթերցողներին, որ բոլոր դեպքերում հայ ժողովրդի ազատությունը պետք է ձեռք բերվի իր պայքարի միջոցով և սեփական զոհողությունների գնով, ուստի տեղին կլինի նաև ցույց տալ, քննադատել մեր թույլ կողմերն ու պակասությունները, որպեսզի «իւր թշուառութիւնը տեսնելով յուզուող ժողովուրդը՝ ցավերէն շփոթուած, գործիք չդառնայ, անգիտակցաբար չծառայե իր ազգի շահերէն տարբեր օտար շահերի»[754]: «Արմենիա»-ն և նրա կողմնակիցներն ամեն ինչ անում էին, որ ազատագրական զարթոնքն իր բնականոն ուղուց չշեղվի: Քանզի քիչ չէին միամիտներն ու ժողովրդի կեղծավոր բարեկամները, որոնք օգտվում էին ժողովրդի տգիտությունից ու անհասկացողությունից և ակամա կամ դիտավորությամբ մեծ վնասներ հասցնում այդ շարժմանը: Իհարկե, գրում է «Արմենիան», մեր այն գործիչները, ովքեր մտածում են, թե հայ են ու հայասեր, դա բավարար է ազգին օգտակար լինելու համար. «անոնք, որ կիսատ-պռատ հայերեն գիտեն, որոնք ռուսերէն կը մտածեն և հայերէն կը գրեն կամ կը խօսին», հազիվ կարողանան լուրջ գործերում հաջողության հասնել ու ազգին առաջնորդել: Անդրադառնալով «Հնչակին» ու նրա

---

[753] Մեր անընդունակութիւնը, «Արմէնիա», թիվ 26, 1893:
[754] Մեր անհասկացութիւնը, «Արմէնիա», թիվ 48, 1894:

հետևորդներին՝ «Արմենիան» գրում էր. «Հնչակ»են աւելի հանցաւոր են անոնք, որոնք «Հնչակ»-ին ազգավնաս ուղղութեան մէջ գտնուիլը շատ լաւ հասկցած լինելով մէկտեղ, ժողովրդին անհասկացութիւններէն օգուտ քաղած և աշխատած են զայն մոլորեցնել և մղել «Հնչակի» ուղղութեան մէջ»[755]: Իհարկե, «ազգավնաս ուղղութիւն»-ը «Հնչակի» ու նրա կողմնակիցների պարագայում չափազանցված է և բավական հեռու իրականությունից, սակայն ակնհայտ է նաև մի պարզ ճշմարտություն, որ որոշ պատեհապաշտներ չէին խուսափում ժողովրդի տգիտությունից օգտվելուց և առիթը բաց չէին թողնում՝ սեփական նպատակներն ու երբեմն նաև չար դիտավորություններն իրականություն դարձնելու համար:

«Արմենիա»-ն, անդրադառնալով «Հնչակի» հետ ունեցած գաղափարական տարաձայնություններին, անթաքույց հայտարարում էր. «Հնչակի» ուղղութեան հակառակ ենք սկզբէն ի վեր, ազգավնաս համարելով անոնց գաղափարներ և ըստ այնմ նաեւ իրենց գործունեութիւն»[756], սակայն միևնույն ժամանակ խոստովանում էր, որ նրանց շարքերում էլ շատ մարդիկ կային, որոնք իրենց ազգօգուտ գործերի համար արժանի էին ամեն տեսակ հարգանքի ու մեծարանքի: Այլ հարց է, որ լավ չճանաչելով Հայաստանն ու հային և առաջնորդվելով բացառապես եվրոպական գաղափարա-խոսություններով՝ նրանք ընտրել էին պայքարի ոչ արդյունավետ ուղիներ:

Մ. Փորթուգալյանը հնչակյանների շարքերում առանձնացնում էր երկու կարգի մարդկանց՝ ոառում առած, որոնք «մեր դաւանած սկզբունքների և գաղափարական կուսակցութեան հակառակորդ կը հանդիսանան», որոնք քիչ են, սակայն կուսակցությանն ուղղություն տվողներն ու առաջնորդողները «բուն ատոնք են»: Իսկ մյուսները, որոնք առաջինների ձեռքին խաղալիք էին դարձել, «տգէտ մարդիկ են», որոնք չէին կարողանում մինչև անգամ հասկանալ, թե ինչ տար-

---

[755] Նույն տեղում:

[756] Մեր անհասկացութիւնը, «Արմէնիա», թիվ 53, 1894.

բերություններ կան «Արմենիայի» և «Հնչակի» նպատակների միջև, որ «Արմենիան» ուրիշ նպատակի համար էր հեղափոխություն քարոզում, «Հնչակն»՝ այլ: «Արմենիան» հայ ազգութեան գոյութիւնը կանգուն պահելու, բռնապետական կառավարութիւնը յեղափոխութեամբ տապալելու և դրա տեղ հայ ազգային շահերին համապատասխանող մի տեղական ինքնավարութիւն հաստատելուն կը ձգտի՝ թեկուզ Սուլթանի վեհապետական իրաւասութեան տակ դրուած լինի այն, իսկ Հնչակը՝ ընկերվարական դրութեամբ մի պետութիւն հաստատել կերազէ»[757],- գրում էր Մ. Փորթուգալյանը:

«Արմենիայի» վաստակաշատ խմբագիրը մի կարևոր դիտարկում էլ էր կատարում, որը իր ժամանակներում բնորոշ երևույթ էր հայ ազատագրական և ընդհանրապես հասարակական-քաղաքական շարժումներին: Նորաստեղծ որևէ կուսակցություն կամ քաղաքական ուժ, իր նախորդներին վարկաբեկելու և ասպարեզից հեռացնելու ու նրանց տեղը գրավելու համար, սովամանակ միանում է մեկ այլ թարմ ուժի: Այդպես եղավ նաև «Արմենիայի» ու նրա հակառակորդների պարագայում: Նյու Յորքում լույս տեսնող նորելուկ «Հայք» թերթն ու նրա թիկունքում կանգնած «Տիեզերական Հայկական Միութեան Հանձնախումբը» նախ «Հնչակի» հասցեին գովեստներ կարդացին, «անոր հետ միացած վնասելու համար Արմէնիաի գործունէութեանը և քիչ անց Հնչակեանց դէմ ալ յայտնի պատերազմ հայտարարեց, ամենաւնասակար գործիչներ անուանելով զանոնք»[758]: Եվ այդ բնույթն ունեցող մարդիկ, որոնք ոչ մի հստակ ծրագիր ու սկզբունք չունեին, հավակնում էին առաջնորդել հայ ժողովրդին ամենադժվար ու վտանգալեցուն ժամանակներում: «Դան բաներ ալ որ պէտք չէ ասենք և գրենք այլ պէտք է անենք»[759] - յուրակերպ եզրափակում է ասելիքը Մ. Փորթուգալյանը՝ հասկացնելով, որ ամպագոռգոռ ճառեր

---

[757] Նույն տեղում:

[758] Մեր անհասկացութիւնը, «Արմէնիա», թիվ 53, 1894:

[759] Նույն տեղում:

ասողները շատ են, ուստի անհրաժեշտ էր ճիշտ կողմնորոշվել և չ-քայլել ամեն դրոշակ բռնող ինքն իրեն առաջնորդ հայտարարողի հետևից:

Ներկայացնելով այն տխուր իրավիճակը, որ ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերում, Մ. Փորթուգալյանն իրավամբ արձանագրում էր, որ հայ ժողովուրդը բարոյապես թուլացած է, «տկարացած, հավատքը կորուսած է իր կենդանութեան վրա և հուսահատած է ինք իրմէ», սակայն, այդ ամենով հանդերձ, լավատեսական նոտայով է միտքն ավարտում: Նրա կարծիքով հայ ժողովուրդը «հիւանդ է այսօր, բայց մեռնելիք հիւանդ չէ», միայն «պետք է ներքին զորացուցիչ դեղէր տալ անոր, պետք է սնունդ տալ, որ ուժ առնէ և ոտքի ելնէ»: Մինչ հիվանդ հայ ժողովուրդը, քիչ թե շատ համոզվելով, «սկսած է խմել իրեն տրուած դառն, բայց զորացուցիչ դեղէրը, անդիէն «Հայաստանը» շարլաթան բժշկին պես հրապարակ իջնելով սկսավ պոռալ, թե իրենք հիւանդ Հայաստանը զորացնելու համար գեղեցիկ շամպանիո գինիներ կխմցունէն և լավ կերակուրներ կկերցունէն զորաւոր ստամոքս և հուժկու առողջութիւն ունեցող օտարներին՝ որոնք կգթան մեր հիւանդի վրա և բարեմաղթութիւններ կանեն...»[760]: Այսինքն՝ հայաստանականները կատարում էին քայլեր, որոնք ոչ միայն չէին օգնում, այլ ինչ-որ տեղ նույնիսկ վնասում էին հայ ժողովրդին ու նրա ազատագրական վերելքին, քանի որ ժողովրդի կարող ու գիտակից ուժերն ազգօգուտ գործունեությամբ զբաղվելու փոխարեն եղած առանց այն էլ սուղ միջոցներն ուղղում էին, ըստ էության, պարապ գործեր կատարելուն:

Քննադատելով ընդդիմադիրներին՝ Մ. Փորթուգալյանը ներկայացնում էր այն տխուր իրողությունը, որ նրանցից շատերն առաջին իսկ անհաջողությունից հուսալքվում էին և փախուստի տրամադրութ-

---

[760] «Արմէնիա», թիվ 53, 1889:

յուններ սերմանում ժողովրդի մեջ, քանի որ, ըստ այդ հուսահատնե-րի, մեր պայքարը դատապարտված էր պարտության, «...որովհետև հայ ազգը աղքատ է, զարգացած չէ, ազգի բարոյականն աւերուած է. ստրկական բնատրութիւն ունի, պակսելու վրայ է, անզէն և շրջապա-տուած բազմաթիւ և զինուած մահմետականներէ, ցրուած է և մեր միաբանութիւն հաստատելն ալ անկարելի է: Հայաստանի աշխար-հագրական դիրքը անյարմար է և ատոր համար է որ մենք սկզբէն ի վեր այսպէս ոտնակոխ ենք եղեր: Ռուսը անպատճառ պէտք է գրաւէ Հայաստանը. պարապ տեղն է մեր աշխատանք եւ այլն»[761]:

Ավելին, իրենց փախուստն ու մորթապաշտությունն արդարաց-նելու համար, նրանք գույներ չէին խնայում սևացնելու, անվանարկե-լու հայ մարդկանց՝ բացատրելով, որ իբր կրթության պակասն ու ստրկական ոգին մեր ազգին դարձրել են անկայուն և մորթապաշտ: Սակայն ո՞ր ազգի մեջ չկան նմանատիպ դրսևորումներ. «գալով այն խօսքին թէ մեր ազգ անմիաբան է, մատնիչներ շատ կան մեր մէջ և այլն, ո՞ր ազգի մէջ չկայ,- իրավացիորեն ու զայրույթով հարցնում է Մ. Փորթուգալյանը, ապա շարունակում,- մի՞թե կարելի է ադկէ հետևա-ցունել թէ մեր ազգի ապագայն յուսահատական է և բնական օրէնքով պիտի ոչնչանայ անշուշտ»[762]: Իհարկե, ո՛չ, համոզված ու վստահ պա-տասխանում էր խմբագիրը և կոչ անում բոլոր հայերին՝ չհուսալքվել և շարունակել պայքարը:

Մ. Փորթուգալյանը, չխուսափելով նաև ինքնաքննադատությու-նից, ինքն իրեն հարց էր տալիս՝ մինչև «ե՞րբ պիտի քաշենք այս նե-ղութիւններ», արդյո՞ք շուտով կլուծվի Հայկական հարցը, ի՞նչ միջոց-ներով՝ հեղափոխությա՞մբ, թե՞ դիվանագիտական ճանապարհով, և ինքն էլ փորձում պատասխաններ տալ: Հայաստանն ազատողը պետք է լինի ոչ թե այս կամ այն կուսակցությունը կամ որևէ օտար ազգ ու տերություն, այլ «նոյն ինք հայ ժողովուրդը որ գիտակցաբար

---

761 Մեր յոյսեր, «Արմէնիա», թիվ 62, 1894:

762 Մեր յոյսեր, «Արմէնիա», թիվ 62, 1894:

պիտի շարժի յառաջ տանի ու կատարէ իր հայրենիքի ազատութեան գործը»[763]: Ամենակարևորը, շեշտում էր «Արմենիան», որ ինքը՝ հայ ժողովուրդը, ոտքի ելավ ու հայկական խնդիրը «Պերլինի վեհաժողովի գրասեղանին վրայ դրաւ», երբ այդ նույն ժողովրդի «միտքը թմրած էր», ամբողջովին անպատրաստ պայքարի: Իսկ դրանից տարիներ անց արդեն ժողովուրդն ինքն էր իր հարցերով զբաղվում, հասունացել էր նրա հավաքական միտքը, նա կազմակերպվել էր թե՛ հոգեպես, թե՛ կազմակերպչական առումով: Ժողովուրդն արդեն ինքն էր հարցեր բարձրացնում, խոսում, բանավիճում, լրագրեր հրատարակում. «ժողովուրդն ալ արթնցած է, անտարբեր չկրնար մնալ: Այս մի մեծ քայլ է դէպ յառաջ»[764]:

Այդ առաջընթացը, սակայն, որոշ խմբեր փորձում էին յուրացնել, իրենցը համարել, որն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ շարժումներն սկսվել ու խորանում էին, երբ դեռ ո՛չ «Հնչակը» կար, ո՛չ «Դրօշակն» ու մյուսները: «Նախ որ սխալ է,- կարդում ենք «Արմենիայում»,- Հայ ազգին մէջ երեւցած շարժումները Հնչակի գաղափարների տարածմանը վերագրելը», որովհետև այն ինտերնացիոնալիզմի (միջազգայնության) և սոցիալիզմի (ընկերվարականության) գաղափարների օրգան էր, իսկ հայ ժողովրդի շարժումները՝ բոլորովին այլ՝ հայրենասիրական և Հայաստանի անկախության նպատակներ էին հետապնդում. «Տաճկի բարբարոսական հարստահարութիւններէն ազատուելու և Հայաստանի վերականգնումը տեսնելու զգացումն է որ կոգևորէ հայ ժողովրդին և ոչ թե «Հնչակի» տարածած ժամանակավրեպ սոցիալիստական գաղափարները, իսկ «Հնչակը» իբրեւ մի տաք քամի փչելով արդեն հասունցած պտուղներին վրայ գետին կը թափէ զանոնք...»[765]:

---

[763] Նույն տեղում:

[764] Մեր յոյսեր, «Արմէնիա», թիվ 62, 1894:

[765] Նույն տեղում:

Նկատենք, որ Փորթուգալյանն այնքան էլ իրավացի չէ, որ միմյանցից անջրպետում է ազգային-ազատագրական ու սոցիալական պայքարը: Հետո էլ հակասում է ինքն իրեն, որովհետև թերթում բավականին շատ են հրապարակումները, որոնցում նա ժամանակ առ ժամանակ շոշափում է սոցիալ-տնտեսական խնդիրներ, քննադատական խոսք ասում հայկական միջավայրի հետադիմական ուժերի հասցեին, փորձում հայ գյուղացիության շահերի պաշտպանությունը հռչակել իր գլխավոր խնդիրներից մեկը: Ավելին, հասարակությունը բաժանելով հարուստ, միջին և աղքատ խավերի՝ նա գտնում էր, որ երեքն էլ դեր ունեն կատարելու հեղափոխության մեջ, և հանուն հեղափոխության համերաշխության քարոզ էր կարդում այդ երեք դասակարգերի միջև. «Անդադար և անվիատ աշխատութիւնը,-գրում էր նա,-կրնա ծնունդ տալ մի օր այնպիսի հանգամանքներու, այնպիսի դեպքերի, որ երեք դասակարգերու մեկ-մեկ մաս մոտեցնեն իրարու և միացնեն հայրենիքի վերաշինութեան սուրբ գործին համար»[766]:

Խորը ցավ ապրելով որոշ քաղաքական ուժերի անհեռատես ու ցուցադրական գործելակերպի հետևանքով թուրքական իշխանությունների կողմից սանձազերծված բռնությունների ու կոտորածների կապակցությամբ՝ «Արմենիան» ներկայացնում էր այն տխուր ու անելանելի, «տարտամ ու շփոթ» վիճակը, որում հայտնվել էր հայ ժողովուրդը, հատկապես պոլսահայությունը: Այդ ամենի արդյունքում, թերթի վկայությամբ, ժողովուրդն սկսել էր ավելի խելամիտ մոտենալ հարցերին, չէր հանդուրժում նրանց, ովքեր «կը կարծէին անպատիժ խաղալ ազգի ճակատագրին հետ: «Հնչակեանների» և «Դրօշակեաններու» դէմ ժողովրդին մէջ հակառակութիւն մը ծագած էր»[767]: Սա բավական չէր, որոշ ուժեր էլ փորձում էին «մէկ սխալէն ելնելով ուրիշ սխալի մը մէջ մտնեն». ընդունելով հանդերձ «Հնչակի» և «Դրօշակի» վնասակար ուղղութիւնն կը պահանջեն որ երկուքը միանան՝ երկու

---

[766] «Արմէնիա», թիվ 31, 1886:

[767] Մեր վիճակ եւ Պոլսի ցոյցը, «Արմէնիա», թիվ 6, 1897:

չարիքի միութենէն կը յուսան բարիք ստանալ»[768]: Իհարկե, «Արմենիան» ու նրա խմբագիրը հայկական կոտորածների անմիջական ազդեցության ներքո խտացնում էին գույները՝ անտեսելով այդ կուսակցությունների հայրենանվեր գործունեությունը և խաղացած պատմական կարևոր դրական դերակատարությունը, չափազանցելով սևացնում էին իրենց ընդդիմադիրներին, սակայն մեկ կարևոր հարցում իրականում այնքան էլ հեռու չէին ճշմարտությունից. իրենց դոնկիխոտյան անհաշվենկատ, անխոհեմ, ցուցադրական գործելակերպով հաճախ որպես նվեր առիթներ էին տալիս դրանք փնտրող ոսոխին: Հաճախ այդ սխալ մոտեցումները պատճառաբանելով այն միամիտ փաստարկներով, որ «հայ յեղափոխութեան կենդանութեանը ապացոյց տալու համար պէտք է քանի մը ռումբ նետել», որից ազդված Եվրոպան էլ իբր «պիտի բռնադատուի ստիպել թիւրք կառավարութեան որ բարենորոգումները գործադրէ»[769]:

Բայց հայ ժողովուրդը ենթագիտակցորեն զգում էր, որ միայն միասնաբար հնարավոր կլիներ հաղթել թշնամուն, իսկ մինչ այդ ժողովրդի ճակատագրով հետաքրքրված քաղաքական ուժերը պիտի աշխատեին միասնության ու հաղթանակի գաղափարը պետք եղած չափով ներածել ժողովրդի մեջ, իսկ այդ դեպքում անկարելի կդառնար հաղթել ուժեղ գաղափարի ուժին: Այսինքն, ասելիքն ամփոփում է «Արմենիան», բոլոր շահագրգիռ ուժերի գլխավոր նպատակը պիտի լիներ «հայրենիքի ազատության գաղափարը տարածել ժողովրդի մէջ, ւառաջնորդել ուղիղ ճանապարհէ դէպի այդ նպատակ»[770]:

«Արմենիա»-ն խիստ քննադատեց «Հնչակ»-ին նաև Սասունի ինքնապաշտ-պանության հարցի առիթով: Նախ՝ այն բանի համար, որ այդ կուսակցությունն ստեղծվել էր, և նրա թիվ մեկ խնդիրը պետք է լիներ ազգային-ազատագրական պայքարը հաղթական ավարտին

---

[768] Մեր վիճակ եւ Պոլսի ցոյցը, «Արմենիա», թիվ 6, 1897:
[769] Նույն տեղում:
[770] Մեր վիճակ եւ Պոլսի ցոյցը, «Արմենիա», թիվ 6, 1897:

հասցնելը, ինչը որ նույնն էր նաև Դաշնակցության դեպքում. «Դաշնակցությունը չի կրնար ակտիվ մասնակցություն ունենալ սոցիալական և դասակարգային կռիվներին, համակրելով հանդերձ, քանի ազգային դատը ավելի տագնապալի է և մեր ուժերը՝ երկու գործի համար անբավարար»[771]:

«Արմենիա»-ի ներկայացմամբ թուրքական իշխանություններն ի սկզբանե հայտարարեցին, թե հայերը Սասունում ապստամբել են, և օրինական իշխանությունները լիարժեք իրավունք ունեն երկրում կարգ ու կանոն հաստատելու, հետևապես և ճնշելու այդ հակակառավարական ելույթը: Հայերն ամեն տեղ փորձում էին ասել, բացատրել, ապացուցել, որ իրենք ապստամբներ չեն, այլ ընդամենը փորձել են պաշտպանել իրենց տունն ու պատիվը, իրենց ինչքն ու կյանքը անմարդկային հարձակումներից, որոնք կազմակերպել ու իրականացնում էին պետական մարմինները, զորքն ու խուժանը միասին:

Իրավիճակն այսպես էին ներկայացնում նաև եվրոպական դիվանագիտական ներկայացուցիչներն ու մամուլը, անաչառ օտարերկրացի անհատներն ու պատահաբար ներկա գտնվող այլ անձինք: Բայց արի ու տես, որ հայերի մեջ էլ կային մարդիկ ու կազմակերպություններ, որոնք ոչ ավել, ոչ պակաս ջուր էին լցնում թուրքական ջրաղացին. «Բայց ի՞նչ պիտի ասէք երբ Եւրոպայի մէջ ալ մի հայ թերթ, կելնէ Տաճկին ստախօսութեանը հրապարակով ոյժ տալու»՝ հայտարարելով. «Մենք յեղափոխականներս, Հնչակեաններս, արինք և կանենք այսուհետեւ էլ...»[772]:

Ի դեպ, այսօր էլ վիճելի է համարվում այն հարցը, թե ի վերջո Սասունի՝ 1894 թ. ելույթը ապստամբությո՞ն էր, թե՞ ինքնապաշտպանություն: Ապստամբության տեսակետի կողմնակիցները, նկատի ունենալով Սասունի այդ շրջանում դեռևս պահպանված կիսաանկախ

---

[771] Տասնապետյան Հ., Հ.Յ. Դաշնակցութունը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողով (1890-1924), էջ 64:
[772] «Արմէնիա»ի 10դդ տարեշրջանը. «Արմէնիա», թիվ 70, 1894:

վիճակը, սասունցիների ազատատենչ ու խենթ բնավորությունը, հնչակյանների գաղափարաքարոզչական լայնածավալ աշխատանքներն ու ոգևորիչ խոստումները և, իհարկե, ողջ հայ ժողովրդի որպես առաջ անարգ թշնամու դաժան լուծը թոթափելու ձգտումները, հայտարարում են, որ ամեն անգամ մեր ազատագրական ելույթներն ինքնապաշտպանական կռիվներ համարելով՝ մենք հնարավորություն ենք տալիս մեզ չսիրողներին ասելու, որ հայերն ամենասովորական մազոխիստներ են և երբեք չեն ընդվզել՝ ապստամբել՝ օսմանյան բռնապետական տիրապետությունից ազատվելու համար: Չվիճարկելով «ապստամբու-թյան» թեզի կողմնակիցների որոշ դրույթներ ու հարցը չմանրամասնելով ավելի, քանի որ այն ներկա ուսումնասիրության խնդիրներից դուրս է և, վկայակոչելով հրապարակի վրա եղած մեծաքանակ ուսումնասիրություններն ու ակադեմիական հրատարակությունները, որոնց թվարկումը նույնիսկ ավելորդ ենք համարում, ընդգծենք, որ մենք հակված ենք կարծելու, որ այդ կռիվն ինքնապաշտպանություն էր: Ճիշտ է, որ այն սկսելու առիթ ծառայեց հայերի կողմից որոշ հարկատեսակներ չվճարվելը, սակայն այն հիմնականում մղվում էր սեփական կյանքն ու ինչքը պաշտպանելու համար: Հետո էլ հաղթանակը հրաշքով ապահովելու դեպքում, հայերը դեմ չէին լինի զարգացնել այդ հաջողությունը և այն տարածել Արևմտյան Հայաստանի այլ գավառներ: Միաժամանակ ապահովել Եվրոպայի բարեհաճությունը և ստիպել իշխանություններին իրականացնել խոստացած բարենորոգումները: Փաստենք, որ այդպիսի մարտավարություն հետագայում որդեգրեց ՀՅԴ-ն, որի ընդհանուր ժողովներից մեկի փաստաթղթում կարդում ենք այն մասին, որ որոշվել էր Սասնո կռիվների[773] ընթացքում ամեն կերպ օժանդակել նրանց՝ կազմակերպելով հայդուկային խմբերի արշավանքներ, ահա-

[773] Թեև այս դեպքում արդեն խոսքը Սասունի՝ 1904 թ. ելույթի մասին է, սակայն, ընդհանուր առմամբ, էական տարբերություններն այնքան էլ շատ չէին:

բեկչությունները և այլն[774]: Իսկ «Կիլիկիո Մարմինը պետք է ձգտի պատրաստել Կիլիկիան գլխավորապես Զեյթունյան շարժում մը, որ արձագանք տա Սասնո կռիվներուն»[775]: Այսինքն՝ Սասունի շարժումներին զուգահեռ պետք է տեղի ունենային և հայդուկային խմբերի համատեղ սահմանանցումներ, Թուրքիայի ծովեզրյա քաղաքներում ցուցադրական գործողություններ, ինչպես նաև՝ արձագանք Զեյթունի կողմից: Դժբախտաբար, ծրագրված շարժումները կամ չիրականացան, կամ տեղի ունեցան տարանջատ և ոչնչով չկարողացան փոխել կացությունը: Փաստորեն այդ կռիվը ինքնապաշտպանական-ապստամբական էր, քանի որ ներառում էր երկու գործոններն ու նպատակները միաժամանակ:

Հստակ է բոլոր դեպքերում, որ թեկուզ և ապստամբած լինեինք, մեր խորին համոզմամբ, պետք չէր ամենուրեք, առավել ևս անվտանգ Լոնդոնում նստած, հայտարարել, թե ապստամբել ենք, այսինքն՝ ասել այն, ինչ տվյալ պահին խիստ ձեռնտու էր թուրքին: Հիրավի, ինչի է նման, «Հնչակը»՝ Թիւրքին հետ մէկ բերան եղած կը պոռայ թե Սասունը ապստամբած էր»[776] և հայերին զրկում բողոքելու, մեծ տերությունների մոտ թեկուզ ձևական ինքնապաշտպանվելու, արդարություն փնտրելու վերջին հնարավորությունից անգամ: Ցավոք, այսօր էլ ենք երբեմն ականատես լինում նմանատիպ դրսևորումների, որոնք մեծ վնաս են պատճառում Արցախյան խնդրի վերջնական լուծմանը: Իհարկե, մենք այնքան էլ չենք ընդունում Մ. Փորթուգալյանի ձևակերպումների կտրուկ լեզուն ու ոչնչացնող ոճը, իրենից բացի մյուսների մեջ միայն վնասարարներ տեսնելու ձգտումը, սակայն միևնույն ժամանակ լիարժեք համամիտ ենք, որ հարկավոր էր

---

[774] Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան, Ե., 2006, էջ 52:

[775] Տասնապետեան Հ.,«Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողով» (1890-1924), էջ 112:

[776] «Արմենիա»ի 10դդ տարեշրջանը, «Արմենիա», թիվ 70, 1894:

զգույշ ու շրջահայաց լինել, ասել ու անել բաներ, որոնց համար հետո ափսոսելու, ցավելու անհրաժեշտությունը չունենայինք:

Մ. Փորթուգալյանը հատուկ շեշտում էր, որ շահագրգիռ բոլոր ուժերի ու կառույցների «պաշտոնն է» ազատության գաղափարները ժողովրդի մեջ տարածելը, իսկ հեղափոխությունը պիտի իրագործեն «Հայ անունով կոչոտղները և ոչ թէ Հնչակեանները կամ Դրօշակեանները և կամ Արմէնիականները: Խնդիրը Հնչակի, Դրօշակի կամ Արմէնիաի խնդիր չէ, այլ հայկական խնդիր է»[777]: Իսկ այդ խնդրի իրագործմանը լավագույնս կարող էին նպաստել ազգաշահ լրագրերը, հատկապես գրաքննությունից ու ամեն տեսակ բռնություններից ազատ, «ճշմարտութիւնը խօսելու համար չը վախցող, ազգի օգտին ծառայելու փափաք ունեցող» ու անեղծ լրագրերը, որոնց ժողովուրդն ամեն միջոցներով պիտի սատարի, քանի որ դրանք միայն «հանրային ուժով առաջ կերթան»[778]:

Ավելի ուշ «Արմենիա»-ն «Մարտ թէ ապրիլ» խմբագրականում, անդրադառնալով «Մարտ» թերթի հիմնադրման փաստին, զարմանք է հայտնում, որ մարտականները[779] թեև մերժում էին հնչակյանների գաղափարախոսությունը, սակայն չէին վարանում ազգային զարթոնքն ու գործնական պայքարն իրենց վերագրել՝ հաճախ չխուսափելով նույնիսկ շատ բաներ անձնավորելուց: Բացատրելով ստեղծ-

---

[777] Յեղափոխական կանոնագիր, «Արմէնիա», թիվ 7, 1897:

[778] Նույն տեղում:

[779] Խոսքը Հնչակյան կուսակցության ծրագրում սոցիալիզմի գաղափարախոսությունն արևմտահայ իրականության համար ժամանակավրեպ ու վնասակար համարող և հետևապես մերժող, բացառապես արևմտահայերից բաղկացած խմբի կողմից Ա. Արփիարյանի ղեկավարությամբ 1897 թ. Լոնդոնում հիմնադրված «Մարտ» թերթի մասին է: Այն ամսաթերթ էր, լույս է տեսել 1897-1901 թթ.: 1896 թ. սկսված այդ խմորումներն ավարտվեցին 1898 թ. կուսակցության տարափեղկմամբ, որի արդյունքում Ավ. Նազարբեկյանի հետևորդները հավատարիմ մնացին սոցիալիզմի գաղափարախոսությանը և շարունակեցին կոչվել Հին կամ պարզապես Հնչակյաններ, իսկ մյուս հատվածը՝ Վերակազմյալ հնչակյաններ: «Մարտ» թերթի մասին մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Վերակազմյալ հնչակյան մամուլի պատմությունից /«Մարտ», «Նոր կյանք»/, ԼՀԳ ՀՀ ԳԱԱ, 1995, № 2, էջ 106-114:

ված իրավիճակը՝ Մ Փորթուգալյանը հայտարարում էր, որ «Արմենիա»-ի ընթերցողները գիտեն. «մենք սկզբէն ի վեր քննադատած ենք Հնչակի գաղափարներն ու գործունեութիւնը և զայն վնասակար գտած ենք հայ ազգին համար»: Սակայն երբեք այդ պայքարը չենք անձնավորել, քանի որ «Հնչակ»-ի դեմ պայքարել ենք ոչ թե «անձնական նկատումներէ», այլ այդ կուսակցության գաղափարներն ու գործունեությունը վնասակար ենք համարել ազատագրական պայքարի համար: Բայց երբեք Ավ. Նազարբեկյանի «անունը չենք տուած մեր վիճաբանութիւնների մէջ», որովհետև, պարզաբանում է Մ. Փորթուգալյանը, Ավ. Նազարբեկյանի հետ անձնական խնդիրներ չունենք, այլ կուսակցության ու նրա ազգավնաս գործունեությանն ենք դեմ: «Մեր պայքարը անձերի դէմ չէ»,- եզրափակում է ասելիքը Մ. Փորթուգալյանը, ապա ավելացնում,- «խոնարհվում ենք բոլոր նրանց առջև, ովքեր թեկուզ աննշան, բայց օգտակար գործ կանեն հայրենիքի փրկության գործի համար»[780]:

«Արմենիա»-ն մի հետաքրքիր դիտարկում էլ էր կատարում. շատերը չպարզաբանելով, թե ով ու ինչպես, ում կողմից և ում ջանքերի շնորհիվ էր դա եղել, հայտարարում էին. «Գաղափարը տարածուած է, գործին նայինք»: Բայց մոռանում էին, որ եթե հայրենիքի ազատության սուրբ գործի գաղափարները մեր ժողովրդի մեջ անհրաժեշտ չափով տարածված լինեին, պատահական ու ազգավնաս մարդիկ ասպարեզում չէին լինի, «Հնչակեանութիւնն յուր ցուցական գործելակերպով ճարակ չը պիտի կրնար գտնել Հայերի միամտութեան մէջ և մնասել հայկական յեղափոխութեան գործին»[781]: Ուրեմն «Արմենիայի» ներդրումը, պարբերականի հրատարակիչների կարծիքով, պիտի լիներ հայրենիքի ազատության գաղափարն անհրաժեշտ չափով տարածել ու քարոզել ժողովրդի մեջ, առաջնորդել ժողովրդին ուղիղ ճանապարհով դեպի բաղձալի նպատակը, իրար ճանաչեցնել

---

[780] Մարտ թէ ապրիլ, «Արմէնիա», թիվ 78, 1897:
[781] «Արմենիա», թիվ 9, 1897:

հայաստանցի ու այլ վայրերում բնակվող հայերին, գտնել ու համախմբել, միացնել հայրենիքի համար «մեռնելու ընդունակութիւն կամ յօժարութիւն ունեցող գործիչներին»[782]: Իսկ այդ ազգանվեր գործը կազմակերպելու համար գլխավոր «միջոցներէ մին ալ լրագիրն է, ճշմարտութիւնը խօսելու համար չվախցող լրագիրը», որը շարունակելում է իր կոչվը «մի միայն ճշմարտութեան և ազգի օգտին ծառայած լինելու փափաքով»[783]: «Արմէնիաի անցյալը երաշխատրութիւն մ' է իր ներկայի և ապագայի համար»,-անվարան հայտարարում էին թերթի խմբագիրն ու նրա փոքրաթիվ թիմի ներկայացուցիչները:

Հայ հասարակական-քաղաքական կյանքում հետաքրքիր զարգացումներ նկատվեցին հատկապես մեր ժողովրդի համար դժոխային 1894-1896 թթ. կոտորածներից հետո: Օսմանյան կայսրության եվրոպական տարածքները կորցրած սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը ոչ միայն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց ասիական տիրույթների վրա, այլև, ազատագրական շարժումների թափից սարսափած, որոշեց թուրքավարի, մարդակերությամբ «լուծել» մեծ տերությունների ձեռքին խաղաթուղթ դարձած և Թուրքիայի ներքին գործերին ցանկացած ժամանակ միջամտելու հնարավորություն ընձեռող Հայկական հարցը՝ առաջնորդվելով «չկա մարդ, չկա պրոբլեմ» հայտնի թեզով:

Կոտորածներն ընդգրկեցին կայսրության գրեթե բոլոր հայաշատ մասերը և խոր հիասթափություն ու հուսալքում առաջացրին հասարակության մեջ: «Հայկական յեղափոխութեան անունով հնչակեան և դաշնակցական կուսակցութիւնների արած տարաժամ և անպատրաստ շարժումներէն յետոյ,- ցավով արձանագրում է «Արմենիան»,- հիմա ալ յետադարձ շարժում մը վերսկսած է: 20 տարի յետ դառնալ կուզեն»[784]:

---

[782] «Նույն տեղում:
[783] «Արմէնիա», թիվ 9, 1897:
[784] Կեղծ յոյսերով չխաբուինք նորէն, «Արմէնիա», թիվ 18, 1897:

Հիասթափություն ապրող շրջանակներն սկսեցին թմբկահարել, թե հեղափոխության գաղափարը որքան աղետաբեր եղավ ազգի համար, ուստի անհրաժեշտ էր միայն դիվանագիտական միջոցների դիմել: Սակայն այդպես ասելով, նրանք ցույց էին տալիս, թե բուն հայկական հեղափոխական գործունեությունը «հնչակեան և դաշնակցական յեղափոխական գործունեութիւններէն զանազանելու չափ անկարող և միամիտ ենք դեռ»[785]: «Արմենիա»-ն այնքան չէր մեղադրում հնչակյան առաջնորդներին, ովքեր հայտարարել էին, թե հայկական հեղափոխական շարժումը գործածում են իբրև կամուրջ՝ իրենց բուն նպատակին հասնելու համար, այլ նրանց, որոնք այդ բացահայտ հայտարարությունը լսելուց հետո էլ օգնում ու նպաստում էին նրանց, ովքեր Թուրքիայում հայոց ազգային-ազատագրական շարժումներն օգտագործում էին իբրև կամուրջ՝ «ընկերվարական» նպատակներին հասնելու համար, թեկուզ որ դրանց արդյունքում «միամտաբար տարաժամ ուժասպառ են դարձնում հայ ժողովուրդը»[786]: Պարբերականը զարմանում ու զայրանում էր, որ Հնչակյան կուսակցությունից հուսախաբ եղած հետևորդների մի մասն էլ «այժմ Դաշնակցութեան կը հետևին, առանց նկատելու որ դաշնակցականներ ալ Հնչակեաններէն շատ տարբեր կրթութիւն և գաղափարներ ունեցող մարդիկ չէին»[787], կամ այլ խոսքով, չնայած անունների զանազանությանը, այնքան էլ մեծ չէին տարբերությունները նրանց ծրագրերի ու գործելու միջոցների միջև:

Ցավալի էր նաև այն, որ հեղափոխական գործի շատ նվիրյալներ ու հասարակ մարդկանցից շատ զոհեր տալով՝ որոշ քաղաքական ուժեր հետընթաց էին քարոզում՝ առաջարկելով հեռու մնալ հեղափոխական ուղուց և Հայաստանի ու հայ ժողովրդի ազատությանը հասնել դիվանագիտական ճանապարհով՝ առանց խրատվելու այդ ճա-

---

785 Կեղծ յոյսերով չխաբուինք նորէն. «Արմէնիա», թիվ 18, 1897:

786 Նույն տեղում:

787 Նույն տեղում:

նապարհի վնասակար լինելու ակնհայտ փաստից. «Նորէն տեսանք հիմա ալ թէ եւրոպական տէրութիւններին վրայ յոյս դնելը որչափ ա-ղետաբեր եղաւ մեզ համար»[788]: Պատասխանելով ընդդիմախոսնե-րին՝ «Արմենիա»-ն զգուշացնում էր, որ նույնիսկ չկամ օտարներն էին թուրքերին սովորեցնում, թե ինչ միջոցների դիմեին, որ կարողանա-յին երկիրը հեշտ կառավարել: Այսպես, Մ. Չերազի խմբագրությամբ լույս տեսնող «Լը Արմենիա» թերթը հաղորդում էր, որ Ֆրանսիայի արտգործնախարար Տ. Հանոթոն Փարիզում Փուրքիայի դեսպան Մ-յունիրին ասել է. «Օսմանեան կայսրութիւնը տկարացնողը իր երկրի մէջ զանազան ցեղեր և կրոնքներ չափազանց շատ լինելն է. համա-սեռ մի հզօր կայսրութիւն կազմելու համար մահմետականացուցէք ձեր ոչ մահմետականներ»[789]: Ահա այսպիսի խորհուրդների պայման-ներում Եվրոպային դիմումներ հղելով, նրա գթասրտությանն ապա-վինելով՝ հայ ժողովրդի փրկությունը հուսալը «հազար անգամ փոր-ձուած սխալի մը կրկնութիւնը կը լինի»,- վստահաբար եզրակացնում է «Արմենիան»:

Հայության համար այդ դժվարին ու ծանր պայմաններում, խոսե-լով կուսակցությունների մասին, Մ. Փորթուգալյանը գրում էր, որ ի-րենք չեն կիսում հայության մեջ տարածում գտած այն թյուր կարծի-քը, որ «կուսակցություն» բառը հոմանիշ էր դարձել «անմիաբանութ-յուն» հասկացությանը և երբեք «հակառակ չեն եղած այդ գաղափա-րին, այլ նոյն իսկ անհրաժեշտութիւն մը կը համարէն զայն»[790]: Թեր-թի կարծիքով պահանջել, որ բոլորը միանման մտածեն, ուղղակի ան-հեթեթություն էր, որովհետև մարդիկ տարբեր միջավայրի արդյունք էին, տարբեր կրթական մակարդակներ ունեին, կենցաղ, բարքեր, ճգտումներ և աշխարհայացք, հետևապես նաև՝ նպատակներ: Իսկ այդ տարբերությունները մարդկանց մղում էին դեպի տարբեր ծրագ-

---

[788] Կեղծ յոյսերով չխաբուինք նորէն, «Արմենիա», թիվ 18, 1897:
[789] Յարատեւութեան ոգին, «Արմենիա», թիվ 13, 1897:
[790] Ազգային գաղափարական կուսակցութիւններ, «Արմենիա», թիվ 10, 1899:

ներ որդեգրած քաղաքական կառույցներ, այդ թվում՝ կուսակցություններ, որպեսզի դրանց դրոշների ներքո դուրս գան պայքարի: Դրանում եղկելի ոչինչ չկար: Հայության դեպքում պարսավելին թերևս ժողովրդի ազատության պայքարին չսատարելն էր կամ տարաբնույթ ու չարդարացված գործողությունների դիմելը, անկախ նրանից, թե ինչ ծրագրերով էին նրանք հանդես գալիս: Թերթը բերում էր Հնչակյան կուսակցության օրինակը և ընդգծում, որ «Հայաստանի վերածնութեան գաղափարի և ազատութեան դատին որպէս թէ նուիրուած» այս կուսակցության գործողություններն ապացուցում էին, որ շատ դեպքերում «ազգայնական» գաղափարը երկրորդական կամ, ավելի ճիշտ, բուն ընկերվարական (սոցիալիստական) նպատակին հասնելու համար «ընտրուած իբր բազմաթիւ միջոցներէ մին կընդունէին»[791]: Այս իմաստով այդ կուսակցության նպատակի ընդամենը «մէկ մասը միայն դարձած էին Հայերու մաքառումները թիւրք տիրապետութեան դէմ», որոնք համամարդկային նոր ու լուսավոր մտապատկերների (իդեալների) համար պայքարին էին խառնված, և այդ կուսակցության հոգն էլ չէր, որ «քանի մը հարիւր հազար Հայեր կամ ամբողջ ազգ մը կրնար ոչնչանալ», գլխավորն իրենց գաղափարների տարածումն էր, թեկուզ «Հայի արեան հեղեղներով»[792]: Իհարկե, «Արմենիա»-ն ու նրա խմբագիրն իրենց մեղադրանքներում պատկերը խիստ չափազանցում էին, սակայն, անհերքելի է, որ երբեմն Հնչակյան և Դաշնակցություն կուսակցություններն իրենց հախուռն ու ցուցադրական գործելակերպով, անհաշվենկատ ու չպատճառաբանված քայլերով իսկապես լուրջ վնաս էին հասցնում ազգային-ազատագրական շարժմանը:

Ամենացավալին այն էր, որ այդ վիճահարույց ու վտանգավոր դրսևորումները տարածվել էին հայաշատ բոլոր վայրերում, հասել նույնիսկ հեռավոր Ամերիկա՝ մեծ վնաս հասցնելով ամերիկահայոց

---

791 Նույն տեղում:

792 Ազգային գաղափարական կուսակցութիւններ, «Արմէնիա», թիվ 10, 1899:

բարոյահոգեբանական վիճակին: Կուսակցամոլությամբ տառապելով՝ շատ գործիչներ մամուլի միջոցով կեղծիքներ էին սփռում ժողովրդի մեջ, մինչդեռ մամուլը «մեզ համար միտքը դաստիարակելու, ճշմարիտ գաղափարներ տարածելու, սուտին ու կեղծիքին դէմ մարտնչելու պաշտօնը միայն պէտք էր ստանձնէր»[793]: Իրենց գործերով նրանք ցույց էին տալիս, որ հանրային շահերը ստորադասում են «թայֆայական շահերին» և զգալի վնասում համազգային մտածողությանը:

Խոսելով յուրաքանչյուր անհատի պարտականությունների ու պահվածքի մասին՝ «Արմենիան» ահազանգում էր, որ ամեն մարդ իր հնարավորությունների սահմաններում, իրեն հասու ձևերով պիտի օժանդակեր առանց այն էլ զգալի հետընթաց ապրող ազատագրական պայքարի գործին: Առանց վարանելու թերթը հայտարարում էր, որ հայության համար այդ օրհասական շրջանում բոլորն անխտիր պիտի սատարեին ազատագրական շարժմանը, չեզոք մնալը «աւելի վատ է քան թէ նա որ կը պատկանի ոևէ կուսակցության», «ոչ մի կուսակցութեան չպատկանողը ցոյց կուտայ իր անտարբերութիւն», «չեզոք եմ» ըսելը՝ «ես չկամ, ես մարդ չեմ, ես Հայ չեմ» ըսել է»[794]:

Կուսակցությունների ու նրանց հետևորդների հարաբերություններին անդրադառնալով՝ «Արմենիան» բացատրում էր, որ եթե Հնչակյան կուսակցությանը շատերը հասկանալի պատճառներով կուրորեն հետևեցին և ակամա դարձան այդ կուսակցության ցուցադրական գործողությունների մեղսակիցներն ու զոհերը, ապա նույնը չի կարելի ասել դաշնակցականների մասին: Հետևությունը մեկն է. հայ ժողովուրդը գիտակցաբար նվիրվեց ու ամենաշատը նվիրաբերեց ՀՅԴ-ին, հետևապես բնական է նաև, որ նրանից առավելը պահանջեր, նրա յուրաքանչյուր սխալ դատապարտեր և նույնիսկ չներեր:

Հետագայում ևս, չնայած այն տխուր իրողությանը, որ Հնչակյան կուսակցությունը խիստ թուլացել էր, ըստ էության դադարել ազգա-

---

[793] Աղէտ մըն ալ այս է, «Արմէնիա», թիվ 34, 1906:

[794] Կուսակցական կեղծիք, «Արմէնիա», թիվ 52, 1898:

յին-ազատագրական պայքարում էական գործոն լինելուց, «Արմենիա»-ն երբեմն անդրադառնում էր «Ինչակյան» թեմային: Այսպես՝ «Հնչակը կրկին բուսաւ» հեգնախառն արտահայտությամբ թերթը գրում էր, որ իր սխալ ու մեղսալից գործունեությամբ ժողովրդի արդար վճռով «դատապարտոցեան արժանացած» այդ կուսակցությունը, փոխանակ ընդունելու իր ոչ ճիշտ գործելակերպն ու ներում հայցելու, նորից սկսել էր փառաբանել անցյալի իր սխալները և կրկին թմբկահարում էր արևմտահայ իրականության հետ ոչ մի իրական աղերս չունեցող սոցիալիզմի վարդապետությունը: Զարմանալի է նաև, նշում է «Արմենիան», որ «Հնչակը» իրեն համարելով «հայ ազգի զգացումների միակ և հաւատարիմ արտահայտիչը», գտնում էր, որ միայն ինքն է կարողացել ըմբռնել ոչ միայն ժամանակի պահանջները, այլև «հեռատր ապագայի հարցերը»: Արդարացնելու համար հայկական կոտորածները և «իր մեղսակից մասնակցութիւն դրանց մէջ», «Հնչակը» պարզաբանում էր, որ «այդ օղակներով անխուսափելի անցնում են բոլոր նորածին ազգերը»[795]՝ մոռանալով, որ հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, և դա ընդունում էին բոլորը: «Իրենց յիմար և փառասիրական ընթացքներով պատճառ տալով մեր ազգի թշնամիների անսիրտ ոտնձգութիւններին»[796], գրում էր «Արմենիան», մեր վայ հեղափոխականները մեծ վնասներ պատճառեցին թե՛ ժողովրդին, թե՛ ազատագրական շարժմանը, պարզապես վնասեցին նրա ողնաշարը, ինչի արդյունքում նաև ապագայում տեղի ունեցած ցավալի դեպքերից հայ ժողովուրդն անկարող եղավ ինքնապաշտպանվել, ինչպես հարկն է: Անկասկած, տեղին է ընդգծել, որ «Արմենիա»-ն սխալվում էր՝ պատճառը շփոթելով հետևանքի հետ, սակայն «Հնչակ»-ի պարագայում մյուս դատողությունները հիմք ունեին և միանգամայն պատճառաբանված էին:

---

[795] «Հնչակը», «Արմէնիա», թիվ 39, 1899:
[796] Նույն տեղում:

Հաճախ «Արմենիա»-ն, «մեծ նշանակութիւն մը չտալով», չէր էլ պատասխանում իր ընդդիմախոսներին: Սակայն տեսնելով, որ այդ արհամարհական լռությունից երես առնելով՝ ոմանք ավելի էին ոգևորվում և նույնիսկ «հայրենիքի սիրույն բոլորանուէր զոհուած նահատակների շիրիմներն ալ անամօթաբար սրբապղծել ելած են» և սուտ ու ստորաքարշ զրպարտություններ էին տարածում, ստիպված ինքն էլ էր պատասխանում, սակայն միայն զուսպ ու չափավոր, ինչպես վայել էր բարձրակարգ պարբերականին: Նշվում էր, որ «Հնչակեանութեան նախահայր Նազարբեկեան» և իր կողմնակիցները, որոնք հենց սկզբից հոդվածներ էին գրում ու տպագրվում «Արմենիայում», չէին ուրանում այդ թերթի կատարած հայրենանվեր աշխատանքը[797]:

Իհարկե, «Արմենիա»-ի ու Մ. Փորթուգալյանի ընդդիմախոսները ևս պարտքի տակ չէին մնում և հաճախ ոչ միայն պատասխանում էին նրան, այլև երբեմն կատաղի հարձակումներ գործում, անխնա, ոչնչացնող քննադատության էին ենթարկում Մ. Փորթուգալյանին ու նրա հետևորդներին: Այսպես օրինակ՝ նորելուկ պարբերականներից «Ազատ բեմը», կորցնելով ամեն տեսակի չափ ու սահման, գրում էր. «Հայ ազատագրական ոգիին նախազարթոյցները յորջորջուած երկու բրածոյ դէմքեր, Չերազ և Փորթուգալեան, երբեմնի յեղափոխականներ, որոնք իրենց ժամանակին պահանջմանց լաւ կամ գէշ գոհացում տալէ վերջ, փոխանակ իրենց դերը լրացրած համարելու և ասպարէզէն քաշուելու, շարունակած են խառնել իրենց աններդաշնակ ձայնը՝ նոր եղանակներուն»[798]:

Ավելին, այդ նույն «Ազատ բեմը» իրեն թույլ էր տալիս անարգել հայ ազգային- ազատագրական շարժման առաջին նահատակների հիշատակը, ինչ առաջացրել էր Մ. Փորթուգալյանի միանգամայն իրավացի զայրույթը: Խնդիրն այն էր, որ Մ. Ավետիսյանին հանիրավի

---

[797] Մի քանի դատողություններ «Ազատ բեմ»ի գրածներին առթով, «Արմենիա», թիվ 37, 1906:

[798] «Արմենիա», թիվ 38, 1906:

հանդես բերելու դեպքերում միայն: Իսկ ահա թե ինչպիսի «քննադատությամբ» էին հանդես գալիս նրա ընդդիմախոսները: «Արմենիա» թերթն անվանելով «Մարսեյլի մամուլի բրածոյ», «խանութ թերթ», «աւելորդ բեռ եղող թերթ մը իր սին մոլտուքներով», «ազգին մէջ երկպառակութիւններ ծագեցունելէ անդին դեր չէ ունեցած», «իրատունք ունի անդառնալի կերպով յուսահատելու Արմենիէն», «հայութեան ամենէն արիւնալի և տագնապալից օրերուն մէջ իր ճակատը գրած է բաժանորդագրութեան ծանուցումը», «համբաւատր գանձանակի փայլուն ծանուցումներ գրած է», իսկ Մ. Փորթուգալյանին ոչ ավել, ոչ պակաս՝ «Ծեր աղուես որ 13 տարի յաջողած է Ազգը խաբել», «իր արդար պատիժը գտած է անպէտք խլեակի մը լքուելով Միջերկրականի ափերուն վրայ», «լիրբ», «հնօրյայ աճպարար»[802] և այլն, և այլն:

Իհարկե, պետք չէ երբեք գերագնահատել որևէ գործչի ու նրա կատարած ծառայությունները հայրենիքի հանդեպ: Սա լիովին վերաբերում է նաև Մ. Փորթուգալյանին, նրա հոգեզավակ «Արմենիա»-ին ու նրա հետևորդներին: Սակայն երբեք պետք չէ նաև անտեսել ու անուշադրության մատնել բոլոր նրանց, ովքեր, մոռանալով անձնականն ու սեփական վայելքները, ամբողջովին ու կամավոր հրաժարվելով բոլոր տեսակի աշխարհիկ հաճույքներից, նետվել են ազատագրական պայքարի հորձանուտը՝ փորձելով փրկել կամ գոնե ինչոր չափով օգտակար լինել սեփական ժողովրդին: Ամենահեշտը քննադատել, սխալներ գտնելն ու պախարակելն է, ինչն իր հերթին քննադատելի է: Հատկապես պատմական հեռվից, փափուկ նստարանների վրա նստած, կուշտ ու անխռով, բազմախորհուրդ մտքերով ու հարուստ բառապաշարով նախկին գործիչների թույլ տված վրիպումներն ու ոչ ստանդարտ, որևէ գաղափարական «իզմի» շրջանակներում չտեղավորվող քայլեր «բացահայտելն» ու քննադատելն, անկասկած, այսօր միայն վնասում են մեր ընդհանուր ազգային հո-

---

[802] Մի հայհոյիչ թերթ, «Արմենիա», թիվ 60, 1898:

հանդես բերելու դեպքերում միայն: Իսկ ահա թե ինչպիսի «քննադատությամբ» էին հանդես գալիս նրա ընդդիմախոսները: «Արմենիա» թերթն անվանելով «Մարսեյլի մամուլի բրածոյ», «խանութ թերթ», «աւելորդ բեռ եղող թերթ մը իր սին մոլտուքներով», «ազգին մէջ երկպառակութիւններ ծագեցունելէ անդին դեր չէ ունեցած», «իրատունք ունի անդառնալի կերպով յուսահատելու Արմենիէն», «հայութեան ամենէն արիւնալի և տագնապալից օրերուն մէջ իր ճակատը գրած է բաժանորդագրութեան ծանուցումը», «համբաւատր գանձանակի փայլուն ծանուցումներ գրած է», իսկ Մ. Փորթուգալյանին ոչ ավել, ոչ պակաս՝ «Ծեր աղուես որ 13 տարի յաջողած է Ազգը խաբել», «իր արդար պատիժը գտած է անպէտք խլեակի մը լքուելով Միջերկրականի ափերուն վրայ», «լիրբ», «հնօրյայ աճպարար»[802] և այլն, և այլն:

Իհարկե, պետք չէ երբեք գերագնահատել որևէ գործչի ու նրա կատարած ծառայությունները հայրենիքի հանդեպ: Սա լիովին վերաբերում է նաև Մ. Փորթուգալյանին, նրա հոգեզավակ «Արմենիա»-ին ու նրա հետևորդներին: Սակայն երբեք պետք չէ նաև անտեսել ու անուշադրության մատնել բոլոր նրանց, ովքեր, մոռանալով անձնականն ու սեփական վայելքները, ամբողջովին ու կամավոր հրաժարվելով բոլոր տեսակի աշխարհիկ հաճույքներից, նետվել են ազատագրական պայքարի հորձանուտը՝ փորձելով փրկել կամ գոնե ինչոր չափով օգտակար լինել սեփական ժողովրդին: Ամենահեշտը քննադատել, սխալներ գտնելն ու պախարակելն է, ինչն իր հերթին քննադատելի է: Հատկապես պատմական հեռվից, փափուկ նստարանների վրա նստած, կուշտ ու անխռով, բազմախորհուրդ մտքերով ու հարուստ բառապաշարով նախկին գործիչների թույլ տված վրիպումներն ու ոչ ստանդարտ, որևէ գաղափարական «իզմի» շրջանակներում չտեղավորվող քայլեր «բացահայտելն» ու քննադատելն, անկասկած, այսօր միայն վնասում են մեր ընդհանուր ազգային հո-

---

[802] Մի հայհոյիչ թերթ, «Արմենիա», թիվ 60, 1898:

գեբանությանն ու ձգտումներին: Ընդհակառակը, հարկավոր է վեր հանել, մեծարել հայ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաներին և նրանց կատարած գործերը, արժանին մատուցել նրանց հիշատակին՝ փողոց, դպրոց, գրադարան կամ որևէ այլ հաստատություն անվանելով նրանց անունով, հուշարձանի կամ ծառուղու տեսքով ապահովելով նրանց ցանկալի ներկայությունն ու նրանց դաստիարակող, վարակիչ օրինակը երիտասարդ սերունդների համար, հատկապես մեր օրերում, երբ դրա կարիքը մենք խիստ զգում ենք: Դա վերաբերում է նաև ազատագրական պայքարի նվիրյալ տեսաբան Մ. Փորթուգալյանին ու «Արմենիա»-ին:

4.3. Արևմտահայության վիճակի բարեփոխումների վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումների լուսաբանումը «Արմենիա»-ում

«Արմենիա» թերթն ու նրա խմբագիրը, շարունակաբար հետամուտ լինելով հայոց ազատագրության խնդիրը լուծելուն, մշտապես իրենց ուշադրության կենտրոնում էին պահում և հաճախ անդրադառնում հայ ժողովրդի տարբեր հատվածների կյանքին ու նրան հուզող խնդիրներին: Այս կարևոր հիմնահարցի շուրջ իրատեսական մոտեցումներով տեսական-քաղաքական բնույթի հրապարակումներ էր ունենում թերթի խմբագիր Մ. Փորթուգալյանը, ինչպես նաև տարբեր գաղթօջախներ ու քաղաքական հայացքներ ներկայացնող գործիչներ: Գաղտնիք չէր, որ մեծությամբ երկրորդը՝ արևմտահայ հատվածից հետո, արևելահայ հատվածն էր, որը գտնվում էր Ռուսական կայսրության կազմում: Ճիշտ է, արևելահայերի վիճակն այնքան սարսափելի չէր, որքան արևմտահայերինը, սակայն նրանք էլ էին ենթարկվում տնտեսական ու ազգային ճնշումների այն հարաբերակցությամբ ու տարբերությամբ, որպիսիք առկա էին Ռուսական և Օսմանյան կայսրությունների զարգացման մակարդակներում: Ամենա-

կարևոր տարբերությունը, թերևս, այն էր, որ արևելահայերին ֆիզիկական ոչնչացման վտանգ չէր սպառնում:

Տնտեսական, քաղաքական, ազգային և մի շարք այլ առումներով ռուսահայերը ևս կրում էին գաղութատիրական բռնապետության ծանրությունը, քանզի Ռուսաստանը նույնպիսի բազմազգ պետություն էր՝ իր կայսերապաշտական շահերին ամեն ինչ ստորադասելու կարևոր հատկությամբ: Հատկապես նվաճված ժողովուրդների ձգտումներն ու երազանքներն էին, որոնք կարող էին ցանկացած պահի զոհաբերվել ու անտեսվել: Այդ ամենով հանդերձ, բոլորովին չանտեսելով Ռուսաստանի վարած արտաքին ու ներքին քաղաքականության՝ հայ ժողովրդի նկատմամբ բացասական դրսևորումները, չպետք է մոռանանք նաև, որ հայությունն, առանց քրիստոնյա որևէ հզոր տերության հովանավորության իրեն նետված մարտահրավերներին միայնակ դիմագրավել այլևս չէր կարող: Ժողովուրդը գիտակցում էր այդ հանգամանքը, դրա համար էլ շարունակում էր իշխել ռուսական կողմնորոշումը: Անհատները սխալվել կարող են, սակայն մի ամբողջ ժողովուրդ՝ ոչ: Հետևաբար, այսօրվա հեռվից աղավաղելով փաստերը՝ դատապարտել ռուսական կողմնորոշման ջատագովներին, այնքան էլ տեղին չէ:

Արդարությունը պահանջում է ասել, որ արևելահայ մտավորականությունը հայության հոլովույթում պատկերացնում էր հիմնականում արևմտահայությանը, իսկ Հայաստան՝ Արևմտյան Հայաստանը: Ի դեպ, հայ ազգային կուսակցություններից ոչ մեկի ծրագրում էլ հատուկ շեշտված չէր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության համար են պայքարելու[803], սակայն մեր ողջ ազատագրական շարժումը, XIX դարի կեսերից սկսած, ուղղված էր նախ և առաջ մեկ հիմնա-

---

[803] Օրինակ՝ արմենականների ծրագիրը «չի ճշդեր տակաւին, թե Արմենական կուսակցութեան դաշտը կը սահմանափակուէր օսմանեան Հայաստանի՞ թ՞ե կը տարածուէր նաեւ Ռուսահայաստանի եւ Պարսկահայաստանի վրայ»: Տե՛ս Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 51:

կան հարց լուծելու, և դա Արևմտյան Հայաստանի ազատագրությունն էր: Քննարկման այլ թեմա է, որ նրանք այդ ազատությանը հասնելու տարբեր ուղիներ էին ընտրել: Նույնիսկ «հեղափոխություն» հասկացությունը, որ օգտագործվում էր զուտ ազատագրական պայքարի իմաստով, կոչված էր նախ և առաջ Արևմտյան Հայաստանը թուրքական բռնատիրությունից ազատագրելու:

Այս ամենն, իհարկե, չէր կարող նշանակել, թե Արևելյան Հայաստանում ամեն ինչ հարթ էր ու փայլուն, իսկ Ռուսական կայսրությունն էլ՝ դրախտ հպատակ ժողովուրդների համար: Հենց այս մոտեցումներն էին գերակշռում «Արմենիայի» ու նրա տեսաբանների հրապարակումներում: Դարավերջին իր ընդգծված հակահայ քաղաքականությամբ աչքի ընկած Ռուսաստանն ու նրա վարչակարգը թերթի քննադատության թիրախը դարձան: Հատկապես ռուսական կառավարության կողմից հայոց եկեղեցու հողերի բռնագրավման վերաբերյալ հայտնի իրավական ակտը խիստ զայրացրեց աշխարհասփյուռ հայությանը: Հայեցի գրեթե բոլոր պարբերականներն իրենց ձայնը բարձրացրին հօգուտ հայոց եկեղեցու դարավոր իրավունքների պաշտպանության: Դրանց թվում և առաջին շարքերում էր նաև «Արմենիան»:

Տարբեր հրապարակումներում «Արմենիան» ու նրա տեսաբանները, պատմական էքսկուրսներ կատարելով, տարաբնույթ փաստեր վկայակոչելով, ցույց էին տալիս, ապացուցում, որ Ռուսաստանը, XVIII դարից սկսած, հետապնդել է մեկ նպատակ՝ գրավել պատմական Հայոց աշխարհը և դրա վրայով առաջանալ դեպի տաք ջրեր: Իսկ թե այդ առաջխաղացման ճանապարհին ովքեր ու ինչ ժողովուրդներ էին բնակվում, և ինչպիսի փորձությունների նրանք կենթարկվեին, դա ամենաքիչն էր նրան հետաքրքրում: Կարևորը Ռուսաստանի համար այն էր, որ այդ նվաճումները կազմակերպվեին ազատարարի կերպարով, իսկ տեղացի ժողովուրդները «խաղաղ ննջեին այդ քաղցր

մեղեղու ներքո» և իրենց հնարավորություններով ոչ միայն նպաստեին, այլև սատարեին ռուսական զենքի հաղթանակին:

Իսրայել Օրու ժամանակներից սկսած՝ հայ ժողովուրդն աստիճանաբար հայացքը հառում էր դեպի հյուսիս և իր ազատաբաղձ ձգտումների հավանական սատարողի դերում տեսնում Ռուսաստանին: Իսկ դա նշանակում էր, որ ամեն անգամ, երբ հայությունը ենթարկվում էր մի նոր փորձության, թեքվում էր հյուսիս և իր փրկությունն այնտեղից ակնկալում: Ռուսաստանի կառավարիչներն էլ կարողանում էին վարպետորեն օգտվել դրանից ու հայ ժողովրդի նվիրական ձգտումներն օգտագործել ի շահ իրենց երկրի: Իհարկե, հայերի մեջ քիչ չէին նաև ոչ ռուսանպաստ մղումները, սակայն ամեն անգամ գերիշխողը դարձյալ մնում էր ռուսական կողմնորոշումը:

XIX դարի կեսերից նոր թափ առած ազգային-ազատագրական շարժումն սկզբից ևեթ նպատակ էր հետապնդում ազատագրել արևմտահայությանը թուրքական բռնատիրությունից և հաջողության դեպքում վերստեղծել հայկական պետությունը: Այդ նկրտումներին Օսմանյան կայսրությունը վերաբերում էր միանշանակ մերժողական դիրքորոշմամբ, իսկ Ռուսաստանն առերևույթ քաջալերում էր: Սակայն ոչ հուսալի դաշնակից դարձած Բուլղարիայի (որին անկախություն էր շնորհվել Ռուսաստանի նյութական և մարդկային մեծ զոհողությունների գնով) օրինակից զգուշանալով՝ Ռուսաստանը XX դարի սկզբին շահագրգռված չէր սահմանակից անկանխատեսելի Հայաստան ստեղծելով: Նրան լոբանովյան ձևակերպմամբ Հայաստանը պետք էր առանց հայերի[804]: «Արմենիա»-ն հաճախ էր անդրադառնում այդ խնդրին, տպագրում տարբեր, նույնիսկ իրարամերժ տեսա-

---

[804] Պատմագիտական գրականության մեջ քաղաքացիություն ստացած այս ձևակերպումը հարցի խորագիտակ հետազոտող ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի պնդմամբ գրավոր աղբյուրներում չկա (այս մասին մի քանի անգամ նա հայտարարում էր ԳԱԱ ՊԻ գիտխորհրդում ունեցած բանավոր ելույթներում), սակայն այնքան է այն շրջանառվել և համահունչ է այդ շրջանում Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությանը, որ կարելի է համարել՝ այն հեռու չէ իրականությունից:

կետներ պարունակող հոդվածներ և փնտրում, փորձում էր ստեղծված կացությունից դուրս գալու լավագույն լուծումները գտնել: Բավական մանրամասն ու հետաքրքիր եզրահանգումներ պարունակող հոդվածաշար է նվիրել «Արմենիա»-ի գլխավոր տեսաբան Մ. Փորթուգալյանը: «Մեր յոյսեր» խորագրով հոդվածաշարում նա քննարկում է հայության վիճակը հայ հեղափոխական առաջին բռնկումներից ու հիասթափություններից հետո: Այն, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը տարափեղկված էին Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, ըստ իրենց ընդդիմախոսների պնդումների, իբր հետևանք էր մեր ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքի: Այսինքն՝ մեր աշխարհագրական աննպաստ դիրքն էր եղել պատճառը, որ դեռևս հին ժամանակներից սկսած՝ չորս կողմից շարունակաբար արշավել են Հայաստան, որի պատճառով հայերը «չեն կրցեր մէկ զօրատոր թագատրութիւն ունենալ և միշտ ոտքի տակ են գնացեր»[805]: Այժմ, շարունակում է իր միտքը Մ. Փորթուգալյանը, բոլորը նորից Հայաստան են բղավում ու պահանջում, բայց ո՞վ առանց արյան թեկուզ մեկ թիզ հող կգիջի:

Ռուսաստանի ցար Պետրոս Մեծի «կտակով»[806] ծրագրված էր, որ «Ռուսիա պէտք է որ Հայաստանը առնէ Թիւրքին ձեռքէն» և խո-

---

[805] Մեր յոյսեր, «Արմենիա», թիվ 59, 1894:

[806] Իրականում «Պյոտր Մեծի կտակը» միտումնավոր հորինված քաղաքական կեղծիք է, որը կազմել են ֆրանսիացիները: Ժամանակակից կանադացի պատմաբան Օրեստ Սուբտելնու հիմնավորմամբ ապագա «Կտակի» առանձին դրույթներ ի հայտ են եկել դեռևս 1706 թ. Տրանսիլվանիայի իշխան Ֆերենց II Ռակոցիի դեսպանորդների, 1710 թ. Ֆիլիպ Օռլիկի, այնուհետև Փարիզում լեհ Չարտորիյսկի իշխանների ժողովում: Կտակի վերջնական տարբերակը կազմել են լեհ վտարանդի գեներալ Միխալ Սոկոլնիցկին և ֆրանսիացի հրապարակախոս Շարլ Լուի Լեզյուրը: Վերջինս «Կտակը» առաջին անգամ ֆրանսերենով հրատարակել է 1812 թ. դեկտեմբերին Փարիզում՝ Նապոլեոն Բոնապարտի ռուսական արշավանքի ձախողումից հետո «Ռուսական հզորության աճի մասին դրա սկզբից մինչև 19-րդ հարյուրամյակը» գրքում: «Կտակի» ամբողջական տարբերակը լույս է տեսել 1836 թ. Ֆ. Գայյարդի կողմից և քարոզչական նպատակներով օգտագործվել Ղրիմի (Արևելյան) պատերազմի տարիներին: Փաստաթուղթը պարունակում է 14 հիմնական կետ, որոնցից 9-րդ կետում ասվում է. «Որքան հնարավոր է շարժվել դեպի Կոստանտինոպոլիս և Հնդկաստան (դրանց տիրապետո-

հեմությամբ շարունակելով այդ քաղաքականությունը՝ կամաց-կամաց, բայց միշտ հաստատուն քայլերով առաջ էր ընթանում, քանզի Ռուսաստանում կայսրերն ու նախարարները հաջորդում էին իրար, սակայն մեկ անգամ գծված քաղաքականությունը մնում էր անփոփոխ և շարունակվում դարերով: Հայերն էլ իրենց պահվածքով նպաստում էին այդ առաջխաղացմանը, որովհետև ռուսահայերը միշտ ավելի գերադասելի վիճակում էին, քան Օսմանյան կայսրությունում ապրող հայերը: 1894 թ. վկայակոչելով պաշտոնական տվյալները՝ Մ. Փորթուգալյանը նշում էր, որ եթե Օսմանյան կայսրությունում հայերի թիվը հետզհետե նվազում էր, ապա Ռուսաստանում բնակվողներինը ավելանում է. «մէկ ժամանակ 500, 000 Հայ կար Ռուսիայի մէջ, հիմա մէկ միլիոնն ալ անցեր է այնտեղ Հայերի թիւը»[807]: Պատճառն, իհարկե, ավելի նպաստավոր պայմաններն էին, առավելապես, որ այստեղ բացակայում էին թուրքերի ու քրդերի հայաջինջ գործողությունները: Այնպես որ, եթե հայերն իրենց ազգային անկախությունն ունենան իրենց երկրի մեջ, «որչափ ալ մեծ զոհերով ու կոտորածներով ծեռք բերուած լինի այդ անկախութիւն, պակսած-

---

ղը կտիրապետի աշխարհին): Այդ նպատակով հրահրել մշտական պատերազմներ Թուրքիայի և Պարսկաստանի դեմ, ստեղծել նավահանգիստներ Սև ծովում, աստիճանաբար տիրել այդ ծովին, ինչպես նաև Բալթիկ ծովին, քանի որ դրանք անհրաժեշտ են հետևյալ պլանի կենսագործման համար՝ նվաճել Պարսկաստանը, հասնել մինչև Պարսից ծոց, վերականգնել, եթե հնարավոր է, հնագույն առևտուրը Միրիայի վրայով Լևանտայում և հասնել Հնդկաստան՝ որպես համաշխարհային հումքի կետ»: Ինչպես հետևում է այս տեքստից, խոսքը միայն Բոսֆոր և Դարդանել նեղուցներին տիրելու մասին չէ: Բացի այդ, փաստաթղթում բացակայում է «տաք ջրեր» արտահայտությունը: Քաղաքագետներն ու պատմաբանները սովորաբար «տաք ջրեր» ասելով նկատի ունեն Հնդկական օվկիանոսն ու Պարսից ծոցը և ոչ միայն Բոսֆորն ու Դարդանելը: «Կտակը» հորդորում էր Պյոտր Մեծի ժառանգորդներին անընդհատ պատերազմների և դիվանագիտական խարդավանքների ճանապարհով Ռուսաստանին ենթարկել ամբողջ Եվրոպան, բաժանել Լեհաստանը, չեզոքացնել Թուրքիային, նվաճել Հնդկաստանը և հաստատել Եվրասիական գերիշխանություն:

[807] Մեյ յոյսեր, «Արմենիա», թիվ 59, 1894:

ներին ու մեռածներին տեղը շուտով կը լեցուի և կաւելնայ ալ»[808], եզրակացնում է Մ. Փորթուգալյանը:

Շարունակելով խոսել աշխարհագրական դիրքի գործոնի մասին՝ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ Հայաստանը ռազմավարական տեսակետից գերադասելի դիրքում է, մեծ կարևորություն ունի և դրա համար է, որ բոլոր տերությունները, որոնք քիչ թէ շատ «ոյժ զգացեր են իրենց մէջ և Հայերը տկար ու յուսահատ վիճակի մէջ տեսեր են, եկեր աշխատեր են այդ կարեւոր կէտ իրենց ձեռք անցունել»: Եվրոպայի և Ասիայի սահմանագլուխներին մոտ գտնվող իր միջնաշխարհային դիրքով Հայաստանը հարմար էր հաղորդակցության տեսակետից և հնարավորություն էր ընձեռում «այդ արգաւանդ երկրի մէջ ապրող ժողովրդի հարստանալուն և լեռներով պատսպարուած և Սեւ ու Միջերկրական ծովերին մօտը գտնուած այդ երկրի իշխող տէրութեան ալ ընդարձակուելուն համար»[809]:

XX դարի սկզբին տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ, որոնցից ամենակարևորը, թերևս, զարգացած երկրներում գիտաարդյունաբերական կտրուկ վերելքն էր: Հատկապես այն երկրները, որոնք, մասնատված ու թույլ լինելով, չէին մասնակցել աշխարհի բաժանմանը, հայտ ներկայացրին աշխարհը վերաբաժանելու և իրենց տեղն «արևի տակ» ապահովելու համար: Աշխարհի հզորներից յուրաքանչյուրը, հետապնդելով իր անմիջական շահերը, հնարավոր նախապատրաստվում էր մոտալուտ պատերազմին: Ռուսաստանը նրանց առաջին շարքերում էր և նպատակ ուներ շարժվելու դեպի հարավ ու դուրս գալ տաք ջրեր՝ իր ճանապարհին տիրանալով Բոսֆոր և Դարդանել նեղուցներին և Արևմտյան Հայաստանին ու Կիլիկիային: Այս փաստը շատերին առիթ էր տալիս ասելու, որ եթե Ռուսաստանն ի վերջո գրավելու է Հայաստանը, ապա ի±նչ իմաստ ունի հեղափոխական պայքար մղել ու անիմաստ զոհեր տալ: Դրանց ի

---

[808] Մեր յոյսեր, «Արմէնիա», թիվ 65, 1894:

[809] Նույն տեղում:

պատասխան՝ Մ. Փորթուգալյանը գրում էր, որ եթե բուլղարներն այդպիսի խոսքերին նշանակություն տային, ապա վաղուց պիտի դադարեին պայքարել ազատության համար, քանի որ «Ռուսին դէպի Եւրոպա արշաւելու գծին վրայ կը գտնուին, կրօնքով, ցեղով, լեզուով և երախտագիտական զգացումներով Ռուսին կապուած են, անկէ կլանուելու համար Հայերէն շատ աւելի յարմարութիւններ ունեցող, այդպիսի խօսքերի ականջ դնելով յոյսահատուեցան երբէք իրենց հայրենիքի ազատութեանը համար աշխատելէ. ընդհակառակ, ջանացին օգուտ քաղել Ռուսին վերագրուած այդպիսի ձգտումներէն»[810]:

Բուլղարների օրինակը հայերին ուսուցանում էր, որ այն ազգը, որը ապրելու ցանկություն և գիտակցությունն ունի, այդքան հեշտ չի ոչնչանա և հեռանա պատմության թատերաբեմից: Այնպես որ, ընդգծում էր հոդվածագիրը, պետք չէ անընդհատ կասկածանքով նայել ռուսին, այլ հարկավոր է ավելի խոհեմ ու շրջահայաց լինել, շահել նրա բարեհաճությունն ու օգուտներ քաղել դրանից: Հարկավոր էր նաև, որ հայն էլ պատրաստ լիներ ինքնուրույն ապրելուն, թե չէ ինչպես եղավ 1878 թ., երբ պատրաստ չէինք դրան, դրա համար էլ ստացանք միայն «Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածը, այն ալ դարձեալ Ռուսիայի նախաձեռնութեամբը Սան Ստէֆանոյի դաշնագրին միջոցաւ»[811]:

Մ. Փորթուգալյանը, պարզ ու հստակ ներկայացնելով XIX և XX դարերի սահմանագծին գոյություն ունեցող վիճակը, ցույց է տվել, որ հայ հասարակական- քաղաքական շրջանակները՝ մոռանալով, որ Հայաստանն իր հարստահարված վիճակից ազատելու համար գործի ասպարեզը հենց բուն երկրում է[812], հիմնական՝ բաժանված էին անգլիասերների և ռուսասերների խմբերի[813]: Նրանք առանձին-ա-

---

[810] Մեր յոյսեր, «Արմէնիա», թիվ 67, 1894:

[811] Նույն տեղում:

[812] Ադունց Ն., Հայկական հարց, Երևան, 1996, էջ 55:

[813] Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների ունեցած վերաբերմունքի մասին շահեկան հոդված է հրապարակել Ա. Կարապետյանը, սակայն այն ներառում է

ռանձին ներկայացնում են հօգուտ ու ի վնաս այդ երկու հզոր տերութիւններին հարելու դրդապատճառները, որովհետև «հայենական խնդրով ամենէն աւելի շահագրգռուողները եւրոպական տէրութիւններէն այս երկուքն էին հիմնականում»[814]:

Թեր ու դեմ պնդումներն ի մի հավաքելով՝ հոդվածագիրն արձանագրում է, որ Անգլիայի կողմը հակվողները, Ռուսաստանի և Հայաստանի վերջին երկու հարյուր տարվա պատմությանը դիմելով, կարծում են, որ հայ ազգն այդ ժամանակամիջոցում ամեն ինչ արել է, որպեսզի ռուսական քաղաքականությունը տարածվի Հայաստանում: Նրանք հավատարմությամբ և անձնազոհությամբ ծառայություններ մատուցեցին ռուսական կայսրությանը դեպի Հայաստան տարածվելու համար: Սակայն դեռևս Պետրոս Մեծից սկսած՝ ամեն անգամ հայերի ծառայություններից օգտվելուց հետո ռուսները հետ էին քաշվում՝ «Հայերը բոլորովին մինակ թողելով բարբարոս թշնամիների առջեւ»[815]: Այդպիսի իրավիճակներ եղան շատ անգամներ, և ամեն անգամ հայությունը ենթարկվում էր լուրջ փորձությունների՝ տալով հսկայական նյութական և մարդկային կորուստներ: «Մի±թէ պատմական այնչափ փորձերէ ու փորձանքներէ յետոյ,- հարցնում էին անգլիասերների կուսակցության հետևորդները,- տակաւին կարելի է Ռուսիաի վրայ յոյս դնել»[816]: Երբ անթաքույց է նաև այն իրողությունը, որ ռուսաց կառավարությունը բոլորովին կազմալուծեց հայկական ինքնավարության պոտենցիալ միջուկը՝ հայոց մելիքությունները: Անթաքույց էր, որ Հայաստանը ռուսների համար հետաքրքրություն էր ներկայացնում լոկ իրենց նեղ ազգայնամոլ շահերի տեսանկյունից, և ցարիզմը վերոնշյալ նկրտումներով ցանկանում էր գրավել Հայաս-

---

միայն 1894-1895 թթ., իսկ թերթի հետագա տարիների այդ թեմայով հրապարակումներին չի անդրադարձել: Տե՛ս Կարապետյան Ա., Մեծ տերությունների քննադատությունը «Արմենիա»-ի էջերում 1894-1895 թթ., ՊԲՀ, թիվ 1, 2014, էջ 101-107:

[814] Ռուսիա, Անգլիա եւ Հայաստան, «Արմենիա», թիվ 39, 1894:

[815] Նույն տեղում:

[816] Նույն տեղում:

տանը մինչև Կիլիկիա և դուրս գալ տաք ջրեր: Այսինքն՝ Ռուսաստանի շահը պահանջում էր Թուրքիայից խլել Արևմտյան Հայաստանը: Իսկ Անգլիան հակառակվում էր, քանզի այն կտրուկ հակասում էր իր շահերին: Անգլիային ձեռնտու էր, որ Թուրքիան մնար ուժեղ պետություն ու ամուր պատվար դառնար ռուսական այդ նկրտումների դեմ: Հետևապես, անգլիասերների կարծիքով ավելի խելացի կլիներ, եթե հայերը հույսները դնեին Անգլիայի օգնության վրա:

Ռուսասերների կուսակցությունն էլ բերում էր իր փաստարկները: Ըստ նրանց պնդումների, նախ՝ Անգլիան, որ «Հայաստանեն շատ հեռու է մեզ պաշտպանելու համար և սովորություն չունի տկար ազգերին օգնելու»[817], բոլոր ժամանակներում, խոսելուց բացի, հոգուտ Հայկական հարցի արդարացի լուծման որևէ քայլ չէր կատարել, մինչդեռ Ռուսաստանի «լախտը հաճախ է իջած Թիւրքի գլխին, անոր խօսք հասկցունելու համար»[818]: Բեռլինի վեհաժողովում վավերացված 61-րդ հոդվածն էլ ռուսները նվիրեցին հայերին, նրանք էին, որ սաստում, զսպում էին թուրքերին և կանխում շատ վայրագություններ: Երբեմն խոսում են այն մասին,- փորձում էին փաստել անգլիասերները,- որ ռուսական եկեղեցին ձգտում է օրթոդոքս դարձնել հայերին: Իսկ իրականում այդ ուղղությամբ ռուսները ոչ մի քայլ չէին արել: Իսկ, այ, անգլիացիները զանազան անունների ներքո հաճախ ողողում էին Հայաստանը միսիոներական խմբերով՝ քարոզարշավներ կազմակերպելով հոգուտ անգլիկանության: Այնպես որ, եզրակացնում էին նրանք,- պետք չէ խեթ նայել ռուսների վրա, այլ հարկավոր է որքան հնարավոր է օգտվել նրանց բարեհաճությունից:

Մ. Փորթուգալյանը պատասխանելով երկու թևերին՝ հայտարարում էր, որ «մեր կուսակցութեան նշանաբանն է Հայը Հայաստանին և Հայաստանը Հային»[819]: Նա աերկբա հասկացնում էր ընթերցողնե-

---

[817] «Արմենիա», թիվ 44, 1894:
[818] Նույն տեղում:
[819] Ռուսիա, Անգլիա եւ Հայաստան, «Արմենիա», թիվ 44, 1894:

ին, որ հայությունը պետք է կարողանա համախմբվել և կարելվույն չափ պաշտպանել իր շահերը, հակառակ դեպքում օտարները հային կօգտագործեն լոկ իրենց շահերի համար: Մ. Փորթուգալյանը կատարում է շատ ուշագրավ եզրակացություն, ըստ որի՝ «Հանգամանքների և օրուան պահանջներին համեմատ կը փոփոխվի այդ տերութիւնների դեպի մեզ ցոյց տված քաղաքականութիւնը. միայն թե մենք պետք է այն վիճակի մեջ գտնվինք, որ կարենանք ազդել այդ քաղաքականութեան վրա»[820]: Աստիճանաբար սկզբնական շրջանում եվրոպական տերությունների հանդեպ առավել մեղմ մոտեցումները, 1894–1895 թթ. Արևմտյան Հայաստանում ընդհանուր իրավիճակի վատթարացմանը զուգահեռ դարձան առավել կարծր ու արմատական: Նրա կարծիքով անհրաժեշտ էր, որ հայը բոլոր դեպքերում հույսն իր վրա դներ: Եթե հայն ինքը պատրաստ չլինի իր հայրենիքին տեր կանգնելու, ապա օտարի միջամտությունը՝ լինի այդ օտարը ռուս կամ անգլիացի կամ մեկ ուրիշը, ոչ մի օգուտ չի տա: Պետք էր գիտակցել նաև, որ հանգամանքների փոփոխությանը զուգընթաց կարող էին փոխվել տերությունների կողմից մեր հանդեպ ցույց տրված վերաբերմունքը, պարզապես անհրաժեշտ էր, որ «մենք այն վիճակի մէջ գտնուինք որ կարենանք ազդել այդ քաղաքականութեան վրայ»[821]:

Փորթուգալյանը պարզաբանում էր, որ Համիդը, քաջատեղյակ լինելով եվրոպական դիվանագիտության ներքին անցուդարձին ու բարքերին, համոզված էր, որ Թուրքիայի դեմ երբեք ուժ չի գործադրվելու, ուստի վստահ շարունակում էր խուսանավել: Արմենական կուսակցության առաջնորդ Մ. Ավետիսյանը ևս, որը նաև «Արմենիա» թերթի աշխատակիցն էր, սուր քննադատության է ենթարկում եվրոպական դիվանագիտության և մամուլի հարուցած աղմկալից վեճերը և այդ ամենը համարում լոկ ձևական մի բան, որպես եվրոպական

---

820 Նույն տեղում:

821 Ռուսիա, Անգլիա եւ Հայաստան, «Արմէնիա», թիվ 44, 1894:

թերթերի ընթերցողների ծանձրույթը մեղմելու միջոց՝ նշելով, որ հայերը միշտ էլ միամտություն են ունենում եվրոպական մամուլի երբեմնի հանած աղմուկներն ընդունելու իբրև պետությունների վճիռներ. «Լոնտոնի, Պետերբուրգի կիսապաշտոնական թերթերի գրածներին եթե նայվեր, մինչեւ այսօր 5 անգամէն ավելի եվրոպեան մի բանակ Հայաստան իջած պիտի ըլլար 61-րդ հոդուածը գործադրելու համար»[822]:

Հետագայում «Արմենիա»-ն ավելի ու ավելի հաճախակի էր անդրադառնում հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումներին: Մ. Փորթուգալյանը թեև իր աշխարհընկալմամբ շարունակում էր ավելի ու ավելի հակվել դեպի ռուսական կողմնորոշումը, սակայն միևնույն ժամանակ փորձում էր մնալ չեզոք դատավորի դերում և տպագրում էր ինչպես ռուսանպաստ, այնպես էլ հակառուսական հոդվածներ:

Ներկայացնելով դարասկզբին Արևմտյան Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակը՝ «Չեզոք» հոդվածագիրը նշում էր, որ «Ռուսաստանում չկայ Հայաստան», որ «Թուրքը կտրում է ծառի ճիւղերը, իսկ Ռուսը կտրում է արմատները»[823], որ վախենալով բուլղարական փորձից՝ Ռուսաստանը թույլ չի տա Հայաստանում մի նոր Բուլղարիա կազմակերպելու: Հետևապես, մնում էր մի տարբերակ. Լիբանանի օրինակով հայկական վեց վիլայեթներից եվրոպական հսկողության ներքո ստեղծել մի նահանգ և առժամանակ այդտեսակ լուծում տալ Հայկական հարցին:

Դոկտոր Գ. Արշակունին էլ հոդվածներ էր գրում, ապացուցում «Զինեալ յեղափոխութեան անկարելիութիւնն ու դառն հետեւանքները»[824] և ցույց տալիս, որ հայը Թուրքիայում ստիպված զենքի դիմեց՝ «կեանքի ու գոյքի ապահովութիւն գտնելու համար», քանի որ մեր ժո-

---

[822] «Արմենիա», թիվ 1895:

[823] Մի կարեւոր հարց Հայ յեղափոխականներին, «Արմենիա», թիվ 3, 1902:

[824] Ռուսիան եւ Հայկական հարցը, «Արմենիա», թիվ 7, 1902:

ղովուրդն ի սկզբանե ծայրահեղ անհատականության տիպար էր, դրա մարմնացումը և ամեն բանից վեր էր դասում ազատությունը, ինքնուրույնությունը և անհատականությունը: Իսկ Ռուսաստանը երբեք չուզեց տեսնել, առավել ևս հաշվի նստել այդ հատկանիշների հետ, նրա անփոփոխ ուղեգիծն էր «Հայաստանն առանց հայերի», և նա շարունակում էր առաջնորդվել այդ առաջաբանով:

Երբեմն-երբեմն «Արմենիան» անդրադառնում էր նաև պարսկահայերի վիճակին: Թերթի տեսանկյունից Պարսկաստանի հայությունը միակն էր, որ քաղաքական անմիտ հալածանքների չէր ենթարկվում» բայց «ինչ որ տխուր էր հաստատել, տեղացի հասարակությունը չէ կրցած ըմբռնել իր այդ նպաստատր կացութիւն և չէ մտածած անկից նիւթական և մտաւորական դրութիւն բարձրացնելու համար օգտուիլ»[825],- կարդում ենք «Արմենիա»-ի տեսաբաններից «Մէն-Սէի» վերլուծականում: Այդ երկրի մեջ թե՛ անհատական, թե՛ ընդհանուր ասպարեզներում հայերը կարող էին մեծ գործեր կատարել և լուրջ արդյունքներ ստանալ: Սակայն անտարբերության հաստ շերտի տակ թաղված, տգիտությամբ թմրած և դրա հետևանքով տեղացիների և օտարների թակարդների մեջ հայտնված՝ նրանք ենթակա էին մեծաքանակ վտանգների և հայտնվել էին կործանման եզրին: Քանի որ բոլոր այն ասպարեզները, որոնցում հայերը բավական լավ դիրքեր ունեին, աստիճանաբար անցնում էին օտարների ձեռքը, ինչի հետևանքով հետզհետե պարսկահայությունը ևս թուլանում էր: Իրավ էր ու պարզ, որ պարսկահայերը պիտի սթափվեին, տեր կանգնեին դարերի ընթացքում ստեղծած իրենց արժեքներին, այդքան հեշտությամբ չզիջեին դիրքերը և անպատճառ նաև իրենց համեստ նպաստը բերեին համահայկական ազգափրկիչ ծրագրերին ու հատկապես ազատագրական պայքարին:

---

[825] Պարսկահայերի ապագան, «Արմէնիա», թիվ 8, 1905:

«Արմենիա»-ն եվրոպական պետությունների նկատմամբ հստակ դիրքորոշումներ չուներ: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի ընթացքում մեծ տերությունների նկատմամբ թերթի վերաբերմունքը հաճախակի փոփոխվում էր, նայած թե այդ պահին տվյալ պետությունն ինչպիսի դիրքորոշում էր որդեգրում Հայկական հարցի նկատմամբ: Դա միանգամայն բնական գործընթաց էր և հիմնականում արդարացված: Ինչպես ողջ ազատագրական գաղափարախոսությանը, այնպես էլ «Արմենիա»-ին ու նրա տեսաբաններին բնորոշ է եղել մեղադրել բոլորին՝ Հայկական խնդրին դրական լուծում չտալու կամ իրենց բոլոր ուժերը հօգուտ այդ գործի չտրամադրելու համար: Մի բան, որ հատուկ է եղել հայ ազգային-ազատագրական շարժմանն իր բոլոր փուլերում: «Արմենիա»-ն էլ էր ձայնակցում այդ մեղադրանքներին, սակայն պարբերականի առավելությունը, թերևս, այն էր, որ այն հայությանը կոչ էր անում սրան-նրան մեղադրելուց առաջ, նախ՝ պատրաստվել, իրական ուժ գոյացնել և նոր միայն պարզել ազատության դրոշը:

Ընդհանուր առմամբ, «Արմենիա»-ն հայ իրականության մեջ այն փոքրաթիվ պարբերականներից մեկը եղավ, որ երբեք չկորցրեց իրատեսության զգացումը, չապավինեց եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների սին խոստումներին և դրանով ինկ հիմնականում հայ հասարակայնությանն առաջնորդեց ճշմարիտ ուղիով ու արժեքներով:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԸ 1908 -1923 ԹԹ.

5.1. «Արմենիա»-ն հետսահմանադրական Օսմանյան կայսրությունում տիրող վիճակի մասին

XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում: Ուժեղացել էին հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Թուրքական հասարակությունում ևս առաջացել էին ուժեր, որոնք ցանկանում էին երկիրը դուրս բերել ծանր կացությունից և ամեն գնով պահպանել կայսրությունը: Այդ ուժերից էր 1889 թ. կազմակերպված «Միություն և առաջադիմություն»[826] կուսակցությունը, որի ղեկավարությամբ 1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, արաբական, հրեական և մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համատեղ ջանքերով մինչև 1909 թվականը զինված ապստամբությամբ տապալել համիդյան վարչակարգը և Թուրքիայում հաստատել սահմանադրական կարգեր: Այսինքն՝ իրականացնել հեղափոխություն, «որ ծնվել էր փոքրամասնությունների վախից պետականությունը կորցնելու վտանգից»[827]: Հանգամանքների բերումով պետական հեղաշրջումը, որ «հեղափոխություն» հորջորջվեց, տեղի ունեցավ ծրագրված ժամկետից շուտ՝ 1908 թ. հուլիսի 10 (23)-ին: Արդյունքում երկրում հաստատվեցին սահմանադրական միապետական կարգեր, որտեղ վճռական դեր էին խաղում երիտթուրքերը: Ըստ էության դա փոխհամաձայնություն (կոմպրոմիս) էր թուրքական խոշոր ունետերերի և միապետության միջև, որով սուլթանական Թուրքիայի փտող մարմ-

---

[826] Իթթիհաթ վե թերաքքի (թուրք. İttihat ve Terakki Cemiyeti, արաբերեն՝ اتحاد وترقى):

[827] Akcam Taner, Turk Ulusal Kimligi ve Ermeni Sorunu (Թուրք ազգային ինքնությունն ու Հայկական հարցը), Istanbul, չորրորդ հրատարակություն, 1995, էջ 74:

նին նոր հագուստներ էին հագցնում՝ համաշխարհային հասարակական կարծիքի աչքին թոզ փչելու և «հիվանդ մարդուն» հերթական անգամ մահից փրկելու համար:

Իրականում, սակայն, սուլթանական վարչակարգն արագությամբ չվերափոխվեց: Դեռ ավելին, այն կարծես թե ընդհանրապես չէր փոխվում, քանի որ դրա պաշտպանները դեռևս անթիվ էին, իսկ հին վարչակազմը նախկինի պես շարունակում էր իր պաշտոնավարումը: Ըստ էության այդ ամենն աչքակապություն էր:

Ամբողջ կայսրությունում նախ և առաջ մտքերի հեղաշրջում էր անհրաժեշտ, որն իսպառ բացակայում էր օսմանյան Թուրքիայում: «-Շա՜տ, չափազանց շա՜տ ափսոս, որ այդ բոլոր հույսերը գեղեցիկ ու քաղցր երազներ էին միայն,- իր հուշերում գրում է ականատեսը և շարունակում,- հայասպան սուլթան Համիդի պատմուճանը լիովին ժառանգություն էր հասել երկրի նոր տերերին՝ համիդյան հայահալած և հայաջինջ քաղաքականության հարազատ ժառանգորդներ հանդիսացող թալեաթ-էնվերներին»[828]:

Ավելին, անցնելով իշխանության՝ երիտթուրքերն ազգայնամոլությունը բարձրացրին պետական քաղաքականության մակարդակի: Նրանք ավելի սաստկացրին ազգային հալածանքները՝ շարունակաբար կատարելագործելով սուլթանից ժառանգած հայաջինջ գործելակերպը: Նրանք որդեգրեցին օսմանիզմի քաղաքականությունը, որի հիմնական դրույթի համաձայն՝ Օսմանյան կայսրությունը հռչակվում էր այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների հայրենիքը: Ավելի ուշ երիտթուրքերն առաջ են քաշում Թուրքիայի շուրջը մահմեդականներով բնակեցված երկրները համախմբելու, այսինքն՝ պանիսլամիզմի և թուրքալեզու ժողովուրդներին միավորելու, այսինքն՝ պանթուրքիզմի ծրագրերը:

---

[828] Սարիաղյան Ս., Կյանքիս Հուշերից, Երևան, 2007, էջ 32:

Երիտթուրքական հեղաշրջումը, «Արմենիա»-ի ներկայացմամբ, խանդավառություն առաջացրեց կայսրության բոլոր ժողովուրդների, հատկապես հայերի մեջ: Այդ առիթով գրեթե բոլոր հուշագիրներն արձանագրում են մեկ ակնթարթում հայերի վերափոխման և նախկին ավազակին ու թալանչիին եղբայրացնելու գործընթացները: «-Գավառներու մեջ,- ինչպես Վ. Փափազյանն է նկատում,- ամենէն հոռետեսներն իսկ, սահմանադրական ազատութեան այդ առաջին օրերուն, խանդավառ էին և հոգեպես կազդուրուած, խռոված միտքերը հանգստացած, և ոչ հեռավոր օրերու ծանր մղձավանջը փարատած էր»[829]: «Գայլն ու գառը համբույրներ կը փոխանակեին և օձք ընդ աղավնիս իթթիհատ կը կնքեին»,- նշում է վանեցի հայտնի մանկավարժ Հ. Երամյանը[830]: Երիտթուրքերը հաճախակի էին աղաղակում՝ «Կեցցեն մեր հայ եղբայրները»[831]:

Ներկայացնելով Արևմտյան Հայաստանի գավառներում տիրող «հեղափոխական» խանդավառ իրավիճակը՝ «Մշակ» թերթի վանեցի թղթակիցն էլ նշում էր. «Վերջապես. վերջապես ազատ ենք: Ամեն օր հանդես, խրախճանք, տոն, ոգևորություն: Թուրք և հայ հեղափոխականներ ազատ կը պտտին, կը ճառախոսեն, զինվորականներու հետ կեղբայրանան, և մինչև հիմա հալածված ժողովրդի ներկայացուցիչները ասպարեզին տերն են: Ամեն բերան՝ երգ ունի, ամեն ձեռք՝ ծափ, ամեն երես՝ ժպիտ: Ազատության հաղթական ռազմերգը կը խլացնե բոլոր կաղկանձյունները ու սիրո, սրտազեղության, ճնշված տարրերու խանդավառության մրրիկը իր մեջ կը զանգե բոլոր մասսաներ»[832]:

Այս ամենից դժգոհ էին թերևս միայն քուրդ ավատատեր-աշիրեթապետերը, որոնք մտավախություն ունեին, որ սահմանադրության

---

829 Սարհադյան Ս., Կյանքիս Հուշերից, Երևան, 2007, էջ 32:
830 Երամեան Հ., նշվ. աշխ., էջ 92-93:
831 Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 457:
832 «Մշակ», 28. IX. 1908:

գործադրությամբ իրենք զրկվելու էին ավատական և ավազակային առանձնաշնորհներից:

Արևմտահայ ժողովրդի մեծ մասը, նշում էր «Արմենիա»-ն, հավատաց երիտթուրքերի խոստումներին՝ կարծելով, թե վերջ կտրվեն իրենց դարավոր անլուր տառապանքներին: Սակայն սահմանադրական կարգերի հռչակման հետ կապված ոգևորությունը շատ կարճ տևեց: Ֆրանսիական հեղափոխությունից ընդօրինակված «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսներն այդպես էլ մնացին թղթի վրա: Շուտով հայերին համակեց լիակատար հիասթափություն: Իրականությունն այն էր, որ երիտթուրքերն ավելի դաժանորեն շարունակեցին Աբդուլ Համիդի որդեգրած հակահայ քաղաքականությունը, որն էլ իրեն շատ սպասել չտվեց: Արդեն 1909 թ. ապրիլի 1-ին իշխանությունները կազմակերպեցին Ադանայի և Կիլիկիայի հայկական այլ բնակավայրերի կոտորածն ու թալանը, որոնց զոհ գնացին ավելի քան 30 հազար անմեղ հայեր:

Հեղաշրջումից հետո քաղաքական հետապնդումների ենթարկված հայերն արձակվեցին բանտերից: Քաղաքական վտարանդիներից շատերը վերադարձան[833], ինչպես օրինակ, Արմենակ Եկարյանը, որ մինչ այդ գտնվում էր Ուրմի (Ռիզայի) քաղաքում, ընտանիքով վերադարձավ Վան[834]: Նոր կառավարությունը հաջորդաբար օրինական հայտարարեց Արմենական, Դաշնակցություն և Հնչակյան կուսակցությունները:

Մի պահ կարծես հայերը դարձել էին թուրքերի սիրելի հարևանները: Թուրք պաշտոնյաները, որոնք խորամանկ ու երկդիմի մոտեցում էին որդեգրել, հարմար առիթը բաց չէին թողնում՝ հայերի հանդեպ իրենց համակրանքն արտահայտելու և միաժամանակ իրենց տմարդի ուղղությունն առաջ տանելու համար: Արդյունքում, ինչպես տեղեկացնում է «Արմենիան», 1908 թ. հոկտեմբերին բացված 230

---

[833] Վարդիվառեան Յ., նշվ. աշխ., էջ 101-277:
[834] Եկարեան Ա., Հուշեր Արմենակ Եկարեանի, Կահիրե, 1947, էջ 153:

տեղերից բաղկացած խորհրդարանում հայերին բաժին հասավ 12-ը, մինչդեռ նրանց թիվն իրականում պետք է առնվազն երկու անգամ ավելի լիներ[835]:

«Արմենիա»-ի ներկայացմամբ ևս հեղաշրջումը մեծ խանդավառություն առաջ բերեց Արևմտյան Հայաստանում ու կայսրության հայաշատ մյուս բոլոր գավառներում: Հատկապես Վան-Վասպուրականում ողջ հայությունը ցնծում էր սահմանադրության հռչակման առիթով[836]: Հայությունը սահմանադրությունն աստծո շնորհ էր համարում և հույս տածում ու նույնիսկ համոզված էր, որ այլևս «թուրք անպատասխանատու բաշիբոզուկի, թալանչի քուրտի և պաշտոնական օրգանների ու պետական հիմնարկների կողմից որևէ շնական արարքթալան, բռնագրավում, բռնի առևանգում և սպանության դեպք չպիտի լիներ»[837]: Հեղաշրջման առիթով, ինչպես հայաշատ մյուս քաղաքները, Վանը ևս երեք օր շարունակ լուսավորվեց, տները զարդարվեցին դրոշակներով, ամենուրեք ծաղիկներ էին, խնդություն: Վանի ռու-

---

[835] 1908 թ. հոկտեմբերին բացված օսմանյան խորհրդարանի 266 պատգամավորներից 125-ը թուրքեր էին, 70-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը՝ հայեր, 4-ը՝ բուլղարներ, 4-ը՝ հրեաներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ ուլահ: Կայսրության 27 միլիոն բնակչության մեջ թուրքերը կազմում էին 8-10 միլիոն: Հետևաբար նրանք խորհրդարանում կարող էին ունենալ 80-100 պատգամավոր: Հայտնի է, որ հայ բնակչության թիվն Օսմանյան կայսրությունում պաշտոնապես 2.100.000 էր, հետևաբար հայ պատգամավորների թիվը կարող էր լինել 21 մարդ: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ահմեդ Ռիզա բեյը: Ինչ վերաբերում է կուսակցություններին, ապա պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20-25-ը՝ ազատականներ, 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կլուբիստներ, 1-ը՝ սոցիալ-դեմոկրատ և 70-ը՝ անկուսակցականներ: Տե՛ս Մարտիրոսյան Ն., 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և խորհրդարանի ձևավորումը Օսմանյան կայսրությունում, ԼՀԳ, թիվ 386, 2014: Իսկ Ջ. Կիրակոսյանը, վկայակոչելով տարբեր աղբյուրներ, հայտնում է, որ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը 1881 թ. կազմում էր 2,6 մլն: Տե՛ս Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 33:

[836] 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման նկատմամբ Վան-Վասպուրականում հայերի խանդավառ վերաբերմունքի մասին խոսվում է նաև հայրենաբնակ պատմաբան Ա. Հարությունյանի մի հոդվածում: Տե՛ս Հարությունյան Ա., Երիտթուրքական հեղաշրջման արձագանքները Վանի նահանգում (1908 թ. հուլիս-օգոստոս), «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 3:

[837] Սարհադյան Ս., Կյանքիս հուշերից, Ե., 2007, էջ 32:

սական փոխհյուպատոս Բ. Ա. Պրեոբրաժենսկու հաղորդմամբ՝ «Վանի բնակչությանը համակած խանդավառությունը ենթակա չէր նկարագրության»[838]: Այնքան մեծ է եղել ոգևորությունը հայության համար, որ ժամանակակիցներից մեկը անկեղծորեն արձանագրում է. «-Կը քալենք ու կը քալենք, կերգենք, և մեր սրտերը անհոգորեն կը ծծեն ազատ լեռանց ազատ օդը ...հիմա ազատ ենք, մեզ ազատ ենք զգում»[839]:

Չնայած այս աննախադեպ ոգևորությանն ու համատարած ուրախ մթնոլորտին՝ երկրում սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում էր մնալ ծանր, իսկ հայերի համար՝ օրհասական: «Թիւրքահայութենէն անդադար լսուող հարստահարութիւնների հառաչանքները նորութիւն մը չեն ներկայացուներ,-կարդում ենք «Արմենիա» թերթի «-Սոսկալի դրութիւն» խմբագրականում,- թիւրքական բռնապետութեան տակ հեծող այդ դժբաղդ երկրի սովորական վիճակն է այդ»[840]: Իշխանությունների շռայլ խոստումներն ու հավերժ բարեկամության մասին ճամարտակությունները ոչնչով չփոխեցին հայ գյուղացու տնտեսական ծանր կացությունը: «Հայաբնակ զանազան գաւառներէ եկած թղթակցութիւններում,-տեղեկացնում է «Արմենիան»,-կը գտնէք միայն հարստահարու-թիւնների լուրեր, կառավարութեան դէմ գանգատներ և այլ այսպիսի բաներ»[841]: Բայց որ ավելի սոսկալին էր, թուրքական իշխանությունները ոչ միայն չէին պաշտպանում հայերին ավազակներից, այլև «փոխանակ աւազակին կը պատժէ կողոպտոտող Հայը եթե ինքնապաշտպանութեան ոևէ փորձ ընէ»[842]: Քանի որ այդ ավազակներն էլ կառավարության ներկայացուցիչներն էին, ուստի դրանց դիմադրողներն էլ կդիտվեին կառավարությանը դիմադրողներ: Մի երկրում, գրում է «Արմենիան», որի բնակչության «աւելի

---

[838] АВПРИ, ф. Посольствов Константинополе, д. 1595, л. 75, 88.
[839] «Գործ» (Թիֆլիս), թիվ 32, 1908:
[840] «Արմենիա», թիվ 46, 1912:
[841] «Արմենիա», թիվ 9, 1909:
[842] «Արմենիա», թիվ 46, 1912:

զարգացած և աւելի քաղաքակիրթ ազգը» հայերն էին, որոնք ոչ միայն չէին գնահատվում, այլև շարունակաբար ոչնչացվում էին կամ իսլամացվում, դրա համար էլ այդ երկիրն անընդհատ անկում էր ապրում: Իսկ եթե թուրքերը խելացի վարվեին և հայությանը հնարավորություն ընձեռեին, ապա հայը «կրնայ աւելի լաւ կառավարել և զարգացունել այդ երկիրը քան թէ հոն գտնուող կիսավայրենի քիւրտ և թիւրք տարրերը որոնք այսչափ դարերէ ի վեր իրենց հարստահարութիւններով և բռնութիւններով երկիրը թշուառացուցած են միայն»[843], և այնժամ պետությունը կդառնար զարգացած և ուժեղ: Այնինչ քուրդ ավազակները, որոնք շարունակաբար անպատիժ էին մնում, օր օրի ավելի վտանգավոր էին դառնում, քան ոստիկանները: Իշխանությունները, կույր ու խուլ ձևանալով «կը կարծէն այդպէս հերքել Հայաստանի սոսկալի կացութիւնը»[844]: Իսկ հոդվածագիրը, այդ անարդարություններից խիստ զայրացած ու իրավիճակից ելք չտեսնելով, անզորությունից հայտարարում է, որ եթե աշխարհում բոլորը լռեն ու աչք փակեն, ապա «Հայաստանի քարերը լեզու կելնեն և կաղաղակեն այս սոսկալի դրութեան դեմ...»[845]:

Երբ զարգացած երկրներում «կը սկսին օդային սաւառնակներով սլանալ յառաջադիմելու համար»[846], հետամնաց Օսմանյան կայսրությունում իշխանությունները ոչ միայն ոչինչ չէին ձեռնարկում այդ ծանր կացությունը փոխելու, այլև մատը մատին չէին տալիս իրենց ստնտու հայության վիճակը գոնե փոքր-ինչ թեթևացնելու համար: Մ. Փորթուգալյանը «Տէրութեան մը ոյժը» խմբագրականում, անդրադառնալով այս խնդիրներին, ցավ է ապրում իր երկրի թուլության համար և գտնում, որ դրա հիմնական պատճառներից մեկը մահմեդական և քրիստոնյա ազգերին առանց որևէ խտրականության հավասար իրա-

---

843 «Արմէնիա», թիվ 44, 1913:

844 Նույն տեղում:

845 Նույն տեղում:

846 «Արմէնիա», թիվ 9, 1909:

վունքներ չտալն է: Իսկ սա իր հերթին հետևանք էր այն բանի, որ «թիւրք տարրի մեծամասնութեան մտայնութիւնը պատրաստուած չէր դեռ այդ բարեփոխութեան և վարանոտ քաղաքականութիւն մը ցոյց կուտար»[847]: Նկատելով, որ հեղաշրջումից հետո էլ ոչինչ չի փոխվել, հոդվածագիրը զայրացած հարցնում է. «Վերջապէս պիտի գտնուի՞ն պետական այնպիսի մարդեր որ ըմբռնեն և կարենան գործադրել այս սկզբունքը թէ Օսմանեան տերութիւնը կրօնական իշխանութենէն անջատուելով՝ պէտք է հանդիսանայ լոկ քաղաքականապէս կազմակերպուած տէրութիւն մը»[848]:

Սահմանադրության հռչակումը նոր իրողություններ ծնեց նաև հայ իրականության մեջ: Նորընտիր խորհրդարանում առաջ քաշվեց քրիստոնյա ժողովուրդներին ևս բանակում ծառայության հնարավորություն տալու խնդիրը: Ոգևորությունն այն աստիճանի էր, որ չնայած մահմեդական պատգամավորները դեմ էին, սակայն քրիստոնյա և մասնավորապես հայ պատգամավորների պնդմամբ՝ «թէ հայ ժողովուրդը չկրնար ալ զինուորական տուրք վճարել և կը նախընտրէ զենք կրել և զինուոր տալ»[849], այդ օրինագիծն ընդունվեց: Բայց երբ սկսեց գործադրվել, օրինագիծը հանդիպեց լուրջ դիմադրության: Նախ՝ հայ մայրերը չէին ցանկանում բաժանվել իրենց սիրասուն զավակներից, և հետո՝ անվտանգության առումով ընդհանուր անվստահություն կար թուրքական բանակի նկատմամբ: «Արմենիայի» «Քրիստոնեաների զինուորագրութիւնը Թուրքիայի մէջ» խմբագրականը, քննարկելով խնդիրը, տեղեկացնում է, որ ընդհանուր առմամբ, «սկզբունքին դէմ հակառակութիւն չկայ, այլ այդ սկզբունքի գործադրութեան հանգամանքներին և մանրամասնութիւններին մէջ է որ վարանումներ ծնունդ առած, կարծիքներն ու զգացումներն սկսած են

---

[847] «Արմենիա», թիվ 28, 1912:
[848] «Արմենիա», թիվ 28, 1912:
[849] «Արմենիա», թիվ 20, 1910:

տարբերիլ հայ ժողովրդին մէջ»[850]: Անդրադառնալով Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների զինվորագրության խնդրի պատմությանը՝ թերթը տեղեկացնում է, որ այն արծարծվում էր դեռևս 1876 թ. Միդհատյան սահմանադրության առաջին հրատարակության ժամանակներից և չհաստատվեց միայն Ներսես պատրիարքի խելացի առարկությունների շնորհիվ: Իսկ այդ օրերին պատրիարքական աթոռը թափուր էր[851], ուստի օրինագիծն էլ ընդունվել էր առանց որևէ նախապայմանի: Հասկանալով պահի լրջությունը՝ հատկապես մայրաքաղաքի հայության մեջ տրամադրությունների կտրուկ փոփոխություն էր եղել, և ընդգծելով, որ մամուլը հասարակության հայելին է, հոդվածագիր Մ. Փորթուգալյանը գրում է. «զինուորագրութեան մասին Կ. Պոլսի հայ մամուլի առաջաւորներին նախկին ոտախ և ներդաշնակ համերգը խանգարուած է այժմ»[852]: Իշխանություններն էլ, թերթի ասելով, իրենց տեղում չէին: Նրանք փոխանակ ողջ բնակչությանն առանց խտրականության հիրաշահելու, ազգային և կրոնական առանձնահատկությունները հարգելու, «չզոհելով քրիստոնյաների ապահովութիւնն ու շահերը իսլամների կրօնական մոլեռանդութեան»[853], հաճախ իրենց գործելակերպով անում էին լրիվ հակառակ քայլեր: Իսկ եթե չլինեին դրանք, վստահեցնում էր թերթը, այդ ժամանակ «ամէնքն ալ պատրաստ կը լինին յոժարակամ իրենց արիւն թափել իրենց ծնած ու ապրած հայրենիքի պաշտպանութեան համար»[854]:

Ստեղծված ոչ ցանկալի իրավիճակին որպես լուծում Մ. Փորթուգալյանը մեկ այլ՝ «Բարեփոխումներ Օսմանեան զինուորութեան մէջ» խմբագրականում առաջարկում է շտկել դրությունը: Ճիշտ է, բանա-

---

850 Նույն տեղում:

851 Այդ ժամանակ Դուրյան սրբազանը հրաժարական էր ներկայացրել և ինքնամեկուսացել:

852 «Արմենիա», թիվ 20, 1910:

853 Նույն տեղում:

854 Նույն տեղում:

կին հատկացվում էր պետական բյուջեի մեկ երրորդը, սակայն հաճախ կարելի էր պատառոտված հագուստներով և բոլորովին մաշված կոշիկներով զինվորների հանդիպել: Իսկ դրա պատճառը, բացատրում էր թերթը, զեղծումներն ու չարաշահումներն էին, որոնք համատարած բնույթ էին կրում բանակում և, որպես կանոն, մնում անպատիժ: Կարևոր էր, որ զորանոցը «դպրոց մը դառնայ ուր սովրին ոչ միայն կարգապահութիւն, այլև մաքրասիրութիւն, առողջապահական կանոններ, բարեկրթութիւն, կրօնական ազատութիւն, տարբեր ցեղերի հասմերաշխութիւն»[855]: Եվ անչափ անհրաժեշտ էր, որ հաստատապես որոշվի զինվորական ծառայության պայմանաժամկետը, և մահմեդականների կողքին «քրիստոնեայ զինուորականներն ալ բաւական տեղ ու դիրք պետք է ստանան»[856]:

1908 թ. հեղաշրջումն իր արձագանքն ունեցավ նաև հայաշատ գաղթավայրերում: Երիտթուրք ղեկավարների մեղրածոր խոստումներին անվերապահորեն հավատացած գաղութահայությունը նույնքան արագ էլ հիասթափվեց այդ շռայլ խոստումներից, քանի որ հետզհետե երկրից եկող լուրերն ավելի ու ավելի տագնապալի էին դառնում: Այդ կարևոր տեղաշարժերից ոչ միայն անմասն չէր, այլև դրանց անմիջական արձագանքողներից ու տառապած հայության տագնապներն առաջինը բարձրացողներից էր «Արմենիա» թերթը: Թերթ, որն այն փոքրաթիվ կառույցներից էր, որը կարճ ապրեց հեղաշրջման հաշիշաթմբիրը և շատ արագ ըմբռնեց թուրքերի հերթական քաղաքական ֆարսի իմաստը: Մ. Փորթուգալյանի թիմակիցներն իրենց «Արմենիայով» շտապեցին հավաստել և ժողովրդին զգուշացնել, որ թուրքը նույն մարդատյաց թուրքն է, անկախ այն բանից՝ գլխին ֆե±ս է կրում, թե± եվրոպական գլխարկ:

Հեղաշրջումից մեկ տարի էլ չանցած՝ «Արմենիա»-ն ցավով արձանագրեց՝ «խաբուեցանք» և կոչ էր անում բոլորին՝ փնտրել, գտնել

---

[855] Նույն տեղում:
[856] Նույն տեղում:

այն պատճառները, «թէ ինչո՞ւ խաբուեցանք որ ապագային մէջ ալ նորէն չխաբուինք»[857]: Խաբվելու գլխավոր պատճառներից մեկը թերթի մեկնաբանությամբ «գործը ուսումնասիրած չը լինելը, գործին տգէտ լինելն է: Իսկ տգիտութիւնը մարդը դիւրահաւան կը դարձունէ»[858]: Թերթի կարծիքով մեկը կարող է փայլուն բարձրագույն կրթություն ստացած լինել, բայց «միանգամայն տգէտ լինել ազգային քաղաքական գործերի մասին»[859]: Ուրեմն,եզրակացնում է հոդվածագիրը, չխաբվելու համար անհրաժեշտ է նախ ուսումնասիրել ազգի իսկական վիճակը, հասարակության բոլոր խավերի ու դասերի ձգտումներն ու ակնկալիքները: Իսկ դրա համար հարկավոր է շատ կարդալ, քննել, վեր հանել խնդրի բոլոր թերի ու բաց կողմերը, ուսումնասիրել մյուս ժողովուրդների փորձը: Առաքելություն, ինչին էլ տարիներ շարունակ ինքնակամ կոչված էր ծառայելու «Արմենիան». «մեր հայրենակիցների միտքը բանալու նպատակով էր որ ազատ երկրի մը մէջ այս հրատարակութեան ձեռնարկած ենք որպէսզի ալ չխաբուինք»[860]: Հայ ժողովուրդը հիմնականում զբաղված էր գյուղատնտեսությամբ, արհեստներով և առևտրով, սակայն զորանալու, այդ «երեք ստինքներէ բղխած կաթը առատօրէն ծծելու և զարգանալու համար մեր հայրենակիցներ ի՞նչ կընեն»,-հարցնում է թերթը, և ինքն էլ պատասխանում՝ ոչինչ, քանի որ իշխանությունները նախկինի նման ոչ միայն չեն սատարում, այլև անում են ամեն ինչ՝ ցանկացած զարգացում խոչընդոտելու համար:

«Դրախտին մէջ Աստված Ադամին հետ հայերէն լեզուով խօսեցաւ»[861], այսինքն՝ աշխարհի հնագույն ժողովուրդներից են հայերը: Այն հայերը, որոնք իրենց նպաստը բերեցին 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման գործում. «նոյն իսկ Թիւրքերն ալ կըսէին թէ Հայե-

---

857 «Արմէնիա», թիվ 23, 1909:
858 Նույն տեղում:
859 Նույն տեղում:
860 Նույն տեղում:
861 «Արմէնիա», թիվ 23, 1909:

ը ծովածաւալ արիւն թափեցին որ Թիւրքիան Միտահաթեան Սահմանադրութիւնն ունենար...»[862] և դրանով շատ էին պարծենում: Հարկավոր է մի կողմ թողնել այդ «մանկական ունայնամտութիւնն ու փառասիրութիւնը»,-գրում էր թերթը, և փնտրել ճշմարտությունը, որքան էլ այն դառը լինի և ոչ պանծալի հայերի համար: Թերթի կարծիքով ճշմարտությունն այն էր, որ 300 հազար զոհ տալուց հետո էլ նրանք չհասկացան, թե ինչ է հեղափոխությունը և «կոտորուած ատեննիս ալ կըսեն թէ յեղափոխութիւն ըրին», այնինչ իրականում հայությունը բավականին ուժասպառ «եղած և աւելի յետ էր գնացած»[863]:

1908 թ. հեղաշրջման թերևս միակ օգտակարն ու մխիթարությունն այն էր, որ «Թիւրքիաի մէջ մամուլը արձակուեցաւ գրաքննութեան շղթայներէն», և բոլոր քաղաքացիներին ազատ տեղաշարժվելու հնարավորություն ընձեռվեց: Սակայն թերթն այնքան էլ լավատես չէր այն հարցում, որ հայերը կկարողանան լավագույնս օգտագործել այդ հնարավորությունները. «Երանի՜ թէ մեր հայրենակիցներ գիտեն օգտուիլ գտնէ այս ձեռք բերուած համեմատական ազատութիւններէն», քանի որ նրանց ավելի շատ անհրաժեշտ է «տգիտութեան, նախապաշարումներին և մեր մէջ արմատացած թիւրիմացութիւններին դէմ կռուիլը»[864]:

Մ. Փորթուգալյանի հեղինակած «Անցեալի ուսումնասիրութիւնը պէտք է առաջնորդէ ներքին հոռետեսութեան» խմբագրականում բարձրացվում է կարևորագույն հարց: Խոսքն այն մասին է, որ երիտթուրքական հեղաշրջումը և ստեղծված իրավիճակը հայերին մղում էր, ստիպում, որ լավագույնս ուսումնասիրեն պատմությունը, կատարեն համապատասխան եզրահանգումներ և ճշտեն, թե այնուհետև ինչ ուղղությամբ պիտի ընթանար հայ քաղաքական միտքը: Այդ խորապստկերում խիստ կարևորվում էին ստեղծված իրավիճակի

---

[862] Նույն տեղում:
[863] Նույն տեղում:
[864] Նույն տեղում:

նկատմամբ իրատեսական, ճշմարտացի և քննական մոտեցումներ հանդես բերելը, անպայման թերացումները մատնանշելն ու քննադատելը, որից հետո էլ առաջարկվում էր մերժել կոռակցականությունն ու ամեն տեսակի անջատողական ձգտումները: Իսկ դրանց պատճառած վնասները ցույց տալու համար հոդվածագիրը բերում է հետևյալ օրինակը. հնչակյանները Սասունի 1894 թ. կռիվները, որոնց զոհ գնացին շուրջ 10 հազար հայեր[865], միշտ հպարտորեն են ներկայացնում, որովհետև գլխավոր դերակատարների զգալի մասը հնչակյաններ էին, իսկ 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունը, որի ժամանակ զոհվեցին յոթ հազարից ավելի հայեր[866], բայց քանի որ հիմնական դերակատարները դաշնակցականներն էին, որոնք «կրկներ էին Սասունի մէջ միևնոյն դիւցազնական մեծագործութիւնը»[867], հնչակեան թերթերը «ազգասպան կանուանէին զանոնք»[868]:

Օսմանյան կայսրությունում եթե որևէ մեկն ինչ-որ կերպ կարողացել էր իշխանական ուժերի պատժիչ գործողություններից և խուժանի հարձակումներից կենդանի մնալ, «թիւրքական օրէնքով պետք

---

865 Աղբյուրները միաբերան խոսում են 40-42 հայկական գյուղերի ավերվելու մասին, սակայն զոհերի քանակի վերաբերյալ տարբեր թվեր են հիշատակում. «Հնարավոր է որոշել սպանվածների միայն մոտավոր թիվը, քանի որ շատ դիակներ լցվել են փոսերը և ծածկվել հողով, անձրևը սրբել է այդ գերեզմանների հետքերը: Սակայն առանց կասկածի կարող ենք ասել, որ 40 գյուղ ավերված է, սպանվել է ոչ պակաս քան 16 000 մարդ» («Մշակ», 11 նոյեմբեր,1894 թ.): «Սասունը մեծաքանակ զոհեր կուտա՝ տաս հազարէն ավելի» (Սուրէն Պարթեւեանի խմբագրականը, «Ձայն հայրենեաց», թիվ 11, 1905): 1894-ին ավերել են 40-ից ավելի գյուղ, կոտորել անզեն հայերին (ավելի քան 10 հազար մարդ), (Թառոյան Կ., Ժողովրդական շարժումները Սասունում, 1890-1894, Ե., 1966, էջ 127): Վերջին տարիներին ավելի հաճախ 7-8 հազար թիվն է շրջանառվում. «1894-ն զոհվեց ավելի քան յոթ հազար հայ» («Հայոց պատմություն», ԲՈՒՀ-ական դասագիրք Հ. Լ. Սիմոնյանի խմբագրությամբ, Ե., 2012, էջ 403):

866 Այս թիվն էլ իրականում ավելին է եղել՝ մոտ 7 հազար: Թե Փորթուգալյանը որքանով էր տեղյակ զոհերի իրական թվաքանակին, պարզ չէ: Սակայն քննադատությունն ավելի արդարացված ներկայացնելու համար նա կարող էր նաև իրական թվերը փոփոխված ներկայացնել:

867 «Արմենիա», թիվ 2, 1909:

868 Նույն տեղում:

է պատժուէր ողջ մնացած լինելու համար»[869]: Վահան Փափազյանի բնութագրմամբ՝ «օսմանյան սահմանադրության մեղրալուսնի օրերին»[870] հայկական ներքին գավառներում տիրող նախկին չափազանց ոգևորությանն ու ոտախությանը հակառակ, հայրենիքից «այժմ եկող լուրերին մէջ յուսադրական և սրտապնդող շեշտեր կը պակսին ընդհանրապէս»[871],- գրում է «Արմենիան»: Քանի որ իշխող հետամնաց և կրոնամոլ թուրք ժողովուրդը չկարողացավ թոթափել արմատացած իր դարավոր նախապաշարումները, իսկ հայերն էլ իրենց հերթին մատը մատին չտվեցին սահմանադրության բերած «գէթ այդ համեմատական ազատութիւնները վայելել. օգտուիլ անոնցմէ ինչպէս որ պէտք էր»[872]: Թերթի կարծիքով, կարծես ազգը «կը գտնուի այնպիսի վիճակի մը մէջ որ Ատանայի աղէտէն բոլորովին շփոթած ու շուարած մնացեր է և ի նչ ընելն ու ի՞նչպէս ընելը չգիտեր»[873]: Թերթի դիտարկմամբ դրա ապացույցն էր նաև այն, որ հոգեբանական այդպիսի տխուր և հուսահատական վիճակում, փոխանակ ժողովրդին սատարելու, պատրիարքը հրաժարական էր տալիս, այնինչ հարկավոր էր «աթոռին վրայ հաստատ կենալ, վերջ տալ անդադար լալուն և գօտէպընդելով աշխատիլ օգտուելու համար ներկայ ժամանակի ընծայած պատեհութիւններէն՝ շարունակել դիմադրել մեր ազգային իրաւունքների բռնաբարման»[874]: Իսկ եթե հարկ լինի, շարունակում է խմբագրականի հեղինակ Մ. Փորթուգալյանը, ավելի կորովով և նույնիսկ խորամանկությամբ պայքարել սեփական ժողովրդի իրավունքների համար:

Մի շատ կարևոր խնդիր էլ էր առաջ քաշում «Արմենիա»-ն. սահմանադրության հռչակումից հետո էլ, չնայած մեծամեծ խոստ-

---

[869] «Արմենիա», թիվ 3, 1909:
[870] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 12:
[871] «Արմենիա», թիվ 3, 1909:
[872] Նույն տեղում:
[873] Նույն տեղում:
[874] Նույն տեղում:

ումներին և ոգևորությանը, հայրենիք վերադարձող գաղթականների թիվը չբազմացավ: Ընդհակառակը, գրում էր թերթը, «երթևեկութեան ազատութիւնը պատճառ դարձաւ աւելի մեծ թոտվ գաղթելու: 10 վերադարձողին դէմ՝ 90 հոգի հայրենիքէն կերթա Ամերիկա»[875]: Եվ դա այն դեպքում, երբ դարերի ընթացքում Հայաստանում ավելի անտանելի իրավիճակներ են եղել, սակայն ժողովուրդը չի գաղթել, այլ ամուր կպած մնացել է իր տանն ու հողին և դիմակայել ամեն տեսակ ոտնձգության: Պառճառները շատ էին, սակայն հիմնականը երկրում բոլոր առումներով ապահովության բացակայությունն էր և «Թիւրքիայի քաղաքական և տնտեսական յոռի կացութիւնը»[876]: Իսկ ակնհայտ է, որ ցանկացած ժողովրդի համար գաղթելը կործանարար է, մահվան հավասար մի բան: Միանգամայն իրավացի էր Մ. Փորթուգալյանը, ով իր հայտնի «Մի գաղթէք» հոդվածաշարում հայտարարում էր. «Այն ազգ որ իր ոտքի տակ իրեն սեպհական հող չունի, չկրնար կանգուն մնալ երկար ատեն... որ Հայաստանէն դուրս Հայութիւնը կորսուելու վտանգին ենթակայ է»[877]: Նկատենք, որ այս առիթով Մ. Փորթուգալյանը բավականին հետաքրքիր տեսակետ է հայտնում հայերի ազգային և կրոնական առնչությունների վերաբերյալ: Նրա կարծիքով նաև շնորհիվ մահմեդականության հայությունը պահպանեց իր ազգային դիմագիծը: Խնդիրն այն էր, որ մշտական դիմակայությունը ստիպեց ինքնապաշտպանվել զանազան հարձակումներից և իր «ֆանատիկոսութեամբ հեռու մնալով Մահմետականութիւնից, պահեց իւր կրօնը, հետևաբար և ազգութիւնը»[878]:

Հետսահմանադրական շրջանում իշխանություններն անում էին ամեն ինչ, որպեսզի կազմալուծեին հայկական ազգային կառույցները: Դրանով նպատակ էին հետապնդում կանխել, արգելափակել համ-

---

875 «Արմէնիա», թիվ 5, 1909:

876 Նույն տեղում:

877 «Արմէնիա», թիվ 6, 1909:

878 Նույն տեղում:

ախմբման ցանկացած դրսևորում: Նույնիսկ սահմանադրության հռչակումից երեք տարի հետո էլ, տեղեկացնում էր «Արմենիան», թուրքական բոլոր օրենքների հիման վրա գործող «մեր Ազգային ժողովն ալ վերակազմուելով սկսած է իր նիստեր շարունակել, բայց անհասկնալի պատճառներով ցարդ չեն լրացուներ 140 երեսփոխանի ընտրութիւնը»[879]: Ակնհայտ էր, որ դա արվում էր հետագայում որևէ անհնազանդ որոշում ընդունելու դեպքում ժողովի ոչ լիակազմ լինելու, այսինքն՝ քվորումի բացակայության պատճառաբանությամբ այն չեղյալ համարելու համար: Հայերն էլ իրենց հերթին փորձում էին դիմագրավել այդ ամենին և տարբեր առիթներով ստեղծում էին կրթական, մշակութային և այլ բնույթի կազմակերպություններ, որոնց նպատակը հայ հանրությանը հնարավորինս համաձույլ պահելն էր: Դրանցից մեկը մայրաքաղաք Կ.Պոլսում ձևավորված «Հայաստանի ուսումնասիրութեան ընկերութիւնն» էր, որի նպատակը Հայաստանն անձամբ տեսնելը, ուսումնասիրելն ու պարզելն էր, «թէ ի՞նչ կերպով կրնան օգտակար լինել իրենց երկրի զարգացման և յառաջադիմութեան գործին»[880]: Կազմակերպության հիմնադիրների ելակետն այն էր, որ առանց հիվանդին տեսնելու և ցավն ախտորոշելու հնարավոր չի լինի նրան բուժել: Դրա համար էլ կոչով դիմում էին բոլորին՝ այցելել հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, խորապես ճանաչել նրան, իմանալ այնտեղ ապրողների հոգսերն ու դարդերը և, վերջապես, դարմանել նրա ցավերը: Դեպի Հայաստան հայ և օտար ճամփորդների գործը դյուրացնելու, ավելի շատ ու անհրաժեշտ տեղեկատվությամբ նրանց ապահովելու նպատակով ընկերության հիմնադիր խորհրդակցական ժողովում որոշվում է «հրատարակել իրենց յատուկ պարբերաթերթ մը»[881]: Ընկերության հիմնադրման և գործնական աշխատանքներին մասնակցում էին այնպիսի նշանավոր մտավոր-

---

[879] «Արմէնիա», թիվ 37, 1912:
[880] «Արմէնիա», թիվ 43, 1914:
[881] «Արմէնիա», թիվ 43, 1914:

ականներ, որպիսիք էին՝ «Պազիլ խան, Ա. Խաչատուրեան, պրոֆ. Տ. Խաչատուրեան, Յովի. Յակոբեան, Է. Ակնունի և Գ. Փաստրմաճեան և ուրիշներ»[882]: «Արմենիա»-ն տեղեկացնում էր, որ ազգային գործող կառույցներն էլ երբեմն իրենց հերթին էին քայլեր անում, որոնք միտված էին հայության միավորմանն ու իրավունքների համար համատեղ պայքար մղելուն: Այսպես, Թուրքիայի հայերի Ազգային երեսփոխանական ժողովն ընդունեց մի պատմական որոշում, որի կարևորագույն կետերից էին.

«Ա. Ազգային Սահմանադրութիւնը տարածել բոլոր օսմանեան հայ քաղաքացիներու վրայ առանց դաւանական խտրութեան:

Բ. Ընդունիլ Հայ-Լուսաւորչականների և Հայ-Աւետարանականների միջև ընդունուած Ազգային Միութեան գաղափարը, որի համեմատ թէ՛ Լուսաւորչական և թէ՛ Բողոքական Հայեր իբրև միևնոյն ազգի անդամներ պիտի միանան ամէն գործերի մէջ»[883]:

Այս առիթով Մ. Փորթուգալյանը հիշում էր, որ ինքն այդ թեմային «Ազգային խոհեր» հոդվածաշարով անդրադարձել է դեռևս Կ.Յ. Փանոսյանի «Մանզումէի էֆքեար»-ում դեռևս 1881 թ. և, աշխարհաբարը նախակրթարանների մեջ ուսուցանելու առաջարկին զուգընթաց, պահանջել «կրօնական և աշխարհական իշխանութիւնները իրարմէ բաժնել, իսկ Ազգային Երեսփոխանական ժողովը ընտրել ոևէ դաւանանքի պատկանող Հայերէ անխտրաբար. որ այդ Ազգային ժողովը լինի Հայ ազգի ներկայացուցիչ պաշտօնական մարմինը»[884]: Բայց այն ժամանակ պահպանողական ուժերը կատաղի պայքար մղեցին դրանց դեմ և տապալեցին առաջարկները: Լավ է, որ գոնե սահմանադրության հաստատումից հետո հայերը խելքի եկան իր գոհունակությունն էր հայտնում հոդվածագիրը[885]:

---

882 Նույն տեղում:

883 «Արմէնիա», թիվ 24, 1914:

884 «Արմէնիա», թիվ 24, 1914:

885 Խոսքն այն մասին է, որ մինչև XX դարի սկզբները (որոշ դեպքերում նույնիսկ հետագա տասնամյակների ընթացքում էլ) հայեր էին համարվում բացառապես

Շուտով սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թշնամական ճամբարների բաժանված խոշոր տերություններն զբաղված էին աշխարհը վերաբաժանելու մոլուցքով: Երիտթուրքական պարագլուխներն էլ, օգտագործելով այդ նպաստավոր պահը, ձեռնամուխ եղան ոսկորի նման իրենց կոկորդում խրված-մնացած Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելուն: Նախապես պետական ամենաբարձր մակարդակով ծրագրված հայերի տեղահանությունն ու ոչնչացումնիրականացվեց ամենավայրագ և մինչ այդ մարդկության կողմից անճանաչ միջոցներով ու մեթոդներով, որոնց զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր: Եղեռնի ցավն ու մահասարսուռ իրողություններն ինքնաբերաբար հետին պլան մղեցին նախկինում կարևոր համարվող շատ խնդիրներ ու հարցեր և, բնականաբար, մեծ մասամբ անդրադառնալով եղեռնին առնչվող նորաբնույթ թեմաներին՝ «Արմենիան» էլ դադարեց նախկին այդ խնդիրների մասին գրել:

5.2. «Արմենիա»-ի տեսակետները հայության ազատագրության ուղիների վերաբերյալ (1908-1920-ական թթ.)

Հիմնադրման օրվանից սկսած «Արմենիա»-ի ամենահեղափոխական «ոսկե դար» առաջին տասնամյակից հետո թերթի գաղափարաբանական էությունն առանձնապես մեծ փոփոխություններ չի կրել: Թերթն ավելի շատ եղել է ընթացիկ իրադարձությունների ազդեցության ոլորտում, արձագանքել դրանց և տեսական նոր ուղղություններ չի որդեգրել: Սակայն դա չի նշանակում, որ թերթի խմբագիրն ու նրա զինակիցներն անտարբեր էին դարձել սեփական ժո-

---

լուսավորչական եկեղեցու հետևորդները, իսկ կաթոլիկ, բողոքական և այլ եկեղեցիների հետևորդները՝ ոչ: Էլ չենք խոսում զանազան աղանդների մասին: Մի բան, որը ձեռնտու էր թուրքական իշխանություններին հայերի թվաքանակը եղածից զգալիորեն պակաս ներկայացնելու համար:

ղովրդի ազատագրության ձգտումների նկատմամբ: Ընդհակառակը, երիտթուրքական հեղաշրջումից հետո, հատկապես առաջին տարում, նրանք շատ էին ոգևորվել այդ սահմանադրության հռչակման փաստով և կոչ էին անում բոլորին «տարածել հայութեան մեջ հայրենիքի ազատութեան սուրբ գաղափարը և գաղափարակցութիւն կազմելով ոյժ զարգացուցել» և «ոչ վազել, ոչ ալ անշարժ նստիլ, այլ քալել. դեպի մեր նպատակ»[886]:

Հուսահատությունը հայ ժողովրդի կրոնական ու ազգային բնավորությանը հակառակ համարելով՝ «Արմենիա»-ն դյուրահավատորեն հայտարարում էր, որ սահմանադրությունը ժողովրդին կպարգևի բաղձալի ազատությունը, իսկ դժվարությունները ժամանակավոր են և «Ով որ յուսահատորեն կը խօսի, հայերէն չխօսիր: Ով որ կը յուսահատի, նա Հայ չէ»[887]: Հույսն է պահել հայ ժողովրդին դարեր շարունակ, կարդում ենք խմբագրականներից մեկում, Հռոմեական կայսրությունը, որ ժամանակին աշխարհի ամենազորեղն էր, վաղուց հեռացել է պատմության թատերաբեմից, իսկ հայ ժողովուրդը կա ու պիտի ապրի: Հետևապես, հայերը պիտի կարողանան ճիշտ օգտագործել սահմանադրության շնորհած ազատությունները և երբեք չընկրկեն դժվարություններից, քանի որ ապագան միշտ չհուսահատվողին է պատկանում:

1908 թ. հեղաշրջման հեղինակ երիտթուրքերը երկրում հռչակեցին դեմոկրատական ազատություններ և հայտարարեցին, որ այդուհետ կայսրության բոլոր քաղաքացիները, անկախ ազգային, կրոնական պատկանելությունից, հավասար են օրենքի առջև: Նախատեսվում էին նաև խոսքի, մամուլի, խղճի, միտինգների և մի շարք այլ ազատություններ: Երիտթուրքերի բերած այդ շնորհները տարբեր կերպ ընկալվեցին, մասնավորապես հայության մեջ ծայր առավ մի շարժում, որը հայտնի է «**բաց ու գոց**»-ի խնդիր անունով: Մայրաքա-

---

[886] «Արմենիա», թիվ 17, 1910:
[887] «Արմենիա», թիվ 39, 1910:

ղաք Կ.Պոլսում սկսված այդ շարժումը շուտով տարածվեց նաև գավառներում՝ տեղիք տալով երբեմն մեղմ, երբեմն սուր ու անզիջում բանավեճերի, որոնք հաճախ այնքան անզիջում էին դառնում, որ վերածում էին բախումների ու կռիվների: Խնդիրն այն էր, որ «ետսահմանադրական Թուրքիոյ մէջ եկեղեցիները պէ՞տք էր տրամադրել քաղաքական հաւաքներու, թէ ոչ»[888]: Եկեղեցին քաղաքական միտինգների համար հավաքատեղի դարձնելու կողմնակիցները հիմնականում արտասահմանում ուսանած դաշնակցական երիտասարդությունն էր, որոնցից ոմանք անկեղծ մղումներով, իսկ ոմանք՝ նոր ու ավելի շատ նորովի երևալու մղումներով, երբեմն խախտում էին դարերով ընդունված ու սովորույթի ուժով սրբագործված նորմերը և կատարում անթույլատրելի արարքներ եկեղեցու ու եկեղեցականների նկատմամբ: Այս հարցերը լայն քննարկման առարկա էին դարձել ողջ հայության մեջ՝ իրենց արձագանքները գտնելով նաև գաղութներում:

«Արմենիա»-ն՝ որպես հայության իղձերի ու ձգտումների ջատագով-մունետիկ, չէր կարող անտարբեր մնալ, և, բնական է, որ թերթում առկա են մեծաքանակ հրապարակումներ այդ խնդրի վերաբերյալ: Թերթի մոտեցումները հանգում էին երկու ծայրահեղ կողմերի՝ «բացի» ու «գոցի» կողմնակիցներին պատճառաբանված հենքով հաշտեցնել և իրատեսական լուծումներով խնդիրը կարգավորել: Դրանով հնարավոր կդառնար հասարակությանը զերծ պահել անտեղի լարվածությունից ու երկփեղկվելուց: Արժևորելով խնդիրը՝ Մ. Փորթուգալյանը մի շարք խմբագրականներում անդրադարձել է դրան: Այսպես, «Ցաւալի երեւոյթներ» առաջնորդողում նշելով, որ երկրից ազգային վիճակի մասին եկած լուրերը տխրառիթ են, հոդվածագիրը շեշտում է, որ դրանք հաճախ ավելի շատ հակառակասիրության արդյունք են, «իմ խօսքս պէտք է ըլլայ»ի պնդումներ: Պատասխանելով հանիրավի մեղադրանքներին և պարզաբանելով, որ «Արմե-

---

[888] Ասբարեզ.քոմ կայք (asbarez.com/arm/43143/), 17.01.2007:

նիան» բոլորովին էլ դեմ չէ եկեղեցիներում քաղաքակիրթ ձևերով աշխարհիկ թեմաների մասին բանախոսություններ կարդալուն, թերթը գրում է. «Մենք չենք կարծեր թէ աշխարհականներին ատենախօսութիւնովը եկեղեցիները կը սրբապղծուին»[889]: Խոսքն այն անընդունելի պահվածքի մասին է, շեշտում է նյութի հեղինակը, որ մեր հայառակորդները «կը ճգնին փաստաբանել, մի միայն ինատի համար, Դաշնակցականներին դէմ ռամիկները գրգռելով զանոնք վարկաբեկելու, անոնց ազդեցութիւնը կոտրելու համար...»[890]: Այդ տեսակի մարդկանց համար թեկուզ «Ազգը ոտքի տակ երթայ, ժողովուրդը ջնջուի, բայց իրենց խօսքն ըլլալ: Եւ ով որ իրենց այդ պահանջի համեմատ չխորհիր, նա անկրօն է»[891],-շարունակում է մեկնաբանել պարբերականը: Մյուս կողմից՝ «Արմենիա»-ն մերժում է «բաց»-ականների պնդումներն այն մասին, որ եկեղեցում թույլատրելի է ամեն ինչ. «Կարելի՞ բան է որ մէկը յանդգնի ելնել եկեղեցիին բեմէն «ազատ սէր» քարոզել և հայ ժողովուրդն ալ ոչ միայն տեղնուտեղը պատժած չլինի այդպիսի անպատկառ ու իր սրբութիւններն անպատուող հրապարակախօսի մը»[892]:

«Արմենիա»-ն բացատրում է իր ընթերցողներին, որ ինքն սկզբունքորեն ընդունում է կուսակցականությունը, ցանկացած հարցի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումների հնարավորությունը, սակայն մի կարևոր վերապահումով, որ դրանք չեն հակասում կամ վնասում ազգային ընդհանուր շահերին: Քանի որ. «Ազգային ընդհանուր շահերը կուսակցական մասնաւոր շահերէն վեր պետք է նկատուին միշտ. տարակարծիք կուսակցութեան մը վնասելու համար պետք չէ զոհ տալ ազգային իրաւունքները»[893]: Ցավոք, քիչ չեն եղել դեպքեր, երբ հայերիս մոտ կուսակցամոլությունն ու հակառակասիրությունը

---

889 «Արմենիա», թիվ 6, 1910:
890 Նույն տեղում:
891 Նույն տեղում:
892 Նույն տեղում:
893 «Արմենիա», թիվ 47, 1910:

երբեմն այնպիսի չափերի են հասել, որ ազգային շահը ստորադասվել է կուսակցական մղումներին: Եվ ամեն անգամ, երբ առիթ էր ներկայանում, թերթի կարծիքով շատ քաղաքական գործիչներ տուրք էին տալիս կուսակցական ցավագար մոլեռանդությանը: Այդպիսի դրսևորումներ եղան նաև նշված խնդրի կապակցությամբ: Բանը հասավ այնտեղ, որ միայն իրենց խոսքն առաջ տանելու մոլուցքով տառապողները դիմեցին թուրքական իշխանություններին և հայտարարեցին. «Հայերս մեր եկեղեցիների մեջ աղօթքէ զատ ուրիշ ոևէ բանի համար հաւաքուելու և խօսելու իրաւունք չունինք և սրբապղծութիւն են այդպիսի հաւաքումները. ուստի ձերբակալեք ու պատժեք հոն հաւաքուած հայ ժողովուրդը»[894]: Կարծեմ սա այն դեպքերից է, որ մեկնաբանություններն իսկապես ավելորդ են: Մամուլն այս պարագայում «Արմենիայի» կարծիքով կարող է բանավիճել, քննարկել խնդիրը: Նրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի պնդելու իր տեսակետներն ու մոտեցումները, սակայն երբ հարցը ժողովրդի ընդհանրական շահերն էր շոշափում, պիտի խելքի գային, «գոնե պահ մը մոռնան կուսակցական հին հաշիւներ ու կռիւները, համերաշխուին և իրար աջակցին, երբ ազգային շահերն ու իրաւունքները կը պահանջեն համերաշխ գործակցութիւն»[895]:

Այնուհետև Մ. Փորթուգալյանը բացատրում էր, որ «բաց ու գոցն» ընդամենը առիթ էր, պատրվակ ժողովրդի «անկարող միամիտներու խաւին» շահագործելով հեղափոխական գործին ծառայող կուսակցություններին հալածելու և իրենց արտոնյալ դիրքը հասարակության մեջ ապահովելու համար: Պատմական փոքրիկ էքսկուրս կատարելով՝ Մ. Փորթուգալյանը պարզաբանում էր, որ ամենախիստ բռնապետական վարչակարգերի ժամանակներում անգամ «հայ ազգը իր հանրային գործերի վրայ խորհրդակցելու և ատենախօսելու համար իր եկեղեցիների մէջ գումարուելու իրաւունքը դարերէ ի վէր վայելած

---

[894] «Արմենիա», թիվ 47, 1910:
[895] Նույն տեղում:

է»[896]: Իր ասելիքն ավելի հաստատելու նկատառումով նվիրյալ հայորդին վկայակոչում էր աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովուրդներից հույների օրինակը և գրում, որ «Յոյներն անգամ, որոնք կրօնական մոլեռանդութեան և բծախնդրութեան մէջ կը գերազանցեն Հայերը, այս միջոցին Օսմ. Խորհրդարանի մէկ որոշման դէմ բողոքելու համար միթինկներ կը գումարեն իրենց եկեղեցիների մեջ»[897]: Շարունակելով զարգացնել միտքը՝ Մ. Փորթուգալյանը զայրացած ու զարմացած գրում էր, որ մահմեդականներն անգամ, որոնք քրիստոնյաներից ավելի մոլեռանդ կրոնամոլներ են, ժողովներ ու միտինգներ են անում իրենց մզկիթներում, և բառի ստուգաբանությամբ ևս բացատրում էր, որ նրանք «արաբական բառով ճամի կանուանեն, այսինքն ժողովատեղ (ճեն օլունաճագ և էր): Արդ, այս ի՞նչ տեսակ տրամաբանութիւն է որով կըսեն և կորոշեն թէ չէ կարելի, սրբապղծութիւն է ժողովրդին օգտակար ժողովներ ընելը այն շենքերի մեջ որ թէ հրեական, թէ քրիստոնեական և թէ մահմետական կրօնները միաձայն անուանուած են արդեն ժողովրդանոց կամ ժողովարան (սինակօկ, եկեղեցի, ճամի)»[898]: Այնուհետև Մ. Փորթուգալյանը ներկայացնելով, որ կրոնական ժողովի անդամների մեջ «տակաւին կը գտնուին» այնպիսի տաքգլուխ ու տգետ եկեղեցականներ, որոնք չիմանալով, որ հունական ծագում ունեցող «եկեղեցի» «բառը (որ ժողովուրդ կամ ժողովարան կը նշանակէ) իբրև հայերեն բառ մը կը ստուգաբանէին «եկ և եղիցի» և կըսեին ժողովրդին թէ եկուր այս շենքին մէջ աղօթէ՝ որ Աստուած լսէ, ու կատարուի խնդիրքդ»[899], ժողովրդին այնտեղ հավաքվելու և կարևորագույն խնդիրներ քննարկելուն արգելք են դառնում:

---

896 «Արմենիա», թիվ 38, 1910:
897 «Արմենիա», թիվ 38, 1910:
898 Նույն տեղում:
899 Նույն տեղում:

Մեկ այլ՝ «Եկեղեցիների մէջ գումարումների խնդիրը» խմբագրականում ևս, անդրադառնալով քննարկվող հարցին, Մ. Փորթուգալյանն այն բնորոշում էր «Մի բաժակ ջրի մէջ փոթորիկ» և ափսոսանք ապրելով զուր կորսված ջանքերի ու ազգի ապագայով մտահոգ անձանց միջև թշնամանք սերմանելու համար՝ գրում էր. «անտեղի էր եկեղեցիներին մէջ ժողովրդական գումարումներն ու հրապարակախօսութիւններն արգիլել իբրև սրբապղծութիւն և ի զուր կռիւ յարուցանել հայ ժողովրդին մէջ»[900]: Իսկ ժողովուրդն էլ, տեսնելով այդ իրավազրկումների անիմաստ գործընթացները, «կը սկսի պաղել եկեղեցականներեն ալ, եկեղեցիէն ալ», ինչը կարող էր համազգային խնդիրների լուծման տեսանկյունից մեծ ու անդառնալի վնասներ պատճառել: Հետագայում աստիճանաբար կրքերը հանդարտվեցին, ինչպես նաև տեղի ունեցած մի շարք ավելի կարևոր իրադարձություններ ստվերեցին խնդիրը: «Արմենիա»-ն էլ դադարեց այդ մասին գրել և ավելի հաճախ քննարկում էր ազգի ազատության հասնելու ուղիները:

Սեփական ժողովրդին ավելի բարվոք վիճակում տեսնելու ճանապարհ «Արմենիա»-ն համարում էր, նախ՝ հայության ցավերի մասին բարձրաձայնելը, ապա անդադար աշխատել ու կրթվելը և մերժել բոլոր նրանց, ովքեր «ուսած կը լինին համալսարանի մը մէջ, կելնեն Թիւրքահայաստանի փրկիչներ կը ներկայանան, թէև չեն ճանաչեր դեռ մեր հայրենիքը»[901]: Շարունակելով նույն ոգով՝ թերթում խոսվում է այն մասին, որ «զենքը ձեռքին կռուի դաշտին վրայ հայրենիքի համար մեռնելու յօժար մարդեր աւելի դիւրաւ կրնան գտնուիլ», քան թե այդ կռվի համար տարիներ շարունակ պատրաստողներ ու պատրաստվողներ, որովհետև միշտ էլ դժվար է եղել գտնել «մաս մաս, պատառ պատառ, մեռնելու ընդունակութիւն կամ յօժարութիւն ունեցող գործիչներ»[902]: Գաղտնիք չէ, որ ազատության գաղափարը տա-

---

[900] «Արմենիա», թիվ 38, 1910:
[901] «Արմենիա», թիվ 21, 1911:
[902] «Արմենիա», թիվ 27, 1910:

ռածելու կարևոր միջոցներից մեկն էլ լրագիրն էր, և «Արմենիա»-ն երկար տարիներ իր հնարավորությունների ներածին չափով անընդհատ կատարում էր այդ աշխատանքը: Հետսահմանադրական շրջանում ևս, չհոգահատվելով օտար տերությունների ճնշումներից, ճշմարտությունն ասելու համար չվախենալով և չընկրկելով ամբոխի նախապաշարումներից ու նրա տգիտությունն ու դյուրահավատությունը շահագործող պոռոտախոսների տարածած զրպարտություններից՝ «կը շարունակէ իր կռիւ մի միայն ճշմարտութեան և ազգի օգտին ծառայած լինելու փափաքով»[903]: Լավ էր, որ «Արմենիա»-ն իր այդ դժվարին առաքելության ընթացքում «օժանդակութիւն գտած է Հայ ազգի զգացող և հասկցող դասակարգէն և Արմենիաի անցեալը երաշխաւորութիւն մ'է իր ներկայի և ապագայի համար»[904]:

«Թուրքիոյ ապագայն եւ մեր ազգը հանդէպ Ռուսիոյ» ծավալուն հոդվածաշարում «Արմենիայի» վերլուծաբան Պ. Տոնապետյանը, մանրամասն ներկայացնելով միջազգայինը, նշում էր, որ օտարերկրացիները, լավ չճանաչելով թուրք ու քուրդ ժողովուրդներին, անօգուտ խորհուրդներ են տալիս հայերին՝ իրենց ապագան կերտելու հարցում: Կոտորածները և «վատթար վարչութիւնը Թուրքիոյ մէջ Սուլթան Համիտի օրէն չսկսան,- նշում է հոդվածագիրը,- այդ ցեղը կոտորածներով մտաւ Հայաստան տասներորդ դարին և այնպէս շարունակեց»[905]: Այդ են վկայում հայ հին պատմագիրների գործերում առկա շատ քստմնելի նկարագրութիւններ: Բայց «մենք սովորութիւն չունինք և մեր քայլերը անցեալի փորձերին վրայ չենք ուղղեր»[906],- գրում էր հեղինակը, ապա շարունակում, որ «Հայաստանը առանց Հայի» արտահայտության հեղինակը Լոբանովն է, և հարկ չկա, որ հայերն էլ հայասպանությամբ իրագործեն դա, այլ «աւելի լաւ է որ ի-

---

903 Նույն տեղում:
904 Նույն տեղում:
905 «Արմենիա», թիվ 22, 1913:
906 «Արմենիա», թիվ 22, 1913:

ռագործի «Հայաստանը Հայերով», և բոլորը պիտի գործեն այդ ուղղությամբ:

Ազգային խնդիրներում հաջողություններ արձանագրելու համար, «Արմենիան» առաջարկում էր անընդհատ գործել, սակայն չկորցնելով չափի զգացումը. «չափատրութիւնը օգտակար է և ՓՐԿԱՆՔ, իսկ չափազանցութիւնը վնասակար է և ՓՈՐՁԱՆՔ...»[907]: Իսկ հաղթանակի հասնելու համար «Չափաւորութեան մէջ փրկանք, չափազանցութեան մէջ փորձանք» հոդվածի հեղինակ Յ. Ս.-ի կարծիքով «փափաքը միայն բաւական չէ իրեն նպատակին հասնելու, պէտք է նաև հմտութիւն»[908]:

Ժողովրդի փրկության համար որպես դեղատոմս «Արմենիան» առաջարկում էր նաև կայուն հիմքերի վրա ստեղծված ազգային միություն: Համանուն հրապարակման մեջ նշվում է, որ ստեղծված ծանր պայմաններում «ամէն ժամանակէ աւելի իր անհրաժեշտութիւնը կզգացուի», քանի որ «այնքան գեղեցիկ ջանադրութեամբ յառաջ եկած շարժումը կը խաթարուի ապաժամ»[909]: Իսկ լավ միություն ստեղծելու համար հոդվածագիրն առաջարկում էր ուսումնասիրել եվրոպական քաղաքակիրթ երկրների փորձը, որտեղ «մէկը միւսին չը պարտադրեր իր սկզբունքներ և չը պահանջուիր տեսակէտներու ջնջում»: Որտեղ չկային անունի և եսի խնդիր և «բաւ էր որ ընդհանուր շահը չը վնասուի և հայրենիքը չը տուժէ»[910]: Այն դեպքում, երբ հայերի մոտ քինախնդրությունն ու եսի գործոնը հաճախ գերակշիռ էին դառնում և վնասում նվիրական շատ գործերի: Այնպես որ, եզրակացնում է հոդվածագիրը, «Ազգային Միութիւնը հրամայական դարձած է մեզ համար», որը եթե գլուխ գա, հայը ցանկացած կռիվ կհաղթի, քանի որ անհաղթելի է, երբ միասնական է և 1915-ի հունիսի 15-

---

[907] «Արմէնիա», թիվ 9, 1913:
[908] Նույն տեղում:
[909] «Արմէնիա», թիվ 33, 1917:
[910] «Արմէնիա», թիվ 33, 1917:

ին, քսան հերոսներից Փարամազի[911] ոգով գրում էր. «Թիւրքերը կը կոտորեն հայ մարմինները բայց հայ հոգին կրնայ մնալ անմահ»[912]:

«Արմենիա»-ի մեկ այլ հրապարակման մեջ ուղղակի հայտարարվում էր, որ «ուժերու միոգենէն կախում ունի ապագայ վերակազմեալ Հայաստանը»[913]: Ջանքերը մեկտեղելով միայն՝ կարելի էր վերաշինել ավերված տունը, իսկ մոխիրները ոչ թե արցունքով, այլ ճակատի քրտինքով թրջելով է հնարավոր վերացնել: Զարգացնելով այդ տեսակետը՝ Մ. Խանպէկեան հոդվածագիրը գրում էր, որ կարևոր էր նաև հաղթահարել այնպիսի վտանգավոր ախտ, ինչպիսին անտարբերությունն էր, ապա շարունակում. «Անտարբերութիւնը զօրաւոր է և մահացու հաշիշի նման որ չի քնացներ լոկ, այլ կը սպաննէ տակաւ տակաւ անհատներ, սերունդներ և ազգեր ալ ի վերջոյ»[914]: Կյանքը, որ հայի համար իրական «կուռոյ մը փոխուած է ամէն երիտասարդ պարտի իբր կամաւոր մասնակցիլ այդ կռտյն»՝ ցանկալի հաղթանակին հասնելու համար:

Մեկ այլ հոդվածագիր՝ Թ. Եղիշեն էլ ողջունելով միություն ստեղծելու գաղափարը առաջարկում էր դրան զուգընթաց հեռու մնալ անձնական ճղճիմ շարժառիթներից, անիշխանությունից, հայությանը պակասող առողջ դատողությունից ու ինքնակառավարման ունակությունից: Լինել զգոյշ, աչալուրջ, քանի որ ստեղծված պայմաններում անձնական փառամոլությանը, «կիրքերուն յագուրդ տալը, խառնակութիւններ և գրգռութիւններ յարուցանելը...» կտանեն անխուսափելի կործանման[915]:

Այդ վճռական պահերին «Արմենիա»-ի մեկ այլ հոդվածագրի կարծիքով անհրաժեշտ էր, որ հայության ամբողջ ուժերը հավաքվեն,

---

[911] Հայտնի հնչակյան գործիչը կախվելուց առաջ քաջաբար հայտարարել էր. «Դուք մեր մարմինները կրնաք կախել միայն, իսկ մեր գաղափարը՝ ոչ»:

[912] «Արմէնիա», թիվ 43, 1917:

[913] «Արմէնիա», թիվ 6, 1917:

[914] Նույն տեղում:

[915] «Արմէնիա», թիվ 46, 1917:

կազմակերպվեն և «կարգապահ գործունէութեան մը մղուեն եթէ կուզեն ապրիլ իբր Հայ»[916], ինչը լոկ վերացական խոսք չէ, այլ «կը պարունակէ իր մէջ մեր բոլոր արդար ցասումը և մեր բարոյական ու տնտեսական յոյսերը»[917]:

«Արմենիա»-ի խմբագրակազմի կարծիքով հայ ժողովրդի կենսունակության ամենաուժեղ կովաններից մեկը եղել է բարոյական բարձր նկարագիրը: Սակայն համաշխարհային մեծածավալ փոփոխությունները խաթարել են նաև այդ սրբությունները. «վերջին քառորդ դարու մէջ է որ բարքերու անկում մը զգայապէս խորացած է որովհետև հայկական ներքին մշակոյթի թեթև զարգացումը շրջապատին աննպաստ պայմաններով, համապատասխան չէր եւրոպական քաղաքակրթական հոսանքի բազմաթիւ ճիւղաւորումներուն»[918]: Դրա արդյունքում խաթարվում էին հայկական ավանդական կորովը, կենսունակությունը, արժանապատվության զգացումը և որ ամենակարևորն է՝ կամքը, մանավանդ հայրենասիրական վսեմ թռիչքը: Այդ անկումին դիմագրավելու համար հոդվածագիրն առաջարկում էր ուժ, կորով և հաստատակամություն, քանի որ արդեն «բարոյական փճացումը կսպառնայ հայրենասիրական ոգիի անսայթաք զարգացման»[919]:

Պակաս կարևոր գործոն չէ նաև ժողովրդի ոգին բարձր պահելու ունակությունը, իսկ հայի ոգին «ընկճուողներէն չէ, տակաւին ոյժ ունի ցցուելու իր վրայ ծանրացող յաւիտենական անարդարութեան դէմ»[920],- շարունակում է իր մտորումները Թ. Եղիշեն մեկ այլ հրապարակման մեջ: Իսկապես, ինչպե՞ս վիճաստվել, երբ հայ ոգին, «արիւններէն ու արցունքներէն կենարար հիւթ ծծած, ինքզինք կառաջնորդէ

---

[916] «Արմէնիա», թիվ 47, 1917:
[917] Նույն տեղում:
[918] «Արմէնիա», թիվ 38, 1917:
[919] «Արմէնիա», թիվ 38, 1917:
[920] «Արմէնիա», թիվ 39, 1917:

նոր ուղիներու»[921]: Այդ լավատեսությունն էլ հիմնված չէ վերացական հույսերի ու երազանքների վրա, այլ դրա արմատները «ամրապէս խարսխած են հայ կենսունակութեան և տոկունութեան խորքերուն մէջ»[922]: Հեղինակի կարծիքով սև օրերը կանցնեն, բարեկամները կօգնեն, և, որպես օրինակ, վկայակոչում էր այն իրողությունը, թե «-Ռուսիա իր ազատասլաց յեղաշրջումով իր բարի ուշադրութիւնը կը խոստանայ արիւնոտ հայրենիքի մը»[923], Ֆրանսիան եռանդ «կը ներարկէ», իսկ ազգի ոգին կրկին հարություն կառնի, կլարի բոլոր ուժերը, կթոթափի բռնատիրությունը և իր «ինքնիշխան բոյնը կը կառուցանէ»[924]:

«Արմենիա»-ի տեսաբանները համոզված էին, որ պատերազմի ավարտով աշխարհում արմատական փոփոխություններ կլինեն և նոր՝ «ստրկացած ժողովուրդներու վերածնութեան դարագլուխն է որ կը բացուի լուսաշող»[925]: Որ հայրենիքի ազատության ու իրավունքի համար թափած արյունն ապարդյուն չէր անցնի, որ հայ ժողովրդի կենսունակության, ազգային հզորության և կամքի առջև վերջապես պիտի խոնարհվեին, ու մեծ տերությունները պիտի վերջապես հաշվի առնեին հայության շահերը: Իսկ դրա համար միշտ անհրաժեշտ էր համազգային համախմբվածություն, հզոր ազգային ուժ, որը, նրանց կարծիքով, գոյանում էր հայրենասիրական և քաղաքացիական առողջ «ըմբռնողությամբ, իրարահասկացողութեամբ և զոհողութեան ոգիով»[926]: Մի պահ, գրում է Թ. Եղիշեն, «անհատապաշտ միտումները դադրին եւ գալէ, մաքուր և վսեմ ազգային արժանապատուութեան զգացումը թագատրէ մեր մէջ», և հայերն անպայման կհաղթահարեն ցանկացած դժվարություն: Մյուս կարևոր գործոնը ներքին ուժ գոյաց-

---

[921] Նույն տեղում:
[922] Նույն տեղում:
[923] «Արմէնիա», թիվ 39, 1917:
[924] Նույն տեղում:
[925] «Արմէնիա», թիվ 48, 1917:
[926] Նույն տեղում:

նելն էր: Հատկապես, երբ հայ ժողովուրդը «փորձուութեան ամենահրա-վառ բովէն կանցնի», այդ ճշմարտությունը դառնում էր հրամայական և այլևս անվիճելի:

Հայ ժողովրդի սպագայի նկատմամբ հավատով լեցուն «Արմենիան», վկայակոչելով Վանի 1915 թ. հերոսամարտի օրինակը, հայտարարում էր, որ միայն «ներքին կրկնակի ոյժ ամբարելով կարելի է դիմագրաւել արտաքին խոչընդոտներուն»[927]: Վերլուծելով անցյալում թույլ տված սխալները՝ թերթը հույս էր հայտնում, որ հայ ժողովուրդը կհաղթահարի ցանկացած դժվարություն, որովհետև տակավին «կը պահէ կենսունակութեան և կորովի առկայծող կրակը»[928], հանդես է բերում եսամերժ և հավատավոր գործելակերպ: Որովհետև հոսալքության կողքին միշտ քայլել է կորովը, տառապանքի կողքին՝ կամքը, և բոլոր այն պահերին, երբ կործանումն անխուսափելի էր թվում, հայ ազգը «վճռական թափով մը կը ցցուի սպառնացող վտանգին դէմ յանդիման»[929]:

«ՀԱՅ ազգը. ամենասև օրերուն մէջ իսկ գիտցած է ցոյց տալ արիութիւն և ազատատենչ գաղափարներու բարձր թռիչքներ»[930]: Միայն թե, մտահոգություն էր հայտնում հոդվածագիրը, հարկավոր էր վերափոխվել, շարքերից դուրս մղել պատեհապաշտներին, ովքեր, միայն իրենց անձը չափանիշ դարձնելով, վճռական տեսակետներ են հայտնում կարևոր հարցերի վերաբերյալ: Հարկավոր էր բացառել նախկինում տեղ գտած այնպիսի իրավիճակները, որոնց ժամանակ «ամէն մարդ իր անունին դափնի մը ևս հիւսելու մտահոգութեամբը և տղայամտութեամբը յառաջ կը նետուէր»[931] և ընդհանուր գործին մեծ վնաս կպատճառեր: Հարկավոր էր ըմբռնել, որ իրավունքը «ողորմութիւն չինդրեր», և ազգին անշահախնդրորեն նվիրելու պատրաս-տա-

---

[927] «Արմենիա», թիվ 1, 1917:
[928] «Արմենիա», թիվ 1, 1917:
[929] «Արմենիա», թիվ 4, 1917:
[930] «Արմենիա», թիվ 48, 1917:
[931] «Արմենիա», թիվ 50, 1917:

կամությունը վսեմ զգացողություն է, որին անհրաժեշտ է նվիրվել անմնացորդ:

Թերթի գլխավոր աշխատակից և անուղղելի լավատես Թ. Եղիշեն, արտահայտելով «Արմենիա»-ի խմբագրակազմի տեսակետները, գրում էր, որ աստիճանաբար ժամանակները փոխվում էին, և հեկեկանքի ու խեղճության փոխարեն զգալի էին դառնում նոր թափով գործ անելու անհրաժեշտության զգացումները, աչալրջություն, կամք և նվիրվածություն դրսևորելով՝ հայ բեկորները համախմբվում էին ու «վրէժի և վերածնութեան բարձունքները կը սլանան. այս խոյանքը նուիրական է, հաւատաւոր և փրկարար»[932]: Միայն թե հարկավոր էր զգույշ լինել, արտաքին ճնշումներին ու խարդավանքներին տուրք չտալ այլևս, չհուսահատվել, իսկ հրաշքով ողջ մնացածները «իրենց միաբանութեամբ կարդիւնաւորեն նախկին զոհողութիւնները» և ապագայում կապահովեն հաղթանակներ: Կարևոր էր նաև տուրք չտալ կործանարար կուսակցականությանը, շարքերից վռնդել խառնակիչներին ու թեթևսոլիկներին, առաջ շարժվել առողջ ու հաստատակամ[933]: Պետք էր նաև երբեք աչքաթող չանել այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին ազգային դաստիարակությունն է, որը պիտի ուղղված լիներ յուրաքանչյուր անհատի, քանի որ եղեռնից հետո «ամէն հայ անհատ բազմապատիկ սիրելի է որովհետեւ նա իր մէջ կը խտացնէ բոլոր մեր պաշտելի զոհերուն նրբանիւթ գոյութիւնը»[934]: Այն դեպքում միայն, նշում է Մ. Խանպէկեան հոդվածագիրը, հայ ժողովուրդը հաջողություն կունենա, երբ սերունդներին մատուցի անցյալի հերոսական փառքը, «նոյն ատեն միայն կը լուծուին ժանգոտած շղթաները ու կանէանայ ընդ միշտ ստրկութեան ոգին նոր սերունդի կորովի սրտէն»[935], երբ միակամ լինի:

---

[932] «Արմէնիա», թիվ 50, 1917:
[933] «Արմէնիա», թիվ 4, 1917:
[934] «Արմէնիա», թիվ 5, 1917:
[935] Նույն տեղում:

Մեկ այլ կարևոր խնդիր էլ էր քննարկում «Արմենիա»-ն: Թերթի տեսաբանների դիտարկումներով ցավալի էր տեսնել միևնույն հայրենիքի ու նույն ազգի տարբեր հատվածների՝ արևմտահայերի և արևելահայերի միջև առաջացած խորթությունը և, որ ավելի վտանգավոր էր՝ «իրարմէ գրէթէ բոլորովին անտեղեակ կացութիւնը»[936]: Անցյալում էլ, նշում էր Թ. Եղիշեն, հայության երկու հատվածներն իրար «վրայ օդային երազներով կանդրադառնային», ինչի պատճառով հայկական դատի տեսանկյունից շատ հաճախ հակասական և իրար մերժող քայլեր էին ձեռնարկվում: Հայությունը միամտորեն կարծում էր նաև, որ «արտասահմանի հայութենէն պիտի գար իր փրկութիւն»[937]: Պատերազմի ընթացքում ևս արտասահմանի հայությունը գրեթե անտեղյակ էր, թե ինչ էր կատարվում երկրում: Նմանապես արտասահմանի հայությունն էլ «անթափանց վարագոյրով մը ծածկուած էր երկրի հայութեան աչքէն որ այդ վիճակի մէջ թերևս սին յոյսերով կոգևորուէր»[938]: Հենց սկզբից էլ այդ սխալ կացությունը խանգարեց ու խոչընդոտեց ազգային պայքարը և առիթներ տվեց ցավալի անհամաձայնությունների և «հակասական գործունէութիւններու. և այս է բուն անջրպետը, որի վերացման համար պէտք է աշխատիլ ամէն գնով»,- հիրատեսորեն եզրակացնում է հոդվածագիրը:

«Արմենիա»-ի՝ հաջորդ տարիներին լույս տեսած համարներում ևս տեղի ունեցած իրադարձություններին հաճախակի տեսական-վերլուծական անդրադարձներ կան, որոնցում փորձ է արվում հասկանալու կատարված իրողությունները և փնտրել-գտնելու թույլ տրված սխալների պատճառները, որոնք հանգեցրին այդ աննախադեպ դժբախտություններին: «Մենք մեզ լիովին չենք ճանչնար և չենք գիտեր բուն աղբիւրները մեր կրած դժբաղդութեանց»[939],- գրում էր

---

[936] «Արմէնիա», թիվ 10, 1917:
[937] Նույն տեղում:
[938] Նույն տեղում:
[939] «Արմէնիա», թիվ 16, 1921:

Թ. Եղիշեն, ապա փորձելով պատասխանել բոլորին տանջող հարցին, բացատրում էր, որ կոաակցականությունն ու անմիաբանությունը եղան այն հիմնական պատճառները, որոնք խանգարեցին դժվարությունների դեմ արդյունավետ պայքարելու համար: Պատճառներից մեկն էլ թշնամու խիստ վատաբարո լինելն էր. «Թիւրքը գազան մըն է, բարբարոս ու վայրագ»[940]: Շարունակելով իր պարզաբանումները հոդվածագիրը՝ նաև զայրացած ընդգծում էր, որ հայերն էլ «մէկ ձեռքով ազատութեան ջահը վառեցին, միւսով հողմնահարը մօտեցուցին անոր. մէկ ձեռքով շէնքին հիմքը դրին, միաւոյ ական պեղեցին»[941]:

Շատ էին նաև կանխատեսումներն ու տարատեսակ տեսակետներն ապագայի նկատմամբ: Միայն թե աստիճանաբար նախկին ազատաբաղձ, պայքարի կոչերով հարուստ հրապարակումներին ավելի շատ փոխարինելու էին գալիս իրադարձությունների անմիջական ազդեցության ներքո գրված արձագանք-նյութերը: Հետո էլ, 1914 թվականից սկսած՝ հայ ժողովրդի կյանքում այնպիսի շրջադարձային փոփոխություններ տեղի ունեցան, որ նոր ծրագրեր մշակելու և կանխատեսումներ անելու ո՛չ հնարավորություն կար, ո՛չ էլ ցանկություն: Իհարկե, թերթի այդ տարիներին լույս տեսած համարներում երբեմն-երբեմն հանդիպում են ապագային վերաբերող հրապարակումներ, սակայն դրանք հիմնականում ցեղասպանությունից հետո հուսալքված ժողովրդին ապրելու, ստեղծված կործանարար իրավիճակները հաղթահարելու կոչ-հորդորներ էին. «Շարունակենք պայքարնիս. յաղթանակը ամենէն ուժովինը չէ միշտ, այլ երկար դիմացողինը. ջանանք այդ տոկունութեան կորովն ու ոյժը բազմապատկելու, բայց ձեռք ձեռքի և սիրտ սրտի»[942]: Իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո «Արմենիա»-ի խմբագրակազմը գլխավոր խմբագրի պաշտո-

---

[940] «Արմէնիա», թիվ 20, 1921:
[941] Նույն տեղում:
[942] «Արմէնիա», թիվ 12, 1922:

նում Մ. Փորթուգալյանին փոխարինած Թ. Եղիշեի առաջնորդությամբ աստիճանաբար համարելով, որ հայության փրկության իրատեսական ուղին տվյալ պահին դա էր, և արձանագրելով, որ «ստիպուած պիտի ապաւինինք դարձեալ յոյսին որ այսօր Երևանը կը ներշնչէ: Հոն կայ խաղաղութիւն և կայ ուրեմն կարելիութիւն զօրանալու»[943], սկսեց հայացքը հառել դեպի նոր Հայաստան:

5.3. Հայկական հարցի տեսլականը «Արմենիա»-ի էջերում

Հայկական հարցը մշտապես եղել է Մ. Փորթուգալյանի ու նրա «Արմենիա»-ի ուշադրության կենտրոնում: Նախքան թերթի հրապարակումներին անդրադառնալը՝ նախ՝ համառոտ ներկայացնենք այդ հարցի բովանդակությունը, որպեսզի թերթի մոտեցումներն ավելի ըմբռնելի դառնան:

1878 թվականից սկսած՝ միջազգային քաղաքականության կիզակետում գտնվող և Օսմանյան ու Ռուսական կայսրությունների փոխհարաբերությունների կարևոր հանգրվան հանդիսացող Հայկական հարցը՝ որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, թուրքական բռնատիրությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման, համախմբման և դարավոր բաղձանքի՝ սեփական պետականության վերականգնման և այդ նպատակներին հասնելու համար նրա մղած ազգային-ազատագրական պայքարի անվանումն է դիվանագիտության պատմության մեջ: Մեկ այլ բնորոշմամբ հայերի նկատմամբ իրագործված զանգվածային կոտորածների և տեղահանության միջոցով նպատակային բնաջնջման և արմատախիլ անելու քաղաքականության, դրա հետևանքով եվրոպական տերությունների կողմից օսմանյան կառավարությանը պարտադրվող հայկական բարեփոխումների իրակա-նացման, հայ ինքնապաշտպանական ու ազգային-ազատագրական պայքարի, ցեղաս-պանութ-

[943] «Արմենիա», թիվ 23 1923:

յան միջազգային ճանաչմանն առնչվող հիմնահարցերի ամբողջությունն է:

Հայկական հարցի առաջացումն ի սկզբանե պայմանավորված էր հայոց պետականության անկումով, իսկ հետագայում՝ XIX դարի 70-ական թթ. սկսած, Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի վիճակի կտրուկ վատթարացումով և ազգային ինքնագիտակցության զարթոնքով: Սկզբնական շրջանում այն դրսևորվում էր հայերի երբեմն ինքնավարության, իսկ երբեմն էլ՝ անկախության ձգտումների տեսքով: Բայց ժամանակի ընթացքում վերածնվում է առավելապես արդեն որպես քաղաքացիական ազատության խնդիր, կյանքի, գույքի, պատվի և մշակութային զարգացման ապահովության ձգտում: Քանի որ Հայկական հարցը Թուրքիայում վայրենի կոտորածների, կեղեքումների, հալածանքների, գաղթականության ու գերազանցապես ֆիզիկական գոյության խնդիր էր: Դրա բարեհաջող լուծումը գլխավորապես կապված է եղել Ռուսաստանի հաղթանակների հետ, ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Թուրքիային, նա մեղսակից է նրանց գազանություններին ու հայկական սարսափներին:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում էլ ռուսական զենքի հաղթանակի հետ մեծ հույսեր կապելով՝ հայ ժողովուրդը ոտքի ելավ և սատարեց նրան բոլոր հնարավոր միջոցներով, քանի որ նրա ազատաբաղձ կենսական ձգտումն օբյեկտիվորեն համընկնում էր Ռուսաստանի՝ դեպի հարավ՝ դեպի տաք ջրեր դուրս գալու նվաճողական նկրտումներին: Պատերազմն ավարտվեց 1878 թ. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով, որի 16-րդ հոդվածով Ռուսաստանը հանդես էր գալիս իբրև հայ ժողովրդի պաշտոնական հովանավորը, իսկ Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայաբնակ վայրերում: Ավելին, Հայաստանի որոշ մասեր միացվեցին Ռուսաստանին, ինչը հայերին ազգային համախմբման, տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն էր ընձեռում: Զգուշանալով Ռուսաստանի հետագա հզորա-

ցումից՝ պայմանագրից դժգոհ եվրոպական մեծ տերությունները Բեռլինում վեհաժողով հրավիրեցին, որտեղ ստիպեցին Ռուսաստանին հրաժարվել Սան Ստեֆանոյի ձեռքբերումներից, այդ թվում՝ հայկական գործերը տնօրինելու մենաշնորհից: Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինում վերաձևվեց 61-րդի, որով էլ սկզբնավորվեց Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը, ինչպես նաև սկսվեցին հայ հասարակական-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական բռնատիրությունը թոթափելու, հայերի անկախությունն ու ինքնավարությունը ձեռք բերելու մտայնությունն ու գործելակերպը:

Գաղտնիք չէ, որ 1878 թ. (ավելի ուշ նաև՝ 1912-1914 թթ., 1918-1920 թթ. և այլն) կար քաղաքական, տնտեսական ու մշակութային առաջընթացի և ինքնավարություն ձեռք բերելու հնարավորություն, որն արևմտահայությանը կփրկեր ֆիզիկական բնաջնջման վտանգից և հիմքեր կստեղծեր անկախ պետականության վերականգնման համար: Հենց 1878 թ. Սկսած՝ թուրքական իշխանությունները, Հայկական հարցը փակելու և հայոց հայրենիքը վերջնականորեն սեփականացնելու համար, մշտապես կատաղի պայքար մղեցին դրա դեմ, իսկ ավելի ուշ իրականացրին հայ ժողովրդի ցեղասպանությունը: Հարյուրամյակներ շարունակ պետականությունից զուրկ մնացած հայ ժողովուրդը մեծ տերությունների միջև ընթացող դիվանագիտական սուր պայքարի արդյունքում չկարողացավ ճիշտ կողմնորոշվել և մնաց ձեռնունայն, ինչը լուրջ պարտություն էր հայ ժողովրդի համար:

XX դարի սկզբին բուռն թափով զարգացող աշխարհն ուղիղ գծով գնում էր դեպի պատերազմ: Նախկին գաղութային տերությունների և նոր զարգացող երկրների միջև պայքար էր սկսվել աշխարհը վերաբաժանելու համար, և նրանց միջև բախումն անխուսափելի էր: Աշխարհի հզորները, որպեսզի կարողանան ավելի շատ դաշնակիցներ գրավել իրենց կողմը, շրջանառության մեջ էին դնում հին ու նոր խաղլսքարտեր՝ իրար վատաբանելու և միմյանցից լավը ներկայանա-

լու համար: Այդպիսի պատրվակներից էր հայկական բարենորոգումների հարցը: Հայ ժողովուրդը, հերթական անգամ մեծ հույսեր կապելով աշխարհի հզորների խոստումների հետ, ոտքի ելավ ազատագրական պայքարի: Կազմավորվեցին Ազգային բյուրո և Ապահովության խորհուրդ, կաթողիկոսի կոնդակով՝ Ազգային պատվիրակություն՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ: Ռուսաստանը հերթական անգամ շռայլ խոստումներով ոգևորեց հայերին, քանի որ փոխել էր իր նախկին բացասական վերաբերմունքը Հայկական հարցի հանդեպ և դեռևս 1912 թ. գարնանը թուրքական կառավարությունից պահանջել էր դադարեցնել հայերի դեմ բռնությունները, մասնակի ջարդերն ու թալանը[944]: Նման դիրքորոշումը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը բացատրում էր հետևյալ կերպ. «Միայն մարդասիրական զգացմունքը չէր, որ կայսերական կառավարությանը բերեց այն գիտակցությանը, թե անհրաժեշտ է ...բանակցություններ սկսել հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու համար»[945]: Նա նշում է, որ եթե Արևմտյան Հայաստանում ապստամբություն բռնկվեր, ապա դա «անխուսափելիորեն առաջ կբերեր պատերազմ Ռուսաստանի և Թուրքիայի միջև, այսինքն՝ այնպիսի ծանր հետևանքներ, որոնցից ռուսական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր խուսափել»[946]: Ռուսական կառավարությունը նաև ցանկանում էր սպասվող համաշխարհային պատերազմում շահել հայերի համակրանքն ու աջակցությունը, ինչպես նաև հայկական նահանգների գրավման նախապայմաններ ստեղծել:

Ռուսաստանից հետ չէին մնում նաև Անգլիան, Ֆրանսիան, ավելի ուշ նաև՝ ԱՄՆ-ը: Հատկապես ռուսների պնդմամբ շրջանառության մեջ դրվեց հայկական բարենորոգումների ծրագիրը, և հերթական անգամ հայ ժողովուրդը հայտնվեց միջազգային դիվանագիտության

---

[944] Աճառեան Հ., Տարկահայոց հարցի պատմութիւնը, Նոր-Նախիջևան, 1915, էջ 73:
[945] Сазонов С. Д., Воспоминания, М., 1991, с. 169.
[946] Նույն տեղում:

վտանգավոր ջրապտույտի մեջ: Թուրքական իշխանությունները, որ «միշտ խաղացրել էին եվրոպական պետություններին, լավ գիտենալով, որ նրանք էլ են խաղ անում, աճապարանքով հրամանագրում է իր պաշտոնյաներին – մինչև հարմար պահը խաղաղություն պահպանել հայկական նահանգներում, թե չէ ռուսը անց կկենա»[947]: Ի վերջո, երկար բանակցությունների ընթացքում Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը կարողացավ մեծ տերությունների ղեկավարներին ցույց տալ իրենց պետությունների շահը հայկական բարենորոգումների հարցում և հորդորել նրանց տնտեսական լծակի գործադրմամբ ստիպել Թուրքիային կնքել հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիր[948]: Միևնույն ժամանակ նրան հաջողվեց թուրքերից կորզել բարենորոգումներ խոստացող իրավական երաշխիքներ[949]: Սակայն հայկական բարենորոգումների ծրագրին վիճակված չէր իրականանալ, քանի որ երիտթուրքական կառավարությունը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, հրաժարվեց դրանից և ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջման իր վաղեմի ծրագրի գործադրմանը:

Հայկական հարցը մշտապես եղել է «Արմենիա» թերթի ուշադրության կենտրոնում: Թերթի շատ համարներում առկա են անդրադարձներ այդ խնդրին: Մի տարբերու-թյամբ, որ եթե մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը Հայկական հարցն արծարծվում էր դեպքից դեպք, եվրոպական մեծ տերությունների խորհրդարաններից որևէ մեկում կամ քաղաքական որևէ նշանավոր գործչի շուրթերից, այսինքն՝ հիմնականում դրսում, ապա հետսահմանադրական շրջանում այն «վերադարձավ» երկիր և աստիճանաբար քննարկելի դարձավ նաև հայության կողմից: Իսկ 1912 թ. սկսած՝ այդ քննար-

---

[947] Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 212:

[948] Տե՛ս Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, dited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996.

[949] Պողոսյան Ս., Հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրման շուրջ, ԼՀԳ, թիվ 3, 2011, էջ 246:

կումներն օրեցօր ավելի ինտենսիվ դարձան՝ տակն ու վրա անելով հայության ոգին, և կրկին հուսախաբության անհատակ օվկիանոսը նետեցին այն:

Անդրադառնալով Հայկական հարցին և նրա շուրջ մեծ տերությունների բուռն քննարկումներին՝ «Արմենիա»-ն, «Հայկական հարց» մի խմբագրականում ծաղկաքաղ կատարելով եվրոպական ու ռուսական մամուլից, գրում է, որ հայության համար ստեղծվել է բարենպաստ իրավիճակ և «Բ.Դուռը մեծ տէրութիւններու միջամտութեան առիթ չտալու համար սկսեր է հետաքրքրուիլ Հայերի վիճակով և Քեամիլ փաշան առաջարկեր է մահմէտականներէ և Հայերէ բաղկացած մասնաժողով մը կազմել որ նախկին պատրիարք Օրմանեանի նախագահութեամբ մշակէ Հայաստանի համար բարենորոգումներու ծրագիր մը»[950]: Նույն տեղում էլ թերթը, վկայակոչելով սեփական տեղեկատվական աղբյուրները և հավատարիմ մնալով թուրքին չհավատալու տեղացու կանխազգացողությանը, ավելացնում է, որ, չնայած այդ հուսադրող գործընթացներին, «Վանի Հայերը յուսահատած լինելով թիւրք կառավարութեան միշտ խօստացած, բայց երբէք չգործադրած ապահովութեան և բարեկարգութեան խօստումներէն, ինքնապաշտպանութեան համար կազմակերպուող խումբերի թիւը հետզհետէ կաւելցնէն... եւ կը նախընտրեն զէնքը ձեռքին մեռնիլ քան թէ բոլորովին ոչխարի պէս մորթուիլ»[951]: Քանի որ վանեցիներն ամեն օր էին տեսնում և իրենց մաշկի վրա զգում, թե ինչպես թուրքական իշխանություններն իրենց ընդգծված աչառու պահվածքով կազմակերպում ու մեղսակից էին դառնում հայերի անլուր հալածանքներին ու կորստյան: Նրանք մի կողմից զինում էին քրդերին, իսկ մյուս կողմից բացարձակապես սեփական կյանքի ու ինչքի պահպանության համար զենք կրող հայերին լցնում էին բանտերը, խոշտանգում ու սպանում:

---

[950] «Արմէնիա», թիվ 23, 1913:

[951] Նույն տեղում:

Հայկական հարցի ու հայ ժողովրդի ապագայի մասին է Պ. Տոնապետյանի «Թուրքիոյ ապագայն եւ հայ ազգը հանդէպ Ռուսիոյ» ծավալուն հոդվածաշարը: Ժամանակի քաղաքական իրադրության վերլուծությանը նվիրված այս հրապարակման մեջ հեղինակը, ներկայացնելով եվրոպական առաջադեմ երկրներին և դրանց համընդհանուր զարգացման միտումները, գրում է, որ «թուրքերի ամբողջ դրութիւնը արմատօրէն ապականեալ եւ անմարդկային է», ապա զարմանում՝ «ի՞նչ գործ ունի Եւրոպական տէրութեանց հետ այս վատթարագոյնը քան զվայրենիս որ ուրիշ բան ըրած չունի բայց միայն սփռել պատերազմ, աւերած և սրածութիւն»[952]: Ընդհանուր առմամբ, հոդվածաշարի հիմնական նպատակն էր Թուրքիայի դեմ Անգլիայի վարած քաղաքականության և հայանպաստ հայտարարությունների ներկայացումը և անգլիասիրություն քարոզելը: Հոդվածագրի տեսակետով, երբ Հայկական հարցը դիտարկվում է խորությամբ, ապա բոլոր մեծ տերությունների շարքում և նրանց հետ համեմատած, ակնհայտ էր դառնում, որ Անգլիան էր Հայկական հարցի իրական պաշտպանը: Իհարկե, նյութի հեղինակը միևնույն ժամանակ չէր կարողանում անտեսել և չշեշտել նաև Ռուսաստանի իրատեսորեն դրական գործոն լինելու հանգամանքն այդ հարցում:

Հոդվածագրի կարծիքով առկա էին բոլոր նախապայմանները, որոնք Օսմանյան կայսրությունը կործանման էին տանում, և եթե իշխանությունները ցանկություն ունեին փրկելու այն վերջնական կործանումից, «պարտին բարեկարգել իւր հպատակ քրիստոնեաների վիճակը և իւր կայսրութիւնը»[953]: Սակայն նրանք միշտ հակառակ էին վարվում և ամեն անգամ որևէ առիթ օգտագործելով՝ «աւելի մեծ բարբարոսական» արարքներ էին կատարում: Հեղինակի կարծիքով թուրքերը բազմիցս ապացուցել են, որ «բարենորոգումների պէտքին վրայ կը խօսին երբ որ վտանգի մէջ են. բայց անմիջական վտանգը

---

[952] «Արմենիա», թիվ 23, 1913:
[953] «Արմենիա», թիվ 24, 1913:

վերանալուն պէս, կը դառնան այն ինչ որ էին առաջ»[954]: Այնուհետև քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի, նկատմամբ թուրքերի վարած տմարդի և նվաճողական քաղաքականության իսկական էությունն ու արմատները ներկայացնելու համար հեղինակը ծավալուն պատմական էքսկուրս էր կատարում և ցույց տալիս, որ աշխարհում, XVII դարից սկսած, գործել են երեք հիմնական դերակատարություն ունեցող քաղաքականություն:

Առաջինը Ռուսաստանն էր, որի նպատակն էր ազատել քրիստոնյաներին «մահմետականաց լուծէն՝ իւր հետ կցելով, կամ եթէ ոչ, առանձնաշնորհումներ ձեռք բերել տալով նոցա համար»:

Երկրորդը՝ գերմանականը, որը, աստիճանաբար հզորանալով, ձգտում էր Օսմանյան կայսրությունը «պահել տալ իւր անբարեկարգ վիճակին մէջ և արգելք լինել քրիստոնեայ ճնշուած ցեղերի ազատագրութեան ձգտումներին և այնուհետև նոցա անջատման ձեռնարկներին Թուրքի լուծէն, մինչև որ մի օր ինք կարողանայ տէր դառնալ այդ երկրին»[955]: Եվ այս նպատակներն իրականացնելու համար, հեղինակի կարծիքով, Գերմանիային միշտ հաջողվել է ոչ միայն երկպառակություն սերմանել եվրոպական պետությունների միջև, այլև պատերազմների մղել նրանց միմյանց դեմ: Միշտ օգտվելով այդ հակասություններից՝ XX դարի սկզբներին կարողացավ թափանցել Օսմանյան կայսրության խորքերը՝ շարունակաբար ավելացնելով իր ազդեցությունը:

Երրորդը՝ մեծապետական շահերով և դեպի բրիտանական թագի ադամանդը՝ Հնդկաստան, տանող ճանապարհների ապահովությամբ իր մշտական մտահոգություններով Անգլիան էր: Ծովային հսկան, ով այդ ամենակարևոր գործոնով և տվյալ պահին սեփական շահի հստակ գիտակցումով պայմանավորված՝ մշտապես դրսևորում

---

[954] «Արմէնիա», թիվ 24, 1913:

[955] Նույն տեղում:

էր հաճախակի խարդավանքներով և ոչ այնքան միաբևեռ պահվածք ու դրան համապատասխան վարքագիծ:

Ռուսաստանն այս ամենին նայում էր քինախնդիր դառնությամբ, «տեսնելով թէ հակառակ իւր դարաւոր պատերազմներին և զոհողութեանց, իւր ազդեցութիւնը Թուրքիոյ վրայ՝ կոչնչանա Գերմանիոյ արմատացած, ազդեցութեամբը Բ.Դրան վրայ և Օսմանեան կայսրութեան մէջտեղ»[956]:

Հեղինակը համոզված էր, որ «Օսմանեան կայսրութեան անկախութեան մահավճիռը կնքուած է», և թուրքերը չպիտի կարողանան դա վոխել, բայց իրենց խելացի ու հավասարակշռված քայլերով կարող են մեղմացնել և հետաձգել վճիռը: Նախ՝ զսպել քրդերին, պատժել չարիքի բույն պաշտոնյաներին, շտկել դրությունը և անմեղ ձերբակալվածներին ազատել բանտերից ու նրանցից զանց առնել «իբր խոչընդոտ իւր բարենորոգչական ձեռնարկների կիրառմանը»[957] հանիրավի մեղադրանքները, և այնժամ վճիռն իսկապես կարող է երկարաձգվել:

Որպեսզի ամեն անգամ Հայկական հարցի հրապարակ գալուց հետո հայերը մեծաքանակ զոհեր չտային և հերթական հիասթափությունը չապրեին, «Արմենիայի» բազմափորձ խմբագիրը կոչ էր անում բոլոր ուժերին՝ նախքան մարտասպարեզ նետվելը, նախկին սխալները չկրկնելու համար, լավագույնս ուսումնասիրել հարցի էությունը և այն ենթարկել խոր վերլուծության: Այնուհետև երկար ներբող է նվիրում ՀՀ Դաշնակցությանը և պարզաբանում, որ նրա ընթացքը «ամենախոհեմ քաղաքակա-նութիւնն է, իբր ամէնէն օգտակարը Թուրքիոյ Հայ ցեղի ազգային և քաղաքական բարգաւաճման համար», որ «Դաշնակցութիւնը կարտայայտէ իւր ընդգրկած համոզումները շատ խիստ լեզուով, բայց Օսմանեան կայսրութեան անխախտ պահպանման անկեղծ փաստաբանութեամբ: Թուրք պաշտօնեաներ

---

[956] «Արմենիա», թիվ 24, 1913:
[957] Նույն տեղում:

չեն դառնանար, զգալով այդ լեզի ճշմարտախօսութիւնը և ներքնապէս խոստովանելով անոր անկեղծ հայրենասիրութեան ոգին»[958] և նման այլ ձևակերպումներ:

Շարունակելով իր պարզաբանումները՝ հեղինակը ստեղծված իրավիճակը ներկայացնում էր հետևյալ կերպ. Անգլիան իբր ուզում էր ստեղծել մի երկրամաս, «ուր հայերը կարենան ունենալ բացառիկ առանձնաշնորհումներ, և որը կարող է գոյացնել անկախ հայկական թագաւորութեան մը կորիզը»[959]: Դրան ընդդիմանում էր Ռուսաստանը, քանի որ նա «չէր կարող հաճութիւն տալ Նոր Բուլղարիոյ մը կազմութեան իւր սահմանագլխին վրայ»: Այնուհետև հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ «Գերմանիա՝ մի անկարգ Թիւրքիաի յարատևման այդ դարաւոր մեծ պաշտպանը՝ իւր քաղաքական նպատակին զգալապէս հասնելէն յետոյ միայն կարելի եղաւ դրուիլ Մեծն Բրիտանիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի կռած երկաթեայ վանդակին մէջ», և նպաստավոր նախապայմաններ են ստեղծվել՝ որևէ կերպ Հայկական հարցին լուծում տալու համար:

Որպես Հայկական հարցի լուծման միջոց՝ հոդվածագիր-վերլուծաբանն առաջարկում էր որպես պատվար Ռուսաստանի նվաճողական ձգտումների դեմ Օսմանյան կայսրության սահմաններում ստեղծել «ուրէ Հայկական առանձնաշնորհեալ վարչութիւն»[960] և «վեց պետութիւնների համաձայնութեամբ»[961]: Նույն պահին էլ ավելացնում էր, որ մարդ ապշած է մնում՝ տեսնելով դիվանագիտության այդ ջանքերը, որոնց «բացայայտ ձգտումն է գինովցնել հայ ժողովրդի երևակայութիւնը»[962]: Իսկ հայերը, միամտորեն հավատալով դրան, շարունակում էին խաբել իրենք իրենց և վտանգել իրենց իսկ գոյությունը:

---

[958] «Արմենիա», թիվ 24, 1913:
[959] «Արմենիա». թիվ 26, 1913:
[960] «Արմենիա», թիվ 28, 1913:
[961] Նույն տեղում:
[962] Նույն տեղում:

Ի լրումն այդ ամենի և ամփոփելով հոդվածում առաջ քաշված հարցերը՝ «Արմենիայի» խմբագիրը մտահոգված գրում էր, որ հասկացանք այդ վերլուծություններն ու առաջարկները, բայց կգա՞ մի օր, երբ վերջ տրվեն Արևմտյան Հայաստանում ամեն օր կատարվող բարբարոսություններին, որոնք, կրոնական մոլեռանդությունը չարաշահելով, կազմակերպում են իշխանությունները՝ իրենց հայաջինջ և «բուն իսկ Թիւրքիայի համար վտանգատոր եղող սխալ քաղաքականութեան մը ծրագրով»[963]:

«Հայկական հարցը հանդէպ Հայաստանի տիրող կառավարութեանց: Ոչ շատ լաւատես եւ ոչ յոռետես» երկարաշունչ վերնագրով հրապարակման մեջ, անդրադառնալով խնդրին և հայ ազատագրական շարժմանը, Գող Վասիլ հոդվածագիրը շեշտում է, որ «ցուցամոլութեան երեսէն վնասներ կրեցինք, բայց միևնոյն ժամանակ սխալ հասկցուած խոհեմութիւնն ալ ոչ նուազ պատճառ եղած է շարունակոտող չարիքներուն»[964]: Այնուհետև պարզաբանելով իր միտքը՝ հեղինակը բացատրում է, որ ամեն ինչ հարկավոր է չափի մեջ անել, հակառակ դեպքում միշտ անհաջողություններ կարծանագրենք: «Եթէ ծայրայեղ երկչոտութիւնը խոհեմութեան իմաստով չառնուէր մեր հայրերուն կողմէ,- գրում է հոդվածագիրը,- ռուսութիւրք պատերազմին ատէն պատրաստ եղած կըլլայինք օգտուելու ռուս կառավարութեան բարեացակամ տրամադրութիւն-ներէն»[965]: Հեղինակը հորդորում է նաև խուսափել հակառակորդին Հայկական հարցում շահարկումների ավելորդ առիթներ տալուց, քանի որ «Հայերս ուզենք ալ, չուզենք ալ, հայկական հարցը Պէոլինի դաշնագիրը ստորագրող պետութեանց միջև քաղաքական շահագործելի հարց մը ըլլալէ չի կրնար դադրիլ», ուստի անչափ կարևոր է, որ սրա-նրա դռտը վազելուց և մ-

963 Նույն տեղում:
964 «Արմենիա», թիվ 24, 1913:
965 Նույն տեղում:

յուսին մեր դեմ գրգռելուց առաջ ճշգրիտ հաշվարկներ կատարենք և ապահովագրենք մեզ սխալվելուց:

Բավականին ուշագրավ հրապարակում է «Հայաստանի ներկայն եւ ապագայն» վերնագրով թերթի մի քանի համարներում տպագրված հոդվածը: Հավակնոտ վերնագիրը հուշում է, որ թեման խիստ կարևոր է, և հեղինակը փորձում է գտնել բոլորին հետաքրքրող այդ հարցի պատասխանը: Համառոտ շարադրելով դարերի ընթացքում Հայաստանի ու հայ ժողովրդի մարտիրոսացման պատմությունը՝ հեղինակը կարծում էր, թե քաղաքակիրթ աշխարհի ծափահարություններին արժանացած երիտթուրքերը պիտի վերջ տային հայերի տառապանքներին, այնինչ նրանք իրենց կրոնամոլական թթված ազգասիրությամբ 1909 թ. սրի քաշեցին Ադանայի 30 հազար անմեղ հայերի: Իսկ հայերի միակ հանցանքն այն էր եղել, որ «լրջորէն հաւատացեր էին Երիտասարդ - Թիւրքերի յայտարարութիւններին, թէ Օսմ. կայսրութեան զանազան ցեղերին միջև հաւասարութիւն պիտի տիրէ»[966]:

Մոտալուտ պատերազմի նախօրյակին էլ ոչինչ չէր փոխվել. հայերը կրկին անզեն էին մնացել, և ամենուրեք սարսափն էր տիրում, քանի որ մտավախություն ունեին, թե Բալկաններում կրած պարտության վրեժը թուրքերն իրենցից պիտի առնեին: Այնինչ, նախ և առաջ հենց թուրքերի շահերից էր բխում բարեկարգված և ուժեղ Հայաստանի գոյությունը, որը ոչ միայն «կրնար օտար ոտնձգութիւնների դէմ օսմանցիների դիմադրութեան հաստատուն կորիզ մը դառնալ»[967], այլև «տնտեսական տեսակէտով գանձարանին թանկագին հասոյթներ տալ»[968]: Հայերի համար, թերթի կարծիքով, պիտի հասկանալի լիներ, որ Հայկական խնդիրը քաղաքական կողմ ունի, որը պատերազմի նախօրյակին տակավին լուծված չէր, ուստի թուրքերը

---

[966] «Արմէնիա», թիվ 30, 1913:
[967] «Արմէնիա», թիվ 31, 1913:
[968] Նույն տեղում:

պիտի շարունակեին այնտեղ հարստահարությունների ու հալածանքների քաղաքականություն վարել: Իսկ Ռուսաստանը «պիտի գրաւէ ու իրեն հետ միացունէ այդ երկիրը կամ թէ վերջապէս այդ ժողովուրդը ազատօրէն պիտի կառավարէ ինքզինքը»[969]: Ու քանի դեռ լուծված չէր այդ խնդրի քաղաքական կողմը, հայերի պահվածքը չափազանց զգուշավոր պիտի լիներ, որ երկու քարի արանքում չճզմվեին:

Եվրոպական տիրույթները կորցրած և ողջ ուշադրությունն ասիական հատվածին կենտրոնացրած Թուրքիան, բնականաբար, պիտի սթափվեր, աշխատեր վերականգնել զինուժը, դառնար «պատկառելի իր հարևանների համար՝ Բալկանեան Դաշնակցութեան և Ռուսաստանի»[970] և եվրոպական մտահոգություններից ազատվելով՝ կենտրոնանար Կովկասի ու Պարսկաստանի վրա: Անկասկած, համոզված գրում է «Ռուսաստանը եւ Հայոց հարցի լուծումը» հոդվածաշարի հեղինակ Հորիզոնը, կգտնվեին նաև օտար պետություններ, հատկապես Գերմանիան, որոնք կարող էին գործիք դարձնել Թուրքիային Ռուսաստանի դեմ. «Թիւրքիան կարող է դառնալ Ռուսաստանին, թշնամի պետութեան մատը փոքր ասիական սահմանագլխին»[971]: Դրա համար Ռուսաստանը եթե խելացի վարվի, պիտի ստեղծի կիսանկախ հայկական մի շրջան՝ հայաբնակ նահանգները դարձնելով ինքնավարություն իր հովանու ներքո, որով կազատվի շատ գլխացավանքներից: Իսկ ընդհանուր առմամբ, գրում է հոդվածի հեղինակը, եթե եվրոպական մեծ տերությունները, իրավիճակից ելնելով, տարբեր կեցվածք են ընդունել Թուրքիայի հարցում, ապա Ռուսաստանն ունեցել է մի տեսակետ, որին «հետևել է անշեղ մինչև մեր օրերը. կամ ինքնավարութիւն կամ անդամահատութիւն»[972]:

---

[969] Նույն տեղում:
[970] «Այրմէնիա», թիվ 32, 1913:
[971] Նույն տեղում:
[972] Նույն տեղում:

Հայոց պատմության ողջ ընթացքում, Առաջին աշխարհամարտի նախօրյակին առավել ևս, օտար գործիչների արտաբերած ցանկացած հայանպաստ արտահայտություն ոգևորել է հայերին այնքան, որ ավելի հաճախ նրանք ցանկալին ընդունել են որպես իրականություն և մեծ հույսեր կապել շատ դեպքերում սոսկ անձնական հեղինակությունը բարձրացնելու նպատակով ասված այդ խոսքերի հետ: «Արմենիա» թերթը, լինելով հայ իրականության ծնունդ ու այդ արժեքների ջատագով, չէր կարող անմասն մնալ այդտեսակ գործընթացներից և շարունակաբար ամբողջական էջեր է տրամադրել օտարերկրյա խորհրդարաններում ավելի հաճախ ներքին սպառման համար արտասանած ճառերին: Մասնավորապես ավելի շատ ու ծավալուն էին անգլիական ուղերձները: «Տաճկական տիրապետութեան տակ: Հայկական Հարցի առթիւ Վիճակագրութիւն մը» հոդվածի հեղինակ Խ. Խորխոռունին, հղում կատարելով հայտնի քաղաքական գործիչ Գ-լադստոնին, գրում էր, որ թուրքերը «ո՛չ Հնդկաստանի հեզաբարոյ մահմէտականներն են, ո՛չ Սիրիայի սալադինեան ասպետները և ո՛չ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերը», և այն օրից սկսած, երբ նրանք առաջին անգամ մտան Եվրոպա, «մենք տեսնում ենք նրանց մէջ մարդկային մի հասարակութիւն, որ մարմնացում է մարդկութեան թշնամուն»: Ուր որ նրանք գնացել են, իրենց հետևից միշտ թողել են մի լայնատարած արյունաներկ հետք, և «ուր հասեր է նրանց տիրապետու-թիւնը, այնտեղ անհետացեր է քաղաքակրթութիւնը»[973]: Պատմությունը հուշում է, որ Օսմանյան կայսրությունը մի զինվորական բանակ է, որը, տիրապետելով նորանոր երկրներ, նվաճելով բազմազան ժողովուրդներ, երբեք սակայն ուշադրություն չէր դարձնում նրանց տնտեսական զարգացման վրա, ինչը «նոյնպէս բռնակալական երկիրների համար մի անհրաժեշտ գործոն է ներկայացնում»[974]: Իսկ երբ ժողովրդի գոյության հիմնական ազդակը՝ տնտե-

---

[973] «Արմէնիա», թիվ 32, 1913:

[974] Նույն տեղում

սությունը, անկում էր ապրում, այդ պետության հիմքերն անկասկած սասանվում են: Օսմանյան կայսրության պարագայում այդպես էր եղել դարեր շարունակ, թուրքերը զարգանալու ընդունակություն երբեք չէին ցուցաբերում, քանի որ այնտեղ գլխավորապես իշխող էր զինվորականությունը, որը «դարերէ ի վեր սովորեր է «գեավուր»ի ինչքով և «ռայեայ»ի քրտինքով ապրելու»[975]: Եթե դրան ավելացնենք պարբերաբար կրկնվող ջարդերը, այսինքն՝ քրիստոնյաներին՝ որպես «կասկածելի գոյութիւններ երկրի մէջ» ոչնչացնելու քաղաքականությունը, ապա ավելի հստակ է երևում թուրքերի իսկական բնույթը:

Հոդվածագրի կարծիքով «Եւրոպական Թիւրքիոն հաշւեյարդարէն յետոյ», թվում էր, թէ հերթն ասիականինն էր, որտեղ իր չգործած մեղքերի համար քավության նոխազը հայն էր դարձել: Այդ մեղքը դարերի ստրկամտությունն էր, որից «անջատուիլ չէ սիրած»[976]: Ավեր, կողոպուտ, ջարդ ու անվերջ տանջանք, սա էր հայի ապրած ամբողջ կյանքը, սակայն դժգոհության ոչ մի նշան, զանգվածային ոչ մի ընդվզում չէր եղել, և դեռ միամիտներ էլ կային, որ հավատում էին խաղաղ դիվանագիտական ճանապարհով հարցի լուծմանը: Եվ եթե Հայկական հարցը նորից էր սկսել վերհիշվել դիվանագիտական աշխարհում, գրում է հեղինակը, դա դեռ չի նշանակում, որ անպայման բարեհաջող ելք կունենա: Մարդ առնվազն շատ միամիտ պետք է լինի, որ կարողանա հավատալ, «թէ Թիւրքիայի մէջ խաղաղ ճանապարհով կարելի է իրաւունքի մը տիրանալ»[977]: Դեռ երկար ժամանակ հայերից կպահանջվի, որ ապացուցեն, թե ի վիճակի են իրենց գլխին տեր լինելու, ինքնակառավարվելու համար: Առանց որի իմաստազուրկ կլինի հայկական հարցի արծարծումը, քանի որ հակառակ դեպքում այն կարող էր աղետաբեր լինել հենց իր՝ հայ ժողովրդի: Հոդվածի հեղինակը, հարցերին խորագիտակ մոտեցում հանդես բե-

---

[975] «Արմէնիա», թիվ 28, 1913:
[976] Նույն տեղում:
[977] Նույն տեղում:

րելով և իրատեսորեն վերլուծելով նախապատերազմյան շրջանում Հայկական հարցը և հայ ժողովրդի դրությունը հանգում էր այն իրատեսական որոշմանը, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր «գտնէ ինքնապաշտպանութեան մը չափ ոյժ մթերել»[978]:

Այդ ուժը ձևավորելու համար ստեղծվել էին անբարենպաստ պայմաններ: Երիտթուրքական հեղաշրջումից հետո, «յանկարծական զարթումի յեղափոխութեամբ մը» ոգևորվելով համընդհանուր ազատական մթնոլորտով, «չափազանց յափշտակութեամբ ուրախացան և ցնծութեան տօներ կատարեցին ամէնքն, մանաւանդ Հայերն, այն աստիճան արբշիռ եղած էին որ կարծես թէ այլևս մոռցան իրենց տուած 300 հազար անմեղ զոհերու ծովացեալ արիւնն», և թուրքական խորհրդարանի հայ պատգամավորների պնդմամբ ընդունվեց օրինագիծ հայերի պարտադիր զինվորագրության մասին: Հայերը, սիրահոժար և հայրենասիրական անկեղծ զգացումներից դրդված, ցանկացան բանակին զինվորներ տալ, որպեսզի երկիրը զերծ պահեն վերահաս վտանգներից և նպաստեն մահամերձ հայրենիքին՝ հավատալով «թէ այնուհետև օրինաց առջև հաւասարութիւն և ազդարարութիւն պիտի վայելեն և պիտի ունենան կեանքի, պատուոյ և ընչից կատարեալ ապահովութիւն»[979]: Համընդհանուր այս ոգևորության մթնոլորտում, սակայն, եղան նաև հեռատես գործիչներ, ովքեր հայերի այս եռանդին «չափաւորութիւն քարոզեցին»: Դրանցից մեկը «Արմէնիա լրագրոյն խմբագրապետն» էր: Իսկապես էլ, շուտով պարզ դարձավ, որ դա այնքան էլ ճիշտ մոտեցում չէր, քանի որ այդ նույն ժամանակ քրդերը Համիդիե հեծյալ գնդեր ունեին, մինչև ատամները զինված էին նոր զենքերով, սակայն պարտադիր զինվորագրությանը չէին մասնակցում: Այսինքն՝ հայ կարող ուժը մեկնում էր բանակ, և երկրում տեր ու տնօրինություն էին անում քրդական հրոսակները: Ընդ որում, բանակ մեկնած հայերն էլ գտնվում էին ընդգծված անհա-

---

978 «Արմէնիա», թիվ 28, 1913:
979 «Արմէնիա», թիվ 9, 1913:

վասար պայմաններում: Լավագույն դեպքում նրանց վստահում էին միայն չարքաշ աշխատանքներ կատարել: Անհավասարությունն աչքի էր զարնում նույնիսկ զինվորական բարձրագույն աստիճաններ ստանալու համար «Բանկալթիի զինտրական բարձրագույն վարժարանը ընդունուելու դեպքում», որտեղ որևէ հայի ընդունվելը բացառիկ երևույթ էր[980]:

Շարունակելով Հայկական հարցին նվիրված քննարկումները՝ «Արմենիա»-ի մշտական վերլուծաբան Կ. Հակոբյանը «Ռուսիա, Թուրքիա եւ Հայերը» հոդվածում հայտնում էր, որ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը Հաճնից, Մուշից, Խոյից, Ադանայից, Վանից և այլ վայրերից վրդովեցուցիչ հեռագրեր էր ստանում, որոնք «ամէն կերպ ցաւալի դէպքեր կը տեղեկագրեն որով Հայերը Քուրդերու, պաշտօն ունեցող ժանտարմաներու և զինուորներու բռնած դիրքէն վտանգուած են»[981]: Սակայն դրան զուգահեռ, հեղինակի կարծիքով, նաև հայանպաստ հանգամանքներ կան, որոնք ապագայի նկատմամբ որոշ չափով հույս են ներշնչում. առաջինը Պողոս Նուբարի պատվիրակության հույս ներշնչող գործունեությունն էր, իսկ երկրորդը, որ եթե հայկական խնդիրը «շուտով չստանայ Թուրքիոյ ձեռամբ գոհացուցիչ լուծում մը, Ռուսիոյ ձեռամբ լուծուելու սպառնալիքը պիտի լինի»[982]: Ռուսաստանն սկսել էր հայերի նկատմամբ նպաստավոր և ջերմ բարեկամության ցույցեր անել մի պայմանով, որ «Հայերն իրենց դատը չպրեն (compromise) յեղափոխական և անիշխանական ընթացքի հետևելով»[983]:

Կ. Հակոբյանը մեկ այլ ավելի ծավալուն՝ «Հայկական խնդիրը եւ մեծ տէրութիւնները» հրապարակման մեջ, տարողունակ ներածականից հետո, իրավացիորեն հայտնում էր այն միանգամայն ընդունելի

---

[980] «Արմենիա», թիվ 40, 1913:
[981] Նույն տեղում:
[982] Նույն տեղում:
[983] «Արմենիա», թիվ 40, 1913:

իրողությունը, որ «պատմական ճշմարտութիւն մ'է որ ամէն ազգի ապագան իւր առանձին ափին մէջն է. նա կրնայ արիանալով բարգաւաճիլ ու վսեմանալ և կրնայ նաև ստրկանալ և կորսնցունել իւր հոգևոր, մտաւոր և ֆիզիքական պատկառելի յատկութիւնները»[984]: Այնուհետև Հակոբյանը վկայակոչում էր մի քանի անգլիացի փորձագետների՝ մամուլում հրապարակված ուշագրավ տեսակետներ Հայկական հարցի մասին: Մասնավորապես խնդիրը լավ ուսումնասիրած լորդ Օ'Քոնորը համոզված ասում էր, որ «հայերը կը փափաքին Թուրքիոյ հպատակ մնալ և Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը ապահովելու համար իրենց լաւագոյն ջանքը ի գործ դնել: Իրենց պահանջմունքին բովանդակութիւնը բարեկարգութիւններ են որ պիտի ապահովեն կեանքը և ինչքը և արդարութեան պատշաճ գործադրութիւնը»[985]: Այնպես որ, եզրակացնում էր լորդը, Մեծ Բրիտանիան ուղղակի պարտավոր էր այդքանն ապահովել բազմաչարչար հայերի համար:

1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում մեծ դերակատարություն է ունեցել մեծանուն բարերար, հայության ճակատագրի բարելավման գործի նվիրյալ Պողոս Նուբարը: «Արմենիա» թերթը նույնպես բազմիցս անդրադարձել է նրա գործունեությանը, հաճախ տպագրել տարբեր առիթներով Պ. Նուբարի արտասանած ճառերը, նամակներն այս կամ այն պետության ղեկավարին, քաղաքական նշանավոր այրերին և այլն: Դրանցում Ազգային պատվիրակության ղեկավարը պարզաբանել է հայերի ձգտումներն ու նպատակները, դրանց լուծման ուղիներն ու մեծ տերություններից ակնկալիքները: Այդպիսի մի բանախոսություն Պ. Նուբարը կարդացել է 1913 թ. հոկտեմբերին Փարիզի Առևտրական աշխարհագրական ընկերության հավաքույթի ժամանակ, որտեղ հստակ գծագրված են տվյալ պահին հայերի ճանապարհային քարտեզը և դրան հասնելու միջոց-

---

[984] «Արմենիա», թիվ 46, 1913:

[985] Նույն տեղում:

ները: Ընդգծելով, որ հայության պահանջների մասին հասարակության մեջ տարածված էին ոչ ճիշտ տեղեկություններ, համաձայն որոնց իբր հայերը ձգտում էին անկախության, Պ. Նուբարը շեշտում էր, որ դրանք ամբողջովին սխալ լուրեր են և իրականության հետ որևէ առնչություն չունեին. «Մենք կուզենք Օսմանեան հպատակ մնալ, բայց կուզենք որ լուրջ, ազդու և միջազգային հակակշռով մը երաշխաւորուած բարենորոգումներ գործադրուին, որոնք խոստացուած են Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածով»[986]: Հոդված, որը նախատեսում էր ստեղծել տեղական զինված ոստիկանություն, դատական համակարգի հիմնովին բարեկարգում, գրավված հողերի նախկին տերերին վերադարձ և եվրոպական ծանրակշիռ մի կազմակերպության հիմնադրում, որը հետևեր բարենորոգումների հստակ իրականացման գործընթացին: Այսինքն՝ գործողություններ, որոնք որևէ քաղաքական նպատակ չէին հետապնդում:

Այնուհետև բանախոսը պարզաբանել է, որ այդ բարենորոգումները հավասարապես վերաբերում էին նաև մահմեդականներին և չպիտի իրականացվեին միայն հօգուտ հայերի, իսկ շփոթն արդյունք էր այն բանի, որ այդ բարենորոգումները քանի որ հիմնականում հայերն էին պահանջել, անվանվել են «Հայկական»: Ուստի սխալ էին բոլոր այն պնդումները, թե այդ բարենորոգումները սեպարատիստական էին և ուղղված «իսլամ ժողովուրդներին դէմ»[987]: Բարենորոգումներն ի դեպ, բանախոսի ներկայացմամբ, ձեռնտու էին բոլոր կողմերին.

ա) եվրոպական տերություններին, որոնք շահագրգռված են Թուրքիայի ամբողջականության պահպանմամբ, քանի որ դրանց իրագործումով բարենորո-գումների խնդիրը կդադարեր Թուրքիան մասնատել ցանկացող պետությունների ձեռքին խաղաքարտ լինել,

---

[986] «Արմէնիա», թիվ 47, 1913:

[987] Քաջյան Ռ. Հ., Հայկական հարցը Հ. Թումանյանի հրապարակումներում, ԼՀԳ, թիվ 3, 2010 թ., էջ 105: Տե՛ս նաև՝ Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:

բ) օսմանյան կառավարությանը, քանի որ դրանց իրականացմամբ կվերանար քաղաքային վիճակը հայաշատ նահանգներում, որի արդյունքում կզարգանար տնտեսությունը, և մեծ գումարներ կհոսեին կայսրության դատարկված գանձարանը,

գ) հայերին, որովհետև կդադարեին ազատագրական շարժումներն ու խառը իրավիճակները, հետևապես և կպակասեին մեծաքանակ մարդկային ու նյութական կորուստները[988]:

Այս ամենով հանդերձ, սակայն, հայերն այնքան էլ վստահ չէին, որ թուրքական հոռի վարչակարգը քայլեր կձեռնարկեր՝ դրությունը փրկելու համար, քանի որ դարերի ընթացքում, շարունակաբար խաբվելով, նրանք կորցրել էին ամեն տեսակի վստահություն: Մանավանդ կիլիկիացիները, ինչպես օսմանյան վարչապետ Մահմուդ Շևքեթ փաշայի սպանության առիթով «Կիլիկեան արձագանք» հոդվածում համոզված գրում էր թերթի Հմայեակ թղթակիցը, «բնաւ հաւատք և յոյս չունին այս իշխանութեան վրայ, քանի որ այսօր այս երկրին ոչ մէկ անկիւնը ապահովութիւն կը տիրէ. ջարդ, թալան, հրդեհ, առևանգում, կրօնափոխութիւն, բռնի գրաւում, խօշտանգում և բարբարոսութիւն կայ ու կը մնայ սովորական դէպքերու պէս մշտաւոն»[989]: Քանի որ թուրքերը «քաղաքական սկզբունքներէ զուրկ՝ պարզապէս ոչխարներ են, որոնք հլու հպատակ կըլլան օրուան հոսանքին, առանց ամենափոքր գիտակցութեան»[990], պատրաստ են ծառայելու ցանկացած ուժի, միայն թե պահեն իրենց իշխանությունը, դրա համար էլ վստահելն իրատեսական մահվան էր հավասար:

Շարունակելով Հայկական խնդրի վերաբերյալ քննարկումները՝ վերոնշյալ լոնդոնաբնակ Կ. Հակոբյանը «Հայկական բարենորոգումներ» վերտառությամբ հրապարակման մեջ զգուշացնում էր, որ այդ խնդիրը վերաբերում էր ողջ Եվրոպային և կարող էր տարաբնույթ

---

988 Նույն տեղում:

989 «Արմէնիա», թիվ 48, 1913:

990 Նույն տեղում:

վեճերի առիթ հանդիսանալ: Իսկ առավել թուրքական իշխանությունները պիտի անհանգստանային, քանի որ այն կարող էր դառնալ մի նոր «Մակեդոնական խնդիր՝ Օսմանեան կայսրութեան համար աւելի ձախորդ հետևանքներով»[991]: Թուրքերը, հոդվածագրի կարծիքով, եթե հայասարակ խոհեմություն ունենային, չպիտի շարունակեին չարաշահել հայերի համբերությունը: Նրանք չպիտի ակնկալեին, որ հայերը «աւելի երկար ատեն խոնարհին այն անիրաւութիւններուն առջև որոց այս տարիներ պարբերաբար ենթարկուեցան»[992]: Ընդհակառակը, հայերը կկարողանային կոտորածների և կողոպուտների վախերից ազատվել և պահանջել, որ բավական էր՝ ինչքան իրենց ձգտումները «վայելեցին թղթի վրայ՝ առանց իրենց իսկական վիճակը բարտքուելու»[993]: Ժամանակն էր, որ թղթի վրա եղած այդ բարենորոգումները վերջապես «իրողութեանց թարգմանուին և այդ միմիայն գործնական կերպով» և դա «միջազգային իրական հսկողութեան տակ ըլլայ»[994]: Եթե, շարունակում էր հոդվածագիրը, այդ բարենորոգումները չիրականանային, եվրոպական տերությունները, իրենց համակրությունից զրկված Թուրքիայի ներքին գործերին շարունակաբար միջամտելով, դժվարություններ կառաջացնեին նրա կյանքի բոլոր բնագավառներում: Ինչպես նաև դա կհուսահատեցներ ու կզայրացներ հայերին և կոտրորդեր նրանց՝ հայացքը հառելու դեպի հյուսիս՝ Ռուսաստան: Ժամանակն էր, որ «1840ի Կիւլիանէի Հաթթի-Շէրիֆէն և 1856ի Հաթթի-Հիմայունէն ի վեր՝ Բ.Դուռը» անթիվ՝ անհամար խոստումներ էր տվել և հանդիսավոր կերպով պարտավորություններ ստանձնել բարենորոգումներ անելու համար: Այդ առիթով գրված բոլոր հրատարակված օրենքները կարող էին մի առանձին գրադարան կազմել: Բայց դրանք բոլորը մեռած տառ էին մինչև Բեռլինի վեհաժո-

---

[991] «Արմենիա», թիվ 15, 1913:
[992] «Արմենիա», թիվ 15, 1913:
[993] Նույն տեղում:
[994] Նույն տեղում:

ղովի 61-րդ հոդվածը, որով նախատեսվում էր «բարենորոգումներ մտցունել Հայաստանի մէջ, ինչպէս որ 24 և 26 յօդուածներով ալ պայմանագրած էր Մակեդոնիաի և Կրէտէի համար: Յայտնի է թէ ի՞նչ եղաւ ատոր արդիւնքը»[995]: Թուրքիան կորցրեց Կրետեն և Մակեդոնիան: Ուստի եթե թուրք իշխանավորները շարունակեն միևնույն մոլորյալ համառության մեջ մնալ, «այս անգամ ալ Հայաստանը պիտի կորսնցունէն»[996]:

Իհարկե, եթե թուրքերը չէին իրականացնում խոստացած բարենորոգումները, դրանում իրենց թողտվությամբ և անհետևողականությամբ մեղավոր էին նաև եվրոպական տերությունները, որոնք իրար հետ մշտական գզվռտոցների արդյունքում միշտ մոռանում կամ աչքաթող էին անում Հայկական խնդիրը: Այս հարցերի վերաբերյալ հոդվածագիրը վկայակոչում էր նաև թուրքական մամուլը և ամբողջական հատվածներ հղում կատարելով դրանից՝ պարզաբանում, որ թուրքական հասարակական շրջանները ևս արդեն պատկերացնում էին հարցի լրջությունն ու հաճախ իրատեսական առաջարկներ և պարզաբանումներ էին կատարում: Այսպես օրինակ՝ հիմնականում թուրքական քաղաքական շրջանակների խոսափող «Թասվիրի էֆքեարի» թղթակցի՝ ֆրանսիական «Սիմաֆոր» (Le Semaphore de Marseille) օրաթերթում տպագրված ծավալուն հոդվածն ամբողջությամբ նվիրված էր Հայկական խնդրին: Ներկայացնելով վերջինիս անցած փուլերը՝ հոդվածագիրը նշում էր, որ պատերազմի նախօրյակին իրադրությունը բոլորովին փոխվել էր ի նպաստ հայերի: Մեծ տերություններից յուրաքանչյուրը «Ասիական Թիւրքիաի ամբողջութեան և անբռնաբարելիութեան դաւանանքը յայտարարելով մէկտեղ՝ մտքին մէջ իրեն վերապահած է արդէն այն երկրամասը որ կուզէ առնել, և Գերմանիան չծածկեր որ ինք աչք տնկած է Կիլիկիաի վրայ»[997]:

---

995 «Արմենիա», թիվ 17, 1913:

996 Նույն տեղում:

997 «Արմենիա», թիվ 18, 1913:

Իրենց այդ նպատակին հասնելու համար գերմանացիներն աշխատում էին հայերին՝ «քաջալերել այդ ընդունակ և երեսի վրայ լքուած ազգը»[998]: Իսկ ինչ վերաբերում էր ռուսներին, ապա նրանք էլ, այլևս չվախենալով, «թէ Կովկասի Հայերն անջատողական շարժում մը կունենան», համարում էին, որ ամենահարմար պահն էր հայերին իրապես սատարելու Հայկական խնդրի կարգավորման գործում[999]: Արդյունքում, ի նպաստ այդ խնդրի, ռուս-գերմանական համատեղ առաջարկություն էր ներկայացվում Բ. Դոտ՝ միաժամանակ սպառնալով նրան դրամապես չօգնել, մինչև որ «Բ. Դոտը բացորոշապէս ընդունի հայկական բարենորոգումների ծրագիրը»[1000]:

Օսմանյան իշխանություններին Հայկական խնդիրն ընդունել տալու իր միջոցներն էր ներկայացնում նաև «Արմենիա»-ի վերլուծաբան Հորիզոնը «Հայաստանի բարենորոգումների ծրագրին ընդունել տալու միջոցները» հրապարակման մեջ: Հոդվածագիրը երեք կարևոր գործոն էր առանձնացնում, որոնք կստիպեին թուրքերին ընդունել բարենորոգումների ծրագիրը: Դրանք էին.

ա) ֆինանսական ճնշում,

բ) հավաքական զինական քայլեր բոլոր մեծ տերությունների կողմից,

գ) որևէ առանձին պետության կողմից առանձնակի գործողություններ:

Ընդ որում, նկատի էր առնվում այն կարևոր հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը գտնվում էր ծանր ֆինանսական դրության մեջ, դրամական կարիքն անխուսափելի էր դարձնում արտաքին փոխառությունները, ուստի դրանք ազդու միջոց էին և կարող էին դրական դերակատարություն ունենալ խնդրի լուծման տեսանկյունից: Սակայն, հոդվածագրի միանգամայն ճիշտ մեկնաբանությամբ, ա-

---

[998] Նույն տեղում:
[999] Նույն տեղում:
[1000] «Արմէնիա», թիվ 18, 1913:

զատ միջոցներ ունեցող տերություններն էլ ինչ-որ հայկական բարենորոգումների պատճառով հազիվ թե հրաժարվեին թուրքական կայուն տոկոսներից: Միասնական ռազմական միջամտությունն էլ քիչ հավանական էր, քանի որ խոշոր տերությունների միջև կային բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք կխոչընդոտեին նրանց միասնաբար հանդես գալը: Մնում էր երրորդ տարբերակը, որը համեմատաբար ամենաիրատեսականն էր: Դա կարող էր անել միայն Ռուսաստանը, որի հետ էլ հայ ժողովուրդը պիտի կապեր իր հույսերը, իրատեսորեն եզրակացնում էր հոդվածագիրը:

Այդ նույն ժամանակ թուրքերը չէին հասկանում, որ հայանպաստ բարենորոգումներ իրականացնելով՝ լուծում էին կարևոր հարցեր. կշահեին ամենաօրինավոր, իրենց պահանջների մեջ ամենահամեստ և «Հայրենիքին մատուցուելիք ծառայութեանց մէջ՝ դարերէ ի վեր ամենաանձնուէր ու ամենահաւատարիմ»[1001] հայության համակրանքը, որն օդի նման անհրաժեշտ էր իրենց թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքական առումով, քանի որ բարենորոգումների գործադրությամբ «-Թուրքիա տէր մնալով հանդերձ իւր տանը մէջ Հայ ազգը, կը ստանայ շարժումի անհրաժեշտ ազատութիւններ եւ բոտն կը զարգացնէ յուր տնտեսութիւնը»[1002] և պետության համար կապահովեր կայուն ֆինանսական վիճակ: Նրանց համար գաղտնիք չէր, որ արևմտահայության բաղձանքը դարեր շարունակ եղել էր իր հայրենիքի «մէջ ազատօրէն ինքզինք կառավարելու. մէկ խօսքով՝ Թիւրքահայաստանը վերածուի ինքնավար Հայաստանի մը, մեծ պետութիւնների երաշխաւորութեան տակ ապահովուած»[1003]: Այսինքն՝ մոտավորապես այն, ինչ ստորագրել ու երաշխավորել էին վեց մեծ տերությունները Բեռլինի վեհաժողովի ընդունած փաստաթղթերում, սակայն իրականում հիմնական ու միակ երաշխավորը Ռուսաստանն էր, քանի որ

[1001] «Արմէնիա», թիվ 34, 1913:
[1002] Նույն տեղում:
[1003] «Արմէնիա», թիվ 19, 1916:

նրա՝ դեպի հարավ ձգտումները համընկնում էին հայերի այդ բաղձանքին:

Հայոց Մեծ եղեռնի շրջանում թե՛ բուն երկրում, թե՛ գաղթօջախներում անկառավարելի իրավիճակ էր ստեղծվել: Նույնպիսի շփոթված դրության մեջ էին հայտնվել նաև հայկական լրատվական միջոցները: Տարբեր ճանապարհներով Արևմտյան Հայաստանից եկած սարսափազդու լուրերը մոլորեցրել էին շատերին: Ցավից ու վրեժից մինչև վերջին նյարդերը պրկած հայությունը համալրեց կամավորական շարժման շարքերը՝ իր նպաստը բերելով այդ ազգանվեր գործին: Առժամանակ միայն այդ խնդիրներով մտահոգված հայ միտքը մի կարճատև շրջան դադարեց Հայկական հարցը քննարկել: Բայց առաջին դաժան հարվածների շփոթը հաղթահարելուց հետո և Անտանտի երկրների, մասնավորապես Ռուսաստանի, հաջողություններին զուգընթաց Հայկական հարցը նոր թափով սկսեց քննարկվել տարբեր մակարդակներում: Հայկական մամուլը ևս, աստիճանաբար վերագտնելով հոգու արիությունն ու հայության կենսունակությանը բնորոշ կորովը, սկսեց անդրադառնալ խնդրին: «Արմենիա» թերթն էլ իր հերթին եղեռնի թեմայով ցավաշատ հրապարակումների կողքին սկսեց ամբողջական էջեր տրամադրել Հայկական հարցին ու նրա լուծման ձևերին:

Նախկին անորոշ, զուտ տեսական քննարկումներին աստիճանաբար փոխարինելու էին գալիս ավելի իրատեսական, դաշնակիցների մոտալուտ հաղթանակով պայմանավորված՝ ավելի պահանջատիրական ու անզիջում տոնով հագեցած հրապարակումները: Խոսելով հայի կենսունակության մասին՝ Սարգիս Տեր-Միքայելյանը «Բայց այս ալ դեռ հերիք չէ» հրապարակման մեջ ընդգծում էր, որ հայությունն ահավոր ողբերգությունից հետո «մէկ սիրտ և մէկ հոգի կազմած կապրի և կը շնչէ նահատակուածներուն վրէժը լուծելու, Հայրենիքին օգնութեան հասնելու համար: Ամեն Հայու ձայնը մէկ է, Հայաստան

չպիտի մեռնի, Հայաստանը պիտի ապրի»[1004]: Իսկ թուրքական իշխանությունները, գրում էր հեղինակը, որոնց թվում էր, թե Հայկական հարցը իսպառ «բնաջնջել կարծաւ, ընդհակառակը անոր նոր կեանք կը ներշնչէ, իսկ իւր գերեզմանը կը փորէ»[1005]: Հայաստանում ստեղծված դժոխային վիճակը հեղինակի կարծիքով «մոռցնել տալու չէ անոր մօտաւոր ապագայով մտազբաղիլը»[1006]: Քանի որ Հայաստանի ապագան հնարավոր էր միմիայն նրա ինքնավարության պայմաններում, ուստի ազգային մարմինները պիտի շարունակեին պնդել իրենց պահանջը, քանի որ արևմտահայության ոչնչացումը դեռևս համայն հայության վերջը չէր: Ուստի երբ պատերազմը վերջանար, և հասներ վարձատրությունների ժամը, «յաղթական կառավարութիւնները մեզի ըսելու չեն հայկական հարցին կարևորութիւնը կորսուած կը նկատուի, Հայաստանը առանց Հայու լինելով»[1007]: Այս անպատեհությանը տեղի չտալու համար պետք էր հռչակել ու հայտարարել ողջ աշխարհին, թե այն օրը, որ «հայութեան վրայ դարերէ ի վեր ծանրացած արտասուածոր և արիւնաթոր լուծը փշրուի, և ազատութեան արշալոյսին նշոյլները փայլել սկսին Հայաստանի հորիզոնին վրայ», այդ օր բոլոր երկրների հայ պանդուխտները սիրով և երգերով պիտի սլանան դեպի իրենց մայրենի հողը՝ «իրենց մարտիրոսներուն յիշատակները յաւէրժացնելու»: Այնտեղ կգնան հարյուրավոր հայ ճարտարապետներ՝ ավերակները վերականգնելու, հողագետներ հայկական հողերը արգասավորելու, բժիշկներ, դեղագործներ, դաստիարակներ, վաճառականներ, արհեստավորներ, գիտնականներ, «բեռնատրուած հազար ու մէկ տեսակ պաշարներով, Հայաստանի մէջ զանոնք սփռելու համար»[1008]:

[1004] «Արմէնիա», թիվ 23, 1916:
[1005] Նույն տեղում:
[1006] Նույն տեղում:
[1007] «Արմէնիա», թիվ 23, 1916:
[1008] Նույն տեղում:

Դա էլ հոդվածագրի կարծիքով բավարար չէր: Հարկավոր էր, դեռ հաշտության բանակցությունները չսկսած, դաշնակիցներին լսելի դարձնել հայության կորուստների մեծության չափերի մասին: Չնայած դրանց մեծ մասը «պատերազմի դաշտի վրայ կռուող-զինուորներ» չէին, այլ ավելի շատ կանայք, ծերեր ու երեխաներ էին բայց մի՞թէ նրանք էլ պատերազմի զոհեր չէին, իհարկե, այդպիսիք էին: Ճիշտ է, նրանք այնքան օգուտներ չեն տվել կռվող զորքերին, բայց «մի՞թէ մեր մարտիրոսները չեն մեռնիր իբր զինուորներ այն միևնոյն քաղաքակրթութեան, արդարութեան և ազատութեան գաղափարականին՝ որուն համար կը կռուին ու կը զոհուին իրենցները»,- հարցնում էր հեղինակը: Այնուհետև փորձում ինքն էլ պատասխանել, որ հայերն էլ տասնյակ հազարներով զինվորներ ունեին դաշնակիցների բանակներում, որոնցից շատերը զոհվում էին որպես հերոսներ: Քիչ չէին նաև կամավորներն ու ազատամարտիկները, որոնք անհավասար պայմաններում «պատմութեան մէջ չտեսնուած» քաջագործու-թյուններով մաքառում էին թշնամու դեմ և օգնում դաշնակիցներին ու նպաստում նրանց հաղթանակներին և ցոյց տալիս աշխարհին իրենց նվիրվածությունն ու հզորությունը, որպեսզի երբ ժամանակը գար, «կարենանք քաղել մեր արդար դատին համար մղուած ճիգերուն պտուղները»[1009]: Այսինքն՝ լավատես հոդվածագիրն առաջ նայելով գտնում էր, որ մոտ էր ժամը հայոց փրկության, որ դարավոր անազատությունից հետո լոյսն էր ճառագելու «հայրենիքներուն հայրենիք» ազատ Հայաստանում, քանի որ ողջ հայ ժողովուրդն էր տենչում դեպի ազատություն՝ իր ծոցում ունենալով «այնքան վերքեր, որքան աշխարհիս բոլոր հայրենիքները»[1010]:

1918 թ. ավարտվեց Առաջին աշխարհամարտը, և պարտված Օսմանյան կայսրու-թյունն առհավետ հեռացավ պատմության թատերաբեմից: Հայությունը «տխուր, բայց ոչ յուսահատական վիճակի մը մէջ

[1009] «Արմենիա», թիվ 23, 1916:
[1010] Նոյն տեղում:

էր»[1011]: Հստակ էր մեկ բան, որ այլևս «ՀԱՅԱՍՏԱՆը, երբէք չպէտք է որ նորէն Թիփքերի տիրապետութեան տակ դրուի»[1012], այլ «պէտք է ներքին ոյժ գոյացնէ, քանզի ազգի մը անկախութիւնը ՉՏՐՈՒԻՐ, այլ ԿԱՌՆՈՒԻ...»[1013]: Իսկ մինչ այդ տեղի ունեցած ռուսական զույգ հեղափոխությունները պարզապես շփոթի էին մատնել շատերին, այդ թվում նաև «Արմենիա»-ի տեսաբաններին: Հստակ չպատկերացնելով հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության նպատակներն ու նշանակությունը՝ թերթը լողում էր գաղափարների տարաբնույթ հոսանքների դաշտում՝ երբեմն հակասելով նույնիսկ ինքն իրեն:

Մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը, և Հայկական հարցն այդ պահից զգալիորեն ձևափոխվեց՝ պահպանելով իր հիմնական բովանդակությունը: Պարզապես նորանկախ Հանրապետությունն սկզբից ևեթ փորձեց դառնալ հարցի դրոշակակիրն ու առաքելություն ստանձնեց այն հասցնել իր վերջնական հանգրվանին: ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ամեն ջանք գործադրեց Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ, սակայն միմյանց հաջորդող ոչ բարենպաստ իրավիճակները խոչընդոտում էին, և հարցը մտնում էր փակուղի:

Հայկական հարցին փոփոխակի հաջողություններով շարունակում էր հետամուտ լինել նաև Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի գլխավորությամբ: «Արմենիան», տարեգրելով հայկական այս երկու կառույցների գործողությունները երբեմն ոգևորվում, իսկ ավելի հաճախ հուսախաբություն էր ապրում, քանի որ խոշոր տերությունների՝ աշխարհը վերաբաժանելու մղումներն այնքան բուռն ու այնքան ծավալուն էին, լի բազմաբնույթ խարդավանքներով, որ նրանց ծրագրերում Հայկական հարցին տեղ ու ժամանակ էլ չէր մնում:

[1011] Նույն տեղում:
[1012] Նույն տեղում:
[1013] Նույն տեղում:

Աստիճանաբար հասկանալով կատարված իրադարձությունների իմաստն ու խորությամբ ըմբռնելով հայ ժողովրդի ծանր կացությունը՝ թերթի խմբագրակազմը կարողացավ ստեղծված ծանր իրավիճակում ճիշտ կողմնորոշվել և ելնելով հայության փրկության մեկնակետից՝ ողջունեց Հայաստանի խորհրդայնացումը՝ համարելով, որ Ռուսաստանի հզոր հովանու ներքո միայն հնարավոր կլիներ պահպանել հայության մնացած փոքրաթիվ բեկորները. «հայ ժողովուրդը ստիպուեր է Ռուսիաի արդի կառավարութեան հետ յարմարուող քաղաքականութեան մը հետևիլ, գէթ իր ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար, կարելի եղածին չափ պահպանելով նաև իր պետական անկախութիւնը»[1014]: Սկզբում շատ ժլատ, զուսպ, սակայն աստիճանաբար ավելի հաճախակի ու ավելի ծավալուն նյութերով «Արմենիա»-ն սկսեց անդրադառնալ Հայաստանի երկրորդ՝ խորհրդային հանրապետության կյանքին և ջատագովել այնտեղ արձանագրված դրական տեղաշարժերը:

Արձանագրելով, որ «Հայաստանն ընկաւ ռուսական ազդեցութեան ներքոյ 3 տարւայ քաղաքական անկախ կեանք ունենալուց յետոյ», և որքան հայերը «յամառօրէն Արևմտեան Եւրոպային կառչեցան», այնքան նրանց բախտն «արագօրէն դարձաւ դէպի արևելք և կարգադրուեցաւ համաձայն արևելքի մէջ գործող ոյժերի»[1015]: Որքան հայ ժողովուրդը հետամուտ եղավ անկախ պետություն ունենալուն, այնչան նրանց «ունեցած անկախութիւնը պակսեցաւ, և գոյութիւն ունեցող անկախ Հայաստանին յաջորդեց կիսանկախ բոլշևիկ Հայաստանը»[1016], և հայերը որքան լայն գծեցին իրենց երկրի սահմանները, դրանք այնքան «աւելի նեղացան շնորհիւ ռէալ հզոր ոյժերի»[1017]:

[1014] «Արմենիա», թիվ 23, 1921:
[1015] «Արմենիա», թիվ 10, 1921:
[1016] Նույն տեղում:
[1017] Նույն տեղում:

«Արմենիա»-ն, ներկայացնելով Հայաստանում տիրող տնտեսական դժվար կացությունը, մեծաքանակ որբերի առկայությունը, սովն ու համաճարակները, օգնելու կոչերով դիմում էր համայն հայությանը, հորդորում բոլորին, որպեսզի սատարեն հայության միակ «փրկիչ խարսխի ու պահապան» Խորհրդային Հայաստանին: Թերթը չէր ընդունում խորհրդային կարգերն ու բոլշևիկների գործելակերպի շատ կողմեր և հաստատ չգիտեր, թե «1923ը ի՞նչ պահած է» հայության համար, թե «տևական խաղաղութեան մը հեռապատկերը ամպամած ու անտեսանելի կը թուի», սակայն հայտարարում էր, որ ստիպված դարձյալ պիտի ապավինեին հույսին, որ «Երևանեան կորիզը կը ներշնչէ: Հոն կայ խաղաղութիւն և կայ ուրեմն կարելիութիւն կազմակերպելու և զօրանալու»[1018]: Այսինքն՝ թերթը, տարաձայնություններ ունենալով բոլշևիկյան վարչաձևի ու գաղափարախոսական համակարգի հետ, մերժում էր հանրահայտ չարաբաստիկ պրոլետարիատի դիկտատուրան: Սակայն հայ ժողովրդի ապագայի տեսանկյունից միանգամայն ճիշտ ըմբռնելով ստեղծված իրավիճակը՝ միաժամանակ քարոզում էր հանդուրժողական վերաբերմունք Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ելնելով ստեղծված բարդ իրավիճակից՝ երբ առավել կարևոր էր հայության ֆիզիկական գոյության ապահովումը, «Արմենիան» Հայկական հարցն առժամանակ համարում էր ոչ հրատապ, իսկ լուծումը թողնում ապագային: Ի վերջո, «Արմենիա»-ն ողջունեց Խորհրդային Հայաստանը՝ որպես հայության փրկության հնարավորություն և ապագայում Հայկական հարցին հետամուտ լինելուն նպաստող նախապայման: Հասկանալի է, որ «Արմենիա»-ն արձագանքել է նաև 1920-ականների սկզբներին տեղի ունեցած միջազգային խորհրդաժողովներին, սակայն 1920-1923 թթ. համարների մեծ մասը մեզ գտնել չհաջողվեց, հետևապես այդ մասին կարող ենք միայն ենթադրություններ անել:

[1018] «Արմենիա», թիվ 23, 1923:

5.4. Հայոց ցեղասպանության լուսաբանումը «Արմենիա»-ում

Պարբերականի գոյության 38 տարիների ընթացքում հայ ժողովրդի կյանքում չի եղել քիչ թե շատ կարևոր մի իրադարձություն, որին «Արմենիա»-ն արձագանքած չլինի: Առավել ևս մարդկության ամենաողբերգական երևույթներից մեկին՝ հայերի ցեղասպանությանը, թերթն զգալի տեղ է հատկացրել, և դա միանգամայն բնական էր սեփական ժողովրդի ճակատագրով ապրող պարբերականի համար:

Ընդհանուր առմամբ, առաջին իսկ համարից սկսած, «Արմենիա»-ի էջերը լի են արևմտահայ ժողովրդի ծանր վիճակի նկարագրություններով: Դրանցում աստիճանաբար ուրվագծվում են Օսմանյան կայսրության մարդատյաց պատկերն ու հայ ժողովրդի իրավազուրկ, մշտապես ունեզրկման և նույնիսկ կյանքը կորցնելու վտանգի պայմաններում գոյատևելու տխուր իրողությունը: Սակայն ինչ վերաբերում է նախաեղեռնյան և եղեռնի շրջանին վերաբերող հրապարակումներին, ապա դրանք լի են ահասարսուռ պատկերներով: Դրանցում առկա են պատկերներ, որոնցից երբեմն մարդու արյունն է երակներում սառչում: Առաջ անցնելով՝ ընդգծենք, որ, չնայած չարագույժ նյութերի առատությանը, գնահատելի է, որ ամենաճգնաժամային իրավիճակներում նույնիսկ թերթն ու նրա խմբագրակազմը՝ զուսպ ու անկողմնակալ Մ. Փորթուգալյան-խմբագրի գլխավորությամբ, երբեք չկորցրին հոգու կորովը, հույսն ու լավատեսությունը և հավատն ապագայի նկատմամբ:

«Թուրքահայերի վիճակը եւ մեր պարտքը» խմբագրականում, ներկայացնելով երկրից եկող տագնապալի լուրերը, հոդվածագիրը նշում է, որ սոսկալի է դարձել Թուրքիայի ներքին գավառների հայերի վիճակը: Այն ժամանակ, երբ մայրաքաղաք Կ. Պոլսում շատ նշանավոր հայ գործիչներ էին ձերբակալվում և խոշտանգվում, երբ պատրիարքարանի թագրիրներին ոչ մի կարևորություն չէին տրվում, երբ «Ազատամարտ» թերթը, չնայած իր շատ զգուշավոր ոճին, իբրև

ընդդիմադիր Պատերազմական ատյանի կողմից արգելվում էր, երբ Տրապիզոնի նման մեծ քաղաքում զորքերն առանց քաշվելու «կը կողոպտեն քրիստոնեայների խանութները և կը սպաննեն նաև 3 քրիստոնեայ, ա՛լ կարելի է երևակայել թէ Թիւրքիայի ներքին գաւառների՝ բուն Հայաստանի մէջ ինչե՞ր կը կատարուին»[1019]: Իսկ ամենամեծ դժբախտությունն այն էր, ցավով արձանագրում էր հոդվածագիրը, որ հայերն իրենց կոտորող «Թիւրքին ու Քիւրտին դէմ ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ կը գտնուին»[1020]: Դրան էլ գումարվում էր հայ քաղաքական առաջնորդների անգործությունն ու ժողովրդի ինքնապաշտպանության մասին չմտածելը, ինչը «կը նշանակէ ժողովուրդը էշ նահատակ դարձնել ուզել»[1021]:

Հասկանալի պատճառներով (կապի բացակայություն, քաոսային դրություն կայսրության ողջ տարածքում, հայ թղթակիցների բացակայություն, անապահով և վտանգալեցուն իրավիճակ և այլն) «Արմենիա»-ում տպագրվող տեղեկատվությունը մեծ մասամբ օտարալեզու պարբերականներից արտատպումներ էին կամ դրանցից կատարված հղումներով ու վկայակոչումներով հրապարակումներ: Գնահատելին այն է, որ «Արմենիա»-ն սեփական աղբյուրներից ունեցած տեղեկությունների կողքին, առանց ավելորդ միջամտությունների արտատպելով այդ թղթակցությունները, հնարավորություն է ընձեռել պահպանելու և սերունդներին փոխանցելու օտարների խոսքն ու վկայությունները եղեռնի մասին:

Ընթացող պատերազմի դժոխային քաոսում հայտնված Օսմանյան տխրահռչակ կայսրությունը, զգալով իր մոտալուտ մայրամուտը, երկիրը ոչ միայն վերածել էր ժողովուրդների սպանդանոցի, այլև հաստ ու անթափանց պարիսպներով ինքնապատվել էր, որպեսզի համաշխարհային հանրությունը չտեղեկանար հայ, ասորի, հույն ժո-

---

[1019] «Արմենիա», թիվ 17, 1914:
[1020] Նույն տեղում:
[1021] Նույն տեղում:

ղովուրդների ու ողջ մարդկության դեմ ուղղված իր ոճրագործություն-ների մասին: «Այժմեան թիւրք կառավարութիւնը,- կարդում ենք «Արմենիա»-ի «Կացութիւնը Թուրքահայաստանի մէջ» խմբագրակա-նում,- ոչ թէ համիտեան ոճով՝ այլ արտաքին երևույթները փրկելով կը շարունակէ Հայերը կոտորել տալ աւազակների և բռնապետների ձեռքով և ինք անմեղ ձևանալ»[1022]: Չէ՛, թուրքերը չէին վախենում, ա-ռավել ևս չէին ամաչում, այլ զգուշանում էին, որ իրենց բարձրացրած «ավելորդ աղմուկով» առաջադեմ հասարակությունն ու ՀԼՄ-ները կարող էին անհարկի միջամտություններով խանգարել ու չթողնել, որ իրենց նպատակները լիովին իրագործեն:

Օտար աղբյուրների հենքի վրա արված հրապարակումները եր-բեմն առանց որևէ միջամտության բառացի թարգմանություններ էին, իսկ երբեմն էլ ուղեկցվում էին պարզաբանումներով, որոնք լույս էին սփռում օտար ընթերցողի համար անհասկանալի տարբեր իրողութ-յունների ու խնդիրների վրա: Չնայած թեմայի ահասարսուռ և ան-մարդկային բնույթին՝ հիմնականում, սակայն, այդ հրապարակում-ներն աչքի են ընկնում զուսպ շարադրանքով, փաստերի հնարավո-րինս անկողմնակալ ներկայացմամբ: Եվս մեկ առանձնահատկութ-յուն. նույնիսկ այն դեպքերում, երբ տեղեկատվությունը մահասար-սուռ բնույթ ունի, զգացվում է պետության նկատմամբ որոշ վերապա-հություն. ավելի շատ մեղադրանքներ են հնչում անհատների ու պաշ-տոնյաների հասցեին, քան թե համակարգի: Ներկայացնելով երիտ-թուրքերի անմարդկային կերպարն ու արյունախում տեսակը՝ թերթը գրում էր. «Էնվէր փաշան իշխանութիւնը իր ձեռք անցուցած ատեն յայտարարած էր. երեք ամսի մէջ ես աւելին պիտի ընեմ Ապտիլ-Համիտի երեսուն և երեք տարիի մէջ ըրածէն...»[1023]:

Հետհամիդյան կառավարիչների՝ երիտթուրքերի՝ մարդատյաց լինելու և գերմանացիների կողմից հովանավորվելու փաստերը թեև

[1022] «Արմէնիա», թիվ 20, 1912:

[1023] Հայերի կոտորածներին առթով, «Արմէնիա», թիվ 23, 1916:

հետագայում միայն հայտնի դարձան բոլորին, սակայն «Արմենիա»-ի հրատարակիչներն արդեն այդ շրջանում հստակ ներկայացնում էին նրանցից օրինակ՝ Էնվերին՝ չվախենալով ընդհանրացումը տարածել նաև մյուսների վրա. «Գերմանական կուլտուրայի այս աշակերտը իշխանութեան մէջ հաստատուելուն պէս՝ կոտորածների կազմակերպումը սկսաւ: Ոչ ամիս է որ օսմանեան հպատակների ճշմարիտ մարդահամար մը պատրաստած է: Բայց որմէ՞: 1453էն ի վեր Թիւրքերը երբէք հոգ ըրա՞ծ էին իմանալու անհաւատների թիւը որոնց կը շահագործեն: Գերման վիճակագրողներ կատարեցին բոլոր աշխատանքը որ ղրկեցին իրենց հիւպատոսներին և ասոնք ալ զեկուցին սպաներին որոնք զինեցին և ղեկավարեցին ոճրագործները... մնացեալը ծանօթ է»[1024]:

Ներկայացնելով օտարալեզու պարբերականների տեղեկությունները Արևմտյան Հայաստանի կացության մասին՝ «Արմենիա»-ի տեսաբան Թ. Եղիշեն գրում էր. «Արիւնի իրականութիւնն է որ երագավազ յառաջ կընթանայ մեր արիւնի հայրենիքէն: Բոլոր տարագիր աչքերը կարցունքոտին և արիւնակից սրտերը կը փղձկին տառապանքի և վրէժի ցնցումով մը»[1025]: Բացատրելով թուրքերի սարսափելի վայրագություններով սկսած հայաջինջ քաղաքականության արմատները՝ «Արմենիա»-ի հոդվածագիր Ա. Թորոսյանն էլ իրավացիորեն պարզաբանում էր, որ «Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը սկսած է իր նպատակի իրագործումը փութացնել, տարիներէ ի վեր ծրագրուած «Հայաստանը առանց հայի» տեսնալու գազանային ցանկութիւնով»[1026], սակայն չդիմանալով անարդարացի այդ իրողությանը՝ բացականչում էր՝ հայը ապրած է և պիտի ապրի[1027]:

[1024] «Արմենիա», թիվ 23, 1916:
[1025] «Արմենիա», թիվ 44, 1915:
[1026] Մեր ցավերէն, «Արմենիա», թիվ 25, 1916:
[1027] Նույն տեղում:

Հայրենիքը շատ տառապանքներ է տեսել, բազմիցս արյունոտվել են նրա հողն ու ջուրը, սակայն այս մեկը սարսափելի էր. «Օ՜հ, ինչե՜ր ինչե՜ր չը տեսաւ մեր տարաբաղդ հայրենիքը թիւրք բարբարոսութեան, աւելի ևս առաջ արևելեան բարբարոսութեան գարշապարին տակ»,-ցավամորմոք արձանագրում էր հոդվածագիրը, ապա չկորցնելով ապագայի նկատմամբ հույսը և մարտահրավեր նետելով թշնամուն՝ լավատեսորեն շարունակում էր. «Ազգերը կը նմանին մեծարմատ ծառերուն. ո՜րքան ճիւղահատուին, դարձեալ կը բազմանան կը խտանան անոնց ճիւղերը աւելի թարմ, աւելի կենսունակ»[1028]:

Հայաստանում կատարվող իրադարձություններից մարդիկ խելագարվում էին, նրանց զգացումները քարանում էին: Այնպիսի հրեշավոր իրադարձություններ էին տեղի ունենում, որ զարմացած հոդվածագիրը հարցնում էր. «աշխարհի զգացումը բթացա՜ծ է անոնցմով»[1029]: Թալանվում ու ավերվում էր այն ամենը, ինչը հայերին էր պատկանում, հայերն անխնա սպանվում էին՝ անկախ տարիքից ու սեռից: Արյան հոտից գազազած թուրքերը չէին խնայում նաև մյուս քրիստոնյաներին. «ի՞նչ որ Խաչին կը պատկանէր, վայրագօրէն զոհուեցաւ... Թէ Մարտինի կաթոլիկների առաջնորդը չարաչար սպանուեցաւ. թէ Պէյրութի յոյն օրթոտոքս առաջնորդը կախուեցաւ. 10 քահանայ Էնկիւրիի, վեց ալ Տրապիզոնի մէջ: Հասարակ հաւատացեալներէն տանջուածների հաշիւը չկայ ալ»[1030]: Այնպես որ, եզրակացնում էր հեղինակը, ամբողջ երկիրը վերածվել էր մեղքերի ալեծուփ ծովի, որտեղ «պղծաբարոյութիւնը արիւնի ալիքներով կը յորդէր Կասպից ծովեզերքէն մինչև Լիբանանի մայրիները»[1031]:

Ամենուն ցավով և ակնածանքի վարանոտ զգացումներով անդրադառնալով հայության զոհասեղանին հայտնվելու ցավալի իրողությա-

---

[1028] «Արմենիա», թիվ 44, 1915:
[1029] Գարշելի տանջանքներ, «Արմենիա», թիվ 23, 1916:
[1030] Նույն տեղում:
[1031] Նույն տեղում:

նը՝ Թ. Եղիշէ հոդվածագիրն արձանագրում էր, որ «մեր հարազատներու արիւնը վտակ կազմած է հայրենի հողին վրայ, որ հայրենիքը կը յօշոտուի, բզիկ-բզիկ կըլլայ մարմինը դահիճներու աքցաններուն տակ ...»[1032]: Այդ իրավիճակում «լռութիւնը անարգ մահ» համարելով՝ հոդվածագիրը, դիմելով համայն հայությանը, հարցնում էր. «Ի՞նչ պիտի ըսեն ծեզի այժմ Սիամանթօները, Վարուժանները: Ռ.Սևակները, Զօհրապներն ու Զարդարեաններն իրենց գերեզմաններէն, եթէ ունին»[1033]:

Խոսելով անիմաստ ու ոչնչով չպատճառաբանված տեղահանության և այն ամենաանմարդկային դաժան մեթոդներով իրականացնելու մասին՝ թերթը մանրամասներ էր հաղորդում Արևմտյան Հայաստանի ու կայսրության հայաշատ տարբեր գավառների հայության անմխիթար վիճակի մասին. «Աքսորավայրերը ուղարկելու գործողութիւնը կատարուած է ժանդարմերական ամենակոպիտ միջոցներով. անոնց նոյնիսկ զլացուեր են ջուր և հաց տալ ու առաջին օրէն իսկ ծանր զրկանքներու ենթարկած են»[1034]:

Չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ կանանց ու երեխաներին՝ իշխանությունները բռնի ու ամենավայրագ մեթոդներով տեղահանեցին հայ ժողովրդին, շատերին սպանեցին, իսկ ովքեր հրաշքով կենդանի մնացին, քշեցին արաբական անապատներ: Այստեղ էլ չդիմանալով անտանելի պայմաններին՝ շատերը զոհվեցին. «Տասնեակ հազարներով իրենց տուներէն բռնի ուժով վտարուած, անապատներու մէջ թափառական, ծարաւի և սովամահ՝ կիզիչ արեգակին տակ կը մեռնին: ... Ձմերային քամիներու և բուքերու մէջ կիսամերկ՝ կը զոհուին: Հարիւր հազարներով կիներ և աղջիկներ հարէմներու մէջ բարոյական վշտերու տակ կը կորսուին անդարձ: Հարիւր հազարներով իբրև նշանառութեան առարկաներ գնդակահար գետին կը փռուին կամ կը խոզ-

---

[1032] Ոչ ճանաչեմ զձեզ, «Արմէնիա», թիվ 25, 1916:

[1033] Նույն տեղում:

[1034] «Արմէնիա», թիվ 47, 1915:

խոզուին իբրև սպանդանոցի անասուններ»[1035]: Մարտիրոսացված ու նահատակվող մարդկանց, բոլոր զոհերի միակ մեղքը «իրենց անմեղ ըլլալն էր»: Ի դեպ՝ որքան էլ բարձր արժեքներից թուրքերն ու նրանց անհաջող նմանակ ազգերիները ճամարտակեն, այսօր էլ նրանց մեջ շատ են այնպիսիք, որ իրենց այսօրյա և անցյալում եղած անկումների ու անհաջողությունների պատճառները կապում են հայերի հետ, իսկ միակ ելք ու փրկություն տեսնում՝ նրանց արյան մեջ:

«Արմենիա»-ի հրապարակումներում ներկայացվում էր նաև ցեղասպանության կազմակերպիչների անմարդկային ու գիշատիչ էությունը, բացատրվում, որ «արիւնարբու դահիճներուն պարագլուխը, թիւրք կառավարութիւնը, ժպիտը իւր շրթունքներուն վրայ, հայ արեան հեղեղներով գինովցած՝ կը կարծէ հայկական հարցը միանգամ ընդ միշտ մէջտեղէն վերցնել իր լուծին տակ ապրող ամբողջ հայութեան նահատակութեամբ»[1036]: Միաժամանակ հոդվածագիրը, նույնիսկ այդ դժնդակ իրավիճակում չկորցնելով հոգու արիությունն ու ապագայի նկատմամբ լավատեսությունը, ազդարարում է. «Խե՜ղճ թիւրք կառավարութիւն, չտեսներ թէ հայկական հարցը ի սպառ բնաջնջել կարծաւ ժամանակ, ընդհակառակը անոր նոր նոր կեանք կը ներշնչէ»[1037]:

Տեղեկատվությունն սկսելով մայրաքաղաք Կ. Պոլսից՝ «Արմենիա»-ն ընդգծում էր երեք կարևոր փուլ հայերին ահաբեկելու, ուժազրկելու և իսպառ ոչնչացնելու համար: Շեշտում, որ հայերի զանգվածաբար ձերբակալություններն ու կոտորածներն սկսելով Կ.Պոլսից և մի գիշերվա ընթացքում ձերբակալելով նշանավոր բոլոր հայ մտավորականներին՝ թուրքերը հետապնդում էին երկու կարևոր նպատակ: Նախ՝ մայրաքաղաքը, որտեղ «շատ օտար աչքեր կային», որոնք կարող էին անցանկալի աղմուկ բարձրացնել և խանգարել ի-

---

[1035] Բայց այս դեռ հերիք չէ..., «Արմէնիա», թիվ 23, 1916:
[1036] Նույն տեղում:
[1037] Նույն տեղում:

րենց հրեշավոր ծրագրերն իրականացնելուն, հանկարծակի և անսպասելի մաքրել հայերից, և երկրորդ՝ մտավորականության ոչնչացումով հայությունը կգլխատվեր, և այլևս ավելի դյուրին կլիներ նրան ոչնչացնելու գործը: Ընդ որում, չէին խնայվում նույնիսկ այն հայերը, որոնք անգնահատելի ծառայություններ էին մատուցել պետությանն ու թուրք ժողովրդին. «Կ.Պոլսի մէջ ձերբակալուեւ են բոլոր աչքի զարնող դիրք մը ունեցող Հայերէն շատեր, որոնց մէջ է նաև փոստի և հեռագրի նախորդ նախարար Մարտիկեան Ոսկան էֆէնտին, որ օսմանեան փոստը բարեկարգելով մեծ ծառայութիւններ մատուցած էր Թիւրքիային, նախորդ պատրիարք Արշարունի սրբազանը, Տ. Զաւէն պատրիարքը և այլք անխտրաբար ձերբակալուեր և իբրև դաւադիրներ աքսորուեր են Կ.Պոլսէն»[1038]:

Հղում կատարելով Լոնդոնում լույս տեսնող «Դեյլի Նյուզ» թերթի «Տանջւող Հայաստան. Ամբողջ բնակչութեան մարմիններ ցրուած Ապստամբութեան պատրուակի տակ խժդժութիւններ» վերնագիրը կրող հրապարակմանը՝ «Արմենիա»-ն շեշտում էր, որ իշխանություններն ամենազազրելի միջոցներով «հայերը թրքացնելու համար ձեռք առած միջոցները ոչ միայն փողով և թմբուկով հռչակած սահմանադրական սկզբանց բացարձակապէս հակառակ են, այլ նաև իսլամութեան հեղինակութիւն ունեցող մեծամեծաց՝ քրիստոնեաներու հետ վարուելու կերպին համար հրամայած կանոններուն»[1039]: Ավելին, իշխանությունները, օգտվելով միջազգային խառնակ իրավիճակից, մայիսի սկզբից «կնքուած հրամաններ խրկեցան կայսրութեան ամբողջ ոստիկանութեան պատուիրելով որ հայ բնակիչներու վրայ ընդհանուր յարձակում մը ի գործ դրուի: Կ.Պոլսէն ղրկուած ցանկին մէջ անուններնին արձանագրուած բոլոր Հայ տուներուն վրայ յանկարծօրէն կէսգիշերին խոյացաւ: Արուները ձերբակալուելով տուներ-նին «թուղթ» գտնելու համար խուզարկուեցան, որմէ յետոյ, տարագրու-

---

[1038] «Արմէնիա», թիվ 44, 1915:

[1039] Տառապեալ Հայաստան, «Արմէնիա», թիվ 4, 1915:

թեան և ցրուումի դրութեան գործադրութիւնը սկսաւ տեղի ունենալ որ այժմեան հակահայկական ալեկոծումի ամենասոսկալի պատկերն է»[1040]:

Ի դեպ, «Արմենիա»-ի հաղորդած տեղեկությունների համաձայն, երիտթուրքերի պարագլուխները հայոց եղեռնը ձեռնարկելիս նախ և առաջ իրենց մարդատյաց սլաքն ուղղեցին ՀՀ Դաշնակցության դեմ, որովհետև, ի դեմս այդ կուսակցության, տեսնում էին որպես քիչ թե շատ դիմադրելու կարող ուժի: Թերթի բոլոր լուրերում, որպես հայության գերակա ուժ, առանձնանում են Դաշնակցություն կուսակցությունն ու նրա գործիչները: Ահավասիկ, վկայակոչելով Օդեսայում լույս տեսնող «Պ.Վէտէմոսդի»-ին՝ թերթը տեղեկացնում էր. «Կ.Պոլսի ոստիկանութիւնը շրջապատեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան օրգան «Ազատամարտի» խմբագրատունը և կալանաւորեց այնտեղ գտնուող անձերը»: Ապա ավելացնում, որ մեծ տպավորություն էր գործել հատկապես նախկին «կաբինետի հայազգի անդամներու, որոնք դէմ էին Թիւրքիոյ՝ պատերազմի մասնակցութեան»[1041], ձերբակալութան փաստը: Ջարդարարներն իրենց քստմնելի գործողություններում բոլորովին անկաշկանդ էին, իսկ հաճախ էլ՝ տարբեր անհիմն պատճառաբանություններով փորձում էին արդարացումներ գտնել իրենց տմարդի արարքների համար. «Պաշիպօզուքները անպատիժ կը խուժեն Հայերի բնակարանները և կզբաղուին կողոպուտով: Թալէաթ պէյը աշխատելով արդարացնել այդ ճնշումները, ըսեր է օրագրողներին որ իբր թէ Կ.Պոլսի Հայերը մատ ունին Վանի ապստամբութեան մէջ»[1042]: Շարունակելով ՀՀԴ-ի դեմ ընդգծված հալածանքների թեման՝ «Արմենիա»-ն գրում էր. «Խուզարկութեան ենթարկեցին Վոռամեանի ազգականներու և միւս կալանաւորներու տները, սարսափի մատնելով այդ ընտանիքները:«Ազատամարտ»ի խմբագրութիւնը

[1040] Տառապեալ Հայաստան, «Արմենիա», թիվ 4, 1915:
[1041] «Արմենիա», թիվ 47, 1915:
[1042] «Արմենիա», թիվ 45, 1915:

բռնագրաւած է, բացի ամբողջ արխիւէն, ոստիկանութիւնը գրաւած էր նաև դրամարկղը, ուր կար 540 ռսկի»[1043]:

«Արմենիա»-ի վկայությամբ ավելի դաժան ու անմարդկային ձևերով ձերբակալություններն ու մահապատիժներն իրականացվում էին հատկապես գավառներում: Այստեղ պարզաբանենք մի կարևոր հանգամանք. մինչև վերջերս ժամանակակիցների հուշերում, գեղարվեստական ստեղծագործություններում, երգերում, օտարածին աղբյուրներում և նույնիսկ հայ պատմագիտական մեծ թվով ուսումնասիրություններում կարմիր թելի նման անցնում էր այն գաղափարը, որ հայերն ամենուրեք (կամ գրեթե ամենուրեք – Ս. Ս.) հլու-հնազանդ, սպանդանոց քշվող կենդանիների նման մորթվել են: Հաճախ կարելի է ականջալուր լինել, թե իբր «չի կոտորվում այն ժողովուրդը, որը չի ուզում կոտորվել» բանաձևմանը: Միանգամայն սխալ մոտեցում է սա, եղեռնագործությունն ու կատարողին քողարկված, անուղղակի արդարացման փորձ: Իսկ հայ ժողովրդի պարագայում՝ որևէ քննություն չբռնող տեսակետ:

Խնդիրն այն էր, որ հարվածը միանգամից եղավ, գրեթե անսպասելի: Իսկ երբ հնարավոր դարձավ մի փոքր ուշքի գալ, հայերն ամենուրեք դիմում էին ինքնապաշտպանական գործողությունների[1044]: Բայց, ցավոք, ուժերը խիստ անհավասար էին, իրավիճակն ամբողջովին դեմ՝ հայերին: Ոչ պակաս դերակատարություն ունեցավ 1908 թ. հեղաշրջման իրողությունը, որը հաշիշանման թմբիրի պես շշմեցրեց ժողովրդին: Դրան գումարվեց նաև մեր քաղաքական ղեկավարների անհեռատես, անհաշվենկատ ու ինչ-որ տեղ նաև մորթապաշտ գործելաոճը, որը բացասաբար ազդեց, և ժողովուրդը գրեթե ամբողջովին կորցրեց իր զգոնությունը:

1043 Նույն տեղում:

1044 Հայերի ինքնապաշտպանական կռիվների մասին տե՛ս Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005:

«Արմենիա»-ն տեղեկացնում էր. «թիւրք կառավարութիւնը ամէն տեսակ նեղութիւններ կուտայ Մուշի դաշտը գտնուած Հայերին այնպէս որ ժողովուրդը ստիպուած է ինքնապաշտպանութեան միջոցների դիմել, և ընդհարումներ անպակաս են թիւրք զօրքերին և Հայ ժողովրդին միջև: Այդպիսի ընդհարում պատահած է Ցրօնք գիւղին մէջ ուր կառավարութիւնը 300էն աւելի քիւրդ անկանոն զօրքեր ղրկելով, գիւղը կողոպտել և գիւղացիներն ալ իբրև խռովայոյզներ ձերբակալել ու բանտարկել տուած է»[1045]: Անհնազանդության և պայքարի մի դեպք էլ թերթը վկայակոչում է Գոմս գյուղի օրինակով. «Գոմս գիւղին մէջ միւտիրը, իրեն հետ առնելով շատ մը ժանտարմներ որոնց մէջ և յայտնի ոճրագործ Մէհմէտ Էմինը որ 9 Հայ սպաննած է արդէն, կերթայ շատ մը նեղութիւններ կուտայ Հայ գիւղացիներին: Գիւղացիները ճարահատ կըսպաննեն Մէհմէտ Էմինը և անոր հետ մէկտեղ 6 ժանտարմներ»[1046]: «Արմենիա»-ի հետագա համարներում լուրերն ավելի ու ավելի սարսափազդու էին դառնում: Նկարագրելով համատարած ջարդերից փոքր թվով հայերի հրաշքով փրկվելու ու Բուլղարիա հասնելու ցավատանջ եղելությունը և վկայակոչելով նրանց պատմածները՝ թերթը գրում էր. «15էն 50 տարեկան և արական սեռին պատկանող բոլոր Հայերը երկրին ներսերը կը ղըրկուին ուր ընդհանրապէս թիւրքական գիւղերի մէջ կը ցրուեն զանոնք իսլամացնելը դիւրացնելու նպատակով. 300.000ի չափ Հայեր այդպէս հեռացուած են արդէն իրենց տեղերէն, մեծ մասը կոտորուած»[1047]: Ապա ամփոփելով տեղեկատվությունը՝ արձանագրում է ամենասարսափելին. «Թիւրքերը Մուշի շրջանի բոլոր արու հայերը կոտորեր են. 5000 հոգի միայն կրցեր են փախչիլ կոտորածէն»[1048]:

[1045] «Արմէնիա», թիվ 45, 1915:
[1046] «Արմէնիա», թիվ 45, 1915:
[1047] Տառապեալ Հայաստան, «Արմէնիա», թիվ 4, 1915:
[1048] Նույն տեղում:

Թերթի վկայությամբ ոչ մի հայաշատ բնակավայր չի խուսափել նախճիրից: Փոքր Հայքի Շապին-Գարահիսար քաղաքը, որ չերկնչելով տասնապատիկ գերակշռող թշնամական ուժերից ու արյունախում խուժանից՝ հերոսաբար ինքնապաշտպանվեց, «ողբերգական դէպքերի թատր դարձեր է: Հայերի ենթադրեալ ապստամբութիւն մը զսպելու համար ղրկուած թիւրք զօրքերը կրակի տուեր են քաղաքը: Հայերի բնակած ամբողջ թաղէն զատ՝ յոյների եկեղեցին և առաջնորդարանը նոյնպէս այրուած են: Մահերի մասին կոնկրետ տեղեկութիւն մը չէ առնուած, բայց հաւանօրէն շատ մեծ կը լինի»[1049]:

Շարունակելով լրատվությունը՝ «Արմենիան», հենվելով Փարիզի «Le Journal» օրաթերթի «յատկապէս Կովկաս եւ Թիւրքահայաստան ղրկած թղթակից Տ.Անրի Բարբիի»՝ Էրզրումից գրած թղթակցության վրա, հայտնում էր, որ 1915 թ. մայիս 20-ին «պատերազմական նախարար Էնվէր փաշան, Երիտասարդ Թիւրք գոմիթէի որոշման համաձայն, հրամայեց Հայերի տեղահանութիւնը Հայաստանի, Անատոլիի և Կիլիկիաի նահանգներէն դէպի Պաղտատի գծին հարաւակողմը գտնուող արաբական երկիրները»[1050]: Որոշված էր նաև գրավել և կողոպտել նրանց բոլոր գույքերը: Հայտնվում էր նաև, որ Կարինից եկած լուրերը շատ ավելի սոսկալի էին և, որ ամենասարսափելին էր՝ «ընդհանուր կոտորածի շշուկներ կը պտտէին»[1051]: Որպես ապացույց վկայակոչելով նաև տեղում ԱՄՆ-ի ներկայացուցիչ միսիոներ Ռոբ. Ս. Սթափլդոնին, ով «անզգայ հանդիսատեսի մը դերին մէջ չէ որ ներկայ գտնուած է հայ ժողովրդի մարտիրոսութեան», այլև, վտանգելով իր անձը, քաջասիրտ կնոջ կորովի աջակցությամբ «փրկած է 120 Հայեր (աւելի կը յարմարի ըսել Հայուհիներ որովհետև այդ թուէն մի-

[1049] Նույն տեղում:
[1050] Նույն տեղում:
[1051] Նույն տեղում:

նակ վեցը այր են) որոնք միայն մնացած էին Էրզրումի քաղաքին մէջ ուր կոտորածէն առաջ 18.000 Հայ կար»[1052]:

Այնուհետև Ռոբ. Ս. Սթափլդոնը վկայում է, որ տարբեր վայրերում իրեն հանդիպող մազապուրծ սակավաթիվ հայերը նույն տխուր իրողությունն էին ներկայացնում, որ իրենց ամբողջ ընտանիքները կոտորվել են, ունեցած ամեն ինչ գրավել են, իսկ տեղաշարժերի ժամանակ աննկարագրելի վայրագությունների զոհ են դարձել հազարավոր անմեղ մարդիկ: Ընդ որում, այդ համատարած սպանդից ու անարդարություններից խուսափել չի հաջողվել ոչ ոքի: «Այն կարաւանը որ դէպի Խարբերդ գնաց,- շարունակում է վկայել ամերիկացի միսիոնները,- աննկարագրելի վայրագութիւնների զոհ եղաւ: Էրզրումի բժիշկ Թաշճեանի երկու աղջիկներէ մին, սարսափէն խելագարած, յաջողեցաւ երկու անգամ խուսափիլ և երկու անգամին ալ նորէն բռնուեցաւ: Ինք և իր քոյրը Խարբերդի հարէմները կը գտնուին այժմ...»[1053]:

Թղթակցի խնդրանքով ԱՄՆ-ի հյուպատոսն առանձնացնում է նաև Էրզրումի կոտորածի գլխավոր պատասխանատուներին. «Քէմալ փաշա, անգութ ոստիկանութեան պետը որ ասկէ առաջ նոյն պաշտօնը կը վարէր Ատանայի մէջ, այդ քաղաքի Հայերի կոտորածին ժամանակ. օսմանեան խորհրդարանի երեսփոխան և «Միութիւն և Յառաջդիմութիւն» կուսակցութեան անդամ Սէլֆուլլահ և իր զաւակները՝ Ինկլիզ Ահմէտ պէյ»[1054]: Հյուպատոսը վկայում է նաև, որ «գերման սպայները չմասնակցեցան կոտորածին. անոնք գոհացան ամէն բան կատարելու թոյլատրելով և իրենց համար մէկ քանի դեռատի հայ աղջիկներ առևանգելով»[1055]: Իսկ ինչ վերաբերում է գերմանացիների՝

[1052] Մանրամասնություններ Էրզրումի կոտորածին վերաբերեալ, «Արմէնիա», թիվ 47, 1916:
[1053] Մանրամասնություններ Էրզրումի կոտորածին վերաբերեալ, «Արմէնիա», թիվ 47, 1916:
[1054] Նույն տեղում:
[1055] Նույն տեղում:

հայոց ցեղասպանությանը մեղսակից լինելուն, ապա Տ. Անրի Բարբին աներկբայորեն հայտարարում էր. «Երիտասարդ-Թիւրքերը, պաշտօնական Գերմանիայի հաւանութեամբ, արիւնի ալիքների մէջ խեղդած են Հայաստանը»[1056]:

«Le Journal» օրաթերթի թղթակից Տ. Անրի Բարբին Էրզրումից հաղորդելով, որ տեղի «Միութիւն և Յառաջդիմութիւն» կուսակցության ժողովատեղիի «շինութեան գործածուած բոլոր քարերը Հայերի գերեզմանատան տապանաքարեր են...»[1057], վկայում էր նաև մի սրտաճմլիկ իրողություն. «այրերը աւելի քիչ տառապած են: Անոնք անմիջապէս սպաննուած, ժամանակ չունեցան չարչարուելու, սակայն կիները... կը մեռնին սոսկալի տառապանքներէ, անպատում սարսափի և վշտակրութեան անվերջանալի օրերէ. առանց հանգստի, հացի ու առանց ջուրի, լափլիզող արևին տակ, իրենց ուղեկցող դահիճների խարազանի հարուածներին ներքև...»[1058]: Գեղեցիկ ու երիտասարդ կանայք խլեցվեցին և ուղարկվեցին հարեմներ՝ առողջ ու նորացված «թուրքեր» ծնելու, ձևավորվող ազգը մարդկայնացնելու, գեղեցիկ, հայավայել սերունդ ունենալու համար: Ամբողջ երկիրը վերածվել էր գերիների վաճառանոցների. «կը ծախուին կիներ, երիտասարդ աղջիկներ, տղայներ»[1059]:

«Արմենիա-ի» խմբագրակազմին հաջողվել էր ձեռք բերել ու հրապարակել նաև Խարբերդում ամերիկյան հյուպատոսի՝ 1915 թ. թիվ 11 պաշտոնական տեղեկագիրը, որի բովանդակությունից յուրաքանչյուր նորմալ մարդու երակներում արյունը կարող է սառչել: Տեղեկագրում, օրինակ՝ ասվում էր, որ երբ Էրզրումից ու Երզնկայից տեղահանվածները Խարբերդ հասան, նրանց «չոր խոտ տուին ուտելու

1056 Տեղահանուած հայերի տառապանքը աքսորի ճանապարհին վրայ, «Արմէնիա», թիվ 49, 1916:

1057 Նույն տեղում:

1058 Նույն տեղում:

1059 Տեղահանուած հայերի տառապանքը աքսորի ճանապարհին վրայ, «Արմէնիա», թիվ 49, 1916:

ինչպէս անասունների», իսկ մայրերն իրենց «տղայները կառաջարկէին առնել ուզողներին: Թիւրքերը իրենց բժիշկները ղրկեցին, երիտասարդ աղջիկների առողջական վիճակը քննելու և անոնցմէ ամենէն գեղեցիկները իրենց հարէմների համար ընտրելու»[1060]: Պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար հյուպատոսը ներկայացնում էր մի հարուստ ու կիրթ հայ ընտանիքի կրած անլուր տառապանքներն ու անդառնալի կորուստները՝ նշելով, որ ընտանիքի 25 անդամներից 11-ին ճանապարհին թուրքերը սպանել էին, և «արական սեռէն ողջ մնացածներու ամենէն տարիքոտը 8 տարեկան տղայ մ'էր: Ճանապարհին ամէն բան խլած էին անոնցմէ, նոյնիսկ մարմնի վրայէն հագած զգեստները, և երիտասարդ աղջիկներէ մին բոլորովին մերկ էր»[1061]: Սահմոկեցուցիչ մի դրվագ էլ հյուպատոսը ներկայացնում էր երիտասարդ մի հայուհու պատմածը վկայակոչելով: Խեղճ ու կրակ, տառապագին աչքերով սարսափահար այդ գեղեցկատես կնոջը մի քուրդ էր հալածել շարունակաբար, սակայն չբավարարվելով անօգնական կնոջ տառապանքները «վայելելու» հաճույքից՝ քուրդ առևանգիչը «իր աչքին առջև իր զաւակների փորը ճեղքեց...»[1062]: Շարունակելով սարսափների շարքը՝ տառապած կինը պատմել էր, թե ինչպես գետանցի ժամանակ «մայրերը ինքզինքնին հոսանքին մէջ կը նետեն իրենց զաւակների հետ մէկտեղ. ոմանք ալ, տառապանքէն խելագարած, կը խեղդեն իրենց զաւակները և երբ Քիւրտերը կը հասնին, կիները և դեռատի աղջիկներ անձնասպան կը լինին անպատուելէ ազատուելու համար»[1063]: Իսկ մայրերից խլված երեխաներին իբր գետն անվտանգ անցկացնելու համար «կը հանեն չուաններով միացած գերաններէ լաստերին վրայ, ապա կը կտրեն գե-

---

[1060] Տեղահանուած հայերի տառապանքը աքսորի ճանապարհին վրայ, «Արմէնիա», թիվ 49, 1916:
[1061] Նույն տեղում:
[1062] Նույն տեղում:
[1063] Տեղահանուած հայերի տառապանքը աքսորի ճանապարհին վրայ, «Արմէնիա», թիվ 49, 1916:

ռաններ իրար հետ կապող պարանները, լաստերը կը բացուին տղայների ոտքերին տակ... փոքրիկների պաղատագին ձայները որոնք օգնութիւն կը կանչեն, կը մարին կը խեղդուին... Զինայրները իրենց հրացանների ծայրով վերստին կը քշէն դէպի գետին խորը այն գերանները որոնք հոսանքը եզերք բերած էր և որոնց վրայ տակաւին պլլուած կը մնային մէկ քանի պզտիկ տղայներ...»[1064]:

Թերթի ներկայացմամբ ոչ պակաս տխուր ու գերլարված վիճակ էր ստեղծվել Վանում: Այստեղ թուրքական իշխանությունները դիմում էին ամեն տեսակ ստոր ու անօրինական քայլերի՝ հայերին տեղահանելու ու կոտորելու իրենց մտադրությունները «պատճառաբանելու և արդարացնելու» համար. «Ճավիտ փաշան եկեր պահանջեր է Վանի Հայերէն 6.000 ոսկի, 6.000 հրացան և 700 զինտրացու երիտասարդ, 3 օր պայմանաժամ տալով: Յետոյ Վռամեանին իրեն մօտ կանչեր է, Վռամեան սպաննուած է և ժողովուրդը գրգռուեր է: Թիւրք զօրքեր Վանի գիւղերին մէջ 5.6.000 Հայեր կոտորուած են, բազմաթիւ գիւղեր կրակի տրուած. բնականաբար Հայերի կողմէն ալ դիմադրութեան շարժումներ երևան կուգան որոնք կը տարածուին»[1065]:

Վանում հասունանում էր Արամ Մանուկյանի ընդհանուր և Արմենակ Եկարյանի ռազմական ղեկավարությամբ հայերի գոյակռիվների զարդապսակը հանդիսացող 1915թ. հերոսական ինքնապաշտպանությունը[1066], որը, ի դեպ (Մոսա լեռան գոյակռվի հետ) ամենաարդյունավետն ու հաղթականը եղավ. իրական ոչնչացումից փրկվեցին 150 հազար վասպուրականցի հայեր: Թերթը գրում էր. «Վանի Հայերը դիմադրութեան սկսեր են, նրանք յաջողեր են քաղաքն իրենց

1064 Նույն տեղում:

1065 Նույն տեղում:

1066 Մանրամասն տե՛ս «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Ե., 1991, Ա-Դ.ռ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թթ.», Ե., 1917, «Յուշէր Արմենակ Եկարեանի», Գահիրե, 1947, Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին», Ե., 2005, Մարգսյան Ս., Վանի հերոսամարտը, ԼՀԳ, թիվ 2, 2013 և այլն:

ձեռք անցունելով շարունակել դիմադրութիւնը, սպասելով ռուս զօրքերի օգնութեան հասնելուն»[1067]: Վկայակոչելով ֆրանսիական մի քանի պարբերականների՝ «Արմենիան» տեղեկացնում էր, որ շնորհիվ հերոսական գործողությունների, տոկունության և աննախադեպ միասնականության, հայերը փառավոր հաղթանակ տարան թվապես բացարձակորեն գերակշռող և նոր ու կատարյալ զենքերով զինված թուրքական կանոնավոր բանակի և մեծաքանակ թուրք ու քուրդ խուժանի դեմ: Շուտով ռուսական բանակի առաջապահ հայ կամավորական ջոկատները հաղթականորեն մտան Վան. «Հայ կամաւորները, որոնք գիրկընդխառնուեցան Վանի իրենց եղբայրներուն հետ և թերևս պիտի համբուրուին վաղը Մուշի և Սասունի իրենց արիւնակիցներուն հետ: Հայ ժողովուրդը մեծ ոգևորութեամբ ընդունեցին ռուս զօրքերի Վան մուտքը: Բնակիչները փողոցներին մէջ խռնուած էին զօրքերի անցնելիք ճանապարհին վրայ. կերգէին ռուսական ազգային երգը, եռանդագին կեցցէներ կաղաղակէին և ծաղիկներ կը նետէին: Աղ ու հաց մատուցուեցան սպայներին»[1068]:

Շարունակելով ժողովրդի աննկուն դիմակայության թեման՝ «Արմենիա»-ն գրում էր, որ «Ժողովուրդի ոյժն է որ կըմբոստանայ այժմ Հայաստանի մէջ, անկեանք կեանքի մը փէշերուն կպածկը շարժի ու կը շարժէ, կը զարնէ ու կարշաւէ Թիւրքին կամ Քիւրտին դէմ: Ան կը խարազանէ անտարբերները, կը ծիծաղի և կը հեգնէ՝ զինք անտեսել ուզող փիլիսոփայ յոռետեսները»[1069]:

«Արմենիա»-ի ցավաշատ տեղեկատվությունը գուժում էր նաև Տրապիզոնի հայության անմխիթար վիճակի մասին: Սանձազերծված պատերազմի արդյունքում ռազմանավերի ռմբահարումներից ամբողջովին ավերված քաղաքում, որը մինչև պատերազմը ուներ 55 հազար բնակիչ, որոնցից թուրքեր էին 25-հազարը և 15- հազարական

[1067] «Արմենիա», թիվ 49, 1916:
[1068] «Արմենիա», թիվ 49, 1916:
[1069] Եղիշ Թ., Ժողովուրդի ոյժը, «Արմենիա», թիվ 47, 1915:

հույներ ու հայեր[1070], «տիրում է սոսկալի կրիզիս, ժողովրդի ունևոր մասը փախել է, խանութները փակ են, տիրում է կատարեալ մեռելութիւն: Տրապիզոն-Էրզրում խճուղու վրայ թափուած են մեծ քանակութեամբ մարդկանց և ուղտերի դիակներ: Էրզրումում ձերբակալել են հայերի մեծ մասին, մեծ երկիւղ կայ կոտորածի»[1071]:

Այնուհետև դեպքերը զարգացել էին կայծակի արագությամբ: Ականատեսի վկայությամբ քաղաքից հեռանալուց առաջ թուրքերը «գլխովին կոտորել էին հայերը: Փրկւել են միայն 100-120 չետնիկներ, որ վարել են պարտիզանական կռիւ: Կոտորուել և խեղդուել են և շրջակայ գիւղերի հայերը»: Ընդհանուր առմամբ, «խստութիւնները, որ գործադրուել են հայերի վերաբերմամբ Տրապիզոնում, գերազանցում են այն բոլոր գազանութիւններին, որոնց ենթարկւել են հայերը միւս վայրերում»[1072]: Հայերին ոչնչացնելու գործընթացը թուրքերն իրականացրել են հետևյալ հերթականությամբ: Առաջին օրը ձերբակալել են երիտասարդ և ազդեցիկ հայերին, որոնց նստեցրել են «նաւակներ 100ական մարդ» և խեղդել են ծովում: Այնուհետև առանձնացրել են ջահել ու գեղեցիկ կանանց, տեղավորել են նրանց առանձին մի տան մեջ և «օֆիցերներին առաջարկել են նրանցից պատանդուհիներ ընտրել: Այնուհետև «սպաննել են և նրանց դիակները ձգել ծովը[1073]: Իսկ հրաշքով կենդանի մնացածներին հեծյալ պահակների ուղեկցությամբ տարել են Տրապիզոնից 25 վերստ հեռու գտնվող Ջևիզլիկ ավանը, որտեղ կանայք բռնաբարվել են ժանդարմների կողմից, և «հենց այստեղ էլ նրանց սպանել են, իսկ երեխաներին ուղղակի սփնների ծայրն են անցկացրել»[1074]: Տեղացի հույների վկայությամբ արյու-

---

[1070] Իշխ. Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին, «Արմենիա», թիվ 44, 1915:

[1071] Հայերը Թուրքիայի մէջ, «Արմենիա», թիվ 47, 1915:

[1072] Իշխ. Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին, «Արմենիա», թիվ 44, 1915:

[1073] Նույն տեղում:

[1074] Նույն տեղում:

նարբու հրոսակներն արյան այդ ծովում նույնիսկ զվարճացել են: Նրանք երեխաներին կանգնեցրել են շարքերով և սկսել են «հրաձգութեան վարժութիւն կատարել, ատրճանակներով խփելով անբաղդ երեխաների ճակատներին»[1075]:

Սկզբում թուրքերը խաբում և հանգստացնում էին հայերին՝ ասելով, որ նրանց հետ որևէ վատ բան չի լինելու, բայց երբ վստահ են եղել, որ ամբողջովին տիրապետում են իրավիճակին, սկսել են նրանցից խլել տղա երեխաներին, առողջներին «բաժանել թիւրք ընտանիքների միջև իսլամութեան դարձնելու», իսկ մնացած երեխաներին, որքան էլ «հրէշային է, գցել են կողոմների մէջ և ծովը ձգել»[1076]:

Որոշ ժամանակ անց ռուսական զորքի հետ քաղաք մտած Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկը հրամանատարության հրահանգով հատուկ զեկուցագիր ներկայացրեց, որը նույնությամբ հրապարակվեց «Արմենիա»-ում: Դրանից ահասարսուռ պատկերներ են հառնում: Ա. Մ. Արղության-Երկայնաբազուկը վկայում է, որ միայն տեղացի հույների երևան հանած լավագույն հատկությունների շնորհիվ փրկվել էին ընդամենը 50 երեխա, որոնք բոլորն էլ «հիւանդ տեսք ունին և սարսափով էին նայում ամեն մի օտարականի վրայ»: «Ես տեսայ 12 տարեկան մի դժբաղտ աղջկայ,- վկայում է զեկուցողը,- որը յղիացած էր իր բռնաբարողից: Մի օրիորդ հարուստ ընտանիքից, եւրոպական կրթութիւն ստացած, խօսում էր շատ լեզուներով. ան յանձնուել էր սպաներին անպատուութեան համար և ձեռքից ձեռք էր անցել: 12 տարեկան երեխան և այդ աղջիկը մօտ էին խելագարութեան, և մի քանի անգամ փորձել են ինքնասպանութիւն գործել»[1077]: Ամենաողբերգականը նաև այն էր, որ կենդանի մնացածները ևս հոգեբանորեն սպանված վիճակում էին. «կիսախելագար փոքրիկ աղջնակը անընդ-

---

[1075] Նույն տեղում:

[1076] Իշխ. Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին, «Արմէնիա», թիվ 44, 1915:

[1077] Նույն տեղում:

հատ կը կրկնէր, թէ երեխայ պիտի ծնի այն չարագործից, որը սպանել էր իր ծնողներին և խորտակել իր կեանքը»[1078]:

«Արմենիա»-ն, վկայակոչելով իշխան Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը, գրում էր, որ հոյն ազգաբնակչությունը և այլ հնարավորություն ունեցողներ, հաճոյքով էին վերցնում հայ երեխաներին: Այսպես՝ միայն հոյն մետրոպոլիտը «վերցրել էր 200 երեխայ, ամերիկական հիպատոսը-300»[1079]: Սկզբում թուրքերը չէին արգելում մինչև 10 տարեկաններին հովանավորելը, բայց հայկական ջարդերի բուռն շրջանում «իշխանությունը պահանջեց, որ երեխաներին յանձնեն կառավարական որբանոցը»[1080]: Այստեղ սկզբում կար որոշ խնամք, բայց «յետոյ երեխաները չքացան անհետ: 10-11 տարեկան աղջիկներին բաժանել են զանազան անձանց մէջ, իբրև հարճեր»[1081]: Այնուհետև թերթի տեղեկացմամբ երեխաներից մի քանիսը «փոկւած են տեղական պարսիկների ձեռքով»[1082]:

Զեկուցագրի հեղինակը հայտնում էր, որ հայերի կոտորածը «կատարւել է մի նախորոշւած ծրագրով, և որ այդ գործը ղեկավարել է թիւրք կառավարութիւնը, որը խստօրէն հալածել է նրանց, ովքեր որևէ օգնութիւն են հասցրել հայերին»[1083]: Տեղացի հոյները նաև հայտնել են, որ «ծովն է նետւած մօտ 800 հայ երեխայ», և որոշ հայեր ինքնասպանություն են գործել, երբ ժանդարմները եկել են տանելու նրանց ընտանիքի անդամներին, և որպես օրինակ նշում.«այդպիսիներից էր Խաչիկ Ալանեան (Վանցի), որը գնդակահարել է իր աղջկան և ինքնասպան է եղել. նոյնը ասում են Մինաս Թոփունջեանի մասին»[1084] և այլն:

1078 Նույն տեղում:

1079 Իշխ. Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին, «Արմէնիա», թիվ 44, 1915:

1080 Նույն տեղում:

1081 Նույն տեղում:

1082 Նույն տեղում:

1083 Նույն տեղում:

1084 Նույն տեղում:

Ինչ վերաբերում էր հայերի գույքերին, «Արմենիա»-ի նշված հրապարակումից տեղեկանում ենք, որ հայերին պատկանող 1000 տները «յարքունիս են գրաւած, թանկարժեք իրեղէնները ժողոված են մէկ տան մէջ, որը հետոյ թալանուեց և տարուեց թիւրքական տները»[1085]:

Մեկ այլ հրապարակման մեջ «Արմենիա»-ն, վկայակոչելով Փարիզում հրատարակվող «Մադէն» օրաթերթում հրապարակված տեղեկատվությունը, ներկայացնում էր այն տխուր իրողությունը, որ Տրապիզոնի հրաշքով փրկված «հարիւր Հայերը այս քաղաքի 15.000 Հայերէն մնացածներն են»[1086]:

Ավելի դաժան ու անմարդկային վերաբերմունքի արժանացան հատկապես այն բնակավայրերը, որոնք կայսրության գոյության գրեթե բոլոր ժամանակներում իրենց ազատատենչ ու կիսանկախ կարգավիճակով սուր ոսկորի նման խրվել-մնացել էին թուրքերի կոկորդում: Այդպիսի թեև պակասավոր, սակայն ինչ-որ չափով միշտ ազատություն էին վայելել Սասունն ու Զեյթունը, որոնց թուրքական իշխանությունները շարունակաբար վերաբերվում էին այն գիշատչի նման, որին շատ մոտիկ, շատ համեղ, սակայն անհասանելի որս կա: «Ներկայ ժամանակի հակահայ ընդհանուր շարժման սոսկալի վրիժառութեանց օրինակներուն մէջ Զէյթուն քաղաքի բնակչաց վրայ գործադրուածին նմանը գոյութիւն չէ ունեցած»,-գրում է «Արմենիա»-ն[1087]: Ավելի քան 20.000 բնակիչ ունեցող այս բնակավայրը «իրապէս երբէք Թրքաց կողմէ բոլորովին պարտուած չէր»: Լեռնային բարձր ու գրեթե անմատչելի դիրքը կիսանկախ կարգավիճակ էր ապահովել տեղի՝ մշտապես իրենց ազատության համար պայքարող բնակչությանը: Նրանց ծնկի բերելու նպատակով իշխանությունները կանոնավոր զորք ուղարկեցին՝ տեղի «երիտասարդները զինտրական ծառայու-

---

[1085] Իշխ. Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը Տրապիզոնի մասին, «Արմէնիա», թիվ 44, 1915:
[1086] Հայերի կոտորածներին առթով, «Արմէնիա», թիվ 23, 1916:
[1087] Յակոբեան Կ., Տառապեալ Հայաստան, «Արմէնիա», թիվ 4, 1915:

թեան հարկադրելու»: Տեղացիները, սակայն, «համակերպելու տեղ յարձակեցան թուրք զինուորներուն վրայ որոնցմէ 300ը սպաննեցին և այս կերպով իրենց ձեռք բերած յաւելեալ զէնքերով պատրաստուեցան որոշապէս դիմադրելու»[1088]: Դրանից հետո քաղաքի վրա «զօրաւոր զօրագունդ մը եկաւ ու այն ատեն Թուրքերը գործադրեցին տարագրելու ծայրայեղօրէն զանոնք և ցրուելու նորահնար դրութիւնը»[1089]: Չբավարարվելով՝ դրանով հայկական տարրին իսպառ արմատախիլ անելու մտադրությամբ (շրջակա լեռներում ու անտառներում թաքնված էին զգալի թվով բնաջնջումից մազապուրծ հայեր – Ս. Ս.) «Թրակիաէն գաղթած 20.000 թուրք տարուեցան Զէյթուն ուր բնակեցուցին այն տուներու մէջ որոնք դարերով հայ ընտանիքներու պատկանած էին»[1090]:

Ամփոփելով անցած՝ 1915 թվականը՝ «Արմենիա»-ն այն համարում էր զոկումի, մարդկության մեծագույն ողբերգության, «քաղաքակիրթ ու ասպետական» Եվրոպայի աննախադեպ անկման, աշխարհի ու մարդկության նախահոր՝ Նոյի հիշատակը պղծելու, հայի արյամբ խրախճանքներ կազմակերպելով, նրանց ինչքն ու տունը թալանելով ու յուրացնելով, կանանց պատիվը բռնաբարելով՝ մարդկային ցեղի իր արմատներին՝ վայրենությանը, վերադառնալու մղումների, «արիւնահեղութեան եւ քանդումի» տարի[1091]: Քանի որ, շարունակում է «Արմենիա»-ն մեկ այլ հրապարակման մեջ, «Դժոխքը և Թիւրքիա ոչ մէկ տարբերութիւն ունին իրարմէ, ինչ որ պատմութիւնը չէ գրած, ինչ որ մարդը չէ լսած ու տեսած, կը տեսնուի և կը լսուի հոն»[1092]: Թուրքերին համեմատելով ամենաարյունախում գիշատիչների հետ՝ թերթը գրում էր. «Վագրերը անշուշտ գութ պիտի ունենային այդ տանջուող և չարչարուող Հայերու հանդէպ, բայց թիւրք ամբոխը չունեցաւ: Հայ կինե-

---

1088 «Արմէնիա», թիվ 4, 1915:
1089 Նույն տեղում:
1090 «Արմէնիա», թիվ 4, 1915:
1091 Նոր տարի 1916, «Արմէնիա», թիվ 23, 1916:
1092 Ի՞նչ կանցնի կը դառնայ Թուրքիոյ մէջ, «Արմէնիա», թիվ 23, 1916:

ռու, տղաներու աղաղակները քարեր լացուցին, բայց Էնվէրի և Թալեաթի սիրտը չի շարժեցաւ»[1093]:

Յեղասպանության խնդիրները քննարկելիս «Արմենիա»-ն ցավով նշում էր, որ երբեմն գտնվում էին մարդիկ, որոնք հայերին էին մեղադրում իրենց կրած անլուր տառապանքների համար և այդ տեսակետը հաստատելու նպատակով վկայակոչում էին եղած ու չեղած, իրական ու արհեստածին մեղքեր: Այդ բնույթի հրապարակում էր «Journal» թերթի թղթակցի՝ Էրզրումից ուղարկվածը, որը նույնությամբ արտատպված է «Արմենիա»-ում: Թղթակցին զարմացնում էր այն փաստը, որ հայերը «երբէք չեն կրցած միաբանիլ և կազմակերպուիլ, ինքզինքնին պաշտպանելու դահիճներին դէմ, այլ և վերջնականապէս թոթափելու համար թիւրքական լուծը»[1094]: Շարունակելով թեման՝ հոդվածագիրը հարցնում էր. «ինչո՞ւ Հայերը չեն փորձած երբէք, ընդհանուր ապստամբութեամբ մը, վերստին ձեռք բերել այն ազատութիւնը զոր կը յայտարարեն իբրև գերագոյն բարիք մը»[1095], ապա փոքրիկ էքսկուրս կատարելով՝ փորձում է ինքն էլ որոնել ու գտնել պատասխանը: Նա գրում էր, որ հայերի լեռնաբնակ հատվածը «ճնշողին դէմ պայքարը չեն դադրեցուցած դարերէ ի վեր: Միշտ զինուած են, նոյն իսկ իրենց արտերը մշակելու ատեն, ինքզինքնին պաշտպանելու համար» և անդադար «դիւցազնական կերպով կը կռուին, թիւրք վարչութեան կեղեքումներին և աւազակների անդադար արշաւանքներին դէմ»[1096]: Նույնը, թղթակցի կարծիքով, չի կարելի ասել Հայաստանի մեծ մասի համար, քանի որ հայերն ապրում էին հաղորդակցության ճանապարհներից զուրկ «ընդարձակ երկիրների վրայ, ցանցառ բնակչութեամբ վրանաբնակ և աւազակ թիւրքե-

---

1093 Ի՞նչ կանցնի կը դառնայ Թուրքիոյ մէջ, «Արմէնիա», թիվ 23, 1916:

1094 Հայաստանի կոտորածները ղիմադրութիւն ջարդարարներին, «Արմենիա», թիվ 4, 1916:

1095 Նույն տեղում:

1096 «Արմենիա», թիվ 4, 1916:

րի և քիւրտերի հետ, որոնք բնական թշնամիներն են նստակեաց և աշխատասէր Հային»[1097]:

Կոտորածների ժամանակ հայերը փորձեցին դիմադրություն կազմակերպել «ամենուրէք ուր այդ կարելի էր», սակայն Օսմանյան կայսրության պետական համակարգն իր հզոր մամլիչով կարողանում էր հերթով արյան մեջ խեղդել իրարից անջատ, վատ զինված, հաճախ էլ ոչ ճիշտ կազմակերպված ինքնապաշտպանական գոյամարտերը[1098]. «Այսպէս պատահեցաւ Մարզուանի մէջ ուր դիմադրութիւնը խիստ տկար եղաւ. Շապին Գարահիսարի մէջ ուր թէև աւելի ուժեղ եղաւ, սակայն շուտով ճնշուեցաւ այն ոյժերէն զորոնք տեղական իշխանութիւնը իր ձեռքի տակ ունէր, և զինուած թիւրք խուժանէն. Խարբերդի մէջ ուր սարսափելի տեսարաններ եղան»[1099]: Հայերի աննկուն ոգին շարունակում էր դիմակայել նույնիսկ ամենաանհավանական իրավիճակներում, ընդգծում էր հոդվածագիրը և ներկայացնում ահազդու մի դրվագ: Նա փաստում է, որ ամենասկզբում մտավորականներին ձերբակալեցին և խմբերով գիշերները դուրս էին հանում քաղաքից և կոտորում: Դրանցից մի խումբ «տառապանքի վերջին գիշերը ոտքի ելաւ և կրակի տուեց իրենց բանտը, նախընտրելով մեռնիլ բոցերի մէջ քան թէ կոտորուիլ»[1100] և բանտը այրելով՝ գոնե վնաս պատճառել արյունախում ոսոխին: Կիլիկիացիները նույնպես դիմադրություն կազմակերպեցին, վկայում էր նույն հոդվածագիրը, սակայն ուժերը խիստ անհավասար էին և «Զոք Մարզուանի անվեհեր ժողովուրդը չկրցաւ ինքզինքը պաշտպանել և ստիպվեցաւ գաղ-

---

1097 Նույն տեղում:

1098 Այս իմաստով դրվատելի բացառություն եղան, ցավոք, միայն Վանի և Մուսա լեռան ինքնապաշտ-պանական կռիվները:

1099 Հայաստանի կոտորածները դիմադրութիւն ջարդարարներին, «Արմէնիա», թիվ 4, 1916:

1100 Հայաստանի կոտորածները դիմադրութիւն ջարդարարներին, «Արմէնիա», թիվ 4, 1916:

թել»[1101]: Զեյթունն էլ հերոսաբար դիմադրեց, բայց նա էլ ի վերջո ընկավ, իսկ թուրքերը ոչ միայն տիրացան հայերի ողջ ունեցվածքին, այլև «քաղաքին անունն անգամ փոխուելով, «Սիլէյմանիէ» կոչեցան», սակայն բարձրանալով լեռները՝ հայերը կարողացան զգալի թվով կյանքեր պահպանել:

Ամփոփելով թղթակիցը միանգամայն իրավացիորեն եզրահանգում էր. «Ընդհանրապէս, ապստամբած լեռնականները աւելի քիչ տառապած են քան հնազանդած ժողովուրդը»[1102]:

«Արմենիա»-ի հետագա տարիներին լույս տեսած համարներում ևս անդրադարձ-ներ կան հայոց ցեղասպանությանը: Դրանց բնորոշ է մի առանձնահատկություն՝ լալկան, հիմնականում օգնություն հայցող, աշխարհի հզորների գութն ու ուշադրությունն ակնկալող հոդվածներին աստիճանաբար փոխարինելու էին գալիս կորստի ցավի ամբողջական զգացումի ողբերգությունը և վրեժի, մեղավորներին պատժելու կոչ-հորդորներով հարուստ հրապարակումները. «Անմեղութեան աստուածը անհամար մատաղներ խլեց մենէ ու վրէժի աստուածը չուզեր յետ մնալ անկէ»,-թեման յուրակերպ ամփոփում էր «Արմենիա»-ն:

Մ. Փորթուգալյանի հավատարիմ գաղափարակիցներից և «Արմենիա»-ի աներեր նվիրյալ Թ. Եղիշեն, տեղեկանալով մայր հայրենիքում տեղի ունեցող եղեռնագործու-թյանը՝ մեծ ցավով գրում էր. «Արիւնի իրականութիւնն է որ երագավազ յառաջ կընթանայ մեր արիւնի հայրենիքէն: ...Արիւնակից սրտերը կը փղձկին տառապանքի և վրէժի ցնցումով մը»[1103]: Բայց, միաժամանակ չկորցնելով հույսն ու հոգու արիությունը, քննադատորեն ավելացնում էր, որ միայն հուսահատ հոռետեսներն են աղմկում. «Ա՛լ լմնցանք, այլևս հայ չը պիտի

[1101] Նույն տեղում:
[1102] Նույն տեղում:
[1103] «Արմէնիա», թիվ 44, 1915:

մնայ»[1104]: Շեշտելով հայության կենսունակությունն ու հարատևելու անբացատրելի կարողությունը՝ հոդվածագիրը մտքի զարմանալի հզորությամբ մարտահրավեր էր նետում հայ ժողովրդի բոլոր թշնամիներին և նույնիսկ եղեռնի ծայրահեղ ծանր տարում կարողանում անարգանքի սյունին գամել բոլոր հոռետեսներին՝ նրանց համարելով թուլամորթներ և ժամանակից շուտ հայ ժողովրդին հուղարկավորողներ: Ինչի± համար է այս թուլամորթությունը, հարցնում էր հոդվածագիրը, ապա շարունակում, «մի±թէ հայկական ջարդերու առաջինն է այս,միթէ՞ այսօրի հայութիւնը անցեալի արիւններէն չէ սերած վաղի հայութիւնը չը կրնար ծլիլ»[1105]: Վերջապես կյանքը բաղկացած չէ միայն ուրախություններից, այլ իր մեջ միաժամանակ ու մշտապես բովանդակում է երկու հակասությունները, ավելի պատկերավոր՝ «արցունքը քոյրն է ժպիտին»: Այնպես որ երբեք պետք չէ հույսը կորցնել, եզրակացնում էր Թ. Եղիշեն, առավել ևս, որ «ոչ միայն ոչխարներու արիւնն է որ կը հոսի Հայաստանի ձորերէն, այլ և առիւններու վրիժագոչ արիւնը: Կը լսենք հայկական կոտորածները, կը լսենք և ըմբոստ հայերու վրէժը»[1106]:

Թ. Եղիշեն չի ընդունում նաև այն պնդումները, թե հայերն այլևս, բացի հառաչելուց և իրենց անդարմանելի ցավերը սգալուց, ոչինչ չեն կարող անել: Ընդհակառակը, համոզված հայտարարում էր հոդվածագիրը, հենց այդ պահին է, որ «Հայերէն կըսպասուի գործ և կը պահանջէ շատ բան հատկապէս արտասահմանի հայերէն»[1107]: Այդ գործում անփոխարինելի դերակատարությամբ առանձնացնելով արևելահայու-թյանը՝ հեղինակը գոհունակությամբ շեշտում էր, որ Կովկասից եկող տեղեկությունները ոգևորիչ են ու հույս ներշնչող. «հոն նոր թափով ոյժ կը տրուի հայ կամաւոր գունդերու բազմանալուն,

---

[1104] Նույն տեղում:
[1105] Նույն տեղում:
[1106] «Արմէնիա», թիվ 44, 1915:
[1107] Նույն տեղում:

նկատելով որ ոչ մէկ արտաքին դիւանագիտական միջոց կրնայ արգիլել Թիւրքերը հազարաւոր հայերու անմեղ արիւնի մեղքին մէջ մտնելէ»[1108]: Որպեսզի իր խոսքն ավելի համոզիչ դարձնի, հոդվածագիրը վկայակոչում էր այն հայտնի իրողությունը, որ «Անզէն հայերը կը ջարդուին, իսկ ըմբոստ Վանն ու Զէյթունը կը դիմադրեն ու հայ կամաւոր գունդերը կը յառաջանան», և եզրակացնում, որ անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցներով սատարել կամավորական շարժմանը, քանի որ տվյալ պահին այն միակ իրական ուժն էր, որ կկարողանար վերջնական կործանումից փրկել թուրքական գեհենից հրաշքով մազապուրծ հայության բեկորներին:

Ամփոփելով նշենք, որ պատմագիտական, իրավաբանական, մշակութային, հոգեբանական և այլ տեսանկյուններից գրվել են ուսումնասիրություններ, որոնց թվարկումը մեծաքանակ էջեր կզբաղեցնի: Միայն ավելացնենք, որ այդ գործում որպես սարսափելի ոճրագործությունների ժամանակակից մամուլի ներկայացուցիչ՝ զգալի թվով փաստեր, ականատեսների վկայություններ, միջազգային կառույցների ու եվրոպական պարբերականների դրսևորած վերաբերմունքի մասին վկայող նյութեր մեզ են հասել «Արմենիա» պարբերականի շնորհիվ: Նշենք նաև, որ խնդրի վերաբերյալ «Արմենիա»-ի տեսակետներն ավելի ամբողջական կլինեին 1919 թ. երիտթուրքերի դատավարությանը, Փարիզի և Լոզանի կոնֆերանսներին հայկական երկու պատվիրակությունների գործունեությանը և տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձություններին «Արմենիա»-ի տված գնահատականներին ծանոթ լինելու պարագայում, որը հնարավոր կլիներ թերթի՝ 1917-1923 թթ. լույս տեսած բոլոր համարներն ուսումնասիրելու դեպքում: Սակայն, նախ՝ այդ տարիներին, հասկանալի պատճառներով, թերթը լույս է տեսել անկանոն պարբերականությամբ, հետո էլ դրանց մեծ մասը չի պահպանվել կամ մեզ չհաջողվեց

[1108] Նույն տեղում:

գտնել: Թերթի ընդհանուր մոտեցումներից կարելի է, իհարկե, որոշակի եզրակացություններ կատարել, սակայն դրանք կլինեն սոսկ ենթադրություններ:

5.5. Հայ կամավորական շարժման արձագանքները «Արմենիա»-ում

Սկսված Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Գերմանիայի դրդմամբ 1914թ. հոկտեմբերի 28-ին մտավ նաև Օսմանյան կայսրությունը: Երիտթուրքերը, որսալով նպաստավոր պահը, ձեռնամուխ եղան լուծելու «հայկական», «ասորական» և «հունական» հարցերը: Պատերազմի նախօրյակին արևմտահայության համար ստեղծվել էր աննախադեպ լարված իրավիճակ: Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության բոլոր հայաշատ վայրերում օրըստօրե տեսանելի էր դառնում մոտալուտ կոտորածների վտանգը: Հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը հասկացել էին, որ վստահելով երիտթուրքերին՝ անդառնալիորեն սխալվել էին: Անչափ ուշացած՝ նրանք փորձում էին շտկել իրավիճակը, համախմբել ժողովրդին, աշխատել հնարավորինս նվազ կորուստներով դուրս գալ ստեղծված իրավիճակից: Կազմակերպվելու, զենք-զինամթերք հայթհայթելու, զինավարժվելու և սեփական ուժերով արհավիրքը դիմագրավելու հարմար պահը բաց թողած հայերը շատ ավելի հույսեր էին կապում Անտանտի երկրների, հատկապես Ռուսաստանի հետ, որոնք, հայերի կարծիքով, զորավիգ կլինեին իրենց, կբռնեին ոսոխի ձեռքը և կկանխեին սարսափելին՝ ակնկալվող ցեղասպանությունը: Իրականում աշխարհի վերաբաժանման գործընթացում իրենց սպասվելիք շահույթներով մտահոգ մեծ տերությունները, ըստ էության, մոռացության մատնեցին հայերին և նրանց վիճակված ճակատագիրը:

Գոյության բոլոր տարիներին հայ ժողովրդի ապագան իր գլխավոր նպատակը համարող «Արմենիա» պարբերականը, բնականա-

բար, չէր կարող անտարբեր մնալ այդ գործընթացների նկատմամբ և հաճախակի անդրադառնում էր պատերազմական թեմային: Ընդհանուր առմամբ նախապատերազմական շրջանում թերթը կտրականապես մերժում էր պատերազմը՝ որպես հարցեր լուծելու լավագույն տարբերակ: Ավելին, հաճախակի պատմական էքսկուրսներ կատարելով՝ թերթի հոդվածագիրները ցույց էին տալիս և ապացուցում, որ պատերազմը եթե որևէ մի կողմին հաղթանակ էլ է պարգևում, ապա նույնիսկ հաղթող կողմը զերծ չի մնում մեծաքանակ զոհերից և կորուստներից:

Օսմանյան կայսրության մասնակցությունը պատերազմին, որին դեմ էր երկրի ամբողջ բնակչությունը, «Արմենիա»-ն արկածախնդիր և ինքնակործանարար քայլ էր համարում. «Թուրքիոյ մասնակցութիւնը ինքնասպանութիւն մ'է և քաղաքական մեծ ոճիր մը, որովհետև ան կատարուած է ոչ միայն Թուրքիոյ հպատակ ժողովուրդներուն, այլ և թուրք ամբոխի մեծ մասի կամքին հակառակ»[1109]: Իսկ արևմտահայերի համար այն ավելի քան վտանգավոր էր, քանի որ պատերազմին կրոնական երանգ հաղորդած իշխանությունները նախ և առաջ սպառնում էին անկազմակերպ, ցանուցիր հայերին, որոնց գոյքերը բռնագրավված էին, իսկ «ծաղիկ երիտասարդութիւնը իր ճիրաններուն մէջ էր»[1110]: «Վճռական ժամ» հրապարակման մեջ Գ. Հովնանյան հոդվածագիրը ճգնաժամային և սպառնալից իրավիճակում հայտնված հայությանը զգոնության կոչ էր անում. «Վայրկենին պահանջը հասկնալ, վտանգին մեծութիւնը ըմբռնել, ազգային բոլոր տրամադրելի ուժերը համադրել հաւաքել և առնական ժէսթով մը դէմ կենալ. ահա ներկայի հրամայականը»[1111]: Այնուհետև, հեղինակը վկայակոչելով հայոց պատմության հերոսական դրվագները, ցույց էր տալիս, որ վտանգալեցուն ժամանակներում հայերը գրեթե միշտ կա-

---

[1109] «Արմենիա», թիվ 20, 1914:
[1110] Նույն տեղում:
[1111] Նույն տեղում:

ողացել են համախմբվել, դիմագրավել նույնիսկ ամենազորեղ թշնամուն: Նրա կարծիքով նմանատիպ իրավիճակ առկա էր նաև պատերազմի նախօրյակին և «ամենէն պատեհ վայրկեանն է գործնապէս ապացուցանելու որ Հայը իբրև ազատ ազգ ապրելու արժանիքը ունի»[1112]: Միևնույն ժամանակ, ընդգծելով պահի կործանարար լինելու հանգամանքը, հոդվածագիրը հայտարարում էր, որ այս անգամ հայության գոյության հարցն էր «մէջտեղ դրուած», և ով այդ պահին «քաշուած չեզոք կը մնայ, հայ ըլլալէ կը դադրի»[1113]: Այս մռայլ ու խիստ վտանգավոր իրավիճակում անգամ հոդվածագիրը, չկորցնելով հոգու արիությունը, կարողանում էր լուսավոր շող նկատել, ուրախալի և հոաադրիչ անվանելով այն՝ որ հայկական բոլոր կուսակցությունները «միացած, ձեռքձեռքի, ազգային պահանջներուն ընդառաջ կերթան»[1114], ինչն այնքան հաճախ չէր եղել: Այդ համախմբման արդյունքում էր, որ Թիֆլիսում ստեղծվեց «Հայկական Կեդր. Կոմիտէ», որը հայության ճակատագիրը լավագույնս տնօրինելու առումով վստահության հույսեր էր ներշնչում:

Պատերազմին նվիրված մեկ այլ՝ «Եփրոպիոյ պատերազմը, հայկական խնդիրը եւ Թուրքիոյ ըրած ընտրութիւնը» ծավալուն հոդվածաշարում լոնդոնաբնակ հայտնի մտավորական Կ. Հակոբյանը, քննարկելով Առաջին աշխարհամարտին առնչվող խնդիրները, մասնավորապես Հայկական հարցն ու նրա լուծման տարբերակները, գրում էր, որ «յետադէմ և խախուտ Թուրքիան մանկանց խաղալիք դարձուց հայկական բարենորոգմանց խնդիրը» և իր անհեռատես ու քայքայիչ արարքներով ապշեցրեց բոլոր նրանց, ովքեր կարծում էին, թե այդ երկրում դեռ կարող են գտնվել արդարադատ և շրջահայաց մարդիկ, ովքեր «հայրենասիրութիւնը եսասիրութենէ և փտած մոլե-

---

[1112] «Արմէնիա», թիվ 20, 1914:
[1113] Նույն տեղում:
[1114] «Արմէնիա», թիվ 20, 1914:

ռանդութենէ վեր կը դասեն»[1115]: Ներկայացնելով Թուրքիայի երկդիմի քաղաքականությունը՝ հոդվածագիրը պարզաբանում էր, որ այն նույնիսկ մի քանի անգամ մահամերձ վիճակից իրեն փրկած Անգլիային հեշտությամբ դավաճանեց, էլ ուր մնաց հայերին ու նրանց շահերին չդավաճաներ:

Ընդգրկվելով պատերազմի մեջ՝ Օսմանյան կայսրությունը «Գերմանիոյ կատուի մատն ու գործիքը ըլլալը յայտնեց»[1116]: Հայ ժողովրդի համար ստեղծվեց աննախադեպ վտանգավոր իրավիճակ, երբ թուրքերը, անմարդկային և ամենաստոր միջոցներով ու ձևերով գերազանցելով բոլոր վատաբնույթ կանխատեսումները գերմանացիների հովանավորությամբ և քրդերի ու չերքեզների օգնությամբ իրականացրին արևմտահայության ցեղասպանությունը՝ այն զուգակցելով հայրենազրկմանը: Հասկանալով, որ այլևս ոչինչ չէր մնում անելու, հայ ժողովրդի մնացյալ բեկորները կարճ ժամանակում կարողացան ուշքի գալ, լարել բոլոր ուժերը և դուրս գալ ցեղասպան Թուրքիայի դեմ ազատագրական պայքարի, որն այդ ժամանակաշրջանում արտահայտվեց կամավորական շարժման տեսքով:

Թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր հերոսական պայքարի անբաժան մասը կազմող կամավորական շարժումների ուսումնասիրությունը հայոց պատմության կարևոր հիմնախնդիրներից է: Այդ մասին կուտակվել են մեծ թվով արխիվային վավերագրեր[1117], հրատարակվել են փաստաթղթերի ժողովածուներ, ժամանակակիցների թողած հուշագրություններ[1118], այդ թվում նաև օ-

---

[1115] «Արմենիա», թիվ 20, 1914:

[1116] Նույն տեղում:

[1117] ՀԱԱ, ֆ 121:

[1118] Տե՛ս Ա. Խատիսյանը «Քաղաքապետի Մը Յիշատակները», Ռուբենը՝ «Հայ հեղափոխականի մը հիշատակները», հ. 7, Գ. Չալխուշյանը՝ «Կարմիր Գիրքը» հուշագրություններում, ինչպես նաև Անդրանիկի, Սեպուհի, Եկարյան և շատ ուրիշ գործիչներ իրենց թողած հուշերում:

տարալեզու[1119]: Կամավորական շարժման մասին գրվել են նաև մի շարք պատմագիտական աշխատություններ Սփյուռքում[1120] և հայրենիքում[1121]:

Ընդգծենք, որ կամավորական շարժման պատմության մանրամասն քննարկումը տողերիս հեղինակի հիմնական նպատակը չէ: Միայն նշենք, որ հայ կամավորական շարժումն ինքնաբուխ էր, ազատագրական պայքարի կարևոր դրսևորումներից ու ժողովրդի հոգուց ելած պոռթկում՝ դեպի բաղձալի ազատությանը հասնելու հերթական անհագ ձգտման արգասիք: Ու թեև այն արևմտահայության անվտանգությունն ապահովելու տեսանկյունից ամենևին արդյունավետ մարտավարություն չէր, սակայն սկիզբ առավ Այսրկովկասում՝ արևելահայության շրջանում և գոյության երկու տարիների ընթացքում իր հորձանուտի մեջ առավ աշխարհասփյուռ ամբողջ հայությանը: Հարկ է նաև չանտեսել այդ շարժման պատմական նշանակությունը, որը սկզբնավորեց հայկական ազգային ռազմական ուժի վերաստեղծու-

---

[1119] Poidebard Antoine, «Le rlemilitaire des Armenienssur le front du Caucaseapres la defection de l'armeerusse (decembre 1917-novembre 1918)», Paris, 1920. «L'histoire du Caucase pendant et depuis la guerre; notes d'un temoin», Paris, 1922 և այլն:

[1120] Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, Պէյրութ, 1958, Կեանքի ուղիներով, հ. Գ., Պէյրութ, 1963, Հ. Տասնապետեան, Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ծէ Ընդհանուր ժողով (1890-1924), Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, Բոստոն, 1927 և այլն:

[1121] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Ե., 1981, Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Ե., 1964, Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Ե., 1965, Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Ե., 1969, Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, Հարությունյան Ա., Կովկասյան ճակատը, 1914-1918 թթ., Ե., 1971, Նազարյան Ա., Հայ կամավորական շարժումը 1914–1916 թվականներին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Ե., 2011, Կարապետյան Մ., Հայերի մասնակցությունը Առաջին աշխարհամարտին կովկասյան ճակատում և կամավորական շարժումը. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 5, 2002, էջ 33-42, Հայկական կամավորական խմբերը եւ ազգային գումարտակները Կովկասեան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Ե., 2011, Ներսիսյան Ա., Ռուբէն, Ե., 2007, նույնի՝ Առաջին աշխարհամարտում հայ կամավորական շարժման սկզբնավորման պատմության դասավանդման հայեցակարգային հիմքերը, «Ակունք» ժողովածու, թիվ 1, 2011, էջ 104-109 և այլն:

մը, հետևողական ու շարունակական ջանքերի արդյունքում վերաճեց ազգային կանոնավոր բանակի: Առավելապես նրա շնորհիվ էր, որ աշխարհամարտի ավարտին վերականգնվեց հայկական անկախ պետականությունը:

Միաժամանակ հայկական հասարակական-քաղաքական շրջանները, հաղթահարելով տարատեսակ դժվարություններ, Այսրկովկասում ձեռնամուխ եղան կամավորական ջոկատների ստեղծմանը, գործընթաց, որին ձգտում էր որևէ կերպ իր մասնակցությունը բերել նաև աշխարհասփյուռ հայությունը: Կամավորական ջոկատների կազմակերպումը նպատակ ուներ օգտագործելու հայության ստեղծած այդ ռազմական ջոկատները և ռուսական բանակների օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստա-նը: Առավել ևս, որ Ռուսաստանի շահերը Մերձավոր Արևելքում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում տվյալ պահին համընկնում էին հայ ժողովրդի ազատաբուղձ ձգտումներին: Ի դեպ, հայերից բացի, կամավորական ջոկատներ էին կազմավորում նաև ասորիները, հույները, վրացիները և այլ ժողովուրդներ:

Կամավորական ջոկատները կազմակերպող՝ Թիֆլիսում գործող Հայկական ազգային բյուրոյի՝ Արևմտյան Հայաստանը թուրքական բռնատիրությունից ազատագրելու կոչը լայն արձագանք գտավ աշխարհի բոլոր հայաբնակ շրջաններում: Կամավորներ էին գալիս շատ երկրներից, նույնիսկ հեռավոր ԱՄՆ-ից: Միաժամանակ հայությունը բավականին դրամ հանգանակեց ջոկատների հանդերձավորման և այլ կարիքներ հոգալու համար:

Հայ ազգային բոլոր կուսակցությունները ողջունեցին կամավորական շարժումը և իրենց անդամներից շատերին ուղարկեցին համալրելու կամավորական խմբերը: Այդ իրադարձություններին արձագանքեցին նաև աշխարհի տարբեր անկյուններում լույս տեսնող բազմաթիվ պարբերականներ, որոնց թվում առաջիններից մեկը «Արմենիա»-ն էր: Թերթը հանդես եկավ բոլոր հնարավոր միջոցներով կա-

մավորական շարժմանը սատարելու գաղութահայությանն ուղղված կոչով:

«Մշակը», «Հորիզոնը», «Кавказское слово», «Наши дни» և շատ այլ պարբերականներ ևս կոչ 1ին անում հայերին օգնել ռուսական բանակին: Կամավորական շարժումը լայն արձագանք գտավ հատկապես հայ երիտասարդության շրջանում:

Միանգամայն օրինաչափ էր, որ հայ ժողովրդի իղձերի ու երազանքների թարգման «Արմենիա»-ն անմիջապես արձագանքեց հայ կամավորական շարժմանը և արեց հնարավորը՝ իր համեստ նպաստն այդ գործին բերելու համար: Նախ՝ իբրև դիտորդ, այնուհետև կազմակերպիչներին քաջալերող և նյութական հանգանակության գործընթացներին անմիջական մասնակից «Արմենիա»-ն բազմիցս անդրադարձավ կամավորական շարժմանը: Թերթի խմբագրակազմը, ոգևորելով շատերին, ինքը ևս ոգևորվելով, մեծաքանակ հրապարակումներում քննարկում էր շարժման հետ կապված տարաբնույթ հարցեր: Նրանք ենթադրում էին, որ կամավորական շարժման միջոցով հնարավոր կլինի հասնել հայ ժողովրդի ինքնավարության և նրա համար ստեղծել պատշաճ պայմաններում ապրելու հնարավորություններ, ուստի կոչ էին անում համայն հայությանը բոլոր միջոցներով սատարել շարժմանը:

Նախ՝ թերթում տպագրվում էին տարբեր վայրերից եկած կամավորական շարժմանը նպաստող լուրեր: Օրինակ՝ «Ռուսերթիւրք պատերազմը եւ հայերը» ընդհանուր վերնագրի ներքո տեղ են գտել լուրեր Ռուսաստանից. «Օտէսայի Հայերը խնդրած լինելով տեղական կառավարութենէն որ հայ կամաւորներ ծրիապէս ճամբորդեն շոգեկառքի գնացքներով Կովկաս երթալու համար, Օտէսայի նահանգապետը ընդունած է Հայերի խնդրանքը որով հայ կամաւորներ ծրիապէս կրնան ճամբորդել այժմ»[1122]: Տպագրվում էին նաև լուրեր Աշխա-

[1122] «Արմէնիա», թիվ 19, 1914:

բադից՝ հայկական նոր կամավորական խմբեր կազմելու մասին, Կովկասյան ռազմաճակատի տարբեր հատվածներից՝ Կաղզվանից, Սարիղամիշից, Բերկրիից, Թոփրագ կալեից, Իգդիրից, Վանից և այն բոլոր վայրերից, որտեղ ցուցաբերելով քաջության բացառիկ օրինակներ՝ կռվում էին հայ կամավորները և այլն:

«Ցոյց տանք թէ հայ ենք եւ կը զգանք» խմբագրականում, ներկայացնելով ռազմաճակատում հայ մարտիկների հերոսական մաքառումները և տեսնելով, որ «Ռուսիաբնակ մեր հայրենակիցներ մեծ ոգևորութեամբ և անձնուիրութեամբ կաշխատին Թիւրքահայերի ազատութեան սուրբ գործին, իրենց գանձ ու կեանք նուիրելով», որ «17 տարեկան Հայ աղջիկներ անգամ ոտքի ելեր և տղամարդի զգեստներ հագած կուզեն երթալ կռուիլ Թիւրքահայաստանի ազատութեան Ս. Գործին համար»[1123], «Արմենիա»-ն հայտնում էր իր ուրախությունը: Սակայն միևնույն ժամանակ, չէր թաքցնում իր կսկիծը՝ «երբ կը դիտենք մեր չորս կողմ և չենք տեսներ տակաւին պէտք եղածին պէս շարժում մը արտասահմանի հայութեան մէջ»[1124]: Ափսոսանք հայտնելով այդ կապակցությամբ՝ թերթը՝ որպես աշխուժացման նշույլ ու հուսաբեր սկիզբ, արձանագրում է. «Այսօր բաղդ կունենանք Արմէնիաի մէջ հրատարակելու Կովկասի Հայ Կամաւորներին նպաստելու համար Մասնաժողովի մը կազմութիւնը և այդ նպատակով անոր ուղղած կոչը ընդհանուր Հայութեան»[1125] և հույս հայտնում, որ շարժումը կդառնա վարակիչ ու արձագանք կգտնի բոլոր հայաշատ օջախներում: Թերթի կարծիքով հայ ժողովրդի ազատության և Հայկական հարցի լուծման համար ստեղծվել էր ամենահարմար պահը, քանի որ Ռուսաստանն ու Անգլիան, որոնց հակասությունները միշտ խանգարում էին դրան, դաշնակիցներ են դարձել և սերտ համագործակցում են, ուստի միանգամայն իրատեսական էր, որ նրանք կարող էին

[1123] «Արմէնիա», թիվ 20, 1914:
[1124] Նույն տեղում:
[1125] Նույն տեղում:

«հայասէր» Իտալիայի հետ մեկտեղ համաձայնության հանգել «Թիւրքիաի մէջ ազատ ու ինքնավար Հայաստանի մը կազմակերպուելուն՝ մեծն Ռուսիաի հովանատրութեան տակ»[1126]: Այս պայմաններում անհրաժեշտ էր, որ աշխարհի ցանկացած անկյունում գտնվող յուրաքանչյուր հայ օգնի կամավորական շարժմանը ինչով կարողանա: Ըստ թերթի՝ եթե շատերն իրենց կյանքն են նվիրում ազատության սուրբ գործին, արդյո՞ք արտասահմանում բնակվող հայերը «գէթ իրենց մի քանի հազար ֆրանգներ չպիտի փոխացունեն այդ տաքսիրտ երիտասարդների մարմինն ալ տաք պահող հագուստներ տրուելու և զանոնք զինտրելու համար...»[1127]: Թող բոլոր հայերն իրենց պարտքը համարեն և օգնեն ինչով կարող են, գրում է հոդվածագիրը և հայտարարում, որ տվյալ պահին «ամէնքի նշանաբանը պիտի լինի ՀԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅԻՆ»[1128]:

Շարունակելով նույն ոգով՝ «Արմենիա»-ի գլխավոր աշխատակիցներից Թ. Եղիշեն «Հայ խիղճը Եւրոպիաի մէջ» հոդվածում ներկայացնում էր այն տխուր իրողությունը, որ Հայաստանը վերածվել էր դժոխքի «ուր իրենց անզէն եղբայրները կը ջարդուին, տառապանքի մայրերը կաղերսեն և անմեղ քոյրերը իրենց կոյս պատիւներէն կը լլկուին մարդակերպ գազաններու ձեռքով»[1129]: Հեղինակը զարգացնում էր այն տեսակետը, որ միանգամայն ճիշտ են բոլոր նրանք, ովքեր, ամեն ինչ թողած, նետվում էին մարտադաշտ՝ անարգ թշնամուն պատժելու և նրանից վրեժ լուծելու համար, քանի որ «հայ սրտերն է որ այդ զէնքերը կանգուն պիտի պահեն մինչև ազատութեան օրը և անկէ վերջ ալ»[1130]: Եթե Կովկասի մեջ նույնիսկ հայ աղջիկները «կը լքեն համալսարանը և կերթան գթութեան քոյրերու սպիտակ հա-

---

1126 Նույն տեղում:
1127 «Արմենիա», թիվ 20, 1914:
1128 Նույն տեղում:
1129 «Արմենիա», թիվ 24, 1915:
1130 Նույն տեղում:

գուստներուն մէջ իրենց եղբայրներու վէրքերը կապելու»[1131], ապա ինչու օտար ափերում ապրող հայերը պետք է «իրենց սրտերէն բղխած լումաները խնայեն», որոնցով կարող են ամրանալ ազատության համար կռվողների հոգիներն ու սրտերը: Հոդվածագրի կարծիքով այդ սրբազան գործին ծառայելու համար նախքան կամավորների խմբեր կազմավորելն ու նրանց ռազմադաշտ ուղարկելը, հայ հասարակության ամենամեծ պարտականությունը «այն է լինելու որ ստեղծէ դրամական այնպիսի մնայուն աղբիւրներ, որոնք բաւարարել կարողանան այդ խմբերի չափաւոր պահանջներին»[1132], քանի որ կամավորների թվաքանակը հավելելը, ինչպես նաև նրանց պահանջները բավարարելը, կախված էր միմիայն դրամական միջոցներից. «Թիւրքահայերի ազատագրութեան մեծ գործի համար ոչ միայն մեծ զինուորական ոյժեր են հարկաւոր, այլ և հսկայական ծախքեր. այս գիտակցութիւնը ունենալու է ամեն մի հայ և ըստ այնմ էլ իր միջոցներից բաժին է հանելու Մեծ Գործի համար»[1133]:

Ըստ հայկական մամուլի տարբեր օրգաններում տեղ գտած հրապարակումների[1134], միայն ուտելիքի և այլ մանր ծախսերի համար ամսական պահանջվում էր 60 հազար ռուբլի, որի մեջ չէին ներառվում հագուստի, ճանապարհածախսի, ձիերի և այլ կենսական պահանջների համար անհրաժեշտ գումարները: «Արմենիա»-ն հաղորդում էր, որ համաձայն հավաստի տեղեկությունների, շատ բաներ դեռևս պակասում էին. «Շատ կամաւորներ բաւականաչափ տաք հագուստեղէն

[1131] Նույն տեղում:

[1132] «Արմէնիա», թիվ 24, 1915:

[1133] Ի դեպ, այդ շրջանում լույս տեսնող «Հորիզոն» պարբերականի 1914 թ. նոյեմբերի 29-ի հրապարակած տվյալների համեմատ «Արմենիա»-ի այս հոդվածի լույսընծայման ժամանակ, այսինքն՝ 1915 թ. հունվարի 1-ի դրությամբ հայ կամավորների թվաքանակը Կովկասում բազմապատկվել էր:

[1134] Այդ մասին «Մշակ», «Հորիզոն», ««Արմէնիա», «Наши дни», «Кавказское слово» և այլ պարբերականների մի շարք համարներում շատ անգամներ տեղեկատվություն կա: Նպատակահարմար չգտանք բոլոր համարների թվարկումը, քանի որ դա ավելորդ կծանրաբեռնի շարադրանքը:

չունեն, իսկ բժշկական օգնութիւն համարեա թէ չկայ»[1135]: Անշուշտ, այստեղ մեծ էր փորձառության պակասի նշանակությունը, քանի որ հայ հասարակությունն առաջին անգամ էր կամավորների նման մեծ խմբեր պատերազմի դաշտ ուղարկում: Վերջում, ամփոփելով ասելիքը, հոդվածագիրը կամավորական շարժմանն օգնելու կոչով դիմում էր հայ հասարակության բոլոր խավերին՝ «ամենքին, առանց դասերի ու սեռի խտրութեան զոհաբերել ինչ որ կարող են. դրանով մենք ցոյց տուած կը լինենք մեր քաղաքացիական հասունութիւնը»[1136]:

Կամավորական շարժման առիթով «Արմենիա»-ի հոդվածագիրները շոշափում էին մեկ անչափ կարևոր հանգամանք ևս: Խոսքն այն մասին էր, որ կրելով պարտություն պարտության հետևից՝ բոլոր այն թուրքերն ու քրդերը, որոնք չէին հասցրել բանակի հետ նահանջել, դիմում էին ամեն տեսակ խորամանկ քայլերի՝ ռուսներին սիրաշահելու, նրանց վստահությանն արժանանալու համար: Դրանով իսկ նրանք ոչ միայն պահպանում էին իրենց կյանքն ու ունեցվածքը, այլև օգտագործում էին ցանկացած հարմար առիթ՝ իրենց սև ու տմարդի գործը՝ հայերի բնաջնջումը, ավարտին հասցնելու համար: Նրանք նույնիսկ նենգաբար սպանում էին այն հայերին, որոնց «բարեկամական միջնորդութեան շնորհով իրենք ազատուեր էին ռուս զինտրական հրամանատարի պատժի սպառնալիքներէն»[1137]: Ավելին, թուրք ասկյարները զգեստափոխվում էին, ներկայանում որպես տնատեր գյուղացիներ և գիշերը քնած ժամանակ սպանում էին այդ տներում հանգրվանած հայ կամավորներին կամ «շպիօնաժի գործն էին կարգադրում»: Իսկ քուրդ ցեղապետերից ոմանք ինքնակամ հանձնվում էին ռուսական հրամանատարությանը, պատրաստակամություն հայտնում կռվելու ռուսական զորքերի կազմում, սակայն վճռական

[1135] «Արմէնիա», թիվ 24, 1915:
[1136] Նույն տեղում:
[1137] «Արմէնիա», թիվ 30, 1915:

պահերին, որպես կանոն, դավաճանում էին և անցնում թուրքերի կողմը:

Հայ կամավորական շարժման և ընդհանրապես կամավորների վարած մարտերի ու դրանց ընթացքում ցուցաբերած հերոսության մասին «Արմենիա»-ում կան բազմաթիվ հրապարակումներ, որոնց հարկ չենք համարում անդրադառնալ: Միայն ընդգծենք, որ այդ հրապարակումներում հառնում է ցեղասպանություն ապրած, հայրենազրկված, ընտանիք, հարազատներ ու բարեկամներ, տունուտեղ կորցրած ու վրեժի ցասումով համակված, սակայն իր կենսունակությամբ, ապրելու և արարելու անասելի տոկունությամբ աշխարհին մարտահրավեր նետած, ապագայի նկատմամբ անսասան հավատով լի հայ մարդու կերպարը: Նկարագրելով կամավորական գնդերից մեկի անցած ուղին՝ «Հայ կամատրների գնդի գործունեությունը» հոդվածում թերթի ականատես թղթակիցը շեշտում է կամավորների վճռականությունն ու թշնամուն հաղթելու աներեր հավատը: Ճիշտ է, կամավոր զինվորը չգիտեր, թե ինչ է լինելու ապագայում և դրա լուծումը համարում էր դիվանագիտության առջև ծառացած խնդիր, սակայն որպես զինվոր «հաւատացած էր, որ երջանկութեան նոր արշալոյսն արդէն բոցավառուում է հայ երկնքի վրայ»[1138]: Թերթի թղթակիցը, ներկայացնելով մի հատված ռուս գեներալի հետ ունեցած իր զրույցից, վկայում էր, որ ռուսական հրամանատարությունն առհասարակ շատ գոհ էր հայ կամավորներից: Զրուցակից գեներալը շեշտել է նրանց ընդգծված կարգապահությունը և այն, որ «կամատրի ամենազարմանալի յատկութիւնը նրա չարքաշութիւնն է, դիմացկունութիւնը ...ու երբեք չէ եղել և ոչ մի տրտունջ»[1139]:

Ավելի ուշ «Արմենիա»-ն տպագրեց Մ. Վարանդյանի «Վիրավոր կնճիռ» հոդվածաշարը, որը նվիրված էր կամավորական շարժմանը: Հոդվածագիրը ներկայացնում էր կամավորական շարժման պատ-

---

[1138] «Արմենիա», թիվ 28, 1915:
[1139] «Արմենիա», թիվ 29, 1915:

մությունը և ցույց տալիս, որ չնայած ցարիզմի դարավոր հալածանքներին, հայերը սատարեցին Ռուսաստանին, քանի որ «հայոց գործելակերպի նախաձեռնութիւնն ու մղումը գալիս էին պաշտօնապէս ռուս կառավարութեան կողմից: Հայերը եթէ ուզէին էլ, մերժել չէին կարող, քանի որ ռուս կառաւարութիւնը կարող էր դիտել այդ մերժումը, որպէս դաւաճանութիւն»[1140]: Այնուհետև, ըստ հեղինակի, կամավորական շարժումը պետք է լիներ այն բարոյական դրամագլուխը, որի վրա հենվելով՝ հայությունը «գալոց համաշխարհային վեհաժողովին պիտի կարողանար պաշտպանել իր արդար դատը, լսելի ընէր իր ձայնը»[1141]: Ինչպես շեշտում էր հեղինակը, եթե նույնիսկ հայ նշանավոր այրերն ու ֆիդայիները «գործի գլուխ չանցնէին», և ոչ մի մարտական կազմակերպություն հրապարակ չիջներ, կամավորական շարժումը «ինքնին պիտի ծնունդ առնէր», քանի որ պատերազմից առաջ արդեն Ղարսի շրջանում ինքնաբերաբար կազմվել էին խմբեր, որոնք սրտատրոփ սպասում էին ռուսների «յառաջխաղացութեան, որպէսզի միանային նրանց»[1142]:

Մ. Վարանդյանը, բնորոշելով կամավորական շարժումը, նմանեցնում էր այն տարերային, անդիմադրելի հոսանքի, ապա ավելացնում, որ հայությունը հավատացած էր, որ ռուսները պիտի հաղթեին, իսկ թուրքերը նահանջելուց առաջ իրենց վաղեմի սովորության համաձայն, «պիտի ջարդէին հպատակ հայութիւնը, նոյնիսկ առանց ոևէ ըմբոստացման նշոյլի»[1143]: Հոդվածագիրը պարզաբանում էր նաև, որ հայ ղեկավար շրջանակներն ունեին ռուսական կառավարության հանդիսավոր խոստումը Վորոնցով-Դաշկովի կողմից, որը գրավոր ձևով կրկնվել էր նախարարապետ Գորեմիկինի կողմից,որ հաղթական պատերազմից հետո Ռուսաստանը, «պիտի իրագործէ 1913ի ռէ-

---

[1140] «Արմէնիա», թիվ 1, 1917:
[1141] Նույն տեղում:
[1142] Նույն տեղում:
[1143] «Արմէնիա», թիվ 1, 1917:

ֆորմների ծրագիրը» և հետո, ավելացնում էր հոդվածագիրը, այն ժամանակ «ամէնքն էլ հպարտ էին կամաւորներով...»[1144]:

1915 թ. դեկտեմբերին, զգուշանալով հայերի ինքնավարական ձգտումներից, ցարական հրամանատարությունը ցրեց կամավորական ջոկատները՝ ստեղծելով հրաձգային գումարտակներ ռուսական զորամասերի կազմում: Սակայն 1916-17 թթ. Կովկասյան ճակատի հրամանատարության, իսկ հետագայում նաև ժամանակավոր կառավարության նախագահ Կերենսկու նախաձեռնությամբ նորից սկսվեց կամավորական խմբերի և ավելի խոշոր ռազմական միավորումների (դիվիզիա, կորպուս) կազմավորումը: Դրանցից էր 1917 թ. դեկտեմբերին հայկական կորպուսի կազմավորումը (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյան, կոմիսար՝ Դր. Կանայան): Շուտով՝ 1918 թ. մայիսի 28-ին, հռչակվեց Հայաստանի անկախությունը և, բնականաբար, հայկական բոլոր ռազմական միավորումների հենքի վրա ստեղծվեց հայկական բանակը, որով արդեն բոլորովին այլ բովանդակություն ձեռք բերեց նաև կամավորական շարժումը: «Արմենիա» պարբերականն էլ իր հերթին, արձագանքելով հայոց անկախության հռչակմանը, ցեղասպանության ցավին ու կորցրած հարազատներին գտնելու համազգային փնտրտուքի գործընթացին, Սփյուռքի առաջացմանն ու հայերի համար միջազգային հուսալեցուն քաղաքական խաղերին, դադարեց անդրադառնալ կամավորական շարժմանը: Միայն երբեմն-երբեմն թերթում տեղ էին գտնում հրապարակումներ, որոնցում քննարկվում էին կամավորական շարժման հետ կապված կնճռոտ խնդիրներ, փորձում գնահատել ժողովրդի կատարած ներդրումները և ստացված արդյունքները: Սակայն դրանք էպիզոդիկ բնույթ էին կրում և, ըստ էության, նոր ասելիք չէին պարունակում:

[1144] Նույն տեղում:

5.6. «Արմենիա»-ի դիրքորոշումները հայ ազգային կուսակցությունների նկատմամբ

«Արմենիա» թերթը, Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ փաստորեն լինելով հայ անդրանիկ կուսակցության ստեղծողների առաջին ոգևորողն ու անուղղակի գաղափարատարածողը՝ հետագա բոլոր տարիներին հեռու մնաց կուսակցականու-թյունից: Իհարկե, եղել են ժամանակահատվածներ, երբ թերթը դրական է վերաբերվել այս կամ այն քաղաքական ուժին: Սակայն, ավելի հաճախ այս պարբերականում հրապարակվում էին նյութեր, որոնք որևէ կուսակցության գաղափարաբանական դրույթներն էին քննադատում կամ մատնանշում թույլ տված սխալները: Մ. Փորթուգալյանը, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ թուրքական իշխանությունները հայկական կուսակցություններին համարում էին «դրսի ուժերի կողմից ստեղծված և ուղղորդվող» և հաճախ այդ պատրվակն օգտագործելով՝ կոտորում էին հայությանը, ինչպես նաև ուժերի ընդգծված անհավասարությունն ու երկար և մանրակրկիտ նախապատրաստվելու անհրաժեշտությունը, ժխտում էին իրենց կապը որևէ քաղաքական ուժի հետ: Ավելին, զգուշացնում էին նրանց ձեռնպահ մնալ անժամանակ, անհաշվենկատ և ցուցադրական ելույթներից, որոնց արդյունքում, որպես կանոն, կոտորվում էին մեծ թվով անմեղ հայեր:

Մ. Փորթուգալյանը հատկապես շեշտում էր այն կարևոր հանգամանքը, որ փոխանակ ժողովրդի ազատության և անվտանգության հարցերով զբաղվելու, դեռ իրական ոչինչ չարած՝ կուսակցություններն ավելի հաճախ շտապում էին հաղթողի փառքը ժամ առաջ սեփականել: Հաճախ էլ իրար կոկորդ էին կրծում՝ այդ դափնիները միմյանց չզիջելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, մինչև «Հնչակ»-ի լույս աշխարհ գալը «Արմենիա»-ն էր եվրոպական համալսարաններում ուսանող հայոց ազատագրությամբ մտահոգ սերնդի կապող ուժն ու ուղեցույցը, իսկ

խմբագրությունը՝ հավաքատեղին: Սակայն գաղափարական համախմբման ընթացքում շուտով սկսեցին երևալ լուրջ տարաձայնություններ սոցիալ-տնտեսական խնդիրների մասին նվազ գիտելիքներ ցուցաբերող, սոցիալիստական գաղափարները չպաշտպանող և հեղափոխականների կողմից կիրառվելիք հստակ ծրագիր չունեցող Փորթուգալյանի և հեղափոխական ավելի արմատական կազմակերպություն հիմնել փորձող ուսանողների միջև: «Դժգոհ լինելով նաև ուժեղ ղեկավարություն ստանձնելու Փորթուգալյանի անընդունակությունից»[1145], ժամ առաջ գործելու և «մոտալուտ» հաղթանակը վայելելու կողմնակիցները ժնևյան հանդիպումների ընթացքում բարձրացնում էին Արևմտահայաստանի ազատագրմանը նվիրված հեղափոխական կուսակցության ստեղծման անհրաժեշտության հարցը: Նախատեսվում էր ստանալ Փորթուգալյանի հավանությունն ու աջակցությունը և բոլոր կարող ուժերը համախմբել «Արմենիայի» շուրջը: 1886 թ. ամռանը Ավ. Նազարբեկյանը նույն հարցի մասին նամակ է առաքում Փորթուգալյանին և ստանում բացասական պատասխան: «Արմենիայի» խմբագիրը մասնավորապես նշում էր, որ արդեն գործում է համահայկական կազմակերպություն՝ նկատի ունենալով 1889 թ. իր հիմնադրած «Հայոց հայրենասիրական միությունը», որը, ունենալով ընդամենը կրթական չափավոր ծրագիր, չէր կարող կազմակերպորեն աղերսվել հեղափոխական բնույթի գործունեության հետ: Դա էր պատճառը, որ արդեն 1886 թ. ամռան վերջերին Ժնևում Ավ. Նազարբեկյանի գլխավորությամբ որդեգրելով այդ ժամանակներում նորաձև դարձած սոցիալիզմի գաղափարախոսությունը՝ ձևավորվեց հեղափոխական խմբակ, որը հրապարակավ խզեց հարաբերությունները Փորթուգալյանի հետ և 1886 թ. Ժնևում սկսեց տպագրել սեփական «Հնչակ» թերթը՝ ի հակակշիռ «Արմենիա»-ի: Իսկ 1887 թ. օգոստոսին հիմնեց հեղափոխական կուսակցություն, որը միայն 1890 թ.

[1145] Նալբանդյան Լ., Հայ հեղափոխական շարժում, հայ քաղաքական կուսակցությունների զարգացումը 19-րդ դարի ընթացքում, Ե., 2012, էջ 115:

ստացավ Հնչակյան անվանումը: Արևմտյան Հայաստանին անծանոթ վառվռուն այդ երիտասարդները, որոնք թերթի բնորոշմամբ «ուսած կը լինին համալսարանի մը մէջ, կելնեն Թիւրքահայաստանի փրկիչներ կը ներկայանան, թէև չեն ճանաչեր դեռ մեր հայրենիքը, անոր վիճակը, կարողութիւնը, ցաւերը և մասնատր պահանջները, այլ տեսնելով թէ Եւրոպայի և Ամերիկայի մէջ ազատասէրները կամ յեղափոխական տարրերն այս ինչ կերպով կը գործեն և այն ինչ պահանջումները՝ կընեն, իրենք ալ միևնոյնը կուզեն ընել Հայաստանի համար»[1146]:

Հնչակյանների «Մոտակա» և «Հեռավոր» բաժիններից բաղկացած ծրագիրը նախատեսում էր Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից, որը «համայն հայութեան համար ճամփա կբացի դեպի հեռավոր նպատակը՝ սոցիալիստական հասարակական կազմակերպութիւնը, ուր պիտի դիմէ համայն մարդկութիւնը»[1147]: Այլ կերպ ասած՝ եվրոպաբնակ ժողովուրդների օրինակով նրանք փորձում էին սոցիալիզմի վարդապետությունը տարածել հայկական իրականություն, հաշվի չառնելով այն կարևորագույն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունում, ըստ էության, ո՛չ կապիտալիզմ գոյություն ուներ և ո՛չ էլ հատկապես դրա գերեզմանափոր բանվոր դասակարգը:

Երկար տարիներ ապրելով ու գործելով մայրանիստ Վանում՝ Մ. Փորթուգալյանը ոչ միայն լավ գիտեր երկրի դրությունն ու ժողովրդի անտանելի դարձած և վտանգալեցուն վիճակը, այլև իր մաշկի վրա էր զգացել թուրքական բռնատիրության հարվածները: Դրա համար էլ առաջին իսկ օրվանից մինչև կյանքի վերջին օրը չհաշտվեց ու չընդ-

---

[1146] «Արմենիա», թիվ 21, 1911:

[1147] Հնչակ, 1888, թիվ 10: Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, էջ 22-23: Դոկտ. Աբէ թինյ. Մանուկեան, Հայրենիքի ազատագրութեան բանակին համոզուած զիտորները, Ժընեւ, 2014, էջ 54-55:

դունեց հնչակյաններին ու բոլոր նրանց, ովքեր ունեին ուտա-հայրենասիրական, հաճախ անհաշվենկատ և ցուցադրական գործելակերպ:

Հենց հնչակյաններին կամ որևէ այլ կուսակցության ուղիղ իմաստով հասցեագրված հրապարակումներ «Արմենիա»-ում գրեթե չկան: Պարզապես բազմափորձ խմբագիրն ու նրա գաղափարակից հեղինակներն ընդհանուր որևէ թեմայի անդրադառնալիս քննարկում էին նաև այս կամ այն կուսակցության գաղափարաբանական սխալներն ու ոչ ճիշտ գործելակերպը: Հետսահմանադրական տարիներին անցյալում թույլ տրված սխալները քննադատող և դրանց անարդյունքարդյունքները գնահատող այդպիսի հրապարակումներից է «Հոսանքներ» տեսական-վերլուծական խմբագրականը, որը նվիրված էր ՀՅԴ տեսաբան Մ. Վարանդյանի համանուն գրքին: Քննարկելով ընկերվարությունը որպես քաղաքական ուղղություն՝հեղինակը նշում էր, որ այն ժողովուրդները, որոնք զարգացած են, նրանց «ձայնը կրնան լսուիլ և տնտեսականապէս ալ հսկայ ձեռնարկներով յառաջդիմելու ճանապարհին վրայ կը գտնուին, կունենան այդ ընկերվարական խնդիրները»[1148]: Այդ խնդիրները կարող էին լուծվել, եթե մանրակրկիտ ուսումնասիրվեին և ոչ թե առանց խորքային իմացության հրապարակ նետվեին: Քանի որ հիշյալ գիրքը միտված էր կազմակերպելու այդ ուսումնասիրության ընթացքը և ընկերվարական այն խնդիրներն ու գործընթացները, որոնք Թուրքիայում էլ էին սկսել սաղմնավորվել, հեղինակի կարծիքով կարելի էր հանձնարարել հասարակությանը: Այնուհետև օգտագործելով առիթը՝ պարբերականը մեկ անգամ ևս ներկայացնում էր իր տեսակետը նշյալ հարցում. «Արմենիա»-ն, իրեն նպատակ ունենալով ուղղակի հայկական խնդիրը, իր ծրագրէ դուրս և այն ատեն վաղաժամ կը համարէր ընկերվարական խնդրով յուզել հայ ժողովուրդը և զայն կցել հայկական խնդրին հետ,

---

[1148] «Արմէնիա», թիվ 19, 1911:

բայց չէր հերքեր թէ այդ խնդիրն ալ իր կարգին պիտի գար ուշադրութիւն գրաւել մի օր»[1149]:

Նախկինում բազմիցս հայտարարելով իր և արմենականների միջև որևէ կապի բացակայության մասին՝ Փորթուգալյանն այնուհետև շարունակեց այդ ոչ բարյացակամ վերաբերմունքը նաև նրանց ժառանգորդ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության (այսուհետ՝ ՀՍՌԿ) նկատմամբ: Հաճախ քամահարական բնութագրումներով Փորթուգալյանը փորձում էր ցույց տալ, որ նրանք էլ լավագույն ուղին չեն ընտրել ժողովրդին այդ կործանարար վիճակից դուրս բերելու համար, թեև հաճախ էին հայտարարում, որ հանդուրժող են և նվիրված ժողովրդի ցավերը դարմանելու սուրբ գործին: Այնինչ, «-Սահմանադրական-ռամկավար կոչուած կուսակցութեան պատկանողները գաւազաններով զինուած գնացեր են եկեղեցին և իրենք նախայարձակ եղեր են ժողովրդի այն մասին վրայ որ իրենց տարակարծիք և կամ Դաշնակցական կը նկատէին»[1150],- գրում էր հոդվածագիրը: Այնուհետև շարունակելով նույն ոգով՝ նշում էր, որ «եկեղեցիի սրբապղծութեան անունով սահմնդր. ռամկավարների կողմէն հանուած աղմուկները կեղծիք են միայն և իրենք ալ չեն հաւատար այդպիսի սրբապղծութեան մը»[1151], այլ դրանով ցանկանում են իրենց կողմնակիցներին ցույց տալ, որ հետևեն իրենց կոչերին, կարդան կուսակցության պաշտոնական օրգան, Եգիպտոսում հրատարակվող «Լուսաբեր-Արև» թերթի ծրագրային հրապարակումը, ըստ որի «իրենք հնամիտ մարդեր չեն, հետևապես եկեղեցիների մեջ ատենախոսություններն էլ «սրբապղծութիւն չեն»[1152]:

Այնուհետև «Համառոտ պատասխան մը «Իրաւունք»ին» հրապարակման մեջ պարզաբանելով, որ կյանքն ապացուցեց հնչակյանների

[1149] «Արմէնիա», թիվ 19, 1911:
[1150] «Արմէնիա», թիվ 41, 1910:
[1151] Նույն տեղում:
[1152] Նույն տեղում:

դեմ իրենց արած կանխատեսումների ճշմարտացիությունը և արմենականների հնարածին այն կեղծիքը, թե իբր Մ. Փորթուգալյանը սեփականաշնորհել է «Արմենիա» բառը, հեղինակը բացատրում է, որ ինքն ու իր թերթը ոչ թե դեմ են արմենականներին, այլ ընդհանրապես մերժում են հայոց մեջ կուսակցականություն սերմանելուն: Գտնելով, որ դա կխաթարի հայության միասնությունը և կվնասի ազատագրական պայքարին: Իսկ ինչ վերաբերում էր իրենց «Դաշնակցական» կուսակցութեան հետևող» համարելուն, ապա հոդվածագիրը նախ հայտարարում էր, որ դա սուտ է, որ ընդամենն իրենք «Դաշնակցութեան հետ համաձայն եղած են ինչ ինչ կետերի վրայ», և եթե մարդիկ առաջնորդվեն այդ տրամաբանությամբ, «ամբողջ հայ ազգն ալ Դաշնակցական դարձած է վերջերս, քանի որ Փարիզի 1907ի համաժողովին համակարծիք եղած է»[1153]:

Որպես կանոն, «Արմենիա»-ն տարբեր առիթներով հայտարարում էր, որ «կաշխատին լինել իբրեւ անկողմնակալ թերթ մը, որպէս զի իրենց մեղադրելի գործեր յայտարարող ձայներ պակաս լինին»[1154]: Հարգացնելով այդ թեզը՝ հետագայում «Համերաշխութեան մանին» ծավալուն խմբագրականում Մ. Փորթուգալյանը հայտարարում էր, «թէ մենք կուսակցականութեան հակառակ չենք, այլ կուսակցամոլութեան»[1155]: Չժխտելով, որ բոլոր մարդիկ միակերպ մտածել չեն կարող, քանի որ կրթությունը, ապրած միջավայրը, աշխատանքը, հասարակության մեջ ունեցած դիրքը և հարաբերություններն ազդում են նրանց մտածելակերպի վրա, Մ. Փորթուգալյանը գրում էր, որ այդ գաղափարների ընդհանրությամբ էլ կազմվում են զանազան խմբակցություններ, որոնք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց օգտակար համարած մտածումները տարածեն ժողովրդի մեջ ու կիրառեն: Այնպես որ, «ազգերի քաղաքական կեանքին մէջ շարժման և յառաջդի-

---

[1153] «Արմէնիա», թիվ 20, 1910:
[1154] «Արմէնիա», թիվ 22, 1915:
[1155] «Արմէնիա», թիվ 40, 1916:

մոթեան համար ոչ միայն կարևոր են կուսակցութիւնները, այլ և անհրաժեշտ»[1156], համոզված նշում է հեղինակը: Իհարկե, դա չի նշանակում, շարունակում է Փորթուգալյանը, թե ազգավնաս գործունեության դեպքերում պիտի լռենք միայն այն բանի համար, որ կատարողները հայեր են: Ընդհակառակը, «ազգադավութիւնը, գողութիւնը, զեղծումը և այլ չարիքները, եթէ ստուգուած են, պէտք է ըստ պատշաճի պախարակել և պատժել և աւելի ծանր պատժել եթէ Հայեր են ազգադաւները»[1157]: Դա նաև չի նշանակում, զարգացնում է իր միտքը հեղինակը, որ ով իրենց նման չի մտածում, ուրեմն՝ ազգադավ է:

«Արմենիա»-ի կարծիքով բոլոր կուսակցությունները, իրենց գաղափարներն ու կուսակցական շահերը պաշտպանելու պարտականություն զգալով հանդերձ, «Հայրենիքի փրկութեան գերագոյն գաղափարին և անոր գերագոյն շահերին առջև պէտք է խոնարհին» և անհրաժեշտության դեպքում զոհողությունների և զիջումների գնան, հանդուրժեն միմյանց և համագործակցեն, որ կարողանան հասնել բաղձալի ազատության: Ինչպես անձնական շահերն ու ձգտումները, այնպես էլ կուսակցական շահերն ու նպատակները «պէտք է զոհուին աւելի մեծ, ազգային շահերին առջև. երբ Հայրենիքը վտանգի մէջ է, մասնաւորները պէտք է զոհուին ընդհանուրի պաշտպանութեանը»[1158]:

Մ. Փորթուգալյանի կարծիքով ուրախալի փաստ էր, որ այդ շրջանում «Դաշնակցական, Հնչակեան, Ռամկավար և այլ կուսակցութիւնները, որպէի վեհութիւնն ըմբռնելով, շատ չեն կռուտիր իրար դէմ. այն հին ժամանակների բուռն հակառակութիւններ, մինչև իսկ եղբայրասպան կռիւներ և այլն, տխուր անցեալի մը կը պատկանին այլ ևս»[1159]: Իհարկե, հոդվածագիրը չի ժխտում նաև, որ երբ որոշ անհատներ, փառամոլությունից և անձնական շահերից ելնելով, սխալ

[1156] Նույն տեղում:
[1157] Նույն տեղում:
[1158] «Արմէնիա», թիվ 40, 1916:
[1159] Նույն տեղում:

քայլեր են կատարում, իրենց կուսակցության հովանավորությունն են փնտրում, սակայն երբ հանդիպում են արգելքների, խելքի են գալիս: Որովհետև մեծ մասը հասկացել էր, որ համերաշխություն ասվածը պիտի իրականություն դառնար նաև փոխզիջման արդյունքում և ոչ թե միմյանց պախարակելու, տկարացնելու, «ուրիշների գործն ու անունը սեփականելու եւ ասպարէզին ինք միայն բացարձակ տէր դառնալու ձգտումով մը»[1160]: Վերջում Փորթուգալյանն ավելացնում է, որ բոլոր դեպքերում չպետք է մոռանալ, որ հայերը փոքր ազգ են և միայն իրենց բոլոր ուժերը համերաշխելով՝ կկարողանան հասնել բաղձալի ազատության: Ուստի, կուսակցական, դասակարգային, կրոնական և այլ խտրությունները մի կողմ թողնելով, համերաշխաբար «իրենց կրցած կերպով պէտք է աշխատին Թիւրքահայաստանի ազատութեան սուրբ գործին աջակցելու»[1161]:

Այստեղ ուզում ենք ընդգծել, որ Մ. Փորթուգալյանն ու նրա թիմակիցներն այնքան էլ անկեղծ չէին: Իսկապես, երբ թերթում ես «Արմենիա»-ն, ապա XX դարի սկզբներից զգալի է աստիճանական թեքումը դեպի ՀՅ Դաշնակցությունը: Իսկ հետագա տարիներին, հատկապես սահմանադրության հռչակումից հետո, այդ հակումն ավելի շոշափելի է դառնում: Աստիճանաբար պարբերականում ավելանում էին դաշնակցամետ հրապարակումները, ավելին՝ շատ համարների ծավալուն էջեր էին տրամադրվում ՀՅԴ անդամ-հեղինակների նյութերին, ինչպես օրինակ՝ Մ. Վարանդյանին և մյուսներին: Հետագա տարիներին նույնիսկ առիթը ներկայանալու դեպքում «Արմենիա»-ն ստանձնում էր այդ կուսակցության պաշտպանի դերը: Մի առիթով բացատրելով, որ ոչ մի կուսակցություն ապահովագրված չէ, որ իր շարքերում չեն հայտնվի խարդախ և շահամոլ մարդիկ, թերթը պարզաբանում է. «որոշ պարոնների տխրառիթ վարմունքը կը վերաբերի իրենց անձնականին և ոչ Դաշնակցութեան», և որ այդպիսի «անձեր

[1160] Նույն տեղում:

[1161] «Արմենիա», թիվ 40, 1916:

եղած են գլխաւոր պատճառ Դաշնակցութեան ալ շատ բամբասուելուն ու պատճառ կը դառնան որ ժողովրդէն մաս մը Դաշնակցութիւնը կը մեղադրէ ատոնց գործերին համար»[1162]: Իսկ մի հրապարակման մեջ «Արմենիա»-ի վերլուծաբաններից Պ. Տոնապետյանն ուղղակի ասում էր, որ «Դաշնակցութեան ընթա ամէնէն օգտակարն է Թուրքիոյ Հայ ցեղի ազգային և քաղաքական բարգաւաճման համար...: Դաշնակցութիւնը կարտայայտէ օսմանեան կայսրութեան անխախտ պահպանման օգտին...Շատեր գիտեն Դաշնակցութեան ճշմարտախօսութիւնը և անոր անկեղծ հայրենասիրութեան ոգին» և այլն[1163]:

Ավելի ուշ, «Արմենիա»-ն, անդրադառնալով Միք. Վարանդյանի «Վիրավոր կնճիռ» ծավալուն հոդվածին, որն անցյալն արժևորելու ու ծրագրային կանխատեսումներ անելու բնույթ ուներ, ոչ միայն զգալի բարեհաճություն էր դրսևորում հեղինակի ու նրա ստեղծագործության նկատմամբ, այլև վերջինիս համարում էր «մեր ընկերը»:

Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, որին անմիջապես հաջորդեց հայ կամավորական շարժումը, ու պարզ դարձավ, որ ողջ հայությունը պատրաստ է ոտքի ելնելու թուրքական բռնատիրության դեմ, «Արմենիա»-ում կուսակցականությունն աստիճանաբար տեղի տվեց: Իսկ ավելի ուշ՝ Հայոց մեծ եղեռնի շրջանում, թերթում գերիշխում էին սարսափելի լուրերն ու օտարերկրյա մամուլում դրանց արձագանքները՝ ու այլևս «տեղ ու սիրտ չէր մնում» կուսակցականության խնդրին:

Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունն ու Հոկտեմբերյան հեղաշրջումը և դրանց հաջորդած կարևորագույն արմատական փոփոխություններն ու հատկապես 1918 թ. հայոց անկախության վերականգնումը տեղեկատվական այնպիսի հեղեղ ապահովեցին, որ ինչպես ժամանակի շատ գործիչներ ու պարբերականներ, այնպես էլ «Արմենիա»-ն ու Մ. Փորթուգալյանը, չհասցնելով

1162 Նույն տեղում:

1163 «Արմենիա», թիվ 25, 1913:

ամբողջությամբ «մարսել» կատարվածը, դարձել էին կատարված իրողությունների սոսկ արձանագրողներ: Որոշ ակտիվություն էր դրսևորում թերթի հիմնական տեսաբաններից Եղիշե Թորոսյանը, սակայն նրա հրապարակումները հիմնականում չեզոք, անկուսակցական և պաթետիկ բնույթ ունեին:

Իրականության դեմ չմեղանչելու համար նշենք, որ Հայաստանի Առաջին հանրապետության շրջանում «Արմենիա»-ում նկատելի է գործող իշխանությունների, հետևապես նաև՝ ՀՅԴ-ի նկատմամբ որոշակի վերապահ կեցվածք, նույնիսկ այս կամ այն առիթով՝ քննադատություն գործող կառավարության հասցեին: Հատկապես թերթը պաշտպանում էր Ազգային պատվիրակության և նրա ղեկավար Պողոս Նուբարի որդեգրած կեցվածքը Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ: Սակայն, ըստ էության, հիմնականում պահպանելով իր որդեգրած անկուսակցականության սկզբունքը, այնուամենայնիվ, թերթը շարունակում էր որոշ համակրանք դրսևորել ՀՅԴ-ի նկատմամբ:

Թերթում զգալի էր որոշ դրական տեղաշարժ ռամկավարների նկատմամբ, սակայն դրանք մշտական բնույթ չէին կրում:

Ավելի ուշ «Արմենիա»-ն, վկայակոչելով եղեռնը և հայ ժողովրդի կրած անլուր տառապանքները, համախմբվելու կոչ էր անում բոլոր խավերին ու հատվածներին: Պարզաբանելով, որ հայ ժողովուրդն այդ տառապանքները կրել է ոչ միայն օտարների ճնշումների, այլև մեր որոշ բացասական կողմերի հետևանքով: Դրանցից մեկը «Մոռանանք կուսակցական ոգին» հրապարակման հեղինակ Կարո Գարունի թղթակցի կարծիքով «մեր մէջ ժառանգական դարձած անհամերաշխութիւնը-կուսակցագարու-թիւնն» է[1164]: Հայ ազգային-ազատագրական շարժման պատմությունը բավական դրվագներ է պարունակում, որոնցում կուսակցական ոգին հաճախ գերակայել է, իսկ

[1164] «Արմենիա», թիվ 10, 1917:

հայրենիքի ազատության խնդիրները՝ վնասներ կրել: Մասնավորապես Ամերիկայում, որտեղ այդ երկրի օրենքների ընձեռած ազատ արտահայտվելու հնարավորությունները հաճախ կուսակցական թշնամանքի էին վերածվել և երբեմն այն աստիճանի հասել, որ «եղան ողբերգական տեսարաններ»: Այնինչ հարկավոր էր, որ հայերն «աւելի պաղարիւն և ուշիմ գտնուէին, որովհետեւ աւելի տուժողը մենք էինք. հարուածը ոտղակի մեր կուրծքին կուգար»[1165]: Իսկ ոմանք, հոդվածագրի կարծիքով, փոխանակ ուշքի գան և իրենց ջանքերն ու նյութական միջոցներն ազգային ցավերը դարմանելուն ուղղեին, «չեն մոռցած ու չեն ուզեր դեռ մոռնալ իրենց կուսակցամոլութեան ոգին: Սա մի դժբաղդ պարագայ է որ կարող է վնասել թէ ընդհանուր գործին և թէ մեզ ամօթահար կը թողու մեր դաշնակից ազգերու առջև»[1166]: Վերջում հոդվածագիրը կոչ է անում սթափվել, մի կողմ թողնել կուսակցամոլական պայքարը, մոռանալ «ընկերային ուրիշ հարցեր, անձնական խնդիրներ» և մաքուր հայրենասիրական ոգով գնալ դեպի ազատ ապագա:

Ամփոփելով նշենք, որ «Արմենիա»-ն, հիմնականում մերժելով հնչակյանների ու դաշնակցության, իսկ ավելի ուշ նաև հայկական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների «հեղափոխականությունը» և լինելով աստիճանական բարեփոխումների կողմնակից, միշտ մնաց անկուսակցականության դիրքերում:

5.7. 1908-1920 թթ. իրադարձությունների լուսաբանումը «Արմենիա»-ում

Առաջին աշխարհամարտի վերջին փուլում, երբ արդեն ակնհայտ էր դարձել, որ Անտանտի երկրների հաղթանակն անխուսափելի էր և «մերթ ընդ մերթ մխիթարական յոյսեր կը սփռուեր Հայաստանի հո-

---

1165 «Արմենիա», թիվ 10, 1917:

1166 Նույն տեղում:

րիզոնին վրայ»[1167], «Արմենիա» թերթն ավելի հաճախ էր անդրադառնում Հայկական հարցին՝ հատկապես հայոց պետականության վերականգնման խնդրին: Թերթի կարևորագույն մտահոգության թիրախը սպասվելիք հաղթանակից հայ ժողովրդի ակնկալիքներն էին: Բազմաթիվ խոսուն փաստեր վկայակոչելով՝ «Արմենիա»-ն համոզկեր ցույց էր տալիս, որ բնակչության թվաքանակի համեմատությամբ ամենաշատ զոհեր տված և մինչև արյան վերջին կաթիլը դաշնակիցների հաղթանակին նվիրաբերած հայ ժողովուրդն արժանի էր սեփական պետությունն ունենալուն և ավերված ու թալանված հայրենին վերաշինելուն:

«Հայաստանի դատը» խմբագրականում ներկայացնելով «Արմենիա»-ի տեսակետները՝ Թ. Եղիշեն համոզված գրում է, որ «Հայաստանի ազատագրումը պայմանագրական կը դառնայ ներկայ պատերազմի մէջ», իսկ թե ի՞նչ սահմաններով, դեռ անորոշ է: Սակայն հեղինակի կարծիքով հայկական խնդիրը «դժբաղդաբար տակաւին պէտք եղաւ ինչ ցայտուն գծերով ծանօթ չէ մեր դատը պաշտպանելու կոչուած օտար բարեկամներուն»[1168]: Ուստի, որպես առաջին քայլ սեփական պետությունն ստեղծելու ճանապարհին, թերթի կարծիքով անհրաժեշտ են մասնագիտական խոր վերլուծություններով շաղախված քարոզչական հրապարակումներ՝ «օտար ժողովուրդներու բարի տրամադրութիւնները դէպի մեզ գրաւելու համար»[1169]:

Հարկավոր էր օտարներին ներկայանալ ոչ սովորական դարձած խեղճության և հեզ քրիստոնյայի կերպարով, քանի որ տկար լինելն ու կոտորվելը թուլության նշաններ էին և չէին ենթադրում ինքնակառավարվելու ընդունակություններ: Հետևապես՝ «անհրաժեշտ կը դառնայ նոր ուղղութիւն մը, հայը և Հայաստանը պէտք է հիացում

[1167] «Արմէնիա», թիվ 23, 1917:
[1168] Նույն տեղում:
[1169] Նույն տեղում:

ներշնչեն»[1170] իսկ այդ հիացումը հնարավոր էր ձեռք բերել հոգեկան և մարմնական կորովի միահամուռ ցուցադրությամբ միայն:

Թերթի կարծիքով, անհրաժեշտ էր առանց երկմտելու աշխարհին ծանոթացնել «հայկական ոյժը, ինքնորոյն քաղաքակրթական և ցեղային պատմութիւնը, Յեղափոխութիւնն, ինքնապաշտպանութիւնն ու ապստամբութիւնը», քանի որ դժոխային բռնապետության անտանելի ճնշումների դեպքում դրանք լիովին արդարացված էին: Հարկավոր էր, որ համայն մարդկությունն իմանար, որ «Տաճկին համար հայ ծնած ըլլալն իսկ ինքնին պատրուակ մէր հալածանքի», հետևապես նրա դեմ ապստամբական գործողություններն ու ինքնապաշտպանվելը ամբողջովին արդարացված էին: Այնպես որ, եզրակացնում է Թ. Եղիշեն, անհրաժեշտ էր համախմբել բոլոր ուժերը, օգտագործել ամեն հնարավորություն՝ հայկական խնդիրը նոր թափով ու նոր ձևերով քարոզելու համար: Անհրաժեշտ էր «տարածել հայ պահանջները, հայ պատմութիւնը, հայանպաստ գրութիւնները և որ գլխաւորն է, ներկայ հայ իրականութիւնը»[1171]:

Արձագանքելով Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններին՝ «Արմենիա»-ն հանդես էր բերում խորաթափանց մոտեցում և զգուշացնում բոլոր ուժերին զգոն լինել, քանի որ այնտեղ իշխանությունը գրաված «Պոլշէվիքները գուցէ տրամադիր լինին Հայաստանը վերադարձնելու Թիւրքերին: Երբ իրենց հայրենիքի շահերը կը վտանգեն, հայ ազգի շահե՞րը պիտի մտածեն»[1172]: Հայ ժողովուրդը Ռուսաստանում ստեղծված քաոսային իրավիճակի ու զանգվածային դասալքության հետևանքով «վտանգաւոր կացութեան մը մէջ ինկած է այժմ», և հայ ժողովրդի համար «լինել կամ չլինել»ու խնդիրն է որ կը ներկայանայ այժմ»[1173]:

1170 «Արմենիա», թիվ 16, 1917:
1171 Նույն տեղում:
1172 «Արմենիա», թիվ 24, 1917:
1173 Նույն տեղում:

Ստեղծված իրավիճակում, «Արմենիա» թերթի կարծիքով, անհրաժեշտ էր, որ նախ բոլորն ըմբռնեին. «Հայաստանը Հայերի իսկական իրաւունքն է և պէտք է մնայ. ո՛չ մէկ ազգութիւն և ժողովուրդ չպէտք է նրա վրայ դնէ իւր ձեռքը»[1174], ապա՝ ժողովրդի բոլոր խավերը պիտի ըմբռնեն, որ այլևս արտասուքի, հրապուրիչ հույսի ու խարդախ խոստումների ժամանակը չէր: Հայ ժողովուրդը կորովի պահանջով պետք է ցույց տար աշխարհի ժողովուրդներին ու նրանց կառավարություններին, որ ինքն էլ «ազգայնութիւն մ'է, և իրաւունք ունի ինքնավարութեան»: Պետք էր նրանց «ազդու բողոքով և ոչ թէ արցունքով» ցույց տալ, որ հայ ժողովուրդն էլ նրանց նման միլիոնավոր զոհեր տվեց և միանգամայն արժանի էր իր պետությունն ունենալու: Անհրաժեշտ է, գրում էր թերթը, որ հայ ժողովուրդը հասկանա. «Յոյս և խոստում քսան և հինգ տարիներէ ի վեր քանդեցին և իր արիւնը ծծեցին մինչև վերջին կաթիլը» և բավական է օրորվել եվրոպական խոստումներով ու «Հայաստանի ճակատին վրայ մեր ստրկութեան աններելի ոճիրը սև տառերով դրոշմելով»[1175]: Անհրաժեշտ էր վերջապես «գործի մը դրօշակը ձեռքերնիս մէջ սեղմենք և առաջ գնանք «-Հայաստանը Հայերին» գոռալով»[1176],- կոչ էր անում «Արմենիա»-ն:

Դարեր շարունակ ժողովրդին պատուհասած ամենադժվարին պահերին անգամ հայը միշտ գիտակցել է, որ «մարմնէ և հոգիէ բաղկացած» մարդուն ապրելու համար անհրաժեշտ է «սնունդ տալ մարմնին և մտքին միանգամայն»[1177]: Մատաղ սերնդին միայն հաց տալը շատ քիչ է, կարդում ենք Մ. Փորթուգալյանի հեղինակած «Ոչ միայն մարմնատր, այլ եւ մտատր սնունդ» խմբագրականում, պետք է մշակել նաև նրանց միտքը: Ավելին՝ հայը պետք է հայի ոգով կրթվի, որ կարողանա տոկալ, դիմագրավել բազմատեսակ փորձություններին:

[1174] Նույն տեղում:
[1175] Նույն տեղում:
[1176] «Արմենիա», թիվ 24, 1917:
[1177] «Արմենիա», թիվ 51, 1917:

Ազատասեր կարող է լինել խելացի, կիրթ և բանիմաց մարդը: Իսկ հայերի պարագայում անհրաժեշտ ու պարտադիր էր նաև սեփական լեզվի իմացությունը: Գաղտնիք չէ, որ դարեր շարունակ հայը կրթասեր և փառավոր անցյալի տեր ժողովուրդ էր եղել, սակայն ճակատագրի հեգնանքով հայտնվելով օտար ափերում՝ նա հասել էր կորսվելու վտանգի աստիճանի: Փրկությունը նախ և առաջ գաղութների մեջ հայերենի պահպանումն էր, ուստի անհրաժեշտ էր, որ «ամէն Հայ գիտնայ հայերէն լեզուն և ով որ չգիտեր, սովրի»[1178]: Թուրքը, հոդվածագրի կարծիքով, հայերից խելացի է, քանի որ ըմբռնել է լեզվի հարգն ու կարևորությունը և հասկացել. «մեր հայ ազգութիւնը ջնջելու համար՝ Հայերին արգիլել է հայերէն խօսիլ»[1179]: Հարկավոր էր, որ գաղութահայությունն էլ չկորցնի իր մայրենին:

Շարունակվող պատերազմի պայմաններում, երբ դեռ «խօսքը թնդանօթինն էր», «Արմենիան» շարունակում էր Հայաստանի ապագայի մասին իր հրապարակումները և ենթադրում, որ «Թիւրքիոյ բաժանման ահազանգը կը հնչէ»[1180] և «ինքնավար Հայաստանի մը կազմակերպութիւնը աւելի արդար կը դառնայ, և տրամաբանութիւնը կը թելադրէ չշրջել պատմութեան անիւը ոյժի քմահաճ ճնշումներով»[1181]: Այդ իրավիճակում բոլոր կողմերից ապագայի նկատմամբ հուսալեցուն խոսակցություններ էին շրջանառվում, սակայն ցավալին այն էր, որ շատ երկրներում հայերին վերաբերվում էին տակավին որպես թուրքերի: Այդ արատավոր մտայնությունը փոխելու գործում «Արմենիա»-ն կարևոր դերակատարություն էր վերապահում հայ մտավորականու-թյանը:

Չնայած թերթի խմբագրակազմը երբեմն տուրք էր տալիս հուսալքությանը, քանի որ մարդկությունը դեռ թավալվում էր գազանութ-

---

1178 Նույն տեղում:
1179 «Արմէնիա», թիվ 34, 1917:
1180 «Արմէնիա», թիվ 23, 1917:
1181 «Արմէնիա», թիվ 23, 1917:

յուններեր ու կեղծիքի մեջ, «անմեղութիւնն ու վսեմը կը յաշոտուին», «կը սարսռայ արդարութիւնը զի նոր դարու Յիսուս մը կը խաչուի, ամբողջ ազգ մը կը մղկտայ»[1182], սակայն շատ արագ էլ սթափվում էր ու մերժում պատերազմը՝ որպես հարցեր լուծելու լավագույն միջոցի: Պատերազմից ու անհաշիվ կորուստներից հոգնած Թ. Եղիշեն գրում էր. «Դացին և հայ գաղափարի ու զէնքի ասպետները... յոյսերն անգամ կերթան մահանալու կարծէք»: Սակայն քիչ հետո, ուժերի մեծ լարումով կարողանալով հրաժարվել հուսազուրկ մտասևեռումներից, նշում էր, որ կյանքը թելադրում է, հույս ներշնչում, «դէպի նորը՝ նոր արշալոյսներու հեռանկարով»[1183]: Այնպես որ, եզրակացնում էր հոդվածագիրը, «անցեալը հայ փորձաքարն է որ ապագայի կորովը կը կռանէ, կը զրահէ», իսկ անցնող ևս մեկ հին տարի թողնելով մյուս անցածների կողքին՝ «դէպի նօրը, դէպի ապագան կը սուրանք նոր հաւատքով, նոր ոյժով»[1184]:

«Արմենիա»-ն ողջունեց «ռուսական հեղափոխութիւնը»՝ այն համարելով ավելի նշանակալից երևույթ, քան 1789 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ի դեպ, հետաքրքիր է այն հանգամանքը, որ թերթի այդ թեմայով առաջին մի շարք հրապարակումներում, ըստ էության, միմյանցից չեն տարբերակվում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունն ու Հոկտեմբերյան հեղաշրջումը, և դրանք դիտարկվում են նույն հարթությունում: Ակնհայտ է միայն մի տարբերություն, որ հիմնականում խոսվում է բոլշևիկների ու նրանց կատարած հեղաբեկումների մասին: Այն, թերթի կարծիքով «մարդկային բնատուր իրատունքը եղող ազատութիւնը շատէն կը քալէ եւ ռուս ժողովրդի կամքը կը շարժին ու կը գործեն անոր թելադրութեամբ միայն»[1185]: Հեղափոխություն, որը գալիս էր՝ նոր կերպարանք տալու մոլեգնած մարդ-

---

[1182] «Արմէնիա», թիվ 26, 1917:
[1183] «Արմէնիա», թիվ 24, 1917:
[1184] Նույն տեղում:
[1185] «Արմէնիա», թիվ 35, 1917:

կության «ներկայ հոգեվարքային դրութեան», Արշակ Սաֆրաստյան հոդվածագրի կարծիքով նաև հիմնապես պիտի փոխեր հայ ազգի ճակատագիրը. «Հայաստանի և հայ ազգի գոյութիւնը դնելու այնպիսի հիմքերի վրայ, որ գուցէ անծանօթ եղած լինի մեր դարատոր կեանքի ոևէ շրջանին»[1186]: Հետաքրքիր են հեղինակի դիտարկումները տարածաշրջանում բնակվող ժողովուրդների կողմից ռուսական հեղափոխության նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից. «Հայերը ցոյց կուտան ցաւագար մի խանդավառութիւն. վրացիները յայտնելով մէկտեղ իրենց ուրախութիւնը՝ բռնած են զգուշութեան վերապահ մի դիրք. իսկ մահմէտականների վերաբերմունքը աւելի մօտ է անտարբերութեան»[1187]: Զարմանալով հանդերձ հայերի անուղղելի և բուպեական ոգևորության վրա՝ հոդվածագիրը տեղեկացնում էր նաև, որ Ռուսաստանում իրավիճակը դեռ անստոյգ էր և շատ հարցեր պարզ չէին: Այնպես որ, համակրելով ու ծափահարելով հեղափոխությանը, պետք էր նաև մտածել, որ դարերով ինքնակալությանը վարժված մի երկիր, ինչպիսին Ռուսաստանն էր, «հեշտութեամբ չի ընտելանար այդպիսի արմատական մի յեղաշրջման»[1188], և հայերիս անժամանակ ոգևորությունը կարող էր դառնալ հերթական արկածախնդրություն ու կործանման պատճառ. «խանդավառութիւնը» կարող է հայ անմեղ ժողովրդի ապագայն ենթարկել ահաւոր պատուհասների»[1189]:

Մեկ այլ՝ «Հայաստան», հրապարակման մեջ, շարունակելով քննարկել հայերի և ռուսական հեղափոխության առնչությունները, «Արմենիա»-ն ընդգծում էր, որ հայ ժողովուրդը, շնորհավորելով հեղափոխությունը, նաև հույս էր հայտնում, որ այն «ապագային մէջ իրենց պիտի ապահովէ աւելի ազատ և բարեյաջող զարգացման պայմաններ»[1190], քանի որ հայերն ազնիվ նկարագրով ու արդարադատ

1186 «Արմէնիա», թիվ 39, 1917:
1187 «Արմէնիա», թիվ 39, 1917:
1188 Նույն տեղում:
1189 Նույն տեղում:
1190 «Արմէնիա», թիվ 42, 1917:

անցյալով «ազգ մը կը կազմեն և թէ պէտք է նպաստել առաւելապէս անոր զարգացման»[1191]:

«Ռուս յեղափոխութիւնը եւ հայերը» խմբագրականի հեղինակ Թ. Եղիշէն նկարագրելով, որ ամիսներ շարունակ Ռուսաստանը «կը ծածանի յեղափոխութեան ալիքներուն մէջ», և ներքին պառակտումները «կը բորբոքին արտաքին դաւերով» ու ժողովրդի տհաստությունն էլ «առատ սնունդ կը հայթայթէ մտքերու խառնաշփոթ դրութեան», եզրակացնում էր, որ դրանով վտանգվում էր նորահաս ազատությունը[1192]: Այդ իրավիճակում հետաքրքիր էր «Ռուսահայերու մտայնութիւնը»: Նրանք, իբրև եռանդուն ազատասերներ, բնականաբար, ամբողջ սրտով պիտի փարեին հեղափոխությանը, բայց, ինչպես երևում էր օսմանյան սահմանադրությունից, հայերի կրած դառը փորձությունը «զօրաւոր ազդակ մը չէր եղած զգուշաւորութեան»: Նրանք «Ռուսերէն աւելի և կը ջանան մեծապէս օգտուիլ ռուսական ազատութեան մշուշապատ Արևէն»: Դա, իհարկե, նրանց իրավունքն էր, բայց «իրենցմէ քիչ մ'աւելի աչալրջութիւն պահանջելն ալ ճշմարտութեան և իրենց ու բովանդակ հայութեան շահուն իրաւունքն է», նշում էր հոդվածագիրը: Անհրաժեշտ է, խոսքը եզրափակում էր հեղինակը, որ սկզբնական գինովությունն անցնելուց հետո, «իրերու և շարժումներու հանդէպ պաղարիւն վերաբերում մը տիրէ», որպեսզի հնարավորություն ունենան նաև արևմտահայության ճակատագրի հանդեպ անտարբեր չմնալու:

Որքան մոտենում էր պատերազմի ավարտը, այնքան «Արմենիա»-ի հրապարակումները երկրի, հայ ժողովրդի ապագայի և սեփական պետականություն ունենալու նկատմամբ հուսալեցուն էին դառնում ու ավելի գործնական: Այսպես, «Ռոպէի պահանջը» հրապարակման մեջ հայտարարվում էր, որ «այժմ կարևոր է մեզ լուրջ և շրջահայեաց գործունէութիւն», քանի որ ժողովուրդների կյանքում

[1191] Նույն տեղում:

[1192] «Արմենիա», թիվ 14, 1917:

հազվադեպ ժամանակներ են, որոնք «դարագլուխ մը կրնան կազմել նպաստաւոր հանգամանքների բերումով»[1193]: Անչափ կարևոր էր, որ բոլորը միահամուռ աշխատեն հայ ազգային «առաջնակարգ» խնդրի լուծման համար, «որ էր Հայաստանի ազատագրութիւնը»[1194]: Կարևոր էր նաև, որ այս ընթացքում բոլոր բանավեճերը, որոնք անխուսափելիորեն կլինեն, ծառայեն ոչ թե միմյանց դեմ հակառակություններ լարելուն, այլ հայության ոտին լուսավորելու կարևոր գործին:

«Արմենիա»-ն, դժգոհելով այն բանից, որ «պօլշէվիք կառավարութիւնը իր յարափոփոխ ընթացքով» թեև ընդհանուր առմամբ խանգարում էր Հայկական հարցի արդարացի լուծմանը, թուրքերին էր վերադարձնում Արդահանը, Կարսը և այլ հայկական բնակավայրեր, սակայն լավ էր, որ այնուամենայնիվ «Պետրոգրադի կառավարութիւնն ալ կը պաշտպանէր Թիւրքահայաստանի անկախութիւնը», և պաշտոնապես հայտարարում էր, որ միջոցներ պիտի ձեռք առնի այդ երկրամասում բնակվող հայերի վիճակը թուրքերի բարբարոսական արշավանքներից պաշտպանելու համար[1195]: Այնպես որ, եզրակացնում էր նյութի հեղինակ Մ. Փորթուգալյանը, հայերը չէին կորցնում հույսը, և «հաւատք ունինք իրատունքի և ազատութեան պաշտպան հանդիսացող տէրութիւնների վերջնական յաղթանակին վրայ»[1196], հետևապես՝ դիմանալ էր պետք ու չվհատվել՝ ապրելու և ապագա հաջողությունները տեսնելու համար:

Շարունակելով նույն ոգով՝ «Արմենիա»-ն հերթական ամանորյա տոնի առիթով ավանդական հրապարակման մեջ արձանագրում էր, որ հայ ժողովուրդը Նոր տարի էր թևակոխում տխուր, բայց ոչ հուսահատական վիճակում: Ու քանի որ «անտարակուսելի դարձած է ազատական դաշնակիցների վերջնական յաղթութիւնը», որից շատ կա-

---

1193 «Արմէնիա», թիվ 17, 1918:

1194 Նույն տեղում:

1195 «Արմէնիա», թիվ 32, 1918:

1196 Նույն տեղում:

խում ունի և Հայաստանի ազատության խնդիրը, շատ հավանական էր, որ առաջիկա տարում Հայաստանն ազատվեր թուրքական բռնատիրության ճիրաններից[1197]: Արտահայտելով Հայկական հարցի ապագայի նկատմամբ դաշնակից երկրների մոտեցումները՝ Անգլիայի վարչապետ Լ. Ջորջը հայտարարում էր, որ պիտի հիմնվի՝ «Ազգերի ընկերութիւն և զօրապաշտութեան (militarisme) անհետացում» և, որ ամենակարևորն էր՝ «ՀԱՅԱՍՏԱՆԸ, երբէք չպէտք է որ նորէն Թիւրքերի տիրապետութեան տակ դրուի»[1198]:

Թերթում բավականին հետաքրքիր դիտարկումներ էին կատարվում Հայաստանի Հանրապետության երկրորդ տարեդարձի առթիվ հրապարակման մեջ[1199]: Նշվում է, որ Բագրատունիների անկումից 872 տարի հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, վերականգնվեց հայ անկախությունը՝ և երկիրը «փիւնիկին պէս կը վերածնի իր աճիւններէն»: Բայց ինչեր ասես, որ չտեսան հայրենիքն ու հայ ժողովուրդն այդ դարերի ընթացքում. «սոսկալի հարստահարութիւններ, տարագրություն, արյուն ու կոտորած», մինչև որ երկար դարերից հետո հայը տեր կանգնեց իր հայրենի աշխարհին: Դրա համար էլ մեծ էինուրախությունը և այն ոգևորության զգացումները, որոնցով յուրաքանչյուր հայի սիրտ թրթռում էր, որ «ազգային պատմութեան մէջ նոր դարաշրջան մը կը բացուէր»[1200]: Ամենաուրախալին այն էր, որ հայությունը, չնայելով իր անօգնական, անոթի և թշնամիներով շրջապատված լինելու հանգամանքին, «անկախ հռչակեց ինքզինքը և իր յոյսը իրեն վրայ դրած, մաքառեցաւ ամէն դժարութիւնների դէմ, իր ուժով ու խելքով յաջողեցաւ կանգնել Հայաստանի անկախ պետութիւն մը»[1201]: Այդ

1197 Նույն տեղում:«Արմենիա», թիվ 23, 1918:

1198 Նույն տեղում:

1199 «Հայաստանի նորակազմ պետութեան Բ. տարեդարձը» հոդվածը նույն վերնագրով մինչ այդ լույս էր տեսել Փարիզում հրատարակվող «Վերածնունդ» շաբաթաթերթի՝ 1919 թ.մայիսի 28-ի համարում: Կարե-վորելով խնդիրը և ուղղելով սպրդած որոշ սխալներ՝ հեղինակն այն հրապարակել է նաև «Արմենիա»-ում:

1200 «Արմենիա», թիվ 22, 1919:

1201 Նույն տեղում:

քաջ արարքը նաև եկավ մեկ անգամ ևս ապացուցելու, որ «ազգի մը անկախութիւնը ՉՏՐՈՒԻՐ այլ ԿԱՌՆՈՒԻ...»[1202]:

«Արմենիայի» տեսանկյունից թուրքական կեղծավոր ու երկերեսանի դիվանագիտությունը մեծ տերություններին խաբխբելով և իրար դեմ գրգռելով «յաջողած էր մինչև այժմ երկարաձգել իր հիւանդոտ և մահահոտ կեանքը»[1203]: Բայց ավելի լավ չէր լինի, հարցնում է նյութի հեղինակը, նենգամիտ խաղեր խաղալու փոխարեն հանգիստ աշխատեր և հնարավորինս բուժեր պատերազմից ստացած վերքերը: Քանի որ երկար շարունակվող ավերիչ պատերազմն արդեն ավարտվել էր վերջապես, և հայությունը հուսառատ սպասումներով էր ճանապարհում յուրաքանչյուր տարին: «Արմենիա» թերթին մտահոգում էր, որ հանկարծ այդքան տառապանքներ կրած հայ ժողովուրդը չհուսալքվի և հստակ պատկերացնի, որ «ազգերու դատը յաւիտենական է այնքան ատեն, որքան կապրի ինքը ազգը», որովհետև գոյության պայքարը մշտնջենական է: Ձևերը կարող են փոխվել, բայց պայքարն իր նպատակով ու էությամբ կմնա նույնը: Կայացած վճիռները ժամանակավոր հանգրվաններ էին, մոտավոր նպատակներ, հեռավորը նույնը կմնա միշտ, և ազգերի պատմությունը «կը քալէ յարատև»[1204]: Պատմությունը սահման չունի, որովհետև դա է բնության օրենքը: Հայ ժողովուրդը պիտի ամեն ինչ անի, որ շտկի իրավիճակն ու կարողանա ապահովել իր վաղվա օրը: Իսկ դրա համար անչափ կարևոր է, գրում էր «Արմենիա»-ն, որ լավագույնս կազմակերպվի որբերի հավաքման և խնամելու գործը, քանի որ նաև յուրաքանչյուր որբով էր պայմանավորված ազգի ապագան: Եվ ցավալի էր նկատել, որ «դեռ բազմահազար որբեր անտէր և անխնամ կը մնան թէ անապատներու և թէ Կիլիկիոյ մէջ»[1205]:

1202 Նույն տեղում:
1203 Նույն տեղում:
1204 «Արմէնիա», թիվ 23, 1920:
1205 Նույն տեղում:

Հետագայում ևս անդրադառնալով Հայաստանի ու հայության ապագային՝ թերթը արձանագրում էր, որ այնտեղ «պատահած վերջին դէպքերը որչափ ալ ցաւառիթ լինին, յուսահատական չեն բնաւ»[1206]: Քեմալական ուժեղ բանակի հարձակումների դեմ անօգնական և անպաշտպան մնացած հայ ժողովուրդն իր ֆիզիկական գոյությունն ու պետականությունը պահպանելու համար ստիպված դիմել էր «Ռուսիաի արդի կառավարութեան հետ յարմարուող քաղաքականութեան մը»[1207]:

«Արմենիա»-ն արձանագրում էր, որ տարիները հաջորդում էին միմյանց՝ հայ ժողովրդին թողնելով միայնակ իր ցավերի հետ: Դարեր շարունակ հայությունն արշավում էր դեպի իր մտատիպարը և այդ արշավում հաճախ ընկնում էր, բարձրանում, բայց երբեք վերջնական հաղթանակի հավատը չէր կորցնում: Տարիների հետ անուրջները ցնդում էին և ամեն անգամ, երբ անարգ թշնամին մտածում էր մեր պարտության տոնը հանդիսավոր նշել, հայ ժողովուրդը «չգիտցաւ ընկճուիլ պահ մը իսկ ազգին համար իր կուրծքը պատնէշ ըրաւ ընդդէմ նենգ բռնութեան»[1208]: Ազատության և իրավունքի հետևից էր, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ անվիատ վազում էր անդադրում, դրա համար էլ «ամենքը կը հարուածեն մեզ»: Բայց, գրում է Թ. Եղիշեն մի խմբագրականում, ուժեղները չէ, որ միայն պիտի հաղթեն, այլ նրանք, ովքեր գիտեն տոկալ և չվիատվել:

Այդ հավերժ երթն էլ նկատի ունենալով՝ «Արմենիան» առերևույթ անկողմնակալ դիրքերից, բայց թաքուն հրճվելով այն մտքից, որ վերջապես հայակործան գործընթացը կկանգնեցվի, ներկայացնում է Հայաստանի խորհրդայնացման արդյունքում ստեղծված նոր վարչակազմը Ս. Կասյանի գլխավորությամբ: Միաժամանակ անթաքույց ուրախությամբ շտապում իր ընթերցողներին տեղեկացնել, որ Ռուսաստանը 10- հազարանոց զորաբանակ է ուղարկել՝ Հայաստանին օգնե-

---

[1206] Նույն տեղում:
[1207] Նույն տեղում:
[1208] «Արմենիա», թիվ 23, 1920:

լու և օտար ոտնձգություն-ներից պաշտպանելու նպատակով: Չմոռանալով նաև արձանագրել, որ ի սկզբանե խաղաղարար ներկայացող բոլշևիկյան կառավարությունը սկսել էր հալածել դաշնակցականներին, և այդ իրավիճակում «հայերու սպառնացող վտանգն է Պոլշէվիքութիւնը»[1209]: Սակայն հաջորդ իսկ հրապարակման մեջ արդեն թերթի տեսաբանները ստիպված խոստովանում են, որ «որքան յամառօրէն արևմտեան Եւրոպային կառչեցանք, այնքան մեր ժողովրդի բաղդը արագօրէն դարձաւ դէպի արևելք»[1210]: Որքան հայերը հետամուտ եղան անկախ պետություն ունենալու գաղափարին, այնքան նրանց ունեցած անկախությունը պակասեց, և անկախ Հայաստանին հաջորդեց կիսանկախ բոլշևիկյան Հայաստանը: Որքան լայն գծվեցին Հայաստանի սահմանները, այնքան ավելի նեղացան դրանք: Խոսքը մասնավորապես այն մասին էր, որ 1920 թ. հնարավորություն ստեղծվեց վերականգնելու հայոց պետականությունը և նրա գերիշխանությունը տարածելու գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհում և նույնիսկ Կիլիկիայում: Սակայն այս անգամ ևս մեր ժողովրդին լուրջ հուսախաբություն էր սպասվում: 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը մնաց թղթի վրա, իսկ 1921 թ. Լոնդոնի և 1923 թ. Լոզանի կոնֆերանսներում մեծ տերությունները և Թուրքիան փորձեցին վերջակետ դնել Հայկական հարցին:

Այս ամենը հոդվածագրի կարծիքով հետևանք է այն բանի, որ հայերն իրատես քաղաքագետներ չունեին, և դեռ հարց էր, թե հայ ժողովուրդը դեռ որքա՞ն փորձություններ պիտի անցներ, մինչև որ նրա ղեկավարների ունեցած գաղափարներն ու հետապնդած քաղաքական իդեալներն իսկապես բխեին ժողովրդի իրական պայմաններից ու համապատասխանեին նրա իրական պահանջներին: Հետևապես, եզրակացնում էր նյութի հեղինակը, «մեզ պէս ազգերի գերա-

---

1209 Նույն տեղում:

1210 «Արմէնիա», թիվ 10, 1921:

գոյն պահանջներից մէկը համագործակցութիւնն է»[1211], իսկ այդ օրհասական պահին երկրից դուրս ու ժողովրդից հեռու էին մնացել մեծ թվով այնպիսի անձինք, որոնք ոչ վաղ անցյալում «պետական մեխանիզմը շարժողներն էին»: Ուրեմն, եթե Հայաստանը նախկինում կառավարվում էր դաշնակցական, իսկ հետո՝ բոլշևիկ հայերով, և այս փոփոխությունը մի քանի անգամ կրկնվեր, այլ ևս երկրում մարդ չպիտի՞ մնար,- իրատեսորեն հարց էր բարձրացնում «Աբէլ ծ. վարդ.» հեղինակը, և ինքն էլ փորձում էր պատասխանել. դա պետական ըմբռնում չէ, իսկ հեռացումը՝ խիստ վտանգավոր էր, քանի որ դրանով փակվում էր համագործակցության յուրաքանչյուր հնարավորություն: Դա պիտի գիտակցեն բոլորը՝ առանց կուսակցական և այլ պատկանելության: Սակայն կային անհատներ, որոնք բոլշևիզմը համարելով չարիք, «սպասում էին նրա վերացման, որ այնուհետև լծուեն երկրի ներքին աշխատանքին»[1212]: Այնուհետև հոդվածագիրը՝ կասկածի տակ առնելով այդ տեսակետը, և՛ հրապարակախոսականը, և՛ ժամանակին խիստ արդիական նշանակություն ունեցող հարց էր հնչեցնում. «բոլշևիզմը Հայաստանի համար չարի՞ք է, թէ՞ ժամանակաւոր բարիք»: Խուսափելով ուղիղ պատասխանից՝ հեղինակն այն թողնում էր ընթերցողին՝ արձանագրելով, որ մի կողմում բոլշևիկյան Ռուսաստանն էր կանգնած, «միւս կողմում էլ կոտորող Թիւրքն էր պատրաստ մեր երկիրը խուժելու»[1213]: Ապա երկմտողների համար շարունակում էր պարզաբանել, որ դժվար չէ նախատեսել, որ ամբողջ Հայաստանում նույնը պիտի կատարվեր, ինչ եղավ Կարսի, Սարիղամիշի, Կաղզվանի և բոլոր այն տարածքների հետ, որոնք նվաճվեցին թուրքերի կողմից: Ուրեմն՝ «ո՞ր ազգը կարող է յոխորտայ, թէ ինքը այդ պայմաններում չը պիտի նախընտրեր բոլշևիզմը»[1214]:

1211 Նույն տեղում:
1212 «Արմէնիա», թիվ 10, 1921:
1213 Նույն տեղում:
1214 «Արմէնիա», թիվ 23, 1918:

Հետևապես բոլորովին էլ պետք չէր սարսափել, որ «Հայաստանը բոլշևիկ է և Ռուսաստանին միացած»[1215]: Եթե հանկարծ ռուսները հեռանան Կովկասից, այն ժամանակ է, որ իսկապես պիտի սարսափեն հայերը, որովհետև «Թիւրքը մեր թիկունքում կեցած է նման մի առիթ օգտագործելու պատրաստ ախորժակով»[1216]: Մինչդեռ եթե հայերն իրենց բոլոր ուժերն ի սպաս դնեին Հայաստանի վերաշինման ու հզորացման համար, ինչի կարիքը օրվա իշխանություններն էլ ունեին, դրանով նախ երկրում վերջ կտրվեին ծայրահեղություններին, և մյուս կողմից՝ «երկիրը պատրաստ կը գտնուեր գալիք վտանգներին դիմադրելու»[1217]:

Պատասխանելով «Ապագայ» թերթի[1218] քննադատական դիտողություններին և շարունակելով զարգացնել իր տեսակետները բոլշևիկյան Հայաստանի վերաբերյալ՝«Աբէլ ծ. վարդ.» տեսաբանն արդեն առանց երկմտելու հայտարարում էր. «ես պնդում եմ, թէ անհրաժեշտ է օգնել բոլշեւիկ Հայաստանին», և, որպեսզի այդ օգնությունն էական լինի, հարկավոր էր համախմբել բոլոր ուժերը՝ մի կողմ թողնելով «կուսակցական ու քաղաքական տարբեր տեսակէտները[1219]: Այնուհետև ավելացնում է, որ ինքը որևէ կուսակցության չի պատկանում, և այդպիսի մոտեցում պիտի հանդես բերեն բոլոր իրատես հայերը: Իսկ Ռ. Թերլեմեզյան հոդվածագիրը շեշտում էր մամուլի կարևորագույն դերակատարությունը՝ Հայաստանին օգնելու գաղափարը աշխարհասփյուռ հայության բոլոր մասերում տարածելու գործում: Հոդվածագիրը, վկայակոչելով հույների օրինակը, պնդում էր, որ հայ հարուստներն էլ պիտի ներդնեն իրենց գումարները երկիրը վերաշինե-

---

1215 «Արմէնիա», թիվ 23, 1918:

1216 Նույն տեղում:

1217 Նույն տեղում:

1218 Ռամկավար-ազատական կուսակցության պաշտոնական օրգան, քաղաքական և հասարակական «Ապագայ» շաբաթաթերթը (հետո՝ եռօրյա, ապա կրկին շաբաթաթերթ) լույս է տեսել Փարիզում 1920-40 և 1946-49 թթ.:

1219 «Արմէնիա», թիվ 12, 1921:

լու համար, սակայն նրանք հազար ու մի պատրվակներով խուսափում էին, դրա համար էլ հանցավոր էին: «Արմենիայի» տեսանկյունից հանցավոր էին նաև բոլոր այն կուսակցություններն ու խմբերը, որոնք փրկվելու համար չէին օգնում մեռնող ժողովրդին: Հայաստանին օգնելով, հայ ժողովրդին մահվան ճիրաններից ազատելով՝ չենք օգնում միայն օրվա իշխանություններին կամ նրանց կուսակցությանը. «Հայաստանը մերն է, լինի պոլշևիկեան կամ այլ, և պարտատոր են օգնել բոլորը»,-գրում էր հեղինակը[1220]:

Շարունակելով թեման՝ «Արմենիա»-ի տեսաբան Թ. Եղիշեն զարգացնում էր այն գաղափարը, որ կարծիքների բազմազանությունն արդյունք էր հայ ժողովրդի զարգացման: Իսկ մարդկանց ճիշտ զարգացումը սովորեցնում է հարգանք ունենալ ուրիշների տեսակետների նկատմամբ, ինչը երբեմն անտեսվում էր: Որպես օրինակ՝ հեղինակը նշում էր, որ իշխանությանը տիրանալու համար բոլշևիկները թունավորեցին հայկական կռվող ուժերին և նրանց մղեցին դասալքության, որն, ինչ խոսք, ոճիր էր և հայրենադավություն: Սակայն այդ ամենով հանդերձ, ընդգծում է հոդվածագիրը, «Այն կարմիր հոգեբանութիւնը որ զիրենք կամ իրենց նախորդները մղեց ոճիր գործելու, միշտ այպանելի է և խոտելի: Բայց մենք կը յարգենք Հայաստանի արդի կառավարութիւնը և կը խոնարհինք, քանի որ այժմ հայ պետութեան վարիչն է նա»[1221]:

Ամփոփելով նշենք, որ «Արմենիա»-ն հայ ժողովրդի ազատության և պետականության վերականգնման համար պայքարում գրեթե միշտ մնաց իրատեսա-կան դիրքերում, եղավ ու մնաց Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» աներեր ջատագովը՝ հայ ժողովրդի փրկության հիմնական կռվան համարելով սեփական ուժին կռթնելու անվիճելի տեսակետը:

[1220] «Արմենիա», թիվ 12, 1921:
[1221] «Արմենիա», թիվ 16, 1921:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIX դարի 70-80-ական թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքն ու մտածողությունն աննախադեպ վերելք էին ապրում: Հատկապես այն բանից հետո, երբ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում կնքված Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածներով Հայկական հարցը մտավ դիվանագիտության ասպարեզ, որին հաջորդեցին համաժողովրդական հիասթափու-թյունն ու Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» քարոզը, մարդիկ սկսեցին ուղիներ որոնել՝ ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար:

Եվրոպական տիրույթները կորցրած և ամբողջովին ասիական տերություն դարձած Օսմանյան կայսրությունը հետագայում նոր կորուստներ չտալու մտավախությամբ ողջ ուշադրությունը սևեռեց իր արևելյան տարածքների վրա և աննախադեպ խստացրեց ռեժիմը հատկապես Արևմտյան Հայաստանում: Արդյունքում հայ ժողովուրդը հայտնվեց իշխանությունների դաժան հալածանքների ու բռնությունների կիզակետում:

Օրեցօր խստացվող հարկային բեռը, ամբողջովին իրավազուրկ կարգավիճակը, թուրք պաշտոնյաների շարունակվող կամայականությունները, թալանով ու ավազակությամբ գոյատևող կիսավայրենի ցեղերը կեղեքում էին հայ ժողովրդին: Հայ մարդն Օսմանյան կայսրությունում ամբողջովին իրավազուրկ էր: Վտանգված էին նրա ողջ ունեցվածքը և նույնիսկ ֆիզիկական գոյությունը: Այլևս անկարող լինելով այդ պայմաններում գոյատևել և, որպես թուրքական իշխանությունների սահմանած անմարդկային գոյաձևերին համապատասխան հակադարձություն (ռեակցիա)՝ արևմտահայ ժողովուրդը ձգտում էր այդ վիճակից որևէ կերպ դուրս գալ: Սոցիալական բովանդակությամբ սկսված բողոքներն ու ընդվզումներն աստիճանաբար վերափոխվեցին քաղաքական պահանջների՝ եզրափակվելով, ի վեր-

ջո, սկզբում կայսրության կազմում ինքնավար, իսկ վերջում արդեն՝ հայոց անկախ պետականությունը վերականգնելու և որպես ինքնիշխան հանրույթ՝ ապրելու և արարելու տեսլականով:

Ազատագրական շարժման առաջին գծում մտավորականությունն էր: Ասպարեզ իջած ազատախոհների փաղանգն իր մտահղացումներում ու ծրագրերում քայլեց առաջ և աստիճանաբար ձերբազատվելով անիրական, ռոմանտիկ կարգախոսներից և հույսն իր վրա դնելով՝ սահմանեց բաղձալի ազատությունը նվաճելու նոր ուղիներ: Այդ գործընթացը պայմանականորեն բաժանել ենք հետևյալ փուլերի.

ա) Բողոքների շրջան, երբ հայ մարդը, այլևս անկարող լինելով դիմակայել թուրք պաշտոնյաների ու քուրդ ավազակների կամայականություններին և միամտաբար ենթադրելով, որ իշխանության վերնախավը և անձամբ սուլթանն անտեղյակ են այդ ապօրինություններից՝ գրավոր ու այլ ձևերով բողոքում էր սոցիալական ծանր կացության ու ապօրինությունների դեմ:

բ) Վերազարթնումի գործընթաց: Առաջադեմ մտածողների քարոզների շնորհիվ, երբեմն էլ սթափվելով՝ հայ ժողովուրդը ոչ միայն բողոքեց ապօրինությունների դեմ, այլև սկսեց չենթարկվել դրանց հեղինակներին: Աստիճանաբար օրախնդիր էր դառնում նաև զենքին դիմելու գաղափարը:

գ) Քաղաքական համախմբման շրջան, երբ ստեղծվում էին հայ ժողովրդին թուրքական բռնատիրությունից ազատագրել պահանջող ծրագրերով հանդես եկող քաղաքական կազմակերպություններ:

Ազգային-ազատագրական պայքարի ելած հայ ժողովուրդը ծնեց նաև իր օրվա հերոսներին, որոնք, գիտակցելով իրենց ազգանվեր առաքելությունը, մոռանալով անձնականն ու մարմնականը, ամբողջովին նվիրվեցին սրբազան գործին՝ չերկնչելով նույնիսկ սեփական կյանքն այդ զոհասեղանին դնելու հեռանկարից: Հաղթանակին հավատալով՝ նրանք ոտքի ելան և հավատադրոշը ծածանելով, մեկը

խոսքով, մեկը դրամական զոհաբերություններով, մեկը գրչով, մյուսը հրացանով կամ դաշույնով նետվեցին պայքարի դաշտ, որտեղ ուժերը խիստ անհավասար էին, որը, սակայն, երբեք չընկճեց նրանց:

Ազատագրական պայքարի ելած գործիչների փաղանգում իր ազգանպաստ ծրագրերով կարևոր դերակատարություն ունեցավ արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա» թերթով: Ի դեմս Մ. Փորթուգալյանի, հայ ազատագրական շարժման սկզբնական՝ վերազարթնումի փուլը, որը հենց սկզբից «հեղափոխություն» ձևակերպումն ստացավ, անցավ զարգացման մի քանի ենթափուլեր.

ա) նախկին՝ տերթոդիկյան մեթոդներով երեխաներին տառաճանաչ դարձնելուց ոչ ավելի կոչում ու հնարավորություն ունեցող վանական վարդապետին փոխարինելու եկավ իր գործի գիտակ աշխարհիկ ուսուցիչը,

բ) այդ ուսուցիչն աշխատում էր բուն երկրում, շփվում ժողովրդի հետ, հաղորդակից դառնում նրա ցավին: Այլևս չհանդուրժելով օտարների բռնություններն ու հալածանքները՝ նա ձեռնամուխ եղավ ժողովրդին դարավոր թմրությունից հանելու և ազատագրական պայքարի առաջնորդելու ազգանվեր գործին: Ուսուցիչը դարձավ ազատագրական շարժման գաղափարի տարածողը, ուսուցանողն ու ոգևորողը,

գ) ազատագրական պայքարի գործնական փուլում այդ նույն ուսուցիչն անդամագրվեց ֆիդայական պայքարին ու դարձավ ազատամարտիկ:

«Արմենիա»-ն բարձրաձայնեց հայ ժողովրդի իրավազուրկ վիճակի մասին, ներկայացրեց այն բոլոր արհավիրքները, որոնք սպատել էին ժողովրդին: Իսկ Մ. Փորթուգալյանն իր համարձակ, նորարարական մտահղացումներով հաճախ առաջ էր անցնում ժամանակակիցներից, հաղթանակի նկատմամբ իր անսասան հավատով վարակում-ոգևորում էր շրջապատին, մղում նրանց զոհողությունների: Նա առա-

ջիններից էր, որ անդրադարձավ հայ կնոջ իրավազուրկ վիճակին՝ առանձնակի դերակատարություն հատկացնելով նրան ապագա ազատագրական մաքառումներում:

«Արմենիա»-ն կապ ստեղծեց հայ գաղթաշխարհի տարբեր հատվածների միջև, մայր հայրենիքի և գաղթաշխարհի հայությանը հաղորդակից դարձրեց միմյանց խնդիրներին և կամրջեց մեր ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածները, որոնք, հայտնվելով տարբեր կայսրությունների տիրույթում, հեռացել, օտարացել էին միմյանցից: «Արմենիա»-ի շնորհիվ հայությունը հասկացավ իր՝ մեկ ազգ լինելը՝ անկախ ապրելու վայրից, քաղաքացիությունից և հատկապես դավանանքից: Թերթի ջանքերով աշխուժացան էթնո-լեզվական և մշակութային կապերը հայության տարբեր հատվածների միջև, որն էլ հնարավորություն ընձեռեց հաղթահարելու տարիների ընթացքում նրանց միջև առաջացած անջրպետները:

«Սուլթան Համիտը ահ ու սարսափի մատնած Մ. Փորթուգալյան խիզախ հասարակական-քաղաքական գործիչն ու խմբագիրը»[1222], «իր ազգի Բարնէլը»[1223] վախճանվեց 1921 թ. Մարսելում «Արմենիայի» գրաշարական մեքենայի առջև, ծայրահեղ աղքատության մեջ՝ մինչև վերջին շունչը ծառայելով հայ ժողովրդի ազատագրության վեհ գաղափարին: Ցավոք, նրա մասին քիչ է գրվել:

Արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, «Արմենիա» թերթում լույս տեսած նյութերի, հուշագրությունների, թեմային վերաբերող պատմագիտական գրականության և մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա ամբողջացնելով թերթի պատմությունը և գնահատելով Մ. Փորթուգալյան գործչի ու նրա թիմակից նվիրյալների կատարած ազգանվեր գործը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

[1222] Հայրիւամեակ արմենական կուսակցութեան կազմութեան 1885-1985, Փարիզ, 1985, էջակալված չէ:

[1223] Մի հայրենասէր խմբագիր. «Արմէնիա», թիվ 1, 1888:

1. Մ. Փորթուգալյանի ողջ կյանքն ու գործունեությունը նպատակաուղղված էին հայ ժողովրդին ազատագրական պայքարի դուրս բերելու նպատակի իրականացմանը: Նա չէր հանդուրժում վախկոտներին, նյութապաշտներին և անարգանքի սյունին էր գամում լոկ խոսքով հեղափոխականներին: Մշտապես անձնական շահը ստորադասեց հայրենիքին, մոռացումի ու մերժման պահեր ապրեց, սակայն միշտ մնաց իր ժողովրդի ապագայի համար պայքարի պատնեշին: Ժամանակաշրջանի ծնունդն էր, և հենց ժամանակաշրջանն էլ դրել է նրա կյանքի ու գործի վրա իր անջնջելի կնիքը: Ազնիվ է եղել և իրավացի: Երբեմն նաև սխալվել է, որովհետև իր սերնդակիցներից շատերի նման սահմանափակ էր նրա աշխարհայացքը: Հենվելով նախորդների փորձի վրա և շարունակելով նրանց գործը, գրեթե միայնակ՝ քաղաքակիրթ ազգերին ներկայացրեց հայկական իրականությունը:

2. Որոշ ազդեցություններով հանդերձ՝ Մ. Փորթուգալյանի գաղափարախոսությունն ամբողջովին արևմտահայ իրականության ծնունդ էր և իր գաղափարական-քաղաքական ըմբռնումների կարողության սահմաններում՝ ազատագրական պայքարի ընթացքում աստիճանաբար կատարելագործվեց: Նրա հայացքներին բնորոշ էր այն, որ սուբյեկտիվ տարրը առաջին դիրքի վրա էր դնում որևէ պատմական կամ քաղաքական եղելության ճակատագրում և աշխարհընկալման ու տեսական-գաղափարական մեկնաբանությունների ժամանակ:

3. Չափավոր ազատական «Արմենիա»-ն իր գոյության տարիների հայ կյանքի տարեգիրն էր: Այն կարևոր դերակատարություն է ունեցել հայությանը դարավոր նիրհից դուրս բերելու, նրա ցավն աշխարհալուր դարձնելու և հայության բոլոր հատվածներին միմյանց կապելու կարևոր գործում: Դժվար ու բարդ է եղել նրա անցած ուղին: Թեև հայ ազատագրական պայքարի առանցքը դառնալու սկզբնական տարիների հավատը ժամանակի հետ աստիճանաբար թուլա-

ցավ, սակայն անսասան մնաց կատարած գործի կարևորության գիտակցումը:

4. «Արմենիա»-ն մեծ արժեք է: Նրանում առկա են մեծաքանակ արդիական գաղափարներ հայրենիքի հանդեպ սիրո, հումանիզմի, ժողովրդավարության, կյանքի բարեփոխման ուղիների, համազգային վտանգի՝ արտագաղթի և այլ կարևոր խնդիրների մասին: Այն արժեքավորն ու գեղեցիկը, գործնականն ու հաղթելու արվեստի նրբությունները սովորեցնող դպրոց է, որի գաղափարներով կարելի է սերունդներ դաստիարակել:

5. «Արմենիա»-ն հայության ցավի թարգմանն էր: Հատկապես հրատարակու-թյան առաջին տասնամյակում թերթը կարևոր դերակատարություն ունեցավ հայ ազգային-ազատագրական գաղափարախոսության հստակեցման գործում: Դարձավ ամբիոն, բանավեճի հրապարակ, որտեղ քննարկվում ու բանաձևվում էին ազատագրության ուղիները, մերժվում ցուցադրական գործողությունները, գալիք սերունդների համար ճանապարհ հարթում դեպի բաղձալի ազատություն: Դրա համար էլ սիրված ու փնտրվող պարբերական էր և լուրջ ազդեցություն ուներ հայության շրջանում:

6. Առաջին տարիների մեծ տերությունների օգնության ակնկալիքով հայոց խնդիրը պարզաբանելով՝ «Արմենիա»-ի կազմակերպած քարոզարշավին աստիճանաբար փոխարինեց սեփական ուժին կռթնելու և զենքի ու հեղափոխության միջոցով ազատություն նվաճելու տեսլականը: Այսինքն՝ թերթը հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարությունն արդյունավետ չէր համարում:

7. Մ. Փորթուգալյանը, լինելով արմենականների ուսուցիչն ու գաղափարական հայրը, երբեք չհամագործակցեց այդ կուսակցության հետ, որովհետև դեմ էր կուսակցա-կանությանը, համարում այն ազատագրության գործին խիստ վնասակար: Վերջիններս, սակայն, այլ կարծիքի էին և մի քանի անգամ փորձեցին համոզել նրան, որ լի-

նի իրենց ղեկավարը, համագործակցելու համար նույնիսկ հրավիրեցին ԱՄՆ, բայց ապարդյուն:

8. Աշխարհի բոլոր ժողովուրդների նման հայ ժողովրդին էլ են բնորոշ եղել ոչ դրական հատկանիշներ: Սակայն համազգային ոգևորության ու հանուն գաղափարի շատերի զոհվելու պատրաստակամության դիմաց դրանք չնչին մանրուքներ էին: Այս պատկերացումն էլ ելակետ ունենալով՝ համազգային ցավի արտահայտիչ «Արմենիա«-ն բոլորովին չանտեսելով դրանք՝ շեշտում էր, որ անհրաժեշտ է շտկել այդ թերությունները և դասեր քաղել սխալներից՝ ապագայում դրանցից զերծ մնալու համար:

9. Թերթի «Նամականի»-ն XIX դարի վերջին մեկուկես և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ իրականության կենդանի հուշարձան է, փաստառատ ու վստահելի սկզբնաղբյուր, մի կողմից՝ հայի հոգու ճիչ, խտացած ցավ, բողոք ու պարսավանք անօրենների հասցեին, իսկ մյուս կողմից՝ հայության երազանքների շտեմարան ու զորավոր հավատ ապագայի նկատմամբ:

10. «Արմենիա»-ն մեծ տերությունների նկատմամբ հստակ դիրքորոշումներ չուներ և ազատագրական պայքարի ընթացքում այն հաճախակի փոփոխվում էր, նայած թե տվյալ պահին որ պետությունն ինչպիսի դիրքորոշում էր որդեգրում Հայկական հարցի նկատմամբ: Դա միանգամայն բնական գործընթաց էր և հիմնականում արդարացված: Ընդհանուր առմամբ «Արմենիա»-ն հայ իրականության մեջ այն փոքրաթիվ պարբերականներից մեկը եղավ, որ երբեք չկորցրեց իրատեսության զգացումը, չապավինեց եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների սին խոստումներին և դրանով իսկ հիմնականում հայությանն առաջնորդեց ճշմարիտ ուղիով:

11. Սկզբում երիտթուրքական սահմանադրությունը փառաբանող «Արմենիա»-ն շատ արագ էլ հասկացավ, որ դա խաբկանք էր, հաշիշանման թմբիր՝ կայսրության տարածքում բնակվող հպատակ ժողովուրդների զգոնությունը թուլացնելու, ազատագ-րական պայքա-

րից հետ պահելու և ցանկացած հարց իրենց ուզած ձևով լուծելու համար:

12. Դեռ եղեռնի տարիներին «Արմենիա»-ն հստակեցնում էր, որ Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելը օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագիրն էր և, անկախ այն հանգամանքից, հայերը ռուսական կողմնորոշում կունենայի՞ն, ցուցադրական ելույթներ կամ կամավորական շարժում կնախաձեռնեի՞ն՝ այն կգործադրը-վեր: Ցողասպանության ժամանակակից «Արմենիա»-ի շնորհիվ մեզ են հասել զգալի թվով փաստեր, ականատեսների վկայություններ, միջազգային կառույցների ու անհատ գործիչների վերաբերմունքի մասին վկայող նյութեր:

13. «Արմենիա»-ն ողջունեց և հնարավոր բոլոր միջոցներով սատարեց կամավորական շարժմանը, որին նվիրված թերթի հրապարակումներում հառնում էր ցեղասպանություն ապրած, հայրենազրկված, ընտանիք ու տունուտեղ կորցրած, սակայն իր կենսունակությամբ, ապրելու և արարելու տոկունությամբ աշխարհին մարտահրավեր նետած, ապագայի նկատմամբ անսասան հավատով լի հայ մարդու կերպարը:

14. Սոցիալ-տնտեսական խնդիրների մասին նվազ գիտելիքներ ցուցաբերող և հեղափոխականների կողմից կիրառվելիք հստակ ծրագիր չունեցող Փորթուգալյանը հակադրվում էր հնչակյաններին և սոցիալիզմը ժամանակավրեպ համարում արևմտահայ իրականության համար: Նա ողջունում էր կուսակցությունների միջև յուրաքանչյուր համագործակցություն: Երբեմն, չնայած կուսակցականության մերժումներին, թերթը դրսևորում էր դաշնակցամետ պահվածք: Ընդհանուր առմամբ, հիմնականում մերժելով հնչակյանների ու դաշնակցության, իսկ ավելի ուշ նաև հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հեղափոխականությունը՝ աստիճանական բարեփոխումների հավատավոր կողմնակից «Արմենիա»-ն միշտ մերժեց կուսակցականությունը:

15. Հայկական հարցը մշտապես եղել է «Արմենիա»-ի հիմնախնդիրներից: Հայկական բարենորոգումների նախագիծը Ռուսաստանի պահանջով ընդունելուց հետո գերիշխողը վերջինիս օգնությամբ և հովանավորությամբ հայկական ինքնավար կառույց ստեղծելու մտայնությունն էր: Այդ տեսակետը որոշ չափով երերաց Առաջին հանրապետության տարիներին, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո թերթը ոչ միայն արտահայտեց իր համակրանքը, այլև հայության փրկությունը տեսավ ի դեմս Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծված Խորհրդային Հայաստանի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎՆԵՐ

ա) Հայաստանի ազգային արխիվ - (ՀԱԱ)

1.1 ֆ. 51, գ. 90, թ. 37:
1.2 ֆ. 121, գգ. 3, 6, 7, 15, 17:
1.3 ֆ. 190, բ. 507, գ. 129, թթ. 245-261:
1.4 ֆ. 408, գգ. 1, 162:
1.5 ֆ. 420, գ. 16, 8, թ. 10:
1.6 ֆ. 424, g. 1, գ. 5, 13, 43, 45, 47, 49, 50, 55, 59, g. 2, գ. 116:
1.7 ֆ. 427, g. 1, գ. 5, 8, 13,15, 46, 66:
1.8 ֆ. 453, g. 1, գ. 198, 211:
1.9 ֆ. 1267, g. 1, գ. 1, 2, 3, 5:
1.10 ֆ. 1456, g. 1 և g. 2:

բ) Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան (ԳԱԹ)

1.11 Ա. Արփիարյանի ֆոնդ, թիվ 515-1058:
1.12 Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթ. 1777, 1778, X բաժին, թիվ 444:
1.13 Բարխուդարյան Մկ., ֆոնդ 28, թիվ 503:
1.14 Գ. Լևոնյանի ֆոնդ, թիվ 66/17:
1.15 Հավաքածու սփյուռքահայ գրողների և մտավորականների, թիվ 1 և 2:
1.16 Հովհաննիսյան Ա., ֆոնդ 89, թիվ 52:
1.17 Մալեզյան Վահան, ֆոնդ 100, թիվ 528:
1.18 Նավասարդյան Բ., ֆոնդ 120, թիվ 341:
1.19 Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:
1.20 Փորթուգալյան Մկրտիչ, ֆոնդ 9, թիվ 941-942:

գ) Հայաստանի պետական պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին

1.21. Ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28: Թերլեմեզյան Փ., «Կյանքիս հուշերը» (մեքենագիր):

2. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

հայերեն

2.1 Ազգային գրադարան: «Արմենիա» լրագրի ուղղությունն ու ծրագիրը: Շրջաբերական հայտարարություն (վիմագիր), 1885 թ. հունիսի 18:
2.2 «Արմենիա»-ի՝ 1885-1923 թթ. պահպանված բոլոր համարները, Ազգային գրադարան (նաև մեր կողմից թվայնացված տարբերակ, անձնական պահոց):
2.3 «Արմենիա»-ի՝ 1915-1920 թթ. պահպանված բոլոր համարները: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան, մամուլի բաժին (նաև մեր կողմից թվայնացված տարբերակ, անձնական պահոց):
2.4 «Արմենիա»-ի՝ 1905-1920 թթ. պահպանված բոլոր համարները Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի մամուլի բաժին (նաև մեր կողմից թվայնացված տարբերակ, անձնական պահոց):
2.5 «Արմենիա»-ի՝ 1914-1916 թթ. պահպանված բոլոր համարները: Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետական համալսարանական գրադարան, ֆ. QS-58:
2.6 «Արմենիա»-ի՝ 1912-1923 թթ. պահպանված բոլոր համարները: Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ֆ. 1.155, 1.254 և 1.255 (նաև թվայնացված տարբերակ, անձնական պահոց):
2.7 «Արմէնիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարսեյլ, 1890:
2.8 Ռամկավար-ազատական կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր, կազմեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1988, «Զարթօնք», 223 էջ:

2.9 Ծրագիր եւ կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենո-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնտոն, 1907, 29 էջ:
2.10 Կապոյտ տետրակն, «Արմէնիա» լրագիր, Մարսել, 1891, թիվ 53, 54:
2.11 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, «Հայաստան», 746 էջ:
2.12 Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, Հայաստան, 810 էջ:
2.13 Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, ՀՍՍՀ մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան, 622 էջ:
2.14 Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Բաբլոյան Ա., Երևան, 1986, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 468 էջ:
2.15 Փափազյան Հ., Մկրտիչ Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին (Մ. Փորթուգալյանի նամակն իր ընկեր Մ. Բաղդասարյանին), «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1-2, 1996, էջ 317-320:

ռուսերեն

2.16 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива МИД Кайзерской Германии, состовитель Вардгес Микаелян, Гитутюн, 1995, 643 стр.
2.17 Положение армян вь Турции до вмешательства держав вь 1895 г., Москва, Тип. «Рассвет», 1896, 443 стр.
2.18 Черная Книга, Знаменитые иностранцы о турецких преступлениях конца XIX века и о геноциде армян в Османской империи в 1915 году, составитель Альберт Исоян, Ереван,Айгирк, 2012, 774 стр.

անգլերեն

2.19 British Documents on Ottoman Armenians=Ingilizbelgelarinde Osmaniler (1856-1880)vol,1, Simsal, Bilal N., Ankara, 1989, pp. 547-550, 767 pages.

ֆրանսերեն

2.20 Documents Diplomatiques Ottomans: Affaires Armeniennes (ed. by BilZlŞimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985, 580 pages.

3. ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Բ Տպագրութիւն, Երեւան, «Բագրատ» տպագրութիւն, 2003, 389 էջ:

3.2 Եկարեան Ա., Հուշեր Արմենակ Եկարեանի, «Զարթօնք», Պէյ-րութ, 1985, 255 էջ:

3.3 Ղարաջեան Գ. (Արկոմեդ), Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918:

3.4 Պօղոսեան Հովի., Կուսակցական կեանքի յուշերս, Կ. Տօնիկեան եւ որդիք, Պէյրութ, 1987, 153 էջ:

3.5 Ռուբէն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, արտատպված - Գ հրատարակությունից, Թեհրան, 1982, Երևան, ՀԿԿ կենտկոմի հրա-տարակչու-թյուն, 1990, հատ. 1, 273 էջ, հատ. 3, 374 էջ, հատ. 4, 411 էջ, հատ. 5, 383 էջ, հատ. 6, 459 էջ:

3.6 Տամատեան Մ., Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, «Զարթօնք», Պէյրութ, 1985, 85 էջ:

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

հայերեն

4.1 Ադոնց Ն., Հայկական հարց, Երևան, 1996, էջ 55:
Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, Բարձրագույն դպրոց, 433 էջ:
4.2 Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, «Հայաստան», 567 էջ:
4.3 Ավետեան Մ.,Հայ ազգային ազատագրական յիսնամեայ /1870-1920/ յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (վերլուծական հայեցողութեամբ և վավերական տվյալներով), Փարիզ, 1954, 526 էջ:
4.4 Ահարոնեան Գ., Մեծ երազին ճամբուն վրայ (ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Գ հրատարակութիւն, Լոս-Անճելըս, 1986, Նոր օր, 224 էջ:
4.5 Ահարոնեան Ա., Հերոսական դէմքեր Ռ.Ա.Կ.ի, Լոս-Անճելըս, 2001, Նոր օր, 115 էջ:
4.6 Ահարոնեան Ա., Երախտավորներու ուղին, Ա հ., Լոս-Անճելըս, 2006, 191 էջ, Բ հ., Լոս-Անճելըս, 2014, Նամիսա, 215 էջ:
4.7 Ակիշեան Ն., Մեծերէն տասը, Նոր օր, Լոս-Անճելըս, 1990, 180 էջ:
4.8 Ակնունի Է., Հանրային եսը, Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.9 Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ. - 1904), գիրք 1, Ե., 1967, 362 էջ:
4.10 Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Բ տպագրութիւն, Պէյրութ, 1983, 415 էջ:
4.11 Գալէմքեար Զ., Մկրտիչ Փորթուգալեան (30-31 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.12 Գազանճեան Լ., Վերուծնունդ Վան-Վասպուրականի (Մշակութային ոսկեդար 1850-1950), Թումայան եղբարք, Պոսթըն, 1950, 325:

4.13 Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., «Գիտություն», Երևան, 1999, 539 էջ:
4.14 Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, «Գիտություն», 822 էջ:
4.15 Գիւզալեան Գ., Պատմական խնդիրներ, Մ. Փորթուգալեան (մի էջ յեղափոխական մտքի պատմութիւնից 118-158 էջեր), Արազ, Պէյրութ, 1937:
4.16 Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը (1895-1898 թթ.), «Նոյյան տապան», Երևան, 2002, 96 էջ:
4.17 Գրիգորյան Հ., Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), «Նոյյան տապան», Երևան, 2004, 112 էջ:
4.18 Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 2012, 598 էջ:
4.19 Գևորգյան Է., Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 448 էջ:
4.20 Դալլաքյան Կ., Ռամկավար-ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, «Գիտություն», Երևան, 1999, 308 էջ:
4.21 Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Ե., 1987, «Սովետական գրող» հրատարակչություն, 480 էջ:
4.22 Դալլաքյան Կ., «Արմենականության» և «Սահմանադրականության» հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, Թեզիսներ Արմենական կուսակցության 110-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի 1996թ.), «Ազգ», Երևան, 1996, 21 էջ:
4.22 Երամեան Հ., Վասպուրականի մէջ (33-34 էջեր), Մկրտիչ Փորթուգալեան, Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:

4.23 Երամեան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա և Բ, Աղեքսանդրիա, 1929, հ. Ա, 502 էջ, հ. Բ, 541 էջ:
4.26 Եսաեան Զ., Հայ կնոջ կողմէ (31-33 էջեր), Քառասուն տարուան աշխատատրը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.24 Զարդարեան Ռ.,Պայքարողները (34-36 էջեր), Քառասուն տարուան աշխատատրը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.25 Թորանեան Թ., Հայկական հարցը, Երկու մօտեցում, Թանէր Աքչամ, Վահագն Տատրեան, Հալէպ, Կիլիկիա գրատուն-հրատարակչատուն, 1994, 78 էջ:
4.26 Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, գրեց՝ Վանի վարժապետանոցի սան Պ. Ռ. Թորոսեան, Կ. Պոլիս, 1912, 16 էջ:
4.27 Թորոսյան Պ., Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.28 Թէոդիկ Ա., Վերյիշում մը(36-38 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.29 Թեքէեան Վ., Անձնական յիշատակներ Մ. Փորթուգալեանի կեանքէն (38-40 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.30 Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (անձնական յուշերուս ընդմէջէն), Պէյրութ, 1962, «Սեւան», 71 էջ:
4.31 Իզմիրեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրութ, 1964, «Սեւան», 326 էջ:
4.32 Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, «Նոր Աստղ», 392 էջ:
4.33 Լեո, Հայ հերոսներ: Առաջինները՝ Գոլոշեան, Ազրիպասեան, «Ռազմիկ», Ե., 1924, թիվ 4, էջ 354:
4.34 Լեո, Անցեալից (Թիֆլիս, 1925), վերահրատարակվել է՝ Երեւան, 2009, «Շեմ», 482 էջ:

4.35 Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Պահրի եղբարք, Փարիզ, 1934, 204 էջ:
4.36 Խաժակ Գ., Տոկուն Մարդը (40-42 էջեր), Քառասուն տարուան աշխատատրը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.37 Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակա-խոսության պատմությունից, Երևան, 1980, ռոտոպրինտ, 158 էջ:
4.38 Խառատյան Ա., Արևմտահայ մամուլն իր պատմության սվարտին (1900-1922), Ե., 2015, 126, Պատմության ինստիտուտ, Մեսրոպ Արք. Աշճեան մատենաշար, 533 էջ:
4.39 Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիա, 470 էջ:
4.40 Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության ծնունդը, Երևան, 2000, «Արտագերս», 227 էջ:
4.41 Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 410 էջ:
4.42 Կարապետյան Ա., Արմենական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 1995, 24 էջ:
4.43 Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), «Հայաստան», Երևան, 1980, 456 էջ:
4.44 Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան (հասարակական-քաղաքական գործունեությունը), «Զանգակ», Երևան, 2000, 446 էջ:
4.45 Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1979, 194 էջ:
4.46 Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2005, 175 էջ:

4.47 Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան /1887-1962/, հ. Ա, խմբ. Ա. Կիտուր, Պէյրութ, 1962, Շիրակ, 640 էջ:
4.48 Հարիւրամեակ արմենական կուսակցութեան կազմութեան 1885-1985, Փարիզ, 1985, էջակալված չէ:
4.49 Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակ-ցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, «Արդարություն», 363 էջ:
4.50 Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965, ՀՍՍՌ Գիտ ակադ. պատմ. ինստիտուտ, 342 էջ:
4.51 Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, ՀՍՍՀ ԳԱ, 311 էջ:
4.52 Համբարյան Ա., Հայ հասարակական- քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ XX դարի սկիզբ), Երևան, 1990, «Հայաստան», 479 էջ:
4.53 Համբարյան Ա.,Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Երևան, 1999, «Գիտություն», 477 էջ:
4.54 Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Է. Կոստանդյանի խմբագրությամբ, Երևան, 2003, «ԵԳԵԱ», 200 էջ:
4.55 Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, հատ. VI, Ե., 1981, 1050 էջ:
4.56 Հայոց պատմություն, հ. 3, գիրք Ի: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ, Ե. «Զանգակ-97», 2010, 701 էջ:
4.57 ՀՍՀ հանրագիտարան, հատ. VI, Երևան, 1980, Հ. Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, 719 էջ:
4.58 Հայ պարբերական մամուլի պատմություն VIII-XIX դարեր, հատ. 1, Գահիրէ, 2006, Նուբար փրինթինգ հաուս,701 էջ:

4.59 Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երևան, 1956, «Հայպետհրատ», 615 էջ:
4.60 Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915թթ.), Երևան, 2012, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 352 էջ:
4.61 Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, 2002, «Զանգակ-97», 182 էջ:
4.62 Կարապետեան Գ., Մօտաւոր անցեալի յիշատակներէն, Կ. Պոլիս, 1919, 67 էջ:
4.63 Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, «Տիգրան Մեծ», 692 էջ:
4.64 Հյուսյան Մ., Գրիգոր Զոհրապի արվեստը, Ե., 1964, 157 էջ:
4.65 Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967, 382 էջ:
4.66 Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք առաջին, Երևան, 2012, «Էդիթ պրինտ», 731 էջ:
4.67 Ղազարեան Կ., Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ), Պէյրութ, 1985, «Զարթօնք», 65 էջ:
4.68 Ղամբարյան Ա., Հայկական հարցը 1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2006, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 232 էջ:
4.69 Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնօ, 1930, «Նոր օր», 572 էջ:
4.70 Մահարի Գ., Այրվող այգեստաններ, Ե., 1966, «Հայաստան», 321 էջ:
4.71 Մկունդ Տ., Հայ կղերն Ամերիկայի մէջ, ԱՄՆ, 1945, 214 էջ:
4.72 Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Նուբար փրինթինգ հաուս,Գահիրէ, 1990, 106 էջ:

4.73 Նաթանեան Մ., Յիշատակաց բովերէն (44-48 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.74 Նալբանդյան Լ., Հայ հեղափոխական շարժում: Հայ քաղաքական կուսակցությունների զարգացումը 19-րդ դարի ընթացքում, Ե., «Գասպրինտ», 2012, 285 էջ:
4.75 Ներսիսյան Մ, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, ՀՍՍՌ ԳԱ հրատարակություն, 530 էջ, 2002, «Գիտություն», 490 էջ:
4.76 Ներսիսյան Ա., Ռուբէն, Երեւան, 2007, «Էդիթ Պրինտ», 394 էջ:
4.77 Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան, Երևան, 2006, Իրավունքի Կովկասյան կենտրոն, 298 էջ:
4.78 Ներսիսյան Ա., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), Զաւարեան մատենաշար, հ. Բ, Պէյրութ, 2008, 350 էջ, հ. Գ, Պեյրութ, 2013, 400 էջ:
4.79 Նիկողոսյան Ա., Գենդերային փոխակերպումները հայոց պատմության մեջ, Ե., 2006, 112 էջ:
4.80 Շահրիման Վ., Մարտնչողը (54-55 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.81 Շահպազ Բ., Հայաստանի կամքը (48-50 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.82 Չերազ Մ., Թե ի՞նչ շահեցանք Բեռլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878, 83 էջ:
4.83 Չէօկիւրեան Տ., Մկրտիչ Փորթուգալեան (9-27 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.84 Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Պէյրութ, 1965, «Մշակ», 308 էջ:
4.85 Չչեան Ա., Ուսուցիչը (55-62 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.86 Պազիլ Խան, Քառասուն տարի (62-64 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:

4.87 Պարսամյան, Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:
4.88 Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Երևան, «Լույս», 1985, 368 էջ, Երևան, 1988, 294 էջ:
4.88 Պողոսյան Ստ., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. I, «Նաիրի», Երևան, 2008, 723 էջ:
4.89 Պօղոսեան Հովհ., Մեր Դերը, ի՞նչ եղաւ եւ ինչ պիտի ըլլայ, Պոսթոն, 1935, «Պայքար»,43 էջ:
4.90 Սահակյան Ռ., Արևմտահայ ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2005, 401 էջ:
4.91 Սապահ-Գյուլեան Ս., Պատասխանատուները (Բ տպագրութիւն), Պէյրութ, 1974, 384 էջ:
4.92 Սարաֆեան Կ., Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան վրայ, Սեւան, Պէյրութ, 1960, 39 էջ:
4.93 Սերոբյան Մ., Ամերիկահայ տարեցույցը, Ա տարի, Պոստոն, Կիլիկիա տպ., 1912, 246 էջ:
4.94 Սերոբյան Մ., Ամերիկահայ տարեցույցը, Բ տարի, Պոստոն, 1913, 167 էջ:
4.95 Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 1991, 628 էջ:
4.96 Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, «Կասիա», Երևան, 1996, գիրք Ա, 751, գիրք Բ, 830 էջ:
4.97 Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրէ, «Նոր Աստղ», 1948, 383 էջ:
4.98 Սերոբեան Մ., Հայկական հարցը եւ անոր փուլերը, Պէյրութ, 1937, «Ազդակ», 206 էջ:

4.99 Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Երևան, 1967, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 356 էջ:
4.99 Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, հ. 1, 278 էջ, հ. 2, 320 էջ,:
3.100 Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Ա, Փարիզ, 1932, 510 էջ, հ. Բ, Գահիրէ, 1950, «Յուսաբեր»,132 էջ:
4.101 Վարուժան Դ., Ռահվիրաները, Մկրտիչ Փորթուգալեան (66-67 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.102 Վասիլեան Պ., Յոբելեարը եւ Արարատեան ընկերութիւնը (65-66 էջեր), Քառասուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր. Կ. Պոլիս, 1914, 72 էջ:
4.103 Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողովը (1890-1924 թթ.), Աթէնք, 1988, 259 էջ:
4.104 Տասնապետեան Հ., Հայ յեղափոխական շարժումը մինչեւ Հ.Յ. Դաշնակցութեան կազմութիւնը, Աթենք, Հայկական հրատարակչական, 1990, 125 էջ:
4.105 Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրութ, 1964, «Զարթօնք», 240 էջ:
4.106 Տեփոյեան Պ., Ատոմ Ալպանեան, Պէյրութ, 1988, «Ալթափրես», 134 էջ:
4.107 Տեփոյեան Պ., Նիւթեր պատմութեան համար, Մեր առաքելութեան ճամբով, Պէյրութ, 1988, «Զարթօնք», 174 էջ:
4.108 Տիրան Ա., Մխօ-Շահէն Սէֆէրեան, Պոսթըն, 1903, «Ձայն Հայրենեացի», 55 էջ:
4.109 Տեր-Մկրտչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հատ. Ա, Բոստոն, 1966, 640 էջ:
4.110 Ուզունեան Հ., Արևմտահայ Ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական

կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս-Անճելըս, 1986, «Ջի փրինթինգ», 53 էջ:
4.111 Փորթուգալեան Մ., Մի գաղթեք, գրեց Մկրտիչ Փորթուգալեան, Մարսելյ, 1913, 34 էջ:

ռուսերեն

4.112 Вердиева Х., Гусейн-заде Р., Родословная армян и их миграция на Кавказ с Байкан, Баку, Елм, 2003, 83 стр.
4.113 Гасымлы Муса, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-ие гг.: В поисках исторической истины, М., 2014, 248 стр.
4.114. Дон Эдвард Бек, Кристофер К. Коуон, Дон Эдвард Бек, Кристофер К. Коуон, Спиральная динамика. Упраляя ценностями и изменениями в XXI веке, М., Открый мир, 2010, 424 стр.
4.115 Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX- начале XX веков, Ереван,изд-во ЕрГУ, 1988, 308 стр.
4.116 Наджафов Б., Лицо врага, История армянского национализма в закавказье в конце XIX и начале XX в., Баку, элм1, 993, 166 стр.
4.117 Саркисян Е., Политика Османского правительствав Западной Армении и державы в последней четверти XIX и начале XXвв., Ереван, АН Арм. ССР, 1972, 330 стр.
4.118 Файгл Э., Правда о терроре, армянский терроризм-истоки и причини, Баку, Азербайджанское Государственное Издательство, 2000, էջակալված չէ:

անգլերեն

4.119 Knapp G. H., The Tragety of Bitlis, Being Majnli the Narratives of Grisel M. Mc. Laren and Myrtel O. Shane, N. Y., 1919.
4.120 Megerdichian, R. The Armenian Churches in North America: Apostolic, Protestant and Catholic. A Geographical and Historical Survey

(Society for Armenian Studies. Occasional Papers. No. 2). Cambridge, 1983, 114 pages.
4.121 Mc Carthy J., Mc Carthy C., Turks and Armenians, Baky, Азербайджанское Государственное Издательство, 1996, 85 pages.
4.122 Salahi R. S., The Ottoman Armenians, London, 1987, 241 pages.

թուրքերեն

4.123 Taner Akcham. Tyurk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. Istanbul, 1995, 4-րդ հրատարակություն, 224 էջ:
4.124 Uras Esat. The Armenians in History and the Armenian Question. Istanbul, 1988, 163 pages.

5. ՀՈԴՎԱԾՆԵՐ

5.1 Ալոյան Լ., «Արմենիա» շաբաթաթերթը (հրատարակության 125-ամյակի առթիվ), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2010, թիվ 3 (629):
5.2 Լեո, Հայ հերոսներ: Առաջինները՝ Գոլոշեան, Ագրիպասեան, «Ռազմիկ», Ե.,1924, թիվ 4:
5.3 Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 1, 2, 1928, թիվ 8, 9, 10, 11:
5.4 Հարությունյան Ա., Երիտթուրքական հեղաշրջման արձագանքները Վանի նահանգում (1908 թ. հուլիս-օգոստոս), «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 3:
5.5 Կարապետյան Ա., Մեծ տերությունների քննադատությունը «Արմենիա»-ի էջերում 1894-1895 թթ., ՊԲՀ, թիվ 1, 2014, 101-107 էջեր:
5.6 Կարապետյան Ա., «Ազգային խնդիրների արծարծումը «Արմենիայի» էջերում (XX դ. սկիզբ), «Պատմաբանասիրական հանդես», 2014, թիվ 3 (642):
5.7 Ղարասէֆէրեան Գ. Նշան, Ո՞վ է Փորթուգալեան, «Աւետաբեր», 1911, ապրիլի 8, թիվ14:

5.8 Մարտիրոսյան Ն., 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և խորհրդարանի ձևավորումը Օսմանյան կայսրությունում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, թիվ 3 (86):
5.9 Պեսզիկեան Գ., Խսրի տուն, «Արծվի Վասպուրականի» ամսագիր, 1941 թ., թիվ 4:
5.10 Սիւնի Ա., Պետք չէն չափազանցութիւնները, «Արմենիա» լրագիր, 1891, թիվ 42:
5.11 Քառյան Ռ. Հ., Հայկական հարցը Հ. Թումանյանի հրապարակումներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, թիվ 3:

ռուսերեն

5.12 Юсиф кзы Жердиева, Первая Мировая война и Кавказские мусулмани-беженци, журнал «Истина», Астрахань, N 2, стр. 34-35.

անգլերեն

5.13 Sarafian Vahe A., «Turkish Armenian and Expatriate Population Statistics», The Armenian Review, IX (Autumn, 1956), 119:
5.14 Ghazarian Vatche, Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, dited and translated by Waltham, 1996.

թուրքերեն

5.15 Şimşir B. N.. The Genesis of the Armenian Question.Ankara, 1983 (Turkish Historical Society, ser. VII, № 84).

6. Պարբերական մամուլ

6.1 «Ազգ», Բոստոն, 1908, մայիսի 2:
6.2 «Ազատ բեմ», Ալեքսանդրիա, 1906:
6.3 «Աւետաբեր», 1911, թիվ 14:
6.4 «Արաքս», 1902, թիվ 4:
6.5 «Արեւ», Ալեքսանդրիա, 1916, թիվ 21, 23, 48:
6.6 «Գործ» (Թիֆլիս), թիվ 32, 1908:

6.7 «Դրօշակ», 1893, թիվ 4, 1894, թիվ 6, 9:
6.8 «Իրավունք», 1908, ապրիլի 9:
6.9 «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1995 թ. սկսած մինչև 2015 թ. տարբեր համարներ:
6.10 «Կոչնակ», 1911, ապրիլի 8:
6.11 «Հայաստան» երկշաբաթաթերթի 1888-1892 թթ. համարները:
6.12 «Հնչակ», Լոնդոն, 1891, թիվ 3, 4, 7, 14:
6.13 «Մարտ», Լոնդոն,1897, թիվ I, 6, 1899, թիվ 18, 1919, թիվ 16:
6.14 «Մշակ», Թիֆլիս, 1878, թիվ 42, 1908, թիվ 53:
6.15 «Նոր կեանք», Լոնդոն, 1899, թիվ 1, 1901, թիվ 5, 18:
6.16 «Նորք», թիվ 4, Ե., 1924:
6.17 «Նոր կեանք», Ֆրեզնո, 1920, թիվ 8, 9:
6.18 «Նոր օր», Լոս-Անջելես, 1965, թիվ 21:
6.19 «Պայքար», Բոստոն, 1958, թիվ 36:
6.20«Վան-Տոսպ», Վան, 1914, թիվ 3:
6.21 «Վերածնունդ» շաբաթաթերթի՝ 1919 թ.մայիսի 28, թիվ 23:
6.22 «Պայքար», 1951, մարտի 17, թիվ 63:
6.23 «Turkey», թիվ 1 (1890-1891):

7. Էլեկտրոնային կայքեր

7. 1 Wikipedia.com:
7.2 Hy wikisource.org:
7.3 Editions. sigest. Net:
7.4 www.azator, gr /yushatetr/.

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Համակարգչային ձևավորումը՝Ա. Մարանգոզյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 13.03.2018
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[5000 դր.]

ՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0578046

Սուրեն Թարխանի Սարգսյան

1988 թ. գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ ընդունվել եվ 1991 թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան: 1991 թ-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում: Այժմ առաջատար գիտաշխատող է:
Հեղինակ է վեց մենագրությունների, որոնք նոր խոսք են հայ պատմագիտության ասպարեզում եվ հարյուրից ավելի գիտական հոդվածների:
Համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ պարբերական մամուլի պատմություն», «Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.)» հիմնարար աշխատությունների եվ «Հայաստան» հանրագիտարանի:

Ս. Սարգսյանի հեղինակած ուսումնասիրություններն ու հոդվածները լույս են տեսել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում. Լիբանանում, Եգիպտոսում, Ռուսաստանում եվ վերաբերում են հայ ազատագրական պայքարի կնճռոտ հիմնախնդիրներին ու հայ ազգային կուսակցությունների պատմությանը: «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը եվ «Արմենիա» պարբերականը» ուսումնասիրությունը հայ ազատագրական գաղափարախոսության նվիրյալ Մ. Փորթուգալյանի կյանքի եվ հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունն է: Ս. Սարգսյանը «Հայոց պատմություն», «Հայ պարբերական մամուլի պատմություն», «Հայ քաղաքական մտքի պատմություն», «Ազգային կուսակցությունների պատմություն» եվ այլ դասընթացներ է կարդում Երեվանի պետական, Գլաձոր եվ Հյուսիսային համալսարաններում: Պատմական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր:
Ամուսնացած է: Ավագ որդին՝ Արթուրը, իրավաբան է,
Արմանը՝ պատմաբան-քաղաքագետ,
դուստրը՝ Անին, ֆինանսիստ: